

Գ. Հ. Գյուրջիս

ԱՄԵՆՆ ԱՄԵՆԱՅՆԻՎ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

**Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն
կամ
Բեհեդզեբուլի պատմածներն իր թոռանը**

(թարգմանություն ռուսերենից՝ անգլերենի համեմատությամբ)

2013

Տաս գիրք՝ երեք մասից

Առաջին մաս – Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն կամ Բեհեղգեբուդի պատմածներն իր թոռանը՝ երեք գրքով

Երկրորդ մաս – Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ՝ երկու գրքով

Երրորդ մաս – Կյանքն իրական է միայն այնժամ, երբ ԵՍ կամ՝ հինգ գրքով

ԱՄԵՆ-ը գրված է տրամաբանական դատողության բոլորովին նոր սկզբունքների հիման վրա և նպատակ ունի լուծելու հետևյալ երեք հիմնարար խնդիրները.

Առաջին մասում՝ ավերել, անխնա կերպով և առանց որևէ զիջողականության, աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի վերաբերյալ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում առկա հավատալիքներն ու հայացքները, որոնք նրա մեջ բույն են դրել բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում:

Երկրորդ մասում՝ ընթերցողին ծանոթացնել արարչության նոր նյութի և ապացուցել, որ այն ավելի խելամիտ է ու լավորակ:

Երրորդ մասում՝ նպաստել, որ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում գոյանան իրական, ոչ երևակայական պատկերացումներ ոչ այն պատրանքային աշխարհի վերաբերյալ, որ նա զգում է իր շուրջ, այլ իրականում գոյություն ունեցողի:

*«Որնէ մեկը նրանցից, ովքեր հետաքրքրվում են իմ գրվածքներով,
չպետք է նույնիսկ փորձի դրանք կարդալ այլ հերթականությամբ,
քան նշված է. այլ կերպ ասած, երբեք չպետք է կարդա իմ որնէ գրվածքը՝
առանց լավ ուսումնասիրած լինելու իմ նախորդ գործերը»:*
Գ. Հ. Գյուրջին

Ընկերական խորհուրդ

(հանպատրաստից գրված է հեղինակի կողմից,
երբ արդեն տպագրության պատրաստ գիրքը
հանձնվում էր հրատարակման)

Իրենց ամբողջ կարդացածի կամ լսածի նկատմամբ ժամանակակից մարդկանց ընկալման արդյունավետության վերաբերյալ արված բազմաթիվ հետևությունների և եզրահանգումների հիման վրա, որոնց հանգել եմ իմ փորձարարական պրպտումների ընթացքում, նաև ելնելով հնուց եկած մի իմաստուն ասույթի գաղափարից, որը հենց նոր մտքիս եկավ, այն է՝ «Ամեն մի աղոթք կարող է լսելի դառնալ Վերին Ուժերին և համապատասխան արձագանքի արժանանալ, եթե այն արտաբերվում է եռակի.

առաջին անգամ՝ ի ողջություն ծնողների կամ նրանց հոգու հանգստության համար,

երկրորդ անգամ՝ ի ողջություն մերձավորի,

և միայն երրորդ անգամ՝ հանուն քեզ»,

անհրաժեշտ եմ համարում լիովին հրատարակման պատրաստ այս գրքի հենց առաջին էջում տալու հետևյալ խորհուրդը. «Իմ յուրաքանչյուր գրավոր շարադրանքը կարդացեք եռակի.

առաջին անգամ՝ հենց այնպես, ինչպես սովոր եք կարդալ բոլոր ժամանակակից գրքերն ու թերթերը,

երկրորդ անգամ՝ այնպես, կարծես բարձրաձայն կարդում եք ուրիշ մեկի համար,

և միայն երրորդ անգամ ջանացեք հասկանալ գրվածքիս բուն էությունը»:

Միայն այդ դեպքում կարող եք ակնկալել, որ ձեր սեփական, միայն ձեզ հատուկ անաչառ կարծիքը կկազմեք իմ գրվածքների վերաբերյալ: Եվ միայն այդ դեպքում կիրականանա իմ հույսը, որ դուք, ձեր ըմբռնմանը համապատասխան, կքաղեք այն առանձնահատուկ օգուտը, որը ես ակնկալում եմ և կամենում ձեզ իմ ողջ էությամբ:

Հեղինակ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻԹ – Նախկին քաղաքակրթությունների պտուղները և ժամանակակիցների ծաղկումը

Լ – Արվեստ

ԼԱ – Բեհեդգեբուղի վեցերորդ և վերջին այցը Երկիր մոլորակ

ԼԲ – Հիպնոտիզմ

ԼԳ – Բեհեդգեբուղը՝ արհեստավարժ հիպնոսող

ԼԴ – Բեհեդգեբուղը Ռուսաստանում

ԼԵ – Քարնակ տիեզերանավի անկման նախանշված ուղու փոփոխությունը

ԼԶ – Մի փոքր ավելի շատ՝ գերմանացիների մասին

ԼԷ – Ֆրանսիա

ԼԸ – Կրոն

ԼԹ – Սուրբ Քավարան մոլորակի մասին

ԳԼՈՒԽ ԻԹ
Նախկին քաղաքակրթությունների պտուղները
և ժամանակակիցների ծաղկումը

«Ելնելով Երկրում բազմացող և քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներին վերաբերող իմ պատմությունների նմանագագակալան ընթացքից՝ այժմ, զավա՛կս, ես անպայման քեզ պետք է մի փոքր ավելի շատ բան պատմեմ «հույներ» և «հռոմեացիներ» կոչվող երկու հզոր հանրությունների մասին, որոնք քո այդ չարաբաստիկ մոլորակի մակերևույթի վրայից իսպառ սրբեցին Էաբուխ-Սիրող Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների արգասիքների անգամ հիշողությունները:

Նախ ես պետք է քեզ ասեմ, որ այն ժամանակաշրջանում, երբ քո այդ մոլորակի Ասիա աշխարհամասում ունեւ եռուղեղ էակի ներկայությունում Վերնից կանխորոշված սաղմնավորում ստացավ մեր Համատիեզերական Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշը, ինչպես նաև նրա Սրբազնագույն Գործունեության և քո սիրելիների կողմից այդ Գործունեության արգասիքների աստիճանական ոչնչացման ընթացքում հարևան Եվրոպա կոչվող աշխարհամասում գոյատևում էին քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մեծաքանակ խմբեր, որոնք վաղուց արդեն կազմավորել էին ինքնուրույն հանրություններ:

Իմ կողմից արդեն հիշատակված տիեզերական օրենքի համաձայն, այդ ինքնուրույն հանրությունների շարքում կային, այսպես կոչված, «բավականին հզոր», այսինքն՝ լավ կազմակերպված և փոխադարձ ոչնչացման առավել շատ միջոցներ ունեցող, երկու մեծ հանրություններ՝ հույները և հռոմեացիները:

Եվ քո սիրելիների ժամանակակից ներկայացուցիչների կարծիքով «շատ հինավուրց» այդ երկու հանրությունների մասին անպայման հարկավոր է պատմել հնարավորինս մանրամասն այն պատճառով, որ նրանք ոչ միայն, ինչպես արդեն ասացի, իրենց թշվառ մոլորակի երեսից սրբեցին վերջին արգասիքները, որոնք հետագա բոլոր դարաշրջաններում բարերար կլինեին բոլոր եռուղեղ էակների համար, և Էաբուխ-Սիրող Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքներին վերաբերող նույնիսկ ցանկացած հիշողություն, այլև պատճառ դարձան այն բանին, որ հիմա քո սիրելիների բանականության մեջ իսկական անհեթեթություն է տիրում, և ամբողջովին հետաձ է ապրել այն «հիմնարար լինելիական ազդակը», որն «օրգանական ամոթ» է կոչվում և օբյեկտիվ բարոյականության հիմնական լծակն է:

Այդ երկու խոշոր խմբավորումներին և հետագա դարաշրջանների էակներին նրանց հրամցրած զանազան «բարիքներին» առավել սերտ ծանոթությունը քեզ հնարավորություն կտա, որ լավ պատկերացնես ու հասկանաս, թե հատկապես ինչպես են այնտեղ կազմավորվում ինքնուրույն հանրություններ, և թե ինչպես տվյալ հանրությունը, էակներից բոլորովին անկախ հզորանալով, օգտվում իր այդ հզորությունից, որպեսզի ոչնչացնի «ավելի թույլ հանրությունների» ստեղծած ամեն ինչը և նրանց պարտադրի իր «նոր գյուտերը» դեպքերի մեծ մասում անկեղծորեն երևակայելով, որ իրապես դա հենց այն է, ինչ պետք է նրանց:

Պետք է նախազգուշացնեմ, զավա՛կս, որ այդ հինավուրց հանրությունների ծագման պատմությանը և հույների ու հռոմեացիների հետագա կյանքին վերաբերող իմ պատմածները հիմնված չեն իմ սեփական հետազոտությունների վրա. ես միայն քեզ փոխանցում եմ տեղեկություններ, որոնք ստացել եմ մեր ցեղակիցներից մեկից, որը որոշել է ընդմիջտ ապրել քո այդ մոլորակում:

Բանն այսպես եղավ. երբ վեցերորդ և վերջին անգամ իջա Երկիր մոլորակ, մտադրվեցի ամեն գնով ինձ համար վերջնականապես պարզել, թե այդ մոլորակի եռուղեղ էակների հոգեկառույցն ինչու՞ է այդքան արտառոց դարձել, փոխանակ մնալու այնպիսին, ինչպիսին մեր Մեծ Տիեզերքում բնակվող մնացած եռուղեղ էակներն ունեն:

Եվ երբ իմ հետազոտությունների ընթացքում բազմիցս փաստեցի, որ ժամանակակից էակների ընդհանուր հոգեկառույցի զանազան աննորմալությունների պատճառը հենց այն, այսպես կոչված, «քաղաքակրթությունն» է եղել, որը սկզբնավորել են այդ էակների հույներ և հռոմեացիներ կոչված խմբավորումները, ես ստիպված եղա նրանց վերաբերող որոշ մանրամասներ պարզել:

Բայց քանի որ այդ ժամանակ ես ամբողջովին կլանված էի Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի գործունեության հետազոտությամբ, ապա մեր այն ցեղակցին, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, մինչև

հիմա «թաղումների գործով» է զբաղվում Եվրոպա աշխարհամասի մեծ քաղաքներից մեկում, հանձնարարեցի, որ զբաղվի քո սիրելիների այդ երկու ինքնություն խմբավորումների ծագման պատմության հարցերով՝ նրանց, այսպես կոչված, «սուբյեկտիվ լինելիական Լինելիության» առումով:

Մեր այդ ցեղակցի հետազոտություններից պարզորոշ երևաց, որ հոյակերտ Բաբելոն քաղաքի ժամանակներից շատ առաջ, որի մասին պատմել եմ, այսինքն՝ այն ժամանակ, երբ այդ տարօրինակ էակների գոյատևումը տեղի էր ունենում հիմնականում Ասիա աշխարհամասում, և նրանց կուլտուրայի գլխավոր կենտրոնն էլ Թիքյամիշն էր, հիշյալ Եվրոպա աշխարհամասում, որը հիմա քո սիրելիների գոյատևման գլխավոր վայրն է, դեռևս չկային կազմավորված որոշակի հանրություններ:

Այն ժամանակ այդ աշխարհամասում կային միայն երկուդեղ և միաուդեղ էակներ, որոնք «վայրի չորքոտանիներ» և «սողուններ» են կոչվում, իսկ քո սիրելի երկոտանի էակները նույնքան վայրի էին, որքան այդ չորքոտանիները և այդ աշխարհամասում ապրում էին ընդամենը մի քանի փոքր խմբերով:

Երկոտանի էակների այդ փոքր խմբերն ընդամենը զբաղվում էին չորքոտանիներ ու սողուններ ոչնչացնելով և ժամանակ առ ժամանակ նաև իրար էին ոչնչացնում:

Եվ քո սիրելիների քանակը Եվրոպա աշխարհամասում ավելացավ միայն այն բանից հետո, երբ այնտեղ հասան ու ի վերջո բնակություն հաստատեցին Պախրակարանի՝ մի տեղից մյուսը քոչող վերաբնակները:

Այդ ժամանակահատվածի ավարտին Եվրոպա աշխարհամաս տեղափոխվեցին թիքյամիշյան առաջին ասիական խմբի որոշ քանակությամբ էակներ, որոնք ըստ իրենց զբաղմունքի պատկանում էին երկու տարբեր խմբերի, այն է՝ մի մասը զանազան ծովային մասնագիտացում ունեին, իսկ մյուս մասը «տավարաբույծներ» ու «ոչխարաբույծներ» էին:

Տավարաբույծների ընտանիքները բնակություն հաստատեցին գլխավորապես աշխարհամասի հարավային ափերին, քանի որ այդ վայրերն այն ժամանակ շատ հարմար էին նման չորքոտանիներ պահելու ու արածեցնելու համար:

Երկրային էակների այդ խումբն այն ժամանակ անվանվում էր «լատինականեր», այսինքն՝ «հովիվներ»:

Սկզբում այդ հովիվներն իրենց ընտանիքների ու հոտերի հետ իրարից անջատ էին ապրում տարբեր վայրերում, բայց հետո նրանց քանակն աստիճանաբար ավելացավ մասամբ Ասիա աշխարհամասից նոր եկողների հաշվին, որոնք նույն զբաղմունքն ունեին, ինչ որ իրենք, մասամբ էլ այն պատճառով, որ նրանք ավելի ու ավելի բեղուն էին դառնում, քանի որ Երկիր մոլորակը սկսում էր հարմարվել պահանջվող թրթիռների որակի վատացմանը, որոնք գոյանում էին նրանց ճառագումներից՝ դրա համար օգտագործելով այն թրթիռները, որոնք այժմ առաջանում են միայն սրբազան Ռասկուարնոյի գործընթացից կամ, ինչպես իրենք են ասում, «իրենց մահից»:

Եվ այդպես, շնորհիվ այդ ամենի՝ նրանց քանակը մեծապես աճեց, և արտաքին պայմաններն արդեն տարբեր ընտանիքների խմբերի միջև հաճախակի փոխհարաբերությունների հաստատում էին պահանջում: Արդյունքում նրանք կազմավորեցին իրենց առաջին ընդհանուր բնակավայրը և այն անվանեցին «Հոռմբ»:

Հենց ասիական հովիվների այդ խմբից էլ հետագայում առաջացան նշանավոր հոռմեացիները՝ կրելով իրենց առաջին ընդհանուր բնակության վայրի անունը:

Իսկ այն ասիացի էակները, որոնց զբաղմունքը ծովային մասնագիտացումներն էին, այսինքն՝ ձկնորսությունն ու սպունգների, կորալների, ծովային ջրիմուռների հավաքումը, ընտանիքներով գնացին և, իրենց զբաղմունքին համապատասխան, բնակություն հաստատեցին իրենց Աշխարհք աշխարհամասի արևմտյան ափերին կամ Եվրոպա աշխարհամասի հարավ-արևելյան ափերին կամ էլ այն նեղուցների կղզիների վրա, որոնք դեռևս բաժանում էին Ասիա և Եվրոպա աշխարհամասերը:

Երկրային եռուդեղ էակների այդ նոր կազմավորված խմբերն այն ժամանակ կոչվում էին «հելենականեր», ինչը բառացի նշանակում է «ձկնորսներ»:

Այդ խմբի էակների թիվն էլ էր աճում այն նույն պատճառներով, որոնք արդեն նշեցի հովիվների խմբավորման հետ կապված:

Նշված երկրորդ խմբի էակներն անվանումը շատ անգամ է փոխվել, և վերջիվերջո նրանք կոչվեցին «հույներ»:

Եվ ահա, զավա՛կս, հենց այս երկու խմբերի էակները գլխավոր պատճառներից մեկը հանդիսացան, որ քո ժամանակակից սիրելիների բանականությունը մեքենայական դարձավ, իսկ նրանց *լինելիական ամոթի* ազդակի առաջացումը կատարելապես հետաճ ապրեց:

Հենց հույները պատճառ դարձան, որ այնտեղի եռուղեղ էակների բանականությունն աստիճանաբար այլասերվեց և ի վերջո այնքան հետ գնաց, որ ժամանակակից էակների մոտ դարձավ, ինչպես կասեր մեր սիրելի Մովսես Նասրեդինը, «իսկական մաճնի ջրաղաց»:

Իսկ հռոմեացիներն էլ իրենց հերթին պատճառ դարձան, որ հաջորդական փոփոխությունների արդյունքում այնտեղի ժամանակակից եռուղեղ էակների ներկայություններում այդպես էլ չբյուրեղացան այն գործոնները, որոնք ուրիշ եռուղեղ էակների ներսում ծնում են «*բնագդական ամոթ*» կոչվող խթանը, այսինքն՝ այն լինելիական խթանը, որի շնորհիվ պահպանվում են այսպես կոչված «առաքինությունը» և «օբյեկտիվ բարոյականությունը»:

Այսպիսով, այնտեղ առաջացան երկու հանրություններ, որոնք հետագայում, ինչպես այնտեղ հաճախ է պատահում, որոշակի ժամանակահատվածում դարձան շատ կոտ և հզոր: Իսկ հաջորդ սերունդների էակներին թողած նրանց հետագա վնասակար «ժառանգության» պատմությունն այսպիսին է:

Համաձայն հիշյալ մեր ցեղակցի հետազոտությունների՝ հետագայում «Հունաստան» կոչված հանրության էակների ամենավաղեմի նախնիները հաճախ ստիպված էին լինում ծովում տեղի ունեցող հաճախակի փոթորիկների պատճառով իրենց ծովային զբաղմունքները դադարեցնել, ապաստան գտնել անձրևից ու քամուց պաշտպանված վայրերում և ձանձրության գանազան «խաղեր» խաղալ, որոնք հորինում էին զվարճանալու նպատակով:

Ինչպես հետագայում պարզվեց, այդ հինավուրց ձկնորսները սկզբում զվարճանում էին այնպիսի խաղերով, ինչպիսիք հիմա խաղում են, պետք է ասել, դեռևս դպրոցահասակ չդարձած երեխաները, քանի որ դպրոց գնացողներին այնքան շատ տնային առաջադրանքներ են տալիս, որոնք գլխավորապես կազմված են լինում տհասնամուսության գանազան թեկնածուների ստեղծած ոտանավորներն «անգիր անելուց», որ խեղճ երեխաներին բոլորովին ժամանակ չի մնում խաղեր խաղալու համար:

Կարճ ասած՝ այդ խեղճ ձանձրացող ձկնորսները սկզբում խաղում էին այնտեղ արդեն վաղուց գոյություն ունեցող սովորական երեխայական խաղեր, բայց հետո, երբ նրանցից մեկը նոր խաղ հորինեց, որը «ջուրծեծոցի» էր կոչվում, բոլորին դա այնպես դուր եկավ, որ հետադուր միայն դրանով էին զվարճանում:

Այդ խաղի էությունն այն էր, որ ինչ-որ մեկը հարց էր ձևակերպում անպայման որևէ բացահայտ անհերթելի «չնչին բանի» վերաբերյալ, և նա, ում տրվում էր այդ հարցը, պետք է ջանար տալ հնարավորին չափ ճշմարտանման պատասխան:

Եվ ահա հենց այդ խաղն էլ դարձավ հետագայում տեղի ունեցածի պատճառը:

Այդ ձանձրացող հինավուրց ձկնորսների մեջ եղան մի քանի այնպիսի «հնարամիտ» ու «ստեղծարար» էակներ, որ ճարպկորեն հաջողեցրին այդ յուրօրինակ «խաղի» կանոնների համաձայն հորինել շատ երկարաշունչ բացատրություններ:

Իսկ երբ նրանցից մեկը գլխի ընկավ, թե ինչպես «շնաձուկ» կոչվող ձկան կաշվից պատրաստի այն, ինչ հետագայում «մագաղաթ» կոչվեց, ապա այդ ճարպիկներից մի քանիսը միայն այն բանի համար, որ իրենց բարեկամների մոտ «գլուխ գովեն», սկսեցին իրենց այդ երկար բացատրությունները գրի առնել այդ շնաձկան կաշիների վրա՝ օգտագործելով պայմանական նշաններ, որոնք նախապես հորինել էին «մկան թակարդ» կոչվող մի ուրիշ խաղի համար:

Եվս որոշ ժամանակ անցնելուց հետո, երբ այդ ձանձրացող ձկնորսներին արդեն փոխարինել էին նրանց հետնորդները, վերջիններս ժառանգություն ստացան և՛ այդ գրոտված կաշիները, և՛ նշված յուրահատուկ «խաղի» նկատմամբ կիրքը. և այդ նորահայտ այլազան հորինվածքները՝ ինչպես իրենց իսկ ստեղծածները, այնպես էլ նախնիներից ժառանգածները, նրանք առաջին անգամ անվանեցին «գիտություն» հնչեղ անունով:

Եվ այդ ժամանակներից սկսած, քանի որ գիտություններ «թխելու» կիրքը փոխանցվում էր մի սերնդից մյուսին, այդ խմբավորման էակները, որոնց նախնիներն ընդամենը ասիացի ձկնորսներ էին, դարձան ամեն տեսակի գիտություններ հորինելու «մասնագետներ»:

Դեռ ավելին, այդ գիտությունները նույնպես սկսեցին փոխանցվել սերնդեսերունդ, և դրանցից շատերը համարյա առանց փոփոխության հասել են այդ մոլորակի ժամանակակից էակներին:

Ուստի, այսպես կոչված «*էգոպլաստիկուարիներ*» համարյա կեսը, որոնք առաջանում են այդ չարաղետ մոլորակի ժամանակակից էակների բանականության մեջ, և որոնցով սովորաբար ձևավորվում է էակների, այսպես կոչված, «*լինելիական աշխարհայացք*», բյուրեղանում է հենց այն «ճշմարտություններից», որոնք հորինվել են ձանձրացող ձկնորսների և նրանց հետագա սերունդների ու հետնորդների կողմից:

Ինչ վերաբերում է հինավուրց հովիվներին, որոնք կազմավորեցին «Հոռմ» կոչվող մեծ ու հզոր հանրությունը, ապա նրանց նախնիները նույնպես վատ եղանակի պատճառով հաճախ ստիպված էին լինում իրենց հոտերն ու նախիրները քշել ծածկ ունեցող վայրեր և ինչ-որ ձևով համատեղ ժամանակ անցկացնել:

Միասին հավաքվելով, նրանք զանազան «գրույցներ» էին վարում: Բայց երբ նույն բաների մասին շատ խոսեցին ու ձանձրացան, նրանցից մեկն առաջարկեց բազմազանության համար զբաղվել մի զվարճությամբ, որը նրանք սկզբում անվանեցին «*cinque contra una*» (*հինգը մեկի դեմ*)՝ մի զբաղմունք, որը ներկայումս նույն անվամբ պահպանվել է նրանց հետնորդների մոտ, որոնք շարունակում են առաջանալ ու գոյատևել այնտեղ:

Քանի դեռ այդ զվարճությամբ միայն արական սեռի էակներն էին զբաղվում, ամեն ինչ «խաղաղ ու հանգիստ» էր ընթանում, բայց երբ որոշ ժամանակ անց նրանց միացան նաև «պասսիվ կեսի» ներկայացուցիչները, այսինքն՝ կանայք, նրանք անմիջապես դա գնահատեցին և շուտով այնպես տարվեցին, որ այդ զբաղմունքի մեջ այնպիսի «նրբությունների» հասան, որ նույնիսկ մեր Համատիեզերական Գերխորամանկ Լյուցիֆերը, որքան էլ ջարդի իր հարգարժան գլուխը, չի կարող հորինել նույնիսկ տասներորդ մասն այն «օյինների», որոնք այդ նախկին հովիվներն այն ժամանակ հորինում էին և պատրաստվում դրանք փոխանցելու այդ չարաբաստիկ մոլորակի իրենց հետագա սերունդներին:

Եվ այսպես, զավա՛կս, երբ երկրային եռուղեղ էակների այդ երկու ինքնուրույն խմբավորումները բազմացան և սկսեցին ձեռք բերել այդ բազմատեսակ արդյունավետ «միջոցները», հենց այն փոխադարձ ոչնչացման միջոցները, որոնց ձեռքբերումը բոլոր հանրությունների համար սովորական նպատակ է եղել իրենց գոյատևման բոլոր ժամանակաշրջաններում, այն ժամանակ նրանք սկսեցին այդ «գործընթացն» ի կատար ածել ուրիշ ինքնուրույն հանրությունների նկատմամբ՝ մեծ մասամբ ավելի թույլերի. դե, ժամանակ առ ժամանակ նաև իրար դեմ էին ելնում:

Այստեղ չափազանց հետաքրքիր է նշել, որ երբ խաղաղ ժամանակներ էին լինում այդ երկու հանրությունների միջև, որոնք համարյա նույն ուժի էին փոխադարձ ոչնչացման միջոցների արդյունավետության իմաստով, իրար սահմանակից բնակավայրերի արարածները հաճախակի հաղորդակցվում և բարեկամական հարաբերություններ էին հաստատում իրար միջև, որոնց արդյունքում կամաց-կամաց իրարից փոխ առան զբաղմունքների այն տեսակները, որոնք հորինվել էին իրենց նախնիների կողմից և դարձել իրենց բնորոշ: Այլ կերպ ասած, հաճախակի շփումների արդյունքում հույն էակները հռոմեացի էակներից յուրացրին սեքսուալ «օյինների» բոլոր նրբությունները և շուտով ձեռնամուխ եղան իրենց, այսպես կոչված, «աթենական գիշերներին»: Միաժամանակ հռոմեացի էակները հույն էակներից յուրացրին «գիտություններ» թխելու գործը և հորինեցին իրենց սեփականը, որը հետագայում շատ նշանավոր դարձավ և կոչվեց «Հռոմեական իրավունք»:

Դրանից հետո շատ ժամանակ է անցել: *Լինելիական դրսևորման* այդ երկու տեսակների հորինողները վաղուց արդեն չկան, և նրանց «հզորագոր» հետնորդները նույնպես ոչնչացված են: Իսկ հիմա... Այդ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակները ծախսում են, և այն էլ մեծ հաճությամբ, իրենց գոյատևման կեսից ավելին և այս կամ այն կերպ ձեռք բերված *լինելիական էներգիան*, որպեսզի անգիտակցաբար, երբեմն էլ՝ գիտակցաբար, տիրապետեն և ի կատար ածեն այն երկու իդեալները, որոնց ծագման նախաձեռնողները եղել են հիշյալ ձանձրացող ասիացի ձկնորսներն ու հովիվները:

Եվ ահա, զավա՛կս, ինչպես երևում է, այն բանից հետո, երբ քո սիրելիների այդ երկու խմբավորումներն իրենց նման էակներին հաջողությամբ ոչնչացնելու հիշյալ արդյունավետ միջոցներից բավականաչափ շատ ունեցան և լիովին տիրապետեցին ուրիշ երկրների էակներին համոզելու կամ ուժով ստիպելու արվեստին, որպեսզի նրանք իրենց ներքին համոզմունքները

փոխարինեն նվաճողների նախնիների հորինածներով, ապա, ինչպես ասացի, նրանք նախ զավթեցին հարևան հանրությունները, որոնք տեղաբաշխված էին Եվրոպա աշխարհամասի վրա, որից հետո նույն նպատակով այդ ընթացքում կուտակված հրոսակախմբերի օգնությամբ արշավեցին դեպի Ասիա աշխարհամաս:

Եվ Ասիա աշխարհամասում նույնպես սկսեցին տարածել իրենց այդ չարաղետ ազդեցությունը՝ սկզբում այդ աշխարհամասի արևմտյան ափերին բնակվող էակների միջավայրում, որտեղ, ինչպես արդեն ասել եմ, հարյուրամյակների ընթացքում քիչ թե շատ նորմալ լինելիական գոյատևման համար *լինելիական ազդակներ* էին ներդրվել, ապա դրանից հետո սկսեցին աստիճանաբար թափանցել այդ աշխարհամասի խորքերը:

Ասիա աշխարհամասի խորքերը թափանցելը շատ հաջող ստացվեց, և նրանց շարքերը համալրվեցին գլխավորապես այն պատճառով, որ Բաբելոնում եղած գիտուն էակները շարունակում էին ամբողջ Ասիա աշխարհամասով մեկ էակների բանականություններն իրենց տհասնամուսական քաղաքական գաղափարներով վարակելու գործը:

Նվաճողներին շատ օգնեց նաև այն, որ ասիական էակների բնագոյներում դեռևս պահպանվել էին այն ձեռնադրյալների ու քրմերի ազդեցությունների արգասիքները, որոնք Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի աշակերտներն էին, որն իր քարոզներում այլ բաների շարքում նրանց ներշնչել էր գլխավոր պատվիրաններից մեկը, որն ասում էր.

«Մի՛ սպանիր ուրիշին, եթե նույնիսկ քո սեփական կյանքին վտանգ է սպառնում»:

Օգտվելով այս ամենից՝ այդ նախկին ձկնորսներն ու հովիվները հնարավորություն ունեցան առաջ շարժվելու՝ իրենց ճանապարհին ոչնչացնելով բոլոր նրանց, ովքեր հրաժարվում էին երկրպագել այն «աստվածներին», որոնց վերջին հաշվով հենց իրենք էին ստեղծել՝ երևակայական «գիտությամբ» և չտեսնված այլասերվածությամբ:

Սկզբում այնտեղի հետագա բոլոր սերունդների եռուղեղ էակների համար «չարի սերմեր տարածող» և Եվրոպա աշխարհամասում ծնունդ առնող այդ էակները, հատկապես հույները, թափանցելով Ասիա աշխարհամասի խորքերը, գործում էին դանդաղ, սակայն արդյունավետ:

Բայց երբ որոշ ժամանակ անց նրանց, այսպես կոչված, «բանակի» գլուխ կանգնեց լիովին կազմավորված գերփառասեր հույն և ապագա տհասնամուս Ալեքսանդր Մակեդոնացին, ապա այդ ժամանակից սկիզբ առավ ներկայումս Համատիեզերական Գերսրբազնագույն Էակ Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Գիտակցական Աշխատանքների արգասիքների վերջին պատառիկների լրիվ ոչնչացման գործընթացը և, ինչպես ասում են, կրկին սկսվեց «հին պատմությունը»:

Թեև ամեն անգամ, երբ փոխվում էր քո սիրելիների՝ այդ տարօրինակ եռուղեղ էակների կուլտուրայի կենտրոնի վայրը, և ծագում էր նոր «քաղաքակրթություն», և ամեն մի այդպիսի նոր քաղաքակրթություն հաջորդ դարաշրջանի էակների բերում էր և՛ նոր, և՛ չարաղետ բաներ, սակայն այդ բազմաթիվ քաղաքակրթություններից և ոչ մեկը հետագա դարաշրջանների էակներին (ներառյալ, իհարկե, նաև ժամանակակից դարաշրջանի), չի հրամցրել չարի այնքան մեծ պաշար, որքան այդ նշանավոր «հունա-հռոմեական քաղաքակրթությունը»:

Եթե չխոսենք մեծաթիվ այլ երկրորդական հոգեկան գծերի մասին, որոնք սազական չեն եռուղեղ էակներին և հիմա առկա են քո սիրելիների ներկայություններում, ապա այդ քաղաքակրթությունը՝ գլխավորապես մեղավոր է այն բանում, որ հետագա սերունդների եռուղեղ էակների, հատկապես՝ ժամանակակիցների ներկայություններից լրիվ չքացել են *«առողջ տրամաբանական մտածողության»* համար տվյալներ բյուրեղացնելու և *«լինելիական ինքնա-ամոթի»* ազդակ ծնելու հնարավորությունները:

Այսինքն՝ *«հին հունական երևակայական գիտությունները»* լրիվ ի չիք են դարձրել դրանցից առաջինը, իսկ *«հին հռոմեական այլասերվածությունը»*՝ երկրորդը:

Այդ հունա-հռոմեական քաղաքակրթության սկզբնական շրջանում հիշյալ չարաղետ ազդակները, որոնք ներկայումս *լինելիական* են դարձել, այն է՝ *«երևակայական գիտություններ հորինելու կիրքը»* և *«այլասերվածության կիրքը»*, բնորոշ էին միայն հույն և հռոմեացի էակներին. իսկ հետագայում, երբ, ինչպես քեզ ասել եմ, այդ երկու հանրություններին հաջողվեց տեղ դառնալ նշածու հզորությանը, և նրանք սկսեցին հաղորդակցվել այլ հանրությունների էակների հետ և վերջիններիս վրա ազդեցություն գործել, այդ ուրիշ հանրություններին պատկանող քո թշվառ սիրելիներն աստիճանաբար վարակվեցին այդ արտառոց ու անբնական *լինելիական ազդակներով*:

Մի կողմից՝ դա տեղի ունեցավ, ինչպես արդեն ասել եմ, այդ երկու հանրությունների մշտական ազդեցության հետևանքով, և մյուս կողմից՝ այդ մոլորակի բոլոր եռուղեղ էակների համար ընդհանուր և մինչև այդ նրանց մեջ լավ արմատներ ձգած հոգեկառույցի այն յուրահատկության հետևանքով, որը «նմանակել» է կոչվում:

Այդպիսով, այդ երկու հինավուրց հանրությունների այդ «հորինվածքները» կամաց-կամաց հանգեցրին նրան, որ ներկայիս քո սիրելիների առանց այն էլ բավականին անկայուն հոգեկառույցը, առանց բացառության բոլորինը, այժմ այնքան խաթարված է դարձել, որ նրանց «աշխարհայացքն» ու առօրյա գոյատևման ամբողջ կարգն արդեն խաբսխվում և ընթանում են այդ հունա-հռոմեական քաղաքակրթության էակների հորինվածքների հիման վրա, այսինքն՝ *«երևակայելու»* և *«սեռական բավարարվածություն ստանալու ձգտման»* հիման վրա:

Այստեղ շատ հետաքրքիր է նշել, որ թեև, ինչպես արդեն քեզ պատմել եմ, եռուղեղ էակներին բնորոշ *«օրգանական ինքնա-ամոթն»* ամբողջովին չքացավ քո սիրելիների ներկայություններից հին հռոմեական ժառանգության հետևանքով, այնուհանդերձ նրանց ներսում առաջացավ դրա նման ինչ-որ բան: Ժամանակակից քո սիրելիների ներկայություններում ինչքան ասես կա այդ կեղծ *լինելիական ազդակից*, որին իրենք նաև «ամոթ» են անվանում, սակայն ինչպես դրա, այնպես էլ բոլոր մյուսների ծագման նախադրյալները չափազանց ինքնատիպ են:

Այդ *լինելիական ազդակը* նրանց ներկայություններում ծագում է միայն այնժամ, երբ նրանք ինչ-որ բան են անում, որն իրենց իսկ հաստատած սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմաններում ընդունված չէ անել մյուսների ներկայությամբ:

Բայց եթե ոչ ոք չի տեսնում, թե ինչ են անում, ապա ինչ էլ որ անելիս լինեն՝ նույնիսկ եթե դա, ըստ իրենց սեփական գիտակցության ու զգացողության, անցանկալի բան է, այն նրանց ներսում որևէ ազդակ չի ծնում:

«Երանությունը», որն այնտեղ մոգոնվել է հինավուրց հռոմեցիների կողմից, վերջին ժամանակներում այնպես է ներծծվել քո այդ չարաբաստիկ մոլորակի բոլոր աշխարհամասերում բազմացող քո սիրելիների բնավորությունների մեջ, որ հիմա նույնիսկ դժվար է ասել, թե ժամանակակից ո՞ր հանրությունների էակներն են ամենաշատը ժառանգություն ստացել այդ «հաճկատար» հռոմեցիներից:

Իսկ ինչ վերաբերում է հինավուրց հույներից մնացած ժառանգությանը, այն է՝ զանազան երևակայական գիտություններ հորինելու կրքին, այն հավասար չափով բնորոշ չի դարձել բոլոր ժամանակակից եռուղեղ էակներին, այլ փոխանցվել է միայն որոշ էակների, որոնք ծնունդ են առնում քո այդ արտասովոր մոլորակի ցամաքային հատվածների վրա տեղաբաշխված ժամանակակից բոլոր մեծ ու փոքր հանրությունների էակների միջավայրերում:

Մասնավորապես, *«երևակայական գիտություններ հորինելու»* այդ կիրքը հինավուրց հույներից գլխավորապես փոխանցվել է «Գերմանիա» կոչվող ժամանակակից մի հանրության էակներին:

Այդ ժամանակակից Գերմանիայի էակները համարձակորեն կարող են կոչվել *«հին հունական քաղաքակրթության անմիջական ժառանգորդներ»*, քանի որ ներկայումս մեծ մասամբ հենց նրանք են, որ ամեն տեսակի նոր գիտություններ ու գյուտեր են հրամցնում ժամանակակից քաղաքակրթությանը:

Դժբախտաբար, զավա՛կս, Գերմանիա կոչվող ժամանակակից հանրության էակները, ինչպես ասում են, շատ առումներով գերազանցում են հին Հունաստանի էակներին:

Հինավուրց հույների հորինած գիտությունների պատճառով փչացել և դեռևս շարունակում է փչանալ մնացած էակների միայն լինելիական մտածողությունը:

Բայց, ի հավելումս դրա, Գերմանիա կոչվող հանրության ժամանակակից էակներն այնպիսի մեծ վարպետության են հասել նման գիտություններ հորինելու գործում, որ հիշյալ իմաստակություն բանեցնելու առանձնահատուկ հիվանդությունը լայնորեն տարածվել է քո մնացած սիրելիների միջավայրերում. և այդ հիվանդության ընթացքում երբեմն պատահում է, որ շատերը կիսագիտակցաբար կամ նույնիսկ կատարելապես մեքենայաբար Համայն Գոյը իրականացնող համատեղեցիական գործընթացի որևէ մանրուք են նկատում և այդ մասին հայտնում ուրիշներին, որից հետո բոլորը միասին դա օգտագործում են իրենց այս կամ այն նոր գյուտի մեջ՝ դրանով իսկ ավելացնելով այն «նոր միջոցների» քանակը, որոնք վերջին երկու հարյուրամյակում այնտեղ այնքան շատ են կուտակվել, որ նրանց ընդհանուր ազդեցությունն արդեն վերածվել է, այսպես կոչված

«արդյունարար քայքայող ուժի»՝ ի տարբերություն, այսպես կոչված, «Բնության արդյունարար ստեղծարար ուժի»:

Եվ իրոք, զավա՛կս, հենց միայն ժամանակակից Գերմանիայի էակների հորինած գիտությունների շնորհիվ այդ մոլորակի եռուղեղ էակները, որոնք պատկանում են ինչպես հենց այդ, այնպես էլ մյուս հանրություններին, այժմ գյուտեր անելու հնրավորություն են ձեռք բերել և համարյա ամեն օր այսուայնտեղ որևէ նոր գյուտ կամ նոր միջոց են հորինում և, դրանցից օգտվելով իրենց գոյատևման ընթացքում, հիմա արդեն խեղճ Բնությանը հասցրել են այն վիճակին, որ նա, արդեն իսկ թուլացած լինելով ոչ իր մեղքով, հազիվ է կարողանում իրականացնել, այսպես կոչված, «էվոլյուցիայի» և «ինվոլյուցիայի» գործընթացները:

Որպեսզի դու պարզ պատկերացնես և ավելի լավ հասկանաս, թե ինչպես են ժամանակակից անմիջական ժառանգորդները գերազանցել իրենց «ժառանգատուներին», ես հիմա քեզ պետք է պատմեմ որոշ լայն կիրառություն գտած միջոցների մասին, որոնք ցայսօր գոյություն ունեն և իրենց գոյության համար պարտական են բացառապես հին Հունաստանի անմիջական ժառանգորդներ հանդիսացող այդ «Բնության օգնականներին»:

Ես հիմա քեզ կպատմեմ ներկայումս գոյություն ունեցող և ամենուրեք կիրառվող որոշ միջոցների մասին, որոնք հորինել են Գերմանիա կոչվող ժամանակակից հանրության էակները:

Իմիջիայլոց, նախ կուզենայի հիշատակել մի շատ տարօրինակ երևույթ, այն է՝ հին հույների ժամանակակից «տեղապահներն» իրենց վերոհիշյալ չարաղետ գյուտերը կոչում են այնպիսի անուններով, որոնք, չգիտես ինչու, վերջանում են «ին»-ով:

Գերմանացի էակների հորինած բազմաթիվ հատկապես չարաղետ գյուտերից որպես օրինակ բերենք հենց այն հինգ, այսպես կոչված, «քիմիական նյութերը», որոնք գոյություն ունեն հետևյալ անուններով՝

- 1) սատկաին,
- 2) անիլին,
- 3) կոկաին,
- 4) ատրոպին և
- 5) ալիզարին:

Այս հինգ քիմիական նյութերը բոլոր աշխարհամասերի ու կղզիների էակները ներկայումս օգտագործում են, ինչպես կասեր մեր սիրելի Մովսես Նասրեդինը՝ «նույնիսկ առանց որևէ խնայողության»:

Գերմանացիների կողմից հատուկ հորինված նյութը՝ սատկաինը, որն առաջինն է թվարկվածների մեջ, այլ բան չէ, քան «սամուկուրուհագար¹», այսինքն՝ այն յոթ «չեզոքացնող գազերից» մեկը, որոնք միշտ լինում են ամեն մի մոլորակի ընդհանուր ներկայությունում և մասնակցում են ամեն մի որոշակի վերմոլորակային կամ միջմոլորակային գոյացության «ավարտուն բյուրեղացման» գործին, և որոնք իրենց մեկուսացված վիճակում միշտ և ամենուրեք ծառայում են որպես «առանց խտրության ցանկացած արդեն գոյացածի քայքայիչներ»:

Այդ գերմանական գյուտի մասին մի անգամ այլ բաների շարքում ես այնտեղ իմացա, որ երբ այդ հանրության էակներից մեկին վերը նշված պատճառներով վիճակվել է ստանալ այդ գազը «վերմոլորակային» և «միջմոլորակային» որոշակի գոյացություններից ու նշված եղանակով տեսնել դրա յուրահատկությունը, հետո պատմել այդ մասին մի քանի ուրիշների, ապա այն բանի հետևանքով, որ ինչպես իրենց հանրության մնացած էակների, այնպես էլ հենց իրենց ներսում այդ ժամանակ ընթանում էր այդ մոլորակի եռուղեղ էակներին բնորոշ գլխավոր առանձնահատկության, այսպես կոչված, «սաստիկ զգացողություն», այն է՝ «իրենց նմաններին ոչնչացնելու հրամայական պահանջ», և իրոք, այդ հանրության բոլոր էակներն այդ ժամանակ լիովին համակված էին հարևան հանրությունների էակների գոյությանը վերջ տալու գործով, ուստիև այդ նյութի մասին իրազեկվածներն անմիջապես «մեծ ոգեշնչումով» որոշեցին ամբողջովին իրենց նվիրաբերել այն գործին, որ այդ գազի յուրահատկությունն օգտագործելու մի միջոց գտնեն և դրանով արագորեն վերջ տան մյուս հանրությունների էակների գոյությանը:

¹ ռուս. տարբերակում՝ камыкпыазар, անգլ. տարբերակում՝ samookoorooazar

Երբ այդ նպատակով սկսեցին գործնական հետազոտություններ կատարել, նրանցից մեկը շուտով հայտնաբերեց, որ եթե այդ գազն այնպես խտացվի, որ հետո ցանկացած վայրում ցանկացած ժամանակ հեշտ լինի այն բաց թողնելը, ապա հեշտությամբ կհասնեն իրենց նպատակին:

Այդքանը բավարար եղավ, և, այդ ժամանակից սկսած, այդ գազը, որն արհեստականորեն առանձնացվել էր Համայն Գոյի իրականացման ընդհանուր ներդաշնակությունից, այդ հանրության բոլոր մյուս սովորական էակների կողմից որոշակի ձևով բաց է թողնվում հենց այն տարածքներում և հենց այն ժամանակ, որտեղ և երբ, այսպես կոչված, «թշնամական» հանրությունների էակներն ամենաշատն են կուտակված լինում:

Երբ այդ առանձնապես թունավոր տիեզերական նյութը միտումնավոր կերպով վերոհիշյալ պայմաններում մթնոլորտ է արտանետվում, և երբ ուրիշ համապատասխան տիեզերական նյութերի հետ միախառնվելու մղումով հայտնվում է մոտակայքում գտնվող եռուղեղ էակների մոլորակային մարմիններում, ակնթարթորեն ու լիակատար վերջ է տալիս նրանց գոյությանը կամ, լավագույն դեպքում, ընդմիշտ խաթարում է նրանց ընդհանուր ներկայության այս կամ այն մասի կենսագործունեությունը:

Թվարկածս քիմիական նյութերից երկրորդը՝ անիլինը, քիմիական այն ներկն է, որով հնարավոր է ներկել այն վերամոլորակային գոյացությունների մեծ մասը, որոնցից եռուղեղ էակներն այնտեղ իրենց սովորական *լինելիական գոյատևման* համար անհրաժեշտ զանազան առարկաներ են պատրաստում:

Թեև, շնորհիվ այդ գյուտի, քո սիրելիներն այժմ կարող են ցանկացած առարկա ներկել ցանկացած գույնով, սակայն ինչ է կատարվում այդ առարկաների երկարակեցության հետ. ահա հենց այստեղ է թաքնված իրենց նշանավոր Բիսմարկի «սիրելի կատուն»:

Նախքան այդ չարաղետ անիլինի գոյությունը քո սիրելիներն իրենց սովորական գոյատևման համար արտադրած առարկաները, օրինակ՝ գորգերը, նկարները, բամբակից, փայտից, կաշվից պատրաստված զանազան իրերը, ներկում էին բուսական ծագման հասարակ ներկերով, և այդ պատճառով, թվարկածս իրերը դիմանում էին հինգ, տաս և նույնիսկ տասնհինգ երկրային հարյուրամյակ:

Իսկ հիմա հենց միայն այդ անիլինի և այլևայլ անուններ կրող ներկանյութերի պատճառով, որոնց հիմքում էլի նույն այդ անիլինն է ընկած, ամենաշատը երեսուն տարի հետո դրանցով ներկված առարկաներից միայն հիշողություն է մնում:

Ես նաև պետք է ասեմ, որ ներկայումս Գերմանիա կոչվող հանրության էակները ոչ միայն այն բանի նախապատճառն են, որ ժամանակակից էակների իրեղենն այդքան արագ քայքայվում է այդ չարանենգ անիլինի ազդեցության հետևանքով, այլև որ հինավուրց ժամանակներում պատրաստված իրերը համարյա դադարել են գոյություն ունենալ այդ թշվառ մոլորակի վրա:

Վերջինիս պատճառն այն է, որ իրենց այլազան տհասամամուսական նպատակների և, այսպես կոչված, «գիտական նպատակների» համար նրանք բոլոր երկրներից հավաքել են պահպանված հինավուրց առարկաները և, չիմանալով դրանց հետագա պահպանման ձևը, միայն նպաստել են դրանց արագ քայքայմանը:

Մակայն նրանք օգտագործել և այժմ էլ շարունակում են օգտագործել իրենց հավաքած «հնությունները» որպես «նմուշներ», որպեսզի արտադրեն «լայն սպառման» այնպիսի առարկաներ, որոնք այդ թշվառ մոլորակում հայտնի են «էրզաց» անունով:

Ինչ վերաբերում է իմ թվարկած քիմիական նյութերից երրորդին, որը նրանք հայտնաբերել են և կնքել «կոկաին» անունով, ապա պետք է ասել, որ այդ քիմիական նյութը ոչ միայն Բնությանը շատ է օգնում մոլորակային գոյացությունները, տվյալ դեպքում՝ հենց իրենց սեփական մոլորակային մարմինները, արագորեն քայքայելու գործում, այլ նաև այդ քիմիական միջոցը Երկիր մոլորակի ժամանակակից էակների հոգեկառույցի վրա այնպիսի ազդեցություն է թողնում, որը զարմանալիորեն նման է իրենց նախնիների հոգեկառույցի վրա նշանավոր կունդաբուֆեր օրգանի թողած ազդեցությանը:

Երբ Մեծն Հրեշտակապետ Լույսոսի այդ գյուտն առկա էր նրանց նախնիների կառույցում, այդ օրգանի պատճառով նրանք մշտապես գտնվում էին ճիշտ նույն վիճակում, որում հայտնվում են ժամանակակից էակները, երբ իրենց ներսն են ներարկում կոկաին կոչվող այդ գերմանական գյուտը:

Պետք է նախազգուշացնեմ քեզ, զավա՛կս, որ եթե նույնիսկ գերմանական այդ գյուտի ազդեցությունն այդքան նման է ստացվել նշանավոր կունդաբուֆեր օրգանի ազդեցությանը, ապա դա

Գերմանիա կոչվող հանրության ժամանակակից էակների գիտակցական որևէ մտադրության արդյունքը չէ. նրանք ուղղակի պատահաբար են դարձել Մեծն Հրեշտակապետ Լույսոսի գործակիցները:

Ներկայումս համարյա բոլոր էակները, որոնք դառնում են ժամանակակից քաղաքակրթության իսկական ներկայացուցիչներ, շատ ջանասիրաբար և մեծագույն հաճությամբ ու քնքշանքով ներարկում են իրենց մարմնի մեջ ժամանակակից քաղաքակրթության այդ «բարեշնորհանքը»՝ մշտապես, ինչպես կասեր մեր սիրելի Մովսես Նասրեդինը, «ի փառս կճղակավորի»:

Թվարկածս քիմիական նյութերից չորրորդը, որն «ատրոպին» է կոչվում, ներկայումս ամենուրեք լայն պահանջարկ է վայելում ամենաբազմազան նպատակներով. բայց առավել հաճախ կիրառվում է մի ծայրահեղ արտառոց նպատակով:

Պարզվում է, որ այնտեղ հաստատված նույն սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմանների պատճառով նրանց տեսողական օրգանին հատուկ է դարձել այն, որ ուրիշների դեմքերը գրավիչ ու հաճելի է ընկալում միայն այն դեպքում, երբ նրանց աչքերի գույնը մուգ է լինում:

Իսկ երբ այդ ատրոպին կոչվող նյութը որոշակի եղանակով կաթեցվում է էակների աչքերի մեջ, ակնաբիրները լայնանում ու մզանում են. ուստիև շատերն իրենց աչքերի մեջ ատրոպին են կաթեցնում, որպեսզի իրենց դեմքերն ուրիշներին հաճելի ու գրավիչ երևան:

Եվ իրոք, սիրելի՛ զավակս, երկրային այն էակները, որոնք գերմանական այդ «բարեշնորհանքը» կաթեցնում են իրենց աչքերի մեջ, մինչև քառասունհինգ տարեկանը շատ «մուգ» աչքեր են ունենում: Ասում եմ «մինչև քառասունհինգ տարեկանը», քանի որ այնտեղ դեռ չի եղել մի դեպք, որ այդ նյութն օգտագործող որևէ մեկը այդ տարիքից հետո շարունակի տեսնել և այդ նյութը նորից կարողանա օգտագործել:

Թվարկածս քիմիական նյութերից վերջինը և հինգերորդը «ալիզարին» է կոչվում և նույնպես լայնորեն տարածված է այնտեղ:

Ժամանակակից քաղաքակրթության այս մի «բարեշնորհանքն» էլ օգտագործում են, այսպես կոչված «հրուշակագործները» և մյուս այն մասնագետները, որոնք այդ մոլորակի մնացած էակների առաջնային սննդի համար զանազան «համեղ» բաներ են պատրաստում:

Այնտեղի այդ հրուշակագործներն ու մյուս արհեստավարժները քո սիրելիների առաջնային սննդի համար նախատեսված նշված համեղ արտադրանքում կիրառում են «անվրեպ խփող» և ալիզարին կոչվող այդ նոր բաղադրանյութը, իհարկե անգիտակցաբար, այն նույն նպատակով, որն ի վերջո ժամանակակից քաղաքակրթության համար վերածվել է իդեալի, մի նպատակ, որը հարգարժան Մովսես Նասրեդինն արտահայտում է հետևյալ բառերով. «Միայն թե ամեն ինչ գեղեցիկ երևա, ի՞նչ փույթ, թե հետո խոտ չի աճի»:

Այսպես թե այնպես, զավա՛կս, հինավուրց Հունաստանի էակների ժամանակակից տեղապահներն այժմ արդեն մեծապես օգնում են խեղճ Բնությանը (ի դեպ, միայն քայքայման գործերում)՝ ներդնելով իրենց բոլոր այն կիրառական նվաճումները, որոնք հիմնված են իրենց իսկ հորինած «գիտությունների» վրա: Իգուր չէ, որ մեր սիրելի Մովսես Նասրեդինը մի այսպիսի իմաստուն արտահայտություն էլ ունի. «Ավելի լավ է սեփական մոր գլխից օրական տասը մագ քաշել, քան չօգնել Բնությանը»:

Ճիշտն ասած, «երևակայական գիտություններ» մոգոնելու և սովորական *լինելիական գոյատևման* նոր եղանակներ հորինելու ունակությունը հին հույներից միայն ժամանակակից Գերմանիայի էակներին չէ, որ անցել է. այդ նույն ունակությունը, հնարավոր է՝ ոչ քիչ չափով, ժառանգել են նաև մի ուրիշ ժամանակակից հանրության էակները, որն իր հերթին նույնպես անկախ է ու ինքնավար:

Քո սիրելիների ժամանակակից այդ հանրությունը «Անգլիա» է կոչվում:

Հինավուրց Հունաստանից Անգլիա կոչվող այդ երկրորդ ժամանակակից հանրության էակներին՝ անմիջականորեն միայն իրենց, անցել է նույնիսկ ամենաչարաղետ հորինվածքներից մեկը, որն իրենք սիրով ընդունել են և այժմ լայնորեն կիրառում են գործնական կյանքում:

Այդ հատկապես չարաղետ հորինվածքը հին հույներն անվանում էին «դիաֆարոն», իսկ ժամանակակից էակներն այն անվանում են «սպորտ»:

Այդ ժամանակակից սպորտի մասին ես քեզ հնարավորինս մանրամասն կպատմեմ իմ այս գրույցների ամենավերջում. իսկ առայժմ պետք է իմանաս, որ թեև այդ Անգլիա կոչվող հանրության էակները նույնպես մեծ քանակությամբ զանազան նոր առարկաներ են հայտնագործում, որոնք պետք

են գալիս իրենց սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում, սակայն քիմիական նյութեր չեն հայտնագործում, ինչպես դա անում են Գերմանիա կոչվող ժամանակակից հանրության էակները. ո՛չ, նրանք գլխավորապես հայտնագործում են, այսպես կոչված, «մետաղական իրեր»:

Հատկապես վերջին ժամանակներում նրանք լավ վարպետացել են քո այդ մոլորակում բնակվող էակների շրջապատում մեծ քանակություններով ամենատարբեր մետաղական իրերի տարածման գործում, ինչպիսիք են՝ կողպեքները, ածելիները, մկան թակարդները, ատրճանակները, գերանդիները, գնդացիները, կաթսաները, սոնիները, թնդանոթները, ծալովի դանակները, փամփուշտները, գրչածայրերը, ականները, ասեղները և դրանց նման ուրիշ շատ բաներ:

Այն բանից հետո, ինչ այդ ժամանակակից հանրության էակներն սկսել են ստեղծել այդ օգտակար իրերը, քո այդ մոլորակի եռուղեղ էակների սովորական գոյատևման գործընթացը դարձել է, ինչպես կասեր մեր սիրելի Մոլլա Նասրեդինը, «ոչ թե կյանք, այլ հաճույք»:

Այդ ժամանակակից հանրության էակները բարերարներ են դարձել քո այդ մոլորակի մնացած ժամանակակից էակների համար՝ նրանց ցուցաբերելով, ինչպես ասում են, «անշահախնդիր օգնություն»՝ հատկապես նրանց առաջնային *լինելիական պարտականության*, այն է՝ ժամանակ առ ժամանակ «փոխադարձ ոչնչացման» գործով զբաղվելու բնագավառում:

Շնորհիվ նրանց՝ այդ *լինելիական պարտականության* իրագործումը քո ժամանակակից սիրելիների համար դարձել է «կատարելապես դատարկ բան»:

Երբ այդ գյուտերը դեռ չկային, քո թշվառ սիրելիները չափազանց դժվարությամբ էին իրականացնում իրենց այդ *լինելիական պարտականությունը*, քանի որ դրա համար հարկ էր լինում տեղը տեղին քրտինք թափել:

Բայց շնորհիվ այն բանի, որ այդ ժամանակակից հանրության էակները զանազան հարմարանքներ ստեղծեցին, հիմա այդ զբաղմունքն արդեն, ինչպես կասեր հարգարժան Մոլլա Նասրեդինը, «լիակատար հաճույք» է դարձել:

Ժամանակակից էակներին հիմա այլևս պետք չէ որևէ ջանք թափել, որպեսզի ամբողջովին ոչնչացնեն իրենց նմաններին:

Երբեմն, իրենց «ծխարաններում» հանգիստ նստած, նրանք կարող են, այսպես ասած, հաճույքի համար ոչնչացնել տասնյակ ու հարյուրավոր իրենց նմանների:

Կարծում եմ, որ արժե մի փոքր քեզ պատմել նաև հիշյալ հունական և հռոմեական քաղաքակրթությունների անմիջական հետնորդների մասին:

Երբեմնի «մեծ» ու «հզորագոր» Հունաստան կոչված հանրության էակների հետնորդները դեռ շարունակում են գոյատևել և նույնպես ունեն իրենց սեփական անկախ հանրությունը. սակայն մնացած անկախ հանրությունների համար ներկայումս նրանք համարյա ոչ մի նշանակություն չունեն:

Նրանք այլևս չեն զբաղվում այն գործով, որով զբաղվում էին իրենց նախնիները՝ նրանք, որ զանազան «երևակայական գիտություններ» հորինելու մեծ մասնագետներ էին. քանզի եթե ժամանակակից հույնը որևէ նոր գիտություն մոգոնի, ուրիշ հանրությունների ներկայիս էակները դրա վրա ոչ մի ուշադրություն չեն դարձնի:

Ուշադրություն չեն դարձնի գլխավորապես այն պատճառով, որ հույների հանրությունն այժմ բավարար քանակի «թնդանոթներ» ու «նավեր» չունի, որպեսզի մնացած ժամանակակից էակների համար, այսպես կոչված, «հեղինակություն» ունենա:

Բայց թեև երբեմնի նշանավոր հույների ժամանակակից հետնորդներն արդեն հետ են վարժվել այնտեղի եռուղեղ էակների համար, այսպես ասած, «կեղծ հեղինակություններ» ծառայելուց, այժմ նրանք համարյա բոլոր մայրցամաքների ու կղզիների վրա հրաշալի հարմարվել են, այսպես կոչված, «խանութներ» բացելու գործին, որոնցում, առանց շտապելու, հանգիստ ու խաղաղ վաճառում են, այսպես կոչված, «սպունգ», «հալվա», ռահաթ-լոխում» և այլն, երբեմն էլ «պարսկական չրեր»՝ չմոռանալով նաև դրանց կողքին դնել «կեֆալ» կոչվող ապխտած ձկից:

Իսկ ինչ վերաբերում է մեզ արդեն ծանոթ հռոմեացիների հետնորդներին, ապա նրանք էլ են շարունակում բազմանալ ու գոյատևել. բայց նրանք արդեն իրենց նախնիների անունով չեն կոչվում, չնայած իրենց ներկայիս հանրության գլխավոր բնակավայրին էլի «Հռոմ» են ասում:

Հետագայում նշանավոր հռոմեացիներ կոչված նախկին հովիվների ներկայիս հանրության էակներին մյուս հանրությունների ժամանակակից էակներն անվանում են «փտալացիներ»:

Բացառությամբ այն առանձնահատուկ լինելիական ազդակի, որն իրենց ներկայություններում առաջինը բյուրեղացրին հինավուրց հոռմեացիները, և որն աստիճանաբար տարածվեց այդ մոլորակի բոլոր եռուղեղ էակների ներկայությունների մեջ՝ իտալացիներ կոչվող այդ էակներին իրենց նախնիներից համարյա թե ուրիշ ոչինչ չի անցել որպես ժառանգություն:

Իտալիա կոչվող ժամանակակից հանրության էակները հիմա հանգիստ ու խաղաղ ապրում են՝ սահմանափակվելով միայն նրանով, որ «մակարոն» կոչվող անվնաս ու անմեղ սննդամթերքի նորանոր տեսակներ են ստեղծում:

Այնուհանդերձ, ժամանակակից Իտալիայի որոշ էակների իրենց նախնիներից ժառանգություն է անցել մի առանձին և շատ յուրահատուկ «հատկանիշ», որը կոչվում է «ուրիշներին հաճույք պատճառել»:

Միայն թե նրանք դրսևորում են այդ ժառանգված «հաճույք պատճառելու» պահանջմունքը ոչ թե իրենց նմանների, այլ ուրիշ տեսակի էակների հանդեպ:

Հանուն արդարության պետք է ասել, որ հիշյալ առանձնահատուկ հատկանիշը ժամանակակից Իտալիայի տարբեր մասերի էակներին է անցել ոչ միայն նշանավոր հոռմեացիներից, այդ ժառանգված հատկանիշն ավելի շատ «յուրացվել է» շատ ավելի ուշ շրջանի իրենց նախնիների կողմից, այսինքն՝ այն ժամանակ, երբ նրանք ինչպես իրենց, այնպես էլ ուրիշ ավելի թույլ հանրությունների էակների շրջապատում սկսել էին տարածել մի ճշմարիտ «Վերնից Առաքված Սրբի» ուսմունքը, ինչն արդեն հասցրել էին փոխփխել իրենց եասիրական նպատակներին համապատասխան:

Ներկայումս ժամանակակից Իտալիայի տարբեր մասերի էակներն «ուրիշին հաճույք պատճառելու» այդ հատկանիշը կյանքի են կոչում հետևյալ կերպ:

Նրանք միանգամի՛ց չեն վերջ տալիս «ոչխար» և «այծ» կոչվող չորքոտանի էակների կյանքին, որոնց մոլորակային մարմինները նաև օգտագործում են որպես առաջնային սնունդ. «հաճույք պատճառելու» նպատակով նրանք դա անում են «աստիճանաբար», «մեղմորեն», մի քանի օրվա ընթացքում, այսինքն՝ մի օր մի ոտն են կտրում, մի քանի օր հետո՝ երկրորդ ոտը և այլն, քանի դեռ տվյալ ոչխարը կամ այծը դեռ շնչում է: Իսկ ոչխարներն ու այծերն առանց իրենց մարմնի այդ նշված մասերի կարողանում են շատ երկար ժամանակ շնչել, քանի որ գոյության համար անհրաժեշտ տիեզերական նյութերի յուրացման գործառնություններում այդ անդամները մասնակցություն չեն ունենում, այլ մասնակցում են միայն այն գործառնություններին, որոնք ապահովում են ինքնազգացողական ազդակներ:

Ասվածից հետո հավանաբար կարիք չկա էլի ինչ-որ բան պատմել այն հոռմեացիների հետնորդների մասին, որոնք ժամանակին այդքան «ահեղ» ու «նշանավոր» են եղել մյուս հանրությունների նկատմամբ:

Այժմ անդրադառնանք հին հույների այն առանձնապես չարանենգ հորինվածքին, որը ներկայումս գործնականում կիրառում են Անգլիա կոչվող ժամանակակից հանրության էակները՝ այն անվանելով «սպորտ»:

Անգլիա կոչվող ժամանակակից հանրության էակները, որոնք իրենց սովորական գոյատևման ընթացքում կյանքի են կոչում հին հույներից ժառանգած առանձնապես չարանենգ և կործանարար հետևանքներով իղի այդ հորինվածքը, դրանով ոչ միայն ևս մեկ հուսալի գործոն են ավելացրել իրենց կյանքի տևողության կրճատման ասպարեզում, որն առանց այդ էլ արդեն խիստ աննշան է դարձել, այլև, քանի որ նրանց հանրությունն այժմ ապրում է իր նշանակալիության շրջանը և, հետևաբար, հեղինակություն է վայելում մյուս եռուղեղ էակների շրջապատում, դեռ ավելին՝ քանի որ այդ հորինվածքի գործնական իրականացումը դարձրել է իր խնդիրը, իսկ դրա տարածումը՝ իր նպատակը, ապա ներկայումս նրանք բոլոր հնարավոր միջոցներով այդ հորինվածքով վարակում են այդ թշվառ մոլորակի բոլոր մեծ ու փոքր հանրությունների էակներին:

Այդ շատ լուրջ անհասկացողության համար հիմք է ծառայել այն, որ քո այդ սիրելիների ընդհանուր ներկայություններից չքացել են այն հնարավոր բյուրեղացման գործոնները, որոնք եռուղեղ էակների մոտ ձևավորում են «տրամաբանական մտածողություն»:

Եվ հենց այդ «տրամաբանական մտածողության» բացակայության պատճառով է, որ նրանք բոլորն առանց բացառության, միայն այն բանի հետևանքով, որ տհասամուսի որոշ թեկնածուներ այնտեղ պնդել են, թե այդ սպորտի միջոցով ինչ-որ «օգտակար» բան կարող են քաղել իրենց համար՝ նրանք դրան հավատացել են իրենց ողջ ներկայությամբ և հիմա արդեն ամբողջովին լծվել են սպորտի միջոցով այդ ինչ-որ բանը ձեռք բերելու գործին:

Այդ դժբախտներից ոչ մեկը չգիտի և հավանաբար երբեք չի մտածում այն մասին, որ այդ չարաղետ սպորտ կոչվածից իրենք ոչ միայն որևէ օգուտ չեն ստանում, այլև, ինչպես արդեն քեզ ասել եմ, հենց միայն այդ սպորտի միջոցով ավելի շատ են կրճատում իրենց կյանքի արդեն իսկ չնչին տևողությունը:

Որպեսզի դու ավելի լավ պատկերացնես ու հասկանաս, թե ինչու է այդ սպորտի միջոցով իրենց կյանքի տևողությունն ավելի շատ կրճատվում, տեղին կլինի, որ հիմա ավելի մանրամասն քեզ պատմեմ այն, ինչ խոստացել էի պատմել, հասկապես այն մասին, թե ինչ տարբերություն կա *փուլհասնիտամային* սկզբունքին համապատասխանող լինելիական գոյատևման տևողության և *իթոկլանոցային* սկզբունքին համապատասխանողի միջև:

Հիշում ես, որ երբ քեզ բացատրում էի, թե քո սիրելիներն ինչպես են որոշում «Ժամանակի ընթացքը», ասացի, որ երբ կունդաբուֆեր օրգանն իր բոլոր հատկություններով հանդերձ հեռացվել է նրանց ներկայություններից, և նրանց գոյատևման տևողությունը դարձել է այնքան, որքան մեր Տիեզերքում սկզբնավորվող բոլոր նորմալ եռուղեղ էակներն են ունենում, այսինքն՝ այսպես կոչված, *փուլհասնիտամային* սկզբունքին համապատասխան, նրանք նույնպես պետք է անպայման գոյատևեին այնքան ժամանակ, քանի դեռ իրենց «երկրորդ լինելիական կեսջան մարմինը» ամբողջովին չէր հանդերձավորվել և վերջին հաշվով, բանականության կատարելագործումն ընդհուպ չէր հասել սրբազան «Հիշմեշ»-ի աստիճանին:

Բայց հետո, երբ նրանք սկսեցին գոյատևել եռուղեղ էակին ավելի ու ավելի ոչ վայել ձևով և իսպառ դադարեցին իրենց ներկայություններում իրականացնել Մեծ Բնության կողմից իրենց համար նախատեսված լինելիական պարտք-պարտականությունը, որի շնորհիվ միայն եռուղեղ էակները կարող են իրենց ներկայություններում ձեռք բերել իրենց վերոհիշյալ մասերը հանդերձավորելու նախադրյալներ, և երբ այդ ամենի արդյունքում նրանց ճառագումների որակը դադարեց համապատասխանել համատիեզերական Մեծագույն Տրոգոստոնեգոկրատական գործընթացի պահանջներին, այնժամ Մեծ Բնությունը «թրթիռների հավասարակշռության» նպատակով ստիպված եղավ նրանց կյանքի տևողությունը համապատասխանացնել իթոկլանոց կոչվող սկզբունքին, որով ընդհանրապես կարգավորվում են միաուղեղ և երկուղեղ էակների կյանքի տևողությունները, էակներ, որոնք չունեն եռուղեղ էակներին հատուկ կարողություններ և իրենց ներկայություններում չեն կարող իրականացնել Բնության կողմից նախատեսված վերոհիշյալ *պարտք-պարտականությունը*:

Համաձայն այդ սկզբունքի՝ լինելիական գոյատևման տևողությունը, ինչպես նաև իրենց ընդհանուր ներկայության ամբողջ պարունակությունն ընդհանրապես գոյանում են այն արդյունքներից, որոնք ծագում են իրենց շրջապատող հետևյալ յոթ պարագաներից.

- 1) ընդհանրապես ժառանգականությունից,
- 2) բեղմնավորման պահին շրջակա միջավայրում առկա պայմաններից,
- 3) մայրական արգանդում կազմավորվելու ընթացքում իրենց արևային համակարգության բոլոր մոլորակների ճառագումների համակցությունից,
- 4) լինելիության պատասխանատու տարիքին հասնելու ընթացքում ծնողների *լինելիական դրսևորման* աստիճանից,
- 5) շրջապատում եղած իրենց նման էակների *լինելիական գոյատևման* որակից,
- 6) «հեռակրիմայան»² մտավոր ալիքների որակից, որոնք նույնպես մինչև էակի հասունացման տարիքին հասնելն առաջանում են շրջակա մթնոլորտում, այսպես կոչված, «արյունակից էակների» անկեղծ արտահայտված բարի կամեցողությունից ու գործողություններից, և վերջապես՝
- 7) տվյալ էակի, այսպես կոչված, *լինելիական էգոպլաստիկուարների* որակից, որոնց նպատակն էակի ներսում օբյեկտիվ բանականության ձեռքբերման համար անհրաժեշտ բոլոր տվյալների գոյափոխումն է:

Իթոկլանոցի սկզբունքին համապատասխան գոյատևելու գլխավոր առանձնահատկությունն այն է, որ կախված թվարկածս յոթ արտաքին պայմաններից՝ էակի ներկայության մեջ առկա «լինելիական տեղայնացումներում», որոնք կենտրոնական տեղերն են հանդիսանում իրենց ներկայության բոլոր առանձին ու անկախ մասերի համար (կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, իրենց ուղեղներում)

² ռուս. տարբերակում՝ «ишмеш», անգլ. տարբերակում՝ “Ishmetch”

³ ռուս. տարբերակում՝ «телеокримальничных», անգլ. տարբերակում՝ teleokriminalnichnian

բյուրեղանում են, այսպես կոչված, «քանդելային կոճեր»⁴, որոնք տվյալ տեղայնացումներում կամ ուղեղային հատվածներում ստեղծում են որոշակի քանակությամբ նմանագագացություններ կամ ապրումներ:

Այսպիսով, գավա՛կս, քանի որ քո ժամանակակից սիրելիները՝ Երկիր մոլորակի այդ եռուղեղ էակները, արդեն սկզբնավորվում են միայն ըստ *իթոկլանոցի* սկզբունքի, ապա բեղմնավորման պահից մինչև լինելիության պատասխանատու տարիքին հասնելը նրանց ուղեղներում բյուրեղանում են այդ քանդելային կոճերը՝ օժտված նմանագագացական գործընթացներ իրականացնելու խիստ որոշակի հնարավորություններով:

Որպեսզի այդ հարցը հիմնավորապես պարզաբանվի քեզ համար, և դու ավելի լավ հասկանաս այն, ինչպես նաև շատ ժամանակ չկորցնենք բացատրությունների վրա, որոնք վերաբերում են այնպիսի որոշակի տիեզերական իրացումների բուն էությանն ու նրանց գործելակերպերի տարբեր տեսակներին, ինչպիսիք հիշյալ քանդելային կոճերն են, որոնք օրինաչափորեն գոյանում են իթոկլանոցի սկզբունքով ապրող էակների առանձին տեղայնացումներում կամ ուղեղներում, ես մտադիր եմ որպես պարզաբանող օրինակ բերել հենց այն «ժամտեսցնողներ»⁵, որոնք քո սիրելիներն իրենց մոտ ունենում են և դրանք կոչում «մեխանիկական ժամացույցներ»:

Ինչպես քեզ արդեն լավ հայտնի է, թեև այդ *ժամտեսցնողների* կամ մեխանիկական ժամացույցների զանազան «համակարգեր» գոյություն ունեն, բայց բոլորի հիմքում ընկած է «*ոլորված զսպանակի լարման կամ ճնշման*» սկզբունքը:

Ժամտեսցնողների կամ մեխանիկական ժամացույցների մի համակարգն իր մեջ զսպանակ է պարունակում, որը հաշվարկված ու կառուցված է այնպես, որ լարքի տևողությունը բավարարի քսանչորս ժամի, մյուս համակարգինը՝ մի շաբաթվա, երրորդինը՝ մեկ ամսվա և այլն:

Իթոկլանոցի սկզբունքով ապրող էակների ուղեղների քանդելային կոճերը նմանվում են մեխանիկական ժամացույցների տարբեր համակարգերի զսպանակներին:

Ճիշտ այնպես, ինչպես մեխանիկական ժամացույցների աշխատանքի տևողությունը կախված է նրանցում առկա զսպանակի լարքից, այնպես էլ էակների կյանքի տևողությունն է բացառապես կախված այն քանդելային կոճերից, որոնք գոյանում են նրանց ուղեղներում իրենց սկզբնավորման և հետագա ձևավորման ընթացքում:

Ճիշտ այնպես, ինչպես ժամացույցների զսպանակի լարքն է որոշակի տևողություն ունենում, նույնպես էլ այդ էակներն են ունակ նմանագագացական և այլ ապրումներ ունենալ այն հնարավորությունների շրջանակներում, որ Բնությունը ներդնում է նրանց ուղեղներում այդ քանդելային կոճերի բյուրեղացման ժամանակ:

Նրանք այդքանը միայն կարող են նմանագգալ և, հետևաբար, գոյատևել, և ոչ դրանից մազաչափ ավել կամ պակաս:

Ինչպես մեխանիկական ժամացույցները կարող են գործել այնքան ժամանակ, քանի դեռ զսպանակը «լարքի պաշար» ունի, այնպես էլ էակները, որոնց ուղեղներում բյուրեղացվել են հիշյալ քանդելային կոճերը, կարող են ապրումներ ունենալ և, հետևաբար, գոյատևել, քանի դեռ վերոհիշյալ յոթ պայմանների արդյունքում նրանց ուղեղներում ձևավորված քանդելային կոճերը չեն սպառվել:

Այսպիսով, գավա՛կս, քանի որ քո սիրելիների ներկայություններում պարտք-պարտականության արդյունքներ դրանից հետո այլևս չեին ստացվում, իսկ նրանց կյանքի տևողությունը հետադուր կախված էր միայն իմ թվարկած պատահականորեն առաջացող յոթ արտաքին պայմաններից, ահա այդ ամենի արդյունքում նրանց կյանքի տևողությունը՝ հատկապես ժամանակակիցներինը, շատ բազմազան դարձավ:

Ներկայումս նրանց գոյատևման տևողությունը կարող է լինել մի րոպեից մինչև իրենց յոթանասունից իննսուն տարին:

Եվ այսպես, այն ամենի հետևանքով, ինչ հենց նոր ասացի, ինչպես էլ քո սիրելիներն ապրելիս լինեն, ինչպիսի միջոցներ էլ ձեռնարկեն, թեկուզ, ինչպես իրենք են ասում, «փակվեն ապակե զանգի տակ», միևնույնն է՝ հենց որ նրանց ուղեղներում բյուրեղացած քանդելային կոճերի պարունակությունը սպառվում է, անմիջապես այս կամ այն ուղեղը դադարում է գործել:

⁴ ռուս. տարբերակում՝ «катушки кандельности», անգլ. տարբերակում՝ “bobbinkandelnosts”

⁵ ռուս. տարբերակում՝ «джамтестернохи», անգլ. տարբերակում՝ “djamtesternokhi”

Մեխանիկական ժամացույցների և քո սիրելիների միջև եղած տարբերությունը սոսկ այն է, որ մեխանիկական ժամացույցներում միայն մեկ զսպանակ է լինում, իսկ քո սիրելիները երեք ինքնուրույն գործող քանդելային կոճեր են ունենում:

Եվ եռուղեղ էակների բոլոր երեք ինքնուրույն «տեղայնացումներում» ինքնուրույն գործող այդ քանդելային կոճերը հետևյալ անվանումներն ունեն.

ա) «մտածողական կենտրոնի» քանդելային կոճ,

բ) «զգացական կենտրոնի» քանդելային կոճ և

գ) «շարժողական կենտրոնի» քանդելային կոճ:

Նույնիսկ այն, ինչի մասին վերջերս շատ եմ կրկնել, այն է՝ սրբազան Ռասկուարնոյի գործընթացը, քո սիրելիների մոտ տեղի է ունենում երեք փուլով, կամ, ինչպես իրենք կասեին, «մաս-մաս են սկսում մեռնել». և դա նույնպես տեղի է ունենում այն պատճառով, որ սկզբնավորվելով ու կազմավորվելով իթոկլանոցի սկզբունքին համապատասխան և գոյատևելով աններդաշնակ ձևով՝ նրանք այդ երեք ինքնուրույն ուղեղներում իրենց ունեցածը, այսինքն՝ քանդելային կոճերը, ծախսում են անհամամասնորեն. դրա համար էլ նրանց հաճախ վիճակվում է այնպիսի ահավոր «մահ», ինչպիսին սազական չէ եռուղեղ էակներին:

Իմ այնտեղ եղած ժամանակ անձամբ ես հաճախ եմ ականատես եղել այդպիսի «եռափուլ մահերի»:

Դա հնարավոր է դառնում այն պատճառով, որ թեև քո սիրելիների, հատկապես՝ ժամանակակիցների ներկայություններում ուղեղներից մեկի քանդելային կոճի պարունակությունը կարող է լրիվ սպառված լինել, այնուամենայնիվ այդ եռուղեղ էակները շարունակում են ապրել բավականին երկար ժամանակ:

Օրինակ՝ այնտեղ հաճախ է պատահում, երբ իրենց բնորոշ աննորմալ գոյատևման հետևանքով նրանցից որևէ մեկի մոտ քանդելային կոճերից մեկի պարունակությունը լրիվ սպառվում է, և եթե դա *շարժողական կենտրոնի* կամ, ինչպես իրենք են ասում, «ոդնուղեղի» քանդելային կոճն է լինում, ապա թեև նման ժամանակակից եռուղեղ էակը շարունակում է «մտածել» ու «զգալ», սակայն լրիվ կորցնում է իր մոլորակային մարմնի մասերը կառավարելու ունակությունը:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ երբ քո սիրելիներից որևէ մեկն այդ կերպ մասնակիորեն ընդմիջտ մահանում է, նրանց ժամանակակից զրոյիկները կամ, այսպես կոչված, «բժիշկները» այդպիսի մահն անշուշտ հիվանդություն են համարում և իրենց հատուկ իմաստակությամբ սկսում են բուժել այն. և այդ ենթադրյալ հիվանդությանը կայցնում են զանազան անվանումներ, որոնք համահունչ են լինում իրենց բոլորովին անծանոթ հինավուրց լեզվին, որը կոչում են «լատիներեն»:

Այնտեղ լայնորեն տարածված են հիվանդություններ, որոնք հետևյալ անուններն են կրում՝ հեմիդալեզիա, պարալեզիա, զարգացող կաթված, էսենցիալուս, ոդնուղեղի տաբես, գրգռված վիճակի կաթված, սփռված սկլերոզ և այլն, և այլն:

Այդպիսի եռափուլ մահերն այնտեղ՝ քո հետաքրքրությունը շարժած Երկիր մոլորակի վրա առավել հաճախ պատահում են վերջին երկու հարյուրամյակների ընթացքում, և քո սիրելիներից նրանց հետ, որոնք կա մ իրենց մասնագիտության բերումով, կա մ, այսպես կոչված, «կրքերի» պատճառով, որոնք մեծ ու փոքր հանրություններին պատկանող էակների մոտ առաջանում կամ ձեռք են բերվում իրենց կողմից հաստատված սովորական *լինելիական գոյատևման* նույն աննորմալ պայմանների պատճառով, նրանք իրենց *լինելիական գոյատևման* ընթացքում այս կամ այն *լինելիական ուղեղի* քանդելային կոճի պարունակությունից ավելի երկար են ապրում:

Օրինակ՝ շարժողական կենտրոնի քանդելային կոճի կամ «ոդնուղեղով» պայմանավորված մեկ երրորդական մահը երկրային էակների մոտ հաճախ վրա է հասնում այն զբաղմունքի պատճառով, որով ներկայումս զբաղվում են ժամանակակից Անգլիա կոչվող հանրության էակները, որոնք հինավուրց հույների վնասակար հորինվածքի հետևանքով իրենց բաժին հասած չարանենգ այդ զբաղմունքն սպորտ են անվանում:

Այդ չարանենգ զբաղմունքի կործանարար հետևանքները քեզ համար ավելի հասկանալի կդառնան, եթե ասեմ, որ երբ ես գտնվում էի քո այդ սիրելիների միջավայրում, մի անգամ հատուկ բաժին առանձնացրի իմ վիճակագրական տվյալների մեջ, որպեսզի ինձ համար պարզեմ, թե այնտեղ որքան երկար կարող են ապրել այն եռուղեղ էակները, որոնք արհեստավարժ «ըմբիշներ» են կոչվում, և իմ այդ վիճակագրական տվյալների մեջ ես ոչ մի անգամ չտեսա, որ նրանցից որևէ մեկը ապրի իրենց ժամանակով քառասունինը տարուց ավելի:

Իսկ զգացական կենտրոնի քանդելային կոճի պարունակության վաղաժամ սպառման հետևանքով վրա հասած մեկ երրորդական մասն առավել հաճախ երկրային էակներից նրանց է բաժին հասնում, որոնք մասնագիտությամբ համարվում են, այսպես կոչված, «արվեստի ներկայացուցիչներ»:

Երկրային այդ արհեստավարժներից շատերը, հատկապես՝ ժամանակակիցները, նախ հիվանդանում են, այսպես կոչված, «հոգեխանգարման» որևէ տեսակով, որից հետո իրենց այդ հոգեխանգարման մեջ միտումնավոր կերպով սովորում են, ինչպես իրենք են ասում, «զգալ», և երբ բազմիցս զգում են այդ աննորմալ լինելիական ազդակները, դրանով իսկ աստիճանաբար ցամաքեցնում են իրենց զգացական կենտրոնի քանդելային կոճը, այդ եղանակով աններդաշնակացնում են իրենց ընդհանուր ներկայությունների ռիթմը և իրենք իրենց հասցնում այնպիսի ինքնատիպ վախճանի, ինչպիսին նույնիսկ իրենց միջավայրում հաճախ չի պատահում:

Այստեղ, իմիջիայլոց, շատ հետաքրքիր կլինի նշել, որ զգացական կենտրոնի հետ կապված մեկ երրորդական մասը քո սիրելիների հետ պատահում է նաև այն դեպքերում, երբ նրանց «հոգեխանգարման» յուրահատուկ տարատեսակը, այսպես կոչված, «այլասիրությունն» է լինում:

Իսկ ինչ վերաբերում է *մտածողական կենտրոնի* քանդելային կոճի պատճառով վրա հասնող անժամանակ ու մասնակի մահվանը, ապա պետք է ասել, որ վերջին ժամանակներում այդ տեսակի մահերը քո սիրելիների հետ ավելի ու ավելի հաճախ են պատահում:

Մտածողական կենտրոնով պայմանավորված այդպիսի մահերը գլխավորապես պատահում են քո սիրելիներից նրանց հետ, որոնք ձգտում են կամ արդեն հասցրել են պատկանել նոր տեսակի գիտությունների դասին, ինչպես նաև նրանց, ովքեր իրենց գոյատևման ընթացքում հիվանդանում են, այսպես կոչված «գրքեր» և «թերթեր» կարդալու կրքով:

Չափազանց շատ կարդալու և միայն մտային նմանազգացություններ ունենալու հետևանքով *մտածողության կենտրոնի* քանդելային կոճի պարունակությունն այդ եռուղեղ էակների մոտ ցամաքում է ավելի շուտ, քան մյուս *լինելիական կենտրոնների* քանդելային կոճերի պարունակությունները:

Այսպիսով, զավա՛կս, բոլոր այդ դժբախտությունները, այսինքն՝ նրանց գոյատևման տևողության կրճատումը և իրենց իսկ համար չարաղետ ուրիշ շատ հետևանքներ, բաժին են հասնում քո սիրելիներին սոսկ այն պատճառով, որ նրանք նույնիսկ մինչև հիմա էլ դեռ չգիտեն այն տիեզերական օրենքի գոյության մասին, որը կոչվում է *«բազում աղբյուրներից ծագած թրթռանքների համակշռություն»*:

Եթե միայն այդ միտքը ծագեր նրանց գլխում, և նրանք իրենց սովորական իմաստակությունները կառուցեին դրան համապատասխան, գուցե թե կսկսեին հասկանալ մի շատ պարզ, ինչպես իրենք են ասում, «գաղտնիք»:

Ես հնարավոր եմ համարում, որ նրանցից որևէ մեկն անպայման կհասկանար այդ «գաղտնիքը», քանի որ նախ՝ այն շատ պարզ է ու ակնհայտ, և երկրորդ՝ նրանք դա շատ վաղուց արդեն բացահայտել են և նույնիսկ հաճախ կիրառել, այսպես կոչված, «գործնականում»:

Նշածս պարզ գաղտնիքը նրանք կիրառում են հենց այն մեխանիկական ժամացույցներում, որոնք մենք համեմատության համար օգտագործեցինք որպես պարզաբանիչ օրինակ, երբ սկսեցինք խոսել նրանց գոյատևման տևողության մասին:

Տարբեր համակարգերի պատկանող մեխանիկական ժամացույցներում նրանք օգտագործում են նշված պարզ գաղտնիքը, որպեսզի կարգավորեն վերոհիշյալ զսպանակի, այսպես կոչված, «լարքը», կամ ամբողջ ժամացույցի մեխանիզմի որևէ համապատասխան մասի աշխատանքը. և դա, կարծեմ, «կարգավորիչ» է կոչվում:

Այդ կարգավորիչի օգնությամբ կարելի է ստիպել, որ, օրինակ՝ մեկ օրվա համար լարված ժամացույցը, աշխատի ամբողջ մի ամիս և, հակառակը՝ կարգավորիչի շնորհիվ կարելի է այնպես անել, որ մեկ օրվա համար նախատեսված լարքը սպառվի ընդամենը հինգ րոպեում:

Իթոկլանոցի սկզբունքով ապրող ամեն մի էակի ընդհանուր ներկայության մեջ կա մեխանիկական ժամացույցի կարգավորիչին նմանվող «ինչ-որ բան», որը կոչվում է «իրանսամքիփ»⁶: Այդ «ինչ-որ բանի» իմաստը հետևյալն է. *«չտրվել այն նմանազգացություններին, որոնք ծագում են սեփական որևէ առանձին ուղեղի գործունեության արդյունքում»*:

⁶ ռուս. տաբերակում՝ ирансамкип , անգլ. տաբերակում՝ iransamkeep

Բայց եթե նույնիսկ նրանք հասկանալին էլ այդ պարզ գաղտնիքը, այնուամենայնիվ ամեն ինչ նույնը կմնար. միևնույն է, նրանք չէին գործադրի այն անհրաժեշտ *լինելիական ջանքը*, որը լիովին մատչելի է նույնիսկ ժամանակակից էականերին, և որի շնորհիվ, ինչպես կանխավ նախատեսել է Բնությունը, էականերն ընդհանրապես հնարավորություն են ունենում իրականացնելու, այսպես կոչված, «ներդաշնակ նմանագագացողություն», միայն որի միջոցով ամեն մի եռուղեղ էակի ներկայության մեջ և, հետևաբար հենց իրենց մեջ, առաջանում է գործուն *լինելիական գոյատևման* էներգիան: Սակայն ներկայումս քո սիրելիների ներկայություններում այդ էներգիան առաջանում է միայն նրանց լիակատար անգիտակից վիճակում, այսինքն՝ այն ժամանակի ընթացքում, որն իրենք «քուն» են անվանում:

Բայց քո սիրելիների՝ հատկապես ժամանակակիցների դեպքում, որոնք մշտապես գոյատևում են պասսիվորեն՝ կառավարվելով իրենց ընդհանուր ներկայության միայն մեկ ոգեկանացված մասով, և, դրա հետ կապված, հանդես են գալիս բացառապես իրենց բացասական հատկությունների գործոններով, որոնք նույնպես օրինաչափորեն ծնվում են իրենց ներսում և հետևաբար վերածվում բացասական դրսևորումների, տեղի է ունենում իրենց տարբեր քանդելային կոճերի պարունակությունների անհամաչափ վատնում, այսինքն՝ Բնության կողմից օրինաչափորեն իրենց ներսում նախատեսված գործողությունների հնարավորությունները կրում են իրենց ուղեղներից միայն մեկը կամ երկուսը, ինչը հանգեցնում է դրանց քանդելային կոճերի պարունակության վաղաժամ սպառմանը. իսկ դրանից հետո նրանք լրիվ դարարում են գործել, ինչպես լինում է այն մեխանիկական ժամացույցների հետ, որոնց լարքը սպառվել է կամ թուլացել է այն կարգավորող մեխանիզմի ուժը:

Երբևէ ավելի ուշ ես քեզ մանրամասն կբացատրեմ ոչ միայն այն, թե ինչու էակաների մոտ, որոնք գոյատևում են ըստ *իթոկլանոցի* սկզբունքի և կառավարվում միայն մեկ կամ երկու ոգեկանացված աղբյուրներով, այլ ոչ ներդաշնակորեն, այսինքն՝ բոլոր երեք մասերով համատեղ, որի հետևանքով նրանց գոյատևման ընթացքում ցամաքում և, հետևաբար, մահանում է հենց այն ուղեղը, որում ավելցուկային նմանագագացություններ են կուտակվում, այլև այն, թե ինչու դրա հետևանքով ցամաքում են նաև մյուս քանդելային կոճերը, նույնիսկ եթե մատնված են լինում անգործության:

Բայց այստեղ դու պետք է իմանաս նաև, որ նույնիսկ քո այդ մոլորակի վրա դեռևս երբեմն կարելի է հանդիպել քո սիրելիներից որևէ առանձին մեկին, որի մոլորակային գոյատևման տևողությունը հասնում է իրենց ժամանակով հինգ հարյուրամյակի:

Այդ դեպքում դու շատ լավ կհասկանաս, որ նույնիսկ ոչ շատ վաղ անցյալի քո սիրելիներից ոմանց մոտ, որոնք այս կամ այն կերպ իրենց համար պարզում և իրենց բանականությամբ ճիշտ են կանխաիրացնում նմանագագացությունների օրենքի որոշ մանրամասներ, որոնք ընթանում են էակաների առանձին ուղեղներում, ինչպես նաև այդ ինքնուրույն նմանագագացությունների փոխազդեցությունը և քիչ թե շատ գոյատևում վերն ասվածին համապատասխան, ապա նրանց ուղեղներում ձևավորված քանդելային կոճերը չեն ցամաքում, ինչպես տեղի է ունենում մյուս էակաների մոտ, այլ նրանց ընդհանուր ներկայությունները ձեռք են բերում անհամեմատ ավելի երկար գոյատևելու հնարավորություն, քան ունեն այնտեղի մյուս եռուղեղ էակաները:

Վերջին անգամ իմ այնտեղ եղած ժամանակ անձամբ հանդիպել եմ մի քանի երկրային ժամանակակից եռուղեղ էակաների, որոնց տարիքն արդեն հասել էր երկու, երեք և նույնիսկ չորս իրենց հարյուրամյակին: Մեծ մասամբ ես նրանց հանդիպել եմ եռուղեղ էակաների ոչ մեծ մի «եղբայրության» կազմում, որը գոյացել էր համարյա բոլոր «կրոնների» ներկայացուցիչներից, և որի հավաքատեղին գտնվում էր Ասիա աշխարհամասի կենտրոնում:

Այդ եղբայրության էակաները հավանաբար մասամբ ինքնուրույն էին պարզել հիշյալ այն նմանագագացությունների օրենքները, որոնք ընթանում են լինելիական ուղեղներում, մասամբ էլ ճշմարիտ ձեռնադրյալների միջոցով տեղեկություններ էին ստացել հինավուրց ժամանակներից:

Ինչ վերաբերում է այն ժամանակակից հանրությանը, որի էակաները գլխավոր գոհերն են դարձել հիշյալ հինավուրց քաղաքակրթության էակաների առանձնապես չարանենգ այդ հորինվածքի, ապա նրանք ոչ միայն իրենց սովորական լինելիական գոյատևման ընթացքում կիրառում են այն, այլև ջանադիր կերպով ձգտում են այդ նույն չարիքով վարակել բոլոր մյուս հանրությունների էականերին: Դեռ ավելին, իրենց այդ չարաղետ սպորտի պատճառով այդ թշվառները ոչ միայն ավելի են կարճացնում իրենց սեփական գոյատևման առանց այդ էլ արդեն չնչին տևողությունը, այլև իրենց

այդպիսի գործունեությամբ, ինչպես ես եմ կարծում, ի վերջո իրենց հանրության գլխին կբերեն ճիշտ այն, ինչ բոլորովին վերջերս վիճակվել է մի ուրիշ մեծ հանրության, որին «Ռուսաստան» են կոչում:

Ես այդ մասին խորհրդածել եմ իմ այնտեղ եղած ժամանակ, երբ արդեն պետք է ընդմիջտ հեռանալի այդ մոլորակից:

Իսկ առաջին անգամ այդ մասին ես սկսեցի խորհրդածել այն ժամանակ, երբ իմացա, որ այդ ոչ պակաս մեծ ու ժամանակակից հանրության իշխանավոր էակներն արդեն այդ սպորտ կոչվող իրենց չարաղետ միջոցն օգտագործում են իրենց տհասամուսական նպատակներով ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանի իշխանավորներն էին նույնպիսի նպատակներով օգտագործում իրենց «*ռուսական օղու հիմնախնդիրը*»:

Ինչպես Ռուսաստանի հանրության իշխանավորն էին ժամանակին ձգտում զանազան խորամանկություններով շարքային էակների թույլ կամքի մեջ ներարկել հիշյալ «ռուսական օղու» եռանդուն օգտագործման անհրաժեշտությունը, այնպես էլ Անգլիա կոչվող հանրության իշխանավորներն են կաշվից դուրս գալիս, որպեսզի սովորական էակներին հետաքրքրեն այդ նույն սպորտով և ամեն կերպ խթանեն դրանով զբաղվելը:

Իմ այն ժամանակվա մտավախությունները կարծես թե արդարանում են:

Այս եզրակացությանը ես հանգեցի, երբ վերջերս Մարսից եթերագիր ստացա, որի մեջ ի թիվս այլ բաների խոսվում էր նաև այն մասին, որ թեև Անգլիայի հանրությունում ավելի քան երկուսուկես միլիոն «գործագուրկ էակներ» կան, այնուհանդերձ այնտեղի իշխանավոր էակները ոչ մի միջոց չեն ձեռնարկում դրա դեմ, այլ փոխարենը ձգտում են առավել լայն տարածում տալ իրենց նշանավոր սպորտին:

Ճիշտ նույն կերպ, ինչպես Ռուսաստան կոչվող մեծ հանրության բոլոր, այսպես կոչված, «թերթերն» ու «ամսագրերն» էին ողողված լինում ռուսական օղու հիմնախնդիրն նվիրված նյութերով, այնպես էլ Անգլիայի հանրության «չարիք ցանոդների» տեքստերի կեսից ավելին այժմ նվիրված է այդ նշանավոր սպորտին:

ԳԼՈՒԽ Լ

Արվեստ

Իր գրույցների այս մասում Բեհեդգեբուդը մի պահ լռեց և, հանկարծակի շրջվելով իր հին ծառա Ահունի կողմը, որը, տեղում հանգիստ նստած, Բեհեդգեբուդի թոռ Հասեինի պես ուշադրությամբ լսում էր նրա պատմածները, ասաց.

– Իսկ դու, ծերու՛կ, նույն հետաքրքրությա՞մբ ես լսում ինձ, ինչպես Հասեինը: Չէ՞ որ դու անձամբ ամենուրեք իմ կողքին ես եղել Երկիր մոլորակի վրա, սեփական աչքերով տեսել և զգացել ես այն ամենը, ինչի մասին ես հիմա պատմում եմ Հասեինին:

Բերանդ բաց նստելու փոխարեն մի բան էլ դու՛ պատմեիր մեր սիրեցյալ գավակին... Ոչինչ չես կարող անել. ստիպված ենք այդ արտառոց եռուղեղ էակների մասին պատմել այն ամենը, ինչ կարող ենք, մեկ որ այդ էակներն այդքան ուժեղ շարժել են նրա հետաքրքրասիրությունը:

Անշուշտ, քեզ պետք է որ հետաքրքրած լինի այդ ցնդած էակների այս կամ այն առանձնահատկությունը: Դե, պատմի՛ր մեզ ինչ-որ բան դրա վերաբերյալ:

Երբ Բեհեդգեբուդն ավարտեց իր խոսքը, Ահունը մի փոքր մտածելուց հետո ասաց.

– Ձեր խորապես հոգեբանական պատմություններից հետո ի՞նչ կարող եմ ես պատմել այդ «անըմբռնելիների» մասին...

Բայց հետո, անսովոր լուրջ տոնով և պահպանելով Բեհեդգեբուդի ոճն ու նույնիսկ ամբողջական դարձվածքները, նա շարունակեց.

– Իհարկե, կա՛ այդպիսի բան... Ինչպե՞ս ասեմ... Հաճախ նույնիսկ իմ էությունը հավասարակշռությունից հանում էին այն արտառոց եռուղեղ էակները, որոնք իրենց «վիրտուոզ

արարքներով» համարյա միշտ այնպիսի խթաններ էին առաջացնում, որ իմ այս կամ այն հոգեկան մասում զարմանքի ազդակներ էին ծնվում:

Այնուհետև դիմելով Հասեինին՝ նա շարունակեց այսպես.

– Դե լավ, սիրելի՛ Հասեին... Ես Նորին Գերապատվության նման մանրամասն չեմ պատմի մեր Մեծ Տիեզերքի այդ եռուղեղ էակների հոգեկառույցային որևէ առանձին տարօրինակության մասին, որոնք շարժել են քո հետաքրքրասիրությունը: Ո՛չ, ես միայն ուզում եմ Նորին Գերապատվությանը հիշեցնել մի գործոնի մասին, որի պատճառը ծագել է այդ մոլորակի մակերևութին մեր հինգերորդ անգամ գտնվելու ընթացքում, և որը մեր վերջին՝ վեցերորդ այցելության ժամանակ այն գլխավոր պատճառը եղավ, որ քո սիրելիներից յուրաքանչյուրի սկզբնավորման պահից մինչև ընդհուպ պատասխանատու տարիքի էակ դառնալը նրանց նորմալ լինելիական մտածողության ունակությունը քայլ առ քայլ աղավաղվում է և ի վերջո վերածվում համարյա «քայթուսարի»⁷:

Այս խոսքերից հետո, դիմելով անմիջապես Բեհեղգեբուղին, խեղճ ու անվճռական տոնով նա շարունակեց.

– Մի՛ կշտամբեք ինձ, Ձե՛րդ Գերապատվություն, որ ես համարձակվում եմ Ձեզ իմ կարծիքը հայտնել, որը հենց նոր է իմ ներսում առաջացել և իմ մտորումների արդյունքն է այնպիսի տվյալների վերաբերյալ, որոնք, հնարավոր է, չափազանց անհուսալի են դարձել եզրահանգումներ անելու առումով:

Երբ մեր սիրելի Հասեինին պատմում էիք բոլոր այն այլազան պատճառների մասին, որոնք հանգեցրել են նրան, որ Երկրի վրա բնակվող և իրեն հետաքրքրած եռուղեղ էակների ժամանակակից ներկայացուցիչները վերածվել են, ինչպես մի անգամ բարեհաճեցիք ասել, մաճնի ջրաղացների՝ Դուք խոսքի արանքում հիշատակեցիք մի գործոն, որը վերջին հարյուրամյակում հիմք է ծառայել դրա համար և, հնարավոր է, ավելի կարևոր է, քան մյուս գործոնները:

Ես մտադիր եմ խոսել այն գործոնի մասին, որը որոշակիորեն չարադետ է դարձել ժամանակակից էակների համար և որի պատճառների ծագմանը, ինչպես ես շատ լավ հիշում եմ, ինքներդ ներկա եք եղել մեր Բաբելոնում եղած ժամանակ. նկատի ունեմ այն գործոնը, որին հենց իրենք «արվեստ» են անվանում:

Եթե Ձեզ հատուկ իմաստությամբ համաձայնեք մանրամասնորեն անդրադառնալ այդ հարցին, ապա, ինչպես ինձ է թվում, հնարավոր է, որ մեր սիրելի Հասեինն իր ձեռքի տակ ընտիր նյութ կունենա, որպեսզի պարզի իրեն հետաքրքրած Երկիր մոլորակի վրա վերջին ժամանակներում սկզբնավորվող եռուղեղ էակների հոգեկառույցի բոլոր աննորմալ տարօրինակությունները:

Այսքանն ասելով և պոչի ծայրով ճակատի քրտինքի կաթիլները սրբելով՝ Ահունը պապանձվեց՝ կրկին ընդունելով իր սովորական հարգալից դիրքը:

Բեհեղգեբուղը քնքշանքով նայեց նրան և ասաց.

– Շնորհակալ եմ, ծերու՛կ, որ ինձ հիշեցրիր այդ մասին: Ճիշտ է, որ ես միայն խոսքի արանքում հիշատակեցի այն իսկապես վնասակար գործոնի մասին, որին էլի իրենք են ծնունդ տվել, և որը նպաստում է իրենց *լինելիական մտածողության* նույնիսկ այն նախադրյալների հետզարգացմանը, որոնք պատահաբար դեռևս պահպանվել են:

Սակայն, ծերու՛կ, թեև Ճիշտ է, որ մինչև հիմա դեռ ոչ մի անգամ ես չեմ հիշատակել այդ գործոնը, դրանից չի հետևում, որ ես այն բոլորովին հաշվի չեմ առել: Քանի որ մեր տրամադրության տակ դեռ շատ ժամանակ ենք ունենալու այս ճանապարհորդության ընթացքում, ապա ամենայն հավանականությամբ ես կհիշեի այդ մասին և իմ հետագա պատմությունների մեջ, համապատասխան տեղում, մեր բոլորի սիրելի Հասեինին կպատմեի այն, ինչի մասին դու ինձ հիշեցրիր:

Ի դեպ, գուցեև տեղին կլինի այդ երկրային արվեստի մասին հենց հիմա պատմել, քանի որ, ինչպես ասացիք, այդ մոլորակ կատարած մեր հինգերորդ անձնական այցելության ընթացքում ես իսկապես վկա դարձա դեպքերի, որոնք այնտեղ ծնել են այդ ժամանակակից չարիքի պատճառները, և, ինչպես միշտ, նախաձեռնությունը պատկանում էր այն գիտուն էակներին, որոնք այդ տարաբախտ մոլորակի բոլոր ծայրերից հավաքվել էին Բաբելոն քաղաքում:

Այսքանն ասելուց հետո Բեհեղգեբուղը շրջվեց Հասեինի կողմը և սկսեց պատմել.

⁷ ռուս. տարբերակում՝ кальтсару, անգլ. տարբերակում՝ kaltoosaroo

«Հենց այդ գաղափարը, որն այնտեղ արդեն որոշակիացվել էր և արվեստ էր կոչվում, ներկայումս քո թշվառ սիրելիների համար մաս է կազմում այն ինքնաբերաբար գործող տվյալների, որոնց համախմբությունն ինքնին, թեև համարյա աննկատ, բայց անշեղորեն նրանց վերածում է այնպիսի էակների, որոնք իրենց ներկայություններում ունենալով աստվածության մասի մասնիկները դառնալու հնարավորություն, դարձել են պարզապես, այսպես կոչված, «շունչ-կենդանիներ»:

Որպեսզի համակողմանիորեն լուսաբանվի ժամանակակից նշանավոր երկրային արվեստի հարցը, և որպեսզի դու հստակ հասկանաս, թե ինչպես է այդ ամենը տեղի ունեցել, նախ պետք է իրազեկ դառնաս երկու փաստի, որոնք պատահել են Բաբելոնում այն ժամանակ, երբ մենք հինգերորդ անգամ վայրէջք էինք կատարել քո այդ մոլորակի մակերևույթին:

Առաջինն այն է, թե ինչու և ինչպես էս ականատեսը դարձա այն իրադարձությունների, որոնք հիմք հանդիսացան այն պատճառների համար, որ Երկիր մոլորակի ժամանակակից եռուղեղ էակներն այժմ ունեն որոշակիորեն չարաղետ և արվեստ կոչվող հասկացությունը. երկրորդն էլ այն է, թե իրենց հերթին ինչպիսի իրադարձություններ են նախորդել և այն ժամանակ աղբյուր հանդիսացել այդ պատճառների ծագման համար:

Ինչ վերաբերում է առաջինին, ես պետք է ասեմ, որ Բաբելոն քաղաքում մեր եղած ժամանակ՝ իմ նկարագրած այն դեպքերից հետո, որոնք տեղի ունեցան երկրային գիտուններ կոչվող և երկրագնդի համարյա բոլոր ծայրերից այնտեղ հավաքված եռուղեղ էակների հետ, այսինքն՝ այն բանից հետո, երբ նրանք, ինչպես արդեն պատմել եմ, տրոհվեցին մի քանի ինքնուրույն խմբերի և արդեն թաղվեցին, այսպես կոչված, «քաղաքականության» մեջ, և, քանի որ ես այդ ժամանակ արդեն մտադրվել էի լքել Բաբելոնը և այդ էակների միջավայրում իմ դիտարկումները շարունակել այն ժամանակ արդեն հզորացած մի ուրիշ հանրությունում, որը Հելլադա էր կոչվում, ապա որոշեցի առանց հապաղելու ուսումնասիրել նրանց լեզուն: Այդ ժամանակից սկսած՝ ես գերադասում էի այցելել Բաբելոն քաղաքի այն վայրերը և հանդիպել այն էակների հետ, որոնք ինձ առավել օգտակար կլինեին այդ լեզվի գործնական ուսումնասիրության հարցում:

Մի անգամ, երբ ես Բաբելոն քաղաքում քայլում էի մեր տնից ոչ հեռու ընկած մի փողոցով, մի մեծ շենքի վրա, որի կողքով էս առաջ հաճախ էի անցել, նկատեցի հենց նոր կախված մի, այսպես կոչված, «ազդագիր» կամ, ինչպես հիմա են ասում Երկրի վրա՝ «ցուցանակ», որն ազդարարում էր այն մասին, որ այդ շենքում վերջերս բացվել է արտասահմանցի գիտուն էակների՝ «լեզումիհիզմի հետևորդների» ակումբ: Դռան վրա նաև հայտարարություն էր փակցված, որը հայտնում էր, որ ակումբի անդամագրությունը դեռևս շարունակվում է, և որ բոլոր գիտական զեկուցումներն ու քննարկումները տեղի են ունենալու միայն տեղական և հելլենական լեզուներով:

Դա ինձ շատ հետաքրքրեց, և ես իսկույն սկսեցի մտածել, թե չե՞մ կարող արդյոք օգտվել այդ նորաբաց ակումբից, որ ինձ համար գործնական դասեր քաղեմ հելլենական լեզվից:

Այդ ժամանակ ես այնուամենայնիվ լրացուցիչ հարցեր տվեցի շենք մտնող կամ դուրս եկող մի քանի էակների, որպեսզի նոր մանրամասներ պարզեմ այդ ակումբի վերաբերյալ: Եվ երբ մի գիտուն էակի բացատրությունները լսեցի, որի հետ, ինչպես պատահաբար իմացա, ես արդեն ծանոթ էի, և ինձ համար քիչ թե շատ պարզ եղավ ամեն ինչ, ես անմիջապես որոշեցի դառնալ այդ ակումբի անդամ:

Առանց երկար մտածելու մտա շենքը և ներկայանալով որպես արտասահմանցի գիտնական՝ խնդրեցի, որ ինձ՝ որպես լիզումիհիզմի հետևորդի, ընդունեն ակումբի անդամ. և դա ինձ հեշտությամբ հաջողվեց՝ շնորհիվ իմ այն հին ծանոթի, որին հանդիպել էի պատահաբար և որը մյուսների պես ինձ ընկալել էր որպես արտասահմանցի գիտնական, ինչպիսին ինքն էր:

Այսպիսով, զավա՛կս, դառնալով այդ ակումբի, այսպես կոչված, «լիիրավ անդամ»՝ ես դրանից հետո կանոնավորապես հաճախում և զրուցում էի գլխավորապես այն գիտուն անդամների հետ, որոնք տիրապետում էին հելլենական լեզվին, որի կարիքը ես ունեի:

Ինչ վերաբերում է երկրորդ գործոնին, ապա այն ի հայտ եկավ Բաբելոնյան հետևյալ իրադարձությունների արդյունքում:

Պետք է նկատի ունենալ, որ Բաբելոնում գտնվող Երկիր մոլորակի գիտուն էակների շարքում, որոնք համարյա ամբողջ մոլորակից այդտեղ էին հավաքվել հիշյալ պարսից թագավորի պարտադրանքով, իսկ մի մասն էլ սեփական կամքով, որպեսզի քննարկեն հիշատակածս նշանավոր «հոգու հարցը», կային նաև հարկադրաբար այդտեղ բերված մի քանի էակներ, որոնք մեծամասնության պես «նոր տեսակի գիտնականների» դասին չէին պատկանում, այլ ամենայն

անկեղծությամբ, որը բխում էր իրենց առանձին ոգեկոչված մասերից, ձգտում էին Բարձրագույն Գիտելիք ձեռք բերել միայն ինքնակատարելագործման նպատակով:

Շնորհիվ իրենց անեղծ ու անկեղծ այդ ձգտման և համապատասխան կենսակերպի ու *լինելիական գործելակերպի՝* այդ մի քանի երկրային էակները դեռևս նախքան Բաբելոն բերվելը արդեն համարվում էին առաջին աստիճանի ձեռնադրման հասած երկրային եռուղեղ էակներ, որոնք արժանացել էին կոչվելու *«Լիիրավ Ձեռնադրյալներ՝ ըստ Սրբազնագույն Աշխարհ Շիեմաշի նորացված կանոնակարգի»:*

Եվ այսպես, տղա՛ս, երբ ես սկսեցի այցելել հիշյալ ակումբը, ինչպես նրանց հետ ունեցած իմ զրույցներից, այնպես էլ այլ տվյալներից ինձ համար լիովին պարզ դարձավ, որ այդ մի քանի երկրային գիտունները, որոնք անկեղծորեն ձգտում էին կատարելագործել իրենց բանականությունը, հենց սկզբից Բաբելոնում իրենց առանձին էին պահում և չէին խառնվում այն գործերին, որոնցով այն ժամանակ կլանված էր բաբելոնյան գիտուն էակների հիմնական զանգվածը:

Այդ մի քանի գիտուն էակներն առանձին էին մնում ոչ միայն սկզբնական շրջանում, երբ Բաբելոն քաղաքում գտնվող բոլոր մյուս գիտուն էակները նախ քաղաքի կենտրոնում բացեցին իրենց կենտրոնական հավաքատեղին և, ինչպես բարոյական, այնպես էլ նյութական փոխօժանդակության նպատակով հիմնեցին բոլոր երկրային գիտուն էակների կենտրոնական ակումբները, այլ առանձին էին մնում նաև հետո, երբ գիտուն էակների ամբողջ զանգվածը տրոհվեց երեք առանձին «ստորաբաժանումների», և ամեն մի ստորաբաժանումն իր առանձին ակումբն ուներ Բաբելոն քաղաքի որևէ մասում. նրանք չհարեցին այդ երեք ստորաբաժանումներից և ոչ մեկին:

Նրանք ապրում էին Բաբելոն քաղաքի արվարձանում և համարյա չէին հանդիպում գիտուն էակների հիմնական զանգվածից որևէ մեկի հետ: Եվ նրանց շրջապատում որպես ակումբի անդամ իմ հայտնվելուց ընդամենը մի քանի օր առաջ էին նրանք առաջին անգամ միաբանվել՝ նպատակ ունենալով ստեղծել *«լեզուփնիզմի հետևորդներ»* ակումբ:

Այդ գիտուն էակները, որոնց մասին խոսում եմ, բոլորն առանց բացառության հարկադրաբար էին Բաբելոն բերվել, և մեծ մասամբ այն գիտուն էակներն էին, որոնց պարսից արքան տեղահանել էր Եգիպտոսից:

Ինչպես ես հետո իմացա, նրանց միաբանվելը նախաձեռնել էին առաջին աստիճանի ձեռնադրյալ երկու գիտուն էակներ:

Երկրային այդ ձեռնադրյալ գիտուն էակներից մեկին, որը մավրական ծագում ուներ, կոչում էին Ջամիլ էլ-Նորկել⁸: Մյուս գիտուն էակին Պյութագորաս էին կոչում, և նա ծագումով հելլեն էր, այն հելլեններից, որոնց հետագայում հույներ անվանեցին:

Ինչպես հետագայում ինձ համար պարզ դարձավ, այդ երկու գիտուն էակները պատահաբար հանդիպել էին Բաբելոն քաղաքում և իրենց, այսպես կոչված, *«հույս-ապագայական» կարծիքների փոխանակման»* ընթացքում, այսինքն՝ այն զրույցների ընթացքում, որոնց թեման այն էր եղել, թե էակների *լինելիական գոյատևման* ո՞ր ձևերը կարող են բարենպաստ լինել երկրային էակների ապագայի համար, նրանք հստակորեն արձանագրել էին, որ Երկրի էակների սերնդափոխության ընթացքում տեղի է ունենում շատ անցանկալի ու ողբալի մի երևույթ, այն է՝ փոխադարձ ոչնչացման գործընթացներում կամ, այսպես կոչված, «պատերազմների» և «ժողովրդական ապստամբությունների» ժամանակ, այս կամ այն պատճառով անխուսափելիորեն մեծ քանակությամբ ոչնչացվում են ամեն աստիճանի ձեռնադրյալ էակներ, որոնց հետ մեկտեղ ոչնչացվում են նաև բազմաթիվ լեզուփնիզմներ, որոնց միջոցով է միայն հնարավոր սերնդեսերունդ փոխանցել այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Երկրի վրա անցյալում տեղի ունեցած հավաստի իրադարձություններին:

Երբ հիշյալ անկեղծ ու ազնիվ երկրային գիտուն էակները փաստեցին այն, ինչն իրենք այն ժամանակ որակեցին որպես «ողբալի երևույթ», երկար մտորեցին այդ մասին և արդյունքում որոշեցին օգտվել այն բացառիկ հանգամանքից, որ միևնույն քաղաքում հավաքվել են այդքան շատ գիտուն էակներ, քանի որ առիթ էր առաջացել համատեղ խորհրդակցելու և մի որևէ միջոց գտնելու, որ կանխարգելվի այդ ողբալի երևույթը, որը Երկրի վրա տեղի էր ունենում մարդու կյանքի աննորմալ պայմանների հետևանքով:

⁸ ռուս. տարբերակում՝ Каниль-ель-Норкель, անգլ. տարբերակում՝ Kami el-Norkel

⁹ ռուս. տարբերակում՝ уйсапагаумского, անգլ. տարբերակում՝ ooissapagaoomnian

Եվ հենց այդ նպատակով էլ նրանք կազմակերպել էին վերոհիշյալ ակումբը և այն անվանել «Լեզոմինիզմի հետևորդների ակումբ»:

Նրանց կանչին արձագանքեցին այնքան շատ համախոհներ, որ այնտեղ այդ ակումբին իմ անդամագրվելուց երկու օր հետո նոր անդամների ընդունելությունը դադարեցվեց:

Իսկ այն օրը, երբ դադարեցվեց նոր անդամների գրանցումը, արդեն անդամագրված գիտուն էակաների թիվը հասավ հարյուր երեսունիննի. և անդամների այդ քանակով էլ ակումբը գոյատևեց այնքան, մինչև որ հիշյալ պարսից արքան հրաժարվեց երկրային գիտուն էակաների հետ կապված իր մտադրությունից:

Ինչպես ինձ հայտնի դարձավ ակումբին անդամագրվելուց հետո, դրա բացման հենց առաջին օրը բոլոր գիտուն էականերն ընդհանուր ժողով էին կազմակերպել, որի ընթացքում միաձայն որոշել էին ամենօրյա ընդհանուր ժողովներ հրավիրել և զեկուցումներ ու քննարկումներ անցկացնել, որոնք պետք է վերաբերեին հետևյալ երկու խնդիրներին. դրանք են՝ ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկեն ակումբի անդամներն իրենց տները վերադառնալուց հետո, որ հավաքեն բոլոր այն լեզոմինիզմները, որոնք գոյություն ունեն իրենց հայրենիքներում, որպեսզի հետո դրանք հանձնեն իրենց հիմնադրած ակումբի գիտուն էակաների տնօրինմանը, և երկրորդ՝ ի՞նչ պետք է արվի, որ այդ լեզոմինիզմները փոխանցվեն հեռավոր սերունդներին ոչ միայն ձեռնադրյալների միջոցով, այլև մի որևէ ուրիշ եղանակով:

Մինչև իմ անդամագրվելն այդ երկու խնդիրների շուրջ արդեն իրենց ընդհանուր ժողովներում եղել էին մեծ քանակությամբ զեկուցումներ ու քննարկումներ, իսկ իմ անդամագրվելու օրը շատ էր խոսվում այն մասին, թե ինչպես հասնեն նրան, որ տարբեր, այսպես կոչված, «Ուղիների» հետևորդ հանդիսացող ձեռնադրյալ գիտուն էակաները մասնակցություն ունենան ակումբի գլխավոր խնդրի իրականացման գործում: Այդ հետևորդներին այն ժամանակ անվանում էին «օնանջիկներ», «շամանիստներ», «բուդդիստներ» և այլն:

Եվ ահա, այդ ակումբին իմ անդամագրվելու երրորդ օրն առաջին անգամ արտաբերվեց այն բառը, որը պատահաբար հասել է մինչև այնտեղի ժամանակակից էականերին և դարձել այն դեռևս պահպանված տվյալների հետաճի հզոր գործոններից մեկը, որոնք անհրաժեշտ են քիչ թե շատ նորմալ տրամաբանական *լինելիական մտածողության* համար. այդ բառը «արվեստ» էր, որն այն ժամանակ կիրառվեց այլ իմաստով և իր սահմանմամբ առնչվում էր բոլորովին այլ գաղափարի՝ ունենալով բոլորովին այլ նշանակություն:

Այդ բառն արտաբերվեց հետևյալ հանգամանքներում:

«Արվեստ» բառն առաջին անգամ արտաբերվեց, և նրա իսկական գաղափարն ու ճշգրիտ նշանակությունը արմատավորվեցին նաև մյուս զեկուցողների մոտ այն օրը, երբ ելույթ ունեցավ այն ժամանակներում հանրահռչակ և Աշխարհպանծեար¹⁰ անունը կրող հալդեացի մի գիտուն էակ, որը նույնպես այդ ժամանակ լեզոմինիստների ակումբի անդամ էր:

Քանի որ այդ գաղափարը հալդեացի գիտուն էակ մեծն Աշխարհպանծեարի զեկուցումը սկիզբ հանդիսացավ հետագա բոլոր իրադարձությունների համար, որոնք կապված էին այնտեղի ժամանակակից արվեստի հետ, ես կաշխատեմ հիշել այդ ճառը և հնարավորինս բառացի կրկնել այն:

Այն ժամանակ նա ասաց հետևյալը.

«Անցած և հատկապես վերջին երկու հարյուրամյակները մեզ ցույց են տալիս, որ անխուսափելի զանգվածային հոգեգարությունների ժամանակ, որոնց հետևանքով միշտ պատերազմներ և զանազան ներպետական ժողովրդական խռովություններ են բռնկվում, անփոփոխ կերպով մարդկային գազանությունների անմեղ զոհ են դառնում նրանք, ովքեր, շնորհիվ իրենց առաքինության ու գիտակցական զոհողությունների, արժանանում են ձեռնադրման, հենց նրանք, որոնց միջոցով հետագա սերունդների գիտակից էականերին են փոխանցվում զանազան լեզոմինիզմներ, որոնք տեղեկություններ են պարունակում անցյալում հավաստիբար տեղի ունեցած ամենատարբեր պատմական իրադարձությունների վերաբերյալ:

Հենց այդպիսի առաքինի մարդիկ միշտ մարդկային գազանությունների զոհ են դառնում, իմ կարծիքով, միայն այն բանի պատճառով, որ ներքուստ ազատ լինելով և ուրիշների նման երբեք ամբողջովին չտրվելով շրջապատի հետաքրքրություններին՝ այդ պատճառով չեն կարողանում

¹⁰ ռուս. տարբերակում՝ Акшарпанзиар, անգլ. տարբերակում՝ Aksharpantziar

մասնակից դառնալ ո՛չ զվարճություններին, հաճույքներին ու տրամադրություններին, ո՛չ էլ իրենց շրջապատողների իրապես անկեղծ մյուս դրսևորումներին:

Եվ չնայած այն բանին, որ սովորական ժամանակներում նրանք նորմալ կյանք են վարում և բարյացակամ վերաբերմունք են դրսևորում իրենց շրջապատի մարդկանց նկատմամբ ինչպես ներքնապես, այնպես էլ արտաքնապես և դրանով իսկ նորմալ ժամանակներում հարգանքի ու պատվի են արժանանանում մյուսների կողմից, սակայն, երբ սովորական մարդկանց զանգվածն ընկնում է հոգեգարության մեջ և, ինչպես միշտ, բաժանվում երկու հակադիր ճամբարների, ապա այդ վերջիններն, իրենց կոիվների ընթացքում հասնելով գազանության աստիճանի, սկսում են հիվանդագին կասկածամտություն դրսևորել հենց նրանց նկատմամբ, որոնք սովորական ժամանակներում իրենց պահել են համեստ ու լուրջ. և հենց որ հոգեգարության մեջ հայտնվածների ուշադրությունը կենտրոնանում է այդ բացառիկ մարդկանց վրա, նրանց մոտ ոչ մի կասկած չի մնում, որ այդ լուրջ և արտաքնապես միշտ խաղաղ մարդիկ սովորական ժամանակներում էլ, ոչ ավել, ոչ պակաս, եղել են իրենց ներկայիս հակառակորդների ու թշնամիների լրտեսները:

Այդ գազանացած մարդիկ իրենց հիվանդ բանականությամբ անվերապահորեն եզրակացնում են, թե նման մարդկանց նախկին լրջությունն ու հանդարտությունը եղել է ոչ այլ ինչ, քան, այսպես կոչված, «ծպտյալություն» և «երկերեսանիություն»:

Եվ այդ խելագար եզրահանգումների արդյունքում, և՛ այս, և՛ այն ճամբարին պատկանող գազանացած մարդիկ, առանց խղճի որևէ խայթ զգալու, նման լուրջ ու խաղաղ մարդկանց սպանում են:

Կարծում եմ, որ հենց նոր ասածս երևույթն է շատ հաճախ պատճառ դարձել, որ Երկրի վրա տեղի ունեցած իրական դեպքերի մասին լեզումինիզմները սերնդից սերունդ անցնելու ընթացքում իսպառ չքացել են Երկրի երեսից:

Եվ ահա, ո՛վ հարգարժան կոլեգաներ, եթե ուզում եք իմ անձնական կարծիքն իմանալ, ապա իմ ողջ էությամբ անկեղծորեն կասեմ ձեզ, որ չնայած այն ամենին, ինչ ասացի ձեզ համապատասխան լեզումինիզմների օգնությամբ հեռավոր սերունդներին ճշմարիտ գիտելիքներ փոխանցելու վերաբերյալ՝ այդ միջոցներով այժմ այլևս ոչինչ հնարավոր չէ անել:

Թո՛ղ որ այդ մեթոդն առաջվա պես շարունակվի, ինչպես որ դարեդար եղել է Երկրի վրա, և ինչպես որ ձեռնադրյալների «*լինելու ունակության*» միջոցով փոխանցման այդ ձևը վերականգնել է մեծ մարգարե Աշխաթա Շիեմաշը:

Եթե մենք՝ ժամանակակից մարդիկս, ներկա պահին ուզում ենք ինչ-որ բարի գործ կատարել ապագայի մարդկանց համար, ապա դա այն կլինի, որ արդեն գոյություն ունեցող փոխանցման եղանակին հավելենք ևս մի նոր եղանակ, որը բխում է ինչպես երկրային մեր կյանքի ժամանակակից դրվածքից, այնպես էլ նախկին սերունդների բազմադարյան փորձից մեզ հասած համապատասխան տեղեկություններից:

Անձամբ ես առաջարկում եմ, որ ապագա սերունդներին փոխանցելու գործն իրականացվի մարդկային, այսպես կոչված, «աֆալկալների»¹¹, այսինքն՝ մարդու ձեռքի գործ հանդիսացող զանազան ստեղծագործությունների միջոցով, որոնք կիրառություն են գտել մարդկանց առօրյա կյանքում. նաև մարդկային «սուլջինողների»¹², այսինքն՝ զանազան ծիսակատարությունների ու արարողությունների միջոցով, որոնք արդեն ձևավորվել են մարդկանց բազմադարյան հասարակական և ընտանեկան կյանքի ընթացքում և ինքնաբերաբար փոխանցվում են մի սերնդից մյուսին:

Հնարավոր է, որ կա՛մ կպահպանվեն մարդկանց այդ աֆալկալները, հատկապես դիմացկուն նյութերից պատրաստվածները, և տարբեր պատճառներով կփոխանցվեն հեռավոր սերունդներին, կա՛մ դրանց պատճենները կփոխանցվեն սերնդեսերունդ՝ մարդկանց էության մեջ արմատացած այն հատկության շնորհիվ, որ նրանք ուզում են որպես սեփական ստեղծագործություն ներկայացնել վաղեմի ժամանակներից իրենց հասած որևէ բան՝ փոխփխելով աննշան մանրամասներ:

Ինչ վերաբերում է մարդկային սուլջինողներին, ինչպիսիք են, օրինակ՝ տարբեր «գաղտնածեսերը», «կրոնական ծեսերը», «ընտանեկան ու հասարակական ավանդույթները», «կրոնական ու ժողովրդական պարերը» և այլն, ապա թեև դրանց արտաքին ձևերը հաճախ փոփոխության են

¹¹ ռուս. տարբերակում՝ афалканы, անգլ. տարբերակում՝ afalkalnas

¹² ռուս. տարբերակում՝ солджинихи, անգլ. տարբերակում՝ soldjinokhas

ենթարկվում ժամանակի ընթացքում, այնուհանդերձ մարդկանց մեջ առաջ բերած ազդակներն ու դրանց ազդեցության հետևանքով մարդկանց դրսևորումները մշտապես նույնն են մնում. ուստի, ներդնելով մեր արդեն ձեռք բերած զանազան օգտակար տեղեկություններն ու ճշմարիտ գիտելիքներն այն ներքին գործոնների մեջ, որոնք ծնում են այդ ազդակներն ու օգտավետ դրսևորումները, մենք լիովին կարող ենք հուսալ, որ դրանք կհասնեն մեր շատ հեռավոր սերունդներին, որոնց որոշ ներկայացուցիչներ կկարողանան վերծանել դրանք՝ մյուսներին հնարավորություն տալով օգտվել դրանցից՝ ի շահ իրենց:

Այժմ հարցը միայն այն է, թե ինչպե՞ս է հնարավոր իրականացնել այդ փոխանցումը իմ նկարագրած զանազան մարդկային աֆալկալների ու սոլջինոդների միջոցով:

Անձամբ ես առաջարկում եմ, որ դա արվի «Յոթնագրյանք» կոչվող Համընդհանուր Օրենքի միջոցով:

Յոթնագրյանքը գոյություն ունի և միշտ գոյություն կունենա Երկրի վրա ամեն ինչում:

Օրինակ՝ ըստ այդ Օրենքի, սպիտակ լույսը բաղկացած է յոթ ինքնուրույն գույներից. ամեն մի որոշակի ձայն յոթ տարբեր ու ինքնուրույն ենթաձայն է պարունակում. մարդու ամեն մի վիճակ ունենում է յոթ տարբեր ու ինքնուրույն զգացողություններ. այնուհետև՝ ամեն մի որոշակի ձև կարող է կազմավորվել միայն յոթ չափումներով. կշիռ ունեցող ամեն ինչ Երկրի վրա դադարի վիճակում է մնում շնորհիվ յոթ «փոխադարձ հրումների» և այլն:

Եվ այսպես, ներկայումս մեր ձեռքի տակ եղած գիտելիքներից, որոնք անձամբ ինքներս ենք ձեռք բերել, կամ մեզ են հասել անցյալից, այն գիտելիքը, որը մենք օգտակար համարեցինք ապագայի մեր հեռավոր հետնորդների համար, պետք է ինչ-որ կերպ արտահայտված լինի նշաձև մարդկային աֆալկալներում ու սոլջինոդներում, որպեսզի ապագայում այդ նույն մեծ Համընդհանուր Օրենքի օգնությամբ հասանելի լինի մարդու մաքուր բանականության համար:

Կրկնում եմ, որ Յոթնագրյանքը գոյություն կունենա Երկրի վրա, քանի դեռ գոյություն ունի Համայն Տիեզերքը, և մարդիկ այն կտեսնեն ու կհասկանան, քանի դեռ մարդկային միտքը գոյություն ունի Երկրի վրա. ուստի կարելի է համարձակ ասել, որ գիտելիքը, որն այդ եղանակով արտահայտված կլինի նշաձև ստեղծագործություններում, կապրի հավերժ:

Իսկ ինչ վերաբերում է բուն մեթոդին, այսինքն՝ այդ Օրենքի միջոցով գիտելիք փոխանցելու եղանակին, ապա իմ կարծիքով դա կարելի է իրագործել հետևյալ կերպ:

Բոլոր այն ստեղծագործություններում, որոնք մենք միտումնավոր կերպով կստեղծենք այդ Օրենքի հիման վրա, որպեսզի փոխանցենք հեռավոր սերունդներին, նույն միտումնավորությամբ կներդնենք որոշակի օրինաչափ անճշտություններ, իսկ այդ անճշտությունների մեջ մեզ մատչելի միջոցներով կտեղակայենք այս կամ այն ճշմարիտ գիտելիքի բովանդակությունը, որը ներկայումս մարդկանց արդեն հայտնի է դարձել:

Ամեն մի առանձին դեպքում, որպես բուն բացատրություն կամ, կարելի է ասել, «բանալի» այդ Մեծ Օրենքից մեր ստեղծած խտտորման համար, մեր ստեղծագործություններում մենք կներդնենք նաև լեզումիսիզմի նման ինչ-որ բան և կապահովենք սերնդեսերունդ դրանց փոխանցումը հատուկ ձեռնադրյալների միջոցով, որոնց կանվանենք *արվեստի* ձեռնադրյալներ:

Նրանց մենք այդպես կանվանենք այն պատճառով, որ Յոթնագրյանքի միջոցով հեռավոր սերունդներին գիտելիք փոխանցելու ամբողջ այդ գործընթացը ոչ թե բնական կլինի, այլ *արվեստական*:

Եվ այսպես, ո՞վ իմ բարձրակիրք և անաչառ կոլեգաներ...

Այժմ պետք է որ ձեզ համար պարզ լինի, որ եթե ինչ-որ պատճառով այն տեղեկությունները, որոնք պետք են մեր հետնորդներին և վերաբերում են Երկրի վրա երբևէ տեղի ունեցած իրադարձությունների մասին մարդկանց ձեռք բերած գիտելիքներին, հնարավոր չլինի տեղ հասցնել ճշմարիտ ձեռնադրյալների ձեռամբ, ապա փոխանցման իմ առաջարկած նոր եղանակի շնորհիվ ապագայի մարդիկ կկարողանան մտասուզվել և պարզել իրենց համար եթե ոչ այն ամենը, ինչ հիմա գոյություն ունի, ապա գոնե Երկրի վրա գոյություն ունեցող ընդհանուր գիտելիքի այն առանձին կտորները, որոնց կվիճակվի հասնել մինչև իրենց ինչպես մեր ժամանակների մարդկանց ձեռքի գործ հանդիսացող նշաձև ստեղծագործությունների, այնպես էլ գոյություն ունեցող այն ծիսակատարությունների շնորհիվ, որոնց մեջ, օգտվելով մեծ Յոթնագրյանքից և մեր *արվեստային* ցուցումներից՝ մենք կներդնենք այն, ինչ ուզում ենք»:

Ահա այս խոսքերով էլ մեծն Աշխարհպանծեարն այն ժամանակ ավարտեց իր զեկուցումը:

Նրա ճառը նշանակալիորեն գրգռեց Լեզումինիզմի հետևորդների ակումբի բոլոր անդամներին և աղմկոտ քննարկումներ առաջացրեց, որոնց արդյունքում նրանք իսկույն որոշեցին անել այնպես, ինչպես առաջարկեց մեծն Աշխարհպանծեարը:

Հետո ոչ մեծ ընդմիջում եղավ սնվելու համար, ապա բոլորը կրկին հավաքվեցին, և այդ օրվա երկրորդ ընդհանուր ժողովը շարունակվեց ամողջ գիշեր:

Եվ ահա միաձայն որոշում կայացվեց, որ հաջորդ օրն իսկ սկսեն պատրաստել, այսպես կոչված, զանազան ստեղծագործությունների «մանրակերտ-գյուտեր» կամ, ինչպես դրանք անվանում են ժամանակակից եռուղեղ էակները՝ «մոդելներ», որպեսզի փորձեն մշակել հնարավոր և առավել պիտանի ցուցումների եղանակներ՝ ըստ այն սկզբունքների, որոնք շարադրել էր մեծն Աշխարհպանծեարը, որից հետո բերեն և ակումբին ներկայացնեն իրենց այդ մանրակերտ-գյուտերը կամ մոդելները, որպեսզի դրանք ցուցադրեն ակումբի մյուս անդամներին:

Հաջորդ երկու օրերին նրանցից շատերը բերեցին իրենց պատրաստած մանրակերտ-գյուտերը և, համապատասխան բացատրություններ տալով, ցույց տվեցին մյուսներին: Նրանք նաև սկսեցին ցուցադրել բոլոր այն բազմազան գործողությունները, որոնք նախկին ժամանակներում այդ մոլորակի էակները ժամանակ առ ժամանակ կատարում էին իրենց սովորական գոյատևման ընթացքում և դեռևս շարունակում են կատարել ընդհուպ մինչև ներկա ժամանակները:

Նրանց բերած մոդելները և ցուցադրած զանազան լինելիական դրսևորումները պարունակում էին տարբեր գունային համադրություններ, կային տարբեր կառույցների ու շինությունների մանրակերտեր, նվագում էին զանազան երաժշտական գործիքներ, երգում ամենաբազմազան մեղեդիներ, ճշգրիտ նմանակում իրենց համար օտար ապրումներ և այլն, և այլն:

Դրանից կարճ ժամանակ անց ակումբի անդամները հարմարության համար բաժանվեցին մի քանի խմբերի և, «շաբաթ» կոչվող ժամանակահատվածի յոթերորդական մասերից ամեն մեկը, որն իրենք «օր» են անվանում, հատկացրին գիտելիքների առանձին բնագավառներին վերաբերող իրենց ստեղծագործությունների ցուցադրությանը:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ ժամանակի այդ հատվածը՝ շաբաթը, միշտ էլ քո այդ մոլորակի վրա բաժանվել է յոթ օրվա. այդպիսի բաժանում էին արել նաև Ատլանտիդա աշխարհամասի էակները, որոնք դրանով արտահայտել են իրենց քաջ ծանոթ Յոթնագրյանքը:

Ատլանտիդա աշխարհամասում այն ժամանակ շաբաթվա օրերն այսպես էին անվանում՝

- 1) ադաշսիկրա,
- 2) եվասիկրա,
- 3) սևօրսիկրա,
- 4) միդասիկրա,
- 5) մարկոսիկրա,
- 6) դուկասիկրա,
- 7) սանյասիկրա:

Այդ անվանումները հետագայում այնտեղ շատ անգամ են փոխվել, և հիմա ժամանակակից էակներն այսպես են անվանում շաբաթվա օրերը՝

- 1) երկուշաբթի,
- 2) երեքշաբթի,
- 3) չորեքշաբթի
- 4) հինգշաբթի,
- 5) ուրբաթ,
- 6) շաբաթ,
- 7) կիրակի:

Եվ այսպես, ինչպես արդեն ասացի, նրանք շաբաթվա ամեն մի օրը նվիրեցին կա՛մ իրենց ձեռակերտ գործերի ցուցադրմանը՝ ըստ առանձին մասնագիտացումների, կա՛մ գիտակցորեն մտահղացված *լինելիական դրսևորման* ձևերից որևի մեկին:

Այսպես

երկուշաբթին նրանք հատկացրին առաջին խմբին, և այն համարվեց *«կրոնական և քաղաքացիական ծեսերի օր»*.

երեքշաբթին տրամադրվեց երկրորդ խմբին և կոչվեց *«ճարտարապետության օր»*.

չորեքշաբթին՝ *«նկարչության օր»*.

հինգշաբթին՝ *«կրոնական և ժողովրդական պարերի օր»*.

ուրբաթը՝ *«քանդակագործության օր»*.

շաբաթը՝ *«գաղտնածեսերի օր»*, կամ նաև անվանում էին *«թատրոնի օր»*.

կիրակին՝ *«երգ ու երաժշտության օր»*:

Ամեն երկուշաբթի, այսինքն՝ *«կրոնական և քաղաքացիական ծեսերի օրը»*, առաջին խմբի գիտուն էակները ցուցադրում էին զանազան ծեսեր, որոնցում փոխանցման համար նախատեսված և նախապես ընտրված *«գիտելիքների բաժնեմասերը»* արտահայտված էին լինում Յոթնագրյանքից որոշակի շեղումներով, գլխավորապես՝ ծիսակատարության մասնակիցների օրինաչափ շարժումների մեջ եղած անճշտություններով:

Օրինակ՝ ասենք, տվյալ ծեսը դեկավարող քուրմը, որին ժամանակակիցները քահանա են ասում, պետք է ձեռքերը կարկառի դեպի Երկինք:

Համաձայն Յոթնագրյանքի՝ այդ դիրքի համար անպայման պահանջվում է, որ քրմի ոտնաթաթերը որոշակի նորմալ դիրքով հենված լինեն գետնին. Բայց Բաբելոնյան այդ գիտուն էակները սահմանեցին, որ այդ ծեսի նշված դեկավարը իր ոտնաթաթերը պետք է դնի ոչ թե ըստ Յոթնագրյանքում նկարագրվածի, այլ մի փոքր այլ կերպ:

Եվ ընդհանրապես, տվյալ կրոնական ծեսի մասնակիցների շարժումներում առկա բոլոր այդ «այլ կերպ»-երով, տվյալ խմբի գիտուն էակները, օգտագործելով պայմանական, այսպես կոչված, «այբուբեն»՝ ցուցադրում էին այն գաղափարները, որոնք, ըստ իրենց մտադրության, ծեսի միջոցով հարկավոր է փոխանցել մարդկային էակներին՝ իրենց հեռավոր հետնորդներին:

Ամեն երեքշաբթի, այսինքն՝ *«ճարտարապետության օրը»*, երկրորդ խմբին պատկանող գիտուն էակները զանազան մանրակերտեր էին բերում ենթադրյալ կառույցների ու շինությունների համար, որոնք կարող էին դիմանալ շատ երկար ժամանակ:

Այս դեպքում նույնպես նրանք այդ կառույցներին կայունություն էին հաղորդում ոչ թե ըստ Յոթնագրյանքի, կամ այնպես, ինչպես սովոր էին, այլ մի փոքր այլ կերպ:

Օրինակ՝ ասենք թե որևէ շինության գմբեթ, ըստ բոլոր տվյալների, պետք է կանգնեցնեց որոշակի հաստություն ու ամրություն ունեցող չորս սյուների վրա: Բայց նրանք հիշյալ գմբեթը կանգնեցնում էին երեք սյուների վրա. իսկ այն փոխադարձ ճնշումը կամ, ինչպես իրենք են ասում, փոխադարձ դիմադրությունը, որն ըստ Յոթնագրյանքի անհրաժեշտ է վերնոլորակային ցանկացած ծանրություն պահելու համար, նրանք ստանում էին ոչ միայն սյուների միջոցով, այլև նույն այդ Յոթնագրյանքից բխող անսովոր համակցություններով, որոնց մասին այն ժամանակվա էակների հիմնական զանգվածն արդեն գիտեր: Այսինքն՝ նրանք սյուների պահանջված դիմադրությունը ստանում էին՝ գլխավորապես օգտվելով հենց գմբեթի ծանրության ուժից:

Կամ մի ուրիշ օրինակ. համաձայն բոլոր տվյալների, որոնք այնտեղ ձեռք են բերվել ինչպես մեխանիկորեն՝ Բազմադարյան փորձից, այնպես էլ այնտեղի լիովին բանական որոշ էակների լիովին գիտակից հաշվարկների շնորհիվ, ամեն մի քար պետք է անպայման որոշակի ամրություն ունենա, ի համապատասխան որոշակի դիմադրության ուժի. Բայց նրանք անկյունաքարը պատրաստում և տեղադրում էին այնպես, որ այն չհամապատասխանի վերոհիշյալ տվյալներին: Դրա փոխարեն այդ քարի վերևի ծանրությանը ցույց տրվող դիմադրությունն ու ամրությունը, որոնք պահանջվում են ըստ Յոթնագրյանքի, նրանք ստանում էին ներքևի քարերի հատուկ դասավորության միջոցով, որոնք էլ իրենց հերթին շարում էին ոչ թե ըստ ընդունված կարգի, այլ իրենց հաշվարկով հենվում էին է՛լ ավելի ներքևում դրված քարերի դասավորության վրա, և այդպես շարունակ:

Եվ քարերի՝ Յոթնագրյանքից բխող այդ անսովոր դասավորության մեջ նույնպես, կրկին օգտվելով պայմանական «այբուբենից», նրանք ներդնում էին որևէ օգտակար տեղեկատվության բովանդակություն:

Լեզունիհիմնի հետևորդների ակումբի այդ երկրորդ խմբի գիտուն անդամները ենթադրյալ կառույցների իրենց մանրակերտ-նկարներով հետազայում նաև ցույց տվեցին այն, ինչ ուզում էին՝ օգտագործելով «դայվիբրիցկար»¹³ կոչվող օրենքը, այսինքն՝ թրթռանքի ազդեցության օրենքը, որը գործում է փակ տարածությունների մթնոլորտում:

Այդ օրենքը, որը բոլորովին չի հասել այդ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակներին, այն ժամանակ շատ լավ հայտնի էր այնտեղի էակներին, այսինքն՝ նրանք արդեն շատ լավ գիտեին, որ փակ տարածքների չափերն ու ձևը, ինչպես նաև դրանցում պարփակված օդը էակների վրա որոշակի ազդեցություն են գործում:

Օգտվելով այդ օրենքից, նրանք այդքան տարբեր գաղափարներ ցուցադրեցին հետևյալ կերպ:

Ենթադրենք, որևէ շենքի բնույթից ու նշանակությունից կախված, նրա ներքին դահլիճներից պահանջվում է, որ օրինաչափ հաջորդականությամբ զրգովեն որոշակի զգացողություններ՝ համաձայն Յոթնագրյանքի և դարավոր փորձի:

Այդ դեպքում, օգտվելով *դայվիբրիցկար* օրենքից, այդ ենթադրյալ շինության ներքին դահլիճները նրանք դասավորում էին այնպես, որ դրանց մեջ մուտք գործող էակներն այդ զգացողություններն ունենան ոչ թե սպասվող հաջորդականությամբ, այլ որևէ ուրիշ կարգով:

Եվ օրինաչափ հաջորդականությունից շեղումների մեջ նրանք որոշակի ձևով ներդնում էին այն ինչ ուզում էին:

Չորեքշաբթին՝ «նկարչության օրը», նվիրվում էր գույների տարբեր համակցություններ ստեղծելուն:

Այդ օրերին երրորդ խմբի գիտուն էակները ցուցադրման համար բերում էին տնային գործածության զանազան առարկաներ, որոնք պատրաստված էին լինում այնպիսի գունավոր նյութերից, որոնք կարող էին դիմանալ շատ երկար ժամանակ, այն է՝ բերում էին «գորգեր», «գործվածքներ», «չինկուարներ»¹⁴ (այսինքն՝ նկարներ, որոնք զանազան ներկերով արվում էին հատուկ ձևով աղաղած կաշվի վրա որը կարող է պահպանվել շատ հարյուրամյակներ) և նման այլ բաներ:

Ներկերով կամ թելերով այդ ստեղծագործությունների վրա նկարվում կամ ասեղնագործվում էին իրենց մոլորակի բնության տարբեր պատկերներ կամ այնտեղ բնակվող տարբեր տեսակի էակներ:

Նախքան կշարունակեմ պատմել այն մասին, թե երկրային գիտուն էակներն այն ժամանակ ինչպես էին գույների տարբեր համակցությունների միջոցով ցուցադրում գիտելիքի տարբեր դրվագներ, պետք է նշեմ մի փաստ, որն առնչվում է այն ամենին, ինչ հիմա պատմում եմ. դա անշուշտ ողբալի փաստ է քո սիրելիների համար և իրենց ներկայություններում կրկին ձեռք է բերվել իրենց իսկ հաստատած առօրեական գոյատևման աննորմալ ձևերի պատճառով:

Սկզբում ես ուզում եմ քեզ պատմել նաև նրանց «զգայարանների» կազմավորման որակի աստիճանական վատթարացման մասին, որոնք պետք է կազմավորվեն ցանկացած էակի մոտ. և հենց այն օրգանի մասին, որն այս պահին մեզ հատկապես է հետաքրքում՝ այսպես կոչված «*ծանրակենտրոն*» այն *թրթիռների խառնուրդի*» ընկալման ու զանազանման օրգանի մասին, որոնք հասնում են մոլորակին Տիեզերական տարածություններից:

Խոսքս վերաբերում է, այսպես կոչված, «դրսևորված բոլոր աղբյուրների հանրագումարային թրթռանքին», այսինքն՝ այն նույն բանին, ինչը գիտուն էակ Աշխարհպանծեարը, որի մասին արդեն պատմել եմ, անվանեց «սպիտակ լույս». նաև խոսում եմ առանձին «*ծանրակենտրոն թրթիռների խառնուրդներից*» ծագող զգայությունների մասին, որոնք էակներն իրարից զատում են որպես, այսպես կոչված, «*գունեղանքներ*»:

Պետք է իմանաս, որ Երկիր մոլորակի եռուղեղ էակների ծագման ու կազմավորման ամենասկզբում՝ նախքան նրանց ներսում կունդաբուֆեր օրգանի ներդնումը, նաև ավելի ուշ, երբ այդ օրգանն ամբողջությամբ հեռացվեց նրանց ներկայություններից, և անգամ երկրորդ տրանսպալյան

¹³ ռուս. տարբերակում՝ дайвибризкал, անգլ. տարբերակում՝ Deivibritzkar

¹⁴ ռուս. տարբերակում՝ чинкряры, անգլ. տարբերակում՝ chinkroaries

խոտորումից հետո և համարյա ընդհուպ մինչև մեր երրորդ անձնական այցն այդ մոլորակի մակերևույթ վերոհիշյալ օրգանը կազմավորվում էր նույնպիսի «ընկալման զգայունությամբ», ինչպիսին կազմավորվում է մեր Համայն Մեծ Տիեզերքի մնացած բոլոր եռուղեղ էակների ներկայություններում:

Նախկինում՝ նշած ժամանակահատվածներում, այդ մոլորակի վրա ծնվող բոլոր եռուղեղ էակների մոտ այդ օրգանը ձևավորվում էր առանձին «սպիտակ լույսի ծանրակենտրոն թրթիռների» նշած խառնուրդների ընկալման զգայունությամբ և «գունեքանգների» ամբողջ գունապնակի մեկ երրորդի զանազանման կարողությամբ, որոնք առաջանում են ինչպես մոլորակների ներկայություններում, այնպես էլ բոլոր մեծ ու փոքր տիեզերական խտացումներում:

Օբյեկտիվ Գիտությունն արդեն ճշգրիտ պարզել է, որ հանրագումարային թրթռանքին պատկանող ծանրակենտրոն թրթիռների առանձին միջանկյալ խառնուրդների քանակը, այսինքն՝ գունեքանգների թիվը ճշգրիտ հավասար է մեկ «հուլտանպանասի»¹⁵ կամ, ըստ երկրային եռուղեղ էակների հաշվարկների՝ 5 764 801 տոնայնության:

Այդ խառնուրդների կամ տոնայնությունների ընդհանուր թվի միայն մեկ երրորդ մասը՝ բացառությամբ մի տոնայնության, որը հասանելի է միայն Նորին Անսահմանություն Ամենակալին, այսինքն, ընդհանուր հաշվով 1 921 600 տոնայնություններ, որոնք էակներն ընկալում են որպես տարբեր գույներ, կարող են ընկալելի լինել բոլոր սովորական էակների համար՝ անկախ այն բանից, թե մեր Համայն Տիեզերքի ո՛ր մոլորակի վրա են նրանք ծնվում:

Բայց եթե եռուղեղ էակներն ավարտում են իրենց բարձրագույն մասի կատարելագործումը, ապա նրանց տեսողական զգայարանը դառնում է, այսպես կոչված «օլլոյստեսնողական», և նրանք արդեն կարողանում են ընկալել բոլոր տոնայնությունների երկու երրորդը, որը կազմում է, ըստ երկրային հաշվարկի, 3 843 200 տարբեր գունեքանգներ:

Եվ միայն այն եռուղեղ էակները, որոնք իրենց բարձրագույն լինելիական մասի կատարելությունը հասցնում են, այսպես կոչված, «Հիշմեջի» վիճակի, ունակ են դառնում զանազանելու նշված բոլոր խառնուրդներն ու տոնայնությունները՝ բացի մի տոնայնությունից, որը, ինչպես ասացի, հասանելի է միայն մեր Ամենակալ Արարչի ընկալմանը:

Թեև ես մտադիր եմ ապագայում քեզ մանրամասն բացատրել, թե ինչպես և ինչու է «ինսապալյան տիեզերական խտացումներում» յուրաքանչյուր որոշակի գոյացություն էվոլյուցիայի և ինվոլյուցիայի գործընթացներում ձեռք բերում էակների նշված օրգանի վրա տարբեր ազդեցություններ գործելու հատկություն, սակայն ավելորդ չեմ համարում այդ հարցը շոշափել նաև հիմա:

Նախ և առաջ անհրաժեշտ է ասել, որ համաձայն Սրբազան Յոթնապարապարշինող հիմնական տիեզերական Օրենքի վերջնական արդյունքի, այսինքն՝ այն տիեզերական օրենքի, որին վերոհիշյալ բաբելոնյան դարաշրջանում Երկիր մոլորակի եռուղեղ էակներն անվանում էին Յոթնագրյանք, «համընդգրկուն թրթռանքը», արդեն իսկ «որոշակիացված» տիեզերական գոյացությունների նման, կազմավորվում և բաղկացած է լինում յոթ, այսպես կոչված, «համալիր արդյունքներից» կամ, ինչպես երբեմն ասում են, «թրթիռների յոթ դասերից», որոնք բխում են այն տիեզերական աղբյուրներից, որոնցից յուրաքանչյուրի ծագումն ու հետագա գործողությունը կախված է յոթ ուրիշներից, սրանք էլ իրենց հերթին ծագում ու կախված են լինում հաջորդ յոթից և այդպես շարունակ՝ ընդհուպ մինչև առաջին սրբազնագույն «յոթ հատկություններ ունեցող եզակի թրթռանքը», որը բխում է Սրբազնագույն Սկզբնաղբյուրից. և դրանք բոլորն իրար հետ կազմում են համայն տիեզերքում գոյություն ունեցող իրականացումների բոլոր աղբյուրների համալիր թրթռանքը, և, վերջիններիս փոխակերպումների շնորհիվ, դրանք հետագայում տիեզերական *ինսապալյան խտացումների* ներկայություններում իրականացնում են «գունեքանգների» վերը նշված քանակությունը:

Իսկ ինչ վերաբերում է սրբազնագույն «յոթ հատկություններ ունեցող եզակի թրթռանքի» մանրամասներին, ապա դրանք դու կհասկանաս միայն այնժամ, երբ, ինչպես արդեն քեզ բազմիցս խոստացել եմ, հարկ եղած ժամանակ մանրամասն կբացատրեմ քեզ այն ամենը, ինչ կապված է Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման մեծագույն հիմնական օրենքների հետ:

Առայժմ տվյալ դեպքի առնչությամբ դու պետք է իմանաս, որ երբ նշված համալիր թրթռանքը, այսինքն այն, որին երկրային եռուղեղ էակները «սպիտակ լույս» են անվանում, իրեն բնորոշ

¹⁵ ռուս. տարբերակում՝ гультанпанас, անգլ. տարբերակում՝ hooltanpanas

ներկայությամբ հետագա փոխակերպումների համար մուտք է գործում ինսապայան մոլորակի ներկայության մեջ, ապա նրանում, ինչպես ամեն մի արդեն «որոշակիացված» տիեզերական գոյացության մեջ, որն օժտված է հետագա իրականացման հնարավորությամբ, նույնպես տեղի է ունենում Ջարդըլում կոչվող տիեզերական գործընթացը, այսինքն՝ նա ինքը մնում է որպես ներկայություն, սակայն նրա էությունը, այսպես ասած, տրոհվում է և իր ծագման առանձին «ծանրակենտրոն թրթիռներով» առաջ է բերում էվոլյուցիայի և ինվոլյուցիայի գործընթացներ, որոնք իրականացվում են հետևյալ կերպ. մի *ծանրակենտրոն թրթիռը* ծագում է մյուսներից և վերածվում երրորդի և այլն:

Այդպիսի փոխակերպումների ընթացքում նշված «*համալիր թրթռանքը*», այսինքն՝ սպիտակ ճառագայթը, իր *ծանրակենտրոն թրթիռներով* ազդում է ուրիշ սովորական գործընթացների վրա, որոնք մոտակայքում տեղի են ունենում ներմոլորակային և վերմոլորակային գոյացումներում ու տրոհումներում, և, շնորհիվ «*թրթիռների նմանության*», նրա *ծանրակենտրոն թրթիռները*, կախված շրջակա պայմաններից ու դրանց համապատասխան՝ խառնվում և մաս են դառնում բոլոր ներմոլորակային ու վերմոլորակային կազմավորումների ամբողջության, որոնցում տեղի են ունենում նշված գործընթացները:

Եվ ահա, զավա՛կս, Երկրի վրա իմ անձնական վայրէջքների ընթացքում ես սկզբում առանց իմ բանականության կողմից որևէ գիտակից մտադրություն դրսևորելու, ապա նաև լիովին միտումնավոր նկատեցի և ի վերջո որոշակիորեն փաստեցի, որ նրանց բոլորի մոտ տեղի է ունենում այդ «*լինելիական օրգանի*» վատթարացում:

Հարյուրամյակ առ հարյուրամյակ վատթարանալով՝ նաև ա՛յդ օրգանի «*ընկալման զգայնությունը*», մի օրգանի, գլխավորապես որի միջոցով այնտեղի եռուղեղ էակների մոտ տեղի է ունենում, այսպես կոչված «*ինքնաբերական հազեցում արտաքինով*», ինչը հիմք է ծառայում բնական ինքնակատարելագործման հնարավորության համար, հասավ այնպիսի մի վիճակի, որ իմ հինգերորդ այցի ժամանակաշրջանում, որին ներկայիս էակները կոչում են «*Բաբելոնի ծաղկման*» դարաշրջան, նրանց այդ օրգանը կարողանում էր ընկալել ու տարբերակել սպիտակ լույսի *ծանրակենտրոն թրթիռների* խառնուրդը՝ ամենաշատը մինչև դրա «*յոթական շերտերի* երրորդ աստիճանը», այսինքն՝ ընդամենը 343 տարբեր «*գուներանգներ*»:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ Բաբելոնյան դարաշրջանի ոչ քիչ եռուղեղ էակներ հենց իրենք կասկածեցին իրենց այդ օրգանի զգայնության աստիճանական անկման մասին, և նրանցից մի քանիսը բաբելոնում նույնիսկ նոր ընկերություն հիմնեցին, որը յուրահատուկ մի «շարժում» ծնեց այն ժամանակվա նկարիչների շրջանում:

Այդ շրջանի նկարիչների այդ յուրահատուկ շարժումը հետևյալ ծրագիրն ուներ. «Ճշմարտությունը գտնել ու լուսաբանել միայն սպիտակի ու սևի միջև եղած երանգների միջոցով»:

Եվ նրանք իրենց գործերն ստեղծում էին բացառապես սևից սպիտակին անցնող երանգների կիրառությամբ:

Երբ ես իմացա այնտեղ՝ Բաբելոնում սկիզբ առած, կերպարվեստի այդ յուրահատուկ շարժման մասին, դրա հետևորդներն իրենց ստեղծագործություններում արդեն կիրառում էին, այսպես կոչված, «մոխրագույնի» շուրջ 1500 լիովին որոշակի նրբերանգներ:

Կերպարվեստի այդ նոր շարժումն այնտեղ՝ այն էակների շրջանում, որոնք նույնպես ձգտում էին գտնել ինչ-որ բանում ճշմարտություն գտնել, այսպես կոչված, «մեծ սենսացիա» առաջացրեց և նույնիսկ պատճառ դարձավ ևս մեկ, էլ ավելի յուրօրինակ «շարժման»՝ այս անգամ Բաբելոնյան «օլֆակտորիստների»¹⁶՝ այն ժամանակվա հենց այն էակների շրջանում, որոնք հետագոտում ու ստեղծում էին, այսպես կոչված, նոր «*թրթիռների խտացման համակցություններ*», որոնք որոշակի ձևով ազդում էին էակների հոտառության զգայարանի վրա և նրանց ընդհանուր հոգեկառույցում առաջացնում որոշակի գործողություններ. այսինքն՝ դրանք այնտեղի այն էակներն էին, որոնք նպատակադրվել էին ճշմարտությունը գտնել հոտերի միջոցով:

Որոշ էակներ, ոգևորվելով դրանով և ընդօրինակելով նշածս ուղղությանը պատկանող նկարիչներին՝ հիմնեցին նմանատիպ մի ընկերություն, և նրանց նոր շարժման կարգախոսը հետևյալն

¹⁶ ռուս. տարբերակում՝ нуксхомистов, անգլ. տարբերակում՝ olfactorists

էր. «Ճշմարտությունը փնտրել հոտային այն նրբերանգների մեջ, որոնք ընկած են սառեցման ժամանակ ցրտի ազդեցության պահի և քայքայման ժամանակ տաքի ազդեցության պահի միջև»:

Նկարիչների պես նրանք էլ այն ժամանակ նշված երկու պահերի միջև գտան շուրջ 700 լիովին որոշակի հոտային նրբերանգներ, որոնք օգտագործում էին իրենց պարզաբանիչ փորձերում:

Զգիտեմ, թե մինչև ուր կտանեին բաբելոնյան այդ երկու յուրօրինակ «շարժումները» և ինչի կհանգեցնեին, եթե նոր նշանակված քաղաքագլուխը մեր այնտեղ եղած ժամանակ չսկսեր հալածել երկրորդ նոր «շարժման» հետևորդներին, քանի որ վերջիններս իրենց բավականաչափ սուր հոտառությամբ զգացին և ակամա սկսեցին մերկացնել նրա, այսպես կոչված, «մութ գործերը», և արդյունքում նա ձեռնարկեց բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ճնշի այն ամենը, ինչ կապված էր ոչ միայն երկրորդ, այլ նաև առաջին շարժման հետ:

Ինչ վերաբերում է այն օրգանին, որի շուրջ մենք սկսեցինք այս գրույցը, այն է՝ իրենցից դուրս գտնվող տիեզերական այլ կազմավորումների տեսանելիությունն ընկալող օրգանին, ապա դրա զգայնության վատացումը շարունակվում էր նաև բաբելոնյան դարաշրջանից հետո, և ի վերջո բանը հասավ նրան, որ վերջին անգամ այդ մոլորակի մակերևույթի վրա մեր եղած ժամանակ քո սիրելիները, 1 921 600 «գուներանգ» ընկալելու ու զանազանելու փոխարեն ընկալում ու զանազանում էին «սպիտակ լույսի յոթական բյուրեղացման» միայն նախավերջին խմբի արդյունքը, այսինքն՝ 49 գուներանգ, և այն էլ միայն քո սիրելիներից որոշներն էին օժտված այդ ընդունակությամբ, մինչդեռ մնացածները, գուցե մեծամասնությունը, զրկված էին նույնիսկ այդ հնարավորությունից:

Բայց հատկապես հետաքրքիր է այն, որ իրենց ընդհանուր ներկայության խիստ կարևոր մասի հարաճուն վատթարացման հետ կապված՝ տեղի է ունենում խղճուկ մի զեղծանք, այն է՝ այնտեղի ներկայիս եռուղեղ էակներից նրանք, որոնք դեռևս կարողանում են զանազանել գուներանգների ընդհանուր քանակի այդ չնչին հատվածը՝ ընդամենը 49 գուներանգ, մեծագույն քամահրանքի հետ խառնված գոռոգությամբ են նայում մնացած էակներին, որոնք կորցրել են նույնիսկ այդ չնչին քանակությունը տեսնելու ընդունակությունը. վերջիններին նրանք համարում են հիվանդներ, որոնք տառապում են «դալտոնիզմով»:

«Սպիտակ ճառագայթի ծանրակենտրոն թրթիռների» վերջին յոթ խառնուրդները, որոնք ինչպես ժամանակակից էակները, այնպես էլ բաբելոնյան էակներն ունեին, հետևյալ անուններն ունեն.

- 1) կարմիր,
- 2) նարնջագույն,
- 3) դեղին,
- 4) կանաչ,
- 5) երկնագույն,
- 6) կապույտ
- 7) մանուշակագույն

Այժմ լսիր, թե այն ժամանակ Բաբելոնում նկարիչների խմբին պատկանող գիտուն էակներն ինչպես էին իրենց օրոք Յոթնագրյանք կոչվող տիեզերական օրենքի օրինաչափ անճշտությունների վերաբերյալ ձեռք բերած իրենց գիտելիքների դրվագներն ու զանազան օգտակար տեղեկությունները փոխանցում՝ օգտվելով նշված յոթ ինքնուրույն ու որոշակի գույների համակցություններից և նրանցից ածանցված երկրորդական գուներանգներից:

«Համընդգրկուն թրթռանքի», ասինքն՝ սպիտակ ճառագայթի որոշակի հատկության համապատասխան՝ դրա այն փոխակերպումների ընթացքում, որոնք քիչ առաջ նկարագրեցի, և որոնք այն ժամանակ արդեն հայտնի էին բաբելոնյան գիտուն նկարիչներին, նրա «ծանրակենտրոն թրթիռներից» ամեն մեկը կամ, որ նույնն է, սպիտակ ճառագայթի գույներից յուրաքանչյուրն առաջանում է մեկ ուրիշից և փոխակերպվում երրորդին. այսպես օրինակ՝ նարնջագույնը ստացվում է կարմիրից և ինքն էլ իր հերթին վերածվում է դեղինի և այլն, և այլն:

Ուստի, երբ բաբելոնյան գիտուն նկարիչները գործում կամ ասեղնագործում էին գունավոր թելերով կամ գունազարդում էին իրենց ստեղծագործությունները, գուներանգների տարբերակումը նրանք մտցնում էին ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական գծերով ու դրանց հատումներով ոչ թե ըստ այն օրինաչափ հաջորդականության, որով այդ գործընթացն իրականում տեղի է ունենում, այսինքն՝ ըստ Յոթնագրյանքի, այլ ուրիշ կերպ. և հենց այդ օրինաչափ «ուրիշ կերպերի» մեջ էլ նրանք զետեղում էին այս կամ այն տեղեկության կամ գիտելիքի բովանդակությունը:

Հինգշաբթի օրերին, այսինքն այն օրերին, որոնք տվյալ խմբի գիտուն էակները հատկացրել էին «սրբազան» և «ժողովրդական» պարերին, անհրաժեշտ բացատրությունների ուղեկցությամբ ցուցադրվում էին ամեն տեսակի կրոնական ու ժողովրդական պարեր, որոնք կա՛մ արդեն գոյություն ունեին և ուղղակի ձևափոխվում էին, կա՛մ բոլորովին նորերը, որոնք իրենց ստեղծածն էին:

Իսկ, որպեսզի դու լավ պատկերացնես և լավ հասկանաս, թե ինչ կերպ էին նրանք այդ պարերով ցուցադրում այն ամենը, ինչ ուզում էին, պետք է իմանաս, որ այդ շրջանի գիտուն էակները վաղուց արդեն գիտեին, որ ընդհանրապես ամեն մի էակի յուրաքանչյուր պարային դիրք ու շարժում, համաձայն նույն Յոթնագրյանքի, բաղկացած է յոթ, այսպես կոչված, «*փոխհավասարակշիռ շարումներից*», որոնք ծագում են իրենց կազմվածքի յոթ ինքնուրույն մասերում, և այդ յոթ մասերից ամեն մեկն էլ իր հերթին բաղկացած է յոթ տարբեր, այսպես կոչված, «*դինամիկ կենտրոնացման կետերից*». և այդ ամբողջը, ինչ հենց նոր նկարագրեցի, նույն հաջորդականությամբ, բայց անընդհատ նվազող սանդղակով կրկնված՝ տեղի է ունենում մանրագույն չափերով ամբողջական մարմիններում, որոնք «ատոմներ» են կոչվում:

Եվ ահա այդ պարերի ընթացքում այդ գիտուն պարողները փոխհամաձայնեցված շարժումների մեջ միտումնավոր անճշտություններ էին մտցնում, որոնք օրինաչափ էին և որոշակի կերպով իրենց մեջ պարունակում էին այն տեղեկությունն ու գիտելիքը, որ այդ պարողներն ուզում էին փոխանցել:

Ուրբաթ օրերին, որոնք քանդակագործությանն էին հատկացված, այդ խմբին պատկանող գիտուն էակները բերում և ցուցադրում էին այնպիսի բաներ, որոնք այն ժամանակ կոչվում էին մանրաքանդակներ կամ մոդելներ, որոնք պատրաստված էին այնտեղ «կավ» կոչվող նյութից:

Այդ մանրակերտերը կամ մոդելները, որոնք բերվում էին ցուցադրման կամ ծանոթացման նպատակով, որպես կանոն իրենցից ներկայացնում էին առանձին էակների կամ խմբակային քանդակներ, էակների, որոնք կամ հենց իրենց տեսակին էին պատկանում, կամ այլ արտաքինով էակների դասերի, որոնք բազմաճյուղ են իրենց մոլորակի վրա:

Այդ ստեղծագործություններում կային զանազան, այսպես կոչված, «այլաբանական էակներ», որոնք պատկերված էին այնտեղի մի տեսակի էակի գլխով, մի ուրիշ տեսակի էակի իրանով և մի երրորդ տեսակի էակի վերջույթներով և այլն:

Այդ խմբին պատկանող գիտուն էակները պահանջված ամեն ինչը ցուցադրում էին օրինաչափ անճշտություններով, որոնք թույլ էին տալիս՝ ելնելով այնտեղ այն ժամանակ հայտնի «Չափսերի Օրենքից»:

Հարկ է, որ իմանաս, որ Երկրի այդ ժամանակաշրջանի բոլոր եռուղեղ էակներին, նրանց թվում՝ նաև քանդակագործներին, արդեն հայտնի էր, որ, համաձայն նույն Յոթնագրյանքի մեծ Օրենքի, յուրաքանչյուր ամբողջական էակի ցանկացած մասի չափսերը բխում են նրա երկրորդ կարգի ուրիշ մասերի յոթ չափսերից, որոնք էլ իրենց հերթին գոյանում են երրորդ կարգի մասերի յոթ չափսերից և այլն, և այլն:

Դրան համապատասխան՝ էակի մոլորակային մարմնի ամեն մի մեծ կամ փոքր մասը, համեմատած մնացած մասերի հետ՝ ունի ճշգրիտ համամասնորեն մեծացող կամ փոքրացող չափսեր:

Հենց նոր ասածս պարզ դարձնելու համար լավ օրինակ կարող է ծառայել ցանկացած եռուղեղ էակի դեմքը:

Ինչպես ընդհանրապես ամեն մի եռուղեղ էակի, այնպես էլ Երկիր մոլորակի քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներից յուրաքանչյուրի դեմքի չափսերը հետևանք են նրա ամբողջ մարմնի յոթ տարբեր հիմնական մասերի չափսերի, իսկ դեմքի յուրաքանչյուր առանձին մասի չափը հետևանք է ամբողջ դեմքի յոթ տարբեր մասերի չափսերի: Օրինակ՝ ցանկացած էակի քթի չափն արդյունք է դեմքի մնացած մասերի չափսերի, իսկ քթի վրա էլ իրենց հերթին կան որոշակի, այսպես կոչված, «մակերեսներ», որոնք նույնպես ունեն յոթ որոշակի օրինաչափ չափսեր, և այդ մակերեսներից յուրաքանչյուրն էլ ունի իր յոթ օրինաչափ չափսերը՝ ընդհուպ մինչև այդ դեմքի նշված ատոմը, որը (դեմքը), ինչպես ասացի, այն յոթ ինքնուրույն չափսերից մեկն է, որոնցից գոյանում են ամբողջ մոլորակային մարմնի չափսերը:

Այդ օրինաչափ չափսերից շեղումներ կատարելու միջոցով, Բաբելոն քաղաքում հավաքված լեզուփնիզմի ջատագույնների թվին պատկանող գիտուն-քանդակագործները ցուցադրում էին ամենատարբեր տեղեկություններ և իրենց հայտնի գիտելիքների առանձին հատվածներ, որոնք մտադրվել էին փոխանցել իրենց հեռավոր հետնորդներին:

Շաբաթ օրերը գաղտնածեսերի կամ թատրոնի օրերն էին, և այդ խմբին պատկանող գիտուն էակաների ցուցադրություններն ամենահետաքրքիրն էին և, ինչպես ասում են, «ամենասիրվածը»:

Անձամբ ես շաբաթ օրը գերադասում էի մնացած բոլոր օրերից և աշխատում էի դրանք բաց չթողնել. գերադասում էի այն պատճառով, որ այդ խմբին պատկանող էակաների ցուցադրությունները հաճախ այնպիսի անմիջական ու անկեղծ ծիծաղ էին առաջացնում երկրային մյուս եռուղեղ էակաների մոտ, որ երբեմն ես մոռանում էի, թե ինչ եռուղեղ էակաների միջավայրում եմ գտնվում, և իմ ներսում նույն լինելիական ազդական էի զգում, որը սովորաբար ծագում է միայն ինձ հետ բնույթով նույնական էակաների պարագայում:

Սկզբում այդ խմբի գիտուն էականերն ակումբի մնացած անդամների առջև ցուցադրում էին *լինելիական ապրումների* և *լինելիական դրսևորումների* զանազան ձևեր: Այնուհետև՝ ավելի ուշ, նրանք ամբողջ ցուցադրվածից խմբովի ընտրում էին այն, ինչը համապատասխանում էր այս կամ այն արդեն գոյություն ունեցող կամ իրենց իսկ կողմից ստեղծված գաղտնածեսի տարբեր մանրամասներին. և միայն այդ ամենից հետո իրենց վերադարձնում էին *լինելիական ապրումների* և *դրսևորումների* մեջ նրանք ցուցադրում էին իրենց ուզած բաները Յոթնագրյանքի Օրենքից միտումնավոր կերպով թույլ տրված շեղումների միջոցով:

Անհրաժեշտ է այստեղ նշել, որ չնայած նախորդ դարաշրջաններում գաղտնածեսերը, որոնք երբեմն շատ ուսանելի հասկացություններ էին պարունակում, պատահում էր, որ հասնում էին մինչև իրենց որոշ սերունդներին և երբեմն, սերնդեսերունդ փոխանցվելով, բավականին հեռավոր սերունդների էին հասնում, բայց այն գաղտնածեսերը, որոնց մեջ *Լեզուինիզմի ջատագովների* ակումբի գիտուն անդամներն այն ժամանակ միտումնավոր կերպով զանազան գիտելիքներ էին ներդրել՝ հուսալով, որ դրանք կհասնեն բավականաչափ հեռավոր սերունդների էականերին, վերջին ժամանակներում համարյա իսպառ դադարել են գոյություն ունենալուց:

Այնտեղի այդ գաղտնածեսերը, որոնք այդ ժամանակներից շատ հարյուրամյակներ առաջ նրանց սովորական գոյատևման գործընթացի անբաժանելի մասն էին կազմում, բաբելոնյան այդ շրջանից հետո շատ շուտով աստիճանաբար սկսեցին չքանալ: Սկզբում դրանց փոխարինելու եկան, այսպես կոչված, «կեսբաձջիները»¹⁷ կամ, ինչպես հիմա դրանց անվանում են Եվրոպա աշխարհամասում, «տիկնիկային թատրոնները», բայց հետագայում դրանք վերջնականապես դուրս մղվեցին իրենց դեռ գոյություն ունեցող «թատերական ներկայացումների» կամ «բեմադրությունների» կողմից, որոնք այնտեղ այժմ հիշատակածս իրենց արվեստի ձևերից մեկն են, որը հատկապես կործանարար ազդեցություն ունի նրանց հոգեկառույցի հարաճուն «ցամաքման» գործընթացում:

Այդ «թատերական բեմադրությունները» գաղտնածեսերին փոխարինելու եկան այն բանից հետո, երբ ժամանակակից քաղաքակրթության սկզբում այն էակաները, որոնց ընդամենը «հինգից մինչև տասն» էր տեղեկություն հասել, թե ինչ և ինչպես էին հիշյալ բաբելոնյան գիտուններն անում գաղտնածեսերի ընթացքում, մտադրվեցին նմանակել նրանց և ձեռնամուխ եղան անելու, այսպես ասած, նույն բանը:

Այդ ժամանակից սկսած՝ այնտեղի մնացած էակաները գաղտնածեսերի այդ նմանակողներին կոչեցին «դիմափոխներ», «խեղկատակներ», «դերասաններ» և ներկայումս էլ արդեն անվանում են «արտիստներ». իսկ դրանց քանակը, կարող եմ ասել, վերջին ժամանակներում շատ է շատացել:

Այն ժամանակվա գիտուն էակաները, որոնք պատկանում էին գաղտնածեսեր անողների խմբին, զանազան օգտակար տեղեկություններ և իրենց իսկ կողմից ձեռք բերված գիտելիքներ էին ցուցադրում՝ օգտվելով գաղտնածեսի մասնակիցների, այսպես կոչված, «*նմանազգացական շարժումների ընթացքից*»:

Թեև քո այդ մոլորակի եռուղեղ էականերն այն ժամանակ արդեն լավ ծանոթ էին «*նմանազգացական շարժումների ընթացքի*» օրենքներին, սակայն ժամանակակից եռուղեղ էականերին այդ օրենքներից բացարձակապես ոչ մի տեղեկություն չի հասել:

Քանի որ նշված «*նմանազգացական շարժումների ընթացքը*» քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակաների ներկայություններում չի լինում այնպես, ինչպես ընդհանրապես լինում է այլ եռուղեղ էակաների ներկայություններում, և քանի որ դրա համար կային միայն իրենց հատուկ լիովին որոշակի պատճառներ, ապա ես պետք է նախ և առաջ քեզ ավելի մանրամասն բացատրեմ դա:

¹⁷ ռուս. տարբերակում՝ кесбааджи, անգլ. տարբերակում՝ kesbaadji

Գործընթացը նույնն է, ինչ մեր ներսում է լինում, բայց այն մեզ մոտ ընթանում է այնժամ, երբ մենք հանգստանալու դիտավորություն ենք ունենում՝ մեր ընդհանուր ներկայության ամբողջ կենսագործունեությանը, առանց մեր կամքի միջամտության, հնարավորություն տալով ազատորեն փոխակերպության ենթարկել *լինելիական էներգիայի* բոլոր տարատեսակները, որոնք պահանջվում են համակողմանի ակտիվ գոյատևման համար. այնինչ նրանց ներսում այդ տարատեսակ *լինելիական էներգիաները* հիմա կարող են առաջանալ միայն իրենց լիակատար անգործությամբ վիճակում, այսինքն՝ այն ժամանակի ընթացքում, որն իրենք «քուն» են անվանում, և այն էլ, իհարկե, միայն *«մինչև որոշակի աստիճան»*:

Այն բանի հետևանքով, որ նրանք մեր համայն Մեծ Տիեզերքի մնացած բոլոր եռուղեղ էակների պես ունեն երեք ինքնուրույն ոգի առած մասեր, որոնցից յուրաքանչյուրն իր ամբողջ կենսագործունեության կենտրոնացման համար ունի իր սեփական տեղայնացման կենտրոնը, որն իրենք «ուղեղ» են անվանում, նրանց ընդհանուր ներկայության բոլոր այն տպավորությունները, որոնք ստացվում են ինչպես դրսից, այնպես էլ ներսից, նույն կերպ ինքնուրույնաբար ընկալվում են այդ երեք ուղեղներից յուրաքանչյուրի կողմից՝ այդ տպավորությունների բնույթին համապատասխան. իսկ դրանից հետո, ինչը հարկ է, որ տեղի ունենա ցանկացած էակի ներկայությունում՝ անկախ *ուղեղային համակարգից*, այդ տպավորությունները նախկին տպավորությունների հետ կազմում են մի ամբողջություն և պատահական խթանների ազդեցությամբ ամեն մի առանձին ուղեղում առաջացնում են ինքնուրույն նմանազգացություն:

Այսպիսով, զավա՛կս, այն ժամանակից ի վեր, երբ քո սիրելիներն իրենց ընդհանուր ներկայություններում դադարեցին գիտակցաբար կյանքի կոչել *լինելիական պարտք-պարտականությունը*, որի արդյունքների շնորհիվ է միայն առանձին նմանազգացություններից էակների մոտ առաջանում այսպես կոչված առողջ *«համեմատական մտածողություն»*, ինչպես նաև գիտակցական ակտիվ դրսևորման հնարավորություն, և այն ժամանակից ի վեր, երբ նրանց առանձին ուղեղները, նմանազգալով կատարելապես ինքնուրույն, նույն ընդհանուր ներկայության մեջ սկսում են առաջացնել տարբեր ծագում ունեցող երեք *լինելիական ազդակներ*, ապա դրա հետևանքով աստիճանաբար, այսպես ասած, իրենց ներսում գոյանում են երեք անձնավորություններ, որոնք իրենց պահանջմունքների ու հետաքրքրությունների առումով ոչ մի ընդհանուր բան չեն ունենում:

Քո սիրելիների, հատկապես ժամանակակիցների, ընդհանուր հոգեկառույցում գոյացող անոմալիաների կեսից ավելին պայմանավորված են առաջին հերթին նրանով, որ նրանց ամբողջ ներկայության մեջ երեք տարբեր տեսակի անկախ նմանազգացություններ երեք տեղայնացումներում առաջացնում են տարբեր տեսակի և տարբեր հատկություններ ունեցող *լինելիական ազդակներ*, երկրորդ՝ նրանով, որ այդ երեք տեղայնացումների միջև կապ գոյություն ունի, ինչպես լինում է ցանկացած եռուղեղ էակի ներկայությունում, ինչը Մեծ Բնության կողմից նախատեսված է այլ, այսպես կոչված, *«ընդհանուր ներկայության գործառությունների»* համար, և երրորդ՝ նրանով, որ ամբողջ ընկալածից ու զգացածից, այսինքն՝ ամեն մի խթանից, հիշյալ երեք տեղայնացումներում առաջանում են երեք տարբեր տեսակի տպավորությունների նմանազգացություններ, որոնց հետևանքով միննույն ներկայության մեջ գոյանում են երեք տեսակի կարելապես իրարից տարբեր *լինելիական ազդակներ*. ի վերջո, այդ ամենի արդյունքում համարյա միշտ նրանց ներսում միաժամանակ մի քանի ապրումներ են ընթանում, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույնաբար նրանց ամբողջ էության մեջ ծնում է համապատասխան դրսևորում, որով էլ, նրանց ընդհանուր ներկայության որոշակի մասերին համապատասխան, իրականացվում է այս կամ այն շարժումը:

Հենց այդ տարբեր ծագում ունեցող նմանազգացական ապրումներն են ընթանում նրանց ընդհանուր ներկայություններում բխում են մեկը մյուսից՝ համաձայն նույն Յոթնագրյանքի Օրենքի:

Լեզումինիզմի հետևորդների ակումբի գիտուն անդամները, որոնք պատկանում էին այդ խմբին, գաղտնածեսերի մասնակիցների շարժումների և գործողությունների միջոցով ցուցադրում էին իրենց ուզածը հետևյալ կերպ:

Օրինակ՝ եթե տվյալ գաղտնածեսի մասնակիցը իր դերը կատարելու համար, ըստ նմանազգացական օրինաչափությունների, իր այս կամ այն ուղեղում առաջացնելով որևէ նոր տպավորություն, պետք է դրան արձագանքեր որևէ որոշակի դրսևորումով կամ շարժումով, նա միտումնավոր կերպով այդ դրսևորումը կամ շարժումը կատարում էր ոչ այնպես, ինչպես հարկ է, որ

լինէր ըստ Յոթնագրյանքի Օրենքի, այլ ուրիշ կերպ, և այդ «ուրիշ կերպում» նրանք որոշակի ձևով ներդնում էին այն, ինչը անհրաժեշտ էին համարում փոխանցել գալիք սերունդներին:

Այն բանի համար, զավակս, որ դու կոնկրետ պատկերացում ունենաս այդ շաբաթօրյա ներկայացումների վերաբերյալ, որոնց ես միշտ մեծ հաճույքով էի ներկա լինում, որպեսզի հանգիստ առնեմ այդ ժամանակահատվածի իմ բուռն գործունեությունից, կբերեմ մի վառ օրինակ, թե ինչպես էին գաղտնածեսերի այդ մասնակիցները *Լեզուի ինիզիատիվ հետևորդների ակումբի* մնացած անդամների առջև ցուցադրում զանազան լինելիական ապրումներին ու դրսևորումներին համապատասխանող նմանագագացությունների ընթացքը, որոնցից հատվածներ էին ընտրվում ապագա գաղտնածեսերի համար:

Ակումբի մեծ դահլիճներից մեկում ներկայացումների համար նրանք հատուկ բարձրադիր տեղ էին սարքել, որն այն ժամանակ անվանում էին «*իրականության արտացոլիչ*». սակայն հետագա դարաշրջանների էակները, որոնց դեպքերի բերումով տեղեկություններ էին փոխանցվել բաբելոնյան այդ գիտուն գաղտնածեսերի մասին, և որոնք սկսել էին նմանակել նրանց և անել նույն բաները, այդ բարձրադիր շինվածքն անվանեցին և դեռ շարունակում են անվանել «բեմ»:

Եվ այսպես, սկզբում այդ «*իրականության արտացոլիչ*» կամ բեմի վրա միշտ ելնում էին երկու մասնակիցներ. հետո սովորաբար նրանցից մեկը որոշ ժամանակ կանգնած ականջ էր դնում իր, այսպես կոչված, դարդիսելթլուստնային¹⁸ կամ, ինչպես երբեմն ասում են, իր ներքին «*նմանագագացական ընդհանուր հոգեկան ապրումների*» վիճակին:

Այդպես ականջ դնելով՝ նա իր բանականությամբ պարզում էր, օրինակ, որ իր նմանագագացական ապրումների հանրագումարն ստանում է այն էակի դեմքին հարվածելու անգուսպ ցանկության ձև, որի տեսքը միշտ պատճառ է դարձել իր ներսում առկա այնպիսի տպավորությունների շարքի նմանագագացությունների առաջացման համար, որոնք իր ընդհանուր հոգեկառույցում առաջ են բերել իր ինքնագիտակցության համար վիրավորական տհաճ ապրումներ:

Ենթադրենք, այդ տհաճ ապրումները նրա ներսում միշտ առաջացել են այն ժամանակ, երբ տեսել է արհեստավարժ «իրողոխախունին»¹⁹, որին ժամանակակից էակները հիմա «ոստիկան» են անվանում:

Պարզելով իր այդ դարդիսելթլուստնային հոգեկան վիճակն ու ցանկությունը, բայց և միննույն ժամանակ, մի կողմից լավ հաշվի առնելով այն, որ հասարակական գոյատևման գոյություն ունեցող արտաքին պայմաններում ինքը չի կարող լիովին բավարարել իր այդ ցանկությունը, և մյուս կողմից՝ արդեն կատարյալ բանական լինելով և գիտակցելով իր կախվածությունը սեփական ընդհանուր ներկայության մնացած մասերի ինքնաբերական կենսագործունեությունից՝ նա հստակ հասկանում է, որ իր այդ ցանկության բավարարումից է կախված իր այն անխուսափելի ու կարևոր *լինելիական պարտականության կատարումը*, որը մեծ նշանակություն ունի շրջապատի մարդկանց համար. և, ամեն ինչ այդպես կշռադատելով, նա որոշում է հնարավորին չափ բավարարել իր այդ համառ ցանկությունը՝ թեկուզև «բարոյական վնաս» հասցնելով իրողոխախունին, հարուցելով նրա ներսում այնպիսի նմանագագացություններ, որոնք կհանգեցնեն տհաճ ապրումների:

Այդ նպատակով նա շրջվում է իր հետ բեմ դուրս եկած մյուս գիտուն էակի կողմը և, դիմելով նրան որպես իրողոխախունի կամ ոստիկանի, ասում է.

– Էյ, դու՛, ի՞նչ է, չգիտե՞ս քո պարտականությունները... Ի՞նչ է, չե՞ս տեսնում, թե այնտեղ ինչ է կատարվում, – ձեռքով ցույց է տալիս ակումբի մի ուրիշ ոչ մեծ սենյակի կողմը, որտեղ գտնվում էին այդ օրվա ներկայացման մյուս մասնակիցները, – երկու քաղաքացիներ՝ մի զինվոր և մի կոշկակար, փողոցում կռիվ են անում և խանգարում հասարակական կարգը, իսկ դու այստեղ կանգնած զովանում ես՝ չգիտեմ թե քեզ ում տեղը դնելով և աչք տնկելով ազնիվ ու հարգարժան քաղաքացիների այստեղով անցնող կանանց... Սպասի՛ր, անբա՛ն, իմ պետի՛՝ քաղաքի գլխավոր բժշկի միջոցով ես կտեղեկացնեմ քո ղեկավարությանը, թե ինչպես ես գլուխ պահում և անտեսում պարտականություններդ:

Այդ պահից սկսած, խոսող գիտուն էակը բժշկի է վերածվում, քանի որ իր պետին անվանել է քաղաքի գլխավոր բժիշկ. միաժամանակ մյուս գիտուն էակը, որին առաջին էակը ոստիկան է անվանել, իր վրա ոստիկանի դեր է վերցնում և անմիջապես մյուս սենյակից կանչում է ևս երկու մասնակից գիտուն էակների, որ խաղան կոշկակարի և զինվորի դերեր:

¹⁸ ռուս. տարբերակում՝ дартхелхлустному, անգլ. տարբերակում՝ dartkhelkhloostnian

¹⁹ ռուս. տարբերակում՝ иродохахун, անգլ. տարբերակում՝ trodokhakhoon

Եվ ահա, երեք գիտուն էակներ, չորրորդի կողմից հանպատրաստից խաղի մեջ ընդգրկվելով, որպեսզի ի կատար ածեն իրենց համար օտար տիպերի զանազան ընկալումներ ու դրսևորումներ կամ, ինչպես քո սիրելիներն են ասում՝ «ուրիշի դերեր», այսինքն՝ կոշկակարի, զինվորի և ոստիկանի դերերը, դրանից հետո ցուցադրում են իրենց ապրումներն արտացոլող դրսևորումներ՝ շնորհիվ իրենց ներսում առկա «իկրիլտացկակրա»²⁰ կոչվող լինելիական հատկության, որը նույնպես հայտնի էր Երկիր մոլորակի այն ժամանակվա գիտուն էակներին, որոնք արդեն կարողանում էին կատարելագործել իրենց ներկայություններն այնքան, որ կարողանան գործադրել այդ հատկությունը:

Եռուղեղ էակները կարող են ձեռք բերել հիշյալ իկրիլտացկակրա կոչվող լինելիական հատկությունը, եթե միայն իրենց ներկայություններում արդեն ձեռք են բերել, այսպես կոչված, «էգոհայերիթուրասային»²¹ կամք, որն էլ իր հերթին կարող է ստացվել էլի նույն *լինելիական պարտք-պարտականության* շնորհիվ, այսինքն՝ գիտակցական աշխատանքով ու կամավոր տառապանքով:

Այն ժամանակ Բաբելոնում գաղտնածեսային խմբի գիտուն էակներն ահա հենց այդպես դարձան ուրիշի դերեր կատարողներ և ակումբի մյուս գիտուն անդամների առջև ցուցադրում էին ապրումներ ու դրանցից բխող գործողություններ, որոնք իրականացվում էին ըստ իրենց մեծապես ուսյալ բանականության ցուցումների:

Իսկ դրանից հետո, ինչպես արդեն ասել եմ, նրանք, Լեգոմինիզմի հետևորդների ակումբի մյուս ներկա գտնվող գիտուն էակների հետ մեկտեղ, ցուցադրված *լինելիական ազդակներից*, որոնք, համաձայն տարբեր ծագում ունեցող նմանազգացությունների ընթացքի օրենքի, պետք է էակներն ապրեն և դրսևորեն որոշակի գործողություններով, ընտրում էին այնպիսիները, որոնք համապատասխանում էին իրենց նպատակին, և միայն դրանից հետո դրանք ներդնում էին այս կամ այն գաղտնածեսի դրվագներում:

Այստեղ շատ կարևոր է հատուկ նշել, որ այն ժամանակ Բաբելոնում գաղտնածիսականների խմբին պատկանող եռուղեղ գիտուն էակներն իրենց խաղում իրոք զարմանալիորեն լավ ու ճշգրիտ էին վերարտադրում իրենց համար օտար տիպերի զանազան ապրումների ու դրսևորումների սուբյեկտիվ առանձնահատկությունները:

Լավ ու ճշգրիտ էին վերարտադրում ոչ միայն այն պատճառով, որ, ինչպես արդեն բացատրել եմ, նրանք տիրապետում էին իկրիլտացկակրայի լինելիական հատկությանը, այլև որ Երկիր մոլորակի այն ժամանակվա գիտուն էակները շատ լավ տեղյակ էին, այսպես կոչված, «տիպականության օրենքին», գիտեին, որ իրենց մոլորակի եռուղեղ էակները վերջին հաշվով կազմում են 27 իրարից տարբեր տիպեր, նաև՝ թե ո՞ր դեպքերում ինչպե՞ս ընկալել դրանք և թե ինչպես պետք է դրանք դրսևորվեն:

Հիշյալ *լինելիական կազմության* վերաբերյալ, որը ես հենց նոր իկրիլտացկակրա կոչեցի, այնուհետև պետք է հավելեմ, որ հենց միայն այդ հատկությունն է էակներին հնարավորություն տալիս մնալու բոլոր այդ ազդակների ու ապրումների սահմաններում, որոնք ամեն մի տվյալ պահի իրենց ընդհանուր ներկայություններում առաջանում են այն նմանազգացություններից, որոնք ձևավորվում են այն ուղեղում, որում հենց իրենք են գիտակցորեն խթանում այնտեղ արդեն գոյություն ունեցող այս կամ այն շարքի տպավորությունների նմանազգացությունները. և հենց այդ հատկության շնորհիվ է, որ էակները հնարավորություն են ունենում ընկալելու իրենց կողմից նախապես ուսումնասիրված տիպի հոգեկառույցի բոլոր մանրամասները և նմանվելու այդ տիպին՝ ամբողջովին կերպավորելով այն:

Կարծում եմ, որ հենց այդ հատկության բացակայության պատճառով է առաջացել բոլոր այն շեղումների մեծ մասը, որոնց արդյունքում Երկիր մոլորակի՝ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակները ձեռք են բերել այդպիսի տարօրինակ հոգեկառույց:

Հարկ է, որ իմանաս, որ ինչպես Երկրի ներկայիս եռուղեղ էակների ներկայություններում, այնպես էլ ընդհանրապես բոլոր եռուղեղ էակների ներկայություններում նոր տպավորությունները կուտակվում են բոլոր երեք առանձին ուղեղներում՝ ըստ, այսպես կոչված, «նմանության», որից հետո նախկինում արձանագրված տպավորությունների հետ համատեղ արդեն մասնակցում են այն

²⁰ ռուս. տարբերակում՝ икрилтацкакра, անգլ. տարբերակում՝ ikhriltatzkakra

²¹ ռուս. տարբերակում՝ есоаиеритурасная, անգլ. տարբերակում՝ egoaitoorassian

նմանազգացություններին, որոնք ամեն մի նոր ընկալման ընթացքում ծագում են բոլոր երեք առանձին ուղեղներում՝ այսպես կոչված, «*ծանրակենտրոն ազդակներին*» համապատասխան և դրանցից կախված, որոնք տվյալ պահին առկա են լինում էակների ամբողջ ներկայության մեջ:

Այսպիսով, գավա՛կս, քանի որ նաև քո ժամանակակից սիրելիների ներկայություններում են շարունակում ընթանալ երեք տեսակի ինքնություն նմանազգացություններ. որոնք էլ շարունակում են ծնել տարբեր տեսակի *լինելիական ազդակներ*, նաև այն պատճառով, որ նրանք լրիվ դադարել են իրենց ներկայություններում բոլոր այն տիեզերական արդյունքների իրականացումը, որոնց միջոցով է միայն հնարավոր եռուղեղ էակների կողմից վերոհիշյալ *լինելիական հատկության* ձեռքբերումը, ահա այդ ամենի արդյունքում ներկայիս քո սիրելիներից յուրաքանչյուրի ընդհանուր ներկայությունը նրա ամբողջ գոյատևման ընթացքում կազմված է լինում, ինչպես քեզ արդեն ասել եմ, այսպես ասած, երեք կատարելապես անկախ անձերից, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն և չեն կարող ունենալ իրար հետ ո՛չ իրենց ծագման բնույթի առումով, ո՛չ իրենց դրսևորումների:

Այստեղից էլ ծագում է նրանց ընդհանուր ներկայության այն յուրահատկությունը, որ իրենց էության մի մասով նրանք մի բան են ուզում, միաժամանակ մյուս մասով՝ բոլորովին ուրիշ բան, իսկ երրորդ մասով արդեն կատարում են դրանց բոլորովին հակադիր բանը:

Կարճ ասած՝ նրանց հոգեկառույցում տեղի է ունենում ճիշտ այն, ինչը մեր սիրելի ուսուցիչ մուլլա Նասրեդինը բնորոշում է «խառնաշփոթ» բառով:

Այն ժամանակվա գաղտնածիսականների խմբի բաբելոնյան գիտուն էակների ներկայացումների վերաբերյալ ես պետք է ավելացնեմ, որ գործողության ընթացքում մասնակիցների քանակն աստիճանաբար աճում էր նրանց մյուս կոլեգաների հաշվին, նաև՝ կախված զանազան կամայական գուգակցումներից:

Դրան գուզնթաց, յուրաքանչյուր մասնակից, այդ կերպ զբաղված լինելով ընկալումների և ինքնաբերական դրսևորումների կատարմամբ, որոնք բաժին էին հասնում իրեն՝ հատուկ լինելով իր համար օտար տիպի պատկանող անձնավորության, իր դերի կատարման հետ միաժամանակ պետք է պահը գտներ, որպեսզի որևէ հարմար պատրվակով զգեստափոխվեր և հագներ դերին համապատասխանող զգեստ:

Իսկ զգեստները փոխում էին, որ իրենց առավել հստակ ու արտահայտիչ դրսևորեն հանձն առած դերում, որպեսզի *Լեզոսինիզմի հետևորդների ակումբի* մյուս գիտուն անդամները, որոնք ստուգում և ապագա գաղտնածեսների համար դրվագներ էին ընտրում, կարողանան ավելի հեշտ և ավելի լավ հետևել իրենց խաղին և դիտածներից ընտրեն լավագույնը:

Կիրակի օրերին, որոնք նվիրված էին երաժշտությանն ու երգեցողությանը, այդ խմբին պատկանող գիտուն էակները նախ նվագում էին զանազան ձայներ հանող գործիքներ և իրենց ձայնով երգում տարբեր, այսպես կոչված, «մեղեդիներ», որից հետո մնացած գիտուն էակներին բացատրում էին, թե ինչպես են իրենց այդ ստեղծագործություններով ցուցադրում այն, ինչ ուզում են:

Նրանք նաև միտք ունեին իրենց այդ ստեղծագործությունները ներդնել տարբեր ժողովուրդների սովորություններում՝ հուսալով, որ իրենց ստեղծած «մեղեդիները» մի սերնդից մյուսին անցնելով կհասնեն իրենց հետավոր հետևորդներին, որոնք դրանք կգաղտնագերծեն և կհայտնաբերեն Երկրի վրա արդեն ձեռք բերված գիտելիքները, որպեսզի դրանք օգտագործեն ի շահ իրենց սովորական գոյատևման:

Որպեսզի քեզ համար պարզ լինի, թե այդ խմբի գիտուն էակներն ինչպես էին ներդնում իրենց ցուցումները «երաժշտական» ու «վոկալ» ստեղծագործություններում, նախ քեզ պետք է պատմեմ բոլոր տեսակի էակների լսողական զգայարանների մի քանի բնորոշ առանձնահատկությունների մասին:

Այդ բնորոշ առանձնահատկությունների թվում կա մի հատկություն, որը կոչվում է «վիբրոէխոնիտանկո»²²:

Պետք է գիտենաս, որ էակի ուղեղի այն մասերը, որոնք Օբյեկտիվ Գիտությունն անվանում է «խլոդիստոմատիկուլներ»²³, և որոնց մի մասը քո այդ մոլորակի «գիտուն բժիշկները» կոչում են

²² ռուս. տարբերակում՝ виброэхопитанко, անգլ. տարբերակում՝ vibroechonitanko

²³ ռուս. տարբերակում՝ хлостоматикулы, անգլ. տարբերակում՝ khlostomaticules

«նյարդա-ուղեղային հանգույցներ», կազմված են, այսպես կոչված, «նիրիունայան»²⁴ բյուրեղացված թրթիռներից», որոնք ընդհանրապես յուրաքանչյուր էակի ավարտուն կազմավորման մեջ առաջանում են լսողական օրգանի ընկալման ամեն մի գործընթացում. իսկ դրանից հետո այդ խլոդիստոմատիկուլները, արձագանքելով իրենց նման, բայց դեռևս չբյուրեղացված թրթիռներին, տվյալ ուղեղին ենթակա համապատասխան տիրույթում առաջացնում են վերոհիշյալ վիբրոէխոնիտանկոն կամ, ինչպես իրենք են երբեմն անվանում՝ «խղճի խայթերը»:

Մեծ Բնության նախախնամությամբ նշված խլոդիստոմատիկուլները էակների ներկայություններում իրական գործոններ են ծառայում՝ նպաստելով նմանազգացական գործընթացների առաջացմանն այն պահերին, երբ կամ ներսից ծագած գրգիռներ չկան, կամ էլ դրսից եկող խթանները չեն հասնում նրանց ուղեղին:

Իսկ դեռևս չբյուրեղացված «նիրիունայան թրթիռներն» ընդհանրապես առաջանում և հետո մուտք են գործում էակների ընդհանուր ներկայության մեջ կամ, այսպես կոչված, «ձայնալարերի» օգնությամբ, կամ էակների հնարած ձայն արձակող արհեստական գործիքների օգնությամբ:

Երբ նշված աղբյուրներից առաջացած թրթիռները մուտք են գործում էակների ներկայության մեջ, հպվում են այս կամ այն ուղեղի խլոդիստոմատիկուլներին, որից հետո, ամբողջ էակի ընդհանուր կենսագործունեությանը համապատասխան, դրանք առաջացնում են վերոհիշյալ «վիբրոէխոնիտանկոն» գործընթացը:

Լսողության զգայարանի գործելու երկրորդ առանձնահատկությունն այն է, որ ընդհանրապես, ցանկացած մեղեդու հնչյունների հաջորդականությունից ստացված թրթիռների ազդեցությամբ, էակների ներկայություններում նմանազգացություններ են առաջանում երեք ուղեղներից որևէ մեկում, հենց այն մեկում, որտեղ տվյալ պահին առավել բուռն է աճում, այսպես կոչված, «հենց նոր ապրվածի խթանը», և սովորաբար, այդ ապրվածի հետ կապված, ինքնաբերական հաջորդականությամբ ազդակների մի շարք է առաջանում:

Այն ժամանակ Բաբելոն քաղաքի երաժիշտներն ու երգիչներն այնպես էին համակցում իրենց մեղեդիները, որ հնչյունային թրթիռների հաջորդականությունն էակների մոտ նմանազգացությունների շարք առաջացնի և, հետևաբար, նաև ապրումի ազդակներ՝ ոչ թե ինքնաբերական հաջորդականությամբ, այսինքն՝ այնպես, որ թրթիռների հաջորդականությունը, մուտք գործելով էակների ընդհանուր ներկայության մեջ, խլոդիստոմատիկուլներում վիբրոէխոնիտանկոն առաջացնի ոչ թե մի ուղեղում, ինչպես սովորաբար լինում է՝ կախված այն բանից, թե ո՞ր ուղեղում են տվյալ պահին գերակշռում նմանազգացությունները, այլ այնպես, որ վիբրոէխոնիտանկոն առաջանա մե՛կ այս, մե՛կ այն, մե՛կ երրորդ ուղեղում. դրանով իսկ նրանք նաև որակ էին ապահովում, կամ, ինչպես իրենք կասեին՝ հնչյունային թրթիռների անհրաժեշտ քանակ, որոնք կազդեին այս կամ այն ուղեղի վրա:

Այս վերջինից, այսինքն՝ թե էակների ո՞ր ուղեղում, ո՞ր թրթիռներից ինչպիսի՞ տվյալներ են կազմավորվում, և թե այդ տվյալները ի՞նչ նոր ընկալումների համար կարող են ծառայել որպես, այսպես կոչված, «նոր արդյունքների վճռական գործոններ», նրանք արդեն շատ լավ տեղյակ էին:

Հնչյունների այդ հաջորդականությունների շնորհիվ, որոնք նրանք միաժամանակ համակցում էին էակների ներկայություններում, առաջանում էին տարբեր տեսակի ազդակներ, որոնք ծնում էին միանգամայն հակադիր զգացողություններ, դրանք էլ իրենց հերթին նրանց ներսում առաջացնում էին անսովոր ապրումներ և իրենց ոչ բնորոշ ակամա շարժումներ:

Եվ իրոք, զավա՛կս, նրանց համակցած հնչյունների հաջորդականությունն իսկապես չափազանց տարօրինակ ձևով էր ազդում բոլոր այն էակների վրա, ում ներկայության մեջ մուտք էր գործում:

Նույնիսկ իմ ներսում՝ այնպիսի էակի, որն, ինչպես իրենք կասեին, ուրիշ խմորից է հունցված, ծնվում էին տարբեր լինելիական ազդակներ, որոնք փոխվում էին անսովոր հաջորդականությամբ:

Դրա պատճառն այն էր, որ, քանի որ որոշակի հաջորդականությամբ նրանց կողմից համակցված հնչյունները մուտք էին գործում իմ ընդհանուր ներկայության մեջ, ապա նրանց մեջ Ջարդքլում էր տեղի ունենում կամ, այլ կերպ ասած, հնչյունները «ջոկջկվում» և հավասարապես ազդում էին բոլոր երեք տարատեսակ խլոդիստոմատիկուլների վրա, ինչի արդյունքում իմ երեք անկախ ուղեղներում

²⁴ ռուս. տարբերակում՝ *нириуносийных*, անգլ. տարբերակում՝ *nirioonossian*

ընթացող նմանազգացությունները (թեև միաժամանակյա և ինտենսիվության հավասարությամբ իրար նմանվող, սակայն տպավորությունների տարատեսակ շղթաներով նմանազգացությունները) իմ ներկայության մեջ ծնում էին իրարից կատրելապես տարբերվող երեք մղումներ:

Օրինակ՝ իմ գիտակցության տեղայնացումը կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «*մտածողության կենտրոնը*», իմ ընդհանուր ներկայության մեջ կծներ, ասենք, ուրախության ազդակ. իմ երկրորդ տեղայնացումը կամ «*զգացական կենտրոնը*» այսպես կոչված, «տխրության» ազդակ. իսկ բուն մարմնիս տեղայնացումը կամ, կրկին ինչպես քո սիրելիները կասեին՝ «*շարժողական կենտրոնը*» կծներ «կրոնապաշտության» ազդակ:

Եվ հենց այդ անսովոր ազդակներում, որոնք էակների ներսում ծնվում էին երաժշտական և երգեցողական մեղեդիներով, նրանք ցուցադրում էին այն, ինչ ուզում էին:

Այսպիսով, զավա կս, երկրային այդ նշանավոր արվեստի վերաբերյալ իմ ամբողջ պատմածներից, ինչպես ենթադրում եմ, դու լիովին հասկանում ես, թե ինչու և ինչպես է եղել, որ այդ մոլորակ կատարած իմ հինգերորդ անձնական այցի ժամանակ ինձ վիճակվել է վկան դառնալ այն իրադարձությունների, որոնք պատճառ են դարձել դրա առաջացման համար, և թե ինչի հետ կապված և ինչ իմաստով է այդ բառն առաջին անգամ արտասանվել հենց այն ժամանակաշրջանում, որը ներկայիս քո սիրելիներն անվանում են «բաբելոնյան քաղաքակրթություն»:

Ուստի ես այժմ արդեն ուզում եմ խոսել այնտեղ եղած այն փաստերի մասին, որոնց տեղյակ լինելով՝ դու կարող ես հստակ պատկերացնել և մոտավորապես հասկանալ, թե այդքան կարճ ժամանակում որքան շատ պետք է վատացած լինեք քո հետաքրքրությունը շարժած բոլոր այդ եռուղեղ էակների «տրամաբանական մտածողությունը», որ առանց որևէ, այսպես կոչված, «*անհատականության հաստատունության*» նրանք հանդուրժել են դառնալ իրենց միջավայրի այն սակավաթիվ «*քեֆչիների*» «ստրուկները», որոնք «խղճի» աստվածային ազդակները լրիվ կորցնելու հետևանքով, եսասիրական նպատակներով ունակ էին պատահաբար իրենց հասած «արվեստ» «դատարկ բառից» ստեղծել նաև բոլոր իրենց մոտ «գիտակցական Լինելիության» համար դեռևս պահպանված տվյալների վերջնական հետաճի այդպիսի «*անվրեպ գործուն*»:

Երբ այնտեղ կատարած իմ վեցերորդ և վերջին անձնական այցի ժամանակ ես ամենուրեք լսում էի իրենց այդ ժամանակակից արվեստի մասին, առնչվում դրա արդյունքներին և ինձ համար պարզում, թե խոսքն ինչի մասին է, ապա, մտաբերելով այն ժամանակվա բաբելոնյան իմ ընկերներին ու իրենց հեռավոր հետնորդների նկատմամբ ունեցած նրանց բարի մտադրությունները, բարենպաստ պայմանների առկայության դեպքում ես աշխատում էի ինձ համար ավելի մանրամասն հստակեցնել, թե հատկապես ինչ արդյունքներ են ստացվում այն ամենից, ինչին ինձ վիճակվել է վկա լինել և հիմա պատմել քեզ:

Քեզ իրազեկ դարձնելով օտարներից թաքցրած իմ այն տպավորություններին, որոնք ամրագրվել են իմ ընդհանուր ներկայությունում և եղել են նրանց այդ ժամանակակից արվեստի իմ գիտակցական ընկալումների արդյունքները, երբ վերջին անգամ եղա քո այդ մոլորակի վրա, իմ Ես-ը հիմա խորին ամփոսանքի «*լինելիական ազդակով*» պետք է վճռականորեն հայտարարի, որ գիտելիքների բոլոր այն բեկորներից, որոնց հասել էին բաբելոնյան քաղաքակրթության էակները (իսկ այդ բեկորները, պետք է խոստովանել, շատ բան էին պարունակում), բացարձակապես ոչինչ չի անցել ժամանակակից քաղաքակրթության էակներին ի շահ իրենց սովորական *լինելիական գոյատևման*՝ բացի մի քանի «դատարկ բառերից», որոնք զուրկ են ներքին բովանդակությունից:

Նրանց ոչ միայն բացարձակապես ոչինչ չի հասել Երկրի վրա այն ժամանակ արդեն հայտնի դարձած ընդհանուր գիտելիքների զանազան բեկորներից, որոնք *լեզումհնիզմի հետևորդ* գիտուն էակները ցուցադրում էին Յոթնապարապարշինող սրբազան օրենքից կամ, ինչպես իրենք էին կոչում, Յոթնագրյանքից կատարած օրինաչափ շեղումների միջոցով, այլև այդ երկու քաղաքակրթությունների միջև ընկած ժամանակահատվածում նրանց լինելիական մտածողությունն այնքան վատացավ, որ նրանք հիմա արդեն չգիտեն և չեն էլ կասկածում, որ իրենց մոլորակի վրա երբևէ այդպիսի մի ընդհանուր օրենք է գոյություն ունեցել:

Իսկ ինչ վերաբերում է բուն այդ «արվեստ» բառին, որին իրենց բանականության արտառոցության հետևանքով այդ ամբողջ ժամանակահատվածում կպել է, ինչպես իրենք կասեին՝ «*սատանան գիտի թե ինչ*», ապա պետք է քեզ ասեմ, որ այդ բառին վերաբերող իմ հատուկ հետազոտություններն ինձ համար պարզ դարձրին, որ երբ այդ բառն այն ժամանակվա գիտուն էակների կողմից կիրառվող այլ

բառերի ու արտահայտությունների հետ ինքնաբերաբար անցել է մի սերնդից մյուսին և պատահաբար հայտնվել է որոշակի եռուղեղ էակների բառարանում, որոնց ներկայություններում տարբեր շրջակա պայմանների հետևանքով կունդաբուժեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացումներն ընթացել են այնպիսի հաջորդականությամբ ու «փոխազդեցությամբ», որ արդյունքում նրանք նախատրամադրվածություն են ստեղծել իրենց ընդհանուր ներկայություններում *տհասնամուս անհատականությունների* Լինելիության նախադրյալների ծագման համար, և այնժամ, քանի որ այդ բառն ինչ-ինչ պատճառով այնտեղ դուր է եկել հատկապես այդ տեսակի եռուղեղ էակներին, ապա նրանք սկսել են դա օգտագործել իրենց եսասիրական նպատակներով և աստճանաբար այն վերածել են հենց այն ինչ-որ բանին, որը թեև շարունակում է բաղկացած լինել, ինչպես ասում են, «բացարձակ դատարկությունից», սակայն աստիճանաբար պարուրվել է այնպիսի հեքիաթային պաճուճանքով, որը հիմա կուրացնում է բոլոր քո այն սիրելիներին, որոնք իրենց ուշադրությունը սովորականից ավելի երկար են կենտրոնացնում դրա վրա:

Այդ «արվեստ» բառից բացի, որոշակի բառերի շարքից, որոնք այնտեղ՝ Բաբելոնում, բանավեճերի ժամանակ կիրառում էին *Լեզուինիզմի հետևորդների* ակումբի գիտուն էակները, ինքնաբերաբար սերնդեսերունդ փոխանցվել են նաև ոչ քիչ թվով ուրիշ բառեր և նույնիսկ մի քանի, այսպես կոչված, մշուշապատ հասկացություններ՝ կապված այն ժամանակվա որոշակի պատկերացումների հետ:

Վերջիններիս թվին են պատկանում այնտեղ ներկայումս գործող ժամանակակից թատրոնները՝ ինչպես անվանման, այնպես էլ ծաղրաբանական նմանակման առումներով:

Հիշում ես, ես արդեն քեզ ասել եմ, որ ինչպես դահլիճը, այնպես էլ գաղտնածիսականների խմբին պատկանող գիտուն էակների ներկայացումներն այնտեղ՝ Բաբելոնում, արտահայտվում էին «թատրոն» բառով:

Հիմա եթե ես քեզ մի փոքր ավելի մանրամասն պատմեմ իրենց այդ ժամանակակից թատրոնի մասին, ապա դու բավականաչափ նյութ կունենաս, որպեսզի պարզես, թե, առաջին՝ ի վերջո ինչ ստացվեց բաբելոնյան ժամանակաշրջանի գիտուն էակների բարի մտադրություններից ու ջանքերից, երկրորդ՝ «բաբելոնյան մշակույթի» ժամանակներում արդեն հայտնի դարձած ճշմարիտ գիտելիքների ամբողջությունից ինչ է անցել ժամանակակից «եվրոպական մշակույթին», որում վերոհիշյալ արվեստը հիմնականում ծածկվել է վերը նշված հեքիաթային պաճուճանքով, և երրորդ՝ կհասկանաս իրենց այդ ժամանակակից արվեստի վնասակարության որոշակի կողմեր:

Լեզուինիզմի հետևորդների ակումբի գիտուն անդամների գաղտնածիսական խմբի գործունեության վերաբերյալ որոշ տեղեկություններ, ինչպես արդեն քեզ ասել եմ, նույնպես հասել են ներկա դարաշրջանի էակներին, որոնք, ցանկանալով նրանց նմանակել նաև դրանում, սկսել են այդ նպատակով հատուկ դահլիճներ կառուցել և դրանք անվանել «թատրոններ»:

Ժամանակակից քաղաքակրթության եռուղեղ էակները բավական հաճախ մեծ քանակությամբ հավաքվում էին այդ թատրոններում, որպեսզի դիտեն և իբր ուսումնասիրեն իրենց, ինչպես բոլորովին վերջերս են սկսել անվանել՝ «դերասանների» նախապատրաստած զանազան խաղերը, ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ Բաբելոնում *Լեզուինիզմի հետևորդների* ակումբի մնացած գիտուն էակներն էին ուսումնասիրում գաղտնածիսական խմբի գիտուն էակների ներկայացումները:

Նրանց այդ թատրոնները մեծ նշանակություն են ձեռք բերել քո սիրելիների սովորական գոյատևման գործընթացում, և այդ պատճառով նրանք կառուցում են այդ նպատակին ծառայող հատկապես մեծ շինություններ, որոնք իրենց ժամանակակից քաղաքների մեծ մասում համարվում են ամենանշանավորները:

Կարծում եմ, որ վնաս չի լինի, եթե այստեղ հիշատակեմ մի թյուրիմացություն, որը կապված է «արտիստ» բառի հետ:

Ես ստիպված եմ այդ մասին հիշատակել, քանի որ այդ բառը ևս փոխանցվել է քո սիրելիներին բաբելոնյան դարաշրջանից, բայց փոխանցվել է ոչ ուրիշ բառերի պես, այսինքն՝ ոչ թե որպես իմաստագուրկ դատարկ բառ, այլ միայն որպես այն ժամանակ կիրառված բառի հնչողության ընդամենը մեկ մասնիկ:

Հարկ է որ իմանաս, որ այն ժամանակ Բաբելոնում մյուս գիտուն էակները, որոնք բարյացակամ էին վերաբերվում *լեզուինիզմի հետևորդների* ակումբի անդամ գիտուն էակներին, նրանց անվանում էին այն նույն բառով, ինչով իրենք իրենց էին անվանում, այն է՝ «օրփեիստ»:

Այդ բառը կազմված է այն ժամանակ կիրառվող երկու բառարմատներից, որոնք ներկայումս կունենային «ճիշտ» և «էություն» իմաստները: Եթե որևէ մեկին այդպես էին անվանում, դա նշանակում էր, որ այդ մեկը ճիշտ է հասկանում էությունը:

Բաբելոնյան դարաշրջանի ավարտից հետո այդ արտահայտությունը նույնպես ինքնաբերաբար համարյա նույն նշանակությամբ փոխանցվում էր մի սերնդից մյուսին, սակայն մոտ երկու դար առաջ էակներն սկսեցին իմաստակություն բանեցնել հիշյալ տվյալների հետ՝ հատկապես «արվեստ» կոչված «դատարկ» բառի նկատմամբ, իսկ երբ այդ «արվեստի» մեջ սկսեցին ձևավորվել զանազան այսպես կոչված «դպրոցներ», և ամեն ոք իրեն համարում էր այդ դպրոցներից որևէ մեկի ներկայացուցիչ, ահա հենց այդ ժամանակ, այդպես էլ կարգին չհասկանալով դրա ճշգրիտ իմաստը և գլխավորապես այն պատճառով, որ հիշյալ արվեստի դպրոցների շարքում կար նաև Օրփեոսինը, որն իրականում հին հույների հորինած կերպարն է, նրանք որոշեցին նոր բառ հորինել, որը ճշգրիտ կբնորոշեր իրենց «կոչումը»:

Այդպիսով, հիշյալ օրփեոսոս բառի փոխարեն նրանք հորինեցին արտիստ բառը, որը պետք է վերաբերեր բոլոր նրանց, *«ովքեր զբաղվում են արվեստով»*:

Որպեսզի ավելի լավ պատկերացնես բոլոր այն պատճառները, որոնք այնտեղ հետագայում ծագեցին այդ թյուրիմացության հետևանքով, պետք է նախ և առաջ իմանաս, որ նախքան երկրորդ տրանսապալյան խոտորումը, երբ քո սիրելիները դեռևս նորմալ ձևով էին ծնվում ու նախապատրաստում իրենց պատասխանատու գոյատևմանը, նրանք միտումնավոր կերպով իրենց, այսպես կոչված, «խոսակցական լեզվի» համար համապատասխան բաղաձայններ մտցնելով՝ պետք է կարողանային և ի վիճակի էին համայն Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների պես արտաբերել մինչև 351 հատ որոշակի այսպես կոչված, «տառերի» բաղաձայն հնչյուններ:

Բայց հետո, երբ կրկին իրենց իսկ հաստատած սովորական *«լինելիական գոյատևման»* նույն աննորմալ պայմանների հետևանքով եռուղեղ էակի ներկայությանը բնորոշ բոլոր հատկանիշներն աստիճանաբար սկսեցին այլասերվել, այդ *«լինելիական ունակությունը»* նույնպես նրանց մոտ սկսեց կորսվել այնպիսի արագությամբ, որ եթե Բաբելոնյան դարաշրջանի էակներն իրենց խոսակցական հաղորդակցության ընթացքում կարողանում էին կիրառել միայն 77 որոշակի բաղաձայն հնչյուններ, ապա այդ դարաշրջանից ընդամենը հինգ դար հետո էակները կարողանում էին օգտվել ամենաշատը 36 որոշակի «տառերից», իսկ որոշ հանրությունների էակներ նույնիսկ այդ քանակի հոդաբաշխ հնչյուններ էլ չէին կարողանում արտաբերել:

Այդպիսով, տղաս, քանի որ Բաբելոնյան դարաշրջանին վերաբերող տեղեկությունները, սերնդեսերունդ փոխանցվելով, հաջորդ սերունդներին էին անցնում ոչ միայն, այսպես կոչված, «բերանացի», այլև ամուր նյութերի վրա արված պայմանական նշաններով, այսինքն, ինչպես այնտեղ կասեին՝ «գրառումների» միջոցով, որոնք այն ժամանակ պարունակում էին որոշակի *«լինելիական հոդաբաշխ հնչյուններ»* կամ տառեր, ապա, երբ ներկայիս քաղաքակրթությանը պատկանող որոշ էակներ սկսեցին դրանք վերծանել «մի կտոր այստեղ, մի կտոր այնտեղ» և հասկացան, որ անկարող են գրառված որոշակի տառերից շատերն արտաբերել կամ հնչեցնել, այնժամ հորինեցին, այսպես կոչված, «գրային փոխզիջում»:

Հիշյալ գրային փոխզիջման իմաստն այն էր, որ այն նշանների կամ տառերի փոխարեն, որոնք իրենք չէին կարողանում արտաբերել, թեև հասկանում էին դրանց արտասանության իմաստը՝ որոշեցին դրանք փոխարինել իրենց օրոք գործող այբուբենի քիչ թե շատ նման տառերով, և որպեսզի բոլորը հասկանան, որ դրանք իրենց իմացած տառերը չեն, այլ բոլորովին ուրիշ են, դրանց կողքին ավելացրին հին հռոմեացիների՝ ներկայումս գոյություն ունեցող, բայց արդեն իմաստազուրկ մի տառ, որին անգլերենում «էյ» են անվանում, իսկ ժամանակակից ֆրանսերենում՝ «հաշ»:

Այդ ժամանակից մնացած քո բոլոր սիրելիները սկսեցին նույն կերպ վարվել. ամեն մի կասկած հարուցող տառի կցում էին հռոմեական այդ «ժառանգությունը»:

Երբ մտցվեց այդ գրային փոխզիջումը, նրանք ունեին մոտ 25 այդպիսի կասկածելի «տառ», բայց ժամանակի հետ, նրանց արտասանական ունակության վատթարացմանը զուգընթաց, այն տառերի քանակը, որոնք նրանք հորինում էին հանուն այդ *«լինելիական ունակության»*, աստիճանաբար նվազում էր, և հենց այն ժամանակ, երբ հորինվեց «արտիստ» բառը, նրանք արդեն ունեին ընդամենը 8 այդպիսի տառ: Այդ նշանավոր «հ» տառից առաջ նրանք դրեցին մասամբ հին հունական, մասամբ էլ

հին լատինական տառեր և ստացան հետևյալ նշանակումները՝ «th», «ph», «gh», «ch», «sch», «kh», «dh» և «oh»:

Նշած թյուրիմացության ծագման համար հիմնական դերը խաղաց փոխզիջումային «ph» նշանը:

Հիմնական դեր խաղաց այն պատճառով, որ հայտնվել էր հենց այն բառի մեջ, որը բնորոշում էր գաղտնածեսերով զբաղվող գիտուններին, կար նաև այն անձի անվան մեջ, որին հինավուրց հույներն էին հորինել և այդ անվան հետ կապել այն ժամանակ գոյություն ունեցող *արվեստի դպրոցներից* մեկը: Արդյունքում երկրային արվեստի նշած ներկայացուցիչներն իրենց խղճուկ բանականությամբ մտածեցին, որ այդ բառը ոչ այլ ինչ է նշանակում, քան այդ *«պատմական անձ Օրփեոսի հետևորդներին»* բնորոշող անուն, և քանի որ նրանցից շատերն իրենց նրա հետևորդ չէին համարում, ապա դրա փոխարեն պարզապես հորինեցին «արտիստ» բառը:

Ինչպես տեսանք, հինավուրց հռոմեացիների թողած ոչ բոլոր ժառանգություններն են չարաղետ եղել հետագա սերունդների էականների համար, բայց տվյալ դեպքում այդ փոքրիկ «h» տառը նույնիսկ ոգևորիչ գործոն է ծառայել՝ այդ *«լինելիական ունակությունը»* սկզբնավորելով հետագա սերունդների էականների ներկայություններում, որոնց որոշակիորեն բնորոշ էր դարձել սեփական նախաձեռնության կամ «ունակության» բացակայությունը, ուստի կամեցան վաղուց գոյություն ունեցող «օրփեիստ» բառը փոխարինել «արտիստ» նոր բառով և մեծագույն հաջողությամբ իրագործեցին այդ ցանկությունը:

Այժմ կարևոր է քեզ տեղեկացնել այնտեղի մի մեծ տարօրինակության մասին, որը վերաբերում է այդ մոլորակի եռուղեղ էականների ներկայություններում այդ *«լինելիական ունակության»* աստիճանական հետաճին, որի հետևանքով նրանք իրենց խոսակցական հաղորդակցության ժամանակ չեն կարողանում որոշ «բաղաձայններ» արտաբերել:

Բանն այն է որ էականների ընդհանուր ներկայություններում այդ *լինելիական ունակության* վատթարացումը միանման չի ընթանում ամեն սերնդի պատկանող բոլոր էականների մոլորակային մարմինների հոգեբանական գործառնություններում, այլ տարբեր ժամանակներում և այդ մոլորակի մակերևույթի տարբեր մասերում փոխնիփոխ, այսպես ասած, մոլորակային մարմինների գործառնությունների կա՛մ հոգեբանական մասի վրա է առավելապես անդրադառնում, կա՛մ օրգանականի:

Շենց նոր ասածս լուսաբանող լավ օրինակ կարող է ծառայել այն երկու տառերի կամ հնչյունների արտաբերման ճաշակի և ունակության զգացողությունը, որոնք լավ հայտնի են և ներկայումս օգտագործվում են այդ մոլորակի բոլոր մասերում բազմացող համարյա բոլոր ժամանակակից էականների կողմից, և որոնք իրենց են փոխանցվել հեռավոր անցյալից հին հույների միջոցով:

Հին հույները հիշյալ տառերը կոչում էին «թետա» և «դելտա»:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ հինավուրց ժամանակների քո սիրելիներն այդ երկու տառերը հատուկ կիրառում էին, որպեսզի տարբեր անվանումներով արտահայտեն երկու կատարելապես իրար հակադիր իմաստներ:

Այսպես՝ նրանք «թետա» տառը կիրառում էին այն բառերում, որոնք կապված էին «բարին» արտահայտող գաղափարների հետ, իսկ երկրորդ «դելտա» տառը՝ այնպիսի բառերում, որոնք կապված էին «չարի» հետ: Օրինակ՝ «Theos»-ը «Աստված» էր նշանակում, իսկ «Daimonion»-ը՝ «չար ոգի»:

Այդ երկու տառերի ընկալումն ու «համը» փոխանցվել են ներկայիս քաղաքակրթության բոլոր էականներին, սակայն էությամբ բոլորովին տարբեր այդ տառերը նրանք, չգիտես ինչու, նշանակել են միևնույն «th» նշանով:

Օրինակ՝ Ռուսաստան կոչվող ներկայիս հանրության էականները, որքան էլ ջանում են, բոլորովին չեն կարողանում արտաբերել այդ երկու հիշյալ տառերը, թեև շատ հստակ զգում են դրանց տարբերությունը. իսկ եթե նրանց վիճակվում է այդ տառերն օգտագործել որոշակի իմաստ արտահայտող բառերում, ապա, թեև սխալ են արտաբերում դրանք, այնուամենայնիվ ճիշտ են զգում դրանց տարբերությունը և մի տառը մյուսի փոխարեն չեն օգտագործում:

Մյուս կողմից, Անգլիա կոչվող ժամանակակից հանրության էականները, թեև այդ տառերից յուրաքանչյուրն արտաբերում են համարյա այնպես, ինչպես հին հույները, բայց դրանց միջև ոչ մի տարբերություն չեն զգում և, առանց այլևայլության, կատարելապես իրար հակադիր նշանակություն ունեցող բառերում միևնույն պայմանական նշանն են կիրառում՝ իրենց նշանավոր «th»-ի տեսքով:

Օրինակ՝ երբ ժամանակակից Անգլիայի էականներն արտաբերում են իրենց սիրած և հաճախակի կիրառվող «Thank you» արտահայտությունը, ապա դրանում հստակ լսվում է «թետա» հինավուրց

տառը. իսկ երբ արտաբերում են ոչ պակաս սիրված և էլի հաճախ օգտագործվող «there» բառը, ապա լիովին հստակ ու պարզ լսվում է «դելտա»-ն. այնուհանդերձ, որքան էլ պարադոքսալ երևա, նրանք, առանց խղճի խայթ զգալու, այդ երկու տառերի նշանագրման համար օգտագործում են միևնույն «համապիտանի» «th»-ն:

Բայց, կարծում եմ, բավական է զբաղվենք երկրային բանասիրությամբ:

Ավելի լավ է նախ շարունակենք պարզել այն բանի պատճառը, թե ինչու է ներկայիս քո սիրելիների համար սովորական բան դարձել ամենուրեք այդպիսի թատրոններ ունենալը, հետո պարզենք այն, թե այդ թատրոններում ինչ են են անում և ինչպես են ինքնադրսևորվում ժամանակակից դերասանները:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու է նրանց համար սովորական բան դարձել հաճախ նշանակակից խմբերով այդ թատրոններում հավաքվելը, ապա իմ կարծիքով դրա պատճառն այն է, որ նրանց ներկայիս թատրոններն ու այն ամենը, ինչ կատարվում է դրանցում, շատ լավ համապատասխանում են այդ ժամանակակից եռուղեղ էակների մեծամասնության աննորմալ ձևավորված ընդհանուր ներկայություններին, որոնք արդեն վերջնականապես կորցրել են ամեն ինչում սեփական նախաձեռնություն դրսևորելու՝ եռուղեղ էակներին հատուկ պահանջմունքը, և որոնք գոյատևում են միայն դրսից ստացված պատահական խթաններին կամ կոնդաբուլներ օրգանի՝ իրենց ներսում բյուրեղացված հետևանքների այս կամ այն հատկությամբ համապատասխան:

Այդ թատրոնների ծագման հենց ամենասկզբից նրանք հավաքվում էին և հիմա էլ են հավաքվում, որպեսզի դիտեն և ուսումնասիրեն իրենց ժամանակակից «դերասանների» ներկայացումները. բայց ոչ... հավաքվում են, որ միայն բավարարեն կոնդաբուլներ օրգանի հետևանքներից հենց այն մեկը, որը հեշտորեն բյուրեղացել է նրանց մեծ մասի ընդհանուր ներկայության մեջ և կոչվել է «ուռնել»²⁵, իսկ ներկայիս էակները դա անվանում են «կոտրատվել»:

Հարկ է, որ իմանաս, որ կոնդաբուլներ օրգանի հատկությունների նշված հետևանքների պատճառով ներկայիս էակների մեծամասնությունը շատ տարօրինակ պահանջմունք է ձեռք բերում իր ընդհանուր ներկայության մեջ, որ իր նկատմամբ «զարմանք» կոչվող *լինելիական ազդակ* առաջացնի կամ թեկուզ պարզապես դա նշմարի շրջապատում եղածների դեմքերին:

Նրանց այդ պահանջմունքի տարօրինակությունն այն է, որ հաճույք են ստանում, երբ մյուսների զարմանքն են հարուցում իրենց արտաքինով, որը ճշտորեն համապատասխանում է, այսպես կոչված, «նորաձևության» պահանջներին, այսինքն հենց այն չարաղետ սովորույթին, որն այնտեղ սկզբնավորվել է թիքլամիշյան քաղաքակրթության օրոք և դարձել այն *լինելիական գործոններից* մեկը, որն ինքնին ո՛չ ժամանակ, ո՛չ էլ հնարավորություն է տալիս նրանց տեսնելու կամ զգալու իրականությունը:

Համաձայն այդ չարաղետ սովորույթի՝ նրանք պարբերաբար փոխում են իրենց, այսպես կոչված, «*անձի հանդերձանքի*» արտաքին ձևը:

Իմիջիայլոց, այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների առօրեական գոյատևման ընդհանուր գործընթացում կանոն է դարձել, որ նշված հանդերձանքի արտաքին ձևի փոփոխություններն այնտեղ իրականացնում են երկու սեռերին պատկանող այնպիսի էակներ, որոնք արդեն «արժանացել են» *տհասնամուսական անհատականության* թեկնածուներ դառնալու բախտին:

Այդ առումով ժամանակակից թատրոնները շատ արդյունավետ եղան քո սիրելիների համար, քանի որ բավականին հարմար ու հեշտ է լինում ցուցադրել, ինչպես իրենք են սիրում ասել, իրենց «ճոխ սանրվածքը», հատուկ ձևով կապված փողկապը կամ բացեիքաց մերկացված «*մաքմնի ամոթահարույց մասը*» և այլն, և այլն. միևնույն ժամանակ նրանք այնտեղ կարող են դիտել արդեն լույս ընկած «նորաձևության» նոր նմուշները, որոնք պատրաստված են «*տհասնամուսական անհատականության*» հենց այդ թեկնածուների ցուցումներով:

Որպեսզի հստակ պատկերացնես, թե ժամանակակից «դերասաններն ինչեր են անում այդ թատրոններում իրենց «կոտրատվելու» ընթացքում, նախ հարկ է, որ քեզ պատմեմ ևս մի չափազանց տարօրինակ «հիվանդության» մասին, որն այնտեղ «դրամատիկամոլություն» անունն է կրում. նրանցից որոշների ներկայություններում այդ հիվանդության ծագման հակվածությունը նրանց, այսպես կոչված, «տատմայրերի» անփութության հետևանքն է:

²⁵ ռուս. տարբերակում՝ урел, անգլ. տարբերակում՝ oornel

Տատմայրերի այդ հանցավոր անփութությունն արտահայտվում է նրանով, որ դեպքերի մեծ մասում իրենց գործին գնալիս նրանք մտնում են իրենց մյուս հաճախորդների տները և սովորականից ավելի շատ են խմում իրենց առաջարկված «գինուց», այնպես որ գործն անելիս ակամա բացականչություններ են անում, որոնք ամրապնդվում են քո սիրելիների սովորական գոյատևման ընթացքում, ինչպես իրենց, այսպես կոչված, «կախարդների» անեծքները, և տարաբախտ նորածին էակն այն պահին, երբ, ինչպես իրենք են ասում, «Աստծո լույս աշխարհն է մտնում», առաջին հերթին յուրացնում է հենց այդ չարաղետ անեծքի բառերը:

Իսկ այդ անեծքը հետևյալ բառերով է հնչում. «Ա՛խ, դու... ա՛յ թե ինչ կեղտ շաղ տվեցիր չորս կողմ...»

Ահա, զավա՛կս, տատմոր հանցավոր անփութության պատճառով նոր աշխարհ եկած դժբախտ էակն իր ներկայության մեջ հակվածություն է ձեռք բերում հենց այդ նշած տարօրինակ հիվանդության նկատմամբ:

Եթե այնտեղ այդպիսի եռուղեղ էակն իր աշխարհ գալու հենց սկզբում ձեռք է բերում հիշյալ դրամատիկամոլություն հիվանդության նկատմամբ հակվածություն, ապա, երբ, հասնելով իր գոյության պատասխանատու տարիքին, սովորի գրել և ուզենա ինչ-որ բան գրի առնել, անմիջապես կհիվանդանա այդ տարօրինակ հիվանդությամբ և կսկսի թղթի վրա իմաստակել կամ, ինչպես այնտեղ են ասում, «հորինել» զանազան, այսպես կոչված, «դրամաներ»:

Նրանց այդ ստեղծագործությունների բովանդակությունը սովորաբար զանազան դեպքերի նկարագրություն է լինում, որոնք իբր կա՛մ տեղի են ունեցել, կա՛մ կարող են տեղի ունենալ ապագայում, կա՛մ էլ պատկանում են իրենց սեփական ժամանակակից «ոչ-իրականության» դեպքերի շարքին:

Դրանից զատ, հիվանդ էակի ընդհանուր ներկայության մեջ այդ յուրահատուկ հիվանդության ախտանշանների շարքում ի հայտ են գալիս ևս յոթ շատ առանձնահատուկ հատկանիշներ:

Առաջինն այն է, որ երբ այդ տարօրինակ հիվանդությունը ծագում և արդեն սկսում է գործել էակի ներկայության մեջ, նրա շուրջը տարածվում են առանձնահատուկ թրթիռներ, որոնք շրջապատի վրա ազդում են, ինչպես իրենք են ասում, «զառամյալ այծի հոտի» պես:

Երկրորդն այն է, որ նման էակի ներսի գործառույթների փոփոխության ազդեցությամբ նրա մոլորակային մարմինն արտաքինից կրում է հետևյալ փոփոխությունները՝ քիթը վեր է ցցվում, ձեռքերը՝ կողքերի վրա, խոսքն, այսպես ասած, ընդմիջարկվում է հատուկ հագով և այլն:

Երրորդն այն է, որ յուրաքանչյուր այդպիսի էակ մշտապես սկսում է վախենալ կատարելապես անվնաս բնական կամ արհեստական գոյացություններից, ինչպես օրինակ՝ այսպես կոչված «*մկներից*», «*բռունցք արած ձեռքերից*», «*թատրոնի գլխավոր ռեժիսորի կնոջից*», «*իր քթի վրա բուսած պզուկից*», «*սեփական կնոջ ձախ կոշիկից*» և իրենից դուրս եղած շատ այլ գոյացություններից:

Չորրորդ հատկանիշն այն է, որ նա լիովին զրկվում է շրջապատի իր նման էակների հոգեկառույցը հասկանալու կարողությունից:

Հինգերորդն այն է, որ ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ նա քննադատում է ամենքին և այն ամենը, ինչ կապված չէ իր հետ:

Վեցերորդն այն է, որ որևէ առարկայական բանի ընկալման ունակությունները նրա մոտ կորսվում են ավելի շատ, քան մնացած բոլոր երկրային եռուղեղ էակների մոտ:

Յոթերորդ և վերջին առանձնահատկությունն այն է, որ նա ձեռք է բերում, այսպես կոչված, «թութք». իմիջիայլոց՝ միակ բանը, որ նա համեստությամբ է տանում:

Այնուհետև այնտեղ հետևյալն է տեղի ունենում. եթե հիվանդ էակը քեռի ունի, որն իրենց ինչ-որ «խորհրդարանի» անդամ է, կամ հենց ինքը ծանոթանում է որևէ «*նախկին գործարարի*» այրու հետ, կամ պատասխանատու էակ դառնալու նրա նախապատրաստական շրջանն ինչ-որ պատճառով անցել է այնպիսի շրջապատում կամ այնպիսի պայմաններում, որ ինքնաբերաբար ձեռք է բերել, այսպես կոչված, «*առանց օձառի խցկվելու*» հատկանիշ, ապա այսպես կոչված «տնօրենը» կամ, ինչպես նաև կոչվում է՝ «*զառնուկների տերը*», վերցնում է նրա ստեղծագործությունը և վերոհիշյալ ժամանակակից դերասաններին հրաման է տալիս այն «ներկայացնել» ճիշտ այնպես, ինչպես իմաստակել է դրամատիկամոլություն տարօրինակ հիվանդությամբ հիվանդացած այդ էակը:

Եվ այնտեղ այդ ժամանակակից դերասաններն այդ ստեղծագործությունը նախ փորձում են առանձին՝ առանց կողմնակի անձանց փորձում են այնքան, մինչև որ այն դառնա ճիշտ այնպիսին, ինչպիսին ներկայացրել է հիվանդ էակը, և հրամայել է տնօրենը. իսկ երբ վերջապես ներկայացում

ընթանում է առանց իրենց սեփական գիտակցության ու զգացմունքների մասնակցության, և այդ ժամանակակից դերասանները լրիվ վերածվում են, այսպես կոչված, «կենդանի ավտոմատների», միայն և միայն այդ դեպքում նրանց օգնությամբ, որոնք դեռևս ամբողջովին կենդանի ավտոմատներ չեն դարձել, ինչի շնորհիվ էլ հետագայում «ռեժիսոր» են կոչվում, նրանք այդ նույն բանը կրկնում են վերջիններիս ղեկավարությամբ, բայց այս անգամ դրան արդեն ներկա են լինում ուրիշ սովորական էակներ, որոնք հավաքված են լինում այդ ժամանակակից թատրոններում:

Եվ այսպես, դու հիմա արդեն կարող ես հենց նոր իմ պատմածներից հեշտությամբ եզրակացնել, որ որոշակիորեն չարաղետ շատ հետևանքներից զատ, որոնց էս շուտով մանրամասն կանդադառնամ, այդ թատրոններն, իհարկե, ոչնչով չեն կարող նպաստել այն բարձր նպատակին, որն իրենց առջև դրել էին բաբելոնյան էակները, երբ առաջին անգամ ստեղծեցին ընկալումների գիտակցական ներկայացման և դրանց նկատմամբ ուրիշ իրենց նման էակների նմանազգացական ռեակցիայի հետազոտման նման ձև:

Այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ իրենց թատրոններից և ժամանակակից դերասաններից նրանք իրենց սովորական *լինելիական գոյության* համար, իհարկե՝ պատահաբար, քաղեցին մի «*ոչ վատ արդյունք*»:

Որպեսզի հասկանաս, թե որն է այդ «*ոչ վատ արդյունք*», ես նախ պետք է քեզ բացատրեմ ևս մեկ առանձնահատկություն, որը բնորոշ է դառնում *իթոկլանոցի* սկզբունքով սկզբնավորվող էակների ընդհանուր ներկայությանը:

Համաձայն այդ սկզբունքի՝ այդպիսի էակների ներկայություններում այն էներգիայի գոյացումը, որն անհրաժեշտ է նրանց, այսպես կոչված, «արթնության վիճակի» համար, կախված է այն նմանազգացությունների որակից, որոնք նրանց ընդհանուր ներկայություններում ընթանում են իրենց «լիակատար պասսիվ» վիճակում, որին քո սիրելիները «քուն» են անվանում. և հակառակը՝ այն էներգիան, որն անհրաժեշտ է նշված «քնի» «արդյունավետության» համար, իր հերթին նույնպես գոյանում է այն նմանազգացական գործընթացից, որն ընթանում է նրանց արթնության ժամանակ և կախված է գործունեության որակից կամ լարվածությունից:

Եվ դա նույնպես սկսել է վերաբերել երկրային այդ եռուղեղ էակներին այն ժամանակներից սկսած, երբ, ինչպես քեզ մի անգամ արդեն պատմել եմ, Մեծ Բնությունն ստիպված եղավ փոխարինելու մինչ այդ նրանց ներկայություններին հատուկ *փուլհասնիտամյան* սկզբունքը *իթոկլանոցի* սկզբունքով: Դրանից հետո գոյատևման գործընթացում ձեռք է բերվել և մինչև հիմա հարատևում է այնպիսի առանձնահատկություն, որ եթե, ինչպես իրենք են ասում, «լավ են քնում», ապա նրանց արթնությունն էլ է լավ լինում, և հակառակը՝ եթե արթնությունը վատ է անցնում, ապա վատ էլ քնում են:

Ուստի, զավա՛կս, քանի որ վերջին ժամանակներում նրանք գոյատևել են շատ աննորմալ ձևով, ապա դրա հետևանքով փոխվել է նույնիսկ այն հաստատված մեխանիկական ռիթմը, որը նախկինում քիչ թե շատ նպաստում էր նրանց ներսում հարկ եղած նմանազգացությունների ընթացքին, և արդյունքում հիմա նրանք վատ են քնում, իսկ արթնության վիճակն էլ նույնիսկ ավելի վատ է, քան առաջ:

Իսկ թե ինչու՞ նրանց ժամանակակից թատրոններն իրենց ժամանակակից դերասաններով հանդերձ սկսեցին լավացնել նրանց քնի որակը, բացատրվում է հետևյալ հանգամանքով:

Այն բանից հետո, երբ նրանց մեծամասնության ներկայություններից իսպառ անհետացավ *լինելիական պարտք-պարտականություն* իրականացնելու ներքին պահանջը, և նրանց արթնության վիճակում անխուսափելիորեն ընկալվող խթանների ամեն տեսակի նմանազգացությունները սկսեցին ծագել միայն մի քանի արդեն մեխանիկական դարձած, այսպես կոչված, «*նախկին տպավորություններից*», որոնք կազմված են անվերջ կրկնվող, այսպես կոչված, «*վաղուց ապրված տպավորություններից*»՝ այնժամ նրանց ներսում սկսեց չքանալ և շարունակում է չքանալ եռուղեղ էակների համար կենսականորեն անհրաժեշտ ամեն տեսակի այնպիսի նոր խթաններ ընկալելու բնագդական պահանջը, որոնք բխում են ինչպես իրենց ներքին առանձին ոգեկոչված լինելիական մասերից, այնպես էլ դրսից եկող և գիտակցական նմանազգացություններին համապատասխանող ընկալումներից, հենց այն *լինելիական նմանազգացություններին*, որոնցից կախված է էակների ներկայություններում ցանկացած «*լինելիական էներգիայի*» փոխակերպության ինտենսիվությունը:

Վերջին երեք հարյուրամյակի ընթացքում նրանց գոյատևման գործընթացն ինքնին այնպիսին է դարձել, որ նրանց մեծամասնության ներկայություններում իրենց ցերեկային կյանքի ընթացքում այլևս

համարյա չեն առաջանում այն *«լինելիական համադրական նմանազգացությունները»*, որոնք սովորաբար ընթանում են եռուղեղ էակների մոտ՝ շնորհիվ զանազան նոր ընկալումների, միայն որոնցից կարող են եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում բյուրեղացվել իրենց անհատականության համար անհրաժեշտ նախադրյալները:

Եվ ահա, երբ իրենց «ցերեկային կյանքում» այդ կերպ գոյատևող քո սիրելիները հաճախում են այդ ժամանակակից թատրոնները, հետևում այդ ժամանակակից դերասանների անիմաստ ձեռնածություններին և մեկը մյուսի հետևից *«խթաններ»* են ստանում ամեն տեսակի հիշողություններից, որոնք նախկինում ընկալվել են ոչ պակաս անիմաստ ու անհեթեթ ներկայացումների ժամանակ, ապա իրենց արթնության ընթացքում կամա-ակամա ստանում են քիչ թե շատ տանելի *լինելիական նմանազգացություններ*, այնպես որ երբ տուն են գնում և պառկում քնելու, սովորականից անհամեմատ ավելի լավ են քնում:

Թեև իրոք այդ ժամանակակից թատրոններն իրենց ներսում տեղի ունեցող ամեն ինչով հանդերձ գերազանց քուն են ապահովում (իհարկե, միայն «այսօրվա» համար) քո սիրելիների համար, այնուհանդերձ այդ թատրոնների օբյեկտիվորեն վնասակար հետևանքներն էականորեն և հատկապես աճող սերնդի համար անհաշիվ են:

Նրանց համար այդ թատրոնների գլխավոր վնասն այն է, որ դրանք լրացուցիչ գործոն են ծառայում, որպեսզի նրանց մոտ իսպառ ոչնչանան եռուղեղ էակներին հատուկ այն պահանջմունքն ունենալու բոլոր հնարավորությունները, որը կոչվում է *«իրական ընկալումներ ունենալու պահանջ»*:

Դրանք այդպիսի չարաղետ գործոն են դարձել գլխավորապես հետևյալ պատճառով:

Երբ նրանք գնում են իրենց թատրոնները և հանգիստ տեսնում ու դիտում են հնարավոր ամեն տեսակի այլազան ու բազմակողմանի, թեկուզ և անիմաստ «ծամածություններ» և իրենց ժամանակակից դերասանների դրսևորումները, ապա, թեև գտնվում են իրենց սովորական արթմնի վիճակում, սակայն թե՛ նրանց «մտքերի» և թե՛ «հույզերի» բոլոր նմանազգացություններն ընթանում են ճիշտ այնպես, ինչպես իրենց լիակատար պասսիվության կամ քնած ժամանակ:

Այսինքն, երբ նրանք մեծ քանակությամբ այնպիսի պատահական մղումներ են ստանում, որոնք համապատասխանում և խթանում են այն մղումները, որոնք արդեն նախապես ընկալվել, ամրացել և մեխանիկական տպավորությունների շարանի են վերածվել իրենց ներսում, և երբ դրանց արձագանքում են իրենց, այսպես կոչված, *«մարտդական և սեռական օրգանները»*, ապա դրա հետևանքով իրենց ներկայություններում խոչընդոտներ են առաջանում նույնիսկ այն խղճուկ գիտակցական լինելիական նմանազգացությունների ընթացքի դեմ, որոնք մեխանիկորեն արդեն իրենց ներսում սկսել են նյութափոխանակության քիչ թե շատ բնականոն դիթմ ստեղծել, որն անհրաժեշտ է նրանց գոյատևման պասսիվ վիճակի համար, որի ընթացքում էլ փոխակերպվում են ակտիվ վիճակի համար անհրաժեշտ նյութեր:

Այլ կերպ ասած, երբ նրանք հայտնվում են այդ թատրոններում, լրիվ չեն լինում այն պասսիվ վիճակում, որում ընթացող նյութափոխանակությունն անհրաժեշտ է իրենց սովորական արթմնի վիճակի համար, որը նույնպես մի տեսակ ինքնաբերական է դարձել. արդյունքում իրենց այդ ժամանակակից թատրոններն ընդամենը լրացուցիչ չարաղետ գործոն են դարձել, ինչպես ասել եմ, նրանց *«իրական ընկալումների պահանջմունքի»* ոչնչացման համար:

Նրանց ժամանակակից արվեստի չարաղետության բազմաթիվ այլ ասպեկտների շարքում առավել ակնհայտ անտեսվածներից մեկը, որը սակայն այնտեղի բոլոր եռուղեղ էակների գիտակցական, այսպես կոչված, *«անհատական լինելիության»* ձեռքբերման հնարավորության վրա խիստ վնասակար ազդեցություն է թողնում, ժամանակակից արվեստի ներկայացուցիչների ճառագումներն են:

Թեև այդ չարաղետ ճառագումներն աստիճանաբար վերածվում են կամ նրանց արվեստի բոլոր բնագավառների ներկայացուցիչներին հատուկ տարբերակիչ գծի կամ ճակատագրի, սակայն իմ մանրագնին *«ֆիզիկա-քիմիական հետազոտությունը»* որոշակիորեն ցույց տվեց ինձ, որ այդ ճառագումները մշտապես առավել չարաղետ են նշածս ժամանակակից արտիստների կամ դերասանների պարագայում, որոնք ծամածովում են իրենց այդ ժամանակակից թատրոններում:

Մնացած բոլոր քո սիրելիների համար նրանցից բխող ճառագումների համախմբության վնասակարությունը հստակորեն զգալի է դարձել հատկապես նրանց ներկայիս քաղաքակրթության վերջին ժամանակներում:

Թեև որոշ սովորական էակներ վաղուց են այնտեղ նման մասնագիտացում ձեռք բերել, սակայն նախկինում մի կողմից այդ մասնագետների ներկայություններում տհասամասնական հատկությունների ամեն տեսակի տվյալները լրիվ չէին բյուրեղացվում, և մյուս կողմից՝ մնացած քո սիրելիները հավանաբար բնագոյով զգում էին այդ մասնագետներից բխող վնասակար ազդեցությունը և նրանց վերաբերվում էին համապատասխան կերպ ու շատ էին զգուշանում նրանցից:

Այսպես օրինակ՝ նախկին դարերում այդպիսի արտիստներին կամ դերասաններին մնացած էակներն ամենուրեք համարում էին ամենացածր խավ և արհամարհում էին նրանց: Նույնիսկ հիմա էլ շատ հանրություններում, օրինակ՝ Ասիա աշխարհամասում, ընդունված չէ նրանց ձեռքը սեղմել, ինչը սովորաբար անում է էակն իր նմանին հանդիպելիս:

Առ այսօր այդ հանրություններում նույնիսկ պղծություն է համարվում նման դերասանների հետ միևնույն սեղանի շուրջ նստելն ու հաց ուտելը:

Սակայն այն աշխարհամասի ժամանակակից էակները, որը ներկայումս իրենց, այսպես կոչված, «կուլտուրական կեցության» գլխավոր վայրն է, ոչ միայն ներքուստ այդ այդ ժամանակակից դերասաններին իրենց հավասար են համարում, այլև նույնիսկ նշանակալիորեն ընդօրինակում են նրանց արտաքինը և վերջին ժամանակներում դա անում են բավականին եռանդուն կերպով:

Մորուքն ու բեղերը խուզելու սովորույթը, որին հիմա ենթարկվում են քո բոլոր սիրելիները, շատ լավ հաստատում է հենց նոր իմ ասածը:

Պետք է քեզ ասեմ, որ նախկին դարաշրջաններում երկրային այդ արհեստավարժ դերասաններն իրենց սովորական գոյատևման ընթացքում պարտավոր էին միշտ խուզած բեղ ու մորուքով ման գալ:

Նրանք պարտավոր էին սափրել իրենց տղամարդկության և ակտիվության այդ «վկայություններն» առաջին հերթին այն պատճառով, որ, մշտապես ուրիշ էակների դերեր խաղալով, պետք է հաճախակի փոխելին իրենց արտաքինը, և դրա համար ոչ միայն հարկ էր լինում, այսպես կոչված, «դիմահարդարանք» անել, այլև կեղծամներ կրել՝ կեղծ բեղեր և մորուքներ, ինչը չէին կարող անել, եթե սեփական մորուք ու բեղ ունենային. և երկրորդ՝ քանի որ նախկին հանրությունների սովորական էակները այդպիսի դերասաններին անմաքուր ու վատ ազդեցություն թողնող էին համարում, ապա, վախենալով, որ նրանց կարող են չճանաչել պատահական հանդիպման ժամանակ և ինչ-որ շփում ունենալ նրանց հետ, ամենուրեք խիստ օրենք էին մտցրել, որ արտիստի կամ դերասանի մասնագիտություն ունեցողները պետք է միշտ իրենց բեղն ու մորուքը սափրած լինեն, որպեսզի մնացած էակներն անսխալ ճանաչեն նրանց:

Այժմ քեզ բացատրելով այնտեղի դերասանների բեղ-մորուքը խուզելու սովորույթի ծագման պատճառը՝ ես մտաբերեցի «թիքլամիշյան քաղաքակրթության» եռուղեղ էակների մի շատ խելամիտ, այսպես կոչված, «արդարադատության միջոցի» մասին, որը նույնպես կապված է մազեր խուզելու հետ, որոնք աճում են այնտեղի էակների գլուխների վրա:

Այնտեղ ընդունվել և խստորեն պահպանվում էր մի օրենք, որ իրենց այն մանր հանցագործները, որոնք տվյալ տարածքի յոթ ավագների դատավճռով դատվում էին «անբարոյականության» և «հանցավորության» նախապես հաստատված չորս դասերից որևէ մեկի մեջ (նման էակներով սովորաբար լեփ-լեցուն են լինում նրանց ներկայիս «բանտերը»), պարտավոր էին որոշակի ժամկետի ընթացքում միշտ և ամենուրեք շրջել գլխի համապատասխան քառորդը սափրած. դրանից գատ, ամեն մի այդպիսի դատապարտված էակ պարտավոր էր գլուխը մերկացնել, երբ հանդիպում և զրուցում էր ուրիշների հետ:

Հետաքրքիր կլինի նշել, որ այնտեղ գլուխը սափրելու նման օրենք էր գործում նաև կանանց անբարոյական վարքի հետ կապված:

Այսպես՝ կանանց նկատմամբ դատավճիռ կար, և այն նույնպես խստորեն կիրառվում էր՝ այս դեպքում արդեն յոթ ավագ կանանց վճռով, որոնք իրենց նախկին վարքով հարգանքի էին արժանացել:

Իսկ կանանց համար նախատեսված պատժաչափերը համապատասխանում էին չորս դրսևորումների, որոնք կանանց համար մեծագույն անպատկառություն ու անբարոյականություն էին համարվում:

Օրինակ՝ եթե որևէ կնոջ բոլոր հարևանները վկայում էին, և բոլոր յոթ ավագ կանայք էլ հաստատում էին, որ նա անշնորհք ու անջանադիր ձևով է վերաբերվում իր ընտանեկան պարտականություններին, ապա, ըստ օրենքի՝ որոշակի ժամկետի ընթացքում նա պետք է ամենուրեք երևար շուրթերը ներկած:

Իսկ եթե ուրիշ կանայք նկատում էին, որ նա իր երեխաների նկատմամբ թուլացրել է մայրական մղումները, ապա այդ նույն պարագայում շրջապատը նրան հարկադրում էր որոշակի ժամանակահատվածում ամենուրեք երևալ դեմքի ձախ կեսը սպիտակ և կարմիր գույներով դիմահարդարված:

Իսկ այն կինը, որը փորձում էր խախտել իր գլխավոր, այսպես կոչված, «ամուսնական պարտքը», այսինքն՝ կա՛մ դավաճանում էր, կա՛մ թեկուզ փորձում էր դավաճանել իր օրինական ամուսնուն, կա՛մ էլ իր ծնած էակին սպանելու փորձ էր անում նույն արարողակարգով պարտադրվում էր, որ, նորից որոշակի ժամանակահատվածի ընթացքում, իր ամբողջ դեմքը դիմահարդարած լինի սպիտակ և կարմիր գույներով»:

Պատմության այս մասում Ահունը Բեհեդգեբուղին ընդհատեց հետևյալ խոսքերով.

– Ձե՛րդ Վեհապատվություն, երկրային արվեստին և այնտեղի այն եռուղեղ էակներին վերաբերող Ձեր բոլոր բացատրությունները, որոնք այդ արվեստով են զբաղված և դրա ներկայացուցիչներն են համարվում, և հատկապես Ձեր այն բացատրությունը, որը վերաբերում է այնտեղի «կատակերգուներին» կա՛մ դերասաններին, ի՛մ մեջ միտք հղացրին, որ, օգտվելով ի՛մ ընդհանուր ներկայության մեջ ամրացված բոլոր տպավորություններից, որոնք ձեռք եմ բերել մեր սիրելի Հասեինի հետաքրքրությունը շարժած Երկիր մոլորակի մակերևույթին վերջին անգամ լինելուս ընթացքում, նրան մի շատ լավ խորհուրդ տամ:

Այսքանն ասելուց հետո Ահունը սկսեց նայել Բեհեդգեբուղի երեսին իր սովորական սպասողական նայվածքով, այսինքն՝ երկար ժամանակ աչքերը չթարթելով, սակայն, հենց որ նկատեց նրա սովորական, թեև միշտ թախծոտ, բայց բարի ու ներողամիտ ժպիտը, այլևս թույլտվության չսպասեց և, կարծես շփոթված, անմիջապես շրջվեց Հասեինի կողմն ու ասաց.

– Ո՛վ գիտե, սիրելի Հասեին, գուցե քեզ իսկապես վիճակվի հայտնվել այդ Երկիր մոլորակի վրա և գոյատևել քո հետաքրքրությունը շարժած այդ յուրօրինակ եռուղեղ էակների միջավայրում:

Ապա, կրկին պահպանելով Բեհեդգեբուղի ոճն ու առողջությունը, նա շարունակեց.

– Հատկապես այդ պատճառով է, որ ես հիմա ուզում եմ համենայն դեպս քեզ իրազեկ դարձնել ականա ընկալած ի՛մ զանազան տպավորությունների արդյունքներին, որոնք վերաբերում են այնտեղ կազմավորված տիպերին, ինչպես նաև արվեստի հիշատակված ժամանակակից ներկայացուցիչների դրսևորումների առանձնահատկություններին:

Հարկ է, որ իմանաս, որ այն էակներին, որոնք այդ ժամանակակից կեղծ լուսապսակով զարդարված արվեստի գիտակներ են համարվում, հատկապես վերջին մի քանի տասնամյակի ընթացքում ոչ միայն ներկայիս քաղաքակրթությանը պատկանող մյուս եռուղեղ էակներն իրենց հավասար են համարում և իրենց բարձրագույն դրսևորումներով նմանակում նրանց, այլև միշտ և ամեն տեղ անարժան ձևով քաջալերում ու փառաբանում են նրանց. և հենց իրենք՝ ժամանակակից արվեստի այդ ներկայացուցիչները, որոնք իրենց իրական էությանը համարյա ոչնչություններ են, առանց *լինելիական գիտակցության* նշույլի իրենց մասին կեղծ կարծիք են կազմում, որ իրենք այնպիսին չեն, ինչպես ուրիշները, այլ, ինչպես իրենք են իրենց կոչում, «ավելի վեհ» են, ինչի արդյունքում այդ տիպերի ընդհանուր ներկայություններում կունդաբուժե՛ր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացումն ավելի ինտենսիվ է տեղի ունենում, քան այնտեղի մնացած եռուղեղ էակների մոտ:

Հենց այդ թշվառ եռուղեղ էակների նկատմամբ են սովորական լինելիական գոյատևման աննորմալ շրջակա պայմաններն այնքան արմատացած, որ նրանց ընդհանուր ներկայություններում անպայմանորեն բյուրեղանում և նրանց հոգեկառույցի անքակտելի մասն են դառնում կունդաբուժե՛ր օրգանի այն հետևանքները, որոնք իրենց մոտ կոչվում են «պարծենկոտություն», «գոռոգություն», «եսասիրություն», «սնապարծություն», «ինքնագոհություն», «ինքնասիրահարվածություն», «նախանձ», «ատելություն», «նեղացկոտություն» և այլն, ևայլն:

Թվարկված հետևանքները հատկապես զգալի և ուժեղ են բյուրեղացվում ժամանակակից արվեստի հենց այն *«ներկայացուցիչներին»* մոտ, որոնք ժամանակակից թատրոնների «խեղկատակներն» են. հատկապես ուժեղ են բյուրեղացվում այն պատճառով, որ մշտապես խաղալով իրենց նման էակների դերեր, որոնց *Լինելիությունն* ու *նշանակալիությունն* անհամեմատ բարձր է իրենց ունեցածից, նրանք, ինչպես արդեն ասել եմ, ըստ էության լինելով համարյա ոչնչություններ,

աստիճանաբար, հենվելով արդեն լիովին մեխանիկական դարձած իրենց բանականության վրա, իրենք իրենց մասին կեղծ պատկերացում են կազմում:

Ունենալով ամբողջովին մեխանիկական դարձած «գիտակցություն» և կատարելապես «անհեթեթ գզացմունքներ»՝ նրանք իրենք իրենց անհամեմատ ավելի բարձր են պատկերացնում, քան իրականում կան:

Պետք է խոստովանեն, սիրելի Հասեին, որ թեև այդ մոլորակի մակերևույթ կատարած մեր նախկին այցելությունների ժամանակ, ինչպես և վերջին այցելության սկզբում ես լինում էի ամենուրեք և զանազան հարաբերությունների մեջ մտնում քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հետ, համարյա երբեք իմ ընդհանուր ներկայությունում ճշմարիտ *լինելիական խղճահարության* ազդակ չզգացի քո սիրելիների անսահման դժբախտ ճակատագրի նկատմամբ, որը ձևավորվել է իրենցից անկախ հանգամանքների բերումով:

Բայց երբ մեր վեցերորդ և վերջին այցելության վերջում նրանցից ոմանց մոտ այնպիսի ներքին ներկայություն ձևավորվեց, ինչպիսին այժմ ունեն իրենց այդ արվեստի համարյա բոլոր բնագավառների ներկայացուցիչները, և երբ այդ նոր կազմավորված տիպերը, իրավահավասարության հիմունքով մնացած եռուղեղ էակների հետ մասնակցելով սովորական *լինելիական գոյատևման* գործընթացին, իրենց չափազանցացված աննորմալ ներքին, այսպես կոչված, «*լինելիական ինքնագնահատականով*» հայտնվում էին իմ տեսողության ամբողջական ընկալման մեջ, իմ ներսում խղճահարության ազդակ էին առաջացնում ոչ միայն հենց իրենց, այլև ընդհանրապես բոլոր քո տարաբախտ սիրելիների նկատմամբ:

Բայց այժմ ուշադրություն դարձրու ոչ թե ընդհանրապես բոլոր եռուղեղ էակների և ոչ թե նրանց ժամանակակից արվեստի բոլոր ներկայացուցիչների վրա, այլ միայն նրանց վրա, ովքեր դարձել և սկսել են կոչվել արտիստներ կամ դերասաններ:

Թեև բոլոր նրանք, ըստ էության, իրենց իրական բնույթի առումով համարյա, այսպես կոչված, ոչնչություններ են, այսինքն՝ բացարձակ դատարկություններ՝ պատված ինչ-որ տեսանելիության քողով, բայց իրենք իրենց մասին այդպիսի կարծիք են կազմել՝ հիմնված միշտ և ամենուրեք իրենց իսկ կողմից կրկնվող ու սիրված այնպիսի բարձրագույն ճիշտի վրա, ինչպիսիք են՝ «հանճար», «տաղանդ», «շնորհալի» և էլի մի շարք բառեր, որոնք նույնքան դատարկ են, որքան հենց իրենք, կարծես թե շրջապատի էակների մեջ միայն իրենք ունեն «աստվածային ծագում» կամ միայն իրենք են համարյա թե «Աստված»:

Այժմ լսիր և աշխատիր հարկ եղած դեպքում կիրառելու համար նախագոյացնել քո ընդհանուր ներկայության համապատասխան մասերում իմ խորհուրդը, որն իսկապես շատ գործնական բնույթ ունի:

Իմ այդ գործնական խորհուրդն այն է, որ եթե երբևէ, հատկապես մոտ ապագայում, քեզ վիճակվի գոյատևել քո հետաքրքրությունը շարժած Երկիր մոլորակի եռուղեղ էակների միաջավայրում (ասում եմ՝ «մոտ ապագայում», քանի որ քո հետաքրքրությունը շարժած էակների ներկայություններն ու նրանց սովորական *լինելիական գոյատևման* բոլոր արդեն կայունացած արտաքին պայմաններն անընդհատ հետընթաց են ապրում), և եթե գիտակից եռուղեղ էակին արժանի ինչ-որ աշխատանք ունենաս, որի հիմնական նպատակը շրջապատի էակներին բարիք բերելն է, և որի կատարումը մասամբ կախված է հենց իրենցից, ապա, ժամանակակից քաղաքակրթության ո՞ր հանրությունում էլ դա տեղի ունենա, եթե գործի բերումով քեզ վիճակվի հանդիպել երկրային ժամանակակից այդ տիպերի հետ իրենց, այսպես կոչված, «նեղ շրջապատում», դու պետք է անպայման շատ ու շատ զգույշ լինես, որպեսզի կարողանաս նրանց հետ պահպանել լավ հարաբերություններ:

Որպեսզի քեզ համար պարզ լինի, թե ինչու պետք է զգույշ լինես նրանց հետ, նաև այն բանի համար, որ դու ավելի լավ պատկերացնես և համակողմանիորեն հասկանաս ներկայումս առաջացած այդ երկրային տիպերին, ես անպայման պետք է հիշատակեմ ևս երկու փաստ, որոնք այնտեղ լիովին ակներև են դարձել:

Առաջինն այն է, որ կրկին նույն այդ սովորական լինելիական գոյատևման այնտեղ հաստատված աննորմալ պայմանների, ինչպես նաև իրենց նշանավոր արվեստի նկատմամբ գոյություն ունեցող «դիտմամբ ուռճացված» չարաղետ պատկերացման հետևանքով արվեստի այդ ներկայացուցիչներն այնտեղի մնացած եռուղեղ էակների կողմնակալ պատկերացումներում ու կարծիքներում պարուրվում են, ինչպես արդեն ասացի, երևակայական լուսապսակով և դրանով իսկ մեքենայաբար

անարժան հեղինակություն են ձեռք բերում, ինչի հետևանքով մնացած բոլոր քո սիրելիները համարում են, որ միշտ և ամեն ինչի վերաբերյալ նրանց արտահայտած ցանկացած կարծիք հեղինակավոր է և անվիճելի:

Իսկ երկրորդ փաստն այն է, որ վերջերս այնտեղ առաջացած այդ ժամանակակից տիպերն իրենց կազմավորմանը զուգընթաց այնպիսի ներքին ներկայություն են ձեռք բերում, որի շնորհիվ միանգամայն անգիտակցաբար հեշտությամբ ուրիշի ստրուկն են դառնում կամ նրա ամենաոխերիմ թշնամին՝ սոսկ արտաքին պատահական պայմանների հետևանքով:

Ուստի և ես քեզ խորհուրդ եմ տալիս շատ ու շատ զգույշ լինել և նրանց մեջ թշնամիներ չվաստակել, որպեսզի քո գործունեության ընթացքում բազմաթիվ դժվարությունների չհանդիպես:

Այսպիսով, սիրելի Հասեին, իմ խորհրդի հիմնական «ցիմեսն» այն է, որ եթե քեզ իսկապես վիճակվի գոյատևել այդ Երկիր մոլորակի էակների միջավայրում և գործ ունենալ ժամանակակից արվեստի այդ ներկայացուցիչների հետ, ապա դու նախ և առաջ պետք է իմանաս, որ երբեք նրանց երեսին ճշմարտությունը պետք չէ ասել:

Թո՛ղ որ ճակատագիրը քեզ ազատի դրանից...

Ցանկացած ճշմարտություն առաջացնում է նրանց ծայրահեղ վրդովմունքը, և ուրիշների նկատմամբ նրանց թշնամանքը համարյա միշտ ծայր է առնում հենց այդպիսի վրդովմունքից:

Նման երկրային տիպերի երեսին դու պետք է ասես միայն այնպիսի բաներ, որոնք «կշոյեն» իրենց ներսում անպայմանորեն բյուրեղացված կունդաբուֆեր օրգանի հատկությունների այնպիսի հետևանքները, որոնք ես արդեն թվարկեցի, դրանք են՝ «նախանձը», «գոռոզությունը», «եսասիրությունը», «սնափառությունը», «կեղծությունը» և այլն:

Իսկ հաճոյանալու միջոցները, որոնք անսխալ կերպով ազդում են քո այդ սիրելիների հոգեկառույցի վրա, ինչպես նկատել եմ վերջին անգամ իմ այնտեղ եղած ժամանակ, հետևյալներն են:

Ենթադրենք, արվեստի այդ ներկայացուցիչներից մեկի դեմքը կոկորդիլոսի մոտիվ է հիշեցնում. այդ դեպքում անպայման ասա նրան, որ ինքը իսկական դրախտի թռչուն է:

Եթե մեկը հիմար է խցանի պես, ասա, որ Պյութագորասի խելքի տեր է:

Եթե մեկը որևէ գործում իրեն ակնհայտորեն «գերապուշի» պես է դրսևորում, ապա նրան ասա, որ նույնիսկ գերխորամանկ Լյուցիֆերը չէր կարող ավելի լավ բան հորինել:

Ենթադրենք, մեկի դիմագծերին դու տեսնում ես երկրային մի քանի հիվանդությունների նշաններ, որոնց հետևանքով նա օր օրի քայքայվում է. այդ դեպքում, զարմացած տեսք ընդունելով, հարցրու նրան. «Ասա՛ ինձ խնդրեմ, ո՞րն է այդքան թարմ տեսք ունենալուդ գաղտնիքը. կարծես «կաթ ու արյուն լինես» և այլն:

Միայն մի բան հիշիր՝ երբեք չասել ճշմարտությունը:

Թեև դու այդպես պետք է վարվես այդ մոլորակի ընդհանրապես բոլոր էակների հետ, բայց հատկապես հետևողական եղիր, երբ գործ կունենաս ժամանակակից արվեստի բոլոր բնագավառների ներկայացուցիչների հետ:

Այսքանն ասելով՝ Ահունը սկսեց իրար վրա դարսել իր պոչի հանգույցները այնպես սեթևեթանքով, ինչպես մերձմուսկովյան խնամախոսուհին՝ իր հաճախորդների հարսանիքի ժամանակ կամ փարիզյան մոդայիկ արհեստանոցի տիրուհին, այսպես կոչված, «ճոխ սրճարանում»:

Հասեինն էլ իր հերթին նայեց նրան իր սովորական անկեղծ ու երախտագետ հայացքով և ասաց.

– Անչափ շնորհակալ եմ, սիրելի՛ Ահուն, և՛ քո խորհրդի, և՛ այն բացատրությունների համար, որ տվեցիր մեր Մեծ Տիեզերքի բոլոր առումներով մեկուսացված այդ մոլորակի վրա ապրող եռուղեղ էակների հոգեկառույցի տարօրինակությունների վերաբերյալ:

Ապա նա հետևյալ խոսքերով շրջվեց Բեհեդգեբուղի կողմը.

– Ասա՛ խնդրեմ, սիրելի՛ պապիկ, հնարավո՞ր է արդյոք, որ բաբելոնյան էակների բոլոր մտադրություններն ու ջանքերն իսկապես ոչ մի արդյունք տված չլինեն այդ տարօրինակ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակների համար և այն ժամանակ արդեն Երկրում հայտնի գիտելիքների ոչ մի մասնիկ բոլորովին հասած չլինի նրանց:

Թոռան այդ հարցին Բեհեդգեբուղն այսպես պատասխանեց.

– Ի մեծ ցավ Տիեզերքի համայն գոյի, տղաս, նրանց աշխատանքի արդյունքներից համարյա ոչինչ չի պահպանվել և, հետևաբար, ոչինչ չի հասել ներկայիս քո սիրելիներին:

Նկարագրածու եղանակով նրանց ցուցադրած տեղեկատվությունը միայն իրենց հաշվարկով մի քանի դար է փոխանցվել սերնդեսերունդ:

Իրենց գլխավոր առանձնահատկության, այն է՝ «պարբերաբար փոխոչնչացման գործընթացի» պատճառով այնտեղի սովորական էակների մոտ համարյա ամբողջությամբ կորսվել է ոչ միայն Յոթնագրյանքի օրինաչափ անճշտությունների բանալիներին վերաբերող լեզունիիզմը, որն առկա էր «*լինելիական աֆալկանների*» և «*սոլջինոդների*» բոլոր բնագավառներում, այլ նաև, ինչպես արդեն քեզ ասել եմ, աստիճանաբար կորսվել է հենց սրբազան Յոթնապարապարշինոդ Համընդհանուր Օրենքի հասկացությունը, որին Բաբելոնում Յոթնագրյանք էին կոչում:

Բաբելոնյան շրջանի էակների գիտակցական բոլոր ստեղծագործություններն աստիճանաբար ոչնչացվեցին՝ մասամբ ժամանակի քայքայիչ ազդեցությամբ, մասամբ էլ իրենց «փոխադարձ ոչնչացման» գործընթացների՝ հոգեգարության այն աստիճանի հետևանքով, որը կոչվում է «*տեսանելիության ոլորտում գոյություն ունեցող ամեն ինչի ոչնչացում*»:

Գլխավորապես այդ երկու պատճառներով են այդ չարաբաստիկ մոլորակի երեսից աստիճանաբար ոչնչացել Բաբելոնյան դարաշրջանի գիտուն էակների գիտակցորեն ի կատար ածված արդյունքները, ընդ որում այնպիսի արագությամբ, որ իրենց ժամանակով ընդամենը երեք դար հետո համարյա ոչինչ չէր մնացել:

Հարկ է նշել նաև, որ նշված պատճառներից երկրորդի բերումով աստիճանաբար նվազեց և ի վերջո իսպառ դադարեց, այսպես կոչված, «արվեստի ձեռնադրյալների» միջոցով Բաբելոնի ժամանակներում հաստատում գտած՝ հետագա սերունդներին տեղեկատվության և գիտելիքների զանազան պատահիկների փոխանցման այդ ձևը:

Ինձ շատ լավ հայտնի է այնտեղի այն ավանդույթի վերացման մասին, որը վերաբերում է որոշ էակների՝ արվեստի ձեռնադրյալ դառնալուն, քանի որ այդ մոլորակն ընդմիշտ լքելուց առաջ պետք է այդ հարցը մանրագին հետազոտելի մի այլ նպատակով:

Դա պարզելու նպատակով ես նույնիսկ կին էակների թվից մի շատ լավ «թիկլունիա»²⁶ նախապատրաստեցի և նրա միջոցով պարզեցի այդ հարցը:

Թիկլունիաներին նախկինում «պյութիաներ» էին կոչում, իսկ հիմա կոչում են «մեղիումներ»:

Եվ ահա պարզեցի, որ մինչև վերջին ժամանակները դեռևս մնացել են չորս այդպիսի էակներ՝ արվեստի ձեռնադրյալներ, որոնց «ուղիղ ժառանգորդության գծով» դեռևս փոխանցվում են հինավուրց արվեստը հասկանալու բանալիները, և ժառանգաբար այդ փոխանցումն այնտեղ այժմ տեղի է ունենում մեծագույն բարդության և գաղտնիության պայմաններում:

Արվեստի այդ չորս ձեռնադրյալներից մեկը ծագումով, այսպես կոչված, «կարմրամորթ» է, որն ապրում է Ամերիկա աշխարհամասում, մյուսը Ֆիլիպինյան կղզիներում ապրողների թվին է պատկանում, երրորդը Ասիա աշխարհամասի էակներից է՝ մի երկրից, որն անվանում են «*Փյանջ*»²⁷ գետի ափունք», իսկ չորրորդն ու վերջինը՝ «էսկիմոսների» ցեղին է պատկանում:

Հիմա լսիր, թե ինչու «համարյա» բառն օգտագործեցի, երբ ասացի, որ Բաբելոնյան դարաշրջանից երեք դար անց «համարյա» իսպառ դադարեցին գոյություն ունենալ *լինելիական աֆալկանների* և սոլջինոդների բոլոր գիտակցական և ինքնաբերական ստեղծագործությունները:

Բանն այն է, որ Բաբելոնյան դարաշրջանի էակների ստեղծած երկու տեսակի գիտակցական ստեղծագործություններ պատահաբար հայտնվել են բարենպաստ պայմաններում, և դրանց որոշ մասը, սերնդեսերունդ անցնելով, էակների կողմից փոխանցվել է մասամբ գիտակցորեն, մասամբ էլ մեքենայաբար:

Հիշյալ տեսակներից մեկը վերջերս դադարեց գոյություն ունենալ, բայց մյուսը համարյա առանց փոփոխության հասել է ներկայիս էակներից ոմանց:

Ներկայիս էակներին հասած այդ տեսակը «սրբազան պարեր» անունն է կրում:

Եվ Բաբելոնյան ժամանակների գիտուն էակներից մնացած այդ տեսակի շնորհիվ է միայն, որ այնտեղ հիմա շատ սահմանափակ թվով էակներ հնարավորություն ունեն գիտակցական որոշակի ջանքերի միջոցով գաղտնագրեծել և ուսումնասիրել դրանում առկա այն ծածկագրված տեղեկատվությունը, որն օգտակար է իրենց Լինելիության համար:

²⁶ ռուս. տարբերակում՝ тиклуний , անգլ. տարբերակում՝ tikloonia

²⁷ ռուս. տարբերակում՝ Пяндж, անգլ. տարբերակում՝ Pianje

Իսկ հիշյալ տեսակներից երկրորդը, որը վերջերս դադարեց գոյություն ունենալ, բաբելոնյան գիտուն էակների այն ոլորտն էր, որը նրանք անվանեցին «գույնի տարբեր երանգների համադրություն», իսկ ժամանակակից էակներն անվանում են «կերպարվեստ»:

Այդ տեսակը համարյա ամենուրեք մի սերնդից մյուսին էր անցնում, բայց ժամանակի ընթացքում նմանապես ամենուրեք կորսվելով՝ այնուամենայնիվ բոլորովին վերջերս, ինչպես գիտակից ձևով, այնպես էլ ինքնաբերաբար, լիովին նորմալ ռիթմով շարունակություն գտավ միայն «Պարսկաստան» կոչվող հանրության էակների մոտ:

Եվ միայն անմիջապես այն բանից առաջ, երբ ես վերջին անգամ լքեցի քո այդ մոլորակը, նաև երբ ժամանակակից «եվրոպական մշակույթին» պատկանող ու նմանատիպ մասնագիտացում ունեցող էակների ազդեցությունը սկսեց զգացվել նաև այնտեղ՝ Պարսկաստանում, որի հետևանքով էլ այդ հանրության մասնագետները սկսեցին իմաստակություն բանեցնել՝ այդ փոխանցումն իսպառ դադարեց:

Պետք է նաև նկատել, որ անկախ այդ ամենից՝ Բաբելոնի ժամանակներից պահպանված ոչ քիչ քանակությամբ ստեղծագործություններ են հասել ժամանակակից քաղաքակրթության էակներից գլխավորապես նրանց, որոնք բազմաձևում են Եվրոպա աշխարհամասում: Բայց ժամանակակից էակներին հասած այդ ստեղծագործությունները, որոնք ոչ թե բնօրինակներ են, այլ ընդամենը կիսով չափ խաթարված պատճեններ (իրենց ոչ շատ վաղ անցյալի նախնիների կողմից, ովքեր այնքան էլ լավ, այսպես կոչված, «պլագիատորներ» չեն եղել), նրանք պարզապես խցկել են, այսպես կոչված, «թանգարանները»՝ չկասկածելով անգամ, թե «գերիմաստության» ինչպիսի գանձեր կան դրանցում պահված, և, քանի որ համապատասխան գործնական միջոցներ չեն ձեռնարկվել, ապա այդ հինավուրց պատճենները կա՛մ աստիճանաբար ամբողջովին քայքայվում են, կա՛մ մասամբ փչանում են հաճախակի պատճենահանումների հետևանքով, որոնք իրականացվում են զանազան քայքայող կամ թթվեցնող բաղադրանյութերի կիրառությամբ, ինչպիսիք են, օրինակ, «գիպսը», «ձկան սոսինձը» և այլն, և դա արվում է, որպեսզի պատճենահանողներն իրենց ընկերական շրջապատում կարողանան գույն գովել, խաբել իրենց ուսուցիչներին կամ հասնեն իրենց տհասամտության այս կամ այն նպատակին:

Հանուն արդարության պետք է ասել, որ ժամանակ առ ժամանակ ներկայիս քաղաքակրթության որոշ էակներ կասկածներ են ունենում, որ պատահաբար իրենց հասած այդ ստեղծագործությունների բնօրինակներում ինչ-որ բան կա ծածկված՝ հատկապես նրանցում, որոնք ստեղծվել են Բաբելոնի *Լեզուինիզմի հետևորդների* ակումբի անդամների կողմից, կամ այն նմուշներում, որոնք կերտել և մի սերունդից մյուսին են փոխանցել այն բաբելոնիդ մասնագետները, որոնց, ինչպես արդեն ասացի, այնքան էլ հատուկ չի եղել բանագործությամբ զբաղվելը, ուստի նրանք մանրամասնորեն ձևափոխության չեն ենթարկել ուրիշների ստեղծած գործերը, որպեսզի ներկայացնեն որպես իրենցը, և հետևաբար, այդ ինչ-որ բանը լրջորեն փնտրելով, եվրոպական քաղաքակրթության այդ, այսպես կոչված, քննախույզ էակներից ոմանք ի վերջո նույնիսկ գտել էին այդ «ինչ-որ բանը»:

Օրինակ՝ ժամանակակից եվրոպական քաղաքակրթության արշալույսին, Իզնատիոս անունով ոմն վանական, որը նախկինում ճարտարապետ էր եղել, նույնիսկ կարողացել է հասնել այն բանին, որ գաղտնագրերի թաքցված գիտելիքն ու օգտակար տեղեկատվությունը «հինավուրց» արվեստ կոչվածի համարյա բոլոր բնագավառների ստեղծագործություններում, այսինքն նրանցում, որոնք իրեն էին հասել Բաբելոնի ժամանակներից:

Բայց երբ Իզնատիոս վանականը իր այդ, այսպես կոչված, «հայտնագործությամբ» փորձեց կիսվել իր նման էակների, տվյալ դեպքում՝ իր, այսպես կոչված, եղբայրակից երկու վանականների հետ, որոնց հետ ինքը՝ որպես մասնագետ, աբբահոր կողմից ուղարկվել էր, որպեսզի հետազայում նշանավոր դարձած տաճարի, այսպես կոչված, «հիմնարկեքը» ղեկավարի, ապա ընդամենը մի դատարկ բանի պատճառով, որը ծագել է կունդաբուֆեր օրգանի՝ նրանց ներսում բյուրեղացած հատկություններից մեկից և «նախանձ» է կոչվում, նրան սպանում են քնած ժամանակ, իսկ նրա մոլորակային մարմինը նետում այն փոքրիկ կղզին շրջապատող ջրային տարածքը, որի վրա նախատեսված էր կառուցել նշված տաճարը:

Հիշյալ Իզնատիոս վանականը ծնվել և պատասխանատու էակի լինելիության համար կազմավորվել էր Եվրոպա աշխարհամասում, բայց երբ հասել էր պատասխանատու էակի տարիքի, որպեսզի հարստացնի գիտելիքներն իր մասնագիտության՝ «ճարտարապետության» վերաբերյալ, որն իր գոյության նպատակն էր դարձել, ուղևորվել էր Աֆրիկա աշխարհամաս: Եվ նա վանական էր

ձեռնադրվել Աֆրիկայում գոյություն ունեցող մի «եղբայրության» կազմում, որը «Ճշմարտություն որոնողներ» անունն էր կրում. իսկ հետագայում, երբ այդ եղբայրությունը տեղափոխվել էր Եվրոպա աշխարհամաս ու մեծացել, և երբ դրա անդամները սկսել էին կոչվել «Բենեդիկտականներ», նա արդեն այդ եղբայրության «*լիիրավ եղբայր*» էր:

Հիշատակած տաճարը մինչև հիմա գոյություն ունի և կարծես կոչվում է «Մոն-Սեն-Միշել»:

Այդ Եվրոպայում ժամանակ առ ժամանակ էլի մի քանի քննախույզ էակներ օրինաչափ շեղումներ էին նկատում արվեստի տարբեր բնագավառների պատկանող այն ստեղծագործություններում, որոնք պահպանվել էին հինավուրց ժամանակներից. բայց հենց որ գտնում էին այդ շեղումները հասկանալու բանալին, նրանց գոյատևումը մոտենում էր ավարտին:

Եղավ ևս մեկը, այսինքն՝ Եվրոպա աշխարհամասին պատկանող էակ, որը նույնպես նկատեց դրանք, որից հետո, շարունակելով հետաքրքրվել ու ջանադիր աշխատել, կարողացավ ամբողջովին գաղտնագրեծել արվեստի համարյա բոլոր բնագավառների ստեղծագործությունները:

Եվ այդ իմաստուն երկրային եռուղեղ էակին կոչում էին «Լեոնարդո դա Վինչի»:

Ժամանակակից երկրային արվեստին վերաբերող իմ այս պատմության ավարտին ես գուցե թե կարող եմ հիշատակել ներկայիս քաղաքակրթությանը պատկանող և այդ նշանավոր արվեստով զբաղվող էակների ևս մի յուրօրինակ առանձնահատկության մասին:

Այդ յուրօրինակ առանձնահատկությունն այն է, որ ամեն անգամ, երբ որևէ մեկը նշած էակներից, որոնք հինավուրց ժամանակներից իրենց հասած տարբեր ստեղծագործություններում որևէ շատ «օրինաչափ անտրամաբանական բան» են նկատում, սկսում է իր բնագավառում նորովի արարել, հավանաբար որպեսզի գործնականում իր համար պարզի տվյալ օրինաչափ անտրամաբանական բանը, ապա նույն մասնագիտացմանն ու բնագավառին պատկանող և նրա շրջապատում եղած էակներն անմիջապես դառնում են նրա հետևորդները և սկսում անել կարծես թե նույն բանը, բայց, իհարկե, առանց որևէ նպատակի և իմաստի:

Եվ ժամանակակից արվեստի ներկայացուցիչ-էակների հենց այդ հիշյալ «առանձնահատուկ» հոգեկառույցի պատճառով է, որ այնտեղ՝ քո սիրելիների մոտ, մի կողմից անընդհատ առաջանում են արվեստի, այսպես կոչված, նոր «հոսանքներ», իսկ մյուս կողմից՝ դրանցից նրանք, որոնք այս կամ այն կերպ, թեկուզ «որոշակի աստիճանով» կարգավորված են լինում նախորդ սերունդների կողմից, մշտապես անկում են ապրում:

Թեև նույնը տեղի է ունենում ժամանակակից արվեստի բոլոր բնագավառների ներկայացուցիչների մոտ, սակայն, չգիտես ինչու, դրա նկատմամբ առավելապես զգայուն են այն բնագավառի էակները, որոնք զբաղվում են «գեղանկարչությամբ»:

Այդպիսով, ներկայումս այդ ժամանակակից մասնագիտացումներում գոյություն ունեն այդ ճանապարհով ծագած բազմաթիվ «նոր հոսանքներ» գեղանկարչության մեջ, որոնք իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն: Գեղանկարչության այդ նոր հոսանքներն այնտեղ հայտնի են հետևյալ անուններով՝ «կուբիզմ», «ֆուտուրիզմ», «սինթետիզմ», «իմեջինիզմ», «իմպրեսիոնիզմ», «քուլուրիզմ», «ֆորմալիզմ», «այուրռեալիզմ» և շատ ուրիշներ, որոնք բոլորն էլ «իզմ»-ով են վերջանում:

Բեհեդգեբուղի պատմության այս մասում «Քարնակ» միջտարածական տիեզերանավի բոլոր ուղևորների սմբակները հանկարծակի սկսեցին, այսպես ասած, «ֆուսֆորափայլ» ճառագել:

Դա նշանակում էր, որ «Քարնակ» տիեզերանավը մոտենում է իր հանգրվանին՝ Բեվոզվրադենդր մոլորակին: Ուստի նավը լքել պատրաստվող ուղևորներն իրար անցան:

Բեհեդգեբուղը, Հասեինը և Ահունն ավարտեցին իրենց զրույցը և իրենք նույնպես հապճեպորեն սկսեցին պատրաստվել դուրս գալու:

Մմբակները ֆոսֆորափայլ լույս արձակեցին այն բանի պատճառով, որ մեքենայական բաժանմունքից դեպի նավի այդ հատվածն էին ուղղորդվել սրբազան Ամենաթափանց Ոգիդնողի որոշակի համամասնությամբ խտացված սուրբ մասերը:

ԳԼՈՒԽ ԼԱ
Բեհեղզեբուղի վեցերորդ և վերջին այցը
Երկիր մուրակ

Երբ երկու «օրնակրա» կամ, ինչպես Երկիր մուրակում են ասում, երկու «ամիս» անցնելուց հետո միջհամակարգային «Քարնակ» տիեզերանավը դուրս եկավ Բեվոզվրադենդր մուրակի մթնոլորտի սահմաններից և սկսեց հետադարձ անկում կատարել դեպի «Պնդեցնող» արևային համակարգի Քարատակ մուրակը, Հասեինը, նստելով իր սովորական տեղում, Բեհեղզեբուղին դիմեց հետևյալ խոսքերով.

– Իմ թանկագին և սիրելի պապի՛կ, բարի եղիր ինչպես միշտ, և էլի ինչ-որ բան պատմիր այն եռուղեղ էակների մասին, որոնք բազմանում են Երկիր կոչվող մուրակի վրա:

Դրան ի պատասխան՝ Բեհեղզեբուղը պատմեց Երկիր մուրակ կատարած իր վեցերորդ և վերջին այցելության մասին:

Նա սկսեց այսպես.

«Ես այդ մուրակի վրա վեցերորդ անգամ եղա հենց այն բանից առաջ, որ ինձ լիակատար ներում շնորհվեց և թույլատրվեց լքել այն չափազանց հեռավոր արևային համակարգը, որը գտնվում է համարյա թե Ամենասրբազնագույն Բացարձակ Արևի ճառագումների հասանելիության սահմաններից դուրս, այսինքն՝ այն բանից առաջ, երբ վերադարձա այստեղ՝ Տիեզերքի կենտրոնը՝ իմ ծագման վայրը կամ անմիջականորեն Համընդհանուր Միագո Անսահմանության գիրկը:

Այս անգամ հանգամանքներն անսպասելիորեն այնպես դասավորվեցին, որ ինձ վիճակվեց այդ յուրօրինակ էակների միջավայրում գոյատևել բավականին երկար՝ մեր ժամանակով երեք տարուց մի քիչ պակաս, կամ, ըստ նրանց ժամանակի՝ ավելի քան երեք հարյուր տարի:

Քեզ դուր եկած մուրակի մակերևույթին վերջին անգամ հայտնվելուս սկբնապատճառ հանդիսացան հետևյալ հանգամանքները:

Հարկ է, որ իմանաս, որ այդ մուրակի մակերևույթ կատարած իմ հինգերորդ այցից հետո, ինչպես և նախկինում, ես շարունակել եմ ժամանակ առ ժամանակ հետևել քեզ դուր եկած եռուղեղ էակների գոյատևման ընթացքին:

Ես նրանց հատկապես ուշադիր էի դիտում այն ժամանակահատվածներում, երբ նրանք դրսևորում էին իրենց գլխավոր առանձնահատկությունը՝ «փոխադարձ ոչնչացման» գործընթացը:

Իսկ ուշադիր դիտելուս պատճառն այն էր, որ ուզում էի ինձ համար լիակատար անկասկածելիությամբ պարզել նրանց տարօրինակ հոգեկառույցի պարբերաբար դրսևորվող և չափազանց ահավոր պահանջմունքի պատճառը, ինչը, հիրավի, ահավոր էր արտառոցության աստիճան:

Երբ համեմատաբար ազատ էի լինում, երբեմն մարայան համարյա ամբողջ ցերեկը կամ գիշերը դիտում էի այդ գործընթացների ժամանակ տեղի ունեցող զանազան դրսևորումները:

Եվ ահա, շնորհիվ իմ այդ հատուկ դիտումների, որոնք կատարել էի թե՛ Մարսից, թե՛ իմ նախկին այցելությունների ժամանակ, ես ի վերջո քիչ թե շատ հստակ պատկերացում ստացա բոլոր այն միջոցների և եղանակների մասին, որոնք նրանք կիրառում են փոխադարձաբար մեկը մյուսի գոյությանը վերջ տալու նպատակով:

Եվ ահա, զավակս, մի անգամ, երբ սովորականի պես իմ մեծ տեսքահանով Մարս մուրակից դիտում էի նրանց այդ գործընթացներից մեկը, հանկարծ նկատեցի այն, ինչը սկզբնապատճառ դարձավ, որպեսզի ձեռնարկեմ իմ վեցերորդ վայրէջքն այնտեղ. այն է՝ այդ անգամ տեսա, որ տեղից չշարժվելով՝ նրանք անում են մի բան, ինչի արդյունքում ծխի ոչ մեծ ամպ է գոյանում, որից հետո հակադիր ճակատում էակներից մեկն անմիջապես վայր է ընկնում՝ կա՛մ լրիվ ոչնչացված, կա՛մ իր մուրակային մարմնի որևէ մասը խեղանդամված կամ ամբողջովին ոչնչացված:

Փոխադարձ ոչնչացման նման միջոց նախկինում ես երբեք չէի տեսել, և իմ ներկայության մեջ դեռ չէին բյուրեղացվել տվյալներ, որպեսզի համադրական տրամաբանական բացատրություն գտնեմ նրանց այդ հնարավորության համար, որ նման միջոց են կիրառում իրենց նման էակների գոյատևմանը վերջ տալու նպատակով:

Բոլոր նրանց եղանակների և միջոցների վերաբերյալ, որոնց նպատակը փոխադարձաբար իրար ոչնչացնելն է, մինչ այդ ես որոշակի տրամաբանական համադրում ունեի, որն ինձ բացատրում էր, թե

հատկապես շրջապատի ինչպիսի պատահաբար ծագող գործոններ են գրգռում այն ազդակներն ու խթանները, որոնց արդյունքում նրանց էությունն աստիճանաբար հասնում է այդպիսի անսովոր *լինելիական ունակության*, որ մեկ էլ հանկարծ սկսում են վերջ տալ իրենց նման էակների գոյությանը:

Բայց իրար ոչնչացնելու այդ նոր միջոցի համար, որն առաջին անգամ տեսա, իմ նախկին տրամաբանական և հոգեբանական բացատրությունները միանգամայն անկիրառելի էին:

Նախկինում ինքս ինձ բացատրում էի, թե նրանց հոգեկառույցին բնորոշ այդպիսի բացառիկ աննորմալ հատկանիշը տվյալ դարաշրջանի էակներն իրենք չեն ձեռք բերում, այլ, ինչպես ես էի հասկանում, այդ պարբերական *լինելիական պահանջմունքը* երկար դարերի ընթացքում աստիճանաբար է ձեռք բերվել և ուժեղացվել, իհարկե, էլի գոյատևման այն աննորմալ պայմանների պատճառով, որոնք հաստատվել էին նախորդ սերունդների էակների կողմից. և ի վերջո այդ *լինելիական պահանջմունքն* արդեն բնորոշ է դարձել ժամանակակից եռուղեղ էակներին՝ իրենցից անկախ արտաքին հանգամանքների հետևանքով, և անպայման դրանով զբաղվելը դարձել է նրանց յուրահատկությունը:

Եվ իսկապես, զավակս, այդ գործընթացների սկզբում նրանք բնագոյաբար զսպում են այդ անբնական դրսևորումը, բայց հետո, երբ արդեն իրենց շրջապատում ընթացող բուն գործընթացում կամա-ակամա տեսնում և համոզվում են, որ իրենց նմանների գոյատևմանը վերջ տալն այդքան հեշտ է կատարվում, և ոչնչացվողների թիվն էլ անընդհատ աճում է, ապա ակամա նրանցից յուրաքանչյուրը սկսում է բնագոյով զգալ և ինքնաբերաբար արժեքավորել սեփական գոյությունը:

Եվ իր աչքով տեսնելով, որ սեփական գոյությունից զրկվելու հնարավորությունը տվյալ պահին կախված է բացառապես թշնամական կողմի դեռևս չոչնչացված էակների թվաքանակից, նա, իր երևակայության մեջ առկա «վախկոտություն» կոչվող ազդակի ուժեղացող ազդեցության հետևանքով և ի վիճակի չլինելով ամեն պահի խելամիտ դատողություններ անել իր առանց այն էլ թուլացած *լինելիական մտածողությամբ*, ինքնապաշտպանության զգացումից դրդված սկսում է թշնամական կողմի որքան հնարավոր է շատ էակների գոյությանը վերջ տալ, որպեսզի դրանով մեծացնի իր սեփական գոյությունը պահպանելու հավանականությունը: Իսկ ինքնապաշտպանության զգացումի ուժեղացմանը զուգընթաց՝ նրանք հասնում են, ինչպես իրենք են ասում, «գազանության» վիճակի:

Իսկ ինչ վերաբերում է իրենց նմանների գոյությանը վերջ տալու այն միջոցին, որը ես այն ժամանակ տեսա, ապա դրա նկատմամբ հնարավոր չէր կիրառել այն տրամաբանական համադրումը, ինչին ես նոր հանգեցի, այն պարզ պատճառով, որ ես այն ժամանակ հստակ տեսա, որ թշնամական կողմերը բավականին հեռու են իրարից, կովող էակները յուրայինների շրջապատում են գտնվում, և որ այդ կիսաբարենպաստ պայմաններում նրանք հանգիստ ու բացարձակապես սառնասրտորեն, այսպես ասած, ուղղակի ձանձրությից, «ինչ-որ բան» են անում «ինչ-որ բանի» միջոցով և դրա արդյունքում վերջ են տալիս իրենց նման էակների գոյությանը:

Եվ ահա, փոխադարձ ոչնչացման իրենց այդ նոր միջոցն էլ հենց իմ էության մեջ ուժեղացրեց այն պահանջմունքը, որ մանրագնին կերպով պարզեմ ու հասկանամ բացառապես այդ յուրահատուկ եռուղեղ էակների ներկայություններին բնորոշ դարձած այդ արտառոց տարօրինակ հոգեկառույցի բոլոր իրական պատճառները:

Քանի որ այդ ժամանակ Մարս մոլորակի վրա ես որևէ հատուկ գործ չունեի, որոշեցի անհապաղ վերջացնել բոլոր ընթացիկ գործերս և վայրէջք կատարել քո այդ մոլորակի վրա, որպեսզի հենց տեղում ամեն գնով ինձ համար պարզեմ ինձ մշտապես անհանգստացնող այդ հարցը և այլևս չմտածեմ մեր Մեծ Տիեզերքում առկա նման երևույթների մասին:

Մարսյան մի քանի օր անցնելուց հետո ես թռա այնտեղ, ինչպես միշտ, նույն «Պատահար» տիեզերանավով:

Այս անգամ մենք որոշեցինք վայրէջք կատարել Ասիա աշխարհամասում, «Աֆղանստան» կոչվող տեղանքի հարևանությամբ, քանի որ թոխչքից առաջ իմ տեսքահանով մենք պարզել էինք, որ «*փոխադարձ ոչնչացման գործընթացի բռնկումն*» այդ ժամանակ տեղի էր ունենում հենց նշված անունով երկրում:

Իջնելով Աֆղանստանի մոտակայքում՝ մենք որոշեցինք «Պատահարն» ուղարկել մի այնպիսի կայանատեղ, որը հեռու է այն վայրերից, որոնցում վերջին ժամանակներում բազմացել էին քո սիրելիները:

Թող հայտնի լինի քեզ, որ մեր «Պատահար» նավի համար քո այդ մոլորակի մակերևույթի վրա կայանելու համար հարմար տեղ գտնելը վերջին ժամանակներում արդեն այնքան էլ հեշտ չէ, քանի որ քո սիրելիները, այսպես կոչված, «ծովագնացության» նպատակով բազմաթիվ հարմարանքներ են արտադրել, որոնց իրենք էլ են նավեր ասում, և այդ նավերը մշտապես լողում են տարբեր ուղղություններով՝ գլխավորապես աշխարհամասերի շուրջ:

Իհարկե, մենք կարող էինք մեր «Պատահար» նավն անտեսանելի դարձնել նրանց տեսողական զգայարանի համար, բայց չէինք կարող ի չիք դարձնել նրա ներկայությունը, իսկ այդ դեպքում այն չէր կարող ջրի վրա անշարժ մնալ, քանի որ վտանգ կար, որ նրանց նավերը կարող էին գալ և պատահաբար բխվել:

Ահա այդ պատճառով մենք մեր նավի համար կայանատեղ ընտրեցինք, այսպես կոչված, «Հյուսիսային բևեռը», որտեղ նրանց նավերը դեռևս չէին կարող հասնել:

Մինչ մենք վայրէջք կատարեցինք քո այդ մոլորակի մակերևույթին, Աֆղանստանում ընթացող փոխադարձ ոչնչացման գործընթացը դադարեց. այնուամենայնիվ ես որոշեցի դեռևս գոյատևել այդ Աֆղանստանի մոտակայքում, քանի որ այդ ժամանակահատվածում նրանց այդ գործընթացներն առավել հաճախ ընթանում էին Ասիա աշխարհամասի հենց այդ մասերում:

Եվ քանի որ իմ այդ անձնական այցի ընթացքում նպատակ էի դրել հասնելու այն պատճառների «լիակատար ըմբռնմանը», որոնք անընդհատ անհանգստություն էին պատճառում իմ էությանը, այսինքն՝ ինքս ինձ համար պարզելու այն պատճառների բոլոր կողմերը, որոնք քեզ դուր եկած եռուղեղ էակների հոգեկառույցը դարձրել էին այդքան «աննորմալ», ապա, ինչպես արդեն քեզ ասել եմ, այնտեղից այնպես շուտ չվերադարձա Մարսի իմ տունը, ինչպես նախորդ դեպքերում, այլ գոյատևեցի քո սիրելիների միջավայրում մոտավորապես իրենց երեք հարյուր տարվա չափ:

Այս պահին, երբ սկսում եմ այն տեղեկատվության շարադրանքը, որը վերաբերում է այն արդյունքների վիճակին, որոնք գոյացել են բոլոր այն պատճառներից, որոնք առկա են Երկիր մոլորակի՝ քո հավանությանն արժանացած եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, իմ էությունը հուշում է ինձ և ոգեշնչում իմ «Ես»-ին ու իմ ընդհանուր ներկայության բոլոր առանձին ոգեկոչված մասերին, որպեսզի նախ և առաջ ընդգծեմ, որ քո այդ մոլորակի մակերևույթին իմ վերջին անգամ լինելու ընթացքում ինձ վիճակվեց շատ լրջորեն ուսումնասիրել և նույնիսկ փորձնական ճանապարհով պարզել ոչ միայն քո սիրելիների թվին պատկանող առանձին անհատների հոգեկառույցի մանրամասները, այլ նաև այդ առանձին անհատների ընկալումներն ու դրսևորումներն ամբողջությամբ վերցրած՝ կախված ինչպես շրջապատի պայմանների ու դրանց ծնած արդյունքների համակցություններից, այնպես էլ նրանց պատասխան արձագանքներից:

Իմ այդ պարզաբանիչ փորձերի համար այս անգամ ես ստիպված եղա դիմելու նույնիսկ ընդհանուր գիտելիքներիս այն ճյուղերի օգնությանը, որոնց մենք անվանում ենք «սահունօլթուրիկո²⁸», «գազոմետրոնօլթուրիկո²⁹» և «սակոկինօլթուրիկո³⁰», այսինքն՝ այն բնագավառների օգնությանը, որոնց նմաններն ունեն նաև քո սիրելիները, և նրանք այդ մասնագիտություններն անվանում են «բժշկություն», «ֆիզիոլոգիա» և «հիպնոտիզմ»:

Իմ վեցերորդ անձնական այցելության հենց սկզբում ես իմ փորձարարական հետազոտությունների շնորհիվ ամենայն մանրամասնությամբ պարզեցի, որ նրանց հոգեկառույցի տարօրինակության պատճառների մեծ մասը պարփակված են ոչ թե նրանց սովորական գիտակցության մեջ, միայն որով էլ սովոր են ինքնաբերական կերպով գոյատևել իրենց, այսպես կոչված, արթմնի վիճակում, այլ այն գիտակցության մեջ, որն իրենց սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ լինելու պատճառով աստիճանաբար քշվել է իրենց ընդհանուր ներկայության խորքը և, թեև այն պետք է լիներ նրանց իրական գիտակցությունը, բայց շարունակում է մնալ ցածրակարգ վիճակում և կոչվում է «ենթագիտակցություն»:

Սակայն հենց այդ ենթագիտակցությունն է հենց իրենց հոգեկառույցի այն մասը, որը, եթե հիշում ես, ես քեզ արդեն ասել եմ, առաջին անգամ նկատել է Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը և փաստել, որ

²⁸ ռուս. տարբերակում՝ самонольтурико, անգլ. տարբերակում՝ saonoltooriko

²⁹ ռուս. տարբերակում՝ газометронольтурико, անգլ. տարբերակում՝ gasometronoltooriko

³⁰ ռուս. տարբերակում՝ сакукинольтурико, անգլ. տարբերակում՝ sakookinoltooriko

իրենց հոգեկառույցի այդ մասում դեռևս ամբողջովին հետաձգված չեն ապրել չորրորդ սրբազան ազդակի նախադրյալները, որը կոչվում է «*օբյեկտիվ խիղճ*»:

Երբ ես իմ հիմնական գոյատևման վայր էի ընտրել Ասիա աշխարհամասի կենտրոնում գտնվող «Թուրքեստան» կոչվող վայրը, այնտեղից ոչ միայն ուղևորվում էի այն վայրերը, որոնցում ընթանում էին ինձ հետաքրքրող գործընթացները, այլ նաև ընդմիջումների կամ խաղաղ դադարների ժամանակ ճամփորդում էի՝ լինելով համարյա բոլոր աշխարհամասերում և դրանց ընթացքում հանդիպում էի իրենց, ինչպես իրենք են ասում, «ժողովուրդներից» մեծ մասի էակների հետ:

Այդ ճամփորդությունների ընթացքում ես ոչ մի տեղ երկար չէի մնում, բացառությամբ Ասիա աշխարհամասի մի քանի ինքնիշխան երկրների, ինչպիսիք են՝ «Չինաստանը», «Հնդկաստանը», «Տիբեթը» և, իհարկե, վերջին ժամանակներում ամենամեծ կիսաասիական, կիսաեվրոպական հանրությունը, որը «Ռուսաստան» է կոչվում:

Սկզբում ես իմ գլխավոր նպատակին ուղղված դիտումներից ու հետազոտություններից ազատ ամբողջ ժամանակն այնտեղ տրամադրում էի լեզուներ ուսումնասիրելուն, որպեսզի ամենուրեք այնտեղի զանազան «ժողովուրդներին» պատկանող էակների բոլոր «տիպերի» հետ համապատասխան հարաբերություններ հաստատելու ավելի մեծ հնարավորություններ ունենամ:

Հնարավոր է, որ դու դեռ չգիտես, զավակս, որ միայն այդ չարաբաստիկ մոլորակի վրա գոյություն ունի նաև մի այնպիսի անհավանական անհեթեթություն, որ իրար հետ «բանավոր շփումներ» ունենալու համար, էլի իրենց սովորական գոյատևման աննորմալ արտաքին պայմանների պատճառով, այնտեղ այնքան իրար հետ կապ չունեցող տարբեր լեզուներ ու «բարբառներ» կան, որքան որ առանձին ինքնիշխան խմբեր, որոնց նրանք աստիճանաբար բաժանվել են, մինչդեռ մեր Մեծ Տիեզերքի մյուս բոլոր այն մոլորակներում, որտեղ բնակվում են եռուղեղ էակներ, լինում է միայն մեկ ընդհանուր, այսպես կոչված, «*ձայնով արտահայտվող փոխհաղորդակցություն*»:

Այո... Եվ այդ «բազմալեզվությունն» էլ է քեզ դուր եկած այդ տարօրինակ եռուղեղ էակների բնութագրիչ և բացառիկ առանձնահատկություններից մեկը:

Եվ այնտեղի ցամաքի ամեն մի փոքրիկ հողակտորի վրա պատահաբար առանձնացած ամեն մի նույնիսկ շատ աննշան ինքնիշխան խմբավորման համար այդ էակները ստեղծել են և էլի շարունակում են ստեղծել «բանավոր հաղորդակցության» լրիվ առանձին լեզու:

Այդ պատճառով, այնտեղ՝ Երկիր մոլորակում հիմա այնպես է պատահում, որ երբ այդ մոլորակի մի որևէ տեղի բնակիչը պատահաբար հայտնվում է այդ նույն մոլորակի մի ուրիշ տեղում, ոչ մի կերպ չի կարողանում բանավոր հաղորդակցվել իր նման էակների հետ, եթե նախապես չի սովորել նրանց լեզուն:

Նույնիսկ ես, որ այն ժամանակ կատարելապես սովորել էի իրենց լեզուներից տասնութը, ճամփորդություններին ընթացքում երբեմն այնպիսի վիճակում էի հայտնվում, որ իմ ձիու համար կեր չէի կարողանում ստանալ, չնայած գրպաններս լիքն էին լինում իրենց, այսպես կոչված, «փողով», որի դիմաց սովորաբար նրանք մեծագույն հաճույքով տալիս են այն ամենը, ինչ ուզենաս:

Այնպես կարող է պատահել, որ եթե այդ թշվառ էակներից որևէ մեկին, որն ապրում է այս կամ այն քաղաքում և գիտի դրանում գործածվող բոլոր լեզուները, հարկ լինի ինչ-որ պատճառով կամ առիթով հայտնվել ուրիշ մի վայրում, որը հեռու է իր ապրած տեղից հիսուն, այսպես կոչված, «մղոն», որը մոտավորապես համապատասխանում է մեր «կլինտրան³¹»-ին, ապա այդ թշվառ եռուղեղ էակը, հայտնվելով իր քիչ թե շատ կայուն բնակության վայրից այդքան չնչին հեռավորության վրա, այնտեղի արդեն նշած աննորմալ վիճակի պատճառով և, իհարկե, նաև այն պատճառով, որ այդ դժբախտ էակների ընդհանուր ներկայություններում վաղուց ամբողջովին հետ են աճել բնագդական ընկալման նախադրյալները, բացարձակապես անօգնական է դառնում և ո՛չ կարողանում է խնդրել այն, ինչի կարիքն իսկապես ունի, ո՛չ էլ գոնե մի բառ է հասկանում այն ամենից, ինչ իրեն ասում են:

Նրանց այդ բազմաթիվ լեզուները ոչ միայն իրար հետ որևէ կապ չունեն, այլև դրանցից մեկնումեկը երբեմն այնպիսին է լինում, որ բոլորովին չի համապատասխանում էակների ընդհանուր ներկայությունների այն օրգանների հնարավորություններին, որոնք Բնությունը նախատեսել է այդ նպատակի համար և կոչվում են «ձայնալարեր»։ Նույնիսկ ես, որ այդ առումով անհամեմատ մեծ հնարավորություններ ունեմ՝ բոլորովին չէի կարողանում նրանց որոշ բառերն արտասանել:

³¹ ռուս. տարբերակում՝ клинтранс, անգլ. տարբերակում՝ klintranas

Սակայն Երկիր մոլորակի էակներն իրենք էլ են հասկացել իրենց այդ «անհեթեթությունը», և վերջերս, երբ ես դեռ այնտեղ էի, իրենց տարբեր «պատկառելի» հանրությունների մի քանի «ներկայացուցիչներ» ինչ-որ տեղ հավաքվել էին, որպեսզի համատեղ ջանքերով մի միջոց գտնեն այդ դժվարին վիճակից դուրս գալու համար:

Այդ ժամանակակից «կարևոր» հանրություններից հավաքված ներկայացուցիչների հիմնական նպատակն այն էր, որ գոյություն ունեցող լեզուներից մեկն ընտրեն և ընդհանուր դարձնեն ամբողջ մոլորակի համար:

Սակայն, ինչպես սովորաբար լինում է այնտեղ, այդ իսկապես խելամիտ մտադրությունից բան դուրս չեկավ, բնականաբար, նույն այն սովորական տարաձայնությունների հետևանքով, որոնցով մշտապես ձախողվում են նրանց բոլոր շատ խոստումնալից նախաձեռնությունները:

Կարծում եմ՝ վնաս չի լինի, եթե մի փոքր ավելի մանրամասն քեզ պատմեմ, թե տվյալ դեպքում ինչ պատճառով ծագեցին հիշյալ տարաձայնությունները, քանի որ դա շատ լավ օրինակ կծառայի սովորաբար այնտեղ ծագող «տարաձայնությունները» բնութագրելու համար:

Սկզբում ժամանակակից պատկառելի հանրությունների հիշյալ ներկայացուցիչները, չգիտեմ ինչու, որոշեցին, որ որպես համամոլորակային լեզու ընտրեն ներկայումս այնտեղ գոյություն ունեցող երեք լեզուներից՝ «հին հունարենից», լատիներենից և... բոլորովին վերջերս ժամանակակից էակների կողմից ստեղծված «էսպերանտոյից», մեկը:

Նշված երեք լեզուներից առաջինն այնտեղի այն հինավուրց հանրության էակներն էին ստեղծել «բանավոր հաղորդակցության» համար, որը, ինչպես արդեն պատմել եմ քեզ, կազմավորվել էր ասիական ձկնորսների ոչ մեծ խմբի կողմից և հետագայում դարձել պատկառելի հանրություն, որի էակները երկար ժամանակ մասնագիտացել էին «գիտություններ հորինելու» գործում:

Այդ հանրության էակներից, այսինքն՝ հիշյալ հին հույներից ժամանակակից էակներին են հասել ոչ միայն տարբեր շատ գիտություններ, այլ նաև նրանց լեզուն:

Իսկ երկրորդ լեզուն, որը նրանք առաջարկում էին համամոլորակային դարձնել, այն հինավուրց հանրության լեզուն էր, որը, ինչպես արդեն պատմել եմ, կազմավորվել էր ասիական հովիվների ոչ մեծ խմբի կողմից, որի հետնորդները հետագայում պատճառ դարձան, որպեսզի այնտեղի հաջորդ սերունդների բոլոր էակների ընդհանուր ներկայություններում աստիճանաբար ձևավորվի և ի վերջո ներկայիս էակների մոտ էլ որոշակիորեն ամրապնդվի ու պարտադիր կերպով բնորոշ դառնա այն այլասերված գործառույթը, որի հետևանքով Էվոյուցիայի ձգտելու իմաստով նրանց ներսում առաջացող բոլոր ազդակներն արդեն մեխանիկորեն հենց ծագման պահին կաթվածահար են լինում, և որն իրենք «սեքսուալություն» են անվանում:

Եվ ահա, երբ ժամանակակից այդ «հզորագոր» հանրությունների ներկայացուցիչները հանդիպեցին, որպեսզի համատեղ ուժերով այդ երեք լեզուներից մեկն ընտրեն, չկարողացան այդ ընտրությունը կատարել հետևյալ դատողությունների պատճառով:

Լատիներենը նրանք աղքատ համարեցին բառերի քանակի իմաստով:

Եվ իրոք, տղաս, հովիվներն իրենց սահմանափակ պահանջմունքներով չէին կարող մեծ քանակությամբ բառեր ունեցող լեզու ստեղծել. և թեև լատիներենը հետագայում դարձավ մեծ հանրության լեզու, այնուամենայնիվ, ցոփության համար պահանջվող սոցիալական բառերից բացի, նրանք որևէ բան չէին ստեղծել, որը բավարարեր քո այդ մոլորակի ժամանակակից էակներին:

Իսկ ինչ վերաբերում է հունարեն լեզվին, ապա թեև իր բառարանի հարստությամբ այն կարող էր համամոլորակային լեզու ծառայել, քանի որ նախկին ձկնորսները «հորինել էին» ամեն տեսակի ֆանտաստիկ «գիտություններ» և դրա հետ մեկտեղ հնարել և իրենց լեզվում պահպանել էին համապատասխան շատ բառեր, սակայն հզորագոր հանրությունների այդ ներկայացուցիչներն այդ լեզուն էլ չկարողացան ընտրել մի յուրահատուկ առանձնահատկության պատճառով, որը նույնպես բխում է իրենց նույն այդ տարօրինակ հոգեկառույցից:

Բանն այն է, որ բոլոր այն էակները, որոնք հավաքվել էին համամոլորակային լեզու ընտրելու, պատկանում էին այն հանրություններին որոնք իրենց ժամանակակից քաղաքակրթության օրոք հզոր էին, կամ, ինչպես իրենք են ասում, «մեծ»:

Իսկ այդ հին հունարենով ներկայումս շարունակում են խոսել «Հունաստան» կոչվող ժամանակակից ոչ մեծ հանրության էակները, որոնք թեև նախկին «մեծանուն հույների» հետնորդներն են, բայց իրենց տրամադրության տակ այնքան շատ, այսպես կոչված, «թնդանոթներ» ու «նավեր»

չունեն, որքան ունեն այն կարևոր հանրությունները, որոնց ներկայացուցիչներն էլ հենց հավաքվել էին, որպեսզի միահամուռ կերպով ընդհանուր լեզու ընտրեն ամբողջ մոլորակի համար:

Ուստի, ամենայն հավանականությամբ, այդ ներկայացուցիչներից յուրաքանչյուրը մոտավորապես այսպես էր դատում. «Տե՛ր աստված, միթե՞ կարելի է օգտվել մի լեզվից, որով խոսում են այդպիսի չնչին հանրության էակները. նրանք նույնիսկ թնդանոթներ չունեն, որպեսզի իրենց ներկայացուցիչների համար իրավահավասար մասնակցություն ապահովեն մեր «միջազգային թեյախմության» գործին»:

Եվ իսկապես, այնտեղի այդպիսի ժամանակակից էակները, որոնք կարևոր հանրությունների ներկայացուցիչներ են դառնում, իհարկե, գաղափար անգամ չունեն այն իրական պատճառների մասին, թե ինչու՞ հատկապես իրենց նման էակները, որոնք բնակվում են իրենց մոլորակի մակերևույթի այս կամ այն մասում կամ կազմավորում այս կամ այն հանրությունը, հանկարծ ինչ-որ ժամանակով «կարևոր» են դառնում կամ «մեծ»:

Նրանք նույնիսկ չեն էլ կասկածում, որ դա տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ տվյալ հանրության էակները ինչ-որ առանձնահատուկ հատկանիշներ են ունենում, այլ կախված է բացառապես այն բանից, թե իրենց մոլորակի մակերևույթի հատկապես ո՞ր մասում է, որ, իրենց արևային համակարգության ներդաշնակ շարժմանը համապատասխան, մեծագույն համընդհանուր *տրոգովտոէզոկրատական* գործընթացի նպատակների համար տվյալ ժամանակահատվածում ավելի շատ է պահանջվում այն թրթիռներից, որոնք առաջանում են կա՛մ իրենց իսկ ճառագումներից, կա՛մ իրենց հետ կատարվող սրբազան Ռասկուարնոյի գործընթացից:

Ինչ վերաբերում է երրորդ լեզվին, որը նույնպես այդ հավաքված ներկայացուցիչներից ոմանք առաջարկում էին ընդունել որպես համամոլորակային լեզու այսինքն՝ էսպերանտո կոչվող լեզվին, ապա, ըստ էության, դրա շուրջն այն ժամանակ սովորական կամ, ինչպես իրենք են բնորոշում՝ «փրփուրը բերաններին» վեճեր չծավալվեցին. նույնիսկ իրենց խղճուկ բանականությամբ նրանք միանգամից գլխի ընկան, որ այդ լեզուն ոչ մի կերպ չի կարող օգտակար լինել իրենց նպատակների համար:

Այդ լեզուն հորինողները երևի թե երևակայել են, որ լեզու ասածն իրենց ժամանակակից գիտության պես մի բան է, ինչը կարելի բստրել սեփական աշխատասենյակում նստած. և իրոք, նրանց մտքով չէր էլ անցել, որ ցանկացած քիչ թե շատ «գործածական» լեզու կարող է ձևավորվել միայն շատ հարյուրամյակների ընթացքում այն էլ միայն քիչ թե շատ նորմալ կայացած *լինելիական գոյատևման* գործընթացում:

Այնտեղի այդ նոր հայտնագործությունը՝ էսպերանտո լեզուն, գուցե թե պետք զար մեր մեծապատիվ մոլլա Նասրեդինին, որպեսզի դրանով այնպիսի անեկդոտներ հորինի, որ եփած հավի ծիծաղը գա:

Կարճ ասած՝ համամոլորակային լեզու ունենալու իրենց այդ շատ խոստումնալից նախաձեռնությունն իրենց այդ «գերանհեթեթությունը» ոչնչով չփոխեց, և ամեն ինչ մնաց նույնը ընդհուպ մինչև ներկա ժամանակները, այսինքն այդ ոչ մեծ մոլորակն իր ոչ մեծ «կիսամեռ ցամաքով» հանդերձ շարունակում է մնալ, ինչպես էլի մեր սիրելի ուսուցիչ մոլլա Նասրեդինն է ասում՝ «հազարալեզու հիդրա»:

Այսպիսով, զավակս, երբ ես սկսեցի իմ հետազոտությունները, որպեսզի հիմնովին հասկանամ իմ առջև դրված հիմնական նպատակին առնչվող բոլոր այն պատճառները, որոնք քեզ դուր եկած մոլորակի եռուղեղ էակների ներկայություններում ձևավորել են այդպիսի յուրօրինակ հոգեկառույց, և երբ շուտով անհրաժեշտություն ծագեց որոշ, այսպես կոչված, «քողարկված մանրամասներ» պարզելու իրենց այդ հոգեկառույցի ընդհանուր ներկայության մեջ՝ վերջին անգամ իրենց միջավայրում գտնվելուս հենց ամենասկզբում իմ առջև հանկարծակի մի շատ լուրջ դժվարություն ծագեց. այն է՝ իրենց ենթագիտակցության մեջ գտնվող այդ քողարկված հատկանիշները բացահայտել հնարավոր է միայն հենց իրենց գիտակցական օգնությամբ, այսինքն՝ այն գիտակցության օգնությամբ, որը ժամանակի ընթացքում իրենց բնորոշ է դարձել արթնության վիճակում: Դեռ ավելին, ինձ համար պարզ դարձավ, որ անհրաժեշտ է, որ հիշյալ կամավոր օգնությունը ցուցաբերվի բոլոր տեսակի եռուղեղ էակների կողմից, որոնք ընդհանրապես վերջին ժամանակներում այնտեղ լրիվ ձևավորվել են:

Բայց այդ ժամանակ արդեն, ինչպես պարզվեց, համարյա ամբողջովին հետաձ էին ապրել բոլոր այն նախադրյալները, որոնք նրանց ներկայություններում առաջացնում են «անկեղծություն» կոչվող *լինելիական ազդակը*: Հետաձն այն աստիճանի էր, որ նրանք նույնիսկ ցանկության դեպքում չէին

կարողանում անկեղծ լինել ոչ միայն ուրիշ էակաների, այլ նաև հենց իրենք իրենց հետ, այսինքն նրանք այլևս ի վիճակի չեն իրենց ոգեկոչված մասերից մեկով անկողմնակալ քննադատել կամ դատել մյուսին:

Այստեղ պետք է ասել, որ իմ վերջին հատուկ հետազոտությունները ցույց տվեցին ինձ, որ ինքն իր հետ անկեղծ լինելու հարկ եղած նախադրյալների հետաճի պատճառները մի բանի վրա էին հիմնված, իսկ ուրիշների հետ անկեղծ լինելու նախադրյալների հետաճի պատճառները՝ մի այլ բանի:

Նշված առաջին տեսակի նախադրյալների հետաճի հիմքը ծագել է նրանց ընդհանուր հոգեկառույցի կոորդինացիայի խաթարման փաստից:

Բանն այն է, որ իմ՝ վերջին անգամ իրենց միջավայրում լինելու սկզբում, մի կողմից նրանց ընդհանուր ներկայություններում դեռևս շարունակվում էին անընդհատ նախադրյալներ բյուրեղացվել, ինչպես ընդհանրապես բոլոր եռուղեղ էակաների մոտ է լինում, «ինքնագոյություն» կոչվող լինելիական ազդակի համար, որին իրենք «Խղճի Խայթ» են անվանում, և միաժամանակ մյուս կողմից նրանց բոլոր ներքին ու արտաքին դրսևորումները սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում ավելի ու ավելի անվայել էին դառնում եռուղեղ էակաների համար:

Այդ ամենի արդյունքում նրանց ներկայություններում ավելի ու ավելի հաճախ էին հիշյալ Խղճի Խայթ կոչվող *լինելիական ազդակի* պատճառները ծագում: Եվ քանի որ դրա առաջացրած զգացողությունները, որոնք, նման լինելով *լինելիական պարտք-պարտականության* առաջացրածին, անխուսափելիորեն հանգեցնում են եռուղեղ էակաների ընդհանուր ներկայություններին հատուկ «Ինքնասփոփանք» կոչվող *«ժխտող սկզբունքի»* ճնշմանն ու հպատակեցմանը, ապա նրանց մոտ, երբ ի հայտ են գալիս իրենց ընդհանուր ներկայության ամեն տեսակի ներքին ու արտաքին դրսևորումները, որոնք բխում են որևէ առանձին ոգեկոչված տեղայնացման բնական գրգիռներից, որոնք հարկ է, որ ունենան եռուղեղ էակաները, ամեն անգամ իրենց համար տհաճ այդ ինքնագոյության զգացողության առաջացմանը զուգընթաց սկզբում միտումնավոր կերպով իրենց մտածող մասի կողմից և հետո էլ իրենց ձեռք բերած սովորության համաձայն, սկսում է ճնշվել և աստիճանաբար դադարել «ինքնաքննադատությունը»: Այդպիսով, նրանց կառույցում ծագող և անընդհատ աճող այդ «թուլության» պատճառով, որի մշտական կրկնությունն ամբողջովին աններդաշնակ է դարձրել իրենց հոգեկառույցի գործունեությունը, նրանց ընդհանուր ներկայություններից աստիճանաբար համարյա անհետացել են նույնիսկ ինքն իր հետ անկեղծ լինելու այն նախադրյալները, որոնք բնորոշ են մեր Մեծ Տիեզերքի ամեն մի եռուղեղ էակի:

Ընդհանուր ներկայություններից Իրենց նման էակաների հետ անկեղծ *«լինելու ունակության»* նախադրյալների անհետացման համար հիմք է ծառայել փոխհարաբերությունների հենց այն վաղուց հաստատում գտած աննորմալ ձևը, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, հիմնված է տարբեր, այսպես կոչված, «կաստաների» կամ «դասակարգերի» բաժանման վրա:

Երբ նրանց մոտ ծագեց և շատ շուտով պարտադիր դարձավ մեկը մյուսին իրենց այդ զանազան չարաղետ կաստաների մեջ դասելը, այդ ժամանակներից սկսած՝ նրանցից յուրաքանչյուրի ընդհանուր ներկայության մեջ աստիճանաբար բյուրեղացվեցին երկու առանձնահատուկ և հակադիր, այսպես կոչված, «օրգանական հատկանիշներ», որոնց ի հայտ գալը նույնիսկ դադարեց կախում ունենալ ինչպես իրենց սովորական գիտակցությունից, այնպես էլ «ենթագիտակցությունից»:

Այդ երկու հատկանիշներն արտահայտվում են այն բանով, որ նրանց պահվածքն իրար նկատմամբ կա՛մ, այսպես ասած, «ամբարտավան» է լինում, կա՛մ «ստորաբարձ»:

Այդ երկու հատկանիշների դրսևորման ընթացքում կաթվածահար են լինում որևէ մեկի հետ, այսպես կոչված, «հավասար հիմունքներով» հաստատվող հարաբերությունները, ինչի հետևանքով նրանց ոչ միայն ներքին անկեղծ, այլև նույնիսկ արտաքին սովորական ընդունված հարաբերությունները հաստատվել են այնպես, որ արդեն լրիվ սովորական բան է դարձել, հատկապես վերջին ժամանակներում, որ եթե որևէ մեկը ավելի բարձր համարվող կաստայի ներկայացուցիչ է, քան մյուսը, ապա միշտ և ամեն ինչում այդ մեկի ներսում մյուսի նկատմամբ ծագում են այնպիսի ազդակներ, որոնց այնտեղ անվանում են «մեծամտություն», «արհամարանք», «հովանավորչություն», «քամահրանք» և այլն: Իսկ եթե որևէ մեկն ինքն իրեն ավելի ցածր կաստայի պատկանող է համարում, ապա նրա ներսում առաջանում են այնպիսի ազդակներ, որոնց իրենք անվանում են «ինքնանվաստացում», «կեղծ համակերպում», «ստորաբարձություն», «քծնանք», «ստրկամտություն» և նման այլ առանձնահատուկ ազդակներ, որոնց համախմբությունը նրանց ներկայություններում

աստիճանաբար խժռում է, այսպես կոչված, «սեփական անհատականության գիտակցումը», ինչը հարկ է, որ ունենան:

Նշված հատկանիշը, որն արդեն բնորոշ է դարձել նրանց ընդհանուր ներկայություններին, աստիճանաբար հանգեցրել է նրան, որ նրանք հետ են վարժվել և ինքնաբերաբար արդեն կորցրել են իրենց նման, նույնիսկ իրենց կաստային պատկանող ուրիշ էակների հետ անկեղծ լինելու ունակությունը:

Այդ է պատճառը, զավակս, որ քո սիրելիների միջավայրում այդ անգամ իմ ներկա լինելու ընթացքում գոյություն ունեցող մասնագիտություններից ինձ համար ընտրեցի այնպիսի մեկը, որն ինձ հնարավորություն կտար ինքնաբերաբար երբեմն նրանց հետ հաստատել այնպիսի հարաբերություններ, որ նրանք գոնե ինչ որ չափով կարողանան անկեղծ լինել, որպեսզի ես հնարավորություն ստանամ կատարելու ինձ անհրաժեշտ հետազոտությունները և այդ եղանակով ձեռքի տակ նյութ ունենամ իմ պարզաբանումների համար:

Ահա թե ինչու ես դարձա այնպիսի մասնագետներից մեկը, որոնց ներկայումս «բժիշկ» են անվանում:

Այդ մասնագիտությունն ինչ որ չափով համապատասխանում է նրան, որ մեզ մոտ ունեն մեր, այսպես կոչված, «զըռլիկները»:

Այդ մասնագիտությունից զատ, այնտեղ, իմիջիայլոց, կա ևս մեկ մասնագիտություն, որին տիրապետողների մոտ քո սիրելիներից ոմանք ինքնաբերաբար ավելի անկեղծ են լինում, քան գուցե ուրիշների մոտ՝ հատկապես այն, ինչպես իրենք են արտահայտվում, «*ներքին ապրումներ*» առումով, որոնց պարզաբանումն ինձ առավել շատ էր հետաքրքրում:

Սակայն, թեև այդ մասնագիտությունն իմ հետազոտությունների համար ինձ ավելի շատ նյութ կտար, ես չուզեցի այդ մասնագիտությունն ընտրել, որով առավել հաճախ զբաղվում են, այսպես կոչված, «խոստովանահայրերը»։ միակ պատճառն այն էր, որ այդ մասնագիտությունը մշտապես ստիպում է արտաքուստ դեր խաղալ և երբեք թույլ չի տալիս հաշվի նստել սեփական ներքին ու իրական շարժառիթների հետ:

Նախքան պատմությունս շարունակելը, կարծում եմ, արժե քեզ համար լուսաբանել այն հարցը, թե ինչ են իրենցից ներկայացնում ժամանակակից բժիշկները, որոնք պետք է համապատասխանեին մեր «զըռլիկներին»:

Երևի քեզ արդեն լավ հայտնի է, որ մեզ մոտ՝ Քարատակ մոլորակում, ինչպես նաև ընդհանրապես մեր Մեծ Տիեզերքի մյուս մոլորակներում, որոնցում բազմաճյուղ են արդեն ձևավորված եռուղեղ էակներ (որոնց անունները տարբեր են տարբեր մոլորակների վրա), իրենց վրա էաբուխ՝ պարտավորություն են վերցնում իրենց շրջանում ապրող և իրենց նման էակների նկատմամբ. այսպես՝ զըռլիկներն այն պատասխանատու անհատներն են, որոնք իրենց ամբողջ գոյատևումը կամավորապես նվիրում են իրենց շրջանի ցանկացած էակի օգնելուն, որպեսզի նա կարողանա կատարել իր *լինելիական պարտականությունները*, եթե տվյալ էակն ինչ-որ պատճառով կամ իր մոլորակային մարմնի ժամանակավոր ոչ ճիշտ գործելու հետևանքով չի կարողանում ինքնուրույնաբար կատարել իր այդ ներքին *լինելիական պարտքը*:

Հարկ է նշել, որ նախկին ժամանակներում քո այդ մոլորակի մասնագետները, որոնք հիմա բժիշկներ են կոչվում, համարյա նույնն էին, ինչ մեր զըռլիկները և անում էին համարյա նույն բանը, ինչ որ նրանք. սակայն այնտեղի այդ պատասխանատու էակները, որոնք նման մասնագիտացում ունեին, կամավոր կերպով կրելով նման բարձր *լինելիական պարտք*, ժամանակի ընթացքում այլասերվեցին, ինչպես բոլորն այդ տարօրինակ մոլորակի վրա, և իրենք էլ դարձան կատարելապես անսովոր:

Եվ այնտեղ ներկայումս, երբ քո սիրելիներից որևէ մեկի մոլորակային մարմնի գործունեությունն ինչ-որ չափով խաթարվում է, և երբ այդ էակն ի վիճակի չի լինում կատարելու իր *լինելիական պարտականությունները*, նույնպես նրան օգնելու համար հրավիրում են իրենց ժամանակակից բժիշկներին. կարող ես չկասկածել՝ այդ բժիշկներն իրոք այցելում են, բայց, թե ինչպես են օգնում և ինչպես են ի կատար ածում իրենց ներքին էության վերցրած պարտավորությունը. ահա այդտեղ է, որ, ինչպես ասում է մեր մեծապատիվ մոլլա Նասրեդինը, «թաղված է Վերմասան-Ջերունան-Ալարամի սատկած ուղտը»:

Թող հայտնի լինի քեզ, որ ներկայումս այնտեղ նման մասնագետներ են դառնում այն ժամանակակից եռուղեղ էակները, որոնց մեծ մասին հաջողվում է պատասխանատու էակ դառնալու

Ժամանակահատվածում, ինչպես այնտեղ են ասում, «անգիր անել» զանազան տեղեկություններ, որոնք վերաբերում են իրենց ամեն տեսակի «հիվանդություններ» կոչվող բաներից ազատվելու այն եղանակներին, որոնք անհիշելի ժամանակներից կիրառել և եռուղեղ էակներին խորհուրդ են տվել այնտեղի խելքները թոցրած պառավները:

Հիշյալ հիվանդություններից ազատվելու այդպիսի եղանակների շարքում են գլխավորապես այն զանազան միջոցները, որոնք այնտեղ գոյություն ունեն «դեղեր» անվան տակ:

Եվ ահա, երբ ժամանակակից որևէ էակ դառնում է պատասխանատու մասնագետ, և կարիքավոր մյուս էակներն էլ դիմում են նրա օգնությանը, նա կիրառում և նշանակում է հենց այդ նշված դեղամիջոցները:

Քո բանականության զարգացման համար այս պահին շատ օգտակար կլինի, եթե քո ընդհանուր ներկայությանը «*լոգիկնեստերային հավելած*» կատարվի մի տեղեկատվությունից, որը վերաբերում է Երկիր մոլորակի ժամանակակից այդ մասնագետների հոգեկառույցների կողմից ձեռք բերվող առանձնահատուկ մի հատկանիշի:

Այդ յուրահատուկ հոգեկան հատկանիշը երկրային նշված մասնագետները ձեռք են բերում՝ հենց որ «որակավորված բժշկի» կոչում են ստանում, և դա նրանց մոտ միշտ գործում է, երբ ուզում են օգնություն ցույց տալ դրա կարիքն ունեցող ուրիշ էակների:

Բանն այն է, որ նրանց ընդհանուր ներկայություններում ինչպես օգնելու ցանկության ինտենսիվությունը, այնպես էլ ցուցաբերած օգնության որակը միշտ կախված է լինում բացառապես այն բանից, թե ինչ հոտ է գալիս այն տնից, ուր նրանց կանչել են:

Այսպես՝ եթե այդպիսի ժամանակակից մասնագետի օգնություն ցուցաբերելու համար կանչել են մի տուն, որտեղից, այսպես կոչված, «անգլիական ֆունտերի» հոտ է գալիս, ապա նրա մոտ ոչ միայն, այսպես ասած, «ծայրաստիճան» աճում է տառապող էակին օգնելու *լինելիական ցանկությունը*, այլև նույնիսկ նրա մոլորակային մարմինն իր արտաքին դրսևորումներով անմիջապես «ծեծվածձան»³² տեսք է ընդունում:

Ժամանակակից բժիշկների մեծ մասի դեմքերն այդ հոտից նույնիսկ, այսպես կոչված, «ստորաքարշ» արտահայտություն են ստանում, իսկ իրենք այնքան ուժեղ են իրենց քաշում իրենց «խղճուկ պոչը», որ այն համարյա սոսնձվում է ոտքերի արանքում:

Բայց եթե նման երկրային զբոլիկներից օգնություն ստանալու համար կանչել են մի այնպիսի տուն, որտեղից, այսպես կոչված, «անվավեր դարձած գերմանական մարկերի» հոտ է փչում, ապա կարիքավոր անձին օգնելու նրա ներքին *լինելիական ցանկությունը* էլի աճում է, բայց միայն այն իմաստով, որ որքան հնարավոր է շուտ գերմանացիների հորինած, այսպես կոչված, «դեղատոմս» գրի և շուտափույթ հեռանա այդտեղից:

Պետք է քեզ ասեմ նաև, որ երբ երկրորդ դեպքում բժշկի մասնագիտություն ունեցող ժամանակակից երկրային էակը դուրս է գալիս իր օգնության կարիքն ունեցողի տնից և քայլում փողոցով, ապա նրա ողջ արտաքինը, նույնիսկ դեմքի մկաններն անփոփոխ կերպով մոտավորապես այս են արտահայտում. «Հէ յ, թերուսնէ՛ր, զգուշացե՛ք: Ինչ է, չէ՞ք տեսնում, որ գալիս է ոչ թե ինչ-որ մեկը, այլ գիտության իսկական ներկայացուցիչ, որն ամբողջովին յուրացրել է ժամանակակից բարձրագույն գիտական կենտրոնում ուսուցանվող գիտելիքները...»:

Իսկ հիմա խիստ տեղին կլինի, որ քեզ մի քիչ պատմեմ հիշատակածս այն «բժշկական միջոցների» մասին, որոնք այնտեղ զանազան անվանումներով գոյություն ունեն մեծ քանակությամբ, և որոնք այդ ժամանակակից բժիշկների խորհրդով մնացած սովորական էակները կուլ են տալիս, որ իբր օգնի իրենց ազատվելու տարբեր հիվանդություններից:

Անհրաժեշտ է քեզ անպայման պատմել այդ մասին, քանի որ... Ո՛վ գիտե, գուցե դու էլ երբևէ հայտնվես այդ յուրահատուկ մոլորակի տարօրինակ մարդկանց միջավայրում և չիմանաս, թե ինչպես վարվել այդ բազմաթիվ բժշկական միջոցների հետ, և ինչ նշանակություն տալ դրանց:

Ամենից առաջ իմացիր և հիշիր, որ այնտեղի երիտասարդ եռուղեղ էակները՝ հատկապես վերջին ժամանակների, որոնք, գոյատևման պատասխանատու տարիքին հասնելով, պատրաստվում են ձեռք բերել բժշկի մասնագիտություն, որքան հնարավոր է շատ անվանումներ են ագիր անում այն բազմահազար բժշկական միջոցներից, որոնք ներկայումս այնտեղ հայտնի են:

³² ռուս. տարբերակում՝ дзедзациуна, անգլ. տարբերակում՝ dzedzatsnoon

Իսկ ավելի ուշ, երբ արդեն դառնում են այդ մասնագիտությանը տիրապետող պատասխանատու էակներ և պաշտոնապես բժշկի կոչում են ստանում, և երբ գնում են իրենց օգնության կարիքն ունեցող էակներին օգնելու, ապա նրանց ամբողջ օգնությունն այն է լինում, որ որոշակի ինտենսիվությամբ *լինելիական ջանք* են գործադրում, որպեսզի հիշեն մի քանի այդպիսի բժշկական միջոցների անվանումները և դրանք գրեն մի թղթի կտորի վրա, որին իրենք «դեղատոմս» են կոչում, որ դուրս գրեն այն «լուծույթը», որը հարկավոր է ներարկել «հիվանդի» մոլորակային մարմնի մեջ: Իսկ նրա ջանքերի ինտենսիվությունն առաջին հերթին կախված է օգնության կարիք զգացողի «սոցիալական վիճակից», և երկրորդ հերթին՝ այն էակների դեպի իրեն ուղղված հայացքների քանակից, որոնք շրջապատել են տվյալ հիվանդ էակին:

Դե, իսկ հետո այն անձի մոտ հարազատները, որը ժամանակակից «զբոլիկների» օգնության կարիքն է զգացել, նրա կողմից այդ եղանակով գրված դեղատոմսը տանում են ժամանակակից, այսպես կոչված, «դեղատներից» մեկը, որտեղ նրանց «դեղագործները» պատրաստում են պահանջված «լուծույթը»:

Իսկ թե այդ դեղատներում ինչպես են պատրաստում այդ լուծույթները և թե ինչից են դրանք բաղկացած լինում, դու շատ լավ կհասկանաս, եթե քեզ պատմեմ ինձ հայտնի դարձած բազմաթիվ տեղեկություններից միայն մեկի մասին, որն ինձ հայտնել է հենց դեղագործի մասնագիտություն ունեցող այնտեղի էակներից մեկը:

Իմ այդ պատմությունն այն ժամանակին է վերաբերում, երբ ես սկսել էի ավելի հաճախ այցելել այն մեծ հանրությունը, որը Ռուսաստան էր կոչվում:

Այսպես ուրեմն, հիշյալ մեծ հանրության էակների գոյատևման երկու գլխավոր վայրերից մեկում՝ հատկապես այնտեղ, որը «Մոսկվա» էր կոչվում, բարեկամական հարաբերություններ հաստատվեցին իմ և մի այդպիսի մասնագետի՝ դեղագործի միջև:

Ըստ այնտեղի հասկացությունների՝ այդ դեղագործն արդեն ծեր էակ էր, բնավորությամբ շատ բարի և նույնիսկ, այսպես ասած՝ բարեհամբույր:

Նա, ինչպես այնտեղ են ասում, «հրեական հավատ» էր դավանում:

Այստեղ հարկ է նշել, որ այնտեղի բոլոր աշխարհամասերում ներկայիս բոլոր դեղագործները, չգիտեմ ինչու, գլխավորապես այն էակներից են, որոնք հրեական հավատի կրողներ են:

Այսպես ուրեմն, երբ ես Ռուսաստանի այդ երկրորդ գլխավոր վայրն էի մեկնել, որտեղ ինձ ծանոթ այդ դեղագործն էր գոյատևում, ես միշտ այցելում էի նրա դեղատան խորքի սենյակը, որին, որպես կանոն, իրենք «լաբորատորիա» են անվանում, և նրա հետ զրուցում էի զանազան «դատարկ բաների» մասին:

Մի անգամ, երբ սովորականի պես ես մտա այդ հիշյալ լաբորատորիան, տեսա, որ հավանգի մեջ ինչ-որ բան է ծեծում, և ինչպես այնտեղ սովորաբար նման դեպքերում ընդունված է՝ հարցրի, թե ինչ է անում:

Իմ հարցին նա այսպես պատասխանեց.

– Ես բոված շաքար եմ մանրում ահա այս դեղատոմսի համար,– և նա ինձ թղթի մի թերթիկ տվեց, որի վրա լայն տարածում գտած բժշկական մի միջոցի սովորական դեղատոմս էր գրված, որն այնտեղ գոյություն ունի «դովերի փոշի» անվամբ:

Այդ փոշին այդպես է կոչվում, քանի որ հորինվել է Դովեր ազգանունով մի անգլիացու կողմից, և օգտագործվում է գլխավորապես հազի դեմ:

Ես կարդացի ինձ տրված դեղատոմսը և տեսա, որ դրա բացադրության մեջ շաքար չի նշված, առավել ևս՝ բոված: Հետևանքն այն եղավ, որ ապշահար նրան հայտնեցի իմ տարակուսանքը:

Դրան իր բարեհամբույր ժպիտով նա պատասխանեց այսպես.

– Իհարկե, այդ դեղատոմսում շաքար չի նշված, իսկ, այ, «օփիումի» որոշակի տոկոս նշված է:

Ապա նա տվեց հետևյալ բացատրությունը.

«Այս դովերի փոշին, չգիտեմ ինչու, մեզ մոտ՝ Ռուսաստանում, շատ հանրահայտ դեղամիջոց է, և այն գործածում են մեր հսկա տերության համարյա բոլոր ժողովուրդները:

Այստեղ օրական ամբողջ երկրով մեկ գործածում են այդ փոշու բազմահազար փաթեթներ, իսկ օփիումը, որը պետք է լինի դրա բաղադրության մեջ, ինչպես գիտեք, էժան չէ. և եթե այդ փոշու մեջ իսկական օփիում ավելացվի, ապա միայն հենց այդ օփիումը մեզ՝ դեղագործներին վրա կնստի ամեն փաթեթի համար վեցից ութ կոպեկ, այնինչ մենք այդ փոշին պետք է վաճառենք երեքից հինգ կոպեկով:

Դրանից բացի, եթե նույնիսկ ամբողջ երկրագնդում եղած օփիումը հավաքվի, ապա վիճակն այնպիսին կլինի, որ նույնիսկ միայն մեր Ռուսաստանին այն չի հերիքի:

Այդ պատճառով էլ մենք՝ դեղագործներս, դոկտոր Դովերի դեղատոմսի փոխարեն հորինել ենք ուրիշ դեղատոմս, որի բաղադրության մեջ միայն այնպիսի նյութեր են մտնում, որոնք հեշտ է ստանալը, մատչելի ու օգտակար են բոլորի համար:

Ահա թե ինչու մենք՝ դեղագործներս, այդ փոշին պատրաստում ենք սողայից, բոված շաքարից և ոչ մեծ քանակությամբ խինինից... Վերջինը, ճիշտ է, մի քիչ թանկ է, բայց դրանից քիչ է պահանջվում. փոշու 100 տոկոս բաղադրության մեջ խինինը միայն երկու տոկոսն է կազմում»:

Այստեղ ես չդիմացա և ընդհատեցի նրան.

– Դուք լուրջ եք խոսում... Բայց դա հնարավոր բան չէ... Մի՞թե մինչև հիմա ոչ ոք չի հայտնաբերել, որ դովերի փոշու փոխարեն դուք իրենց ահա այս շիլափլավն եք մատուցում...

– Իհարկե, ոչ,– ծիծաղելով պատասխանեց իմ լավ ծանոթը:– Նման բաները կարելի է հայտնաբերել միայն արտաքին տեսքով ու համով. իսկ այս դովերի փոշին, որ մենք պատրաստում ենք, ոնց էլ շուռումուռ տան, ինչ մանրադիտակով էլ որ նայեն՝ գույնով համընկնում է դոկտոր Դովերի իսկական բաղադրատոմսի հետ: Իսկ համի հարցը լուծվում է գլխավորապես խինինի այն չափաբաժնի շնորհիվ, որը մենք խառնում ենք դրան. ուստի բացարձակապես հնարավոր չէ այս փոշին տարբերել այն իսկական փոշուց, որը պատրաստվում է օփիումի կիրառությամբ:

– Իսկ անալիզ չի՞ արվում,– հարցրեցի ես:

– Անալիզն՝ ի՞նչ,– ասաց նա սարկազմով, թեև ժպիտը բարի էր:– Փոշու մի փաթեթի անալիզն այնքան կարժենա, որ այդքան փողով կարելի կլինի ոչ միայն կես ցենտներ այդ փոշուց գնել, այլև մի ամբողջ դեղատոմս բացել. հետևաբար՝ հազիվ թե երեքից հինգ կոպեկի համար որևէ մեկն այդքան հիմար գտնվի:

Խստորեն ասած՝ այն անալիզը, որը դուք նկատի ունեք, երբեք ոչ մի տեղ չի արվում:

Ամեն մի քաղաք, ինքնըստինքյան հասկանալի է, ունի իր քիմիկոս-փորձագետները, և նույնիսկ ամեն մի քաղաքային վարչությունում նման «մասնագետներ» կան ծառայության մեջ:

Բայց ի՞նչ են իրենցից ներկայացնում և ի՞նչ գիտեն այդ մասնագետ «քիմիկոս փորձագետները»:

Հավանաբար դուք չգիտեք, թե այդ պատասխանատու պոստերում հայտնված մասնագետներն ինչպես են սովորում և ինչ են հասկանում, այնպես չէ՞...

Այդ դեպքում ես ձեզ կպատմեմ նաև դրա մասին:

Օրինակ՝ ինչ-որ մի մամայի բալիկ՝ պզուկոտ դեմքով երիտասարդ մեկը (պզուկոտ՝ այն պատճառով, որ մայրիկն իրեն ազնվական է համարել և վայելույ չի գտել որդուն որոշակի բաներ բացատրել, ինչի հետևանքով նրա զավակը, դեռևս չձևավորված գիտակցությամբ, արել է այն, ինչ «ստացվել է», և այդ «ստացված բաների» արդյունքը, ինչպես նման բոլոր երիտասարդների մոտ է լինում, հայտնվել է դեմքին պզուկների տեսքով, որոնք լավ հայտնի են նույնիսկ ժամանակակից բժշկությանը), և այսպես, սիրելի դոկտոր...– իր խոսքն այսպես շարունակեց դեղագործը...

Սակայն, տղաս, նախքան պատմել շարունակելս, թե ինչ ասաց այդ սիրալիր դեղագործը, պետք է նախ ասեմ, որ երբ ես այնտեղ արհեստավարժ բժիշկ դարձա, քո սիրելիներն ինձ ամենուրեք «դոկտոր» էին կոչում:

Երբեք ես քեզ անտարակույս կպատմեմ իրենց այդ կոչման մասին, քանի որ այդ զգվելի «դոկտոր» բառի պատճառով մի անգամ մեր սիրելի Ահունի հետ շատ տխուր ու ողբերգական թյուրիմացություն տեղի ունեցավ:

Բայց առայժմ լսիր, թե իր խոսքն ինչպես շարունակեց այդ սիրալիր դեղագործը:

Նա ասաց.

– Այդ երիտասարդ մարդը՝ պզուկոտ դեմքով մամայի բալիկը, ուսանում է ինչ-որ համալսարանում, որպեսզի քիմիկոս-փորձագետի մասնագիտություն ձեռք բերի. բայց այդ համալսարանում նա նախ պետք է ուսումնասիրի հատուկ գրքեր, որոնք սովորաբար թխվում են Գերմանիայի «գիտունների» կողմից...

Եվ իրոք, զավակս, այդ ժամանակակից գերմանացիները, հատկապես վերջին ժամանակների, բոլոր բնագավառների վերաբերյալ սկսել են ավելի շատ «գիտական» գրքեր հորինել:

Քանի որ անալիզը նույնպես իրենց գիտության բնագավառներից մեկն է, այդ բնագավառում գերմանացի գիտնականներն արդեն գրքերի հսկայական զանգված են կուտակել, և Եվրոպայի, ինչպես նաև մնացած երկրների համարյա բոլոր ժողովուրդներն օգտվում են այդ գիտական գրքերից:

Այնուհետև դեղագործն իր խոսքը շարունակեց այսպես.

– Եվ ահա այդ երիտասարդը, որն ավարտել է համալսարանական դասընթացը և, հետևաբար, այսպես կոչված, «նյութերի ամբողջության» մասին գիտելիքներ է քաղել գերմանացի գիտուն էականների թխած գրքերից, պետք է գա և զբաղվի մեր սարքած դոկերի փոշու անալիզով:

Այդ գերմանական գրքերում, որոնցից նա նյութերի ամբողջության մասին գիտելիքներ է քաղել, իհարկե ասվում է, թե այս կամ այն նյութն ինչ տարրերից է բաղկացած, և անկասկած բերված են այդ տարրերի բանաձևերը:

Այդ գրքերում նաև բացատրվում է, թե ինչ տեսք ունեն այն նյութերը, որոնցում առկա են բոլոր անհրաժեշտ տարրերը, և թե ինչպես է փոխվում այդ նյութերի արտաքին տեսքը, եթե այդ տարրերը բացակայում են դրանցում: Նույն այդ գերմանական գրքերում նաև մի քանի տնայնագործական միջոցներ են տրվում, որոնցով կարելի է ճանաչել այդ նյութերը. օրինակ՝ արտաքին տեսքով, համով, այրվելու ձևով և մի քանի այլ եղանակներով, որոնց մասին հինավուրց ժամանակներում լսել են պառավները և այլն, և այլն:

Դասընթացն ավարտելուց հետո այդ երիտասարդը քիմիկոս-վերլուծաբանի կոչում է ստանում: Երբեմն լինում է այնպես, որ նախքան որևէ պատասխանատու պոստում աշխատելը երիտասարդը պետք է «պրակտիկա» անցնի, ինչը սովորաբար «սպանդանոցում» ծառայելն է, որտեղ նա օգնում է տեղի քիմիկոսին՝ իր նման նախկին մամայի բալիկին, որ մանրադիտակի օգնությամբ, միայն իրենց հայտնի եղանակով պարզեն, թե խոզի միսը ստրիխնին պարունակում է, թե՛ ոչ. և միայն հետո, երբ ինչ-որ վայրում տեղ է ազատվում, նրան պաշտոնապես նշանակում են քիմիկոս-վերլուծաբան:

Եվ ահա, սիրելի դոկտոր, այդպիսի մի քիմիկոս վերլուծաբան մեր սարքած դոկերի փոշին ստանում է անալիզի համար: Ստանալուց հետո նա այդ փոշին փորձում է ճանաչել կա՛մ տեսքին նայելով, կա՛մ սովորական մահկանացուների պես համտես անելով, կամ էլ պարզապես հավատում է այդ փոշին իր մոտ ուղարկողին, որ դա հենց դոկերի փոշի է, որ կա:

Անալիզ անելու համար նա իր սեղանից վերցնում է «դեղագործական տեղեկատուն», որն էլի գերմանացիների կազմածն է, և ամեն մի պաշտոնական քիմիկոս-վերլուծաբան պարտադիր պետք է դրանից ունենա, ապա այդ տեղեկատուի մեջ գտնում է այն տեղը, որտեղ գրված են հնարավոր ամեն տեսակի փոշիների բանաձևերը:

Քանի որ դոկերի փոշին ամենուրեք հայտնի է, ապա դրա բանաձևն էլ այնտեղ կա:

Դրանից հետո մեր շատ հարգարժան քիմիկոս-վերլուծաբանն իր սեղանից վերցնում է իր պաշտոնական կոչումը պարունակող ձևաթերթիկը և դրա վրա գրում.

«Մեր փորձագիտությանն ուղարկված փոշին իր բոլոր տվյալներով համապատասխանում է դոկերի փոշուն: Վերլուծությունը ցույց տվեց, որ այն բաղկացած է...» Եվ այստեղ նա իր գերմանական դեղագործական տեղեկատուից արտագրում է բանաձևը՝ դիտմամբ որոշ չափով մեծացնելով կամ փոքրացնելով որոշ թվեր, բայց այնքան քիչ, որ հանկարծ աչքի չգարնի:

Նա այդպես է վարվում նախ և առաջ այն բանի համար, որպեսզի բոլորն իմանան, որ իր անալիզի արդյունքները գրել է ոչ թե ոնց պատահի, այլ իսկապես հետազոտել է բաղադրությունը, և երկրորդ՝ որովհետև, ինչ էլ դուք ասելու լինեք, նա, իմ կարծիքով, առանձնապես մեծ ցանկություն չունի թշնամիներ վաստակելու այն քաղաքում, որում ապրում է, իսկ քաղաքային դեղագործը նույնպես պաշտոնական անձ է:

Այդ ձևով լրացված ձևաթուղթն ուղարկվում է դոկերի փոշին ուղարկողին, իսկ ինքը՝ քիմիկոս վերլուծաբանը լիակատար հանգիստ է զգում իրեն, քանի որ ոչ ոք չի իմանում, որ ինքը ոչ մի անալիզ էլ չի արել, և ոչ ոք չի կարող դա ստուգել առաջին հերթին այն պատճառով, որ նա այդ քաղաքի միակ պաշտոնական քիմիկոս-վերլուծաբանն է, և երկրորդ՝ եթե նույնիսկ մեր այդ փոշիներից մեկն ուղարկելին մի ուրիշ քաղաքի արտակարգ քիմիկոսի, ապա դրանից ոչ մի վատ բան դուրս չէր գա... Ինչ է, աշխարհում դոկերի ուրիշ փոշիներ չկա՞ն: Փոշու այն տուփը, որը նա անալիզի է ենթարկել, արդեն դադարել է գոյություն ունենալուց, քանի որ, բնականաբար, ինքը պարտավոր էր ոչնչացնել այն անալիզ անելուց հետո:

Բացի այդ, չի գտնվի որևէ մեկը, որը հանուն երեքկուպեկանոց դռների փոշու նման աղմուկ բարձրացնի:

Ամեն դեպքում, հարգելի դոկտոր, ես արդեն երեսուն տարի է, ինչ «մեր» բաղադրատոմսով այդ փոշուց պատրաստում եմ և, իհարկե, վաճառում այն, բայց մինչև օրս երբեք որևէ թյուրիմացություն չի ծագել մեր սարքած դռների փոշու պատճառով: Եվ որևէ թյուրիմացություն չի կարող լինել, քան որ դռների փոշին հիմա ամենուրեք լավ հայտնի է, և բոլորը համոզված են, որ այն հրաշալի միջոց է հազի դեմ:

Ցանկացած դեղամիջոցից պահանջվում է միայն, որ բոլորին հայտնի լինի, որ այն լավն է:

Իսկ թե այդ դեղամիջոցն ինչպես է պատրաստվում և ինչից է այն բաղկացած՝ ոչ մի նշանակություն չունի:

Այդ դեղամիջոցների հետ ես գործ եմ ունեցել շատ տարիների ընթացքում, և անձամբ այն որոշակի կարծիքն ունեմ, որ ժամանակակից բժշկությանը հայտնի ոչ մի դեղամիջոց չի կարող որևէ օգուտ տալ, եթե դրա նկատմամբ հավատ չլինի:

Իսկ մարդու մոտ որևէ դեղամիջոցի նկատմամբ հավատ է ծագում միայն այն ժամանակ, երբ դա բավականաչափ հայտնի դեղամիջոց է, և շատերն են խոսում, որ այն շատ արդյունավետ է ազդում այսինչ հիվանդության դեմ:

Նույնը մեր այս փոշու դեպքում է. բավարար է միայն այն, որ սա դռների փոշի է կոչվում, քանի որ այն բոլորին է հայտնի, և շատերը փաստում են, որ դա հրաշալի դեղամիջոց է հազի դեմ:

Այդ ամենից գատ, անկեղծ ասած, դռների փոշու մեր ստեղծած բաղադրատոմսն անհամեմատ լավն է իսկականից, թեկուզև այն պատճառով, որ այն օրգանիզմի համար վնասակար ոչ մի նյութ չի պարունակում:

Օրինակ՝ դոկտոր Դռների բաղադրատոմսը օփիում է պարունակում:

Իսկ ձեզ հայտնի՞ են օփիումի հատկությունները: Եթե մարդ բավականին հաճախ է այն օգտագործում, ապա նույնիսկ փոքր չափաբաժինների դեպքում օրգանիզմն այնպես է վարժվում դրան, որ երբ դադարեցնում է այն ընդունել, շատ ուժեղ տառապում է:

Իսկ մեր դեղատոմսով պատրաստված փոշին օգտագործելուց նման բան չի կարող լինել, քանի որ այն ո՛չ օփիում է պարունակում, ո՛չ էլ օրգանիզմի համար վնասակար որևէ ուրիշ նյութ:

Կարձ ասած, հարգելի դոկտոր, փողոցով քայլող ամեն ոք պետք է ի սրտե գոչի. «Կեցցե՛ դռների փոշու նոր բաղադրատոմսը...»:

Նա պատրաստվում էր էլի ինչ-որ բան ասել, բայց հենց այդ ժամանակ դեղատան ներսից մի պատանի բերեց տարբեր դեղատոմսերի ամբողջ մի կույտ, որը տեսնելով՝ դեղագործն ասաց.

–Ներեցե՛ք, դոկտոր, որ ստիպված եմ ընդհատել մեր ընկերական գրույցը և զբաղվել բազմաթիվ պատվերներով: Դժբախտաբար իմ երկու օգնականներն այսօր բացակայում են. մեկն այն պատճառով, որ իր սիրելի կեսն այսօր պետք է «լույս աշխարհ» բերի ևս մի ուտող բերան, իսկ մյուսը պետք է դատարան գնա, որտեղ ինչ-որ մի վարորդի մեղադրում են նրա աղջկան փախցնելու գործով:

Դե, այս մասին այսքանը բավական է...

Եթե քեզ իսկապես վիճակվի գոյատևել քո սիրելիների միջավայրում, ապա ծայրահեղ դեպքում դու իմ այս վերջին պատմությունից գոնե կիմանաս, որ, թեև այնտեղի բժիշկներն իրենց դեղատոմսերում տասնյակներով գրում են խրթին անվանումներ, այնուհանդերձ նրանց այդ դեղատոմսեր կոչվող պաշտոնական հաստատություններում նշանակված դեղերը համարյա միշտ պատրաստվում են այնպես, ինչպես դռների փոշին:

Նույնիսկ այնպես է պատահում, որ այնտեղ երբեմն այդ բարի դեղագործներն առավոտյան մի ամբողջ տակառ ինչ-որ հեղուկ են պատրաստում և մի ամբողջ արկղ ինչ-որ փոշի, որից հետո ամբողջ օրվա ընթացքում բավարարում են դեղատոմսերով ներկայացողների պահանջները՝ օգտվելով այդ տակառի հեղուկից և այդ արկղի փոշուց:

Որպեսզի իրենց նախապես պատրաստած խառնուրդը միշտ նույն տեսքը չունենա, այդ բարեհաճ մասնագետները դրան որոշ նյութեր են ավելացնում՝ տարբեր գույներ ստանալու, համն ու հոտը փոխելու նպատակով:

Չնայած այս ամբողջ ասածին՝ ես քեզ թախանձագին խորհուրդ եմ տալիս, որ ծայրահեղ զգույշ լինես նրանց դեղերի մի տեսակից, քանի որ այնտեղ երբեմն այնպես է պատահում, որ այդ բարի

դեղագործներն իրենց այդ խառնուրդների մեջ, իհարկե սխալմամբ, մոլորակային մարմնի համար թունավոր որևէ բան են ավելացնում:

Դեռ ավելին՝ նորմալ բանականություն ունեցող էակների մոտ, իհարկե պատահաբար, այնտեղ ավանդույթ է հաստատվել այդ տիպի խառնուրդների վրա միշտ պատկերել, այսպես կոչված «գանգ ու խաչաձև ոսկորներ», որպեսզի միշտ հնարավոր լինի նման թունավոր դեղերը տարբերել սովորական բժշկական դեղամիջոցներից:

Այնուամենայնիվ դու ամեն դեպքում հիշիր, որ այնտեղի ժամանակակից բժիշկների կողմից կիրառվող բազմաազգար «բժշկական դեղամիջոցներից» միայն երեքն են, և այն էլ՝ երբեմն, քիչ թե շատ իրական արդյունք տալիս ժամանակակից սովորական եռուղեղ էակների մոլորակային մարմինների համար:

Այդ երեք բժշկական միջոցներից մեկը, որն այնուամենայնիվ բարերար է ազդում, այն նյութն է, կամ, ավելի ճշգրիտ ասած, նրա մեջ եղած ակտիվ տարրերը, որոնք Պախրակարանի էակները սովորել էին ստանալ կակաչ կոչվող բույսից և առաջին անգամ օփիում անունը տվել:

Երկրորդ նյութն այն է, որին «գերչակի ձեթ» են անվանում. այդ նյութը Եգիպտոսի էակները վաղուց կիրառում էին մոմիաները զմոսելիս, և հենց նրանք են նկատել, որ այդ նյութը, ամեն ինչից զատ, նաև այն ազդեցությունն է թողնում, որի համար հիմա կիրառվում է:

Բայց գերչակի ձեթի մասին գիտելիքը Եգիպտոսի էակներին էլ փոխանցվել է Ատլանտիդա աշխարհամասի էակներից, որոնք պատկանում էին Ախալդան գիտական ընկերությանը:

Եվ երրորդ նյութն այն է, որը վաղնջական ժամանակներում այնտեղի էակները ստացել են, այսպես կոչված «քինաքինայի ծառից»:

Իսկ հիմա, զավակս, ես որոշ բաներ կպատմեմ վերջերս հորինված «դոկտոր» բառի մասին, որով պատվում են երկրային ժամանակակից բժիշկներին:

Ամենայն հավանականությամբ դա նույնպես այնտեղ Գերմանիա կոչվող «կարևոր» հանրության էակների հորինածն է, և հորինվել է, որպեսզի դրանով առանձնացնեն իրենց միջի որոշ վաստակաշատների. բայց այդ հորինվածքը, լայն տարածում ստանալով ամբողջ մոլորակում, հիմա այնտեղ, չգիտես ինչու, դարձել է ժամանակակից բժիշկներին դիմելու սովորական ձևը:

Հարկ է նաև ընդգծել, որ այդ հորինվածքի պատճառով այնտեղ ևս մի գործոն է ավելացել արդեն եղածների ամբողջությանը, որոնք մշտապես նրանց մոլորության մեջ են գցում, և որոնց պատճառով նրանց առանց այն էլ թուլացած *լինելիական մտածողությունը* տարեցտարի ավելի «մեքենայական» է դառնում:

Այդ նոր բառի պատճառով նույնիսկ մեր Ահունը, անկախ անհամեմատ ավելի նորմալ ներկայություն ունենալուց և ավելի բարձր որակի *լինելիական բանականությամբ* հանդերձավորված լինելուց, մեր այնտեղ եղած ժամանակ ուղղակի ապուշ թյուրիմացության մեջ ընկավ:

Իսկ մնացածի մասին, իմ կարծիքով, անհամեմատ ավելի լավ կլինի, եթե հենց ինքը պատմի:

Այսքանն ասելուց հետո Բեհեդգեբուղը շրջվեց Ահունի կողմը և ասաց հետևյալ խոսքերը.

– Հապա պատմի՛ր մեզ, ծերուկ, թե ինչպես դա եղավ, և ինչի՞ց էր, որ մի քանի օր անընդհատ «սքուլմաչիտ»³³ և «ծիրիկուախիվատ»³⁴ էիր անում, կամ, ինչպես կասեին Երկիր մոլորակի եռուղեղ էակները՝ մի գլուխ «մրթմրթում» ու «սրտնեղում» էիր, ինչպես այնտեղի քո բարեկամուհի Լիզա մորաքույրը:

Դրան ի պատասխան՝ Ահունը, կրկին Բեհեդգեբուղի հանգը վերցնելով և այս անգամ նույնիսկ առոգանությունը նմանակելով, իր խոսքը սկսեց այսպես.

– Այդ թյուրիմացության մեջ հայտնվեցի հետևյալ պատճառով:

Երկիր մոլորակ կատարած մեր վեցերորդ այցելության ընթացքում՝ հենց դրա ավարտին մոտ, մեզ վիճակվեց որոշ ժամանակ գոյատևել, իմիջիպայոց, նաև հենց այդ գերմանացի էակների մայրաքաղաքում, որոնք, ինչես բարեհաճեց ասել Նորին Գերապատվությունը, հորինել էին ինձ հանար ատելի դարձած այդ «դոկտոր» բառը:

Այն հյուրանոցում, որը մեր գոյատևման վայրն էր, իմ սենյակի կողքին, կամ, ինչպես այնտեղ են ասում, «հարևան համարում» մի շատ համակրելի գույգ էր գոյատևում, որը վերջերս էր անցել Ակտիվը

³³ ռուս. տարբերակում՝ скухмачини, անգլ. տարբերակում՝ skoolmatchit

³⁴ ռուս. տարբերակում՝ цырикуахц, անգլ. տարբերակում՝ tsirikooakhivat

Պասսիվին Միանալու իր ծիսակարգը, որպեսզի շարունակի իր տեսակը՝ *մեծ համընդհանուր տրոգոսկոտեգոկրատական* գործընթացին ծառայելու նպատակով, կամ, ինչպես իրենք կասեին, «ամուսնացել» էին և դեռ «նորապսակներ» էին համարվում:

Այսպես ուրեմն, ես այդ երիտասարդ գույզի հետ ծանոթացել էի իմ ընկերներից մեկի տանը, որից հետո այդ գույզն ինձ հաճախակի հրավիրում էր իրենց սենյակը՝ այսպես կոչված, «*մի բաժակ թեյ խմելու*». երբեմն ինքս էլ էի առանց հրավերի մտնում նրանց մոտ, որպեսզի կարճեմ ձանձրալի «գերմանական» երեկոները:

Նորահարսը, ինչպես այնտեղ են ասում՝ «պատճառավոր» էր և, կրկին այնտեղի ասածի պես, սպասում էր իր առաջնեկին:

Ինչպես ես, նրանք էլ էին անորոշ ժամանակով հայտնվել այդ մայրաքաղաքում՝ այդ երիտասարդ գույզի Ակտիվ մասի ծառայողական գործերով, և գոյատևման համար կանգ էին առել այն հյուրանոցում, որտեղ նաև մենք էինք տեղ վերցրել:

Մի անգամ նրանց կողմից իմ սենյակի պատին շատ նյարդային թակոց լսվեց:

Ես անհապաղ շտապեցի նրանց մոտ, և այնտեղ պարզվեց, որ «ամուսինը» ներկա չէ, քանի որ այդ նույն օրն ինչ-որ տեղ էր գնացել. իսկ կինն այդ ժամանակ վատ էր զգացել և, համարյա կորցնելով գիտակցությունը, բնագդաբար թակել էր պատը:

Երբ ես ներս մտա, նրա վիճակը մի փոքր լավացավ, բայց ինձ խնդրեց, որ շտապեմ «դոկտոր» կանչելու:

Ես իհարկե անմիջապես դուրս թռա փողոց, բայց այնտեղ հայտնվելով, մտածեցի՝ ու՞ր գնամ հիմա:

Հանկարծ հիշեցի, որ մեր հյուրանոցից ոչ շատ հեռու ապրում է մի էակ, որին բոլորը «դոկտոր» են կոչում. և նույնիսկ նրա տան դռան վրա մետաղական ցուցանակ կար, որի վրա ազգանունից առաջ գրված էր, որ նա «դոկտոր» է. ուստի հենց այդ «դոկտորին» մոտ էլ վազեցի:

Բայց պարզվեց, որ նա ճաշի է նստած, և սպասուհին ինձ խնդրեց, որ հյուրասենյակում մի քիչ սպասեմ, բացատրելով, որ «դոկտորը» շուտով հյուրերի հետ կավարտի իր ճաշը և դուրս կգա:

Ես, իհարկե, հյուրասենյակում նստեցի այդ «դոկտորին» սպասելու, բայց չի կարելի ասել, որ հանգիստ էի նստած:

Ես նստել էի, ինչպես այնտեղ են ասում, կարծես «կեծացած քարածուխների վրա», քանի որ շատ էի անհանգստանում իմ հարևանուհու վիճակով:

Իսկ «հարգարժան դոկտորն» ուշանում էր: Անցավ համարյա քսան րոպե: Ես այլևս չդիմացա և զանգակը հնչեցրի:

Երբ սպասուհին դուրս եկավ, ես խնդրեցի «դոկտորին» հիշեցնել իմ մասին և ասացի, որ շտապում եմ և այլևս չեմ կարող սպասել:

Նա ներս անցավ:

Անցավ ևս հինգ րոպե:

Վերջապես հայտնվեց ինքը՝ «դոկտորը»:

Ես շտապ-շտապ նրան բացատրեցի, թե ինչ եմ ուզում. բայց, ի զարմանս ինձ, լսելով իմ խնդրանքը՝ նա սկսեց անգուսպ ծիծաղել:

Ես մտածեցի՝ հավանաբար այս «դոկտորն» իր ընկերների հետ ճաշի ժամանակ մի բաժակ «գերմանական զարեջուր» ավել է խմել:

Եվ միայն երբ մի փոքր հանդարտվեց իր հիստերիկ ծիծաղից, նա կարողացավ ինձ բացատրել, որ շատ է ցավում, բայց ինքը ոչ թե «բժշկության դոկտոր է», այլ՝ «փիլիսոփայության»:

Այդ պահին իմ վիճակն այնպիսին դարձավ, որ կարծես երկրորդ անգամ լսեցի ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ «դատավճիռն» այն մասին, որ Նորին Գերապատվությանն աքսորում է իր մերձավորների հետ, որոնց թվում նաև ինձ:

Ահա այդպիսի բաներ, մեր սիրելի Հասեին...

Ես դուրս եկա այդ «դոկտորի» հյուրասենյակից և նորից հայտնվեցի փողոցում նույն վիճակում, ինչպես առաջ:

Հենց այդ պահին մի տաքսի մոտեցավ: Ես նստեցի դրա մեջ և մտորում էի, թե հիմա՞ ուր գնամ:

Հետո հիշեցի, որ այն սրճարանում, ուր երբեմն այցելում էի, համարյա միշտ մի էակ էր լինում, որին նույնպես «դոկտոր» էին կոչում:

Վարորդին ասացի, որ շտապ քշի այդ սրճարանի կողմը:

Այնտեղ ինձ ծանոթ մատուցողն ասաց, որ իմ ասած «դոկտորը» իրոք այդտեղ է եղել, բայց իր ինչ-որ ծանոթների հետ արդեն գնացել է, և ինքը՝ մատուցողը, նրանց զրույցից պատահաբար լսել է, որ գնում են ինչ-որ ռեստորան, որի անունը մատուցողն ասաց ինձ:

Թեև այդ ռեստորանն այնքան էլ մոտիկ չէր, բայց ես վարորդին ասացի, որ քշի այնտեղ, քանի որ ոչ մի ուրիշ «դոկտորի» չգիտեի:

Եվ այս անգամ էլ պարզվեց, որ նա «բժիշկ» չէ, այլ... «իրավագիտության դոկտոր» է:

Ես հասա, ինչպես այնտեղ են ասում, իմ «գազաթնակետին»:

Վերջապես իմ գլխում միտք ծագեց դիմելու ռեստորանի ավագ մատուցողին և նրան մանրամասն բացատրելու, թե ինչ է իմ ուզածը:

Այդ մատուցողը բավական բարեհաճ էակ դուրս եկավ: Նա ոչ միայն ինձ բացատրեց, թե ինչ պետք է անել, այլև ինձ ուղեկցեց մի բժշկի մոտ, որն այս անգամ կոչվում էր «մանկաբարձ-դոկտոր»:

Մենք պատահաբար նրան տանը գտանք, և նա այնքան բարի գտնվեց, որ համաձայնեց անմիջապես գալ ինձ հետ: Բայց մինչև մենք տեղ հասանք, իմ խեղճ հարևանուհին արդեն տղա էր ծնել՝ իր առաջնեկին, և առանց որևէ մեկի օգնության մի կերպ բարուրելով իր մանչուկին՝ խոր քուն էր մտել այն ահավոր տանջանքներից հետո, որոնք կրել էր միայնության մեջ:

Ահա այդ օրվանից սկսած ես իմ ամբողջ էությամբ ասում եմ նույնիսկ այդ «դոկտոր» բառի հնչողությունը, իսկ Երկիր մոլորակի բոլոր էակներին խորհուրդ կտայի այդ բառն օգտագործել միայն այն դեպքերում, երբ խիստ զայրացած են:

Որպեսզի դու ավելի լավ հասկանաս քո այդ մոլորակի ժամանակակից բժիշկների նշանակությունը, անհրաժեշտ է մեջբերել մեր մեծապատիվ մոլլա Նասրեդինի մի ասույթը, որը վերաբերում է հենց այդ ժամանակակից բժիշկներին:

Նա նրանց մասին այսպես է ասել. «Մեր մեղքերի պատճառով Աստված մեզ համար երկու տեսակի բժիշկներ է ուղարկել. մի տեսակը օգնում է մեզ, որ մեռնենք, իսկ մյուս տեսակը՝ խանգարում, որ ապրենք»:

ԳԼՈՒԽ ԼԲ Հիպնոտիզմ

«Այսպիսով,– շարունակեց Բեհեդգեբուդը,– քո այդ Երկիր մոլորակի մակերևույթ կատարած իմ վեցերորդ անձնական այցի ժամանակ ես որոշեցի երկար մնալ այնտեղ և դառնալ արհեստավարժ բժիշկ: Եվ ես իսկապես բժիշկ դարձա, բայց ոչ այնպիսին, ինչպիսին այնտեղի մեծամասնությունն է, այլ ընտրեցի այն մասնագիտացումը, որն այնտեղ անվանում են «հիպնոսացնող բժիշկ»:

Այդ մասնագիտացումն ընտրեցի առաջին հերթին այն պատճառով, որ վերջին դարերում այդպիսի մասնագետ-բժիշկներին մատչելի են դարձել այնտեղի բոլոր «դասակարգերը» կամ «կաստաները», որոնց մասին արդեն խոսել եմ, և քանի որ նման մասնագետները մեծ վստահություն և հեղինակություն են վայելում, ապա սովորական էակները հակված են անկեղծ լինելու նրանց հետ հարաբերվելիս՝ թույլ տալով, որ նրանք մուտք գործեն, ինչպես այնտեղ են ասում, իրենց «ներաշխարհը»:

Եվ երկրորդ՝ ես այդպիսի մասնագետ դարձա նաև այն պատճառով, որ իմ անձնական նպատակներին հասնելուն զուգընթաց՝ միաժամանակ հնարավորություն ունենամ իրական բժշկական օգնություն ցուցաբերելու այդ դժբախտներից մի քանիսին:

Իրոք, զավակս, այնտեղի բոլոր աշխարհամասերի բոլոր էակները, անկախ այն բանից, թե ո՞ր դասակարգին են պատկանում, վերջին ժամանակներում մեծ կարիք ունեն հատկապես այդպիսի բժիշկների:

Կարելի է ասել, որ ես արդեն մեծ փորձ ունեի այդ մասնագիտության բնագավառում, քանի որ քո սիրելիների առանձին ներկայացուցիչների հոգեկառույցի նրբությունների իմ նախկին

պարզաբանումների ընթացքում ես շատ անգամ էի դիմել այն մեթոդներին, որոնք կիրառում են այդ մասնագիտացումն ունեցող բժիշկները:

Պետք է քեզ ասեմ, որ նախկինում քո սիրելիները, ինչպես և համայն Տիեզերքի բոլոր մյուս եռուղեղ էակները, չեն ունեցել այդ հատուկ հոգեկան հատկանիշը, որի միջոցով նրանց կարելի է մտցնել, այսպես կոչված, «հիպնոսացված վիճակի» մեջ: Նման վիճակում հայտնվելը քո սիրելիներին բնորոշ դարձավ իրենց հոգեկառույցում որոշակի համակցության ձևավորման հետևանքով, ինչը տեղի ունեցավ նրանց ընդհանուր ներկայության գործունեության անկանոնությունից:

Այդ տարօրինակ հոգեկան հատկանիշն ի հայտ եկավ Ատլանտիդայի կործանումից որոշ ժամանակ անց և ապա ի վերջո նրանցից յուրաքանչյուրի ներկայության մեջ ամրապնդվեց այն ժամանակներից սկսած երբ նրանց «գուստատը»³⁵, այսինքն՝ *լինելիական գիտակցության* ձևավորումը սկսեց երկատվել, և նրանց ներսում աստիճանաբար գոյացան երկու կատարելապես տարբեր և իրար հետ ոչ մի կապ չունեցող գիտակցություններ, որոնցից առաջինը նրանք անվանեցին պարզապես «գիտակցություն», իսկ երկրորդը շարունակում են անվանել «ենթագիտակցություն»:

Եթե դու ջանաս հստակ պատկերացնել և քո ընդհանուր ներկայության համապատասխան մասերում նախագոյացնես այն ամենը, ինչ հիմա պատրաստվում եմ քեզ բացատրել, ապա հնարավոր է, որ լավ հասկանաս այն բանի պատճառների մոտավորապես կեսը, թե ինչու՞ Երկիր մոլորակի վրա բազմացող և քեզ դուր եկած եռուղեղ էակների հոգեկառույցն ի վերջո այդպիսի արտառոց երևույթ դարձավ:

Այդ հոգեկան առանձնահատկությունը՝ «հիպնոսացված վիճակի» մեջ ընկնելը, ինչպես արդեն ասացի, բնորոշ է միայն քո այդ մոլորակի եռուղեղ էակներին, ուստի կարելի է ասել, որ եթե նրանք չլինեին, ապա համայն մեր Մեծ Տիեզերքում ընդհանրապես չէր լինի նույնիսկ «հիպնոտիզմ» կոչվող *լինելիական հասկացությունը*:

Նախքան այդ ամենի մասին պատմելը շարունակելս՝ տեղին կլինի այստեղ նշել, որ թեև վերջին քսան հարյուրամյակների ընթացքում քո հավանությանն արժանացած եռուղեղ էակների, հատկապես՝ ժամանակակիցների, մեծամասնության արթմնի վիճակում սովորական գոյատևման համարյա ամբողջ ընթացքը տեղի է ունենում իրենց բնորոշ այդ առանձնահատկության ազդեցության տակ, սակայն հենց իրենք հիպնոսացված վիճակ են համարում միայն իրենց այն վիճակը, որի ժամանակ այդ հատուկ հատկանիշի գործընթացները տեղի են ունենում արագացված, և դրա արդյունքները խտացված են ստացվում: Եվ նրանք չեն նկատում, կամ, ինչպես իրենք կասեին, իրենց զարմանքը չեն հարուցում այդ հատկանիշի անսովոր արդյունքները, որը ոչ շատ վաղուց ամրապնդվել է իրենց սովորական գոյատևման գործընթացում, քանի որ , մի կողմից՝ իրենց նորմալ ինքնակատարելագործման բացակայության պատճառով նրանք չունեն, այսպես կոչված, «լայն մտահորիզոն», և մյուս կողմից՝ քանի որ նրանք ծնվում և գոյատևում են *իթոկլանցի*՝ սկզբունքով, ապա նրանց արդեն բնորոշ է դարձել ընկալված բաները՝ *«շատ շուտ մոռանալը»*: Բայց երբ իրենց բնորոշ այդ հատկանիշի նշած արդյունքները ստացվում են «արագացված-խտացված» ձևով, ապա ցանկացած անսովոր դրսևորումներ՝ լինեն դրանք իրենցը թե ուրիշներինը, այն աստիճան իրական են դառնում, որ կատարելապես ակներև են դառնում նույնիսկ նրանց խղճուկ բանականության համար և, հետևաբար, անխուսափելիորեն շոշափելի տեսք են ստանում:

Բայց եթե նույնիսկ նրանցից ոմանք պատահաբար նկատում են որևէ անտրամաբանական բան իրենց կամ ուրիշների դրսևորումներում, ապա, «տիպականության» օրենքի իրենց չիմացության պատճառով, նրանք լավագույն դեպքում այդ բանը վերագրում են տվյալ էակների բնավորության առանձնահատկություններին:

Նրանց հոգեկառույցի այդ «աննորմալ» և յուրահատուկ հատկանիշն առաջին անգամ արձանագրել են Պախրակարան երկրի Գոբ քաղաքի գիտուն էակները. և արդեն այն ժամանակ դա իրենց գիտության լուրջ ու մանրագնին հետազոտվող բնագավառներից մեկը դարձրին և *«անձի անպատասխանատու դրսևորումներ»* անվան տակ տարածեցին ամբողջ մոլորակով մեկ:

Բայց հետո, երբ կրկին եկավ *«փոխադարձ ոչնչացման կանոնավոր գործընթացի»* հերթը, գիտության այդ մանրագնին հետազոտվող բնագավառը, որն այն ժամանակ դեռևս համեմատաբար

³⁵ ռուս. տարբերակում՝ зычат, անգլ. տարբերակում՝ zoostat

նորմալ վիճակում էր, մնացած բարի նվաճումների պես սկսեց աստիճանաբար մոռացվել և ի վերջո իսպառ չքացավ:

Եվ միայն շատ դարեր անցնելուց հետո այդ բնագավառը կրկին սկսեց վերածննդի նշաններ ցույց տալ:

Բայց... Այն բանի հետևանքով, որ այդ ժամանակ այնտեղի գիտուն էականների մեծ մասն արդեն պատկանում էր «նոր տեսակի» գիտնականների խմբին, նրանք այնպես պինդ ճզմեցին այդ նոր վերածնունդը, որ խեղճը դեռ չէր հասցրել զարգանալ՝ արդեն շարժեցին իրենց սովորական, այսպես կոչված «աղբանոցը»:

Բանն այսպես եղավ:

Իր ժամանակակիցներին չնմանվող մի համեստ գիտուն էակ, որի ազգանունը Մեսմեր էր, և ծագումով, այսպես կոչված, «Ավստրո-Հունգարիայից» էր, մի անգամ իր որոշ փորձերի ընթացքում հստակ նկատեց ու արձանագրեց իր նման էակների գիտակցության երկակիության փաստը:

Նա դրանից խիստ տպավորված էր և որոշեց ամբողջությամբ նվիրվել իր հետաքրքրությունը շարժած խնդրի հետազոտմանը:

Շարունակելով դիտել և ուսումնասիրել՝ նա համարյա կարողացավ գտնել դրա պատճառը: Բայց երբ որոշակի մանրամասներ պարզելու նպատակով նա սկսեց գործնական փորձեր կատարել, ահա հենց այդ ժամանակ էլ նրա նկատմամբ սկսեց կիրառվել մի առանձնահատկություն, որը բնորոշ է այնտեղի «նոր տեսակի» գիտուն էակներին:

Նոր տեսակի երկրային գիտուն էակների այդ առանձնահատկությունը կոչվում է «հալածել»:

Երբ այդ ազնիվ ավստրո-հունգարացի գիտուն էակն այն ժամանակ սկսեց իր պարզաբանիչ փորձերն անել ոչ այնպես, ինչպես մեխանիկորեն արդեն անում էին ընդհանրապես բոլոր նոր տեսակի երկրային գիտուն էակները, ապա նրան, գոյություն ունեցող ավանդույթի համաձայն, կանոնավոր կերպով «հալածեցին»:

Եվ հալածանքի այդ գործընթացն այդ խեղճ Մեսմերի նկատմամբ այնքան գործուն էր, որ արդեն իներցիայով սերնդեսերունդ փոխանցվեց երկրային գիտուն էակներին:

Օրինակ՝ հիպնոտիզմի հարցերին վերաբերող ներկայումս գոյություն ունեցող բոլոր գրքերը, իսկ դրանք այնտեղ հազարներով են, միշտ սկսվում են այն պնդումով, որ այդ Մեսմերը, ոչ ավել, ոչ պակաս, փողասեր ու ազահ խաբեբա էր և վերին աստիճանի խաբդախ, բայց մեր «ազնիվ» ու «մեծ» գիտնականները շատ արագ նրան դիմակազերծեցին և թույլ չտվեցին, որ որևէ մեկին վնաս պատճառի:

Վերջին ժամանակների գիտուն էակները որքան ավելի «խիստ հետևողական» են իրենց «ապուշության» իմաստով, այնքան ավելի շատ են քննադատում Մեսմերին և նրա մասին խոսում ու գրում են ամեն տեսակի անհեթեթություններ, որպեսզի նրան վարկաբեկեն:

Եվ դրանով իսկ քննադատում են իրենց մոլորակի հենց այն համեստ ու ազնիվ գիտուն էակին, որը, եթե իրեն չհալածեին, կվերածներ այն գիտությունը, որը միակ անհրաժեշտն է իրենց համար, քանի որ միայն դրա միջոցով է գուցե հնարավոր, որ իրենք կարողանան ձերբազատվել կունդաբուժեր օրգանի հատկությունների հետևանքներից:

Վնաս չի լինի այստեղ նշել, որ հենց այն ժամանակ, երբ ես ընդմիշտ լքում էի այդ մոլորակը, այնտեղ կրկնվեց ճիշտ այն, ինչ տեղի էր ունեցել այդ Մեսմերի հետ: Այս անգամ մի ուրիշ ազնիվ ու համեստ գիտուն էակ, որը պատկանում էր Ֆրանսիա կոչվող հանրությանը, համառ ու գիտակցական աշխատանքով հնարավորություն գտավ բուժելու այն ահավոր հիվանդությունը, որի տարածվածությունը վերջին ժամանակներում ստացել է համամոլորակային բնույթ:

Այդ ահավոր հիվանդությունն այնտեղ «քաղցկեղ» է կոչվում:

Քանի որ այդ ֆրանսիացին նույնպես իր հայտնագործության մանրամասները պարզաբանող փորձերը կատարեց ոչ համընդհանուր ընդունված ձևով, ապա դրա հետևանքով ժամանակակից մյուս գիտուն էակները նրա նկատմամբ ևս կիրառեցին «հալածելու» իրենց առանձնահատկությունը:

Հավանաբար հիմա նաև քո ներկայության մեջ են սկսում բյուրեղանալ միշտ համապատասխան դեպքերում առաջացող «անսասան համոզվածության» *լինելիական ազդակի* նախադրյալներ այն բանի վերաբերյալ, որ հենց միայն այդ նոր տեսակի գիտուն էակների պատճառով, որոնց ներսում արդեն արմատացած է հիշյալ առանձնահատկությունը, այն է՝ անպայման հալածել իր աշխատակցին, որը վարվում է ոչ այնպես, ինչպես արդեն ընդունված է վարվել այնտեղ հաստատված սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմաններով, քո այդ չարաղետ Երկիր մոլորակի եռուղեղ

էակաների ներկայություններում երբեք տեղի չի ունենում, այսպես կոչված, «Անսկուանո»³⁶», ինչի հետ, այլ բաների շարքում, նույնպես հույս էր կապում Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը:

Նրա այդ «էաբուխ սիրո հույսի» մասին ես պատահաբար իմացա իմ ուսումնասիրությունների ընթացքում, որոնք վերաբերում էին նրա Սրբազնագույն Գործունեությանը:

Հնարավոր է, տղաս, որ դու դեռ չգիտես, թե ինչ բան է այդ Անսկուանո կոչվող տիեզերական սրբազան գործընթացը:

Սրբազան Անսկուանոն եռուղեղ էակաների *օբյեկտիվ* բանականության կատարելագործման այն գործընթացն է, որն ինքնըստինքյան է տեղի ունենում պարզապես «Ժամանակի ընթացքի հետ»:

Որպես կանոն՝ ամենուրեք մեր Մեծ Տիեզերքի բոլոր այն մոլորակներում, որոնցում բազմաանում են եռուղեղ էականեր, նրանց *օբյեկտիվ բանականության* կատարելագործումը կարող է իրականանալ միայն անձնական գիտակցական ջանքերի և կամավոր տառապանքների միջոցով:

Այդ սրբազան Անսկուանոն կարող է տեղի ունենալ միայն այնպիսի մոլորակներում, որոնցում ընդհանրապես բոլոր տիեզերական ճշմարտությունները հայտնի են դարձել բոլոր էակներին:

Իսկ բոլոր տիեզերական ճշմարտությունները սովորաբար այդ մոլորակներում բոլորին հայտնի են դառնում այն բանի շնորհիվ, որ տվյալ մոլորակի էակները, գիտակցական աշխատանքի միջոցով իմանալով այս կամ այն տիեզերական ճշմարտությունը, դա հայտնում են իրենց մոլորակի մնացած էակներին, և այդ եղանակով աստիճանաբար բոլոր տիեզերական ճշմարտությունները հայտնի են դառնում տվյալ մոլորակի առանց բացառության բոլոր էակներին:

Այդ սրբազան գործընթացի շնորհիվ, որը դիտավորյալ կերպով մտցվել է ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՆԱՏԵՍ ՀԱՄԸՆԴՆԱՆՈՒՐ ՀՈՐ կողմից, նախատեսված է, որ երբ տվյալ մոլորակի եռուղեղ էակաների ներկայություններում գործում է Եռամասիկապող հիմնական տիեզերական սրբազան օրենքը, դրանից գոյացած երրորդ սուրբ ուժի, այն է՝ «սուրբ հաշտեցնող» ուժի ավելցուկն ինքնըստինքյան բյուրեղացնի իրենց ներսում այն բանի նախադրյալների առաջացումը, որը կոչվում է *«լինելիական էզոհայտնության»³⁷ կամք*:

Ահա... հիշյալ առանձնահատուկ հատկանիշը, որ միայն վերջերս է ամրապնդվել քո սիրելիների ընդհանուր ներկայություններում, այն է, որ նրանց զուստատի կամ, ինչպես իրենք կասեին, «ոգեկոչված մասերի» գործունեությունն անցում է կատարում իրենց ընդհանուր ամբողջի գործունեությանը, որը հարկ եղած կարգով տեղի է ունենում իրենց լիակատար պասիվ վիճակում, այսինքն՝ «քնի» ժամանակ. և իրենց այդ քնի ընթացքում իրենց մոլորակային մարմնի գործունեությունը շարունակում է մնալ այնպիսին, ինչպիսին բնորոշ է իրենց արթմնի վիճակին:

Որպեսզի ավելի լավ պատկերացնես ու հասկանաս նման զարմանալի «հոգեկան հատկանիշից» բխող արդյունքները, դու նախ և առաջ պետք է իմանաս քո այդ սիրելիների ընդհանուր ներկայություններում տեղ գտած երկու փաստի մասին:

Այդ փաստերից առաջինը նրանց ընդհանուր ներկայություններում ստացվում է գոյություն ունեցող *«Բնության ինքնահարմարեցում»* կոչվող տիեզերական օրենքի շնորհիվ, իսկ երկրորդ փաստն արդյունք է իրենց իսկ կողմից հաստատված սովորական լինելիական գոյատևման աննորմալ պայմանների, որոնց մասին բազմաթիվ անգամ ասել եմ:

Առաջին փաստն այն է, որ այն ժամանակներից սկսած, երբ նրանց աննորմալ գոյատևման հետևանքով նրանց մոտ սկսվեց ֆիքսվել, այսպես կոչված, *«երկհամակարգային զուստատ»*, այսինքն՝ երկու անկախ գիտակցություն, Մեծ Բնությունը սկսեց աստիճանաբար հարմարվել դրան և ի վերջո հասավ այն բանին, որ երբ նրանք հասնում են որոշակի տարիքի, նրանց ներսում տարբեր, այսպես կոչված, «արագություններով» սկսում են գործել երկու «ինկլյազանիկշաներ»³⁸, այսինքն, ինչպես իրենք կասեին, «արյան շրջանառության» երկու տարբեր տեսակներ:

Նշված որոշակի տարիքից սկսած՝ տարբեր արագություններ ունեցող «ինկլյազանիկշաներից» կամ «արյան շրջանառություններից» յուրաքանչյուրը գործունեության է մղում հիշյալ գիտակցություններից մեկը, և հակառակը՝ գիտակցություններից ամեն մեկի գործունեությունը նրանց մոտ առաջացնում է իրեն համապատասխան արյան շրջանառություն:

³⁶ ռուս. տարբերակում՝ Антуано, անգլ. տարբերակում՝ antkooano.

³⁷ ռուս. տարբերակում՝ эгоайтурасной, անգլ. տարբերակում՝ egoaitoorassian

³⁸ ռուս. տարբերակում՝ инклязаникшаны, անգլ. տարբերակում՝ inkliatzanikshanas

Արյան շրջանառության այդ երկու անկախ տեսակների տարբերությունն այն է, որ նրանց ներկայություններում առկա են «տեմպադավլակշերային»³⁹ շրջանառություններ», կամ, ինչպես իրենց ժամանակակից բժշկությունն է անվանում՝ «արյունատար անոթների լցվածության տարբերություններ»։ այսինքն՝ արթմնի վիճակի պայմաններում «արյան ճնշման ծանրության կենտրոնը» նրանց ընդհանուր ներկայություններում լինում է արյունատար անոթների ընդհանուր համակարգի մի մասում, իսկ պասսիվ վիճակի պայմաններում՝ անոթների մի այլ մասում։

Իսկ երկրորդ փաստը, որը բխել է քո սիրելիների *լինելիական գոյության* աննորմալ պայմաններից, այն է, որ երբ իրենց ժառանգների աշխարհ գալու հենց ամենասկզբից նրանք դիտավորյալ կերպով ջանում են, որպեսզի, շրջապատի աննորմալ պայմաններին համապատասխան, նրանց «լոգիկնեստերային տեղայնացումներում» հնարավոր բոլոր միջոցներով ամրապնդեն բացառապես իրենց արհեստածին ընկալումներից ստացված և էլի իրենց աննորմալ գոյատևման արդյունք հանդիսացող հնարավորին չափ շատ տպավորություններ (իրենց ժառանգների նկատմամբ ցուցաբերվող այս չարաղետ գործունեությունը նրանք «դաստիարակություն» են կոչում), ապա այդպիսի բոլոր արհեստածին ընկալումները նրանց ընդհանուր ներկայություններում աստիճանաբար առանձնանում և ձեռք են բերում սեփական անկախ գործունեություն, որն իրենց մոլորակային մարմնի գործունեության հետ կապված է լինում միայն այն չափով, որքան որ անհրաժեշտ է դրա մեխանիկական դրսևորման համար. իսկ այդ արհեստածին ընկալումները նրանք այդ դեպքում, իրենց միամտության պատճառով, ընկալում են որպես իրենց իրական «գիտակցությունը»։ Իսկ ինչ վերաբերում է ճշմարիտ *լինելիական գիտակցության* համար անհրաժեշտ և Մեծ Բնության կողմից իրենց մեջ ներդրված այն սրբազան նախադրյալներին, մի գիտակցության, ինչպիսին նրանք հարկ է, որ ունենան ան պատասխանատու գոյությանը նախապատրաստվելու հենց ամենասկզբից՝ իրեն բնորոշ բոլոր հատկություններով հանդերձ, որոնք իրենց ներսում ծնում են «հավատի», «հույսի», «սիրտ» և «խղճի» *լինելիական ազդակներ*, ահա այդ նախադրյալները, որոնք նույնպես աստիճանաբար մեկուսացվել և ինքնահոսի են մատնվել, զարգանում են պատասխանատու էակների մտադրություններից ու, իհարկե, նաև հենց դրանց կրողներից անկախ և սկսում համարվել, այսպես կոչված, «ենթազիտակցություն»։

Հենց միայն այդ օբյեկտիվ իմաստով չարաղետ, բայց իրենց միամիտ ու սուբյեկտիվ պատկերացմամբ՝ ժառանգների համար «բարյացակամ» վերաբերմունքի պատճառով Մեծ Բնության կողմից նրանց մեջ ներդրված բոլոր սրբազան նախադրյալները, որոնք պետք է ձևավորեին նրանց ճշմարիտ *լինելիական գիտակցությունը*, մեկուսացվում են և իրենց գոյատևման ողջ ընթացքում մնում են համարյա նախաստեղծ վիճակում, իսկ ամեն տեսակի տպավորությունները, որոնք նրանք անխուսափելիորեն ընկալում են իրենց վեց «լինելիական սկեննալիցարաններով»⁴⁰, կամ, իրենց տեքմինով ասած, «զգայարաններով» (իմիջիայլոց, նրանք կարծում են, որ դրանք հինգն են), որոնք նրանց ներկայություններում գոյություն ունեն արտաքին երևույթներն ընկալելու համար, տեղայնացվում են և, օժտվելով մեկուսացված գործունեությամբ՝ աստիճանաբար տիրապետող են դառնում նրանց ամբողջ ընդհանուր ներկայության ներսում։

Թեև նրանք պատահաբար ընկալվող «տպավորությունների» այդպիսի տեղայնացում ունեն և իրենց հայտնի է դրա գործունեության մասին, սակայն նրանց մոլորակային մարմնին բնորոշ գործունեության և իրենց ընդհանուր ներկայության կողմից ձեռք բերվող *օբյեկտիվ բանականության* առումով այն ոչ մի դեր չի խաղում։

Բոլոր այդ միտումնավոր կամ պատահաբար ընկալված տպավորությունները, որոնցից կազմավորվում են նշված տեղայնացումները, պետք է համադրական-տրամաբանական նյութ ծառայեն նրանց ճշմարիտ *լինելիական գիտակցության* համար, ինչը նրանք հարկ է, որ ունենան, և որի միջոցով ստացված ընկալումների պատահական արգասիքները նրանք իրենց միամտության պատճառով երբեմն վստահաբար համարում են սոսկ որպես, իրենց կարծիքով ոչ էական, այսպես կոչված, «կենդանական բնագոյի» ռեֆլեքսներ։

Միայն այն պատճառով, որ քո սիրելիները՝ հատկապես ժամանակակիցները, բացարձակապես չգիտեն և նույնիսկ չեն էլ կասկածում իրենց նշանավոր դաստիարակությունը գոնե իրենց

³⁹ ռուս. տարբերակում՝ темпдавлaкшерной, անգլ. տարբերակում՝ tempodavlakshernian

⁴⁰ ռուս. տարբերակում՝ скерналиционников, անգլ. տարբերակում՝ skernalitsioniks

Ժառանգների ենթագիտակցությանը հարմարացնելու անհրաժեշտության մասին, այլ դրա փոխարեն միշտ և ամեն ինչով նպաստում են, որ ամբողջ աճող սերունդը տպավորություններ ընկալի միայն աննորմալ արհեստականից, միայն հենց այդ պատճառով է, որ երբ նրանք հասնում են պատասխանատու էակի տարիքին, բոլոր նրանց *լինելիական դատողություններն* ու դրանցից արված եզրակացությունները ստացվում են ամբողջովին անհատական-սուբյեկտիվ և կապված չեն լինում ոչ միայն իրենց ներսում առաջացող ճշմարիտ *լինելիական ազդակների*, այլ նաև այն համատեղեցիկ օրինաչափ երևույթների հետ, որոնց բանական գիտակցումը պարտադիր է ամեն մի եռուղեղ էակի համար, և որոնց միջոցով կապ է հաստատվում մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների միջև, որպեսզի համատեղեցիկ անհատական գործունեություն ծավալվի, ինչի համար էլ հենց գոյություն ունի Տիեզերքի համայն գոյը:

Որպեսզի դու առավել ամբողջական պատկերացնես այդ յուրահատուկ «հոգեկան վիճակը», պետք է ասել, որ նույնիսկ հիմա էլ նրանք ծնվում են՝ ունենալով ճշմարիտ *լինելիական բանականություն* ձեռք բերելու բոլոր հնարավոր նախադրյալները, և ծնվելիս նրանց ներկայությունները դեռևս ոչ մի «լոգիկնեստարային կազմավորումներ» չեն ունենում, որոնք հետագայում տեղայնացվում են և մեկուսացված գործունեությամբ օժտում հիշյալ «կեղծ գիտակցությունը»: Միայն ավելի ուշ՝ նրանց զարգացման և պատասխանատու էակներ դառնալու նախապատրաստական շրջանում, կա՛մ ինքնուրույնաբար, կա՛մ իրենց, ինչպես իրենք են ասում, «ծնողների» կամ «ուսուցիչների» միտումնավոր ցուցումներով, որոնք իրենց վրա պարտավորություն են վերցնում տվյալ էակներին նախապատրաստելու պատասխանատու գոյատևման համար, դեռահասները սկսում են, ինչպես ասացի, դիտմամբ նպաստել այն տպավորությունների ընկալմանն ու ամրապնդմանը, որոնք հետագայում նախադրյալներ են դառնում շրջապատում արդեն հաստատում գտած աննորմալ պայմաններին համապատասխանող ազդակների համար. և միայն այդ ժամանակ է, որ, աստիճանաբար ձևավորվելով, իրենց ընդհանուր ներկայության մեջ սկսում է իշխել իրենց այդ արհեստականորեն կազմավորված «գիտակցությունը»:

Այդ տեղայնացված նախադրյալների համախմբությունը, որոնք գոյություն ունեն նրանց ներկայություններում և նրանցում ոգեկոչված են ճշմարիտ *լինելիական գիտակցության* համար, որին իրենք ենթագիտակցություն են կոչում, համադրման ու քննադատության համար չունենալով ոչ մի «լոգիկնեստարային կազմավորում», այլ հենց սկզբից միայն հնարավորություն ունենալով սրբազան *լինելիական ազդակներ* ծնել, որոնք կոչվում են «հավատ», «սեր», «հույս» և «խիղճ»՝ մշտապես հավատում է նոր ընկալված ամեն ինչին, մշտապես սիրում է այն և մշտապես հույս է կապում դրա հետ:

Քանի որ տվյալ դրույթի բացատրության, ինչպես նաև, հնարավոր է, իմ հետագա բացատրությունների համար դու պետք է ավելի մանրամասն գիտելեքներ ունենաս *լինելիական համբարձոյինի*⁴¹ մասին, ապա նախքան պատմությունս շարունակելն անհրաժեշտ եմ գտնում քեզ հիմա տեղեկություններ հաղորդել հատկապես այդ տիեզերական սուբստանցիայի մասին:

Համբարձոյինն այլ բան չէ, քան էակի կեսջան մարմնի «արյունը». ճիշտ այնպես, ինչպես տիեզերական նյութերի՝ արյուն կոչվող համախմբությունն է ծառայում էակի մոլորակային մարմնի սնուցման և նորացման համար, այնպես էլ համբարձոյինն է ծառայում կեսջան մարմնի սնուցման ու կատարելագործման համար:

Պետք է ասել, որ ընդհանրապես եռուղեղ էակների, ինչպես և քո սիրելիների ընդհանուր ներկայության մեջ առկա արյան բաղադրության որակը կախված է արդեն «լիովին կազմավորված» *լինելիական մարմինների* քանակից:

Եռուղեղ էակների ներկայություններում առկա արյունը կարող է բաղկացած լինել այնպիսի նյութերից, որոնք փոխակերպման ճանապարհով առաջանում են երեք առանձին ու անկախ, այսպես կոչված, «համատեղեցիկ իրականացումների աղբյուրներից»:

Լինելիական արյան այն մասի նյութերը, որոնք Բնությունը նախատեսել է էակների մոլորակային մարմիններին ծառայելու համար, փոխակերպման ճանապարհով առաջանում են հենց այն մոլորակի նյութերից, որտեղ կազմավորվում և գոյատևում են տվյալ էակները:

⁴¹ ռուս. տարբերակում՝ хамбледзоин, անգլ. տարբերակում՝ hanbledzoin

Սակայն այն սուբստանցիաները, որոնք նախատեսված են էակի կեսջան մարմնին ծառայելու համար, և որոնց համախմբությունը համբարձոին է կոչվում, ստացվում են մյուս մոլորակների և հենց այն արևի տարրերի փոխակերպումից, որի համակարգում տեղակայված է տվյալ էակի կազմավորվման և գոյատևման վայրը:

Եվ վերջապես, *լինելիական արյան* այն մասը, որը համարյա ամենուրեք կոչվում է սրբազան *լինելիական համբարձոին* և միայն մի քանի մոլորակներում է կոչվում «սրբազան Հայեսախալդան⁴²», և ծառայում է էակի հոգի կոչվող բարձրագույն մասին, կազմավորվում է անմիջականորեն մեր Սրբազնագույն Բացարձակ Արևի ճառագումներից:

Էակի մոլորակային մարմնի արյան համար պահանջվող նյութերն այդ մարմնի մեջ են մտնում «*առաջին լինելիական սննդի*» միջոցով, կամ, ինչպես ասում են քո սիրելիները՝ «կերակուրի միջոցով»:

Իսկ «*բարձրագույն լինելիական կեսջան մարմնի*» ինչպես հանդերձավորման, այնպես էլ կատարելագործման համար անհրաժեշտ սուբստանցիաները նրանց ընդհանուր ներկայության մեջ մուտք են գործում, ինչպես իրենք են ասում, «շնչառությամբ» և իրենց մաշկի, այսպես կոչված, «ծակոտիներով»:

Իսկ տիեզերական այն սրբազան սուբստանցիաները, որոնք պահանջվում են ամենաբարձրագույն *լինելիական մարմնի* համար, որի սրբազան *լինելիական մասն*, ինչպես արդեն ասել եմ, իրենք հոգի են անվանում, նրանց ընդհանուր ներկայություններում կարող են յուրացվել և համապատասխանաբար փոխակերպվել հանդերձանքի, ինչպես և մեր դեպքում՝ բացառապես, այսպես կոչված, «*էզոհայերիտուրասական*⁴³ *մտասնեուման*» միջոցով, որն ընդհանուր ներկայության մեջ ի կատար է ածվում էակի բոլոր անկախ ոգեկոչված մասերի գիտակից մղվածությամբ:

Թեև դու կկարողանաս տեղը տեղին հասկանալ այն ամենը, ինչ վերաբերում է բոլոր այն տիեզերական նյութերին, որոնցով քո սիրելիների ընդհանուր ներկայություններում հանդերձավորվում ու կատարելագործվում են նրանց երեք անկախ *լինելիական մարմինները*, միայն երբ իմ խոստման համաձայն կպատմեմ ընդհանրապես Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման գլխավոր ու հիմնական օրենքների մասին, այնուամենայնիվ մեր այժմվա թեման ավելի ընդգրկուն պարզաբանելու նպատակով հիմա անհրաժեշտ է մի փոքր պատմել այն մասին, թե ինչպիսի ձևափոխությունների է ենթարկվել քո սիրելիների ընդհանուր ներկայություններում մեխանիկորեն ընդունվող «*երկրորդ լինելիական սննդի*» իրացումը:

Սկզբում՝ կունդաբուֆեր օրգանի ոչնչացումից հետո, երբ նրանք մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների պես սկսել էին *փուլիասնիտամյան* ձևով գոյատևել, այդ *երկրորդ լինելիական սնունդը* նորմալ էր փոխակերպվում, և դրան բնորոշ բոլոր մնացած տարրերը, որոնք առաջանում են ինչպես իրենց հարազատ մոլորակի, այնպես էլ դրա մթնոլորտի մեջ ներթափանցած՝ իրենց արևային համակարգի մյուս մոլորակների փոխակերպումներից, նրանց ընդհանուր ներկայության կողմից յուրացվում էին իրենց ներսում արդեն գոյություն ունեցող որոշակի տվյալներին համապատասխան, իսկ այդ սննդի բաղադրության մեջ առկա տարրերի ավելցուկը, որն առանձին անհատների կողմից չէր յուրացվում, ինքնաբերաբար, ինչպես և մեր դեպքում, փոխանցվում էր իրենց շրջապատում եղած դրան արժանի էակներին:

Բայց հետո, երբ, ինչպես արդեն ասել եմ, նրանց մեծ մասը սկսեց գոյատևել եռուղեղ էակներին ոչ վայել ձևով, Մեծ Բնությունը ստիպված եղավ փոխելու նրանց *փուլիասնիտամյան գոյատևումը* և այն դարձնելու *իթոկլանցի* սկզբունքով, և այնժամ, երբ նրանց մեծ մասի ներկայություններում Մեծ Բնության կողմից նախատեսված այն որոշակի բյուրեղացումները, որոնք *երկրորդ լինելիական սննդի* բաղադրության կարևորագույն մասն են կազմում և, յուրացվելով էակների կողմից, փոխակերպվում են իրենց *բարձրագույն կեսջան մարմնի* կատարելագործման և հանդերձավորման համար անհրաժեշտ սուբստանցիայի, իրենց աննորմալ *լինելիական գոյատևման պատճառով* աստիճանաբար դադարեցին նշված նպատակով գիտակցորեն կամ ինքնաբերաբար յուրացվել, ապա այդ ամենի հետևանքով, ինչպես նաև այն բանի պատճառով, որ քո այդ մոլորակի մթնոլորտի մեջ անընդհատ շարունակվում էր այն նյութերի ներհոսքը, որոնք փոխակերպվում են մյուս խտացումներում և հայտնվում մոլորակների մթնոլորտների մեջ, արդյունքն այն եղավ, որ այդ

⁴² ռուս. տարբերակում՝ Айсахалдан, անգլ. տարբերակում՝ aiëssakhladonn

⁴³ ռուս. տարբերակում՝ есоайеритурасоро, անգլ. տարբերակում՝ aiësiritoorassian

չարադետ մոլորակի քո սիրելիների մոտ ևս մեկ որոշակի «հիվանդություն» առաջացավ, որի ազդեցությունն արդեն խիստ վնասակար է դարձել նրանց համար:

Բանն այն է, որ նշված որոշակի տիեզերական բյուրեղացումները, չօգտագործվելով իրենց համար նախատեսված նպատակով, իրենց մթնոլորտի որոշ փոխակերպումների ընթացքում խտանում են այդ մթնոլորտի որոշակի շերտերում և, շրջակա արտաքին պայմաններից և քո սիրելիների ընդհանուր ներկայության վիճակից կախված, որոնցից երկրորդն, իմիջիայլոց, գլխավորապես կապված է իրենց փոխհարաբերությունների բնույթի հետ, ժամանակ առ ժամանակ դրանց միջից ներթափանցելով ուղիղ իրենց մեջ, ինչպես սարքավորումների մեջ, որոնք Բնության կողմից նախատեսված են Մեծագույն համատիեզերական Տրոգավտոէգոկրատի նպատակներին ծառայող անհրաժեշտ տիեզերական նյութեր փոխակերպելու համար, և այնտեղ դրա համար «պարարտ հող» չգտնելով, որը կհամապատասխաներ Ջարդըլումի օրինաչափ գործընթացին, այդ տիեզերական բյուրեղացումներն այն ընթացքում, երբ այդ մոլորակին բնորոշ բյուրեղացումներին անցում կատարելու նպատակով ազատորեն կատարում են էվոլյուցիային և ինվոլյուցիային համապատասխանող գործընթացները և հասնում բյուրեղացումների ավարտին, արդեն այլ պատահական գործոնների ազդեցության հետևանքով մոլորակային մարմինների վրա թողնում են այնպիսի ազդեցություն, որով բնութագրվում է հիշյալ նոր ծագած առանձնահատուկ հիվանդությունը:

Այստեղ տեղին կլինի նշել, որ նման առանձնահատուկ պատճառ ունեցող հիվանդությունը քո սիրելիներն այնտեղ իրենց մոլորակի մակերևույթի տարբեր մասերում տարբեր ժամանակներում տարբեր կերպ են անվանում, և ժամանակակից էակները նույնպես տարբեր կերպ են անվանում և տարբեր կերպ են «իմաստակում» դրա պատճառները բացատրելիս:

Իրենց այդ հիվանդության մեծաքանակ անվանումների շարքից ներկայումս այնտեղ ամենատարածվածներն են՝ «գրիպը», «ինֆլուենցան», «իսպանկան», «արևադարձային տենդը» և այլն:

Ինչ վերաբերում է երկրորդ տեսակի *լինելիական սննդի* ընդունմանը, որն էակների մարմիններում շարունակվում է նույնիսկ մինչև հիմա, ապա, քանի որ նրանք կորցրել են *փուլիասնիտամյան* սկզբունքով գոյատևելու հնարավորությունը, *երկրորդ լինելիական սննդի* որոշ բաղադրիչներ շարունակում են սոսկ նպաստել *առաջին լինելիական սննդի* փոխակերպմանն ու մոլորակային մարմնից որոշ արդեն օգտագործված տարրերի հեռացմանը:

Այժմ արի շարունակենք մեր զրույցը քո սիրելիներին հատուկ հոգեկան հատկանիշի և նրանց մոտ ունեցած իմ գործունեության մասին, երբ որպես բժիշկ-մասնագետ ես նրանց վրա ազդում էի՝ օգտվելով իրենց այդ առանձնահատուկ հոգեկան հատկանիշից:

Թեև այդ «հիպնոտիզմը» կամ, ինչպես իրենք են նախընտրում անվանել, «գիտության» այդ բնագավառը ծագել և բժշկության կողմից ճանաչվել է միայն վերջերս, բայց արդեն հասցրել է շատ լուրջ գործոն դառնալ նրանց մեծ մասի արդեն իսկ բավականին խճճված հոգեկառույցում առավել մեծ խառնաշփոթ ստեղծելու և մոլորակային մարմնի գործունեությունը ավելի մեծ չափով խաթարելու համար:

Այն բանից հետո, երբ ես «հիպնոսացնող բժշկի» մասնագիտացում ձեռք բերեցի, սկսեցի հետաքրքրվել նաև իրենց պաշտոնական գիտությամբ, այնպես որ, երբ հետագայում իմ սովորական հետազոտություններն էի կատարում, որոնք վերաբերում էին զանազան լուրջ հարցերի, ինչպես օրինակ՝ Սրբազնագույն Աշիաթա Շիեմաշի գործունեության արգասիքներին, և դրանց ընթացքում պատահաբար գտնում էի որևէ բան, ինչը կապ էր ունենում իրենց գիտության այդ բնագավառի հարցերի հետ, ապա իմ բանականության համար ես պարզաբանում էի նաև այնտեղի այդ «թյուրիմացությունը»:

Քանի որ այնտեղի ժամանակակից էակների համար սովորականն էր դարձած և ինքնաբերաբար գրգռվող վերածնման պատճառները նաև իրենց գիտության այդ բնագավառի համար էին չափազանց յուրօրինակ և նույնիսկ, ինչպես իրենք կասեին, «նրբագրգիռ», ապա կարծում եմ, որ հետաքրքիր կլինի, եթե քեզ մի փոքր ավելի մանրամասն պատմեմ այդ հիշյալ «վերածննդի» մասին:

Թեև այնտեղի ժամանակակից գիտուն էակները պնդում են, թե իրենց գիտության այդ բնագավառը սկզբնավորել է Բրեյդ ազգանունով մի անգլիացի պրոֆեսոր, և ապա այն զարգացրել է ֆրանսիացի գիտնական Շարկոտը, սակայն իրականում բոլորովին էլ այդպես չի եղել:

Հիշյալ հարցի իմ մանրագնին հետազոտություններից իմիջիայլոց նաև պարզ դարձավ, որ դրանցից առաջինը՝ Բրեյդը, տիասնամուսի հատկությունների անհերքելի նշաններ է ցուցաբերել, իսկ մյուսը՝ Շարկոտը, ունեցել է «մամայի բալիկին» բնորոշ գծեր:

Իսկ երկրային այդպիսի տիպերը, հատկապես ժամանակակիցները, որևէ իրապես նոր բան բացահայտելու ունակ չեն:

Եվ իրոք, պարզվեց, որ այդ բանը տեղի է ունեցել հետևյալ կերպ:

Պեդրինի ազգանունով իտալացի մի աբբա խոստովանահայր էր իր քաղաքի միանձնուհիների վանքում:

Այդ աբբա-խոստովանահոր մոտ հաճախ խոստովանելու էր գալիս Եֆրոսինյա անունով մի միանձնուհի:

Վերջինիս մասին տարածվող պատմություններից ակնհայտ է դառնում, որ նա հաճախ ընկնում էր ինչ-որ հատուկ վիճակի մեջ և այդ վիճակում դրսևորում էր շրջապատի համար անսովոր վարք:

Աբբային խոստովանելու ընթացքում նա տրտնջում էր, որ ժամանակ առ ժամանակ ընկնում է «սատանայական գայթակղությունների» ազդեցության տակ:

Նրա բոլոր ասածներն ու նրա մասին տարածվող պատմությունները սկսում են հետաքրքրել աբբա Պեդրինիին, և նա շատ է ցանկանում անձամբ համոզվել դրանում:

Խոստովանություններից մեկի ժամանակ նա բոլոր հնարավոր միջոցներով փորձել է այդ միանձնուհուն դրդել անկեղծության և ամեն ինչից զատ նաև պարզել է, որ այդ «քույր-միանձնուհին» նախկինում «սիրեկան» է ունեցել, որը մի անգամ նրան նվիրել է իր լուսանկարը՝ շատ գեղեցիկ շրջանակով, և ինքը աղոթքներից հետո «հանգիստ առնելու» ընթացքում իրեն թույլ է տվել հիանալ իր «սիրեկանի» այդ նկարով և, ինչպես իրեն է թվացել, սատանայական գայթակղությունները պարուրել են նրան հենց այդ հիշյալ «հանգիստ առնելու» ժամանակահատվածներում:

Միանձնուհու անկեղծ պատմությունն ավելի է գրգռում աբբա Պեդրինիի հետաքրքրությունը, և նա որոշում է ամեն գնով պարզել դրա պատճառը. այդ նպատակով նա նախ և առաջ խնդրում է միանձնուհի Եֆրոսինյային, որ նա հաջորդ խոստովանությանը ներկայանա իր սիրեցյալի այդ շրջանակի մեջ առնված նկարով:

Հաջորդ խոստովանությանը միանձնուհին ներկայանում է այդ նկարով:

Այն իր մեջ որևէ առանձնահատուկ բան չէր պարունակում, բայց շրջանակն իսկապես անսովոր էր, որովհետև ամբողջովին զարդարված էր սաղափով և զանազան գունագեղ քարերով:

Մինչ աբբան ու միանձնուհին միասին դիտում էին շրջանակով նկարը, աբբան հանկարծ նկատեց, որ միանձնուհու հետ ինչ-որ տարօրինակ բան է կատարվում:

Սկզբում նա գունատվեց և որոշ ժամանակ կարծես քարացավ, որից հետո նրա մոտ սկսվեցին այնպիսի դրսևորումներ, որոնք այնտեղ ունենում են նորապսակները, այսպես կոչված, «առաջին գիշերվա» ընթացքում:

Այդ ամենից հետո աբբա Պեդրինին ավելի բուռն ցանկություն ունեցավ իր համար պարզելու այդ անսովոր երևույթի պատճառը:

Իսկ ինչ վերաբերում է միանձնուհուն, ապա նա իր այդ անսովոր վիճակի սկզբից երկու ժամ հետո ուշքի եկավ, որից հետո պարզվեց, որ նա ոչինչ չգիտե և չի հիշում, թե իր հետ ինչ է տեղի ունեցել:

Քանի որ աբբա Պեդրինին ինքը չի կարողանում բացատրել այդ երևույթը, ապա օգնության համար դիմում է իր ծանոթներից մեկին՝ ում «դոկտոր Բամբինի»:

Եվ ահա աբբա Պեդրինիի պատմածները լսելուց հետո դոկտոր Բամբինին ինքն էլ շատ է հետաքրքրվում, որից հետո երկուսով սկսում են զբաղվել այդ հարցը պարզելու գործով:

Սկզբում նրանք զանազան պարզաբանիչ փորձեր են կատարում միանձնուհի Եֆրոսինյայի հետ, և մի քանի, այսպես կոչված, «սեանսից» հետո նկատում են, որ այդ միանձնուհին անխափան կերպով միշտ հայտնվում է այդ անսովոր վիճակում, հենց որ նրա հայացքը բավական տևական ժամանակով կանգ է առնում նկարի շրջանակի զարդարանքը կազմող պայծառ գունավոր քարերից մեկի՝ այսպես կոչված, «պարսկական փիրուզի» վրա:

Բայց հետո, երբ այդ նույն պարսկական փիրուզով նրանք պարզաբանիչ փորձեր կատարեցին նաև մյուս մարդկանց հետ, ապա շատ շուտով լիովին համոզվեցին, որ նախ՝ անկախ սեռից համարյա բոլոր եռուղեղ էակները, որոնք երկար ժամանակ նայում են որոշակի տեսակի պսպղացող ու փայլող առարկաների վրա, հայտնվում են նմանատիպ վիճակում, ինչպես իրենց փորձերի առաջին ենթական,

և երկրորդ՝ հետո նրանք նկատեցին, որ այդ վիճակում հայտնված սուբյեկտների դրսևորումներն իրարից տարբերվում են և կախված են լինում նախկինում գերակշռած *լինելիական ապրումներից* և այն փայլուն առարկաներից, որոնց հետ պատահաբար կապ էր հաստատվել իրենց այդպիսի ապրումների ընթացքում:

Ահա այդպես, զավակս...

Երբ Իտալիա կոչվող հանրությանը պատկանող այդ երկու էակների դիտումների, եզրահանգումների և փորձերի տվյալները տարածվեցին «նոր տեսակի» ժամանակակից գիտուն էակների միջավայրում, և նրանցից շատերը նույնպես սկսեցին իմաստակել այդ թեմայով, և վերջապես, երբ պատահաբար, ինչպես նրանց հետ հաճախ է պատահում, նրանք իմացան, որ այդ վիճակում հայտնված իրենց նման էակների մոտ հնարավոր է արագացված կերպով նորացնել նախկինում ապրած տպավորությունները, ապա նրանցից ոմանք սկսեցին այդ իրենց հատուկ հոգեկան հատկությունն օգտագործել բուժական նպատակներով:

Եվ այդ ժամանակից սկսած՝ բուժման այդ միջոցները նրանք անվանեցին «բուժում հիպնոսի միջոցով», իսկ բուժման այդ եղանակով զբաղվող բժշկին՝ «հիպնոսող բժիշկ»:

Հարցն այն է սակայն, որ թե ի՞նչ է իրենից ներկայացնում այդ վիճակը, և թե ինչու՞ է նրանց մոտ դա առաջանում՝ մինչև հիմա անհայտ է նրանց, և այդ հարցերին պատասխանել նրանք չեն կարող:

Այդ ժամանակից սկսած՝ ի հայտ են եկել և մինչև հիմա գոյություն ունեն այդ հարցին նվիրված հարյուրավոր ամեն տեսակի տեսություններ և հազարավոր հաստատվող գրքեր, ինչի հետևանքով այդ չարադետ մոլորակին պատկանող եռուղեղ էակների բանականությունը, որը մինչ այդ արդեն իսկ բավականին խճճված էր, այդ ամենից հետո ավելի խճճվեց:

Նրանց գիտության այդ բնագավառը երևի առավել վնասակար դարձավ նրանց համար, քան հինավուրց հելլենական ձկնորսների և ժամանակակից Գերմանիա կոչվող հանրության էակների ֆանտաստիկ հորինվածքները:

Հենց միայն իրենց գիտության այդ բնագավառի պատճառով այդ չարաբաստիկ մոլորակի սովորական էակների հոգեկառույցը ձեռք է բերել, այսպես կոչված, *«լինելիական քալքալներ»⁴⁴*, այսինքն՝ «պարտադիր ձգտումների», ևս մի քանի նոր տեսակներ, որոնք հանգում են որոշակի «ուսմունքների». դրանք այնտեղ գոյություն ունեն հետևյալ նավանումներով՝ *«անոկլինիզմ»*, *«դարվինիզմ»*, *«անտրոպոսոֆիզմ»*, *«թեոսոֆիզմ»* և այլն, որոնք բոլորը *«իզմ»*-ով են վերջանում, և այդ ամենի հետևանքով վերջնականապես չքացել են նրանց ներկայության նույնիսկ այն երկու նախադրյալները, որոնք դեռևս օգնում էին նրանց լինելու գոնե մի փոքր այնպիսին, ինչպիսին հարկ է, որ լինեն եռուղեղ էակները:

Իսկ մինչև վերջին ժամանակները նրանց ներսում առկա այդ կարևոր նախադրյալները ծնում էին *լինելիական ազդակներ*, որոնք իրենք կոչում են *«նահապետականություն»* և *«աստվածասիրություն»*:

Նրանց ժամանակակից գիտության այդ բնագավառը ոչ միայն պատճառ դարձավ, որ նրանց ընդհանուր ներկայությունը ձեռք բերի ևս մի քանի վնասակար քալքալներ, այլև խաթարեց նրանցից շատերի հոգեկառույցի գործունեության առանց այդ էլ աննորմալ դարձած վիճակը, որը, ի մեծ դժբախտություն իրենց, դրանից շատ առաջ արդեն աններդաշնակ էր դարձել մինչև, այսպես կոչված, *«ալնոխուրյան»⁴⁵ ժխորի»* աստիճանին հասնելը:

Դու դա շատ լավ կհասկանաս, եթե ասեմ, որ այնտեղ ունեցած իմ բժշկական գործունեության ընթացքում, երբ ես կրկին հիպնոսող բժիշկ դարձա և գոյատևեցի մեծ մասամբ Եվրոպա կոչվող աշխարհամասում ու դրան հարակից երկրներում, իմ այցելուների համարյա կեսը հիշյալ վնասակար գիտության պատճառով էին հիվանդացել, ինչը մեծ տարածում է գտել այնտեղ:

Իսկ դրա պատճառն այն է, որ երբ այդ *«նոր տեսակի գիտուն էակները»* սկսեցին այդ հարցի շուրջ զանազան գրքեր գրել՝ հորինելով ամեն տեսակի երևակայական տեսություններ, սովորական էակներից շատերը, դրանք կարդալով և համակվելով նրանց երևակայությամբ, հենց իրենք սկսեցին մեկը մյուսին հիպնոսի վիճակի մեջ գցել և ի վերջո դարձան իմ այցելուները:

Իմ այդ այցելուների շարքում կային այնպիսի ամուսինների կանայք, որոնք, կարդալով այդ աշխատանքները, ուզեցել էին իրենց կանանց ներշնչել իրենց եսասիրական ցանկությունները. նույն

⁴⁴ ռուս. տարբերակում՝ *калкали*, անգլ. տարբերակում՝ *kalkali*

⁴⁵ ռուս. տարբերակում՝ *альнохурной*, անգլ. տարբերակում՝ *alnokoorian*

պատճառով իմ այցելուները դարձան անխոհեմ ծնողների զավակները. զանազան տղամարդիկ, որոնք իրենց սիրուհիների, ինչպես այնտեղ են ասում, «կրունկի տակ էին հայտնվել» և այլն, և այլն:

Եվ այդ ամենն այն պատճառով, որ այդ «նոր տեսակի վայ-գիտնականները» այդ ապշեցուցիչ վիճակի վերաբերյալ մոգոնել էին իրենց տհասամոռուական տեսությունները:

Հիպոտոիզմին վերաբերող և այժմ լայնորեն տարածում գտած այդ տեսություններից և ոչ մեկը գոնե փոքր չափով չի համապատասխանում իրականությանը:

Ի միջիայլոց, բոլորովին վերջերս, երբ ես այդ չարաբաստիկ մոլորակի վրա էի, այնտեղ սկսեց ծաղկում ապրել մի նոր վնասակար միջոց, որն էակաների հոգեկառույցի հետ հիմա նույն բանն է անում, ինչ արել և էլի շարունակում է անել իրենց գիտության այդ հիպոտոիզմ կոչվող բնագավառը:

Այդ նոր վնասակար միջոցը նրանք անվանում են «հոգեվերլուծություն»:

Դու պետք է անպայման իմանաս, որ երբ թիքյամիշյան ժամանակաշրջանի քաղաքակրթության էականերն առաջին անգամ հայտնաբերեցին իրենց այդ անսովոր հոգեկան հատկությունը և շուտով պարզեցին, որ դրա օգնությամբ մեկը մյուսի մոտ կարող են ոչնչացնել իրենց հատկապես ոչ վայել հատկանիշները, ապա այդ վիճակին բերելու բուն գործընթացը նրանք սրբազան համարեցին և դրան դիմում էին միայն տաճարներում՝ հանրության (հոտի) առաջ:

Իսկ ներկայիս քո սիրելիների ներկայություններում ոչ միայն «զոջման» բացարձակապես ոչ մի լինելիական ազդակ չի առաջանում՝ կապված իրենց այդ էական հատկության հետ, ոչ միայն այդ կենտրոնացման դրսևորումը «սրբազան» չեն կոչում, այլև բուն գործընթացն ու դրանից պատահաբար ստացված արդյունքները որպես միջոց են օգտագործում, որպեսզի «զրգիռ տան» կունդաբուֆեր օրգանի հատկությունների՝ իրենց ներսում ամուր արմատներ ձգած որոշ հետևանքների:

Օրինակ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ հավաքվում են որևէ «նահապետական ծեսի» առիթով, ինչպիսիք են՝ «հարսանիքը», «կնունքը», «անվանակոչությունը» և այլն, գլխավոր զվարճանքներից մեկը լինում է այն, որ փորձում են մեկը մյուսին զցել հիշյալ վիճակի մեջ:

Բարեբախտություն է, որ նրանք չգիտեն, և պետք է հուսալ, որ երբեք չեն իմանա այլ եղանակների մասին, բացի նրանից, որը հայտնաբերեցին Իտալիա կոչվող հանրության էակաները՝ արքա Պեդրինին և դոկտոր Բամբինին, այն է՝ պայծառ փայլ ունեցող առարկային սևեռուն նայելը, որի միջոցով, ինչպես արդեն ասել եմ քեզ, նրանցից ոմանց իսկապես կարելի է հասցնել հիշյալ «կենտրոնացման վիճակին»:

ԳԼՈՒԽ ԼԳ

Բեհեդգերուղը՝ արհեստավարժ հիպնոսող

Բեհեդգերուղը շարունակեց պատմել հետևյալը.

«Երբ ես արհեստավարժ հիպնոսացնողի մասնագիտությամբ գոյատևում էի քո սիրելիների միջավայրում, նրանց հոգեկառույցի հետ կապված իմ պարզաբանիչ փորձերը կատարում էի գլխավորապես նշաժս իրենց անսովոր վիճակի միջոցով, որին ժամանակակից էակաները «հիպնոսացած վիճակ» անունն են տվել:

Որպեսզի նրանց բերեմ այդ վիճակին, սկզբում ես այն միջոցն էի օգտագործում, որից օգտվում էին թիքյամիշյան քաղաքակրթության էակաները. այն է՝ իրար վիճակի վրա ազդել սեփական հանբարձոնի միջոցով:

Բայց հետո, երբ իմ ընդհանուր ներկայության մեջ սկսեց հաճախակի առաջանալ «մերձավորի նկատմամբ սեք» կոչվող լինելիական ազդակը, և երբ իմ անձնական նպատակներին ձգտելուն զուգընթաց ինձ վիճակվում էր այնտեղի բազում եռուղեղ էակաների մտցնել նշված վիճակի մեջ՝ ի շահ նրանց անձնական բարօրության, և քանի որ այդ միջոցը շատ վնասակար դուրս եկավ իմ լինելիական գոյատևման համար, ես հայտնագործեցի մի ուրիշ միջոց, որի շնորհիվ հասնում էի նույն արդյունքին՝ չձախսելով իմ սեփական հանբարձոնը:

Ես միջոց գտա և շատ շուտով սովորեցի փոխել նշաժս «արյունատար անոթների լցվածության տարբերությունը»՝ որոշ չափով դանդաղեցնելով արյան շարժումը որոշ արյունատար անոթներով:

Այդ դանդաղեցման շնորհիվ ես հասա այն բանին, որ թեև էակների արթմնի վիճակի արյան շրջանառության արդեն մեխանիկական դարձած արագությունը նույնն էր մնում, բայց միաժամանակ սկսում էր գործել նաև նրանց իսկական գիտակցությունը, որին իրենք ենթագիտակցություն են անվանում:

Պարզվեց, որ իմ այդ նոր միջոցը, իհարկե, անհամեմատ ավելի լավն է, քան այն մեկը, որից մինչև հիմա օգտվում են քո այդ մոլորակի էակները՝ հիպնոսացվողին ստիպելով ակնդետ նայել պսպղացող կամ փայլող որևէ առարկայի:

Չի կարելի ժխտել, որ, ինչպես արդեն ասացի, կարելի է նրանց այդ հոգեկան վիճակի մեջ մտցնել փայլող առարկային ակնդետ նայել տալու միջոցով, բայց բոլորովին էլ ոչ բոլոր էակներին. պատճառն այն է, որ թեև փայլող առարկային սևեռուն նայելու միջոցով իրենց ընդհանուր արյան շրջանառության մեջ կարելի է փոխել «*արյունատար անոթների լցվածության*» աստիճանը, այնուհանդերձ դրան հասնելու գլխավոր գործոնը պետք է նրանց մտքերի և զգացմունքների միտումնավոր կամ ինքնաբերական կենտրոնացումը լինի:

Իսկ այդ վերջինին կարելի է հասնել կա՛մ լարված սպասումով, կա՛մ իրենց ներսի այն գործընթացով, որին իրենք «հավատ» բառով են բնորոշում, կա՛մ վախի զգացողությունից ծնված հուզումով, թե ուր որ է ինչ-որ բան կկատարվի, կա՛մ վերջապես տվյալ էակի ներկայության մեջ առկա այն գործառնություններով, որ իրենք «կրքեր» են անվանում, ինչպես օրինակ՝ «ատելությամբ», «սիրով», «հուզականությամբ», «հետաքրքրասիրությամբ» և այլն, և այլն:

Ահա թե ինչու այն էակներն արյան շրջանառության մեջ, որոնք «հիստերիկներ» են կոչվում և ընդմիջտ կորցրել են «մտքերն» ու «զգացմունքները» կենտրոնացնելու ունակությունը, հարավոր չէ առաջացնել «*արյունատար անոթների լցվածության*» տարբերություն փայլող առարկայի վրա հայացքը կենտրոնացնելու միջոցով, և, հետևաբար, հնարավոր չէ նաև նրանց մտցնել նշված հիպնոսային վիճակի մեջ:

Սակայն իմ հորինած եղանակով՝ «*արյունատար անոթների*» վրա որոշակի ձևով ազդելով, կարելի է այդ վիճակի մեջ մտցնել ոչ միայն քո հետաքրքրությունը շարժած էակներից ում ուզենաս, այլ նաև այնտեղ բազմացող միատուր և երկուդեղ էակներից շատերին, ինչպես օրինակ՝ զանազան, այսպես կոչված, «չորքոտանիների», «ձկների», «թռչունների» և այլն, և այլն:

Իսկ ինչ վերաբերում է *մերձավորի նկատմամբ սիրո* ազդակին, որն ինձ ստիպեց նոր միջոց փնտրել քո սիրելիներին իրենց արդեն բնորոշ դարձած այդ վիճակի մեջ մտցնելու համար, ապա դա իմ մեջ ծագեց և աստիճանաբար որոշ ժամանակ հետո տիրապետող դարձավ այն պատճառով, որ իմ բժշկական գործունեության ընթացքում այնտեղի տարբեր կաստաների պատկանող սովորական եռուդեղ էակները շուտով ամենուրեք սկսեցին սիրել ու հարգել ինձ և ինձ համարել համարյա թե Վերից առաքված, որպեսզի իրենց օգնեմ ազատվելու իրենց վնասակար սովորություններից. կարճ ասած՝ նրանք սկսեցին իմ հանդեպ տածել իրենց ամենաանկեղծ ու համարյա ճշմարտացի «օսկոլնիկու»⁴⁶ *լինելիական ազդակը*, որն իրենք անվանում են «երախտագիտություն» և «երախտապարտություն»:

Այդ *լինելիական օսկոլնիկուն* կամ երախտագիտությունն իմ նկատմամբ դրսևորում էին ոչ միայն նրանք, ում փրկում էի և նրանց մերձավորները, այլև համարյա բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ առնչվում էին ինձ հետ կամ լսում էին իմ մասին՝ բացառությամբ այն մասնագետների, որոնք իրենց բժիշկներն էին:

Վերջիններս, ընդհակառակը, անչափ ատում էին ինձ և ամեն ջանք գործադրում էին, որպեսզի խզվեն այն բարի զգացմունքները, որ սովորական էակները տածում էին իմ նկատմամբ. ատում էին պարզապես այն պատճառով, որ ես շատ արագ դարձա իրենց լուրջ մրցակիցը:

Խստորեն ասած՝ նրանք իրոք հիմքեր ունեին ինձ ատելու համար, քանի որ իմ բժշկական գործունեությունը սկսելուց ընդամենը մի քանի օր հետո իմ ամենօրյա ընդունելություններին հաճախում էին հարյուրավոր հիվանդներ, մի քանի հարյուրն էլ ջանում էին իմ հաճախորդը դառնալ, մինչդեռ իմ խեղճ մրցակիցները պետք է իրենց նշանավոր ընդունարաններում երկար ժամերով նստեին և անհամբերությամբ սպասեին, թե ե՞րբ «մոլորյալ ոչխարի» պես իրենց դուռը կբախի որևէ մի պատահական հաճախորդ:

⁴⁶ ռուս. տարբերակում՝ осколники, անգլ. տարբերակում՝ oskolnikoo

Նրանք այդ մոլորյալ ոչխարներին սպասում էին մեծ անհամբերությամբ, քանի որ նրանց որոշ մասը, այսպես կոչված, «կթու կով» էր դառնում, ումից նրանք, այնտեղ ընդունված սովորույթի համաձայն, կթում էին այն, ինչն իրենք անվանում են «փող» կամ «մետաղադրամ»:

Ամեն դեպքում հանուն արդարության պետք է ասել, որ վերջին ժամանակներում այնտեղ առանց այդ «փողի» բացարձակապես հնարավոր չէ գոյատևել, հատկապես այն եռուղեղ էակներին, որոնք այնտեղի ժամանակակից նշանավոր բժիշկներից են:

Այսպիսով, զավակս, որպես հիպնոսացնող բժիշկ իմ գործունեությունը ես սկսեցի, ինչպես արդեն քեզ ասել եմ, Ասիա աշխարհամասի կենտրոնում՝ Թուրքեստանի զանազան քաղաքներում:

Սկզբում ես եղա Թուրքեստանի այն մասում գտնվող մի քաղաքում, որը հետագայում «Չինական Թուրքեստան» անվանվեց՝ ի տարբերություն այն մասի, որը Ռուսաստան կոչվող մեծ հանրության էակների կողմից նվաճվելուց հետո անվանվեց «Ռուսական Թուրքեստան»:

Չինական Թուրքեստանի քաղաքներում մեծ պահանջարկ կար այնպիսի բժշկի, ինչպիսին ես դարձա, քանի որ քո այդ մոլորակի մակերևույթի այդ մասում բազմացող եռուղեղ էակների մեջ այդ ժամանակահատվածում սովորականից ավելի շատ էին տարածվել իրենց, երկու վերին աստիճանի վնասակար, այսպես կոչված, «օրգանական սովորություններ», որոնց նույնպես բախտ էր վիճակվել տեղ գտնելու այդ չարաղետ մոլորակի եռուղեղ էակների ներկայություններում:

Այդ վնասակար օրգանական սովորություններից մեկն այն էր, որն այնտեղ «օփիում ծխել» է կոչվում, իսկ մյուսը՝ «անաշա ծամել» կամ, ինչպես ուրիշ կերպ անվանում են, «հաշիշ ծամել»:

Ինչպես արդեն գիտես, նրանք այդ օփիումը ստանում են կակաչ կոչվող բույսից, իսկ հաշիշը՝ վերմոլորակային մի գոյացությունից, որն այնտեղ անվանում են «չակլա» կամ «կանեփ»:

Ինչպես քիչ առաջ ասացի, իմ գործունեության այդ շրջանի սկզբում իմ գոյատևումն ընթանում էր Չինական Թուրքեստանի տարբեր քաղաքներում, բայց հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ հետո ես գերադասեցի գտնվել Ռուսական Թուրքեստանի քաղաքներում:

Այդտեղ՝ Ռուսական Թուրքեստանի էակների միջավայրում, հիշյալ «վնասակար սովորություններից» կամ, ինչպես իրենք են ասում՝ «արատներից» մեկը՝ օփիում ծխելը, շատ քիչ էր տարածված, իսկ անաշա ծամելը՝ է՛լ ավելի քիչ, բայց մյուս կողմից՝ այսպես կոչված «ռուսական օղի» խմելը լայնորեն բարգավաճում էր:

Այդ չարաղետ միջոցն այնտեղ գլխավորապես ստանում էին վերմոլորակային «կարտոֆիլ» կոչվող գոյացությունից:

Ինչպես «օփիումի» և «անաշայի», այնպես էլ հիշյալ օղու օգտագործման պատճառով այնտեղի այդ թշվառ եռուղեղ էակների հոգեկառույցը ոչ միայն կատարելապես զրկվում է «առողջ բանականությունից», այլև դրան հավելվում է այն, որ նրանց մոլորակային մարմնի որոշ մասեր աստիճանաբար ամբողջովին այլասերվում են:

Այստեղ ես պետք է ասեմ, զավակս, որ հատկապես այդ ժամանակ՝ քո սիրելիների միջավայրում ծավալած իմ գործունեության սկզբում, նպատակ ունենալով բարելավելու նրանց հոգեկառույցն ուսումնասիրելու իմ հետազոտությունները, ես ձեռնարկեցի իմ այն «վիճակագրությունը», որով հետագայում աստիճանաբար հետաքրքրվեցին ավելի բարձր կարգի բանականությամբ օժտված մի քանի Գերսրբազնագույն Անհատականություններ:

Եվ այսպես, երբ ես որպես բժիշկ գոյատևում էի Թուրքեստանի քաղաքներում բազմացող էակների միջավայրում, ինձ վիճակվեց այնքան շատ աշխատել, հատկապես վերջին շրջանում, որ իմ մոլորակային մարմնի որոշ գործառույթներ սկսեցին խաթարվել, և այդ պատճառով ես սկսեցի մտածել, թե ինչպես հնարավորություն գտնեմ թեկուզ որոշ ժամանակով ոչինչ չանելու, այլ միայն հանգստանալու:

Իհարկե, ես կարող էի այդ նպատակով վերադառնալ իմ տունը՝ Մարս մոլորակ, սակայն այդ դեպքում իմ առջև կծառանար իմ անձնական-անհատական «*լինելիական դիմցոնիրոն*⁴⁷», այսինքն՝ ինքս ինձ տված, այսպես կոչված, «*էաբուխ խոսքի*» նկատմամբ *լինելիական պարտք*:

Իսկ այդ *էաբուխ խոսքը*, որն ինքս ինձ տվել էի իմ վեցերորդ վայրէջքը սկսելուց առաջ, այն էր, որ քո սիրելիների միջավայրում գոյատևեմ այնքան ժամանակ, քանի դեռ իմ բանականության համար

⁴⁷ ռուս. տարբերակում՝ *димзониро*, անգլ. տարբերակում՝ *dimtzoneero*

պարզաձև չեմ լինի բոլոր այն փաստերը, որոնք պատճառ էին դարձել նրանց ընդհանուր ներկայության հիշյալ բացառիկ արտառոց լինելիական հոգեկառույցի աստիճանական ձևավորման համար:

Այսպիսով, քանի որ ես այդ ժամանակ դեռ չէի կատարել ինքս ինձ տված *Հարուխ խոստում*, այսինքն՝ դեռ չէի պարզել բոլոր այն մանրամասները, որոնք անհրաժեշտ են խնդրի պարզաբանման համար, ես վաղաժամ էի համարում Մարս մոլորակ վերադառնալը:

Բայց այդ Թուրքեստանում մնալ և իմ գոյատևումն այնպես կազմակերպել, որ իմ մոլորակային մարմինն ստանա պահանջված հանգիստը՝ ես ոչ մի կերպ չէի կարողանում, քանի որ քո այդ մոլորակի մակերևույթի ինչպես Չինական, այնպես էլ Ռուսական Թուրքեստաններում բազմացող համարյա բոլոր էակների մոտ կա՛մ անձնական ընկալումներով, կա՛մ ուրիշների նկարագրածով արդեն բյուրեղացել էին արտաքինով ինձ ճանաչելու տվյալներ, միևնույն ժամանակ այդ երկրի ամեն մի սովորական էակ ուզում էր ինձ հետ զրուցել կա՛մ անձամբ իր, կա՛մ իր մերձավորների մասին՝ այն արատներից որևէ մեկի առիթով, որոնցից նրանց բուժելու այդպիսի արտասովոր մասնագետ էի դարձել ես այնտեղ:

Այն, ինչ ես այն ժամանակ մտածեցի և իրագործեցի, որպեսզի դուրս գամ ստեղծված իրավիճակից, դարձավ Թուրքեստանը լքելու պատճառը. մի երկիր, որի մասին իմ սովորական ներկայությունում կան և պահպանվում են այն ժամանակ ամրապնդված հաճելի հիշողությունների տվյալներ, դադարեց վերջին անգամ այդ մոլորակի վրա լինելուս ընթացքում իմ մշտական գոյատևման վայրը լինելուց, և այդ ժամանակից սկսած՝ Թուրքեստանի քաղաքներն՝ իրենց «չայխանաներով» և հրաշալի բուրմունք ունեցող թեյերով՝ հանդերձ, փոխարինվեցին «նշանավոր» Եվրոպայի քաղաքներով՝ իրենց սրճարաններով որտեղի «սև հեղուկն» անհայտ է, թե ինչից է պատրաստված լինում:

Նախ ես որոշեցի մեկնել մի երկիր, որը Աֆրիկա աշխարհամասի մաս է կազմում և այնտեղ կոչվում է Եգիպտոս:

Ես հենց այդ երկիրը ընտրեցի, քանի որ այդ ժամանակաշրջանում Եգիպտոսն իսկապես հանգստի լավագույն վայրն էր, և այնտեղի եռուղեղ էակներից շատերը, որոնք, այսպես կոչված, «նյութական հարստության» տեր էին, բոլոր աշխարհամասերից հանգստանալու նպատակով այնտեղ էին գնում:

Հասնելով այդ երկիրը՝ ես հաստատվեցի «Կահիրե» կոչվող քաղաքում և շատ շուտով իմ սովորական գոյատևման արտաքին կարգը դասավորեցի այնպես, որ նշաձու լարված աշխատանքներից հետո լիարժեք հանգիստ ապահովեմ իմ մոլորակային մարմնի համար:

Եթե հիշում ես, ես արդեն քեզ պատմել եմ, որ առաջին անգամ այդ Եգիպտոսում ես եղել եմ քո այդ մոլորակի մակերևույթ կատարած իմ չորրորդ այցելության ընթացքում, որտեղ ես վայրէջք կատարեցի, որպեսզի պատահաբար այնտեղ առաջացած «կապիկ» կոչվող «այլանդակների» որոշակի քանակություն որսամ այնտեղ գոյատևող մեր ցեղակիցներից մի քանիսի օգնությամբ. այդ զրույցի ընթացքում քեզ նաև պատմեցի, որ այդ երկրում հետաքրքիր արհեստական շատ շինություններ տեսա, որոնց շարքում նաև իմ հետաքրքրությունն այն ժամանակ շարժած աստղադիտարանն էր, որը ծառայում էր տիեզերական խտացումները դիտելու համար:

Իմ վերջին վայրէջքի օրոք այդ բազմաթիվ հետաքրքիր շինություններից, որոնք նախկինում գոյություն ունեին, արդեն համարյա ոչինչ չէր մնացել:

Դրանք բոլորը ոչնչացել էին՝ մի մասն այնտեղի էակների, այսպես կոչված, «պատերազմների» ու «հեղափոխությունների» պատճառով, մի մասն էլ ծածկվել էր ավազով:

Այդ ավազները մասամբ այն ուժեղ քամիների պատճառով էին այնտեղ հայտնվել, որոնց մասին արդեն հիշատակել եմ, մասամբ էլ այն մոլորակային ցնցման պատճառով, որին հետագայում Եգիպտոսի էակներն անվանեցին «ալնեպուսյան»⁴⁸ երկրաշարժ:

Այդ մոլորակային ցնցման ժամանակ ներկայումս դեռ գոյություն ունեցող «Կիպրոս» կղզու հյուսային կողմում գտնվող կղզին, որն այն ժամանակ «Միապորա» էր կոչվում, աստիճանաբար, շատ անսովոր կերպով, հինգ երկրային տարիների ընթացքում մոլորակի խորքը սուզվեց, և, քանի որ այդ գործընթացը շարունակվում էր, շրջակա սալիաքուղիափային տարածությունում անսովոր ուժի «տեղատվություններ» ու «մակընթացություններ» էին տեղի ունենում, որոնց հետևանքով ցամաքի մակերևույթի այդ հատվածում սալիաքուղիափի տակից շատ մեծ քանակությամբ ավազ բարձրացավ և խառնվեց արդեն նշաձու պատճառով այնտեղ նախկինում կուտակված ավազներին:

⁴⁸ ռուս. տարբերակում՝ альнепусным, անգլ. տարբերակում՝ alnepoossian

Գիտե՞ս, զավակս, թե աստիճանաբար ինչ վեր ելավ իմ ներսում, երբ ես քեզ պատմում էի այս ամենը Եգիպտոսի և այն մասին, ինչն իմ ողջ էությունն արդեն վերջնականապես գիտակցեց. այն է՝ անթույլատրելի մի սխալ, որը ես թույլ եմ տվել Երկիր մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների մասին իմ պատմություններում:

Հիշո՞ւմ ես, մի անգամ ես քեզ ասացի, որ անցած սերունդների էակների նվաճումներից ոչինչ երբեք չի փոխանցվել հաջորդ սերունդների էակներին:

Եվ ահա հիմա ես գիտակցեցի, որ այդ կապակցությամբ սխալ եմ թույլ տվել:

Քո հետաքրքրությունը շարժած էակների մասին իմ նախորդ պատմությունների ընթացքում ոչ մի անգամ իմ լինելիական նմանագագություններում չի հիշատակվել մի դեպք, որը տեղի է ունեցել հենց այն օրը, երբ ես ընդմիջտ լքեցի այդ մոլորակի մակերևույթը. իսկ այդ դեպքն ապացուցում է, որ հեռավոր անցյալի էակների նվաճումներից ինչ-որ բան այնուամենայնիվ հասել է նույնիսկ ներկայիս քո սիրելիներին:

Ցնծության այն հորդանքը, որն իմ մեջ առաջացավ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԱՐԴԱՐ և ԱՄԵՆԱԶՈՐ ԱՐԱՐԶԻ կողմից ներվելուց և իմ սկզբնավորման վայրը վերադառնալու Նրա բարեգութ թույլտվությունն ստանալուց հետո, երևի խանգարել է, որ իմ այն ժամանակվա տպավորությունները բավականաչափ ինտենսիվ կլանվեն իմ մեջ և իմ ընդհանուր ամբողջականության համապատասխան մասում «լրիվ բյուրեղանան» այնպիսի տվյալներ, որոնք էակի *լինելիական նմանագագությունների* ընթացքում, որոնք առաջանում են նույն աղբյուրն ունեցող դրսևորումների արդյունքներից, կրկնվեն այն զգացողությունները, որոնք արդեն մի անգամ եղել են:

Բայց հիմա, երբ ես խոսում էի այդ ժամանակակից Եգիպտոսի մասին, և իմ *լինելիական հայացքի* առջև կենդանացան վաղեմի ժամանակներում այդ մոլորակի ցամաքային մակերևույթի ինձ դուր եկած որոշ վայրեր, այն թույլ տպավորությունները, որոնք նախկինում իմ ներսում ծնվել էին հիշյալ դեպքի կապակցությամբ, աստիճանաբար ինձ որոշակի գիտակցման հանգեցրին և պարզորոշ վերհիշվեցին:

Նախքան այնտեղ տեղի ունեցած այդ դեպքի մասին քեզ պատմելս, որն այլ կերպ, քան ցավալի ու ողբերգական չի կարելի անվանել, և որպեսզի դու քիչ թե շատ հստակ պատկերացում ունենաս այդ դեպքի մասին, ես պետք է մեկ անգամ ևս անդրադառնամ այնտեղի Ատլանտիդա աշխարհամասի այն էակներին, որոնք այնտեղ Ախալդան կոչվող ուսումնական ընկերություն էին հիմնել:

Այդ ընկերության որոշ անդամներ, որոնք արդեն ինչ-որ պատկերացում ունեին սրբազան ամենաթափանց Ոգիդնողի մասին, իրենց համառ ջանքերի շնորհիվ բացահայտեցին, թե ինչպես սեփական մթնոլորտից և որոշ վերմոլորակային կազմավորումներից առանձին-առանձին ստանալ դրա սրբազան մասերը, և թե ինչպես խտացված վիճակում պահպանելով իրենց մեջ սրբազան տիեզերական «*ուժ կրող*» այդ նյութերը՝ դրանց միջոցով կատարել որոշակի պարզաբանիչ փորձեր:

Հիշյալ մեծ գիտական ընկերության գիտուն անդամները հենց այդ ժամանակ ամեն ինչից զատ բացահայտեցին նաև, որ կարող են Ամենաթափանց Ոգիդնողի երրորդ մասը՝ «*չեզոքացնող կամ հաշտեցնող ուժը*» տեղայնացնելու օգնությամբ ցանկացած մոլորակային, այսպես կոչված, «օրգանական» գոյացություն բերել այնպիսի վիճակի, որ այն, տվյալ պահին ակտիվ իր ամբողջ պարունակությամբ հանդերձ, ընդմիջտ անփոփոխ մնա, այսինքն՝ կարող են կատարելապես կանգնեցնել դրա հետագա անխուսափելի, այսպես կոչված, «քայքայումը»:

Այդ բանն անելու կարողությունը ժառանգաբար փոխանցվեց այդ Եգիպտոսի որոշ էակների՝ հատկապես այն ձեռնադրյալ էակներին, որոնք Ախալդանի գիտուն էակների անմիջական հետնորդներն էին:

Եվ ահա, Ատլանտիդայի կործանումից շատ հարյուրամյակներ անց այդ Եգիպտոսի էակներն իրենց հասած գիտլիքների հիման վրա բացահայտեցին նաև, թե ինչպես սրբազան Ոգիդնողի այդ նույն չեզոքացնող ուժի օգնությամբ իրենցից ոմանց մոլորակային մարմինները սրբազան Ռասկուարնոյից հետո ընդմիջտ պահպանեն չքայքայվող վիճակում, այսինքն՝ թույլ չտան, որ մահը վրա հասնելուց հետո մոլորակային մարմինը տրոհվի:

Իրոք, վեցերորդ անգամ այդ մոլորակ կատարած իմ այցելության ժամանակներում բոլոր այն էակները և այն ամենը, ինչ այդ Եգիպտոսում եղել էր իմ նախորդ այցելության ժամանակ, իսպառ դադարել էին գոյություն ունենալ, և այդ ամենի մասին նույնիսկ որևէ պատկերացում չէր պահպանվել: Բայց այն մոլորակային մարմինները, որոնց նկատմամբ կիրառվել էր հիշյալ եղանակը, այնտեղ մինչև

հիմա անվնաս են մնացել: Եվ այդ պահպանված մոլորակային մարմինները ժամանակակից էակները «մումիա» են անվանում:

Եգիպտոսի էակները մոլորակային մարմինը մումիայի էին վերածում շատ պարզ եղանակով, այն է՝ նրանք դրա համար նախատեսված մոլորակային մարմինը մոտավորապես կես ամիս պահում էին, այսպես կոչված, գերչակի յուղի մեջ, որից հետո դրա մեջ որոշակի ձևով դասավորված սրբազան «սուբստանցիայի ուժ» էին ներարկում:

Եվ այսպես, զավակս, համաձայն առ այսօր այնտեղ գոյատևող մեր հայրենակցի հետազոտությունների ու զննումների, որոնք եթերագրով ինձ են փոխանցվել այն բանից հետո, երբ ես վերջնականապես լքեցի քո այդ մոլորակի մակերևույթը, պարզ դարձավ, որ մի անգամ, երբ այդ Եգիպտոսում հաստատված հանրության էակների և հարևան հանրության էակների միջև «փոխադարձ ոչնչացման» գործընթաց էր սկսվել, և միաժամանակ իրենց, այսպես կոչված, «փարավոններից» մեկի գոյատևումը հասած էր եղել իր ավարտին, այն էակները, որոնց պարտականությունը վաստակաշատ էակների մարմինները հավերժացնելն է, թշնամիների մոտենալու պատճառով չեն կարողացել այդ փարավոնի մոլորակային մարմինը գերչակի յուղում պահպանել այնքան, որքան անհրաժեշտ է, այսինքն՝ կես ամիս: Այնուհանդերձ նրանք այդ մարմինը հասցրել են դնել այդ յուղի մեջ և տեղափոխել հերմետիկ փակ շինություն, այնուհետև որոշակի ձևով ներարկել են սրբազան ուժ-սուբստանցիան, որպեսզի հասնեն ցանկալի արդյունքին:

Այդ սրբազան որոշակի բանն իր նախասկզբնական վիճակում անհաշիվ հարյուրամյակներ անփոփոխ կմնար այդ եռուղեղ էակների մոտ, որոնք վաղուց է, ինչ իրենց էության ներսում ոչ մի պատկառանք չունեն. բայց քանի որ այդ ժամանակակից, ինչպես կարելի է անվանել, «անգիտակից սրբապիղծների» մեջ այնպիսի հանցավոր կիրք առաջացավ, որն արտահայտվեց նույնսկ անցած սերունդների սրբազան դամբարանները թալանելու պահանջով, ապա նրանց ձեռքը հասավ նաև այն խցին, որն իրենց համար պաշտելի սրբարան պետք է լիներ, և ի կատար ածեցին այն սրբապղծությունը, որն այժմ պատճառ դարձավ այն բանին, որ ես իմ ողջ էությամբ գիտակցեմ իմ սխալը, հենց այն սխալը, որը ես թույլ եմ տվել՝ ինքնավստահ կերպով հավատացնելով քեզ, թե հինավուրց դարաշրջանների էակներից ժամանակակից քաղաքակրթության էակներին բացարձակապես ոչինչ չի հասել. այնինչ ժամանակակից Եգիպտոսում տեղի ունեցած հիշյալ իրադարձությունը հենց իրենց այն նախնիների նվաճումներից իրենց հասած մի արդյունքի հետևանքն է, որոնք ժամանակին գոյատևել են Ատլանտիդա աշխարհամասում:

Վաղուց անցած դարաշրջանի էակների գիտական նվաճման այդ արդյունքը հասել է ժամանակակից էակներին և նրանց սեփականությունն է դարձել հետևյալ պատճառով:

Հնարավոր է, սիրելի Հասեին, որ դու, ինչպես և մեր Մեծ Տիեզերքի բոլոր պատասխանատու էակները ու նույնիսկ նրանք, որոնք դեռևս գտնվում են պատասխանատու էակներ դառնալու նախապատրաստական շրջանի երկրորդ կեսում՝ նույնիսկ գտնվելով իրենց *լինելիական մտածողության* անգիտակից աստիճանում, արդեն գիտես, որ ցանկացած էակի և ընդհանարապես ցանկացած այլ «համեմատաբար ինքնուրույն» տիեզերական միավորի մոլորակային մարմնի ընդհանուր ներկայությունը պետք է բաղկացած լինի սրբազան Եռամասիկապողի բոլոր երեք տեղայնացված սրբազան ուժ-սուբստանցիաներից՝ Սուրբ-Հաստատողից, Սուրբ-Բացասողից և Սուրբ-Հաշտեցնողից, և որ այն դրանցով պետք է ամբողջ ժամանակ պահպանվի համապատասխան և համակշռված վիճակում. և եթե ինչ-որ պատճառով ներկայություններից որևէ մեկի մեջ այդ սրբազան ուժերից որևէ մեկի թրթռանքի ավելցուկ է ներթափանցում, ապա դրա հետ անխոսափելիորեն և անպայման սրբազան Ռասկուարնո պետք է տեղի ունենա, այսինքն՝ դրա սովորական գոյության լրիվ ոչնչացում: Եվ ահա, զավակս, այն պատճառով, որ քո սիրելիների ներկայություններում, ինչպես քեզ արդեն ասել եմ, առաջացավ ևս մեկ հանցավոր պահանջ՝ իրենց նախնիների սրբարանները թալանելը, և նրանցից ոմանք այդ պահանջին հագուրդ տալու նպատակով հիշյալ եղանակով նույնիսկ ներխուժեցին այդ հերմետիկ փակված շինությունների ներսը, ապա Սուրբ-Հաշտեցնող սրբազան սուբստանցիոն ուժը, որն այդ շինություններում գտնվում էր առանձին տեղայնացված վիճակում, բավարար ժամանակ չունենալով, որպեսզի խառնվի տարածության հետ՝ թափանցել է նրանց ներկայության մեջ և իրականացրել իր օրինաչափ հատկությունը:

Ես հիմա ոչինչ չեմ ասի այն մասին, թե հատկապես ինչպես և ինչ տեսքով է ձևավորվել այնտեղ՝ քո այդ մոլորակի ցամաքային մակերևույթի այդ հատվածում բազմացող եռուղեղ էակների հոգեկառույցը:

Գուցե երբևէ ավելի ուշ, երբ գա դրա հարմար պահը, ես դա քեզ կբացատրեմ. իսկ հիմա վերադառնանք մեր ընդհատված թեմային:

Հիշյալ Եգիպտոսում իմ արտաքին գոյատևման ծրագիրն ամեն ինչից գատ ներառում էր նաև ամեն առավոտ զբոսանքի դուրս գալը «բուրգերի» և «Մֆինքսի» ուղղությամբ:

Այդ բուրգերն ու Մֆինքսը միակ պատահաբար դիմացած մնացորդներն էին այն հոյակերտ շինությունների, որոնք վեր էին խոյացվել Ախալդանի մեծագույն գիտուն էականների և հիշյալ Եգիպտոսի էականների մեծ նախնիների կողմից, և որոնց վկան էի ես դարձել դեպի քո այդ մոլորակ կատարած իմ չորրորդ այցի ընթացքում:

Այդ Եգիպտոսում ինձ չհաջողվեց մի լավ հանգստանալ, որովհետև հանգամանքները շուտով ինձ ստիպեցին հեռանալ այդտեղից. և այդ հանգամանքները որոնց պատճառով ստիպված եղա վաղաժամ լքելու Եգիպտոսը, խստորեն ասած, հենց այն բանի պատճառն էին, որ սիրելի Թուրքեստանի քաղաքներն իրենց հաճելի «չայխանաներով» հանդերձ, փոխարինվեցին, ինչպես արդեն ասել եմ, կուլտուրական Եվրոպա աշխարհամասի ժամանակակից նշանավոր քաղաքներով՝ իրենց ոչ պակաս նշանավոր «սրճարան-ռեստորաններով» հանդերձ, որոնցում, ինչպես արդեն ասել եմ, բուրումնավետ թեյի փոխարեն մատուցում են սև հեղուկ, որը հայտնի չէ, թե ինչ է պարունակում իր մեջ:

ԳԼՈՒԽ ԼԴ

Բեհեդեբուղը Ռուսաստանում

«Բոլոր հետագա իրադարձությունները, որոնք կապված էին քեզ դուր եկած եռուղեղ էականների սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ ձևի հետ և տեղի ունեցան Երկիր մոլորակի մակերևույթին վեցերորդ անգամ իմ լինելու ընթացքում, և միաժամանակ այն բոլոր բազմաթիվ աննշան միջադեպերը, որոնք լույս էին սփռում նրանց յուրօրինակ հոգեկառույցին բնորոշ մանրամասների վրա, սկսվեցին այսպես:

Մի անգամ երբ առավոտյան ես զբոսնում էի հիշյալ բուրգերի շրջակայքում, ինձ մոտեցավ անծանոթ տարեց մի էակ, որն արտաքին տեսքով տեղացի չէր, և այնտեղ ընդունված կարգով ինձ ողջունելուց հետո դիմեց ինձ հետևյալ խոսքերով.

– Դու կտո՛ր, բարի կլինե՞ք թույլ տալու ինձ, որ ձեր առավոտյան զբոսանքի ուղեկիցը դառնամ: Ես նկատել եմ, որ դուք այս կողմերում միշտ մենակ եք զբոսնում: Առավոտյան ժամերին ես էլ եմ սիրում այստեղ զբոսնել, և, քանի որ ես էլ եմ մենակ այստեղ՝ Եգիպտոսում, ապա համարձակվում եմ առաջարկել, որ թույլ տաք ընկերակցելու ձեզ այս զբոսանքների ընթացքում:

Քանի որ նրա ճառագայթումների թրթիռներն իմ թրթիռների նկատմամբ կտրուկ «օտկոլուպարային» չթվացին, կամ, ինչպես նման դեպքում քո սիրելիները կասեին՝ «նա ինձ բարեհաճ թվաց», և բացի այդ՝ քանի որ ես ինքս էլ էի արդեն մտածում, որ այդտեղ էլ որևէ մեկի հետ համապատասխան փոխհարաբերություններ հաստատեմ, որպեսզի ակտիվ մտածողությունից հանգստանալու համար զրուցեմ նրա հետ՝ հետևելով սոսկ նմանազգացությունների ազատ ընթացքին, ապա անմիջապես համաձայնեցի նրա առաջարկին և, այդ օրվանից սկսած, առավոտյան զբոսանքներս նրա հետ էի անցկացնում:

Մեր հետագա ծանոթության ընթացքում պարզվեց, որ այդ օտարերկրացին «Ռուսաստան» կոչվող մեծ հանրության հպատակ է և իր հայրենակիցների միջավայրում կարևոր իշխանավոր էակ է:

Մեր համատեղ զբոսանքների ընթացքում այնպես պատահեց, որ մենք չգիտես ինչու սկսեցինք խոսել գլխավորապես եռուղեղ էականների թույլ կամքի և այն անվայել թուլությունների մասին, որոնք իրենք «արատներ» են անվանում, և որոնց իրենք, հատկապես, ժամանակակից էականները, շատ արագ հարմարվում են. ի վերջո այդ արատները հիմք են դառնում ինչպես իրենց գոյատևման նպատակի, այնպես էլ *լինելիական դրսևորումների* համար:

Մի անգամ մեր այդ զրույցներից մեկի ժամանակ նա հանկարծ դիմեց ինձ այս խոսքերով.

«Միրելի՛ դու կտոր, վերջին ժամանակներս իմ հայրենիքում խմիչքի նկատմամբ շատ ուժեղ հակում է զարգացել և տարածվել բոլոր դասաարգերին պատկանող մարդկանց շրջանում, իսկ այդ հակումը,

ինչպես գիտեք, վաղ թե ուշ միշտ իր հետ բերում է փոխարաբերությունների այնպիսի ձևերի, որոնք սովորաբար հազեցնում են դարավոր ավանդույթների ու ձեռքբերումների քայքայմանը:

Ուստի իմ հեռատես հայրենակիցներից ոմանք, վերջապես հասկանալով մեր երկրում առաջացած նման իրավիճակի ամբողջ լրջությունը, հավաքվեցին, որ գուցե համատեղ ջանքերով որևէ եղանակ գտնեն այդ կործանարար հետևանքները կանխելու համար: Իրենց այդ խնդրի լուծման նպատակով նրանք անմիջապես ընկերություն հիմնեցին «Ժողովրդական սթափության հոգաբարձություն» անվանումով և ինձ ընտրեցին այդ նախաձեռնության գլուխ:

Ներկայումս այդ պետական մասշտաբի չարիքի դեմ «Հոգաբարձության» պայքարի միջոցների կազմակերպումը եռուն շրջանում է:

Մենք արդեն շատ բան ենք արել և մտադիր ենք ավելին անել»:

Այսքանն ասելուց հետո նա մի փոքր խորհեց և ապա շարունակեց.

«Եթե դուք հիմա, սիրելի՛ դոկտոր, հարցնեիք իմ անձնական կարծիքն այն արդյունքների մասին, որոնք ակնկալում է մեր «Հոգաբարձությունը», ապա ես, անկեղծ ասած, կոժվարանայի որևէ լավ բան ասել, չնայած այդ կազմակերպության ղեկավարն եմ:

Ինչ վերաբերում է մեր այդ «Հոգաբարձության» գործերի ընդհանուր վիճակին, ապա անձամբ ես հույսս դրել եմ սոսկ «պատահականության» վրա:

Իմ կարծիքով, ամբողջ չարիքն այն է, որ այդ Հոգաբարձությունը գտնվում է մի քանի խմբերի հովանավորչության տակ, որոնցից էլ հենց կախված է դրված խնդրի իրականացումը, բայց, քանի որ այդ խմբերից յուրաքանչյուրն ամեն մի հարցում հետապնդում է իր սեփական նպատակներն ու ցանկությունները, ապա Հոգաբարձության հիմնական մասի հետ առնչվող ամեն մի առանձին հարցի լուծման ժամանակ միշտ տարակարծությունն է թագավորում: Այդ իսկ պատճառով իմ սիրելի հայրենիքի համար այդքան կարևոր գործի հիմքում դրված իրական նպատակին հնարավորինս շուտափույթ հասնելու պայմանների բարելավման փոխարեն մեր Հոգաբարձության առանձին անդամների միջև օրեցօր ավելանում են ամենատարբեր թյուրիմացությունները, անձնական նկատառումները, բամբասանքները, բանասարկությունները, դավերը և այլն, և այլն:

Ինչ վերաբերում անձամբ ինձ, ապա վերջին ժամանակներս այնքան եմ մտածել, մտածածս հերքել, զանազան այնպիսի մարդկանց հետ խորհրդակցել, որոնք գոնե մի քիչ «կյանքի փորձ» ունեն այդ տխուր իրավիճակից դուրս գալու որևէ ելք առաջարկելու համար, որ քիչ էր մնում հիվանդանայի, ուստի ստիպված եղա մերձավորներիս պահանջով ճամփորդություն ձեռնարկել դեպի այստեղ՝ Եգիպտոս՝ հետապնդելով միայն մեկ նպատակ՝ հանգստանալ... Բայց, ավա՛ղ, նույնիսկ այստեղ՝ Եգիպտոսում, նպատակս ձախողվեց, քանի որ նույն այդ սև մտքերն այստեղ գտնվելուս ամբողջ ընթացքում ինձ հանգիստ չեն տալիս:

Իսկ հիմա, սիրելի՛ դոկտոր, երբ արդեն մոտավորապես գիտեք գործի էությունը, որը պատճառ է դարձել ներկայիս իմ հոգեկան անհանգստությանը, ես անկեղծորեն ձեզ կհայտնեմ իմ թաքուն մտքերն ու հույսերը, որոնք իմ մեջ ծագել են ձեզ հետ ծանոթանալուս կապակցությամբ:

Բանն այն է,– շարունակեց նա,– որ մարդկանց կործանարար արատներին և դրանցից ձերբազատվելու հնարավոր միջոցներին վերաբերող մեր հաճախակի ու երկարատև զրույցների ընթացքում, ես հանգեցի այն հաստատ համոզմանը, որ դուք լրիվ քաջատեղյակ եք ինչպես մարդկանց հոգեկառույցը նրբորեն հասկանալու, այնպես էլ նրանց թուլությունների դեմ պայքարելու համար պայմաններ ստեղծելու հարցերին: Ուստիև ձեզ միակ մարդն եմ համարում, որը կկարողանար ամեն տեսակի նախաձեռնությունների աղբյուր հանդիսանալ, որպեսզի կազմակերպվի և կյանքի կոչվի Հոգաբարձության գործունեությունը, որն ակոհողիզմի դեմ պայքարելու նպատակով հիմնվել է այնտեղ՝ իմ հայրենիքում:

Երեկ առավոտյան իմ գլխում մի միտք ծագեց, որի շուրջ ես խորհրդածեցի ամբողջ ցերեկն ու երեկոյան, և հիմա վերջապես որոշեցի ձեզ հայտնել իմ խնդրանքը:

Կհամաձայնեի՞ք զալ իմ երկիրը՝ Ռուսաստան, և հենց տեղում ականատեսը դառնալով այն ամենի, ինչ տեղի է ունենում, օգնել մեզ կամակերպելու մեր Հոգաբարձությունն այնպես, որ այն իրոք կարողանա իմ երկրին տալ այն օգուտը, հանուն որի հիմնվել է»:

Այնուհետև նա ավելացրեց հետևյալը.

«Հատկապես ձեր մարդկայնությունն ինձ համարձակություն ներշնչեց դիմելու ձեզ այս խնդրանքով, ինչպես նաև վստահ եմ, որ չեք հրաժարվի մասնակցել մի գործի, որը գուցե միլիոնավոր մարդկանց փրկության հետ է կապված»:

Երբ այդ համակրելի տարեց ռուսն իր խոսքն ավարտեց, ես մի փոքր խորհելուց հետո պատասխանեցի, որ հնարավոր է, որ համաձայնեմ Ռուսաստան մեկնելու իր առաջարկին, քանի որ այդ երկիրը գուցե շատ հարմար վայր լինի նաև իմ գլխավոր նպատակին հասնելու համար:

Այնուհետև ես նրան ասացի.

«Ներկայումս ես միայն մեկ նպատակ ունեմ, այն է՝ ինձ համար հիմնովին պարզել մարդկային անհատների հոգեկառույցի դրսևորումների բոլոր մանրամասները, ինչպես առանձին գոյատևող անհատների, այնպես էլ նրանց խմբերի: Ուստի մեծ խմբերի հոգեկառույցի դրսևորումների ու վիճակի պարզաբանման առումով Ռուսաստանը գուցե շատ հարմար վայր լինի ինձ համար, քանի որ, ինչպես հասկացա մեր զրույցների ընթացքում, ձեր երկրում «ակոհոլիզմ» հիվանդությունը շատ տարածված է համարյա ամբողջ բնակչության շրջանում, ինչի շնորհիվ ես ավելի հաճախ հնարավորություն կունենամ տարբեր տիպերի վրա փորձեր դնելու՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ զանգվածաբար»:

Այդ կարևոր ռուս էակի հետ զրույցից հետո ես շուտով պատրաստվեցի, և մի քանի օր հետո մենք միասին լքեցինք Եգիպտոսը: Դրանից երկու շաբաթ անց մենք արդեն այդ մեծ հանրության գլխավոր գոյատևման վայրում էինք՝ մի քաղաքում, որն այն ժամանակ Սանկտ-Պետերբուրգ էր կոչվում:

Այնտեղ հասնելուց հետո իմ նոր ծանոթն անմիջապես իր գործերին անցավ, որոնք խիստ կուտակվել էին իր երկարատև բացակայության ընթացքում:

Ամեն ինչից զատ՝ այդ ընթացքում այնտեղ արդեն ավարտվել էր Հոգաբարձության համար նախատեսված մեծ շենքի շինարարությունը որը նախատեսված էր ակոհոլիզմի դեմ պայքարի համար, և իմ նոր ծանոթն անմիջապես սկսեց զբաղվել այդ կազմակերպության գործերով և կազմակերպելով անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի տեղի ունենա ինչպես այդ շենքի, ինչպես իրենք են այնտեղ ասում, «հանդիսավոր բացումը», այնպես էլ նշվի դրա հետ կապված իրենց գործունեության սկիզբը:

Իսկ ես այդ ընթացքում սովորականի պես շրջում էի ամենուրեք և այցելում այդ քաղաքի տարբեր, այսպես կոչված, «դասակարգերի» պատկանող էակների, որպեսզի ծանոթանամ նրանց ավանդույթների ու սովորույթների բնութագրիչ առանձնահատկություններին:

Հենց այդ ընթացքում էլ ամեն ինչից զատ ես պարզեցի, որ հատկապես այդ ժամանակակից հանրությանը պատկանող էակների ներկայություններում է վերջին հարյուրամյակների ընթացքում առանձնապես հստակ սկսել ձևավորվել իրենց, այսպես կոչված, «սեփական անհատականության» երկատվածությունը:

Երբ ես դա փաստեցի և սկսեցի հատուկ ուսումնասիրել այդ հարցը, ի վերջո պարզեցի, որ անհատականության այդ երկատվածությունը նրանց սեփական ներկայություններում առաջացել է գլխավորապես, այսպես կոչված, «*իրենց ծագման ու գոյատևման վայրի ռիթմի*» և «*լինելիական մտածողության ձևի*» միջև եղած անհամապատասխանության պատճառով:

Կարծում եմ, զավակս, դու շատ լավ կհասկանաս այդ մեծ հանրության էակների հատկապես ցայտուն արտահայտված «*երկատվածությունը*», եթե ես բառ առ բառ կրկնեմ մեր պատվարժան մոլլա Նասրեդինի՝ նրանց մասին ունեցած կարծիքը, որը նա արտահայտել է անձամբ իմ ներկայությամբ:

Պետք է ասեմ, որ քո սիրելիների միջավայրում վերջին անգամ գտնվելուս երկրորդ կեսի ընթացքում ինձ վիճակվեց մի քանի անգամ հանդիպել այդ երկրային արտակարգ իմաստուն մոլլա Նասրեդինի հետ և անձնական «կարծիքներ փոխանակել» զանազան, ինչպես այնտեղ են ասում, «կենսական հարցերի» շուրջ:

Իմ այդ անձնական հանդիպումը, որի ընթացքում նա իր իմաստուն ասույթներով վեր հանեց այնտեղի այդ մեծ հանրության էակների իրական էությունը, տեղի ունեցավ քո այդ մոլորակի մակերևույթի «Պարսկաստան» կոչվող հատվածի այն վայրում, որը «Սպահան» է կոչվում. ինձ վիճակվեց հայտնվել այդ վայրում, որպեսզի հետազոտություններ կատարեմ՝ կապված Աշխաթա Շիեմաշի սրբազնագույն գործունեության հետ և տեղում պարզեմ ինձ համար կարևոր այն հարցը, թե հատկապես ինչպես է առաջին անգամ այնտեղ առաջացել, այսպես կոչված, «քաղաքավարության» այն տեսակը, որն այժմ այնտեղ ամենուրեք տարածված է և նույնպես վնասակար է իրենց համար:

Դեռևս մինչև Սպահան հասնելը ես արդեն գիտեի, որ պատվելի մուլլա Նասրեդինը գնացել է «Տալայալտնիկում» քաղաքը՝ իր կնքահոր ավագ աղջկա խորթ տղային հյուր:

Հասնելով այդ վերջին վայրը՝ ես անհապաղ գտա նրան և այնտեղ գտնվելուս ողջ ընթացքում հաճախ այցելում էի նրան, և, կտուրին նստած, ինչպես ընդունված է այդ երկրում, մենք միասին գրուցում էինք ամեն տեսակի, այսպես կոչված, «*նրբին փիլիսոփայական հարցերի*» շուրջ:

Մի անգամ՝ որքան հիշում եմ, այնտեղ լինելուս երկրորդ թե երրորդ օրը, երբ առավոտյան գնում էի նրա մոտ, անսովոր աշխուժություն նկատեցի փողոցներում. ամենուրեք մաքրում ու ավում էին, կախում էին, այսպես կոչված, «գորգեր», «շալեր», «դրոշներ» և այլն:

Ես մտածեցի. «Հավանաբար սկսվում է այդ հանրության էակների ամենամյա երկու նշանավոր տոներից մեկը»:

Երբ տեղ հասա, բարձրացա կտուրը, սովորական ողջույնի խոսքեր փոխանակեցի հանրահայտ ու իմաստնագույն մուլլա Նասրեդինի հետ և ապա, ձեռքով ցույց տալով փողոցի աշխուժությունը, հարցրի, թե ինչի հետ է դա կապված:

Նրա դեմքը ձգվեց սովորական բարեհոգի ժպիտով և, ինչպես միշտ, հմայիչ արտահայտությամբ, որը, սակայն, նաև թեթևակի քամահրանք էր պարունակում. նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց այդ պահին ներքևի փողոցից լսվեցին «քաղաքային մունետիկների» կանչերն ու բազմաթիվ նժույգների սմբակների դոփյունը:

Այնժամ մեր իմաստուն մուլլան, ոչինչ չասելով, ծանորդեն վեր կացավ և թևս բռնելով՝ ինձ հասցրեց կտուրի ծայրը, որից հետո ձախ աչքով խորամանկ աչքով անելով իմ ուշադրությունը հրավիրեց քառատրոփ ընթացող «հեծելագնդի» վրա, որի կազմում, ինչպես ես հետո իմացա, գլխավորապես, այսպես կոչված, «կազակներ» էին, որոնք պատկանում էին այնտեղի «Ռուսաստան» կոչվող մեծ հանրությանը:

Այդ մեծ հեծելագնդի կենտրոնում, այսպես կոչված, «ռուսական ֆայտոն» էր գլորվում, որին ձիերի քառյակ էր լծված, իսկ կառապանը չափազանց գեր էր ու ներկայանալի տեսք ուներ: Այդ ներկայանալի արտաքինը նույնպես տիպիկ ռուսական ոգով էր, և ստեղծվել էր նրա հագուկապի որոշակի հատվածներում տեղադրված բարձիկներով: Կառքի ներսում երկու էակ էին բազմել. մեկի արտաքինը տիպական էր Պարսկաստան երկրի համար, իսկ մյուսը՝ տիպիկ, այսպես կոչված, «ռուս գեներալ» էր:

Երբ հիշյալ հեծելագունը բավականին հեռացավ, մուլլան նախ և առաջ արտաբերեց իր սիրած ասույթը. «*Էդպե՛ս, Էդպե՛ս, Էդպե՛ս պիտի լիներ. մի՛ արա մի բան, որի կարիքը չկա*» և «*Թող Էդպես լինի՛*», ապա, իր սիրելի բացականչությունն անելով, որը ես «զըռթ...» եմ հիշում, վերադարձավ իր նախկին տեղը՝ ինձ ևս առաջարկելով նույն անել. այնուհետև, շուռումուռ տալով իր «ղայլանում» դեռևս միացող ածուխը, նա խոր հոգոց հանեց և արտաբերեց հետևյալ երկարաշունչ ճառը, որն, ինչպես միշտ, միանգամից դժվար էր հասկանալ.

«Քիչ առաջ մեծ թվով «*ցեղական հնդկահավերի*» ուղեկցությամբ այստեղով անցավ տեղական «ագոավը», որը թեև կառավարիչներից մեկն է և բարձր դիրք է զբաղացնում, բայց գզգզվածի ու փետրահան արվածի մեկն է:

Վերջին ժամանակներս այս երկրի «բարձրաստիճան ագոավները», չգիտես ինչու, ընդհանրապես ոչ մի քայլ չեն անում առանց այդ «ցեղական հնդկահավերի». երևում է՝ նրանք հույս ունեն, որ մշտապես այդ հնդկահավերի հզոր ճառագումների ոլորտում գտնվելու շնորհիվ իրենց խղճուկ փետուրների մնացորդները կպնդանան և այլևս չեն թափվի»:

Թեև նրա ասածներից ոչինչ չհասկացա, սակայն լավ իմանալով սկզբում այլաբանորեն արտահայտվելու նրա սովորությունը, բոլորվին չզարմացա և հարցեր չտվեցի, այլ համբերությամբ սպասեցի նրա հետագա բացատրություններին:

Եվ իսկապես, ավարտելով իր երկարաշունչ ճառը և տեղը տեղին «բլթբլթացնելով ղայլանի» ջուրը, իրեն հատուկ «նրբին թունտությամբ» իր հետագա խոսքերով տվեց այդ «Պարսկաստան» կոչվող հանրության էակների ընդհանուր ներկայության բուն էությունը՝ ինձ բացատրելով, որ այդ «Պարսկաստանի» էակներին ինքը համեմատում է ագոավ անունով թռչունների հետ, իսկ «Ռուսաստան» կոչվող մեծ հանրության էակներին, որոնց հեծելագորը քիչ առաջ փողոցով անցավ, հնդկահավ անունով թռչունների հետ:

Նա իր միտք զարգացրեց հետևյալ երկարաշունչ դատողությամբ.

«Եթե մենք անաչառորեն վերլուծենք և վիճակագրորեն ի մի բերենք ժամանակակից քաղաքակրթության ներկայացուցիչների պատկերացումներն ու ըմբռնումները Եվրոպայում բնակվող ժողովուրդների մասին՝ ի տարբերություն մնացած աշխարհամասերում բնակվողների, և զուգահեռ անցկացնենք այդ ժողովուրդների ու թռչունների միջև, ապա այն մարդկանց, որոնք ժամանակակից եվրոպական քաղաքակրթության «ցիմեսն» են կազմում, այսինքն՝ ծնվում և գոյատևում են Եվրոպա աշխարհամասում, անշուշտ, պետք է սիրամարգեր անվանել, որոնք թռչունների մեջ ամենագեղեցիկ ու վառ արտաքինն ունեն, իսկ մնացած մարդկանց, որոնք բնակվում են մյուս աշխարհամասերում, հարկ է ագռավներ անվանել, որոնք ամենաանպիտանն ու կեղտոտն են բոլոր թռչունների մեջ:

Իսկ ահա ժամանակակից այն մարդկանց, որոնք սկզբնավորվելու և կազմավորվելու հիմք ու անհրաժեշտ պայմաններ են ստանում Եվրոպա աշխարհամասում, բայց հետագա կյանքն ու հետևաբար նաև հետագա «խճողումը» այս կամ այն պատճառով անց են կացնում ուրիշ աշխարհամասերում, ինչպես նաև այն ժամանակակից մարդկանց, որոնք, ընդհակառակը, «լույս աշխարհ են գալիս» ուրիշ աշխարհամասերում, բայց իրենց հետագա «խճողումը» ստանում են այն պայմաններում, որոնք ծագում և տիրապետող են դառնում Եվրոպա աշխարհամասում, չի կարելի ավելի լավ «համեմատություն» գտնել, քան հնդկահավ կոչվող թռչունի հետ համեմատելն է:

Վերջինս ավելի, քան մյուս թռչունները, իրենով արտահայտում է այն, ինչը ո՛չ ձուկ է, ո՛չ միս, կամ, ինչպես ասում են, «*ո՛չ երկուս է, ո՛չ մեկուկես*»:

Նման հնդկահավերի ամենալավ ներկայացուցիչները Ռուսաստանի ժամանակակից մարդիկ են, և հենց այդ հնդկահավերով էր շրջապատված այս երկրի գլխավոր ագռավներից մեկը, որը քիչ առաջ սրընթաց անցավ մեր մոտով:

Այդ ռուսներն իդեալական կերպով են համապատասխանում այդ յուրօրինակ թռչուն հնդկահավին՝ ամեն ինչից զատ նաև հետևյալ պատճառաբանությամբ:

Սկզբնավորվելով ու կազմավորվելով Ասիա աշխարհամասում, սակայն գլխավորապես ինչպես օրգանական, այնպես էլ հոգեկան մաքուր ժառանգականության շնորհիվ, որը շատ հարյուրամյակներ տևած գոյության պայմաններում թրծվել է հիշյալ աշխարհամասում, նրանք բոլոր առումներով ձեռք են բերում ասիացու բնավորություն, և, հետևաբար, ներկայումս նրանք պետք է որ ագռավներ լինեին: Բայց քանի որ վերջին ժամանակներս նրանք ավելի ու ավելի են ձգտում եվրոպացիներ դառնալ և դիտմամբ եռանդագին սկսում են իրենց պահել համապատասխան ձևով, ապա դրա հետևանքով կամաց-կամաց դադարում են ագռավներ լինել. բայց քանի որ մի քանի անժխտելի և օրինաչափ տվյալների պատճառով նրանք չեն կարող լիարժեք սիրամարգեր լինել, ապա «ագռավից» պոկվելով և «սիրամարգին» չկպչելով՝ նրանք դառնում են, ինչպես ասացի, իդեալական հնդկահավեր:

Թեև հնդկահավը շատ օգտակար թռչուն է տնտեսության համար, քանի որ նրա միսը (եթե, իհարկե, հնդկահավը մորթում են այն հատուկ եղանակով, որը բազմադարյան փորձով յուրացրել են հինավուրց ժողովուրդները) բոլոր մնացած թռչունների մսից լավն է ու համեղ, սակայն կենդանի հնդկահավը շատ տարօրինակ թռչուն է և չափազանց յուրահատուկ հոգեկառույց ունի, որը նույնիսկ մոտավոր կերպով հասկանալ բոլորովին հնարավոր չէ, հատկապես կիսապասսիվ խելք ունեցող մեր մարդկանց համար:

Այդ տարօրինակ թռչունի հոգեկառույցի բազմաթիվ առանձնահատուկ գծերից մեկն այն է, որ հնդկահավը չգիտես ինչու միշտ անհրաժեշտ է համարում իրեն երևակայել, ուստիս հաճախ առանց որևէ պատճառի փքվում է:

Նույնիսկ երբ նրան ոչ ոք չի նայում, նա էլի իր կարևորությունն ընդգծելով փքվում է, չնայած այդ դեպքում դա անում է՝ ելնելով իր սեփական երևակայությունից և հիմար երագներից»:

Այսքանն ասելուց հետո մոլլա Նասրեդինը դանդաղ ու ծանր վեր կացավ տեղից և նորից կրկնեց իր սիրած ասույթը. «Էդպե՛ս, էդպե՛ս, էդպես էլ պետք է լիներ», բայց այս անգամ ավարտեց այլ կերպ. «Երկար մի՛ նստիր այնտեղ, որտեղ դու չպետք է նստես», որից հետո բռնեց իմ ձեռքը, և մենք միասին ցած իջանք կտուրից:

Այստեղ, զավակս, արժանին մատուցելով մեր իմաստնագույն մոլլա Նասրեդինի նուրբ հոգեբանական վերլուծությանը, հանուն արդարության պետք է ասել, որ եթե այդ ռուսներն այդպիսի օրինակելի հնդկահավեր են դարձել, ապա դրա համար տվյալ դեպքում պետք է կրկին մեղադրենք միայն Գերմանիա կոչվող հանրության էակներին:

Տվյալ դեպքում Գերմանիայի էակները մեղավոր են այնքանով, որ երբ հորինեցին իրենց նշանավոր ներկերը, նրանք հաշվի չառան այդ ներկերի առանձնահատկություններից մեկը:

Բանն այն է, որ այդ ներկերով կարելի է ուրիշ գույնի վերածել ցանկացած բնական գույն, բացի իսկական բնական սևից:

Եվ գերմանացի էակների հենց այդ անզգուշության պատճառով է, որ ռուս էակները կանգնեցին մի աղմկահարույց տհաճություն առջև, այն է՝ քանի որ ազդավի փետուրները ի բնե «անսպասելիորեն-անկանխատեսելիորեն» սիփ-սև են և անհնար է դրանք ուրիշ գույնի ներկել նույնիսկ այդ հայտնագործված անիլինային ներկերով՝ այդ ներկերի հիշյալ ստոր անկատարության պատճառով, ապա ռուս «ազդավները» ոչ մի կերպ չեն կարողանում սիրամարգ դառնալ: Եվ ամենից վատն այն է, որ դադարելով ազդավ լինել և չդառնալով սիրամարգ՝ նրանք կամա թե ակամա վերածվում են հնդկահավի, որն իդեալական կերպով, ինչպես ձևակերպել է մեր սիրելի ուսուցիչը, «*ոչ երկուս է, ոչ մեկուկես*»:

Եվ այսպես, պատվելի մոլլա Նասրեդինի բնորոշման շնորհիվ, որն անձամբ ինքն է ինձ փոխանցել, ես առաջին անգամ հստակ հասկացա, թե ինչու այդ մեծ հանրության էակները, երբ հասնում են իրենց պատասխանատու տարիքին, տեր են դառնում իրենց անհատականության այդքան հստակ արտահայտված երկատվածությանը:

Բայց այս մասին այսքանը բավական է: Լսիր այժմ այն իրադարձությունների մասին, որոնց ինձ վիճակվեց մասնակից դառնալ, երբ ժամանեցի Ռուսաստան կոչվող հանրության էակների գոյատևման գլխավոր վայրը, որն այն ժամանակ Սանկտ-Պետերբուրգ էր կոչվում:

Ինչպես արդեն ասացի, քանի դեռ իմ ծանոթը՝ հիշածս կարևոր ռուսը, կարգավորում էր իր գործերը, որոնք բարձիթողի վիճակում էին հայտնվել իր բացակայության ընթացքում, ես այնտեղ սկսեցի ման գալ ամենուրեք և հանդիպել տարբեր «դասակարգերի» ու «դիրքերի» պատկանող էակների հետ, որպեսզի ուսումնասիրեմ նրանց ավանդույթների ու սովորույթների բնորոշ առանձնահատկությունները և ինձ համար պարզեմ ալկոհոլի նկատմամբ նրանց, այսպես կոչված, «օրգանական պահանջմունքի» պատճառը, ինչպես նաև նրանց ընդհանուր ներկայության վրա այդ ալկոհոլի թողած ազդեցության արդյունքի հետևանքները:

Հետաքրքիր կլինի նշել, որ տարբեր «խավերի» ու «դիրքերի» պատկանող եռուղեղ էակների հետ ունեցած իմ հանդիպումների ընթացքում ես արդեն իսկ մի քանի անգամ փաստեցի, իսկ ավելի ուշադիր դիտումներից հետո ինձ համար կատարելապես ակնհայտ դարձավ, որ նրանց մեծ մասն իր ներսում արդեն վաղուց կրում է այն «*ընդհանուր ներկայության յուրահատուկ գործունեության*» սաղմը, որն արդեն վաղուց քո սիրելիների ներսում սովորաբար առաջանում էր դրսից եկող երկու անկախ պատճառների որոշակի համակցության հետևանքով:

Այդ երկու պատճառներից առաջինը համատիեզերական օրենք է, որը գոյություն ունի «Սոլիոնենսիուս⁴⁹» անվամբ, իսկ երկրորդը էակների սովորական *լինելիական գոյատևման* պայմանների կտրուկ վատացումն է քո այդ մոլորակի մակերևույթի որևէ մասում:

Ես խոսում եմ նրանց «*ընդհանուր ներկայության յուրահատուկ գործունեության*» այն սաղմի մասին, որն այդ հանրության բոլոր էակների ներկայությունների մեջ իրենց ժամանակով մի քանի տարի հետո այնպիսի սովորական տեսքի բերվեց, որը որոշակի ժամանակաշրջաններում արդեն նրանց ընդհանրապես բնորոշ դարձավ՝ իրենց առանձնահատուկ դրսևորումների համար դառնալով, այսպես կոչված, «խթանիչ գործոն», որը հետո բնորոշ դարձավ նաև Երկիր մոլորակի բոլոր եռուղեղ էակների համար. այդ մեծ հանրության էակների այդ դրսևորումների համախմբությունն այս անգամ այնտեղ «բոլշնիզմ» էր կոչվում:

Ես հետո քեզ բացատրություններ կտամ նրանց այդ «*ընդհանուր ներկայությունների յուրահատուկ գործունեության*» մասին:

Իմ պատմության այս մասում ես հատուկ անդրադարձա այս հարցին միայն այն բանի համար, որ դու պատկերացում ստանաս նրանց *լինելիական գոյատևման* արդեն առանձնապես աննորմալ պայմանների մասին, որոնք առկա էին այդ մեծ հանրության էակների գոյատևման Սանկտ-Պետերբուրգ կոչվող գլխավոր վայրում իմ գործունեությունը ծավալելուս ընթացքում:

⁴⁹ ռուս. տարբերակում՝ Солиуненсиус, անգլ. տարբերակում՝ Soliooonensius

Դեռևս նախքան այդ քաղաք մտնելու ես նպատակդրվել էի իրագործել իմ մտադրություններից մեկը, որի համար անհրաժեշտ ամեն ինչն արդեն նախապատրաստված էր:

Բանն այն է, որ դրանից շատ առաջ ես արդեն մտադրվել էի նրանց մեծ բնակավայրերից որևէ մեկում ստեղծել «ինչ-որ այնպիսի բան», որին իրենք այնտեղ «քիմիական լաբորատորիա» են անվանում, որտեղ պատրաստվում էի նախապես ընտրված մեթոդներով հատուկ փորձեր կատարել նրանց տարօրինակ հոգեկառույցի որոշ խորը թաքցված կողմերի հետ:

Այսպիսով, զավակս, երբ արդեն այդ քաղաքում էի և պարզեցի, որ իմ ժամանակի համարյա կեսը կարող է ազատ լինել, որոշեցի իմ այդ ժամանակավոր «կիսազբաղվածությունը» լրացնել այդ մտադրությունս իրագործելով:

Ստացված տեղեկություններից ես իմացա, որ նման լաբորատորիա ստեղծելու համար պետք է նախ հատուկ թույլտվություն ստանալ իշխանավոր էակներից, ուստի սկսեցի հապճեպ քայլեր ձեռնարկել այդ թույլտվությունը ստանալու համար:

Ձեռնարկված առաջին քայլերը ցույց տվեցին ինձ, որ ըստ այդ հանրության գոյատևման գործընթացում վաղուց հաստատված օրենքների՝ սեփական քիմիական լաբորատորիա ունենալու իրավունքի թույլտվությունը պետք է տա իրենց, այսպես կոչված, «նախարարություններից» մեկի որոշակի, այսպես կոչված, «դեպարտամենտը»:

Ահա այդ պատճառով էլ ես գնացի այդ դեպարտամենտը. բայց պարզվեց, որ թեև այդ դեպարտամենտի ծառայողներն ընդունում են, որ նման նման թույլտվություն իրենք պետք է տան, սակայն չգիտեն, թե ինչպես պետք է դա անեն:

Ինչպես հասկացա, նրանք դա չգիտեն այն պարզ պատճառով, որ ոչ ոք երբեք նման հարցով իրենց չի դիմել, և այդ դժբախտ էակները դեռևս ձեռք չեն բերել իրենց սովորական «*մեխանիկական հմտությունը*», որպեսզի դրսևորեն դրա նման մի «*լինելիական պարտականությունը*»:

Այստեղ ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ այնտեղ վերջին հարյուրամյակների ընթացքում նրանց *լինելիական պարտականությունների* հետ աչնչվող համարյա բոլոր «*լինելիական դրսևորումները*» այն էակների ներկայություններում, որոնք իշխանավոր են դառնում, ի կատար են ածվում բացառապես սոսկ այն նախադրյալների գործունեության շնորհիվ, որոնք իրենց ներսում ձևավորվում են նույն բանը բազմակի անգամ մեխանիկորեն կրկնելուց:

Իսկ ինչ վերաբերում է հենց այդ հանրության իշխանավորներին, ապա այդ յուրօրինակ մեխանիկական «*լինելիական նախադրյալների*» բյուրեղացումը նրանց ներսում ժամանակի այդ հատվածում տեղի էր ունենում անհամեմատ ավելի ինտենսիվորեն, քան որևէ այլ վայրում, և այնքան ցայտուն էր արտահայտվում, որ երբեմն թվում էր, թե նրանց մոտ ընդհանրապես լիովին բացակայում են բացարձակապես բոլոր այն նախադրյալները, որոնց միջոցով անհապաղ *լինելիական ազդակներ* են առաջանում, որոնք ընդհանրապես սազական են էակներին:

Ինչպես հետագայում պարզեցի, այդ բյուրեղացումը նրանց մոտ տեղի էր ունենում Սոլիունենսիոս տիեզերական օրենքի ազդեցությամբ, որի մասին քիչ առաջ նշեցի:

Իսկ ինչ վերաբերում է այն խոսքին, թե ոչ ոք թույլտվության խնդրանքով չէր դիմել հիշյալ դեպարտամենտի ծառայողներին, ապա դա տեղի էր ունեցել բոլորովին ոչ այն պատճառով, որ այդ գլխավոր գոյատևման վայրի ոչ մի բնակիչ քիմիական լաբորատորիա բացելու ցանկություն չէր ունեցել. ընդհակառակը՝ այդ քաղաքում երբեք այնքան շատ քիմիական լաբորատորիաներ չէին եղել, որքան այդ ժամանակահատվածում, և անկասկած բոլորի տերերն ինչ-որ ձևով ինչ-որ տեղից ստացել էին անհրաժեշտ թույլտվությունը:

Նրանք չէին կարող դա չունենալ: Հենց դրա համար, ինչպես գոյատևման այդ գլխավոր վայրում, այնպես էլ ընդհանրապես այնտեղի բոլոր մեծ ու փոքր հանրություններում խաղաղ ժամանակներում գործում է հատուկ, ինչպես իրենք են ասում, «ադմինիստրատիվ մարմին», որը «*իշխանավորների լիակատար բարօրության գլխավոր ապավենն*» է, և որին իրենք «*ժանդարմերիա*» և «*ռստիկանություն*» են կոչում. այդ մարմնի ներկայացուցիչների գլխավոր պարտականություններից մեկն այն է, որ հետևեն, որ այնտեղ բացված զանազան ձեռնարկություններն ունենան համապատասխան թույլտվություն, և իրոք, դժվար էր ենթադրել, որ այդ «*իշխանավորների լիակատար բարօրության գլխավոր ապավենի*» ներկայացուցիչների «մշտաբթուն աչքից» որևէ բան կարող է «վրիպել», և ինչ-որ տեղ հանկարծ կարող է հայտնվել ինչ-որ լաբորատորիա, որը չունի իշխանավորների համապատասխան թույլտվությունը:

Այս թվացյալ հակասության հիմնական պատճառը բոլորովին այլ էր:

Պետք է ասել, որ այդ հանրությունում վերաբերմունքն այն օրենքների և որոշումների նկատմամբ, որոնք նախկինում ընդունվել էին իրենց պատկերացրած «նորմալ» փոխհարաբերությունները սովորական գոյատևման ընթացքում կարգավորելու համար, արդեն այնպիսին էին դարձել, որ օբյեկտիվ իրավունքով իրենց հասանելիքը ստանում էին միայն այն սովորական էակները, որոնք կարողանում էին ամեն ինչ հակառակն անել՝ հակասելով այնտեղ գործող օրենքներին ու որոշումներին:

Այդ մասնավոր լաբորատորիաներից, որոնցից մեկն էլ ես էի ուզում ունենալ, կարելի էր ունենալ ոչ թե մեկ, այլ հազար հատ, դրա համար նախ պետք էր իմանալ, թե ինչ «շուրի-մուրի» քայլեր պետք է ձեռնարկել լաբորատորիայի թույլտվությունը ստանալու համար և շարժվել այդ աննորմալություններին համապատասխան:

Իսկ ես, քանի որ կարճ ժամանակ էի այնտեղ, չհասցրի ինձ համար պարզել *սովորական լինելիական* գոյատևման բոլոր նրբությունները, որոնք այդ հանրությունում, ինչպես ասացի, սկսել էին դառնալ հատկապես աննորմալ:

Ահա թե ինչու, երբ ես սկսեցի քայլեր ձեռնարկել, որպեսզի ստանամ պահանջված թույլտվությունը, բախվեցի անվերջանալի տհաճությունների, կամ, ինչպես իրենք են ասում նման դեպքերում, «ապուշ քաշքշուկի», որը նույնպես վերջին ժամանակներում հաստատվել է նրանց *լինելիական գոյատևման* գործընթացում, և դրանից զատ, ի վերջո պարզվեց, որ այդ ամենը կատարելապես անարդյունք էր և ավելորդ:

Սկսվեց այսպես. երբ ես ներկայացա հիշյալ դեպարտամենտը և դիմեցի այնտեղի ծառայողներին, բոլորը սկսեցին տարակուսանքով իրար երեսի նայել և շուրկներ փոխանակել, նրանցից ոմանք էլ սկսեցին քրքրել հաստափոր հատորներ՝ հավանաբար հուսալով, որ ինչ-որ մի գրավոր կանոն կգտնեն թույլտվություն տալու վերաբերյալ: Ի վերջո նրանցից ամենաավագը մոտեցավ ինձ և պաշտոնական տոնով պահանջեց, որ նախ և առաջ ինչ-որ մի ուրիշ դեպարտամենտից տեղեկանք բերեմ իմ անձի, ինչպես իրենք են ասում, «բարեհուսության» վերաբերյալ:

Հենց դրանից էլ սկսվեցին իմ անվերջանալի վազվզոցները մի դեպարտամենտից մյուսը, կամ, ինչպես իրենք են ասում, մի գրասենյակից մյուսը, մի պաշտոնական անձից մյուսի մոտ... Եվ այդպես անվերջ:

Այդպես շարունակվեց այնքան, մինչև, այսպես կոչված «թաղայինից» ինձ վիճակվեց հասնել նույնիսկ, այսպես կոչված, «ծխատեր քահանային»։ մնում էր, որ քաղաքային տատմոր մոտ էլ գնայի...

Դեռ դա քիչ է՝ դեպարտամենտներից մեկում չգիտես ինչու պահանջեցին, որ մի ուրիշ դեպարտամենտից տրված տեղեկանքը տանեմ հաստատելու մի երրորդ դեպարտամենտում:

Դեպարտամենտներից մեկում ես պետք է ինչ-որ թուղթ ստորագրեի. մի ուրիշում՝ պատասխանեի քիմիայի հետ ոչ մի կապ չունեցող հարցերի. երրորդում ինձ բացատրեցին և ցուցումներ տվեցին, թե ինչպես պետք է վարվեմ լաբորատորիայի սարքավորումների հետ, որ չթունավորվեմ և այլն, ևայլն:

Ինչպես հետագայում պարզեցի, ես, ինքս էլ դա չպատկերացնելով, եղա նաև մի պաշտոնյայի մոտ, որի պարտականություններից մեկը քիմիական լաբորատորիա բացելու մտադրություն ունեցողներին այդ «նողկալի» գաղափարից հետ կանգնեցնելն էր:

Բայց ամենազվարճալին այն էր, որ այդ թույլտվությունն ստանալու համար պետք էր հերթով դիմել այնպիսի պաշտոնյաների, որոնք նույնիսկ չնչին պատկերացում չունեին, թե ընդհանրապես ինչ բան է լաբորատորիան:

Չգիտեմ, թե այդ ամենն ինչ վախճան կունենար, եթե համարյա երկու ամիս վատնելուց հետո ես ինքս ի վերջո հետ չկանգնեի այդ հիմար քաշքշուկից:

Ես հրաժարվեցի այդ քաշքշուկից բավականին զվարճալի պատճառով:

Համաձայն այդ ամբողջ անիմաստ քաշքշուկի կանոնների՝ ամեն ինչից զատ ես նաև «տեղեկանք» պետք է վերցնեի պաշտոնական բժշկից, որ իմ անձնական առողջությանը լաբորատորիայում աշխատելուց ոչ մի վտանգ չի սպառնում:

Ահա և ես գնացի այդ պաշտոնական բժշկի մոտ. բայց երբ վերջինս նախ և առաջ ցանկություն հայտնեց ինձ մի լավ գննել և խնդրեց, որ լրիվ մերկանամ, որպեսզի իր մուրճիկով ինձ տկտկացնի՝ ես իհարկե չէի կարող դրան համաձայնել: Չէի կարող այն պատճառով, որ եթե մերկանայի, ապա

անխուսափելիորեն ի ցույց կդնեի իմ պոչը, որն այնտեղ՝ այդ մոլորակի վրա, ես միշտ հմտորեն թաքցնում էի հագուստիս ծալքերի արանքում:

Եվ դու իհարկե լավ ես հասկանում, որ եթե հանկարծ նրանցից մեկը տեսներ այն, ապա շատ շուտով բոլորը կիմանային, որ ես իրենց մոլորակի էակ չեմ. իսկ դրանից հետո կատարելապես անհնար կդառնար նրանց միջավայրում իմ մնալը, որպեսզի շարունակեմ նրանց հոգեկառույցի տարօրինակությունը պարզաբանող և ինձ հետաքրքրող փորձերը:

Ահա թե ինչու ես հրաժարվեցի այդ բժշկից՝ ինձ անհրաժեշտ «տեղեկանքը» վերցնելուց, այդ ժամանակից սկսած՝ ամեն ինչ թողեցի և այլևս իմ լաբորատորիան բացելու թույլտվություն ստանալու փորձ չարեցի:

Թեև ես, իմ հատուկ նպատակը հետապնդելով, շրջում էի ամենուրեք՝ միաժամանակ հոգալով հիշյալ թույլտվությունը ստանալու մասին, այնուհանդերձ հաճախ էի հանդիպում իմ առաջին ծանոթին՝ այն պատկառելի ռուսին, որը, չնայած այն բանին, որ, ինչպես ասացի, շատ էր զբաղված իր սեփական գործերով, այնուամենայնիվ ժամանակ էր գտնում ինձ այցելելու կամ իր տանն ինձ ընդունելու համար:

Այդ հանդիպումների ընթացքում մենք համարյա միշտ խոսում էինք միայն նրա հայրենիքում տարածված ակոհոլիզմի և այդ չարիքի դեմ պայքարելու միջոցների մասին:

Կարծիքների այդպիսի փոխանակումից ամեն անգամ ինձ մոտ ավելի ու ավելի շատ նյութ էր կուտակվում, քանի որ իմ անկողնակալ դիտումներն ու տեղացի էակների հոգեկառույցի բոլոր կողմերի ուսումնասիրությունն իմ ներսում նորանոր տվյալներ էին բյուրեղացնում նրանց վերաբերյալ:

Այդ պատկառելի ռուսի աչքին իմ դատողություններն ու դիտողություններն այն մասին, ինչ արդեն արվել է ժողովրդական սթափության Հոգաբարձության կողմից, ինչպես նաև հետագա պլանների վերաբերյալ շատ մեծ կշիռ ունեին, և նա անկեղծ հիանում էր իմ դիտարկումների արդարացիությամբ:

Սկզբնական շրջանում իմ բոլոր առաջարկները, որոնք նա զեկուցում էր Հոգաբարձության ընդհանուր ժողովում, մշտապես կիրառություն էին գտնում:

Բայց երբ այդ Հոգաբարձության մի քանի անդամներ պատահաբար իմացան, որ օգտակար շատ միջոցառումների նախաձեռնությունն ինձնից՝ ինչ-որ արտասահմանցի բժշկից է բխում, որը նույնիսկ եվրոպացի չէ, սկիզբ առան սովորական ամեն տեսակի, այսպես կոչված, «խարդավանքներ» ու «բողոքներ», որոնք ուղղված էին ինչպես իմ առաջարկությունների, այնպես էլ Հոգաբարձության ղեկավարի դեմ:

Ի փարօրություն այդ բազմամիլիոն հանրության էակների ստեղծված այդ կարևոր հաստատության Հոգաբարձության ցավալի ավարտին հանգեցրած բոլոր թյուրիմացությունների մեղավորներն, ինչպես միշտ և ամեն ինչում, «նոր տեսակի» գիտուն էակներն էին:

Բանն այն է, որ այդ հաստատության մշտական գլխավոր անդամների կազմում, ժառանգական իշխանավոր էակների պարտադրանքով, կային նաև մի քանի, այսպես կոչված, «բժիշկ գիտնականներ»:

Նրանք այդ Հոգաբարձության ղեկավարների կազմում էին հայտնվել այն պատճառով, որ այդ ժամանակվա ժառանգաբար իշխանություն ունեցող էակների ներկայություններում արդեն վերջնականապես հաստատվել և իրենց էության անբաժան մասն էր դարձել իրենց նույն այն «ներքին բռնակալը», որը չարաղետ է երկրային եռուղեղ էակների համար և իրենց կողմից «Ինքնասփոփանք» է անվանվել՝ դառնալով այդ թշվառների գոյատևման իմաստն ու նպատակը: Ուստի, որպեսզի իրենք բացարձակապես որևէ *լինելիական ջանք* չգործադրեն, նրանք պնդեցին, որ այդ բժիշկ գիտնականները նույնպես մասնակցություն ունենան վիթխարի հասարակական նշանակություն ունեցող այդ հաստատությունում:

Վերջին ժամանակներս այնտեղ, չգիտես ինչու, այդ մասնագիտությունն ունեցող էակներն առավել հաճախ էին դառնում «նոր տեսակի» գիտնականներ:

Այստեղ հարկ է նաև ասել, որ երբ այդ «նոր տեսակի» գիտուն էակներից ոմանք իշխանավոր են դառնում և սովորական գոյատևման ընթացքում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ, շատ հաճախ նրանք անհամեմատ ավելի մեծ չափով են հետագա զանազան թյուրիմացությունների աղբյուր ծառայում, քան ժառանգաբար իշխանություն ունեցողները:

Ակներևաբար նրանք թյուրիմացությունների այդպիսի աղբյուր են դառնում այն բանի հետևանքով, որ այդ էակների ընդհանուր ներկայություններում ձեռք են բերվում և յուրահատուկ կերպով միահյուսվում այնպիսի բնութագրիչ գծեր, որոնք բնորոշ են դարձել քո սիրելիների ժամանակակից երեք տարբեր տեսակների՝ իշխանավոր էակներին, «նոր տեսակի» գիտուն էակներին և ժամանակակից «արհեստավարժ բժիշկներին»:

Այսպիսով, զավակս, այդ հանրության մի քանի ժառանգաբար իշխանություն ունեցող էակների պարտադրանքով ու նախաձեռնությամբ, հատկապես նրանց պնդմամբ, որոնք թեև արտաքինապես շարունակում են իշխանավոր մնալ, բայց ներքին նշանակությամբ արդեն, այսպես կոչված «փութսները թողած» են, այդ լուրջ խնդրի լուծման գործում, ինչպիսին իրենց նման բազմամիլիոն էակների «հարաբերական փրկությունն» էր, իշխանություն ստացան հիրավի «փքված հնդկահավերը», կամ, ինչպես այնտեղ կասեին, «դուրսպրծուկները»:

Քանի դեռ այդ պատահաբար իշխանություն ստացած դուրսպրծուկներն իրենց բնորոշ ամեն տեսակի մանր-մուսր «խարդավանքները» բանացնում էին միայն իրենց միջավայրում, դա «կես-դժբախտություն» էր ընդհանուր գործի համար. բայց երբ իրենցից դուրս եկած ամեն տեսակի, այսպես կոչված, «խարդախությունները» մեծ չափեր ընդունեցին, այդ խարդավանքները ծավալվեցին նաև այդ Հոգաբարձության բոլոր անդամների միջև, և նրանք տրոհվեցին զանազան, այսպես կոչված, տխրահոյակ «կուսակցությունների». և քանի որ այդ սովորույթը, որը լայնորեն տարածված է այնտեղ, կործանարար է ցանկացած խոստումնալից նախաձեռնության հաջողության համար, ապա ժամանակակից եռուղեղ էակների ընդհանուր բարօրությանն ուղղված այնպիսի բարի մի գործ, ինչպիսին այդ Հոգաբարձությունն էր, սկսեց, ինչպես իրենք են ասում, «ծվեն-ծվեն լինել»:

Նրանց այդ մանր «խարդավանքները» ինչպես առանձին կուսակցությունների, այնպես էլ այդ բացարձակ անհրաժեշտ պետական կառույցի առանձին անդամների միջև, իրենց զագաթնակետին էին հասել հենց այն ժամանակ, երբ ես իմ առաջին ռուս ծանոթի հետ ժամանեցի հիշյալ հանրության էակների գոյատևման գլխավոր վայրը:

Երբ պատահաբար իշխանություն ստացած այդ «դուրսպրծուկներն» իմացան, որ կազմակերպության բարելավմանը վերաբերող «խորհուրդներն» ու «ցուցումներն» ինձնից են բխում, այսինքն՝ իրենց նման մի մասնագետից, որը, սակայն, իրենց, այսպես կոչված, կորպորացիայի անդամ չէ, ահա այդ ժամանակ, շատ լավ հասկանալով, որ իրենց բոլոր խարդավանքներն ու խարդախ հնարքներն ինձ համար ոչ մի նշանակություն չեն կարող ունենալ, դրանք ուղղեցին Հոգաբարձության հենց իրենց կողմից ընտրված ղեկավարի դեմ:

Իմիջիայլոց, այստեղ շատ հետաքրքիր կլինի նկատել, որ թեև տարբեր *լինելիական ազդակների* ծագման համար անհրաժեշտ ամեն տեսակի նախադրյալներն այդ ժամանակակից մասնագետների ներկայություններում ընդհանրապես թույլ են բյուրեղացված, բայց դրա փոխարեն, չգիտես ինչու, այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ են, այսպես կոչված, «կորպորացիայի զգացում» առաջացնող ազդակի համար, նրանց ներսում բյուրեղանում և շատ ուժեղ են գործում:

Եվ այսպես, զավակս, քանի դեռ ես չգիտեի, որ «խարդավանքներով» ու դավերով, կամ, ինչպես իրենք են երբեմն ասում, «իրար կզացնելով» զբաղվելն արդեն անկասելիորեն բնորոշ է դարձել այդ հանրության իշխանավոր էակների համար, ես դեռևս հույս էի կապում և համբերատար սպասում այն ժամանակին, երբ վերջապես հարմար պայմաններն ինձ հնարավորություն կտան իրագործելու իմ հիմնական նպատակը, այն է՝ շարունակելու երկրային էակների զանգվածի հետ տարվող իմ «պարզաբանիչ փորձերը» նրանց հոգեկառույցի վերաբերյալ: Բայց երբ ինձ համար կատարելապես պարզ դարձավ, որ այդտեղ՝ այդ հանրությունում, առկա փոխհարաբերությունների պայմաններում դրա հնարավորությունը չեմ ունենա, ինչպես նաև համոզվեցի, որ այդտեղ հնարավոր չէ սեփական քիմիական լաբորատորիա բացել ազնիվ ճանապարհով, այսինքն՝ խստորեն այն օրենքներով, որոնք հաստատված են այդ հանրությունում, ես որոշեցի այնտեղ երկար չմնալ, այլ գնալ և նշաձս նպատակի համար այլ վայր փնտրել, ասենք, որևէ ուրիշ եվրոպական հանրությունում:

Երբ իմ առաջին ծանոթ պատկառելի ռուսն իմացավ իմ այդ որոշման մասին, շատ վշտացավ. շատ վշտացան նաև մի քանի ուրիշ ռուս էակներ, որոնք իսկապես ինչ-որ չափով բարիք էին կամենում իրենց հայրենիքին և այդ ընթացքում հասցրել էին համոզվել, որ իմ գիտելիքներն ու փորձը կարող են շատ օգտակար լինել իրենց հիմնական նպատակի իրականացման համար:

Այդտեղից իմ հեռանալու ենթադրյալ օրն այդ Հոգաբարձությունը պատրաստվում էր այն մեծ շինության բացումն անել, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, հենց հատուկ նախատեսված էր Կոնստանդինոպոլի դեմ պայքար մղելու համար և հենց բացման օրն էլ, ի պատիվ իրենց ցարի՝ անվանվեց «Իմպերատոր Նիկոլայ 2-րդի ժողովրդական պալատ»:

Մեկնելուս նախորդ օրն անսպասելիորեն ինձ այցելեց իմ առաջին ծանոթ պատկառելի ռուսը, և, անկեղծ ափսոսանք հայտնելով իմ մեկնելու առիթով, թախանձագին խնդրեց, որ մեկնելս մի քանի օրով հետաձգեմ, որպեսզի հիշյալ պալատի օծումից և բացումից հետո ինքն էլ միանա ինձ և դրանով իսկ մի փոքր հանգստանա վերջին հոգսերից, խարդավանքներից ու դավերից:

Քանի որ շտապելու առանձնակի պատճառներ չունեի, ես համաձայնեցի և մեկնելս հետաձգեցի անորոշ ժամանակով:

Երկու օր հետո պալատի բացումն էր, և քանի որ դրա նախորդ օրը՝ երեկոյան, «պաշտոնական հրավեր» էի ստացել, գնացի այդ արարողությանը մասնակցելու:

Եվ ահա, այդ բազմամիլիոնանոց ժամանակակից հանրության այդ համապետական հանդիսության ժամանակ, որին անձամբ ներկայացավ, ինչպես իրենք են անվանում, «Նորին Մեծություն Իմպերատորը», իմ անձի նկատմամբ սկիզբ առավ այսպես կոչված «ուղեցտակնիկարուլ⁵⁰», որն, ընդհանրապես ասած, միշտ բխում է շրջակա աննորմալությունների համախմբությունից և, ինքնաբերաբար ձևավորվելով այդ չարադետ մոլորակի եռուղեղ էակների հոգեկառույցում, նրանց պահում է, այսպես ասած, «կախարդված շրջանի» մեջ:

Հետագա իրադարձությունները դասավորվեցին հետևյալ կերպ:

Հիշյալ պետական հանդիսության օրը արարողության ընթացքում իմ առաջին ծանոթ ռուսը, դետուրեն հրելով իրենց «շքանշանների» ու «տարբերանշանների» ամբողջ փայլով այնտեղ հավաքված էակներին, հանկարծ սկսեց մոտենալ ինձ և ցնծությամբ հայտնեց, որ ես «երջանկություն» կունենամ ներկայացված լինելու Նորին Մեծություն ցարին. շտապ այսքանն ասելուց հետո նա հապճեպ հեռացավ:

Պարզվեց, որ հանդիսության ընթացքում նա իմպերատորի հետ խոսել էր իմ մասին, որի արդյունքը եղել էր այն, որ որոշվել էր ինձ ներկայացնել նրան:

Այնտեղ իմպերատորին, ցարին կամ թագավորին այդպես ներկայացվելը շատ ու շատ մեծ երջանկություն է համարվում, ուստի իմ ծանոթը, ստանալով նման թույլտվություն, անասելի շատ էր ուրախացել ինձ համար:

Հավանաբար նա այդ ներկայացմամբ ուզում էր ինձ մեծ «հաճույք» պատճառել և դրանով հանգստացնել իր խիղճը, քանի որ ինքն իրեն մեղավոր էր զգում այն բանի համար, որ այդ մայրաքաղաքում իմ գտնվելը մատնվեց անհաջողության:

Այդ իրադարձությունից հետո անցավ երկու օր:

Երրորդ օրվա առավոտյան, իմ սենյակի պատուհանից պատահաբար նայելով փողոցի կողմը, այնտեղ կատարելապես անսովոր աշխուժություն նկատեցի. ամեն ինչ մաքրում էին, ամեն տեղ ավլում, այսուայնկողմ էին գնում, այսպես կոչված, «ժանդարմներն» ու «ոստիկանները»:

Իմ այն հարցին, թե ինչն է այդ ամենի պատճառը, Ահունը բացատրեց ինձ, որ մեր փողոցում սպասվում է այդ հանրության ինչ-որ շատ բարձրաստիճան գեներալի ժամանում:

Նույն օրվա կեսօրից հետո, երբ ես, տանը նստած, գրուցում էի իմ նոր ծանոթներից մեկի հետ, ներս վազեց հուզված ու շշմած բարապանը և կակազելով գոչեց.

«Նո...նո...նորին գեր...գերագ...գանցությունը...»

Դեռ չէր հասցրել վերջացնել, երբ արդեն ներս մտավ ինքը՝ նորին գերագանցությունը: Խեղճ բարապանը հենց նրան տեսավ, կայծակից խփվածի պես քարացավ, հետո, իրեն հավաքելով, ինչպես այնտեղ են ասում, հապճեպորեն սկսեց «հետ-հետ գնալ» սենյակից:

Իսկ ինքը՝ ազնվաբարո գերագանցությունը, լայն ու բարեհամբույր ժպիտը դեմքին, որն իր մեջ նաև, այսպես կոչված, «մեծամտության» երանգ էր պարունակում, ինչը բնորոշ էր այդ հանրության այն ժամանակվա բոլոր իշխանավորներին, մոտեցավ ինձ՝ միաժամանակ մեծ հետաքրքրությամբ աչք ածելով իմ սենյակում գտնվող «անտիկվար իրերը», որից հետո հատուկ ձևով թափահարեց իմ ձեռքի դաստակը և նստեց իմ սիրած բազկաթոռին:

⁵⁰ ռուս. տարբերակում՝ уречтакилкарулни անգլ. տարբերակում՝ ooretstaknilkarool

Այնուհետև, շարունակելով դիտել անտիկվար իրերը, նա ասաց.

«Երկու օր հետո դուք կներկայացվեք մեր «մեծ ինքնակալին», և քանի որ ես եմ վարում այդ գործերը, ապա եկել եմ, որ այդ կապակցությամբ ձեզ բացատրեմ, թե ձեր կյանքի այդ մեծ ու նշանակալից իրադարձության հետ կապված ինչն ինչպես պետք է անեք»:

Այսքանն ասելուց հետո նա հանկարծ վեր կացավ և, մոտենալով սենյակի անկյունում դրված և ճենապակուց պատրաստված հին չինական արձանիկին, բացականչեց հիացմունքի այնպիսի մի բռնկմամբ, որը պարուրել էր նրա ողջ ներկայությունը.

«Հրաշալի է... Որտեղից եք գտել հինավուրց իմաստության այս հրաշքը...»:

Ապա, հայացքը չկտրելով հիշյալ արձանիկից և տրվելով հիացմունքի զգացողությանը, կամ, այլ կերպ ասած, իր միջով անցնող հույզերի հորձանքին ենթարկվելով՝ նա շարունակեց.

«Ես ինքս շատ եմ հետաքրքրվում ամեն տեսակի հին արվեստներով, բայց առավելապես՝ չինականով, և այդ պատճառով իմ հավաքածուներին հատկացրածս հինգ սենյակներից երեքը լցրել եմ միայն հին չինական ծագում ունեցող ստեղծագործություններով»:

Շարունակելով այդ ոգով խոսել հին չինացի վարպետների գործերի հանդեպ իր պաշտամունքի մասին՝ նա կրկին առանց այլևայլի նստեց իմ բազկաթոռին և սկսեց դատողություններ անել ընդհանրապես բոլոր հինավուրց ստեղծագործությունների, նրանց արժեքավորության և այն մասին, թե որտեղ կարելի է դրանցից գտնել:

Իր խոսքի ընթացքում նա հանկարծ հապճեպ ժամացույցը հանեց գրպանից, մեքենայաբար նայեց դրան, արագ ոտքի ելավ և կանգնած ասաց.

«Ա՛խ, ափսոս... Ես ստիպված եմ ընդհատել մեր վերին աստիճանի հետաքրիր զրույցը, քանի որ պետք է շտապեմ տուն, որտեղ անկասկած ինձ արդեն սպասում են իմ ջահել ժամանակների սիրելի ընկերն ու իր հմայիչ տիկինը:

Նա գավառից այստեղ է հասել արտասահման գնալու ճանապարհին, իսկ ես նրան մինչև հիմա չեմ տեսել այն ժամանակներից հետո, երբ նույն գնդում էինք ծառայում և տարբեր նշանակումներ ստացանք. ինձ՝ պալատ, իսկ իրեն՝ քաղաքացիական պաշտոն»:

Հետո նա ավելացրեց.

«Իսկ ինչ վերաբերում է այն ցուցումներին, որոնք պետք է ձեզ տայի՝ գալով ձեզ մոտ, ապա հենց այսօր կուղարկեմ իմ համհարզին, և նա ձեզ ամեն ինչ կբացատրի, հավանաբար, ինձնից ոչ վատ»:

Այսքանն ասելուց հետո նա քաղաքավարության բոլոր ծեսերով հեռացավ:

Եվ իսկապես, նույն օրվա երեկոյան, ինչպես ազնվաբարո գերագանցությունը խոստացել էր, իմ տանը հայտնվեց նրա համհարզներից մեկը, որը դեռևս, ինչպես այնտեղ են ասում, «ջահել մարդ» էր, այսինքն՝ այնպիսի էակ, որը դեռ նոր է հասել իր պատասխանատու տարիքին: Նրա ուղարկած այդ համհարզը պատկանում էր երկրային եռուղեղ էակների վառ արտահայտված հատուկ տեսակին, որոնցից վերջին ժամանակներում ես շատ եմ հանդիպել քո սիրելիների մեջ. նմաններին շատ լավ կարելի է բնորոշել «մամայի բալիկ» բառերով:

Ահա այդ նախկին մամայի բալիկը երբ ներս մտավ և սկսեց խոսել ինձ հետ, սկզբում կատարելապես մեխանիկորեն ինձ հետ վերաբերվում էր այն նախադրյալներին համապատասխան, որոնք նրա ներկայության մեջ ամրապնդվել էին բռնի կերպով ներմուծված, այսպես կոչված, լավ վարվելակերպի կանոններով. իսկ մի փոքր անց, երբ նրա լինելիական մտածողությանը պարզ դարձավ, որ ես ոչ իր խավին եմ պատկանում, ոչ էլ ավելի բարձրին, այլ երևի այն էակներից եմ, որոնք, ըստ այդ հանրության էակների աննորմալ պատկերացման, ընդամենը մի քիչ են տարբերվում, այսպես կոչված, «վայրենիներից», նա անմիջապես տոնը փոխեց և, կրկին կատարելապես մեխանիկորեն, սկսեց ինձ հետ վերաբերվել այն նախադրյալներին համապատասխան, որոնք պահանջում են «հրամայել» ու «հանձնարարել» և նույնպես արդեն ամրապնդված էին այն ժամանակվա այդ հանրության այդ խավին պատկանող էակների ընդհանուր ներկայություններում. ուստիև սկսեց ինձ ցուցումներ տալ, թե ինչպես «ներս մտնեմ», «դուրս գամ», «շարժվեմ», և թե երբ ու ինչ խոսքեր ասեմ:

Բացի այն, որ ամբողջ երկու ժամ իր օրինակով նա ցույց էր տալիս, թե հատկապես ինչպես պետք է պահեմ ինձ, նաև հայտնեց, որ վաղը նորից կգա, և հրամայեց, որ ջանադիր պարապեմ, որպեսզի, ինչպես ինքն արտահայտվեց, հանկարծ ինչ-որ թյուրիմացություն չպատահի, այլապես կարող եմ հայտնվել այնտեղ, ուր նույնիսկ «Մակարն իր հորթերին չի տանում արածացնելու»:

Երբ, ինչպես իրենք են այնտեղ ասում, իմ այդ «Բարձրագույն ներկայացման» օրը ես գնացի այն վայրը, որտեղ գտնվում էր այդ մեծ հանրության գլխավորը, հենց երկաթգծի կայարանում ինձ դիմավորեց անձամբ «նորին գերագանցությունը», որն այդտեղ էր եկել հինգ թե վեց համհարգների ուղեկցությամբ, ապա հենց այդ պահից սկսած, հենց ինքը ձեռնամուխ եղավ (իհարկե, ինչպես ասում են, Բացարձակապես առանց իր «անձնական սուբյեկտիվ նախաձեռնության» մասնակցության, այլ հետևելով իր այն մեխանիկական սովորությանը, որ ձեռք էր բերել մշտապես նույն բանն անելով), որ իմ բոլոր առանձին ոգեկոչված մասերն ու իմ ընդհանուր ներկայության բոլոր ինքնադրսևորումները ենթարկեցնի իրեն՝ այդ ամենը վերցնելով, այսպես ասած, իր սեփական «Ես»-ի կառավարման տակ:

Այդ պահից սկսած, ես պետք է իմ բոլոր արտաքին դրսևորումները հարմարացնեի այնպես, որ, ինչպես կասեր մեր պատվելի մոլլա Նասրեդինը՝ «պարեի նրա նվագի տակ»:

Հենց որ մենք դուրս եկանք կայարանից և կառք նստեցինք, նա ամիջապես սկսեց ցույց տալ և հիշեցնել ինձ, թե ինչն ինչպես պետք է անեմ ու խոսեմ, և թե ինչ չանեմ ու չխոսեմ:

Իսկ երբ ավելի ուշ այն դահլիճում, որտեղ պետք է կայանար նշանավոր ներկայացումը, նա շարունակեց էլի ցույց տալ ու կառավարել իմ ներկայությունը... Չէ, այդ մասին ո՛չ Շեհերեզադեի հեքիաթով է հնարավոր պատմել, ո՛չ էլ միստր Կանինսոնի վրձնով նկարել:

Դահլիճում կատարվելիք իմ բոլոր շարժումները՝ ամեն մի քայլը, նույնիսկ աչքերս թարթելը, վաղօրոք նախատեսված էին և հիշեցվում էին ինձ այդ Բարձրաստիճան գեներալի կողմից:

Սակայն, չնայած այդ վարվելակարգի ամբողջ անհեթեթությանը, եթե հաշվի առնենք այն, որ էակի կատարելությունը կախված է նրա ներքին ապրումների որակից ու քանակից, ապա օբյեկտիվ արդարությունը պահանջում է արժանին մատուցել քո սիրելիներին, որ այդ օրն ինձ ստիպեցին, իհարկե, անգիտակցաբար, ապրել ու զգալ գուցե ավելի շատ բան, քան ես ապրել ու զգացել էի բոլոր դարերում նրանց միջավայրում իմ ներկա գտնվելու ամբողջ ընթացքում:

Ամեն դեպքում ես պետք է քեզ ասեմ, որ քո սիրելիների յուրահաստուկ և այդքան «բեկված» հոգեկառույցը դիտելու և ուսումնասիրելու նպատակով համաձայնություն տալով այդ «նշանավոր ներկայացմանը»՝ այդ օրն ապրած «մեծ հուզմունքից» հետո ես վերջապես ազատ շունչ քաշեցի միայն գնացքի վագոնում, երբ իմ տանջարարները, հատկապես այդ Բարձրաստիճան գեներալը, ինձ հանգիստ թողեցին:

Ամբողջ այդ օրվա ընթացքում ես այնքան էի զբաղված ինձնից պահանջված այդ անհաշիվ հիմար ձեռնածություններով, որոնք իմ ծերության պատճառով հոգնեցուցիչ էին ինձ համար, որ նույնիսկ չնկատեցի, թե ինչ տեսք ունեւր այդ դժբախտ իմպերատորը և ինչպես պահեց իրեն այդ կատակերգության ընթացքում:

Իսկ այժմ, զավակս, եթե դու ջանաս լավ յուրացնել հետագա իրադարձություններին վերաբերող տեղեկատվությունը, որոնք ինձ հետ կատարվեցին և անմիջական հետևանքն էին Նորին Մեծություն իմպերատորին իմ նշանավոր ներկայացման, ապա գուցե հնարավորություն կստանաս հստակ պատկերացնելու և լավ հասկանալու, թե ինչպես է եղել, որ այնտեղ՝ քո սիրելիների մոտ, հատկապես այդ Ժամանակաշրջանի Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում, նրանց «անհատական նշանակությունը» հատկապես վերջին հարյուրամյակում և հատկապես այդ թշվառների մեծամասնության համար սկսել է միշտ գնահատվել ու կազմավորվել դրսից եկած անցողիկ, այսպես կոչված, «քամիուռեցնելներ»⁵¹ հիման վրա, ինչպես տվյալ դեպքում տեղի ունեցավ ինձ հետ:

Էակաների արժանիքները նրանց թողած արտաքին անցողիկ տպավորությամբ գնահատելու այդ աստիճանաբար ձեռք բերված սովորությունը մյուս էակաների մոտ զարգացրել և շարունակել է զարգացնել նրանց այն ամրապնդված պատկերացումը, թե հենց դա է «*լինելիական անհատականություն*» դառնալը, և բոլորը սուբյեկտիվ կերպով սկսել են ձգտել դրան:

Ահա թե ինչու ներկայումս բոլոր նրանք իրենց ծագման պահից սկսած աստիճանաբար իրենց ընդհանուր ներկայություններից կորցնում են նույնիսկ «ճաշակն» ու «ձգտումը» դեպի, այսպես կոչված, «*օբյեկտիվ Լինելիություն*»:

Անձամբ իմ նկատմամբ ցուցաբերվող հիշյալ «քամիուռեցնելները» սկսեցին իրենց զգացնել տալ արդեն հաջորդ օրվա առավոտվանից՝ այն իմաստով, որ իմ անձին վերաբերող «*լինելիական պատկերացման*» բոլոր նախադրյալները, որոնք բոլոր ինձ ճանաչողների ներկայություններում արդեն

⁵¹ ռուս. տարբերակում՝ ветроураченные, անգլ. տարբերակում՝ vietroooretzel

վաղուց ամուր նստած էին, հանկարծ կտրուկ փոխվեցին սոսկ իմ նկատմամբ ունեցած՝ իրենց իշխանավորների այդ «օբյեկտիվորեն-վնասաբեր» պատկերացման պատճառով:

Իմ անձնական նշանակությունն ու իմ բոլոր հատկանիշների և արժանիքների մասին ունեցած նրանց պատկերացումը նույնպես փոխվեց իրենց անհատականությունների համար. հանկարծ բոլորի համար ես դարձա «պատկառելի», «իմաստուն», «արտակարգ» ու «հետաքրքիր» և այլն, և այլն, այսինքն՝ օժտված իրենց իսկ հորինած ամեն տեսակի աննորմալ *լինելիական* հատկանիշներով:

Հետևյալ նկարագրությունը շատ դիպուկ օրինակ կլինի, որը շատ լավ կբացատրի քեզ հենց նոր ասածներս:

Այն կրպակի տերը, որտեղից գործերով դուրս գալուց առաջ մթերքներ էի գնում խոհանոցի համար, ինչպես այնտեղ են երբեմն ասում, «ցարական ընդունելության» արժանանալուս հենց հաջորդ առավոտյան ցանկություն հայտնեց, որ իմ գնումներն անձամբ ինքը հասցնի տուն: Բոլոր այն ոստիկանները, որոնք հերթապահում էին այն շրջանի փողոցների անկյուններում, որտեղ ես ժամանակավորապես բնակվում էի, և արդեն լավ ճանաչում էին ինձ՝ որպես դրսից եկած բժշկի, սկսեցին ինձ տեսնելիս հեռվից հեռու պատվի առնել, ինչպես պատվի էին առնում իրենց այն բարձրաստիճան գեներալին հանդիպելիս:

Այդ նույն օրվա երեկոյան այն դեպարտամենտի գլխավորը, որտեղ առաջինն էի դիմել, անձամբ իմ տուն եկավ՝ այն չարաբաստիկ թույլտվությունը ձեռքին, որն ինձ լաբորատորիա ունենալու իրավունք էր տալիս, մի թույլտվություն, որի ստացման համար երեք ամիս տառապել էի՝ մաշելով ամեն տեսակի «պաշտոնական» և «ոչ պաշտոնական» հաստատությունների շեմերը: Իսկ հաջորդ օրը ես ստացա ևս չորս այդպիսի թույլտվություն, որոնք բարեհաճորեն ինձ էին տրամադրում ուրիշ նախարարությունների տարբեր դեպարտամենտներ, որոնց գործունեության ոլորտների մեջ նման թույլտվություն տալը չէր մտնում, բայց ես իմ անիմաստ վազվզոցի ընթացքում իրենց այդ թղթարարությունների պատճառով ստիպված էի եղել դիմել նաև նրանց:

Տնատերերը, խանութպանները, երեխաները և ինձ հետ նույն փողոցում ապրող ընդհանրապես բոլորն ինձ հետ այնքան սիրալիր դարձան, կարծես նրանցից յուրաքանչյուրին ես պատրաստվում էի մեծ «ամերիկյան ժառանգություն» թողնել և այլն, և այլն:

Ինձ հետ պատահած այդ «փուլ» դեպքից հետո ես, իմիջիայլոց, նաև իմացա, որ իրենց այդ դժբախտ ցարը նույնպես միշտ պատրաստվում է իրեն անծանոթ էակների հետ նման պաշտոնական հանդիպումներին:

Այդպիսի պաշտոնական հանդիպումներ, ինչպես ինձ հետ, նա շատ շատ էր ունենում՝ համարյա ամեն օր և նույնիսկ օրական մի քանի անգամ. մեկ՝ գորահանդես, մեկ՝ մի ուրիշ իմպերատորի էր «ընդունում», առավոտյան՝ «պատվիրակություն», կեսօրին՝ «ներկայացում», ինչպես, օրինակ, ինձ հետ, հետո՝ տարբեր, այսպես կոչված, «ժողովրդական ներկայացուցիչների» «ընդունելություն». և ամենքի հետ նա պետք է զրուցեր կամ նրանց համար նույնիսկ ամբողջական ճառ արտասաներ:

Քանի որ երկրային ամեն մի այդպիսի «ցարի» յուրաքանչյուր բառը կարող է ունենալ և հաճախ իրոք ունենում է լուրջ հետևանքներ ոչ միայն այն հանրության էակների համար, որի ցարն ինքն է, այլ նաև ուրիշ հանրությունների էակների համար, ապա նրա ամեն մի բառը պետք է համակողմանի կշռադատված լինի:

Ահա դա է պատճառը, որ այդ ցարերի կամ իմպերատորների շուրջ, որոնք այդպիսին են դառնում ժառանգական իրավունքով կամ ընտրությունների արդյունքներով, սովորական եռուղեղ էակների շարքերից ջոկված շատ մասնագետներ են լինում, որոնք յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է նրանց հուշեն, թե ինչպես վարվեն. և այդ հուշումներն ու ցուցումները պետք է տրվեն այնպես, որ կողմնակի անձինք չնկատեն, որ իրենց ցարը կամ իմպերատորը գործում է ոչ թե իր, այլ ուրիշների նախաձեռնությամբ:

Իսկ որպեզի այդ ամենը կարողանան հիշել, այդ ցարերն, իհարկե, նույնպես պետք է պատրաստվեն:

Իսկ թե ինչ է նշանակում պատրաստվել, դու արդեն հավանաբար կարող ես պատկերացնել հենց նոր իմ պատմածի հիման վրա: Ես ինքս դա հասկացա իմ ամբողջ էությանմբ, երբ պատրաստվում էի այդ նշանավոր ներկայացմանը:

Այդ մոլորակի վրա իմ ամբողջ գոյատևման ընթացքում նման պատրաստության կարիք, իմիջիայլոց, ընդամենը մեկ անգամ զգացվեց: Բայց թող ազատի Աստված այնպիսի դաժան

ճակատագրից, որ նման պատրաստությունների կարիք զգացվի ամեն օր և ամեն մի առանձին դեպքի համար:

Համենայն դեպս, անձամբ ես ոչ մի կարգավիճակով չէի ուզենա լինել նման երկրային իմպերատորի կամ ցարի տեղը, անգամ այդ բանը չէի ցանկանա ո՛չ իմ, ո՛չ էլ մերձավորիս ամենակատաղի թշնամուն:

Իմ այդ անմոռանալի «բարձրագույն ներկայացումից» հետո ես շատ շուտով Սանկտ-Պետերբուրգից ուղևորվեցի դեպի Եվրոպա աշխարհամասի ուրիշ մասեր և սկսեցի իմ գոյատևման հիմնական վայր դարձնել տաբեր երկրների տարբեր քաղաքներ, որոնք տեղաբաշխված էին ինչպես բուն Եվրոպա աշխարհամասում, այնպես էլ մյուս աշխարհամասերում: Հետագայում ես էլի շատ անգամ, բայց արդեն ուրիշ գործերով եղա այդ Ռուսաստան կոչվող հանրությունում, որտեղ ժամանակի այդ հատվածում տեղի ունեցավ իրենց փոխադարձ ոչնչացման և իրենց ձեռք բերած ամեն ինչն ավերելու մեծ գործընթացը, որը, ինչպես արդեն ասել եմ քեզ, «բոլշևիզմ» էր կոչվում:

Եթե հիշում ես, ես քեզ խոստացել էի պատմել այդ գերարտառոց գործընթացի իրական հիմնական պատճառների մասին:

Ահա և պետք է ասեմ, որ այդ ողբալի երևույթն այնտեղ ծագում է երկու ինքնուրույն գործոնների հետևանքով, որոնցից առաջինը Սովիտներեսիոս տիեզերական օրենքն է, իսկ երկրորդը՝ կրկին սովորական լինելիական գոյատևման այն աննորմալ պայմանները, որոնք հենց իրենք են հաստատել իրենց համար:

Որպեսզի ավելի լավ հասկանաս այդ երկու գործոնները, ես ուզում եմ դրանցից յուրաքանչյուրի համար առանձին պատմել և կսկսեմ Սովիտներեսիոս տիեզերական օրենքից:

Նախ և առաջ պետք է ասել, որ բոլոր եռուղեղ էակները, անկախ այն բանից, թե որ մոլորակում են ծնվում և ինչ արտաքին ծածկույթ են ստանում, միշտ այդ օրենքի դրսևորումներին սպասում են ուրախությամբ ու անհամբերությամբ, ինչպես քո սիրելիներն են սպասում իրենց, այսպես կոչված, տոներին, ինչպիսիք են՝ «Պասխան», «Բայրամը», «Զատիկը», «Ռամադանը», «Կայալանը» և այլն:

Միակ տարբերությունն այն է, որ քո սիրելիներն անհամբերությամբ են սպասում իրենց այդ տոներին այն պատճառով, որ այդ «եկեղեցական տոների» ընթացքում սովորական բան է դարձել «ուրախանալը» և ազատորեն «կերուխում անելը», այն դեպքում, երբ մյուս մոլորակների էակներն անհամբերությամբ են սպասում Սովիտներեսիոսի ազդեցությանն այն պատճառով, որ դրա շնորհիվ, *օրյեկտիվ բանականություն* ձեռք բերելու իմաստով, էվոլյուցիայի նկատմամբ իրենց ներքին պահանջը նրանց մոտ ինքնըստինքյան ուժեղանում է:

Ինչ վերաբերում է այդ տիեզերական օրենքի ազդեցությունը ծնող պատճառներին, ապա դրանք ամեն մի մոլորակի համար տարբեր են և միշտ բխում են, այսպես կոչված, «համատիեզերական *Ներդաշնակ Շարժումից*» և կախված են դրանից. բացի այդ, քո այդ Երկիր մոլորակի, այսպես կոչված, «*պատճառների ծանրության կենտրոն*» հաճախ դառնում է այդ համակարգի արևի «պարբերական լարվածությունը», որն էլ իր հերթին տեղի է ունենում հարևան «Բալեաուտո⁵²» կոչվող արևային համակարգի ազդեցության արդյունքում:

Սակայն այդ հարևան համակարգում այդպիսի *պատճառների ծանրության կենտրոն* առաջանում է այն պատճառով, որ նրա խտացումների շարքում կա Սոլնի⁵³ կոչվող մի մեծ գիսավոր, որը, համաձայն համատիեզերական *Հարմոնիկ Շարժման* որոշակի հայտնի համակցությունների, իր անկման ընթացքում երբեմն շատ է մոտենում Բալեաուտո արևին, որում այդ պատճառով «ուժեղ լարվածություն» է առաջանում, որպեսզի պահպանվի անկման ուղեծիրը: Այդ լարվածությունը փոխանցվում է հարևան համակարգերի արևներին, որոնց շարքում է նաև Արգ համակարգը. և երբ Արգը ձգտում է պահպանել իրեն հատուկ անկման ուղեծիրը, իր հերթին լարվածություն է առաջացնում իր սեփական համակարգի բոլոր խտացումներում, որոնցից մեկն էլ Երկիր մոլորակն է:

Մոլորակների լարվածությունն իր ազդեցությունն է թողնում նաև դրանց վրա ծնվող և բազմացող էակների վրա՝ չգիտակցված ցանկություններից և մտադրություններից զատ նրանց ներսում առաջացնելով, այսպես կոչված, «սրբազան Յաբոլիոնոզարի⁵⁴» զգացում, կամ, ինչպես կասեին քո

⁵² ռուս. տարբերակում՝ Балеауто, անգլ. տարբերակում՝ Baleaooto

⁵³ ռուս. տարբերակում՝ Солни, անգլ. տարբերակում՝ Solni

⁵⁴ ռուս. տարբերակում՝ Яболиунозар, անգլ. տարբերակում՝ iabolioonozor

սիրելիները, աստվածապաշտության զգացում, այսինքն՝ այն «*լինելիական զգացումը*», որը ժամանակ առ ժամանակ արտահայտվում է որպես ցանկություն ու ձգտում դեպի, ինչպես արդեն ասացի, *օրյեկտիվ բանականության* իմաստով ավելի արագ ինքնակատարելագործում:

Հետաքրքիր է, որ երբ այդ սրբազան զգացումը կամ որոշակի համատիեզերական իրականացմամբ առաջացած դրա նման մի ուրիշ զգացում ի հայտ է գալիս քո սիրելիների ընդհանուր ներկայություններում, նրանք դա ընկալում են որպես իրենց բազմաթիվ հիվանդություններից որևէ մեկի նախանշան. տվյալ դեպքում, օրինակ, նրանք դա կապում են «նյարդերի» հետ:

Հարկ է նշել, որ մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակներին հատուկ այդպիսի ազդակը նախկին ժամանակներում համարյա նորմալ ձևով էր ծագում և կենսագործվում երկրային էակներից մեծ մասի մոտ՝ հատկապես այն ժամանակներից սկսած, երբ Երկիր մոլորակի եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններից հեռացվեց Կունդաբուֆեր օրգանը, ընդհուպ մինչև այն ժամանակները, երբ տեղի ունեցավ երկրորդ տրանսապալյան խոտորումը:

Բայց հետո այնպես ստացվեց, որ գլխավոր չարիքների շարքում, որոնք բխում էին սովորական *լինելիական գոյատևման* իրենց իսկ հաստատած պայմաններից, հատկապես երբ բոլոր եռուղեղ էակների ներկայություններում սկսեց իշխել իմ կողմից արդեն հիշատակված իրենց «*ներքին չար աստվածը*», որն այնտեղ Ինքնասփոփանք անունն է կրում, Սոլիունենսիուսի ազդեցության հետևանքով, որը պետք է որ ավելի արագ ինքնակատարելագործվելու ցանկություն առաջացներ, նրանց ներսում սկսեց առաջանալ ինչ-որ բան, որն իրենք բնորոշում են «ազատության պահանջ» բառերով. և գլխավորապես հենց այդ ինչ-որ բանն է պատճառն այն ողբալի գործընթացների, որոնցից մեկն էլ այդ վերջին «բոլշևիզմն» է:

Ես մի փոքր ավելի ուշ քեզ կբացատրեմ, թե ինչպես են նրանք պատկերացնում իրենց այդ նշանավոր ազատությունը, իսկ այժմ ուզում եմ քեզ միայն ասել, որ Սոլիունենսիուսի ազդեցությամբ առաջացող զգացումն ուժեղացնում է մինչ այդ իրենց ներսում որոշ չափով առկա՝ իրենց սովորական արտաքին *լինելիական գոյատևման* պայմանների որևէ ընդհանրական փոփոխության պահանջմունքը:

Այդ չարաղետ մոլորակի հետ տեղի ունեցած երկրորդ տրանսապալյան խոտորումից, կամ, այլ կերպ ասած, «*Ատլանտիդայի կործանումից*» հետո քո սիրելիների ընդհանուր ներկայություններում Սոլիունենսիուս տիեզերական օրենքի ազդեցությունն ի կատար է ածվել ամենաքիչը քառասուն անգամ, և համարյա ամենասկզբից ամեն անգամ այդ ժամանակներից նրանց մեծ մասի մեջ ամրապնդված այդ տարօրինակ «ազատության պահանջի» պատճառով տեղի է ունեցել համարյա ճիշտ նույն բանը, ինչ վերջին տարիներին դերևս շարունակվում է քո այդ մոլորակի մակերևույթի այն հատվածում, որտեղ գոյատևող խմբերի համակցությանն իրենք «*Ռուսաստան են*» անվանում:

Այստեղ չափազանց կարևոր է նշել, որ ինքնին այդ ահավոր գործընթացների գոյությունը որևէ կերպ չէր դրսևորվի Երկիր մոլորակի եռուղեղ էակների մոտ, եթե նրանց արթմնի վիճակի համար սովորական դարձած գիտակցության գործունեությանը մասնակցեին նրանց ենթագիտակցության մեջ դեռևս անվնաս մնացած՝ խղճի *լինելիական ազդակ* ծնող նախադրյալները, որոնց վրա առաջինն ուշադրություն դարձրեց Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը՝ իր առաքելության կատարման ժամանակ հույսը դնելով դրանց վրա:

Միայն այն բանի հետևանքով, որ *լինելիական խղճի* սրբազան ազդակի առաջացման նախադրյալները չեն մասնակցում իրենց արթմնի գիտակցության գործունեությանը, Սոլիունենսիուս օրենքի և մյուս անդառնալի ֆիզիկական օրենքների ազդեցությունները նրանց համար ստանում են այդպիսի աննորմալ ու ողբալի ձևեր:

Թեև պատճառների մի ողջ համակցություն է երկրորդ գործոնի առաջացման աղբյուրը, այնուհանդերձ իմ կարծիքով այդ դեպքում հիմնական պատճառն այն է, որ նրանց փոխհարաբերություններում հաստատվել է նշանավոր «*կաստաների բաժանումը*», որն այնտեղ միշտ է գոյություն ունեցել՝ բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ նրանցում որոշակիորեն արմատացան Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների արգասիքները:

Տարբերությունը միայն այն է, որ նախկին դարերում կաստաների բաժանումն այնտեղ տեղի էր ունենում մի քանի առանձին անհատների գիտակցության ու մտադրության հիման վրա, մինչդեռ այժմ դա տեղի է ունենում կատարելապես մեխանիկորեն՝ առանց որևէ մեկի կամքի կամ գիտակցության մասնակցության:

Իսկ այժմ, զավակս, տեղին եմ համարում մի փոքր պատմել քեզ հենց այն մասին, թե ինչ ձևով և ինչ հերթականությամբ են քո այդ սիրելիները մեխանիկորեն տեսակավորվել ըստ իրենց նշանավոր կաստաների, և թե հետագայում ինչպես սկսեցին դասավորվել այդ կաստաների մեջ:

Երբ զանազան պատահական հանգամանքների բերումով, անկախ այն բանից, թե որտեղ են կենտրոնանում նրանց նշանակալից խմբերը կամ գոյատևում իրար հետ, նրանցից ոմանք (նրանք, որոնց մոտ առաջին հերթին՝ այս կամ այն պատճառով նախկինում լավ են բյուրեղացել կոնդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքները, և այդ բյուրեղացումների համակցությունը սովորաբար նրանց ընդհանուր ներկայություններում ծնում է, այսպես կոչված, «խորամանկության» ազդակներ, և երկրորդ՝ որոնց ձեռքում տվյալ ժամանակահատվածում այս կամ այն պատճառով շատ են լինում զանազան, այսպես կոչված, «սահաբեկման միջոցներ» կամ, ինչպես իրենք են անվանում, «զենքեր») արագորեն առանձնանում են մյուս էակներից և, դառնալով նրանց գլխավորները, կազմում են, այսպես կոչված, «իշխող դասի» նախատիպը:

Եվ այնուհետև, քանի որ Երկիր մոլորակի բոլոր եռուղեղ էակների մոտ, հատկապես վերջին ժամանակներում, խիղճ կոչվող *լինելիական ազդակը* մասնակցություն չի ունենում նրանց ընդհանուր գիտակցության գործունեության մեջ, ինչի հետևանքով նրանք նույնիսկ պահանջ չեն զգում գործադրելու ընդհանրապես որևէ գիտակցական *լինելիական ջանք*, ապա նրանք, որոնք առանձնանում և ներկայանում են որպես իշխող դաս, օգտվելով իրենց ձեռքին եղած սահաբեկման միջոցներից՝ տվյալ խմբավորման մնացած էակներին ստիպում են, որ իրենց փոխարեն գործադրեն նույնիսկ այն ջանքերը, որոնք ամեն մի էակ պարտավոր է անպայման անձամբ ի կատար ածել սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում:

Իսկ այդ խմբավորումների մնացած էակները, նույն պատճառներով նույնպես չկամենալով գործադրել այդ «*լինելիական ջանքերը*», առավել ևս ուրիշների փոխարեն, միաժամանակ վախենալով իշխանական դասի ձեռքում հայտնված հիշյալ սահաբեկման միջոցներից, սկսում են զանազան խորամանկություններ բանեցնել, որպեսզի, ինչպես այնտեղ են ասում, «*ուրիշի ուսերին դնեն*» այն *լինելիական ջանքերը*, որոնք պարտադիր կերպով պահանջվում են իշխող դասի էակների համար:

Եվ արդյունքում յուրաքանչյուր այդպիսի խմբավորման էակներ աստճանաբար տեսակավորվում ու տարբաժանվում են զանազան կատեգորիաների՝ կախված այն բանից, թե որքանով են ունակ խորամանկություն բանեցնել: Ահա այդպես, էակներին տարբեր կատեգորիաների միջև բաժանելուց էլ հետագա սերունդներում սկիզբ է առնում մեկը մյուսին ըստ իրենց նշանավոր կաստաների դասդասելն ու ստորադասելը:

Իրար ըստ կաստաների դասդասելուց նրանցից յուրաքանչյուրի ընդհանուր ներկայությունում ինքնըստինքյան ու անխուսափելիորեն բոլոր մնացած կաստաներին պատկանող էակների նկատմամբ բյուրեղանում են «ատելություն» կոչվող *լինելիական նախադրյալներ*, ինչպիսիք երբեք չեն եղել մեր Մեծ Տիեզերքի ոչ մի ուրիշ էակների մոտ, և որոնք իրենց հերթին յուրաքանչյուրի ընդհանուր ներկայության մեջ աստիճանաբար ծնում են եռուղեղ էակի համար «ամոթալի» այնպիսի ազդակներ, որոնք իրենք անվանում են «նախանձ», «խանդ», «ցանկասիրություն» և ուրիշ բազմաթիվ նման ազդակներ:

Այսպիսով, զավակս, փոխադարձ ոչնչացման և իրենց ամբողջ ձեռքբերումների լիակատար ոչնչացման այդ սհավոր գործընթացները մասամբ տեղի են ունենում այն պատճառով, որ այն ժամանակահատվածներում, երբ նրանց ընդհանուր ներկայություններում, արդեն նշածս ազատության պահանջից բացի, զգալի է դառնում Սոլիունենսիոս տիեզերական օրենքի ազդեցությունը, ապա նրանց մոտ մի կողմից՝ ինքնաբերաբար թուլանում է արդեն իրենց ընդհանուր ներկայությանը բնորոշ դարձած՝ *իշխանավորների* առջև «խեղճանալու» մշտական ազդակի ուժի ազդեցությունը, և մյուս կողմից՝ ուժեղանում է հիշյալ տարօրինակ *լինելիական նախադրյալների* ուժի ազդեցությունը, որոնք տվյալ դեպքում «ատելություն» են առաջացնում մյուս դասերին պատկանող էակների նկատմամբ:

Ահա թե ինչու ես ասացի, որ նրանց այդ կաստաների բաժանվելը, ինչն այդպիսի «*չտեսնված տարօրինակ լինելիական նախադրյալների*» արդյունքների համակցություն է ստեղծում, որոնք մշտապես շատանում են իրենց գործունեությամբ և կրկին բխում են, ինչպես հավանաբար ամբողջ ասվածից գլխի ես ընկել, իրենց աննորմալ սովորական *լինելիական գոյատևման* պայմաններից, գլխավորապես հենց այն երկրորդ գործոնն է, որը հանգեցնում է այդ սհավոր գործընթացներին:

Սովորաբար այդ ահավոր գործընթացները սկիզբ են առնում և ընթանում հետևյալ հաջորդականությամբ:

Միշտ սկսվում է նրանից, որ այս կամ այն խմբավորմանը պատկանող մի քանի էակներ (հատկապես նրանք, որոնց ներսում նախկինում այս կամ այն պատճառով մնացածներից ավելի ուժեղ են բյուրեղացվել այն նախադրյալները, որոնք մյուս կաստաների էակների նկատմամբ, հատկապես «*իշխող դասի*» կաստայի, ծնում են հիշյալ տարօրինակ ազդակները), Սոլիունենսիոսի ազդեցությամբ տեսնելով ու զգալով ավելին, քան մյուսները, սկսում են, ինչպես այնտեղ են ասում, «կոկորդ պատռել», և հենց այդ «կոկորդ պատռողներն» են շրջապատում եղածների նկատմամբ դառնում այն էակները, որոնց ներկայումս այնտեղ կոչում են «առաջնորդներ»:

Այնուհետև, մի կողմից՝ այդ գրգռման հետևանքով, և մյուս կողմից՝ նույն այդ Սոլիունենսիոս տիեզերական օրենքի ազդեցության հետևանքով, որը միշտ նրանց բոլորի ներկայությունների հետ համակցվում է աննորմալ կերպով, մյուսները նույնպես սկսում են կոկորդ պատռել: Երբ մյուս սովորական էակներից առանձնացած այդ «ճղճղանները» սկսում են շատ ազդել տվյալ հանրության որոշ իշխանավոր էակների, այսպես կոչված, «*ձախ կեսի քնքշացած նյարդերի վրա*», և վերջիններս հրամայում են նրանց, որոնց պարտականությունն է դա, առանձնապես շատ կոկորդ պատռող ճղճղանների «պորտը տեղը դնել», ապա սկսվում են անկարգություններ, որոնք մեծանալով հասնում են իրենց գագաթնակետին, բայց, ի դժբախտություն իրենց, վերջին հաշվով ոչնչի չեն հասնում:

Եթե այդ գործընթացները թեկուզ մի փոքր բարելավելին հետագա սերունդների էակների գոյատևումը, ապա հնարավոր է, որ խիստ անկողմնակալ դիտողի տեսանկյունից նրանք այդքան ահավոր չթվային. սակայն, ի դժբախտություն մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների, աղետալին հենց այն է, որ հենց որ այդ տիեզերական օրինաչափ երևույթի «օրինյալ ազդեցությունը» դադարում է, և այդ ահավոր գործընթացները հասնում են իրենց ավարտին, այնտեղ կրկին սկսվում է նույն պատմությունը, և նրանց սովորական *լինելիական գոյատևումը* նախկինից ավելի «դառն» է դառնում, և դրան զուգընթաց վատանում է նաև իրենց, այսպես կոչված, «*գոյատևման նպատակի և իմաստի առողջ գիտակցումը*»:

Այս վերջին վատացումն, իմ կարծիքով, տեղի է ունենում գլխավորապես այն պատճառով, որ այդ գործընթացներից հետո նախկին իշխանական դասի ղեկավար էակները սովորաբար փոխարինվում են ուրիշ տարբեր կաստաների պատկանող էակներով, որոնց ներկայացուցիչները, ո՛չ ներկայում, ո՛չ էլ անցյալում, գիտակացաբար թե անգիտակցաբար, ոչ մի ընդհանուր բան չունեն այն *լինելիական դրսևորման* հետ, որն իր մեջ պարունակում է շրջապատի այն էակների *լինելիական գոյատևման* արտաքին, երբեմն էլ նաև ներքին գործընթացները կառավարելու ունակություն, որոնք թեև «իրենց նման են», սակայն բանականության առումով դեռևս չեն հասել իրենց աստիճանին:

Արդարությունը պահանջում է խոստովանել, որ թեև այնտեղի հին իշխանական դասի եռուղեղ էակների ընդհանուր ներկայությունների ենթագիտակցություններում առկա՝ ճշմարիտ *լինելիական խիղճ* արթնացնող նախադրյալները նույնպես չեն մասնակցել իրենց, այսպես կոչված, *արթմնի վիճակի գիտակցության* գործունեությանը, այնուհանդերձ ամեն դեպքում նրանք սովորաբար կառավարման հմտություն են ունենում, որը ժառանգաբար է ձեռք բերվել և սերնդեսերունդ անցնելով՝ լավացել:

Իսկ հենց նոր իշխանության եկած էակների ներկայություններում ոչ միայն բացակայում է ճշմարիտ *լինելիական խիղճը*, որը բացակայել է նաև նախկին իշխանական դասի էակների մոտ, այլև, դրանից բացի, նորերի մոտ հավելյալ կերպով սկսում են բուռն դրսևորվել և արտակարգ ահավոր հետևանքների հանգեցնել այն «հիասքանչ բաները», որոնք երկրային եռուղեղ էակների՝ հատկապես վերջին ժամանակների ներկայացուցիչների մոտ բյուրեղանում են կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքով, ինչպիսիք են «սնապարծությունը», «հպարտությունը», «ինքնահավանությունը», «եսասիրությունը» և այլն, որոնք նախկինում երբեք բավարար չափով հագուրդ չեն ստացել և սկսում են գործել առանձնահատուկ թարմությամբ:

Հանկարծակի իշխանավոր դարձած և իրենց ներսում ինքնաբերական կառավարման ունակության բացարձակապես ոչ մի ժառանգական նախադրյալ չունեցող այդ երկրային էակների վերաբերյալ կարելի է կիրառել մեր սիրելի Ուսուցչի մի ասույթը, որը նա արտահայտում է հետևյալ բառերով.

«Ես դեռ երբեք չեմ հանդիպել այնպիսի ապուշի, որն, իր հին ոտնամանները քարշ տալուն սովորած լինելով, հարմարավետություն զգա մոդայիկ նոր ոտնամաններ հագնելուց»:

Եվ իրոք, զավակս, ամեն անգամ, երբ դադարում է Սոլիունենսիուսի ազդեցությունը Երկիր մոլորակի վրա, և քո սիրելիները սկսում են իրենց արդեն ինչ-որ չափով կայունացած «հարաբերական նորմալ» գոյատևումը, *«նորայթուխ իշխանավոր»* էակները սովորաբար այնպիսի համարներ են գործի դնում, որ դրանց հետևանքով, այսպես կոչված «կակղամորթների», «խխունջների», «ոջիլների», «խլրդածորիդների» և ամենայն լավ բան ոչնչացնող մյուս մակաբույծների ծնելիությունն ամեն անգամվա հետ ավելի ու ավելի է մեծանում:

Քանի որ սկսեցի քեզ պատմել բոլշևիզմի մասին, ապա որպեսզի ևս մեկ օրինակ բերեմ քո սիրելիների *լինելիական գոյատևման* մի առանձնահատկության վերաբերյալ, որն արդեն միանգամայն հատուկ է դարձել իրենց, դրա հետ կապված՝ քեզ կներկայացնեմ իրենց միամիտ փաստարկներից մեկը, որը զուրկ չէ հումորից:

Նրանց այդ միամտությունը, որն ակներևաբար առաջացել է չափից դուրս անպետք տրամաբանական-համադրական *լինելիական մտածողության* հետևանքով, այն է, որ թեև այնտեղի առանց բացառության բոլոր իրադարձություններն իրենց փոխկապակցվածության իմաստով վերջին երկու դարերի ընթացքում արդեն ինքնըստինքյան են տեղի ունենում՝ առանց ժամանակակից էակներից որևէ մեկի գիտակցության անմիջական մասնակցության, այնուհանդերձ նրանք մշտապես վստահորեն և նույնիսկ նախանձախնդրորեն իրենց նմաններից որևէ մեկին են վերագրում այդ իրադարձություններից բխող ինչպես լավ, այնպես էլ վատ արդյունքները:

Իսկ նրանց ոգեկոչված մասերի համակցություններում ամրապնդված այդ աննորմալությունը գոյացել է հետևյալ պատճառներով:

Նախ՝ նրանց ընդհանուր ներկայություններից աստիճանաբար լրիվ չքացել են բոլոր այն *լինելիական* նախադրյալները, որոնց համակցությունն ընդհանրապես ունակ է էակների ներկայություններում ծնելու, այսպես կոչված, «ապագան կանխագգալու» հատկություն, ինչի հետևանքով նրանք իսպառ զրկված են գոնե ինչ-որ չափով վերահաս դեպքերը կանխատեսելու հնարավորությունից. երկրորդ՝ ունենալով նեղ, այսպես կոչված, «մտահորիզոն» և «կարճ հիշողություն»՝ նրանք ոչ միայն ոչինչ չգիտեն իրենց մոլորակում հինավուրց ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունների մասին, այլև չեն հիշում նույնիսկ այն, ինչ տեղի է ունեցել ոչ շատ վաղ անցյալում՝ անգամ երեկ. և երրորդ՝ նրանք տեղյակ չեն այն տիեզերական օրենքներից, գլխավորապես որոնց հետևանքով այնտեղ տեղի են ունենում այդ ցավալի իրադարձությունները: Այդ ամենի պատճառով ներկայիս քո այդ սիրելիներն իրենց ողջ ներկայությամբ համոզված են, թե այն ահավոր գործընթացը, որն իրենք բոլշևիզմ են անվանում, առաջին անգամ է ի հայտ եկել իրենց մոլորակի վրա, և որ իրենցից առաջ երբեք չի եղել այնպիսի մի բան, որ նման լինի իրենց այդ «սիրելի» քաղաքակրթությանը. և նրանք նույնիսկ համոզված են, որ դա տեղի է ունեցել՝ շնորհիվ իրենց մոլորակի իրենց նման էակների աստիճանաբար զարգացող բանականության էվոլյուցիայի:

Անցյալում բազմաթիվ անգամ իրենց մոլորակում ընթացած նմանատիպ գործընթացների առնչությամբ ունեցած նրանց հակադիր փաստարկը շատ լավ օրինակ կարող է ծառայել՝ ցուցադրելու համար նրանց ունեցած *լինելիական մտածողության* չտեսնված ապուշությունն ու բթությունը:

Համաձայն ցանկացած եռուղեղ էակի առողջ բանականության՝ նման գործընթացներ պետք է որ տեղի ունենային, և այն ժամանակներից սկսած, երբ հետաքրքրվեցի քո այդ սիրելիների արտառոց հոգեկառույցով և սկսեցի զբաղվել այն դիտելով, ես ինքս, ինչպես արդեն ասել եմ, ավելի քան քառասուն անգամ վկա եմ եղել ճիշտ այդպիսի գործընթացների, որոնք ես կանվանեի *«աչքի առաջ հայտնված ամեն ինչի ոչնչացման գործընթաց»*:

Հետաքրքիր է նշել, որ այդ ահագոյ գործընթացների համարյա կեսը տեղի է ունեցել ոչ այնքան հեռու այն վայրից, որտեղ հիմա կենտրոնացած է իրենց, ինչպես իրենք են ասում, «կուլտուրական գոյատևումը». դրանք տեղի են ունեցել իրենց մոլորակի ցամաքային մասի այն հատվածում, որին իրենք Եգիպտոս են կոչում:

Եգիպտոս կոչվող այդ վայրում այդ ահագոյ գործընթացները այդքան հաճախ էին տեղի ունենում այն բանի հետևանքով, որ քո այդ մոլորակի մակերևույթի այդ հատվածը երկարատև ժամանակաշրջանների ընթացքում համատիեզերական *Ներդաշնակ Շարժման* նկատմամբ գտնվել է, այսպես կոչված, *«ճառագումների ծանրության կենտրոնի»* դիրքում, ուստիև այդ վայրում բազմացող եռուղեղ էակների ներկայությունների վրա հաճախ է ազդել համատիեզերական Սոլիունենսիուս օրենքը՝ նրանց ներսում ծնելով նման աննորմալություն:

Իրական տվյալների զուգահեռ համեմատությունը, որոնք վերաբերում են նույն այդ Եգիպտոսում տեղի ունեցած գործընթացներին և իրենց *լինելիական պատկերացումների* և ներկայիս նշանավոր «մշակույթի» կրող համարյա ամեն մի պատասխանատու էակի ընկալումների մեջ ամրապնդված այն տվյալներին, որոնք նրանց հայտնի են դարձել՝ շնորհիվ, այսպես կոչված, արդեն «կատարյալ դարձած բանականության»՝ կարող է ցայտուն օրինակ ծառայել այն բանի, թե ինչպիսի գլխավոր տվյալներից է կազմված լինում նրանց «տրամաբանական մտածողությունն» իրենց պատասխանատու գոյատևման շրջանում, ինչպես նաև ինձ հնարավորություն է ընձեռում մեկ անգամ ևս նշելու և ընդգծելու նրանց այն սովորույթի՝ օբյեկտիվ իմաստով ամբողջ վնասակարությունը, որը վերջնականապես ամրապնդվել է նրանց սովորական գոյատևման գործընթացում և իրենց կողմից անվանվել մատաղ սերնդի «դաստիարակություն» և «կրթություն» հավակնոտ բառերով:

Բանն այն է, որ տարատեսակ խաբուսիկ երևակայական տեղեկությունների շարքում, որոնց համակցության արդյունքում ձևավորվում է միայն իրենց հատուկ տարօրինակ բանականությունը, կարելի է դասել նաև հենց այդ Եգիպտոսի պատմությունը:

Այդ երևակայական պատմությունը, որը նրանց մոտ հորինվել է ինչ-որ մի *տհասնամուսական անհատականության* թեկնածուի կողմից, նույնիսկ պարտադիր ուսուցման առարկա է դարձել բոլոր ուսումնական հաստատություններում, որոնցում այդ պատմությունը համանման «տխմարությունների» հետ հիմնավորապես խցկվում է ապագա դժբախտ էակների հոգևոր ընկալումների և դրսևորումների գործունեության համար նախատեսված որոշակի խտացումների մեջ, որոնք հենց իրենք «ուղեղ» են անվանում. հաստատությունն ավարտելուց հետո ստիպողաբար անգիր արված այդ *ֆանտաստիկ տեղեկությունները* նրանց համար որպես նյութ են ծառայում, որպեսզի կազմեն իրենց «*տրամաբանական համադրական մտածողության*» լինելիական նմանագագությունները:

Ահա թե ինչու, զավակս, ներկայումս այնտեղ՝ այդ չարաբաստիկ մոլորակում, պատասխանատու տարիքի հասած յուրաքանչյուր էակ, փոխանակ նորմալ եռուղեղ էակների նման ճշմարիտ գիտելիքներ ունենա այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք անցյալում տեղի են ունեցել իրենց մոլորակի վրա, դրանց հասու է դառնում այնպես, ինչպես նշված դեպքում. նա իր *լինելիական բանականությամբ* ծամծմում և «անգիտակցաբար» իր ողջ էությանմբ իմանում է նույն այդ Եգիպտոսի մասին:

Չենք կարող ժխտել, որ այդ տարօրինակ մոլորակի ամեն մի՝ իրենց կարծիքով արդեն պատասխանատու դարձած եռուղեղ էակ դաստիարակության և կրթության իրենց համակարգի ջանքերով արդեն գիտի այն էակների ամբողջ պատմությունը, որոնք ժամանակին գոյատևել են այդ Եգիպտոսում:

Սակայն, թե ինչպես է տեղեկություններ ընկալելու այդ եղանակի միջոցով, որին իրենք «անգիր անել» են ասում, էակն իմանում այդ ամենը, և թե ինչպիսի *լինելիական պատկերացումների* համակցություն է «գոյանում արդյունքում» նրա երեք ոգեկոչված մասերում, դու հստակ կարող ես պատկերացնել ու հասկանալ հետևյալ օրինակից:

Համարյա նրանցից ամեն ոք «գիտի», որ հին եգիպտացիներն ունեցել են քսանչորս արքայատոհմեր: Բայց եթե նրանցից որևէ մեկին հարցնես՝ «Ինչու են նրանք այդքան շատ արքայատոհմեր ունեցել», ապա կպարզվի, որ նա նույնիսկ երբեք այդ մասին չի մտածել:

Բացի այդ, եթե շարունակես պնդել, որ պատասխանի այդ հարցին, ապա այդ նույն էակը, որը մինչ այդ գիտեր և իր ողջ էությանմբ վստահ էր, թե եգիպտացիներն ունեցել են 24 արքայատոհմեր, լավագույն դեպքում (իհարկե, եթե նրան օգնություն ցույց տրվի, որպեսզի կարողանա բարձրաձայն արտահայտել իր մտածողության մեջ ընթացող նմանագագությունները) իր տրամաբանական մտածողությունը կդրսևորի մոտավորապես այսպես.

«Եգիպտացիներն ունեցել են 24 դինաստիաներ... Այսպես ուրեմն... Դա ցույց է տալիս, որ եգիպտացիներն ունեցել են պետական կառավարման միապետական համակարգ, և թագավորի իշխանությունը հորից փոխանցվել է իր ժառանգին. քանի որ, ըստ ավանդույթի, նույն ցեղին պատկանող թագավորները կրում են նույն ավանդական ցեղական անունը, և այդ ցեղանունը կրող թագավորները մեկ արքայատոհմ են կազմել, ապա արքայատոհմերի քանակը որոշվել է թագավորների ավանդական ցեղանունների քանակով...»: Ահա այսպես հասկանալի ու հստակ, ինչպես պատվելի մոլլա Նասրեդինի «լենուլմփոշ շավարի կարկատանը»:

Իսկ եթե ներկայիս «մշակույթին» պատկանող էակներից մեկը համակվի «չարչարվելու» ցանկությամբ, որպեսզի իր բանականության համար ավելի լավ պարզի, թե ինչու են այդ հին եզրիպատացիների թագավորների ցեղական անուններն այդքան հաճախակի փոխվել, ապա կրկին ամենալավագույն դեպքում նրա լինելիական մտածողությունը նմանազգացություններ կդրսևորի մոտավորապես հետևյալ հերթականությամբ: Նա կասի.

«Ակներևաբար հինավուրց ժամանակների Եզրիպտոսում հաճախ է պատահել, որ թագավորները, կամ, ինչպես այնտեղ էին ասում, փարավոնները ձանձրացել են թագավորելուց և հրաժարվել իշխանությունից, իսկ այդ հրաժարումը հավանաբար տեղի է ունեցել հետևյալ կերպ և մոտավորապես հետևյալ հանգամանքներում:

Ենթադրենք Ջոն Ջոֆրի անունով փարավոններից մեկը խաղաղ ու բարեկեցիկ թագավորելիս է եղել եզրիպտացիների վրա:

Բայց մի անգամ այդ Ջոն Ջոֆրի անունով փարավոնը զգացել է, որ ինքը մեծապես հոգնել է թագավորելուց և մի անբուն գիշեր, երկար մտորելով իր թագավորական վիճակի շուրջ, նախ և առաջ փաստել և իր ողջ էությամբ հասկացել է, որ, ուզած-չուզած, թագավորելուց մարդ հոգնում է, և, ընդհանրապես ասած, թագավորելը շատ հոգնեցուցիչ զբաղմունք է, էլ չասած, որ օգտակար ու անվտանգ չէ անձնական երջանկության տեսակետից:

Այս բաները գիտակցելը մեծ ազդեցություն ունեցավ Ջոն Ջոֆրի փարավոնի վրա, որից հետո նա, օգտվելով իր անցած կյանքի փորձից, որոշեց փորձ անել պարզելու, թե ինչպես «խելքահան անի» մեկ ուրիշին, որ այդ մեկ ուրիշն իրեն ազատի նշված անցանկալի ձանձրությունից:

Այդ նպատակով նա հավանաբար իր մոտ է հրավիրել դեռևս սովորական մի որևէ Ջոն Ջոֆրիի և հարգալից տոնով նրան ասել մոտավորապես հետևյալը.

«Ո՛վ պատվարժան ու բարեգութ Ջոն Ջոֆրի, անկեղծորեն խոստովանում եմ քեզ՝ որպես միակ ընկերոջս և իմ վստահությանն արժանացած հպատակիս, որ այս թագավորությունը որ ես կառավարում եմ, ինձ համար շատ ձանձրալի է դարձել՝ հավանաբար այն պատճառով, որ ես արդեն ծայրահեղ հոգնել եմ:

Ինչ վերաբերում է իմ սիրելի որդուն ու թագաժառանգին, որին կարող էի փոխանցել իմ գահը, ապա նա, մեր մեջ ասած, թեև արտաքինից ուժեղ ու առողջ է երևում, իրականում ո՛չ առողջ է, ո՛չ էլ ուժեղ:

Որպես մի հայր, որը սիրով է լցված իր զավակների նկատմամբ՝ դու անշուշտ կհասկանաս, եթե ասեմ, որ շատ եմ սիրում իմ տղային ու թագաժառանգին և չէի ուզենա, որ նա թագավորի և հոգնի ինձ նման. ուստիև որոշեցի առաջարկել քեզ՝ իմ հավատարիմ հպատակին ու լավագույն ընկերոջը, որ ինձ ու իմ տղային ազատես թագավորելու գործից և այդ բարձր պարտականությունը քեզ վրա վերցնես»:

Իսկ քանի որ այդ դեռևս հասարակ Ջոն Ջոֆրին, ինչպես այնտեղ են ասում, նախ «բարի ջահել էր» և երկրորդ՝ մի «փառասեր սրիկա», ապա արցունքն աչքերին թոթվել է ուսերը և ասել՝ ջհանդամը, թե չեմ կորչի, որից հետո տվել է իր համաձայնությունը և հաջորդ օրվանից սկսել թագավորել:

Քանի որ այդ երկրորդ Ջոն Ջոֆրին իրականում ուրիշ ազգանուն է ունեցել, ապա հենց այդ հաջորդ օրվանից էլ եզրիպտական արքայատոհմերի թիվն ավելացել է ևս մեկով:

Եվ ահա, քանի որ Եզրիպտոսի շատ փարավոններ հաճախ ձանձրանում էին և իրենց զավակների նկատմամբ սիրուց դրդված նույն բանը չէին ցանկանում նրանց, ապա իրենց գահից հրաժարվում էին հոգուտ ուրիշների, այդ պատճառով էլ այդքան շատ արքայատոհմեր են կուտակվել Եզրիպտոսում»:

Այնինչ ճշմարտությունն այն է, որ իրականում արքայատոհմերը Եզրիպտոսում այնքան էլ հեշտ չեն փոխվել, իսկ երկու արքայատոհմերի արանքում այնպիսի ահեղ ցնցումներ էին տեղի ունեցել, որոնց հետ համեմատած՝ այդ ժամանակակից բոլշևիզմն «ընդամենը մանկական խաղ է»:

Ժամանակակից բոլշևիզմի մոլեգնության գագաթնակետին ինձ մի քանի անգամ վիճակվել է վկա լինել մի քանիսի անկեղծ տարակուսանքին, ովքեր ինչ-ինչ պատճառներով, որոնք, իհարկե, իրենցից կախված չէին, հեռու էին կանգնած այդ գործընթացից և հետևաբար կարող էին կողքից կիսագիտակցաբար դիտել և իրենց ամբողջ ներկայությամբ անկեղծորեն վրդովվել իրենց նման առանձին էակների գործողություններից, որոնք այդ ահասարսուռ գործընթացի ակտիվ գործող անձերից էին, այսինքն՝ այն անհատների գործողություններից, որոնց տվյալ դեպքում նրանք անվանել են և մինչև այժմ էլ անվանում են «բոլշևիկներ»:

Ի դեպ, այստեղ, իմ կարծիքով, վնաս չի լինի, եթե ասեմ քեզ, որ նրանց այդ *լինելիական ապրումը*, որը հրաշալիորեն բնութագրվում է «անտեղի վրդովվել» բառերով, հավանաբար նույնպես քեզ դուր եկած այդ թշվառ եռուղեղ էակների հոգեկառույցի դժբախտ առանձնահատկություններից մեկն է, հատկապես ժամանակակիցների:

Հենց միայն այդ հոգեկան աննորմալության պատճառով նրանց ընդհանուր ներկայություններում աստիճանաբար էլ ավելի են խախտվում ինչպես իրենց առանց այն էլ անհավասարակշիռ մոլորակային մարմնի շատ գործառույթներ, այնպես էլ իրենց «կեսջան» մարմնի գործառույթները, եթե, իհարկե, նրանց այդ երկրորդ *լինելիական մարմինն* արդեն հանդերձավորվել և ձեռք է բերել պահանջված, այսպես կոչված, «անհատականությունը»:

Իսկ նրանց հոգեկառույցի այդ աննորմալությունը՝ «անտեղի վրդովվելը», կամ, ինչպես իրենք են ասում, «անտեղի հուզվելը», նույնպես բխում է այն բանից, որ նրանց ընդհանուր ներկայություններից վաղուց արդեն չքացել են եռուղեղ էակներին հատուկ *«լինելիական մտահորիզոն»* ու *«իրականության բնագդական գիտակցումը ճշմարիտ լույսի տակ»*:

Նրանց հոգեկառույցում այդ երկու առանձնահատկությունների բացակայության պատճառով նրանք ի վիճակի չեն եղել նույնիսկ կասկածելու, որ իրենց նման անհատները ոչ մի կերպ չէին կարող այնտեղի այդ ահասարսուռ գործընթացների պատճառ դառնալ, և որ այդ չարաղետ գործընթացներն այնտեղ տեղի են ունենում երկու անխուսափելի ու մեծ պատճառներով. դրանցից առաջինը հենց Սոլիունենսիոս տիեզերական օրենքն է, որը բոլորովին կախված չէ իրենցից, իսկ երկրորդ պատճառը, որը մասնակիորեն կախված է իրենցից, այն է, որ *լինելիական գոյատևման* իրենց իսկ հաստատած աննորմալ պայմանների բոլոր արդյունքների համակցության պատճառով, որոնք դեռևս շարունակում են բյուրեղանալ նրանց ընդհանուր ներկայություններում, «խիդճ» կոչվող սրբազան ազդակի առաջացման համար անհրաժեշտ նախադրյալները նրանցից ոչ ոքի արթմնի վիճակի գիտակցության մեջ ընդհանրապես մասնակցություն չեն ունենում, ինչի հետևանքով էլ առաջին պատճառի ազդեցությունը հենց այդպիսի ահավոր ձևով է արտահայտվում:

Ինչպես արդեն ասել եմ, նրանք չէին կարող թեկուզ մոտավոր կերպով պատկերացնել ու հասկանալ, որ առանձին անհատները ոչ մի կերպ չէին կարող այդ համամոլորակային ահավոր գործընթացների պատճառ հանդիսանալ և միայն պատահաբար են հայտնվում այն պաշտոններում, որոնք զբաղացնելով՝ փոխադարձ գոյակցության արդեն հաստատված պայմանների պատճառով ստիպված են լինում այս կամ այն դերը կատարել, որոնց կատարման արդյունքները, ըստ իրենցից բոլորովին անկախ օրինաչափության, այս կամ այն ձևն են ստանում:

Վերջին գործընթացի, այսինքն՝ ռուսական բոլշևիզմի, թեժ պահին ուրիշ հանրությունների ժամանակակից էակներն անկեղծորեն շատ էին վրդովվում, երբ այն էակներն, ովքեր պատահաբար, այսպես կոչված, «ակտիվացել էին» այդ ողբալի գործընթացում, հրամայում էին, ինչպես ասում են, «գնդակահարել» ուն թումի, Դիկի կամ Հարրիի:

Իմ հետագա բացատրությունները պարզաբանելու համար, որոնք վերաբերում են քո սիրելիների այդ ահասարսուռ գործընթացներին, ես այնուհետև քեզ պետք է պատմեմ այն մասին, որ այդ վերջին գործընթացը տեղի ունեցավ և էլի շարունակում է ընթանալ այդ չարաղետ մոլորակի մակերևույթի լայնարձակ տարածքներում, և որ քո սիրելիների թվաքանակը վերջին ժամանակներս շատ է մեծացել: Ուստի, եթե մենք այդ վերջին գործընթացի ժամանակ ոչնչացված ժամանակակից եռուղեղ էակների քանակը համեմատենք նախորդ գործընթացում եղածի հետ, ապա այդ վերջին գործընթացն իսկապես «մանկական խաղ» կթվա:

Որպեսզի դու դա ավելի լավ հասկանաս և համեմատես նախորդ գործընթացները ներկայիս բոլշևիզմի հետ, ես հիմա մի երկու գնահատական կներկայացնեմ անցյալի պատմությունից, ասենք, հենց իմ հիշատակած Եգիպտոսից:

Երբ եգիպտական փարավոնների կամ թագավորների երկու արքայատոհմերի միջև ընկած ժամանակահատվածում մոլեգնեց այնպիսի գործընթաց, ինչպիսին ժամանակակից բոլշևիզմն է, «հեղափոխականների» գլխավոր կոմիտեն այդ երկրի բնակչությանը ամեն ինչից զատ նաև հայտարարեց, որ շուտով կսկսվեն բոլոր մեծ ու փոքր բնակավայրերի՝ ինչպես իրենք են ասում, քաղաքների ու գյուղերի, կառավարիչների «ընտրությունները», և որ այդ ընտրությունները տեղի կունենան հետևյալ սկզբունքներով:

Քաղաքների ու գյուղերի կառավարիչներ կընտրվեն նրանք, ովքեր իրենց «սրբազան» անոթներում մյուսներից ավելի շատ «կրոն» կդնեն. այն ժամանակ Եգիպտոսում այդ բառը զոհաբերություն էր նշանակում:

Բանն այն է, որ, համաձայն այդ երկրի էակների այսպես կոչված «կրոնի», հատուկ վայրերում տեղի ունեցող «կրոնական ծիսակատարությունների» ժամանակ ամեն ինչից զատ նաև ընդունված էր այդ ծիսակատարությանը մասնակցելու եկած ամեն հասարակ էակի առջև դնել հատուկ «կավե անոթներ», որպեսզի նրանցից յուրաքանչյուրն այդ սրբազան անոթների մեջ ամեն մի որոշակի աղոթքից հետո գցի այդ օրվա համար նախատեսված պտուղները կամ մրգերը:

Ահա այդ զոհաբերություն դառնալուն արժանի համարված բաներն էլ այն ժամանակ հենց կրոնն էին կոչվում: Ամենայն հավանականությամբ այդ ծիսակարգը հորինվել է այն ժամանակվա «աստվածաբանների» կողմից՝ որպես իրենց, այսպես կոչված, «քծնողների» համար եկամուտի շահավետ աղբյուր:

Կոմիտեի այդ որոշման մեջ, որի մասին հենց նոր պատմեցի, ասվում էր, որ այս անգամ կրոնները պետք է բաղկացած լինի «տապալվածների» աչքերից, ինչպես այնտեղ հասարակ էակները թիկունքից անվանում էին իշխող դասակարգի կաստային պատկանող էակներին. այդ բառով այն ժամանակ անվանում էին այդ կաստային պատկանող «անխտիր» բոլորին՝ չբացառելով «պասսիվ կեսին» պատկանողներին, երեխաներին ու ծերերին:

Այնուհետև այդ հայտարարության մեջ ասվում էր, որ նա, ով ընտրությունների օրն իր սրբազան անոթում կունենա կրոնի ամենամեծ քանակությունը, կդառնա ամբողջ Եգիպտոսի կառավարիչը, իսկ մնացած քաղաքներում ու գյուղերում կառավարիչներ կնշանակվեն նրանք, ովքեր իրենց սրբազան անոթներում համապատասխանաբար ավելի շատ կրոններ կունենան:

Կարող ես պատկերացնել, զավա՛կս, թե այդ օրն ամենուրեք ինչ տեղի ունեցավ Եգիպտոսում, որպեսզի սրբազան անոթները լցվեն ամենաշատ քանակությամբ աչքերով, որոնք ժամանակի հոսքի այդ հատվածում պատկանում էին իշխող դասակարգի կաստային:

Մի ուրիշ անգամ, էլի նույն Եգիպտոսում ես ականատեսը դարձա ոչ պակաս ահավոր մի տեսարանի:

Որպեսզի հստակորեն քեզ փոխանցեմ այդ նույնպես ահավոր տեսարանը, նախ և առաջ պետք է ասեմ, որ այնտեղ՝ այդ Եգիպտոսում, ամեն մի մեծ բնակավայրում կամ «քաղաքում» նախկինում մեծ հրապարակ էր լինում, որտեղ տեղի էին ունենում ամեն տեսակի հասարակական, այսպես կոչված, «կրոնական» և «ռազմական» արարողություններ, և դրանց մասնակցում էին ամբողջ Եգիպտոսից եկած էակների զանգվածներ:

Այդ էակները և հատկապես դրանց զանգվածները, որոնք տվյալ պահին պատկանում էին թույլ կաստաներին, խանգարում էին արարողությունների ընթացքին, և այդ պատճառով փարավոններից մեկը հրամայեց այդ հրապարակների շուրջը շուրջ պարան քաշել, որպեսզի հասարակ կաստաների էակները չխաթարեն արարողության ընթացքը:

Բայց երբ նշված պարանները կապվեցին, շուտով ակնհայտ դարձավ, որ դրանք չեն դիմանում ամբոխի ճնշմանը և կտրվում են: Այնժամ փարավոնը հրամայեց դրանց փոխարեն կիրառել, այսպես կոչված, «մետաղական ճոպաններ», որից հետո նրանք, որոնց «քուրմեր» էին անվանում, օձեցին դրանք և «սրբազան ճոպաններ» անվանեցին:

Հրապարակները շրջափակող այդ սրբազան ճոպանները, հատկապես Եգիպտոսի խոշոր քաղաքներում, վիթխարի երկարություն ունեին, որը հասնում էր երբեմն մեկ «ցենտրոտինոյի», կամ, ինչպես կասեին քո այդ մոլորակի ժամանակակից էակները՝ տասը մղոնի:

Եվ ահա, ես վկա եմ եղել, թե ինչպես է հասարակ եգիպտական էակների ամբոխն այդ սրբազան ճոպաններից մեկի վրա շարում (ինչպես ասիական խորովածի շշի վրա) իշխանական դասին պատկանող էակներին՝ առանց տարիքի ու սեռի խտրության:

Եվ հենց այդ նույն օրվա գիշերը, քառասուն գոմեշներ լծելով, այդ անսովոր շամփուրը տարան և նետեցին Նեղոս գետը:

Այդ տեսակի պատժի ես ականատես եմ դարձել ինչպես քո այդ մոլորակի մակերևույթին գտնվելու ընթացքում, այնպես էլ Մարսի վրայից՝ իմ մեծ տեսքահանի օգնությամբ:

Եվ հիմա քո այդ ներկայիս վերին աստիճանի միամիտ սիրելիներն անկեղծորեն զայրանում էին, որ իրենց ժամանակակից «բոլշևիկները» գնդակահարում են ուն թում Բրաունի:

Եթե նման «հոգեկան վիճակում հայտնված» այնտեղի նախկին եռուղեղ էակների արածները համեմատելու լինենք ներկայիս բոլշևիկների արածների հետ, ապա վերջիններիս հարկ է նույնիսկ գովել ու շնորհակալություն հայտնել, որ թեև նրանց ընդհանուր ներկայություններում անխուսափելիորեն լիովին բյուրեղացել են կոնդաբուֆեր օրգանի հատկությունների զանազան հետևանքները (ինչպես ընդհանրապես բոլոր ժամանակակից եռուղեղ էակների ներկայություններում), այնուհանդերձ այն ժամանակահատվածի ամենաեռուն շրջանում, երբ նրանք ամբողջովին «խամաճիկների» դերում էին հայտնվել՝ անկասելի Սովիտունենսիուս տիեզերական օրենքի ազդեցության տակ, դրա հետևանքները դրսևորեցին այնպես, որ իրենց կողմից գնդակահարված անձի դիակից գոնե հնարավոր էր լինում ջոկել, որ դա պատկանում է «Թոմ Բրաունին», ոչ թե ուրիշ մեկին»:

Իր պատմության այս մասում Բեհեդգեբուդը ծանր հառաչեց և, հայացքը հառելով մի կետի, խոր մտածմունքների մեջ ընկավ:

Հասեինն ու Ահունը, դեմքերին որոշակի զարմանք և տխրություն, հայացքները սպասողական հառեցին նրան, այսպես ասած, առանց աչքները նրանից կտրելու:

Մի փոքր սպասելուց հետո Հասեինը, սկզբում դեմքին տալով լրիվ անհասկանալի արտահայտություն, իսկ հետո՝ կարեկցանք, քնքուշ ձայնով դիմեց դեռևս մտածումների մեջ խորասուզված Բեհեդգեբուդին.

– Պապի՛կ, սիրելի՛ պապիկ, խնդրում եմ բարձրաձայն արտաբերես այն տեղեկությունները, որոնք առկա են ինձ համար առանձնապես սիրելի քո ընդհանուր ներկայությունում, և դու ձեռք ես բերել քո երկարատև գոյատևման ընթացքում և որոնք կարող են նյութ ծառայել, որպեսզի ինքս ինձ համար պարզաբանեմ իմ էության ներսում հենց նոր ծագած հարցը, որի վերաբերյալ գոնե մոտավոր պատկերացում կազմելու համար ես դեռևս բացարձակապես ոչ մի նախադրյալ չունեմ, որպեսզի տրամաբանորեն համադրեմ իմ ընդհանուր ներկայության ոգեկոչված մասերից որևէ մեկում:

Իմ էության մեջ ծագած այդ հարցը, որի պատասխանն ունենալն արդեն անհրաժեշտություն է դարձել իմ ներկայության համար, այն է, որ իմանամ հետևյալի պատճառները. եթե Երկիր մոլորակի վրա բազմացող այդ դժբախտ եռուղեղ էակներն իրենցից անկախ պատճառների բերումով հնարավորություն չունեն իրենց պատասխանատու գոյատևման ընթացքում ձեռք բերել և ունենալ Աստվածային Օբյեկտիվ Բանականություն, հապա ինչու՞, այդքան վաղ ծագած լինելով և նրանց տեսակը այդքան երկար գոյատևած լինելով հանդերձ, նրանց աննորմալ պայմաններ ունեցող սովորական գոյատևման ընթացքում մինչև այժմ աստիճանաբար չեն ձևավորվել, թեկուզ հենց ժամանակի հոսքի շնորհիվ, այն ավանդույթները և ընդհանրապես բոլոր եռուղեղ էակների ներկայություններին հատուկ այն «*բնագղական-ինքնաբերական սովորությունները*», որոնց շնորհիվ ինչպես նրանց «եսասիրական-անձնական», այնպես էլ «կոլեկտիվ-ընդհանրական» սովորական գոյատևումը կրնա անար օբյեկտիվ իրականության առումով քիչ թե շատ տանելի կերպով:

Այս ասելուց հետո մեր խեղճ Հասեինը հարցական հայացքը հառեց իր ծագման Պատճառի Պատճառի վրա:

Սիրելի թոռան հարցին ի պատասխան՝ Բեհեդգեբուդը սկսեց պատմել հետևյալը.

«Դե իհարկե, սիրելի՛ զավակս... Նրանց գոյատևման երկար դարերի ընթացքում, ինչպես ամենուրեք լինում է մոլորակներում սկզբնավորված էակների դեպքում, որոնք նույնպես իրենց գոյատևման ժամանակի մեծ մասն ուղղակի անց են կացնում սովորական գործընթացով, այնտեղ նույնպես աստիճանաբար ձևավորվել են շատ սովորություններ, ինչպես նաև, այսպես կոչված, «բարոյական ավանդույթներ», որոնք երբեմն շատ լավ ու օգտակար են նրանց սովորական գոյատևման համար. որոշ խմբավորումներում դրանք երբեմն ձևավորվում են նույնիսկ մինչև հիմա, բայց դժբախտությունն էլ հենց այն է, որ նման *լինելիական բարոյությունը*, որը սովորական գոյատևման գործընթացում ամրապնդվում է սոսկ ժամանակի ընթացքում և բարելավվում մի սերնդից մյուսին փոխանցվելու շնորհիվ, նույնպես շատ շուտով կա՛մ իսպառ չքանում է, կա՛մ փոխվում է այնպիսի ուղղությամբ, որ նրանց այդ հաջողված նվաճումներն ինքնին վերածվում են «ձախողվածի» և ավելացնում են իրենց համար վնասակար այն մանր գործոնների քանակը, որոնց համախմբությունը տարեցտարի ավելի ու ավելի է «ամլացնում» ինչպես նրանց հոգեկառույցը, այնպես էլ նրանց էությունը:

Եթե նրանք գոնե ունենային և օգտագործեին եռուղեղ էակին սազական թեկուզ և այդ «մանրութները», ապա դա արդեն նրանց օգտին կլիներ, կամ, ինչպես հենց իրենք կասեին, «ամեն դեպքում դա ավելի լավ կլիներ, քան ոչինչը»:

Իհարկե, եթե գոնե որոշ սովորական գոյատևման գործընթացում ամրապնդվող և արդեն ինքնաբերական դարձած «բարոյական կարգեր» կարողանային պահպանվել և, ժառանգաբար փոխանցվելով, հետագա սերունդների համար վերածվել գոյատևման կերպի, ապա հենց միայն շնորհիվ դրա՝ օբյեկտիվ իմաստով նրանց «դժբախտ» գոյատևումը կողքից անկողմնակալ դիտողին գոնե մի փոքր տանելի կթվար:

Նրանց տանելի գոյատևման՝ նույնիսկ այդ ժամանակի հոսքով ձեռքբերված *լինելիական բարոյության*, ինչպես նաև լավ ավանդույթների և «բարոյական կարգերի» լրիվ ոչնչացման ու մանրացման պատճառները նույնպես ծնունդ են առել իրենց շուրջը եղած սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմաններից, որոնք հենց իրենք են հաստատել:

Որպես խտացված արդյունք, որը բխում է իրենց շրջապատող աննորմալ պայմաններից և դարձել է իրենց այդ չարիքի հիմնական պատճառը, նրանց հոգեկառույցում վերջերս առաջացավ մի առանձնահատկություն, որը հենց իրենք անվանում են «ներշնչվողություն»:

Այդ տարօրինակ հատկության հետևանքով, որը վերջերս է ամրապնդվել նրանց հոգեկառույցում, նրանց ընդհանուր ներկայության գործունեությունը սկսել է աստիճանաբար փոխվել, ինչի արդյունքում նրանցից յուրաքանչյուրը, հատկապես նրանք, ովքեր ծնվել և պատասխանատու էակներ են դարձել վերջին դարերի ընթացքում, դարձել է այնպիսի յուրահատուկ տիեզերական գոյացության ներկայացուցիչ, որը գործելու հնարավորություն է ստանում բացառապես միայն այն դեպքերում, երբ շարունակաբար գտնվում է իր նման մի ուրիշ գոյացության ազդեցության տակ:

Հիրավի, զավակս, ներկայումս, քեզ դուր եկած եռուղեղ էակները՝ ինչպես առանձին անձինք, այնպես էլ նրանց մեծ ու փոքր խմբավորումները, արդեն անպայման պետք է կա՛մ ազդեն մյուսների վրա, կա՛մ գտնվեն մյուսների ազդեցության տակ:

Որպեսզի դու լավ պատկերացնես և համակողմանիորեն հասկանաս, թե դարերի ընթացքում ձեռք բերված և իրենց սովորական գոյատևման համար օգտակար ավանդույթներն ու ինքնաբերական սովորություններն ինչպես են անհետ չքանում կամ դեպի վատը գնում իրենց արտառոց հոգեկառույցի հիշյալ հատկության պատճառով, մենք որպես օրինակ կվերցնենք հենց այն երկրային եռուղեղ էակներին՝ իրենց ավանդույթներով հանդերձ, որոնց քո այդ մոլորակի մյուս էակները «ռուսներ» են անվանում, և որոնք կազմում են այն հանրության բնակչության մեծամասնությունը, որը Ռուսաստան է կոչվում:

Այն բանի հետևանքով, որ այնտեղի այդ մեծ ժամանակակից հանրության կազմավորման հիմք դարձած էակների և նրանց հետագա սերունդների գոյատևումը շատ հարյուրամյակների ընթացքում տեղի է ունեցել այն էակների հարևանությամբ, որոնք պատկանում են նույն ասիական հանրություններին, որոնք զանազան իրադարձությունների բերումով գոյատևել են համեմատաբար ավելի երկարատև ժամանակաշրջանում, ինչի արդյունքում նրանց սովորական գոյատևման գործընթացում (ինչն ընդհանրապես տեղի է ունենում երկարատև գոյատևման արդյունքում) ինքնին աստիճանաբար ձևավորվել և նրանց սովորական գոյատևման ընթացքում ամրապնդվել են շատ ու շատ լավ ավանդույթներ և «բարոյական դրվածքներ», այդ ռուսները, շփվելով երկրային էակների համար հինավուրց այդ հանրությունների էակների հետ և ժամանակ առ ժամանակ նրանց հետ նույնիսկ մտնելով բարեկամական հարաբերությունների մեջ, աստիճանաբար յուրացրել և սկսել են իրենց սովորական գոյատևման գործընթացում կիրառել այդ օգտակար սովորություններից և «բարոյական դրվածքներից» շատերը:

Այսպիսով, զավակս, քո այդ մոլորակի եռուղեղ էակների հիշյալ տարօրինակ հատկության պատճառով, որը, ինչպես արդեն ասել եմ քեզ, ծագել և աստիճանաբար նրանց հոգեկառույցում ամրապնդվել է թիքյամիշյան քաղաքակրթության ավարտից մի փոքր անց (ամրապնդվելը ինտենսիվ է տեղի ունեցել գլխավորապես այն պատճառով, որ ավելի ու ավելի էին վատանում նրանց սովորական լինելիական գոյատևման շրջակա պայմանները, որոնք հենց իրենք են հաստատել), և հենց այդ առանձնահատուկ հոգեկան հատկությունը, որն իր սկզբնավորման պահից սկսած անպայմանորեն բնորոշ է դարձել հետագայում ամենամեծ հանրության վերածված խմբավորման էակների ընդհանուր ներկայությունների համար, այդ ամենի պատճառով բոլոր նրանք նախկին

Ժամանակներում գտնվել են այս կամ այն ասիական հանրության էակների ազդեցության տակ, և նրանց սովորական գոյատևման ամբողջ, այսպես կոչված, «արտաքին տեսքն» ու «հոգե-նմանագգացական ձևը» նույնպես ընթացել է այդ ազդեցության տակ:

Եվ այսպես, կրկին այն բանի հետևանքով, որ քո այդ Երկիր մոլորակի այն եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, որոնք բնակվում էին Ասիա աշխարհամասի այն հատվածում, որը կոչվել և մինչև այժմ կոչվում է Ռուսաստան, վերջիվերջո նույնպես դադարեց գործել *լինելիական պարտք-պարտականությունը*, նրանց հոգեկառույցի այդ վերին աստիճանի վնասակար հատկությունը՝ «ներշնչվողությունը», սկսեց աստիճանաբար ուժեղանալ. և քանի որ նրանք, հանգամանքների այն փոփոխությունների հետևանքով, որոնք տեղի էին ունենում էլի այն նույն պարբերական փոխադարձ ոչնչացման գործընթացի պատճառով, որը հատուկ է միայն այդ չարաղետ մոլորակին, արդեն զրկվել էին նախկին ազդեցությունից և ստիպված էին նոր ազդեցության տակ ընկնել՝ չունենալով անկախ գոյատևման հնարավորություն, ապա այս անգամ ընկան եվրոպական հանրությունների էակների ազդեցության տակ, գլխավորապես այն հանրության, որը գոյություն ունի «Ֆրանսիա» անունով:

Քանի որ այդ Ֆրանսիա կոչվող հանրության էակներն ինքնաբերաբար սկսեցին ազդեցություն թողնել Ռուսաստան կոչվող հանրության էակների հոգեկառույցի վրա, և վերջիններս սկսեցին ձգտել ամեն ինչով ընդօրինակելու այդ Ֆրանսիա կոչվող հանրության էակներին, ապա իրենց գոյատևման գործընթացում արդեն ձեռք բերած բոլոր լավ սովորույթներն ու նրանց բնորոշ դարձած բարոյական դրվածքը, որ կա՛մ կիսագիտակցաբար, կա՛մ մեխանիկորեն փոխառել էին հինավուրց ասիական հանրությունների էակներից, աստիճանաբար մոռացության մատնվեցին, և դրանց փոխարինելու եկան նորերը՝ ֆրանսիականները:

Հազարավոր այդպիսի լավ ավանդույթներից և օգտակար սովորություններից որպես օրինակ վերցնենք թեկուզ երկուսը՝ առաջին *լինելիական սնունդն* ընդունելուց հետո, այսպես կոչված, «կեվա» ծամելը և, այսպես կոչված, «համամներում» պարբերաբար լոգանք ընդունելու ավանդույթը:

Կեվանպատրաստվող հատուկ մաստակ է, որը ծամում են սնունդ ընդունելուց հետո. այն երբեք չի քայքայվում երկար ծամելուց, այլ, ընդհակառակը, ավելի առաձգական է դառնում:

Այդ մաստակը նույնպես հորինվել է լավ բանականություն ունեցող մի էակի կողմից, որը պատկանել է հինավուրց ասիական հանրություններից մեկին:

Կեվա ծամելուց ստացվող օգուտն այն է, որ ծամելու ընթացքում շատ է արտադրվում այն հեղուկից, որին Երկրում «թուր» են անվանում, ինչպես նաև այլ նյութեր, որոնք արտազատվում են մոլորակային մարմինների ներսում, որպեսզի ավելի հեշտ փոխակերպվի առաջին *լինելիական սնունդը*, կամ, ինչպես իրենք են ասում՝ որպեսզի այդ սնունդը լավ «մարսվի և յուրացվի»:

Այդ կեվայի շնորհիվ նաև ամրանում են նրանց ատամները, իսկ բերանի խոռոչը մաքրվում է առաջին սննդի մնացորդներից. կեվայի օգտագործումը չափազանց անհրաժեշտ է քո սիրելիների համար հատկապես այդ երկրորդ նպատակով, քանի որ այդ մնացորդները, կեվա ծամելու շնորհիվ չքայքայվելով, բերանին չեն տալիս այն տհաճ հոտը, որն այնտեղ արդեն հատուկ է դարձել հատկապես ժամանակակից եռուղեղ էակներին:

Երկրորդ ավանդույթը՝ «համամ» կոչվող հատուկ շինություններում պարբերաբար լոգանք ընդունելը, նույնպես հորինվել է մի հինավուրց ասիական էակի կողմից:

Որպեսզի դու հստակ հասկանաս երկրային էակների գոյատևման գործընթացում այդ երկրորդ ավանդույթի անհրաժեշտությունը, նախ քեզ պետք է բացատրեմ հետևյալը:

Ցանկացած տեսակի արտաքին ծածկույթ ունեցող էակի մոլորակային մարմնի գործունեությունն ընդհանրապես Բնության կողմից կարգավորված է այնպես, որ նրանց մոտ երկրորդ *լինելիական սննդի* ընդունման գործընթացը, որին քո սիրելիները «օդ շնչել» են կոչում, տեղի է ունենում ոչ միայն շնչառական օրգանների, այլ նաև նրանց մաշկի ծակոտիների միջոցով:

Մաշկի այդ ծակոտիները ծառայում են ոչ միայն երկրորդ *լինելիական սննդի* նոր չափաբաժիններ ընդունելու համար, այլ նաև դրանց մի մասի միջոցով երկրորդ *լինելիական սննդի* փոխակերպությունից հետո դուրս են արտազատվում այդ սննդի այն մասերը, որոնք այլևս պետք չեն էակի մոլորակային մարմնին կամ արդեն փոխակերպության արդյունք են հանդիսանում:

Այդ ոչ պետքական մասերը մաշկի ծակոտիներով պետք է ինքնուրույնաբար դուրս գան մարմնից աստիճանական գոլորշիացման միջոցով՝ շնորհիվ այն գործոնների, որոնք ստացվում են այն նույն

միջավայրում ընթացող գործընթացներից, որտեղ ապրում է տվյալ էակը. օրինակ՝ մթնոլորտային շարժումներից, պատահական հայումներից և այլն:

Եվ ահա, երբ քո սիրելիների մտքով անցավ ծածկվել «հագուստով», և այդ հագուստը սկսեց խանգարել երկրորդ *լինելիական սննդի*⁵⁵ մոլորակային մարմնի կարիքների համար այլևս անպետք մասերի նորմալ հեռացմանն ու գոլորշիացմանը, այդ անպետք մասերը սկսեցին խտանալ և մաշկի ծակոտիները փակել «ինչ-որ ճարպային» գոյացություններով:

Այդ ժամանակից սկսած՝ այլ գործոնների հետ մեկտեղ դա էլ սկսեց նպաստել այդ չարաղետ մոլորակում անթիվ բազմազան հիվանդությունների առաջացմանը, որոնց համակցությունն էլ հենց այդ դժբախտ էակների կյանքի տևողության կրճատման գլխավոր պատճառն է:

Եվ ահա, զավակս, երբ դեռես, ինչպես ասում են ներկայիս քո սիրելիները, «հեռավոր մշուշոտ անցյալում» Ասիա աշխարհամասից «Ամամբախլուտը»⁵⁵ անունով իմաստուն ու գիտուն մի էակ իր շրջապատում տեղի ունեցող զանազան փաստերի գիտակցական դիտման ընթացքում մի անգամ հստակորեն արձանագրեց, որ մաշկի ծակոտիները խցանող այդ «*ճարպային ինչ-որ բանը*» նաև բացասական ազդեցություն է թողնում մոլորակային մարմնի ընդհանուր կենսագործունեության վրա, ապա սկսեց պարզել ու փնտրել միջոցներ, որպեսզի վերացնի գոնե այդ չարիքը:

Ուսումնասիրությունների և երկարատև մտորումների արդյունքում այդ Ամամբախլուտըն ու մի քանի ուրիշ գիտուն էակներ, որոնք դարձել էին նրա հետևորդները և սկսել օգնել նրան, հանգեցին այն եզրակացությանն ու համոզմունքին, որ հնարավոր չէ հասնել այն բանին, որ իրենց նման էակներն այլևս հագուստ չկրեն, այլ պետք է մաշկի ծակոտիներից «*երկրորդ սննդի*» մնացորդները արհեստականորեն հեռացնելու միջոց փնտրել՝ ասենք, իրենց շրջապատի էակների հոգեկառույցի մեջ որևէ լինելիական ավանդույթ մտցնելով, որը ժամանակի ընթացքում նրանց համար վերածվի լիակատար անհրաժեշտության և այդպիսով նրանց համար սովորություն դառնա:

Իսկ այն, ինչ այն ժամանակ ասիացի գիտնականները այդ մեծ գիտնական Ամամբախլուտի գլխավորությամբ փորձնական ճանապարհով պարզեցին և իրականացրին գործնականում, հենց ծառայեց այն համամների ստեղծման գործին, որոնք այնտեղի որոշ վայրերում մինչև այժմ շարունակում են իրենց գոյությունը:

Գիտական փորձերի ընթացքում նրանք այն ժամանակ պարզեցին, որ, ամեն ինչից զատ, սովորական լվացումով, նույնիսկ տաք ջրով, հնարավոր չէ հասնել մաշկի ծակոտիներից այդ կուտակումների հեռացմանը, քանի որ մոլորակային մարմնի այդ արտազատումները ոչ թե մաշկի արտաքին մակերևույթի վրա են գոյանում, այլ ծակոտիների խորքում:

Նրանց հետագա պարզաբանիչ փորձերը ցույց տվեցին, որ այդ կուտակումներից մաշկի ծակոտիների մաքրումը հնարավոր է միայն դանդաղ տաքացման միջոցով, որի շնորհիվ այդ կուտակված «*ճարպային ինչ-որ բանը*» աստիճանաբար հալվում է և հեռացվում էակի մաշկի ծակոտիներից:

Եվ ահա այդ նպատակով նրանք հնարեցին և գործնականում ստեղծեցին հատուկ շինություններ, որոնք էլ հետագայում համամներ կոչվեցին. դրանց իմաստն ու նշանակությունը նրանք այնպես կարողացան տարածել ամբողջ աշխարհամասի էակների շրջանում, որ բոլոր ասիացի էակների հոգեկառույցներում պահանջարկ առաջացավ իրենց գոյատևման ընթացքում տվյալ պրոցեդուրայի համար օգտվելու այդ շինություններից:

Այդպիսով, ժամանակ առ ժամանակ համամ գնալու այդ պահանջմունքը, որն արդեն բնորոշ էր դարձել Ասիա աշխարհամասի էակներին, հետո անցավ նաև Ռուսաստան կոչվող հանրության էակներին:

Ինչ վերաբերում է այն «*ճարպային ինչ-որ բանին*», որը կուտակվում է քո սիրելիների մաշկի ծակոտիներում, հարկ է ասել հետևյալը:

Քանի որ այդ նյութը՝ «*ճարպային ինչ-որ բանը*», մեր Մեծ Տիեզերքում ընդհանրապես գոյություն ունեցող ամեն ինչի պես չի կարող մնալ միևնույն վիճակում, ապա այդ նյութը պարունակող ծակոտիներում անխուսափելիորեն ընթանում են էվոլյուցիայի և ինվոլյուցիայի գործընթացներ, որ անհրաժեշտ են Մեծ Բնությանը: Իսկ քանի որ այդ գործընթացների ժամանակ բոլոր տիեզերական, այսպես կոչված, «*ժամանակավոր*» կամ «*անցումային*» կազմավորումներից արտազատվում են,

⁵⁵ ռուս. տարբերակում՝ Амамбахлутр, անգլ. տարբերակում՝ Amambakhlutr

այսպես կոչված, «երկրորդական» ակտիվ տարրեր՝ այնպիսիք, որոնք թրթռանքների շարժիչ ուժով ժամանակավորապես բյուրեղանում են և, ինչպես հայտնի է բոլորին, այնպիսի հատկություն ունեն, որ հայտնվելով էակի հոտառության զգայարանի մոտ՝ ընկալվում են որպես շատ «խառնիճաղանձ», ապա այնտեղ՝ Երկիր մոլորակում, քո այն սիրելիներից, որոնք չեն օգտվում հիշյալ համամներից, մշտապես հատուկ «ռաստրոպունիլոն⁵⁶», կամ, ինչպես իրենք են ասում, «հոտ» է արձակվում, որն իրենք էլ «առանձնապես հաճելի» չեն համարում:

Եվ իրոք, զավակս, այնտեղի որոշ աշխարհամասերում, հատկապես Եվրոպայում, որտեղ համալ գնալու ավանդույթ չկա, ինձ համար, որ շատ նուրբ հոտառություն ունեմ, շատ դժվար էր գոյատևել այն եռուղեղ էակների միջավայրում՝ հենց այդ յուրահատուկ «ռաստրոպունիլոնի», կամ, ինչպես իրենք են ասում, հոտի պատճառով, որն արձակվում էր նրանցից:

Այդ տիպի հոտը, որը բխում էր նրանցից, ում մաշկի ծակոտիները երբեք հատուկ չեն մաքրվում, այնքան ուժեղ էր զգացվում, որ ես կարող էի առանց մեծ ջանքի որոշել, թե հատկապես ո՞ր հանրությանն է պատկանում այս կամ այն էակը. ըստ այդ հոտի՝ ես նույնիսկ կարող էի մի էակին զանազանել մյուսից:

Իսկ յուրահատուկ հոտերի բազմազանությունը կախված է այն բանից, թե որքան երկար է ընթացել այդ «ճարպային արտազատումների» քայքայումը մաշկի ծակոտիներում:

Ի բարեբախտություն իրենց՝ այդ տիպի հոտերն այդպիսի «տանջալից» ազդեցություն չեն թողնում նրանց վրա:

Ազդեցություն չեն թողնում այն պատճառով, որ նրանց հոտառությունը շատ թույլ է, և, բացի այդ, մշտապես այդ հոտերի մեջ ապրելով, նրանք աստիճանաբար վարժվում են դրանց:

Այսպիսով, զավակս, հենց այդ ավանդույթը՝ հատուկ համամներում լոգանք ընդունելն էր, որ ռուսները փոխ առան ասիացի էակներից. բայց երբ նրանք ընկան Եվրոպացի էակների՝ մեծ մասամբ, ինչպես արդեն ասել եմ, Ֆրանսիա կոչվող հանրության էակների ազդեցության տակ, ապա, քանի որ ֆրանսիացի էակները համալ գնալու ավանդույթ չունեին, իրենք էլ աստիճանաբար դադարեցին օգտվել համամներից, և այդպիսով այդ լավ ավանդույթը, որը դարերով գոյություն էր ունեցել նրանց միջավայրում, կամաց-կամաց սկսեց չքանալ:

Նախկին ժամանակներում համարյա ամեն մի ռուսական ընտանիք ուներ իր սեփական համամը, բայց վերջերս, երբ ես վերջին անգամ եղա նախկինում Սանկտ-Պետերբուրգ կոչվող իրենց գոյատևման գլխավոր վայրում, որում ապրող էակների թիվն այն ժամանակ երկու միլիոնից ավելի էր, կար ընդամենը յոթ թե ութ համամ, և նույնիսկ այդ ժամանակ էլ դրանք այցելում էին միայն այն էակները, որոնց «դոնապաններ» և «բանվորներ» էին կոչում, այսինքն՝ այն էակները, որոնք մայրաքաղաք էին եկել հեռավոր գյուղերից, որոնցում դեռևս իսպառ չէր մոռացվել համամ, կամ, ինչպես երբեմն իրենք են ասում, «բաղնիք» գնալու ավանդույթը:

Իսկ ինչ վերաբերում է այդ մայրաքաղաքի հիմնական բնակչությանը, որը գլխավորապես բաղկացած էր իշխող դասակարգի էակներից, ապա նրանք վերջին ժամանակներում բոլորովին համամ չէին գնում. եթե երբեմն որևէ մի «ցնդած» հին սովորույթի ուժով դեռ շարունակում էր համամ գնալ, ապա ամեն կերպ ջանում էր, որ իր խավին պատկանող ուրիշ որևէ մեկը չիմանա այդ մասին:

«Շատ ու փորձանքից հեռու», թե չէ, այդ քաջի մասին այնպիսի «ասեկոսներ» կտարածվեին, որ անխուսափելիորեն «քար կզցեին» նրա հետագա ամբողջ կարիերայի վրա:

Հիմա արդեն իշխող դասակարգին պատկանող էակներին «սագական» չէ և խիստ «անքաղաքավարի» բան է համարվում համամ գնալը. և դա այն պատճառով, որ իրենց մոլորակի ժամանակակից «ամենահինտելիգենտ» էակները նրանց պատկերացմամբ ֆրանսիացիներն են, իսկ վերջիններս համամ չեն գնում:

Այդ թշվառականներն իհարկե չգիտեն, որ այդ ֆրանսիացիներն իրենք էլ նույն պատճառներով, այն է՝ սովորական լինելիական գոյատևման հաստատված աննորմալ պայմանների ազդեցությամբ, ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ոչ միայն բաղնիք չէին գնում, այլ նաև այդ նույն ֆրանսիացիները, հատկապես՝ «ինտելիգենցիայի» ներկայացուցիչները, առավոտյան չէին լվացվում, որպեսզի չփչացնեն իրենց այն ժամանակ մոդայիկ համարվող արհեստական արտաքինը, որը դժավությամբ էր վերականգնվում:

⁵⁶ ռուս. տարբերակում՝ растропунило, անգլ. տարբերակում՝ rastropoonilo

Ինչ վերաբերում է մեր վերցրած երկրորդ օրինակին՝ այն լավ ավանդույթին, որի պահպանումը երկու դար առաջ օրգանական անհրաժեշտություն էր այդ Ռուսաստան կոչվող հանրության ամեն մի էակի համար՝ առաջին *լինելիական սնունդն* ընդունելուց հետո կելա ծամելուն, ապա այդ ավանդույթն այնտեղ՝ ժամանակակից ռուսների մոտ, հիմա այլևս գոյություն չունի:

Հարկ է նշել, որ ներկայումս կելա ծամելու սովորույթը, այն ժամանակներից սկսած, երբ ես գտնվում էի «Ամերիկա» աշխարհամասի էակների միջավայրում, սկսեց արմատներ ձգել, թեև այնտեղի էակները չէին հասկանում, թե ինչի համար է դա պետք, և հիմա լայնորեն տարածված է, ինչպես այնտեղ ասում են, «ծամոն ծամելը», նույնիսկ դրա արտադրությունն ու վաճառքը բավականին լուրջ ծավալներ են ընդունել: Իմիջիայլոց, հետաքրքիր կլինի նշել, որ ամերիկյան այդ ծամոնի հումքի հիմնական մասը հենց Ռուսաստանից է արտահանվում՝ այն վայրից, որը «Կովկաս» է կոչվում: Այդ վայրում բնակվող էակները նույնիսկ չգիտեն, թե ինչու են այդ «խելապակաս» ամերիկացիները ներմուծում այդ ոչ մի բանի ու ոչ մեկին պետք չեկող արմատը:

Նրանցից ոչ մեկի գլխում նույնիսկ միտք չի ծագում այն մասին, որ այդ «անպետք» արմատը ներմուծող ամերիկացիները, թեև սուբյեկտիվ իմաստով իսկապես «խելապակասներ» են, բայց օբյեկտիվ իմաստով պարզապես, ինչպես հենց իրենք են ասում, «օրը ցերեկով թալանում են» Ռուսաստանի էակներին:

Ահա այդպես, զավակս. նույն եղանակով վերջին երկու դարերի ընթացքում, երբ այդ ռուսներն ազդեցության թիրախ դարձան եվրոպացի էակների համար, աստիճանաբար սկսեցին չքանալ բազմաթիվ օգտակար սովորույթներ, ինչպես և բարոյական դրվածքներ, որոնք ռուս էակների մոտ ամրապնդվել էին հարյուրամյակներ տևած սովորական գոյատևման գործընթացում, իսկ դրանց փոխարեն նրանց մոտ ձևավորվեցին նոր սովորույթներ և նոր բարոյական հիմքեր, որոնք գործում են մինչև այժմ. դրանցից են՝ «դամայի ձեռքը համբուրելը», «միայն ջահել դամայի հետ սիրալիր լինելը», «ամուսնու ներկայությամբ նրա կնոջը սիրահետելը» և այլն, և այլն:

Ցավակցական մղումով հարկ է ընդգծել, որ ներկայումս այդ նույն բանը սովորական գոյատևման գործընթացներում շարունակում է տեղի ունենալ այնտեղի բոլոր աշխարհամասերի հանրությունների էակների հետ:

Հույս ունեմ, զավակս, որ հիմա դու արդեն կարող ես մոտավորապես պատկերացնել և ստանալ քո էության մեջ ծագած այն հարցի պատասխանը, թե ինչու, քո այդ թշվառ սիրելիներն իրենց մոլորակի վրա այդքան վաղուց ծագած լինելով և գոյատևելով, մինչև այժմ չեն կարողացել կազմավորել այնպիսի ինքնաբերական *լինելիական ավանդույթներ* և *բնագդական սովորություններ*, որոնց առկայության դեպքում նրանց գոյատևումը, թեկուզ առանց օբյեկտիվ գիտակցություն ունենալու, քիչ թե շատ տանելի կընթանար:

Կրկնում եմ, վերը նշված հատկության հետևանքով, որն ընդամենը վերջերս է ամրապնդվել նրանց ընդհանուր հոգեկառույցում, ներկայումս նրանց համար արդեն բնական և, այսպես ասած, օրինաչափ բան է դարձել մշտապես կա՝մ ուրիշների վրա ազդելը, կա՝մ ուրիշների ազդեցությունը կրելը:

Երկու դեպքում էլ այդ յուրօրինակ հատկության գործողությունն ստացվում է առանց իրենց կողմից որևէ գիտակցման և նույնիսկ առանց իրենց որևէ ցանկության:

Այն ամենից, ինչ արդեն ասացի քեզ այն մասին, որ ժամանակակից ռուսները մշտապես հետևում կամ նմանակում են ուրիշներին, կարելի է հստակ հասկանալ, թե երկրային եռուղեղ էակների ներկայություններում որքանով է վատացել *լինելիական համադրական-տրամաբանական* մտածողության համար անհրաժեշտ նախադրյալների գործունեությունը:

Ընդհանուր առմամբ, ուրիշների օրինակին հետևելը կամ ուրիշին օրինակ ծառայելը լիովին խելամիտ և կատարելապես անհրաժեշտ բան է համարվում համայն Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների մոտ, և այն, որ Ռուսաստան կոչվող այդ մեծ հանրության եռուղեղ էակները հետևում են Ֆրանսիա կոչվող հանրության էակների օրինակին՝ նույնիսկ կարելի է շատ խելամիտ բան համարել. ինչու՞ չհետևել լավ օրինակին:

Սակայն այդ թշվառները, իրենց հոգեկառույցի նշածս յուրօրինակ հատկության, ինչպես նաև իրենց տարօրինակ բնավորության մի քանի ուրիշ առանձնահատուկ գծերի պատճառով, որոնք վերջնականապես նրանց մոտ ամրապնդվել են, քանի որ նրանց ընդհանուր ներկայություններից իսպառ չքացել է պարբերաբար *լինելիական պարտք-պարտականություն* իրականացնելու ավանդույթը, դարձել են, այսպես կոչված «*սկամա նմանակողներ*» և սկսել են հետևել նաև վատ

օրինակներին. նույնիսկ հրաժարվում են իրենց ունեցած այն լավ ավանդույթներից, որոնք ուրիշ տեղերում գործածական չեն:

Օրինակ՝ նրանք նույնիսկ չեն մտածել այն մասին, որ գուցե այդ ֆրանսիացի էակների սովորական գոյատևման պայմանները մշտապես աննորմալ ձևով են դասավորվում, և այդ պատճառով նրանք դեռ չեն հասցրել գիտակցել, ինչպես տվյալ դեպքում, բաղնիքում լողանալու և առաջին *լինելիական սնունդն* ընդունելուց հետո կեղծ ծամելու անհրաժեշտությունը:

Սակայն դեն նետել արդեն ձեռքբերված լավ ավանդույթները միայն այն պատճառով, որ դրանք չկան Ֆրանսիայի էակների մոտ, որոնցից իրենք օրինակ են վերցնում, իրոք որ իսկական «հնդկահավություն» է:

Թեև այդ տարօրինակ առանձնահատկությունը, որը ես հիմա «հնդկահավություն» անվանեցի, արդեն բնորոշ է դարձել քո այդ մոլորակի վրա բազմացող համարյա բոլոր եռուղեղ էակներին, սակայն դրա «դրսևորումներն» ու արդյունքներն առավել զգալի են Եվրոպա աշխարհամասում բազմացող եռուղեղ էակների մոտ:

Ես դա փաստեցի ու հասկացա ավելի ուշ, երբ ՍանկտՊետերբուրգից ճամփորդության մեկնեցի դեպի այդ Եվրոպա աշխարհամասի զանազան երկրներ, որտեղ ես այս անգամ երկար մնացի՝ ոչ այնպես կարճատև, ինչպես իմ նախորդ ճամփորդությունների ժամանակ էր լինում. ուստի ժամանակ էի ունենում ամենատարբեր շրջակա պայմաններում դիտելու և հետազոտելու ոչ միայն առանձին էակների, այլ նաև նրանց խմբերի հոգեկառույցների առավել նրբին առանձնահատկությունները:

Եվրոպայում գոյություն ունեցող բոլոր հանրությունների արտաքին գոյատևման ձևերը քիչ էին տարբերվում Ռուսաստան կոչվող հսկա հանրության արտաքին գոյատևման ձևից:

Բայց այդ աշխարհամասի առանձին խմբավորումների գոյատևման ձևը տարբերվում է սոսկ այնքանով, որքանով տվյալ հանրության գոյատևման պատահաբար ստացված ավելի երկար կամ ավելի կարճ տևողության հետևանքով ժամանակ է եղել, որպեսզի ձեռք բերվեն որոշ լավ ավանդույթներ և «բնագդական սովորություններ», որոնք հատուկ են դարձել հատկապես այդ հիշյալ հանրության համար:

Ի դեպ, այստեղ հարկ է նշել, որ այնտեղ ցանկացած հանրության գոյատևման տևողությունն իսկապես մեծ դեր է խաղում՝ էակների կողմից լավ ավանդույթներ և բնագդական սովորություններ ձեռք բերելու առումով:

Բայց, ի դժբախտություն Տիեզերքի՝ ցանկացած աստիճանի Բանականություն ունեցող բոլոր եռուղեղ էակների, քիչ թե շատ կազմավորված ամեն մի խմբի գոյատևումը սովորաբար շատ երկարատև չի լինում, որի պատճառն, իհարկե, նրանց նույն այն գլխավոր առանձնահատկությունն է՝ «պարբերական բնույթ կրող փոխադարձ ոչնչացումը»:

Շենց որ որևէ խմբավորման ընդհանուր գործընթացում սկսում են հաստատվել ինքնաբերական գոյատևման լավ *լինելիական ավանդույթներ*, հանկարծ սկիզբ է առնում այդ ահավոր գործընթացը, որի արդյունքում կա՛մ ամբողջությամբ ոչնչանում են հարյուրամյակների ընթացքում ձեռքբերված այդ լավ ավանդույթներն ու «ինքնաբերական սովորությունները», կա՛մ այդ խմբավորման էակները նշաժս հատկության պատճառով ընկնում են մի ուրիշ խմբավորման էակների ազդեցության տակ, որոնք ոչ մի կապ չեն ունենում այն էակների հետ, որոնց ազդեցության տակ էին գտնվում նախկինում. ուստի շատ շուտով բոլոր այն ավանդույթներն ու բարոյական դրվածքները, որոնք ձեռք էին բերվել հարյուրամյակների ընթացքում, փոխարինվում են «նորերով», որոնք մեծ մասամբ լավ կշռադատված չեն լինում և, ինչպես ասում են, «մեկ օրվա համար» են լինում:

ԳԼՈՒԽ ԼԵ

Քարնակ միջտարածական տիեզերանավի անկման նախանշված ուղու փոփոխություն

Ազգականների հետԲեհեդգեբուղի գրույցի այս մասում նրան հայտնեցին, որ նավապետն իր հետ անձնական գրույցի թույլտվություն է խնդրում:

Բեհեղգեբուղի թույլտվությունը ստանալուց հետո նավապետը շուտով ներս եկավ, հարգալից ողջունեց նրան և ասաց.

– Ձե րդ Գերապատվություն, մեր ճանապարհորդության սկզբում Դուք բարեհաճեցիք ասել, որ հետադարձ ճանապարհին կանգ առնենք սուրբ Քավարան մոլորակում, որպեսզի այցելեք Ձեր որդի Թույլանի ընտանիքին: Եթե իսկապես նման մտադրություն ունեք, ապա լավ կլինի, որ հրաման տաք հենց հիմա դա անել, քանի որ մենք շուտով կանցնենք Հալմիան արևային համակարգի միջով, և եթե այդ համակարգով անցնելու ընթացքում մեր նավի անկումը միանգամից ձախ չթեքենք, ապա մեծ չափով կերկարացնենք նրա անկման ուղին:

– Երևի այդպես անենք, սիրելի՛ նավապետ,– պատասխանեց Բեհեղգեբուղը,– ոչինչ մեզ չի խանգարում, որ ճամփին կանգառ անենք այդ սուրբ մոլորակի վրա: Ոչ ոք չի կարող ասել, կունենա՞մ արդյոք մի ուրիշ նման հարմար առիթ, որ հայտնվեմ այնտեղ և այցելեմ իմ սիրելի որդի Թույլանի ընտանիքին:

Երբ նավապետը պատվի առավ և պատրաստվեց դուրս գալու, Բեհեղգեբուղը, կարծես ինչ-որ բան հիշելով, կանգնեցրեց և դիմեց նրան հետևյալ խոսքերով.

– Սպասե՛ք, սիրելի նավապետ, ես ուզում եմ ձեզ տեղյակ պահել իմ ևս մի խնդրանքի մասին:– Երբ նավապետը նստեց ցույց տրված տեղում, Բեհեղգեբուղը շարունակեց – Իմ խնդրանքն այն է, որ դուք համաձայնեք սուրբ Քավարան մոլորակն այցելելուց հետո մեր «Քարնակ» տիեզերանավի անկումն այնպես ուղղել, որ ճանապարհին հասնենք նաև Դեսկալդինո մոլորակի մակերևույթին:

Բանն այն է, որ ժամանակի հոսքի ներկա շրջանում այդ մոլորակն իր մշտական գոյատևման վայր է ընտրել Մեծն Սարունուրիշանը՝ իմ առաջին դաստիարակը, որն, այսպես ասած, իմ ճշմարիտ ընդհանուր ներկայության բոլոր ոգեկոչված մասերի հիմնական պատճառն է:

Առաջին անգամվա պես ես կուզենայի նախքան իմ ծագման վայր հանդիսացող մոլորակը վերադառնալն օգտվել առիթից և ևս մի անգամ փարվել իմ ճշմարիտ լինելիության նախաստեղծողի ոտքերին, առավել ևս, որ հատկապես հիմա, երբ վերադառնում եմ հավանաբար իմ վերջին համաժողովից, իմ ընդհանուր ներկայության բոլոր անկախ մասերի ներկայիս գործունեության լիակատար գոհացուցիչ լինելը սկսել է տեսանելի դառնալ ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր այն անհատականությունների մեծ մասին, որոնց հետ հանդիպել եմ, և այդ ամենի հետևանքով իմ ներսում ծագել և անկասելիորեն պահպանվում է այդ Մեծն Սարունուրիշանի նկատմամբ երախտագիտության *լինելիական ազդակը*:

Ես շատ լավ գիտեմ, սիրելի նավապետ՛, որ ձեզ հեշտ խնդիր չեմ առաջարկում, քանի որ մի անգամ արդեն վկա եմ եղել, թե որքան դժվար է իմ այդպիսի խնդրանքը բավարարելը, երբ առաջին իմ վերադարձին՝ բարեհաճորեն այցելելուց հետո իմ ծագման վայրը հանդիսացող Քարատակ մոլորակը, ես կամեցա, որ այնտեղ վայրէջք կատարելուց առաջ նախ իջնեմ Դեսկալդինոյի մակերևույթին: Այն ժամանակ, երբ միջհամակարգային «Ամենաթափանց» տիեզերանավի նավապետը տվեց իր համաձայնությունը և «Ամենաթափանցի» անկումն ուղղեց այդ մոլորակի մթնոլորտի կողմը և իսկապես կատարեց իմ խնդրանքը, ես հնարավորություն ունեցա նախքան հայրենիք վերադառնալս հասնել Դեսկալդինո մոլորակի մակերևույթին և երջանկություն ունեցա ողջունելու Մեծն Սարունուրիշանին՝ իմ ճշմարիտ *լինելիական գոյության* արարչին, և ստանալու նրա «*արարչագործական օրհնանքը*», որն ինձ համար ամենաբարձր արժեքն ունի:

Բեհեղգեբուղի այդ խնդրանքին «Քարնակ» տիեզերանավի նավապետը պատասխանեց այսպես.

– Շատ լավ, Ձե րդ Գերապատվություն, ես կմտածեմ, թե ինչպես է հնարավոր բավարարել ձեր ցանկությունը: Ես չգիտեմ, թե այն ժամանակ ինչպիսի խոչընդոտներ են եղել «Ամենաթափանց» տիեզերանավի նավապետի առաջ, բայց ներկա դեպքում սուրբ Քավարան մոլորակն ու Դեսկալդինո մոլորակը միացնող գծի վրա գտնվում է Սալզմանինո կոչվող արևային համակարգը, որն իր ներսում շատ տիեզերական խտացումներ ունի, որոնք համատիեզերական տրոգոավտոեգոկրատական գործընթացի նպատակներով նախատեսված են զիլնոտրագոյի նյութերի փոխակերպման և ճառագայթման համար. ուստիև մեր «Քարնակ» տիեզերանավի ուղղագիծ անկումն այդ համակարգի միջով հազիվ թե հնարավոր լինի առանց արգելքների: Ամեն դեպքում ես կաշխատեմ ինչ-որ կերպ բավարարել Ձերդ Գերապատվության արտահայտած ցանկությունը:

Այսքանն ասելուց հետո նավապետը վեր կացավ, ակնածալից պատիվ տվեց Բեհեղգեբուղին և դուրս գնաց:

Երբ տիեզերանավի նավապետը հեռացավ այնտեղից, որտեղ նստած էին Բեհեդգերուդն ու իր ազգականները, Հասեինը վազեց պապիկի մոտ և, առաջվա պես նստելով նրա ոտքերի մոտ, սկսեց խնդրել Բեհեդգերուդին, որ պատմի այն մասին, թե ինչ պատահեց նրան, երբ նա մեկնեց Երկիր մոլորակի այն մեծ հանրության մայրաքաղաքից, որը Սանկտ-Պետերբուրգ էր կոչվում:

ԳԼՈՒԽ ԼԶ

Եվս մի քիչ գերմանացիների մասին

Բեհեդգերուդը սկսեց այսպես.

– Սանկտ-Պետերբուրգից ես նախ ճամփա ընկա դեպի, այսպես կոչված, Սկանդինավյան երկրները և այդ երկրներում շրջելուց հետո բնակություն հաստատեցի ժամանակակից Էսկների «Գերմանիա» կոչվող խմբավորման գլխավոր հավաքատեղում:

Այս ասելով և շոյելով Հասեինի գանգուր մազերը՝ Բեհեդգերուդը բարեհամբույր, բայց, այսպես կոչված, խորամանկ ժպիտով շարունակեց.

«Եվ այսպես, զավակս, կամենալով քեզ որոշակի պատկերացում տալ այդ ժամանակակից եվրոպական խմբավորման էսկների յուրահատուկ հոգեկառույցի վերաբերյալ՝ ես այս անգամ մի փոքր կփոխեմ իմ սովորական մատուցման ձևը, այսինքն՝ պարզաբանման նպատակով քեզ զանազան մանրամասների ծանոթացնելու փոխարեն քեզ այնպիսի խնդիր կառաջադրեմ, որի լուծումը նախ՝ սպառիչ կերպով քեզ համար պարզ կդարձնի հատկապես այդ եվրոպական խմբավորման էսկների հոգեկառույցի յուրահատկությունը, և երկրորդ՝ քո մտածողության համար իդեալական մարզում կլինի:

Այդ օրիգինալ խնդիրը, որը ես պատրաստել եմ քեզ համար, այն է, որ դու ակտիվ մտորման ճանապարհով հանգես այն տրամաբանական տվյալներին, որոնց համախմբությունը քեզ համար կբացահայտի այն պատճառի բուն էությունը, թե ինչու հատկապես այդ եվրոպական խմբավորման էսկների մոտ, իրենց, այսպես կոչված, «Ֆատերլանդի» որ մասին էլ իրենք պատկանելիս լինեն, առաջանում է մի անմեղ սովորույթ, համաձայն որի՝ եթե նրանք ինչ-որ տեղ հավաքվում են ինչ-որ տոն նշելու կամ պարզապես, այսպես կոչված, «խրախճանք» անելու համար, ապա անփոփոխ կերպով միևնույն արտակարգ օրիգինալ երգն են երգում, որը հենց իրենք են հորինել հետևյալ բառերով.

*Blodsinn, Blodsinn,
Du mem Vergnugen,
Stumpfsinn, Stumpfsinn,
Du meine Lust.*

Այսպիսով, զավակս, եթե քեզ հաջողվի ինչ-որ բան քաղել դրանից, ապա քո ընդհանուր ներկայության համար ամբողջովին կիրականանա մեր սիրելի ուսուցիչ մոլլա Նասրեդինի այն իմաստուն ասույթը, որը նա արտահայտում է հետևյալ բառերով. «Ամենամեծ երջանկությունը հաճելին օգտակարի հետ համատեղելու ունակությունն է»:

Դա քեզ համար հաճելի կլինի այն պատճառով, որ դու իդեալական մարզում կստանաս քո ակտիվ մտածողության համար, և օգտակար՝ այն պատճառով, որ դու շատ լավ կհասկանաս Երկրի վրա բազմացող և քո հետաքրքրությունը շարժած այն եռուղեղ էակների հոգեկառույցի առանձնահատկությունը, որոնք պատկանում են այդ եվրոպական ժամանակակից խմբավորմանը:

Քանի որ, ինչպես մի անգամ արդեն քեզ ասել եմ, այդ ժամանակակից խմբավորման էակներն ուղիղ գծով հինավուրց հույների տեղապահներն են՝ նրանց «ամեն տեսակի «գիտություններ» հորինելու» առումով, և էլնելով այն բանից, որ իմ առաջադրած խնդրից քո արած հետևությունները կարող են տրամագծորեն հակառակ լինել համադրական-տրամաբանական հնարավորություններին, ապա ես հարկ եմ համարում մի փոքր օգնել քեզ և լրացուցիչ տեղեկություններ հաղորդել երկու փաստերի վերաբերյալ:

Առաջին փաստն այն է, որ այդ երգի որոշ բառեր ոչ մի ուրիշ լեզվում իրենց համարժեքը չունեն՝ չնայած քո այդ մոլորակն իր բազմաթիվ լեզուների պատճառով *«բազմալեզու հիդրա»* է անվանվում: Իսկ երկրորդ փաստն այն է, որ երբ այդ խմբավորման էակների համար, ինչպես ժամանակին հին հույների համար, վերջնականապես բնորոշ դարձավ զանազան չարաղետ միջոցների հորինումը, այսպես կոչված, *«տրամաբանական լինելիական մտածողության»* «կազմաքանդման» համար, որն արդեն իսկ բավականին կազմաքանդված էր, նրանք, մնացած ամեն ինչից զատ, իրենց լեզվի համար հորինեցին նաև մի, այսպես կոչված, *«քերականական կանոն»*, ըստ որի նրանք միշտ, նույնիսկ հիմա, ցանկացած «կարծիքների փոխանակման» ժամանակ ժխտական մասնիկ են ավելացնում հաստատումից հետո. օրինակ՝ նրանք միշտ, փոխանակ ասելու, «Ես դա չեմ ուզում», ասում են «Ես դա ուզում եմ ոչ»:

Այդ քերականական կանոնի պատճառով կարծիքների փոխանակման ընթացքում զրուցակիցը նախ այն գաղափարն է ստանում, որը ենթակա է իրականացման, և այդ եղանակով նրա ներսում պետք է տեղի ունենա որոշակի *«լինելիական դիարողություն»*, կամ, ինչպես իրենք կասեին, որոշակի «ապրում», և միայն դրանից հետո վերջում, ըստ քերականական օրենքի, նրանք արտաբերում են իրենց նշանավոր «nicht»-ը. ուստի ամեն անգամ դրա արդյունքում նրանց ընդհանուր ներկայություններում կուտակվում է այն, ինչն իր ամբողջության մեջ, թեև դանդաղ, բայց հաստատուն կերպով իրողություն է դարձնում իրենց հոգեկառույցի այդ նշածս «յուրահատկությունը», իսկ այդ փաստը քեզ պետք է որ հնարավորություն տա լուծելու այն օրիգինալ խնդիրը, որը ես առաջադրեցի քեզ:

ԳԼՈՒԽ ԼԷ Ֆրանսիա

Բեհեղգերուղը շարունակեց պատմել.

«Գերմանիայից հետո իմ գոյատևման վայրը կարճ ժամանակով կրկին այնտեղ էր՝ Եվրոպա աշխարհամասում՝ «Իտալիա» կոչվող հանրության էակների միջավայրում. իսկ Իտալիայից հետո՝ այն հանրության էակների միջավայրում, որը Ռուսաստան կոչվող հանրության էակների համար, այսպես կոչված, «աղբյուր» էր այն «արատին» հագուրդ տալու համար, որը վերջին դարերի երկրային եռուղեղ էակների աննորմալ սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում վաղուց է ամրապնդվել և կոչվում է «ներշնչվողություն». ասելս այն է, որ ես բնակություն հաստատեցի Ֆրանսիա կոչվող հանրության էակների միջավայրում:

Իսկ հիմա, զավակս, այդ ֆրանսիացի եռուղեղ էակների հոգեկառույցի առանձնահատուկ կողմերի մասին ես ուզում եմ քեզ պատմել այնպես, որ դու միաժամանակ կարողանաս քեզ համար պարզել, թե որքանով է ընդհանրապես Երկիր մոլորակի քեզ դուր եկած այդ եռուղեղ էակների մոտ արդեն այլասերվել բոլոր *լինելիական նախադրյալների* բյուրեղացման նորմալ հնարավորությունը՝ անկողմնակալ ու ինքնուրույն մտածելու կարողության իմաստով, և թե ինչպես է ներկայումս նրանց մոտ երբեմն ամբողջ իրականության նկատմամբ ձևավորվում սուբյեկտիվ *լինելիական կարծիք*, որը

լիովին հակառակն է այն բանի, ինչը հարկ է, որ ձևավորվեր այդ իրականության անմիջականորեն իրենց անձնական տպավորություններից ստացված ընկալումից:

Կարծում եմ՝ լավ կլինի, որ հենց նոր ասածիս պարզաբանման համար որպես օրինակ դիտարկենք հենց այդ ֆրանսիացի էակներին:

Բանն այն է, որ ներկայումս բոլոր խմբավորումների էակների մոտ, որոնք բազմաձև են Եվրոպա աշխարհամասում, որտեղ այժմ կենտրոնացված է իրենց, ինչպես իրենք են ասում, «կուլտուրական գոյությունը», ինչպես նաև բոլոր մյուս աշխարհամասերում, պատասխանատու էակներ դառնալու հենց ամենասկզբում անխուսափելիորեն այնպիսի նախադրյալներ են ձևավորվել այդ ֆրանսիացի էակների անհատականությունների վերաբերյալ, որոնք նրանց մոտ լիովին որոշակի կարծիք են առաջացնում այն մասին, որ իրենց մոլորակի բոլոր իրենց նման էակների մեջ ֆրանսիացիները, ինչպես իրենք են ասում, «ամենաայլասերված» և «ամենաանամոթ» էակներն են:

Մինչև այդ, այսինքն՝ նախքան իմ կողմից Ֆրանսիա հանրությունն իմ մշտական բնակության վայր ընտրելը, իմ ընդհանուր ներկայության մեջ հենց այդպիսի պատկերացումներ էին ձևավորվել նրանց մասին, քանի որ երբ շրջում էի ամենուրեք և ապրում այն ամեն տեսակի խմբավորումների էակների շրջանում, որոնք ներկայումս գոյություն ունեն քո այդ մոլորակի մակերևույթի ցամաքային մասի համարյա բոլոր վայրերում, բոլոր զրույցների ընթացքում ես հաճախ էի նման կարծիք լսում այդ ֆրանսիացի էակների մասին:

Թեև նախկինում, ինչպես արդեն ասել եմ քեզ, ես երբեմն լինում էի այդ Ֆրանսիա կոչվող հանրությունում, սակայն այդ նախկին այցելություններիս ժամանակ ես հատուկ ուշադրություն չէի դարձնում այնտեղի էակների հոգեկառույցի առանձնահատկություններին և այն կարծիքին, որը հաստատվել է համարյա բոլոր մյուս հանրությունների էակների մոտ:

Սակայն այս անգամ, երբ ես բնակություն հաստատեցի գավառական մի քաղաքում, և իմ ներկայությունն, իհարկե, բնագոյաբար նախապատրասվեց տպավորություններ ընկալելու տեղական եռուղեղ էակների «անբարոյական» և «այլասերված» դրսևորումներից, ես, ի մեծագույն զարմանս ինձ՝ նախ և առաջ համոզվեցի, որ ոչ մի նման բան չեմ ընկալում:

Ավելի ուշ, երբ սկսեցի հաղորդակցվել նրանց հետ և նույնիսկ ընկերացա նրանցից մի քանիսի և նրանց ընտանիքների հետ, իմ ներսում ոչ միայն ապարդյուրեղացվեցին նրանց մասին եղած «մեխանիկական կարծիքները», այլ նաև սկսեցին *«անհրաժեշտ լինելիական նախադրյալներ»* բյուրեղանալ, որպեսզի պարզեմ այն բանի պատճառը, թե ինչու են մնացած հանրությունների էակների մոտ այնպիսի նախադրյալներ բյուրեղացվել, որ իրականությանը չհամապատասխանող նման կարծիք ձևավորվի այդ էակների վերաբերյալ:

Այս ամենն օրեցօր ավելի ու ավելի էր հետաքրքրում ինձ, քանի որ, նրանց միջավայրում գոյատևելով, աստիճանաբար համոզվում էի, որ այդ հանրության էակները ոչ միայն ամենաայլասերվածներն ու ամենաանբարոյականները չեն, այլև, ընդհակառակը՝ պարզվեց, որ նրանք Եվրոպա աշխարհամասում խմբավորված եռուղեղ էակների մեջ «ամենաավանդապաշտ» և «ամենահամեստ» էակներն են:

Ուստի ես սկսեցի հատուկ դիտարկել և համապատասխան տվյալներ հավաքել, որպեսզի ինձ համար պարզեմ այդ ժամանակակից երկրային հարցը:

Քանի դեռ այդ գավառական քաղաքում էի, ես չկարողացա ոչինչ պարզել, բայց հետո, երբ ինձ վիճակվեց ուղևորվել այդ ֆրանսիացի էակների մայրաքաղաքը, այնտեղ հենց առաջին օրվանից, այդ թյուրիմացության հիմնական պատճառներն աստիճանաբար սկսեցին պարզ դառնալ իմ բանականության համար:

Այդ պատճառների պարզվելուն այն ժամանակ նպաստեցին ինչպես իմ անկողնակալ դիտումներն ու մտորումները, այնպես էլ հետևյալ փաստերը:

Երբ ես այդ անգամ ուղևորվեցի «Փարիզ» կոչվող մայրաքաղաքը, որն, իմիջիայլոց, ներկայումս քո այդ մոլորակի բոլոր աշխարհամասերում բազմացող ժամանակակից եռուղեղ էակների *լոգիկնեստարային բյուրեղացումներում* արդեն հիմնովին դարձել է իրենց երևակայական կուլտուրայի այնպիսի կենտրոն, ինչպիսիք Սամիոս, Քուռկալա, Բաբելոն և այլ քաղաքներն էին նախկին դարաշրջանների էակների համար, ես երկաթուղային կայարանից անմիջապես գնացի այն հյուրանոցը, որը դեռևս Բեռլին քաղաքում խորհուրդ էր տվել իմ այնտեղի ծանոթներից մեկը:

Առաջին բանը, որ նկատեցի, այն էր, որ այդ հյուրանոցի բոլոր ծառայողներն օտարերկրացիներ էին, որոնք խոսում էին հիմնականում անգլերեն լեզվով, այն դեպքում, երբ վերջին ժամանակներս, պարզվում է, այդ նույն հյուրանոցի բոլոր ծառայողները խոսում են միայն ռուսերեն:

Այդ ժամանակակից Սամվոս ժամանելուս հաջորդ օրը ես ջանացի հանդիպել մի էակի, որը պատկանում էր Պարսկաստան կոչվող հանրությանը, և որին ուղղված երաշխավորական նամակ ունեի իմ լավ ընկերներից մեկից, որը գոյատևում էր նշված հանրությունում:

Իմ այդ նոր ծանոթը՝ պարսիկ էակը, ինձ առաջարկեց նույն օրվա երեկոյան իր հետ գնալ, այսպես կոչված, «Կապուցինների ճեմափողոցը» և նստել այն ժամանակ նշանավոր «Գրանդ Կաֆեում»:

Այդ «Գրանդ Կաֆեում» մենք նստեցինք բազմաթիվ սեղաններից մեկի մոտ, որոնք զբաղեցրել էին, ինչպես այնտեղ՝ Փարիզում է ընդունված, մայթի կեսը:

Ինչպես արդեն քեզ ասել եմ, սրճարանները Եվրոպա աշխարհամասի էակների համար նույն նպատակին են ծառայում, ինչ «չայխանները» այն էակների համար, որոնք բնակվում են Ասիա աշխարհամասում: Միակ տարբերությունն այն է, որ «Ասիա» կոչվող աշխարհամասում ըմպելու համար կարմրավուն հեղուկ են մատուցում, որը քամում են այնտեղ լավ հայտնի մի ծաղկից, այն դեպքում, երբ այստեղ՝ Եվրոպա աշխարհամասում, թեև այդ հաստատություններում նույնպես ըմպելու հեղուկ են մատուցում, բայց այն ոչ միայն, առաջին հերթին՝ կատարելապես սև է, այլ նաև, երկրորդ՝ այդ հաստատության տիրոջից բացի ոչ ոք չի իմանում, թե ինչից է քամված:

Մենք այնտեղ սկսեցինք խմել մեզ մատուցված այդ սև հեղուկից, որը «սուրճ» է կոչվում:

Ես նկատեցի, որ այստեղ նույնպես այդ «Գրանդ Կաֆեի» ողջ աշխատակազմը, կամ, ինչպես իրենք են այստեղ ասում, «մատուցողները», ուրիշ խմբավորումների էակներ են՝ գլխավորապես այն եվրոպական հանրությանը պատկանող, որն «Բուալիա» է կոչվում:

Հարկ է, որ իմանաս, որ ընդհանրապես Փարիզ քաղաքի այդ հատվածում՝ «արտասահմանցիների Փարիզում», առևտրական ամեն մի գործ Եվրոպայի կամ ուրիշ աշխարհամասերի որևէ հանրության էակների մասնագիտությունն է:

Եվ այսպես, նստելով այդ նշանավոր «Գրանդ Կաֆեում», կամ, ավելի ճիշտ՝ այդ «Գրանդ Կաֆեի» դիմացի փողոցում, մենք սկսեցինք դիտել մեր կողքով անցնող հասարակությանը՝ «Գրանդ Կաֆեի» դիմացի մայթով անցնող և զբոսնող էակներին:

Զբոսնողների ամբոխի մեջ կային ինչպես Եվրոպա աշխարհամասի, այնպես էլ մյուս աշխարհամասերի համարյա բոլոր առանձին խմբավորումներից եկած էակներ՝ գլխավորապես, իհարկե, այն հանրություններից, որոնց հարուստ լինելու հերթն էր հասել այդ ժամանակահատվածում. այնուհանդերձ ամբոխում գերակշիռ թիվ էին կազմում Ամերիկա աշխարհամասի էակները:

Ամերիկա աշխարհամասի էակները վերջին ժամանակներս այնտեղ՝ Փարիզում, արդեն վերջնականապես փոխարինել են Ռուսաստան կոչվող մեծ հանրության էակներին այն բանից հետո, երբ այդ հանրությունը «փլուզվեց»:

Այնտեղ զբոսանքի էին դուրս եկել գլխավորապես իշխող դասին պատկանող էակներ, որոնք հաճախ էին ժամանում, ինչպես իրենք են ասում, «աշխարհի մայրաքաղաք», որպեսզի «տրվեն գվարճաքներին»:

Նրանց մեջ շատ կային նաև առևտրականներ, որոնք Փարիզ էին եկել, այսպես կոչված, «նորաձև ապրանքների», գլխավորապես՝ օձանելիքի և կանացի արդուզարդի համար:

Կապուցինների ճեմափողոցում զբոսնող բազմագույն ամբոխի մեջ կարելի էր տեսնել նաև շատ երիտասարդների, որոնք այդտեղ էին հասել «նորաձև պարեր» և «նորաձև գլխարկ դնել» սովորելու համար:

Երբ մենք զրուցում և դիտում էինք մարդկանց այդ խայտաբղետ ամբոխը, որոնց դեմքերը բավականություն էին արտահայտում իրենց նվիրական երազանքի իրականանալուց, իմ նոր ծանոթ երիտասարդ պարսիկը հանկարծ շրջվեց իմ կողմը և, մատնացույց անելով անցնող մի գույզի, զարմանքով բացականչեց.

- Տեսնե՛ք, տեսնե՛ք, ահա իսկական ֆրանսիացիներ...

Ես նայեցի և տեսա, որ այդ գույզն իսկապես խիստ նման է այն էակներին, որոնց տեսել էի այդ Ֆրանսիա կոչվող հանրության գավառական քաղաքներում:

Երբ այդ գույգն անհետացավ ամբոխի մեջ, մենք սկսեցինք դատողություններ անել՝ փորձելով հասկանալ, թե ինչու է այդ իսկական ֆրանսիացիների գույգը հայտնվել իրենց «մայրաքաղաքի» այդ հատվածում:

Տարբեր ենթադրություններ անելուց հետո մենք հանգեցինք միասնական կարծիքի, որ այդ գույգը հավանաբար ապրում է իսկական ֆրանսիական Փարիզի մի առանձին մասում և գնացել է, որ մասնակցի իրենց հարազատների ինչ-որ մի ընտանեկան հանդիսության, որոնք ապրում են ֆրանսիական Փարիզի մի ուրիշ մասում, որը գտնվում է իրենց բնակության վայրի հակադիր կողմում:

Հավանաբար այդ հանդիսության ժամանակ նրանք մի լավ խմել են և տուն վերադառնալու համար ոչ թե շրջանցիկ ճանապարհն են ընտրել, այլ որոշել են ուղիղ ճանապարհով գնալ: Եվ այդ ուղիղ ճանապարհն էլ ակներևաբար անցնում է հենց «Գրանդ Կաֆեի» մոտով:

Գուցե թե միայն այդ պատճառով էին այդ իսկական ֆրանսիացիները հայտնվել Փարիզի այդ մասում:

Մենք զրուցում և շարունակում էինք դիտել զբոսնող մարդկանց ամբոխը, որոնք հագնված էին նորաձևության վերջին խոսքով:

Թեև նրանց մեծ մասն այդպես էին հագնված, սակայն ամեն ինչից զգացվում էր, որ այդ հագուստեղենը հենց նոր է գնվել՝ այսօր կամ երեկ. ուշադիր դիտելուց և նրանց դեմքերն իրենց հագուկապի հետ համեմատելուց հետո կարելի էր առանց կասկածի նշույլի համոզվել, որ իրենց տանն ունեցած սովորական գոյատևման ընթացքում նրանք հազվադեպ են հնարավորություն ունեցել այդպես ճոխ հագնվելու և իրենց անհոգ զգալու:

Երբ այդ «եկվոր արտասահմանցի արքայազնների» շարքում, ինչպես նրանց անվանում են «տեղաբնակներից» ումանք, «խուռներամ» անցան նաև ամեն տեսակի այնպիսի արտասահմանցի «երկու սեռերին պատկանող արհեստավարժներ», որոնք արդեն «կլիմայափոխվել էին» Փարիզի այդ մասում, իմ նոր ծանոթ երիտասարդ պարսիկն առաջարկեց լինել իմ «փարիզյան չիչերոնեն» և ուղեկցել ինձ դեպի, այսպես կոչված, «Փարիզի անառականոցները», որպեսզի տեսնենք ֆրանսիական «այլասերվածությունը»:

Ես համաձայնեցի այդ առաջարկին, և այդ «Գրանդ Կաֆեից» սկզբում գնացինք մերձակայքում գտնվող «հասարակաց տունը»:

Այնտեղ ես նախ և առաջ իմացա, որ այդ «բարեհամբավ հիմնարկի» տերը մի իսպանացի է:

Այդ տան սենյակներում շատ կանայք կային՝ «լեհուհիներ», «հունգարուհիներ», «իտալուհիներ» և նույնիսկ երկու «նեգրուհի»:

Ես այդ միջավայրում ուզում էի իսկական ֆրանսուհիների տեսնել, բայց իմ հարցուփորձից պարզվեց, որ այդ հիմնարկում ոչ մի ֆրանսուհի չկա:

Այդ հասարակաց տնից մենք նորից վերադարձանք ճեմափողոց և սկսեցինք թափառել՝ դիտելով զբոսնող խայտաբղետ ամբոխը:

Այստեղ նույնպես մեծ թվով իգական սեռի էակների տեսանք, որոնց վրայից ակնհայտ երևում էր, թե որն է այդ զբոսարաններում նրանց «գիշերային փնտրտուքի» նպատակը:

Բոլոր այդ կանայք պատկանում էին արդեն նշածս ազգություններին, որոնց կարող եմ հավելել ևս մի քանիսը՝ «շվեդուհիներ», «անգլուհիներ», «ռուսներ», «իսպանուհիներ», «մոլդավուհիներ» և այլն, բայց նրանց մեջ հազիվ թե գոնե մեկ իսկական ֆրանսուհի լիներ:

Շուտով մեզ սկսեցին մոտենալ կասկածելի արտաքինով արական սեռի էակներ՝ առաջարկելով մասնակից դառնալ «մեծ իշխանի շրջագայությանը»:

Սկզբում ես չհասկացա, թե ինչ է նշանակում «մեծ իշխան» ասածը, բայց հարցուփորձից պարզվեց, որ այդ տարօրինակ բառակապակցությունը բոլորովին վերջերս է այնտեղ որոշակի իմաստ ստացել՝ հենց այն ժամանակից, երբ այդտեղ բարգավաճում էր ներկայումս հանգուցյալ «միապետական Ռուսաստանը»:

Պարզվեց, որ այն ժամանակվա այնտեղի շունչը փչած Ռուսաստանի իշխող դասակարգին պատկանող էակները շատ են սիրել «աշխարհի մայրաքաղաքը» և հաճախակի եկել են այդտեղ. և համարյա նրանցից ամեն ոք, «պարծենկոտությունից» դրդված, ներկայացել է որպես տիտղոսավոր անձ, ինչպես օրինակ՝ «կոմս», «բարոն» կամ «իշխան», բայց առավել հաճախ՝ «մեծ իշխան»: Եվ քանի որ բոլոր նրանք պարտադիր կերպով «այցելություններ» են կատարել դեպի «արտասահմանցիների

Փարիզի» անառականոցները, ապա արհեստավարժ էքսկուրավարներն այժմ նման «էքսկուրսիաներն» անվանում են *tournee du Grand Duc*, ինչը թարգմանաբար նշանակում է «մեծ իշխանի շրջագայություն»:

Գտնելով մի այդպիսի էքսկուրսավարի՝ մենք նույնպես ճամփա ընկանք դիտելու այդ ժամանակակից Քուռկալայի գիշերային «տեսարժան վայրերը»:

Մենք եղանք այդ զանազան «որջերում», «համաստեռամոլների» սրճարանում, «լեսբուհիների» ակումբում և այն բազմաթիվ «արատների բուժարաններում», որոնցում զանազան աննորմալություններ են կատարվում, որոնք ժամանակ առ ժամանակ կրկնվում են այդ թշվառների բոլոր «կուլտուրական կենտրոններում»:

Այցելելով կասկածելի համբավ ունեցող այդ վայրերը, մենք ի վերջո հասանք, այսպես կոչված, «Մոնմարտրի» նշանավոր փողոցները՝ ոչ այնքան բուն Մոնմարտրի, այլ այդ անունը կրող շրջանի լանջերի ստորոտներին, որոնցում լիովի տեղաբաշխված են ամեն տեսակի գիշերային վնասակար «վատահամբավ հաստատություններ», որոնք նախատեսված են ոչ թե բուն Ֆրանսիա կոչվող հանրության էակների, այլ բացառապես մյուս անկախ խմբավորումներից այդտեղ հավաքված էակների՝ ինչպես իրենք են ասում, «արտասահմանցիների» համար:

Այդ բազմաթիվ կասկածելի հաստատություններից բացի այնտեղ նաև շատ գիշերային ռեստորաններ կան, որոնք նույնպես նախատեսված են արտասահմանցի հյուրերի համար և բաց են ամբողջ գիշեր:

Սովորաբար այդ շրջանում կյանքը եռում է միայն գիշերը. իսկ ցերեկվա ընթացքում, ինչպես իրենք են ասում, «մեռյալ վիճակ է», և ոչ մի արտասահմանցի հյուր այդ ժամերին այնտեղ չի հայտնվում:

Բոլոր այդ ռեստորաններում այսպես կոչված «բաց բեմահարթակներ» կան, որտեղ ցուցադրվում են տարբեր «զարմանահրաշ բաներ», որոնց հեղինակներն, այսպես ասած, իրենց նման էակներն են, որոնք պատկանում են այդ մոլորակի մակերևույթի տարբեր մասերում գոյություն ունեցող հանրություններին:

Այնտեղ ցուցադրվում է աֆրիկյան էակների «պորտապար», կովկասցիների «դաշույններով պար», «մուլատների»՝ իրենց օձերով, մի խոսքով, այն ամենը, ինչն այդ սեզոնի «մոդայիկ նորույթների» շարքին է պատկանում:

Բայց այն, ինչ նրանք ցուցադրում են «մոնմարտրյան թատրոններում»՝ որպես իրենց մոլորակի մյուս աշխարհամասերում բազմացող իրենց նման էակներին բնորոշ, ոչ մի ընդհանուր բան չունի այն ամենի հետ, ինչ ես իրականում տեսել եմ՝ ամենուրեք ապրելով և հենց տեղում մեծ հետաքրքրությամբ դիտելով ու ուսումնասիրելով ամեն մի առանձին վայրում ապրող էակներին հատուկ դրսևորումները:

Վերջին ժամանակներում այդ Մոնմարտրում բացվել են չափազանց շատ, այսպես կոչված, «զուտ ռուսական ռեստորաններ». ինչպես այդ զուտ ռուսական ռեստորաններում, այնպես էլ մյուս ռեստորաններում, այսպես կոչված, «արտիստները» կամ «դերասանները» հենց այդ մեծ Ռուսաստան կոչվող հանրությանն են պատկանում՝ գլխավորապես այնտեղի նախկին իշխող դասակարգի ներկայացուցիչների թվից:

Պետք է նշել և քո ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ այդ ժամանակակից «Մոնմարտրի կաբարետների» «արտիստների» կամ «դերասանների» հայրերն ու պապերը ոչ շատ վաղ անցյալում իրենց, այսպես կոչված, «գյուղացիական քրտինքի» շնորհիվ այցելելով այդ նույն Մոնմարտրի տարբեր հաստատությունները, քմծիծաղով էին վերաբերվում ուրիշ հանրությունների էակների անձնական արժանապատվությանը և վիրավորում այն, իսկ հիմա իրենց որդիներն ու թոռներն են ստորացվում և դառնում ուրիշ հանրությունների, այսպես կոչված, «հաստ քսակներով» էակների «տհասնամուսական քմահաճույքների» բավարարման օբյեկտները:

Իրերի նման վիճակի վերաբերյալ նույնպես մեր իմաստուն մոլլա Նասրեդինը մի իմաստուն ասույթ ունի, որն ասում է.

«Եթե հայրը սիրում է սահել թեկուզ մանկական սահնակով, ապա որդին անպայման պետք է պատրաստվի մեծ սահնակներ սարի գագաթ հանելու»:

Երբ հիշյալ նոր պարսիկ ընկերոջս հետ նստած էի այդ ռեստորաններից մեկում, նրան իրենց մոտ կանչեցին ինչ-որ ուրիշ ծանոթներ, և ես մենակ մնացի շամպայնի շշի հետ, ինչը պատվիրելը Մոնմարտրի ռեստորաններում երեկոյան ժամերին ընդհանրապես պարտադիր է»:

Իր պատմության այս մասում Բեհեդգեբուղը խոր հառաչ արձակեց և շարունակեց.

«Այս պահին, երբ պատմում եմ այն երեկոյի մասին, որը Մոնմարտրի այդ ռեստորանում անցկացրի քեզ դուր եկած Երկիր մոլորակում բազմացող ժամանակակից եռուղեղ էակների շրջապատում, իմ ներսում ակամա արթնացավ նույն այն *«լինելիական սարպիտիմնյան»⁵⁷ ապրումը*», որը ես զգացի այն ժամանակ, և հիմա՝ այս պահին, այդ ապրումի հիշողությունն այնքան ուժեղ ու բազմակիորեն է միանում իմ ընդհանուր ներկայության բոլոր երեք ոգեկոչված մասերին, որ ես ստիպված եմ շեղվել սկսած նյութից, որպեսզի քեզ հետ կիսեմ այն ցավալի ու ապշեցուցիչ մտորումները, որոնք ես ունեցա՝ մոնմարտրյան այդ ահավոր իրադրությունում մենակ մնալով, երբ հիշյալ երիտասարդ պարսիկը, որը հանձն էր առել իմ փարիզյան չիչերոնեն լինել, հեռացավ ինձնից:

Այն ժամանակ իմ ամբողջ գոյատևման ընթացքում երկրորդ անգամ իմ էության ներսում ընթացավ այդ *լինելիական սարպիտիմնյան ապրման* գործընթացը, որն իմ ընդհանուր ներկայության մեջ վրդովմունք ծնեց մեր Բարձրագույն, Սրբագնացույն Տիեզերական Անհատների անհետատեսության այն տարբեր դեպքերի և դրանցից բխած բոլոր այն օբյեկտիվ դժբախտությունների նկատմամբ, որոնք եղել են արդեն և գուցե էլի կլինեն այդ Երկիր մոլորակի վրա, ինչպես նաև մեր ամբողջ Մեծ Տիեզերքում:

Ախր, ինչպե՞ս կարելի էր տիեզերական խտացումների ներդաշնակ շարժումների հաշվարկներում հաշվի չառնել, որ Կոնդուր մոլորակը կարող է բախվել այդ չարաղետ Երկիր մոլորակին...

Եթե նրանք, ովքեր պարտավոր էին, կանխատեսեին դա, ապա հետագա բոլոր դժբախտ հետևանքները, որոնք բխում էին մեկը մյուսից, տեղի չէին ունենա, և կարիք չէր զգացվի այդ չարաղետ մոլորակի առաջին եռուղեղ էակների ներկայություններում տեղադրելու իրենց համար վնասակար կոնդաբուֆեր օրգանը, որը հանգեցրեց հետագայի բոլոր ողբալի ու ահավոր հետևանքներին:

Ճիշտ է՝ ավելի ուշ, երբ դրա կարիքն այլևս չկար, նրանց համար վնասակար այդ օրգանը ոչնչացվեց, սակայն վերնինները կրկին չկանխատեսեցին, որ այդ օրգանի ոչնչացմամբ չի վերանում նաև այն հնարավորությունը, որ ապագայում դրա հատկությունների հետևանքները էակների որոշակի կենսակերպի պատճառով կբյուրեղացվեն նրանց հետնորդների ներկայություններում:

Այլ կերպ ասած՝ նրանք երկրորդ անգամ չկանխատեսեցին, որ թեև այդ օրգանը հնարավոր է ոչնչացնել, բայց այնուհանդերձ մնում է Յոթնապարապարշինող Տիեզերական հիմնական օրենքը՝ իր «Մտնել-Ին»-ով, այսինքն՝ երկրիր մոլորակի եռուղեղ էակների էվոլյուցիոն գործընթացը, որ նմանապես գործում է ամբողջ տիեզերքի համայն գոյի համար:

Հատկապես հենց այդ երկրորդ՝ համարյա հանցավոր «անհետատեսության» հետևանքով է այնտեղ ստեղծվում եռուղեղ էակների համար ահավոր այդ իրավիճակը, երբ, մի կողմից՝ ինչպես մեր Մեծ Տիեզերքի եռուղեղ էակների, այնպես էլ նրանց ընդհանուր ներկայություններում առկա է *«բարձրագույն լինելիական մարմինները»* հանդերձավորելու հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ կոնդաբուֆեր օրգանի՝ իրենց համար բնորոշ դարձած զանազան հետևանքների բյուրեղացումների պատճառով նրանց համար համարյա անհնարին է դարձել, որ իրենց ներսում հանդերձավորվող բարձրագույն սրբազան մասերը հասցնեն կատարելության պահանջված աստիճանին: Իսկ քանի որ, ըստ համատիեզերական օրենքների՝ այնպիսի կազմավորումը, ինչպիսին նրանց *«բարձրագույն լինելիական մասն»* է, որը հանդերձավորվում է եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, չի քայքայվում մոլորակներում, և քանի որ էակների մոլորակային մարմինը մոլորակներում չի կարող հավերժ գոյատևել և նրանց հետ հարկ եղած ժամանակ պետք է անխուսափելիորեն տեղի ունենա սրբազան Ռասկուարնոյի գործընթաց, ապա նրանց դժբախտ բարձրագույն մարմինները, որոնք գոյանում են երկրային եռուղեղ էակների մոտ, անխուսափելիորեն նույնպես հավերժ պետք է տառապեն հնարավոր ամեն տեսակի արտաքին մոլորակային ձևերի մեջ:

Մոնմարտրի այդ ռեստորանում մենակ նստած՝ ես նայում էի այնտեղ հավաքված ժամանակակից քո սիրելիներին և շարունակում մտորել.

«Քանի՞ դար է անցել այն ժամանակից ի վեր, երբ ես սկսել եմ դիտել այս չարաղետ մոլորակի եռուղեղ էակներին...

Այդ երկար հարյուրամյակների ընթացքում Վերնից նրանց մոտ են առաքվել շատ Սրբազան Անհատականություններ, որոնք հատուկ նպատակ են ունեցել օգնելու նրանց, որպեսզի ազատվեն

⁵⁷ ռուս. տարբերակում՝ сарпитимное, անգլ. տարբերակում՝ sarpitimnian

կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից, այնուհանդերձ այստեղ ոչինչ չի փոխվել, և սովորական լինելիական գոյատևման ամբողջ գործընթացը մնացել է նախկինը:

Այդ ամբողջ ժամանակի ընթացքում ոչ մի տարբերություն չի առաջացել ժամանակակից եռուղեղ էակների և այն եռուղեղ էակների միջև, որոնք այստեղ գոյատևել են իրենց ժամանակով համարյա հարյուր դար առաջ:

Արդյոք այստեղ նստոտած էակները նույնպիսին չե՞ն, և նույնքան անարժան ձևով չեն պահում իրենց, ինչպես Ատլանտիդա աշխարհամասի Սամլիոս քաղաքի էակները, որն այն ժամանակվա բոլոր եռուղեղ էակները համարում էին «*իրենց բանականության կատարելագործման իմաստով՝ նվաճումների արդյունքների կենտրոնացման աղբյուր և վայր*» (կամ, ինչպես կասեին այստեղի ժամանակակից էակները՝ «*կուլտուրայի գլխավոր կենտրոն*»), որտեղ ես նույնպես նստել եմ այնտեղի իրենց «սակրոպիականերում», ինչպես այն ժամանակ կոչվում էին նմանատիպ ռեստորանները:

Եվ Ատլանտիդայի կործանումից հետո էլ, երբ շատ դարեր էին անցել, և ես գտնվում էի Ասիա աշխարհամասի Քուռկալա քաղաքում՝ իրենց նոր *կուլտուրական կենտրոնում*, որն այն ժամանակվա Թիքլամիշ կոչվող հինավուրց մեծ հանրության մայրաքաղաքն էր, երբեմն նրանց միջավայրում նստելով իրենց կրթարաններում, որոնք նույնպես նման էին ժամանակակից ռեստորաններին, արդյոք վկա չէի՞ դառնում նույնպիսի «տեսարանների»...

Ահա իմ դիմաց երկու փողոցային կանանց հետ նստած այս գեր ժամանակակից պարոնը, որի վզին այլածին գոյացություն կա... Եթե նրան «կափիրի» կոստյում հագցնենք, արդյոք ճշգրիտ նման չի՞ լինի հենց այն տիպին, որին ես այն ժամանակ տեսել եմ Քուռկալա քաղաքի կրթարաններից մեկում:

Կամ ահա այն մեկը՝ ձախ կողմի մի ուրիշ սեղանի մոտ նստած երիտասարդը, որն իր ծղրտան ձայնով բաժակակցին համոզիչ տոնով բացատրում է ինչ-որ հանրությունում տեղի ունեցող անկարգությունների պատճառները. գլուխը ծածկեք «չամբարդախով», և արդյոք նա ճշգրիտ նման չի՞ դառնա իսկական, ինչպես այն ժամանակ էին ասում, «*սարի կլիանի*»:

Իսկ այն բարձրահասակ պատկառազոր պարոնը, որն, անկյունում միայնակ նստած, աչքով է անում հարևան խմբում ամուսնու հետ նստած դամային... արդյոք իսկական «վերունկ» չե՞:

Իսկ այս մատուցողները, որոնք պոչները քաշած շների պես սպասարկում են այստեղ նստած մարդկանց, արդյոք «*ասկլանյան ստրուկներ*» չե՞ն:

Երբ Թիքլամիշից շատ դարեր անց ինձ վիճակվեց լինել իրենց հոյակերտ Բաբելոն քաղաքում, արդյոք ք այնտեղ էլ այս նույնը չտեսա. արդյոք ք Բաբելոնի եռուղեղ էակներն էլ նույնպիսի ասկլաններ, կափիրներ, վերունկներ կամ կլիաններ չէին:

Փոխվել են միայն նրանց հագուստներն ու ազգությունների անվանումները:

Բաբելոնյան ժամանակներում նրանք կոչվում էի «ասորիներ» «պարսիկներ» «սկիփացիներ», «հագարացիներ» և ուրիշ տարբեր «-ացիներ»:

Այո ... Եվ ահա կրկին՝ այսքան դար անցնելուց հետո, ես նորից այստեղ եմ՝ Փարիզ քաղաքում, որն իրենց ժամանակակից *կուլտուրայի կենտրոնն* է:

Եվ էլի նույն բանն եմ տեսնում... Ճշգներ, աղմուկ, քրքիջ, հայհոյանք... Ճիշտ այնպես, ինչպես Բաբելոնում, Քուռկալայում և նույնիսկ Սամլիոսում՝ իրենց առաջին *կուլտուրական կենտրոնում*:

Արդյոք ներկայիս եռուղեղ էակները միասին չեն հավաքվում, որպեսզի ժամանակ անցկացնեն եռուղեղ էակին ոչ սազական ձևով՝ ճիշտ այնպես, ինչպես գոյատևման բոլոր նախկին դարաշրջաններում իրենց ժամանակն անց էին կացնում այդ թշվառ մոլորակի նախկին եռուղեղ էակները:

Եվ այն ամբողջ ժամանակի ընթացքում, ինչ ես դիտում եմ այս թշվառականներին, ոչ միայն անհետ չքացել են իրենց բազմաթիվ *կուլտուրական կենտրոնների* ամբողջական ժողովուրդներ, այլ նաև ցամաքի այն հատվածները որոնց վրա նրանք բնակվում էին, կա՛մ կատարելապես փոխվել են, կա՛մ երկրի երեսից չքացել են, ինչպես եղել է, օրինակ, Ատլանտիդա աշխարհամասի հետ:

Սամլիոսից հետո նրանց երկրորդ կենտրոնը դարձավ «Գրաբոնգի» աշխարհամասը: Արդյոք ք այն ժողովուրդները, որոնք այն բնակեցնում էին, Աֆրիկայից չեն անհետացել նույն ձևով: Եվ եթե բուն աշխարհամասը չի վերացել, ապա ամեն դեպքում այն վայրը, որտեղ գտնվում էր նրանց կենտրոնը, այժմ այնպես է ծածկվել ավազներով, որ, բացի այսպես կոչված «Մահարա» անապատից, այնտեղ հիմա ոչինչ չկա:

Նորից շատ դարեր անցան, և նրանց կենտրոնը կազմավորվեց Թիքլամիշում: Ի՞նչ է մնացել դրանից, բացի անապատներից, որոնք այժմ «Կարմիր ավազներ»⁵⁸ անունն են կրում:

Եթե, ասենք, նախկինում նշանավոր որևէ ժողովուրդ ապրել է մինչև իր հազարերորդ սերունդը, ապա այժմ նա լրիվ անկման վիճակում իր գոյությունը քարշ է տալիս իր բնակության նախկին վայրից ոչ շատ հեռու ինչ-որ տեղ:

Հետո էլի հարյուրամյակներ անցան:

Ես տեսել եմ նրանց Բաբելոն կոչվող կենտրոնը: Այսօր ի՞նչ է մնացել այդ երբեմնի իսկապես հոյակերտ Բաբելոնից. բուն քաղաքից ընդամենը մի քանի քար և նախկինում մեծ ժողովուրդների ոչ մեծ մնացորդներ, որոնք թեև շարունակում են գոյատևել, բայց ժամանակակից էակները նրանց համարյա բանի տեղ չեն դնում:

Իսկ ի՞նչ կկատարվի նրանց ժամանակակից կուլտուրական կենտրոնի՝ Փարիզ քաղաքի և դրա շուրջն ապրող ներկայիս հզոր ժողովուրդների՝ ֆրանսիացիների, գերմանացիների, անգլիացիների, հոլանդացիների, իտալացիների, ամերիկացիների և այլոց հետ՝ ապագա հարյուրամյակները ցույց կտան:

Առայժմ անկասկած է միայն մեկ բան. *«բարձրագույն լինելիական մարմինների»* այդ դժբախտ սաղմերը, որոնք ծագել էին և էլի շարունակում են ծագել այստեղի որոշ եռուղեղ էակների մոտ, ստիպված են, ինչպես արդեն ասել եմ քեզ, «տառապել» հնարավոր ամեն տեսակի աննորմալ ձևերի ներկայություններում, որոնց իրականացումը բնորոշ է դարձել այդ Երկիր կոչվող չարաղետ մոլորակին այն անօրինաչափ հետևանքների պատճառով, որոնք մեր որոշ *Բարձրաստիճան Գերսրբազնագույն Համատիեզերական Անհատականությունների* հեռատեսության պակասի հետևանքն են:

Ես դեռ խորասուզված էի իմ էության համար թախծալի այսպիսի մտորումների մեջ, երբ ինձ մոտ վերադարձավ իմ նոր ընկերը՝ երիտասարդ պարսիկը:

Եվս մի փոքր նստելով այդ ռեստորանում, որտեղ արդեն չափազանց աղմկոտ ու տոթ էր դարձել՝ մենք որոշեցինք գնալ մի ուրիշ ռեստորան, որն էլի այդ Մոնմարտրում էր գտնվում:

Բայց երբ վեր կացանք, որպեսզի դուրս գանք, մեր կողքին նստած խմբի էակները, մեր զրույցից լսելով այն նոր տեղի մասին, ուր մենք մտադրվել էինք գնալ, դիմեցին մեզ և խնդրեցին իրենց հետ նստել նույն սեղանի շուրջ, որպեսզի հետո իրար հետ միասին գնանք այնտեղ, ուր մենք պատրասվում էինք գնալ: Նրանք մեզ խնդրեցին սպասել, մինչև որ գա իրենց ընկերներից մեկը:

Պարզվեց, որ մեր այդ նոր ծանոթները Ամերիկա աշխարհամասից են:

Թեև այդ ռեստորանն ավելի ու ավելի անտանելի էր դառնում, և ուժեղանում էր հարբած ձայների աղմուկը, այնուամենայնիվ մենք սկզբում համաձայնեցինք սպասել նրանց ընկերոջը. բայց դահլիճի հեռավոր անկյունում էակներից մեկն իր խմբի անդամներից մեկի գլխին շամպայնի շշով հարվածեց, ինչպես պարզվեց, այն բանի պատճառով, որ վերջինս չէր համաձայնել իր հետ միասին խմել ինչ-որ մի կառավարության վարչապետի կենացը, այլ դրա փոխարեն անապայման ուզեցել էր խմել *«տուգուրական սուլթանի»* կենացը:

Այդքանից հետո մենք ամերիկացիներից մեկի հետ, որն այլևս չուզեց սպասել բացակա ընկերոջը, գնացինք ուրիշ ռեստորան:

Ավելի մոտ ծանոթությունից պարզվեց, որ այդ ամերիկացին կենսուրախ, դիտողականություն և խոսելու հետ սեր ունեցող եռուղեղ էակ է:

Ամբողջ ճանապարհին և հետո էլ մեր գնացած նոր տեղում նա ամբողջ ժամանակ խոսում և ծիծաղացնում էր մեզ գլխավորապես նրանով, որ շատ հմտորեն բացահայտում էր այն մարդկանց ծիծաղելի կողմերը, որոնց մենք հանդիպում էինք, և որոնք նստած էին այդ նոր ռեստորանում:

Հետագա հարցուփորձից պարզվեց, որ այդ ամերիկացին նորաձև պարերի մեծ դպրոց ունի այնտեղ՝ Փարիզում:

Իր գործի մասին բոլոր նրա պատմածներից ես հասկացա, որ նրա դպրոցի աշակերտները բոլորն անխտիր ամերիկացի էակներ են, որոնք գլխավորապես ուսանում են ամերիկացիների սիրած պարերից մեկը՝ «ֆոքստորտը»:

⁵⁸ Կըզըլ-Կում անապատը Միջին Ասիայում

Ես նաև հասկացա, որ այդ ֆոքստրոտ կոչված պարը զուտ ամերիկյան ծագում ունի և լայն մասսայականություն է վայելում այնտեղ՝ Ամերիկայում:

Ահա թե ինչու, երբ մենք միասին շամպայնի նոր տեսակ էինք ընտրում, և այդ ուրախ ամերիկացին մի պահ ընդհատեց իր շաղակրատանքը, ես նրան հարցրի.

– Ասացե՛ք խնդրեմ, հարգելի սրբ, եթե այդպես է, ինչու՞ եք դուք ձեր դպրոցը բացել ոչ թե այնտեղ՝ Ամերիկայում, այլ այստեղ՝ Փարիզում, որն այդքան հեռու է ձեր հայրենիքից՝ այդ «եկամտաբեր» ֆոքստրոտ պարի «սկզբնավորման» վայրից:

– Օ՛, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում,– անկեղծ զարմացական տոնով բացականչեց նա,– չէ՞ որ ես մեծ ընտանիք ունեմ... Եթե իմ դպրոցը բացեի իմ հարազատ երկրում, ապա ոչ միայն իմ ընտանիքը սովից կմեռներ, այլև ես չէի կարողանա Նյու-Յորքում նույնիսկ մի խոնավ սենյակ ձարել, որպեսզի վատ եղանակին պատսպարվեի սառնաշունչ հյուսիսային քամիներից: Իսկ այստեղ՝ Փարիզում, փա՛ռք աստծու, շատ կան ֆոքստրոտ սովորել ցանկացողներ և լավ էլ վճարում են դրա համար:

– Բայց ես չեմ հասկանում,– ընդհատեցի ես,– դուք հա՛մ ասում եք, որ ձեր աշակերտները բոլորն անխտիր ձեր հայրենակիցներն են, որոնք եկել են այստեղ, հա՛մ էլ միաժամանակ ասում եք, որ ձեր հայրենիքում ոչ ոք չէր հաճախի ձեր դպրոցը: Ինչպե՞ս հասկանալ դա:

«Բանն էլ հենց այդ է,– պաասխանեց հարգաբաժան ամերիկացին:– Դրա պատճառը մի փոքրիկ հոգեբանական տարօրինակություն է, որը մեկն է այն բազմաթիվ յուրահատուկ տարօրինակություններից, որոնցից գոյանում է իմ հայրենակիցների հիմարությունը:

Բանն այն է, որ հիմա իմ դպրոցը գտնվում է Փարիզում, որին Ամերիկայի «խելոքները» «ժամանակակից Բաբելոն» են անվանում:

Այդ ժամանակակից Բաբելոնը մեծ հոչակ ունի ամերիկացիների շրջանում, և բոլոր նրանք իրենց պարտքն են համարում անպայման լինել աշխարհի այդ մայրաքաղաքում:

Ամեն ամերիկացի, երբ մի քիչ փող է հավաքում, անպայման գալիս է այստեղ:

Իմիջիայլոց, դուք պետք է իմանաք, որ Ամերիկայում փող կուտակելն այնքան էլ հեշտ գործ չէ: Միայն այստեղ՝ Եվրոպայում են կարծում, թե ամերիկյան դոլարները համարյա թե ցրիվ են տված փողոցներում: Իսկ իրականում, կրկնում եմ, այնտեղ ապրողներն այնքան էլ հեշտ չեն վաստակում դրանք: Ամեն մի ցենտը պետք է վաստակել սեփական քրտինքով:

Մեզ մոտ՝ Ամերիկայում, բոլորովին չեն վճարում զանազան երևութական արժեքների համար, ինչպիսիք են փառքը, հանրաճանաչությունը, տաղանդը և այլն, ինչպես վճարում են այստեղ՝ որոշ եվրոպական երկրներում:

Օրինակ՝ եթե այստեղ՝ Եվրոպայում, ասենք, որևէ նկարիչ երբևէ մի լավ նկար է նկարել և դրանով փառքի արժանացել, ապա հետո ինչ աղբ էլ որ ստեղծի, հասարակությունը միշտ բարձր գին է տալիս այդ աղբի համար միայն այն պատճառով, որ այն պատկանում է «հանրաճանաչ» նկարչի վրձնին:

Իսկ մեզ մոտ՝ Ամերիկայում, գործերի վիճակն այլ է. ամեն ինչ արվում է փողի համար, և ամեն մի առանձին գործ գնահատվում է իր չափերով և կշռով: Անուն ունենալը, տաղանդը, հանճարը մեզ մոտ էժան ապրանքներ են համարվում, և Ամերիկայում դոլարները մեծ դժվարությամբ են ձեռք բերվում:

Բայց, ի բարեբախտություն ինձ, մեր ամերիկացիները շատ ուրիշ թուլություններ ունեն, որոնցից մեկն էլ «Եվրոպան տեսած լինելու» կիրքն է:

Այդ կրքից դրդված՝ յուրաքանչյուր ամերիկացի, երբեմն նույնիսկ իրեն զրկելով անհրաժեշտ բաներից, ձգտում մեծ չարչարանքով ձեռք բերված դոլարները կամաց-կամաց կուտակել, որպեսզի հնարավորություն ունենա Եվրոպա մեկնելու, և առաջին հերթին, իհարկե, «աշխարհի մայրաքաղաք» Փարիզ:

Ահա սա է առաջին պատճառը, որ իմ հայրենակիցներին այստեղ, ինչպես ասում են, «թիվ ու համար չկա»: Իսկ երկրորդ պատճառն այն է, որ ամերիկացիները ևս մի թուլություն ունեն՝ սնափառությունը. նրանց երևակայությունը շոյում է այն, որ մարդիկ կասեն, որ իրենք ֆոքստրոտ պարել են սովորել ոչ թե ինչ-որ մի Ֆիլադելֆիայում կամ Բոստոնում, այլ հենց Փարիզում, որտեղից ամբողջ Երկիր մոլորակի համար սկիզբ են առնում մոդայիկ նորություններ. Իսկ քանի որ ֆոքստրոտն էլ է մոդայիկ նորույթ, ապա նրանց համար «փարիզյան ֆոքստրոտը», այսպես ասած, քաղաքակրթության վերջին խոսքն է:

Ահա և մեր ամերիկացիների վրա ազդող այդ երկու խթանիչների շնորհիվ, ես՝ խեղճ պարուսույցս, միշտ բավարար քանակի ամերիկացի աշակերտներ եմ ունենում, որոնք լավ վճարում են ինձ:

Ճիշտ է, ֆրանկներով են վճարում և ոչ՝ դոլարներով, բայց դե, փող փոխողներն էլ պետք մի բան վաստակեն՝ նրանք էլ ընտանիք ունեն։

Այս բացատրություններից հետո ես նրան հարցրի.

–Ասացե՛ք ինձ խնդրեմ, իմ սիրելի սը՛ր, իսկ հնարավո՞ր է արդյոք, որ ձեր հայրենակիցներն այստեղ՝ Փարիզ գան միայն այն բանի համար, որ սովորեն ձեր ֆոքստրոտը պարել:

«Ինչո՞ւ միայն ֆոքստրոտ,– պատասխանեց նա,– այդ ընթացքում նրանք նաև շրջում են Փարիզում և նրա արվարձաններում, երբեմն էլ բավականին հեռու են գնում: Կարճ ասած՝ նրանք այդ ընթացքում «ուսումնասիրում են» Եվրոպան:

Նրանք «այցելում» և «ուսումնասիրում են» Եվրոպան, որպեսզի, ինչպես այնտեղ՝ մեզ մոտ են ասում, «ավարտին հասցնեն իրենց դաստիարակությունն ու կրթությունը». բայց, մեր մեջ ասած, դա այն արտահայտություններից մեկն է, որոնք թութակի պես կրկնում են նրանք, ովքեր հավակնում են իսկական անգլիացիներ կոչվելու, այն դեպքում, երբ իրականում իմ հայրենակիցները գալիս են Փարիզն ու Եվրոպան տեսնելու, որպեսզի բավարարություն տան իրենց թուլությանը՝ սնամիառությանը:

Գալիս են տեսնելու ոչ թե նրա համար, որ ավելի կրթված լինեն և ավելի շատ տեղեկություններ ստանան, այլ որ կարողանան տանը գուլի գովել իրենց ծանոթների հետ զրուցելիս, որ իրենք եղել են Եվրոպայում և այնտեղ տեսել են այս, այս և այս բաները:

Դրա համար այստեղ՝ Եվրոպայում, ամեն մի հարմար վայրում բացված են «Բուկ և որդի» կոչվող գրասենյակի մասնաճյուղեր, որոնք շատ լավ բավարարում են նրանց հենց այդ պահանջմունքը, և, իհարկե, այստեղ՝ Փարիզում էլ կա այդ մասնաճյուղերից մեկը:

Եվ ահա իմ սիրելի հայրենակիցները ոչխարների հոտի պես հավաքվում են մի քանի տասնյակ հոգիանոց խմբերով, և այդ «սուրիստների» ամեն մի խումբը նստում է, այսպես կոչված, «Բուկի ավտոբուսը» և մեկնում այնտեղ, ուր տանում են:

Բուկի այդ ավտոբուսում «վարորդից» բացի լինում է նաև մեկը, որին «*Բուկի քնկոտ տիպ*» են ասում:

Այդ նշանավոր Բուկի ավտոբուսի երթի ընթացքում այդ «*քնկոտ տիպը*» ժամանակ առ ժամանակ թույլ ձայնով հայտնում է վայրերի և Փարիզի ու նրա արվարձանների զանազան պատմական ու ոչ պատմական տեսարժան վայրերի անվանումները, որոնք թութակի պես անգիր է արել՝ ըստ այն «ուղեցույցի», որը Բուկն է կազմել: Մի խոսքով, ահա այդպես են իմ հայրենակիցներն «ուսումնասիրում» Եվրոպան:

Այդ «*քնկոտ տիպերը*» շատ թույլ ձայն ու թոքախտավորի տեսք են ունենում, քանի որ սովորաբար շատ են հոգնում և քունները կարգին չեն առնում. հավանաբար դա բացատրվում է նրանով, որ նրանցից շատերը գիշերները ինչ-որ ուրիշ գործ էլ են անում փող աշխատելու նպատակով, որպեսզի այնքան վաստակեն, որ «Բուկ և որդի» գրասենյակից ստացած չնչին աշխատավարձի հետ մեկտեղ կարողանան կերակրել իրենց ընտանիքը, քանի որ հատկապես Փարիզում ընտանիք պահելն այնքան էլ հեշտ գործ չէ:

Իսկ այն, որ իմ հայրենակիցները համարյա ոչինչ չեն լսում այդ «*քնկոտ տիպերի*» թույլ ձայնով ասածներից, առանձնապես որևէ նշանակություն չունի: Նրանց համար մեկ է, թե ինչ կասի այդ *քնկոտ տիպը*, և ինչ ձայնով, քանի որ իրենց բոլորովին պետք չէ մանրամասներ իմանալ իրենց տեսածի վերաբերյալ: Նրանց համար էական չէ այն, թե ինչ են տեսնում, և որն է դրա նշանակությունը. կարևորը «փաստն» է, որ իրենք եղել են այդտեղ և ընդհանուր առմամբ «ամեն ինչ տեսել են»:

Նրանք լրիվ բավարարվում են այդքանով, քանի որ հետագա զրույցի ժամանակ ազատորեն և «մաքուր խճողով» կարող են ասել, որ եղել են այս և այս տեղերում, և մնացած ամերիկացիները կմտածեն, որ այդ բաները պատմողը ոչ թե ինչ-որ էջի քամակ է, այլ եղել է Եվրոպայում ամենուրեք և տեսել է բոլոր այն «տեսարժան բաները», որոնք պարտավոր է տեսած լինել ամեն մի ժամանակակից «կրթված» մարդ:

Ե՛հ, սիրելի սըր... Դուք կարծում եք, թե միայն ե՞ս եմ այսպես ապրում՝ օգտվելով իմ հայրենակիցների «տխմարությունից»:

Ես ի՞նչ եմ որ... փոքր մարդ՝ ընդամենը պարուսույց:

Իսկ դուք ուշադրություն դարձրի՞ք այն հաստիկին, որը նստած էր ինձ հետ նախորդ ռեստորանում: Ասեմ ձեզ՝ նա իսկական «շնածուկ» է: Իմիջիայլոց, Ամերիկայում այդպիսիները շատացել են, հատկապես՝ վերջին ժամանակներում:

Այդ հաստիկը ամերիկանացված անգլիական հրեա է, շատ հայտնի ու պատկառելի ամերիկյան մի ֆիրմայի գլխավոր փայտեր:

Այդ ֆիրման իր մասնաճյուղերն ունի Ամերիկայի շատ քաղաքներում, ինչպես նաև Եվրոպայում, և ռեստորանում ինձ հետ նստած այդ հաստիկն այդ ֆիրմայի փարիզյան մասնաճյուղի տնօրենն է:

Այդ ֆիրման ոչ միայն առատ փող է շփում՝ օգտվելով իմ հայրենակիցների հիմարությունից, այլև, դժբախտաբար, դրան հավելում է նաև իր սեփական ոչ քիչ «սրիկայությունները»:

Եվ նրանք այդ «շիլափլավը» եփում են հետևյալ կերպ. ֆիրմայի տեղական մասնաճյուղն ամերիկյան մեթոդներով իրեն լավ գովազդելուց հետո լայնորեն հայտնի է դարձել իմ հայրենակիցների շրջանում, ուստի նրանցից շատերը՝ կրկին հագուրդ տալով իրենց «սնափառությանն» ու մյուս թուլություններին, որոնք բնորոշ են, իմիջիայլոց, այնպիսի էակներին, ինչպիսիք մեծ մասամբ իմ հայրենակիցներն են, մշտապես իրենց նորաձև հագուստները պատվիրում են հենց այստեղի մասնաճյուղին, որն էլ «աշխարհի մայրաքաղաքից» նրանց է առաքում «իսկական ֆրանսիական մոդելներ»:

Ամեն ինչ արվում է «մաքուր ու ազնվաբար»՝ ժամանակակից առևտրական գործարքների բոլոր կանոններով՝ «եռակի հաշվապահության» և «վարսավիրության» հիման վրա:

Իսկ ինչ վերաբերում է տարբեր ամերիկյան «շնածկների» հիմնադրած այդ մեր ամերիկյան «լուրջ ֆիրմայի», այսպես ասած, «ներքին խոհանոցին», ապա այդ «շնածկները» հենց այստեղ են թալանում բոլորին, որպեսզի լցնեն իրենց սեփական անտակ գրպանները:

Երբ այդ փարիզյան մասնաճյուղը անմիջականորեն փոստով պատվեր է ստանում իր ամերիկացի՝ հաճախորդներից, այդ պատվերն ուղի ի՞նչ գնում հասնում է գերմանական մասնաճյուղ, որտեղ Գերմանիայում, հումքն ու աշխատուժը անհամեմատ էժան են, քան այստեղ՝ Փարիզում. գերմանական մասնաճյուղը հանգի ի՞ստ կատարում է «փոստային պատվերը» «փարիզյան նորաձևության» բոլոր կանոններով, որից հետո է՛լ ավելի հանգիստ իր արտադրանքի վրա կպցնում է «փարիզյան պիտակ» և ապա շոգենավով Համբուրգի վրայով ուղի ի՞նչ ուղարկում է նյու-յորքյան մասնաճյուղին, որտեղից էլ հաճախորդը ստանում է իր պատվիրածը՝ երջանկանալով ու հպարտանալով, որ վաղը ոչ թե «ինչ-որ բան» կգցի իր վրա, այլ իսկական «փարիզյան շրջագգեստ» կհագնի, որը հենց Փարիզում է կարված՝ «նորաձևության վերջին ճիշդով»:

Հատկապես հետաքրքիր է այն, որ ոչ ոք չի բողոքում այդ «պատկառելի ֆիրմայի» «հանձնաժողովից», ընդհակառակը, իրերի նման վիճակը բոլորի համար «հարմար» է, «հեշտ» ու «շահավետ»: Նրանց այդ «առևտրական գործարքներից» նույնիսկ ֆրանսիացիներն են շահում՝ «աշխարհի մայրաքաղաքի» տերերը. ճիշտ է, նրանք շահում են այնքանով, որքանով եկամուտ են ստանում փոստային այն դրոշմանիշներից, որոնք պատվիրատուի և փարիզյան մասնաճյուղի նամակագրության ընթացքում սոսնձվում են ծրարների վրա:

Ինչպես տեսնում եք, բոլորը գոհ են ու բավարարված, և նույնիսկ եկամուտ են ստանում. իսկ կարևորն այն է, որ դրանով արդարացվում է քաղաքատնտեսության՝ ոչ բոլորի կողմից ընդունվող այն դրույթը, որ առանց միջազգային ապրանքափոխանակության երկրները չեն կարող գոյատևել:

Իսկ ես ո՞վ եմ, որ... Ընդամենը խեղճ պարուսույց...»:

Այդ զվարթ ամերիկացին պատրաստվում էր էլի ինչ-որ բան ասել, բայց այդ պահին ռեստորանի հարևան դահլիճում աղմուկ բարձրացավ, և լսելի դարձան այնտեղ նստած տղամարդկանց ու կանանց հուսահատ ճիչերը: Մենք դուրս եկանք և միայն փողոցում իմացանք, որ «Բսպանիա» կոչվող հանրության իգական սեռին պատկանող ինչ-որ մի էակ «կուպորոս» էր լցրել մի ուրիշ, էլի իգական սեռին պատկանող էակի երեսին, որը «Բելգիա» կոչվող հանրությունից էր: Պատճառն այն էր եղել, որ վերջինս ծխախոտատուփի էր նվիրել «Վրաստան» կոչվող հանրությանը պատկանող մի տղամարդու, իսկ այդ ծխախոտատուփի վրա փորագրված է եղել «Միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու»՝ այն դեպքում, երբ մինչ այդ օրն այդ տղամարդը Փարիզում գոյատևելիս է եղել առաջին կնոջ հաշվին:

Երբ մենք փողոց դուրս եկանք, արդեն շատ ուշ էր. արդեն սկսում էր լուսանալ, և մենք, հրաժեշտ տալով այդ զվարճախոս ամերիկացուն, ճամփա ընկանք դեպի մեր հյուրանոցները:

Այդ նշանավոր Մոնմարտրից տուն վերադառնալու ճամփին մտորելով իմ տեսածների ու լսածների շուրջ՝ ես լավ հասկացա, թե ինչու և ինչպես է ուրիշ հանրությունների պատկանող էակների մոտ այդպիսի հաստատուն կարծիք ձևավորվել այդ Ֆրանսիա կոչվող հանրության էակների մասին, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Փարիզ քաղաքի այդ հատվածում իմ տեսածների ու լսածների շնորհիվ ինձ համար պարզ դարձավ, որ ուրիշ հանրությունների էակները, ժամանելով այստեղ՝ Ֆրանսիա, նախ և առաջ հայտնվում են Փարիզի այդ և դրա նման մասերում, որոնցում առանց բացառության ամեն ինչը հատուկ նրանց համար հարմարեցված է իրենց նման օտարերկրացիների կողմից, որոնք ավելի վաղ են հայտնվել այդտեղ և տեղացիների լեզվով ավելի լավ են խոսում, քան իրենք՝ նորեկները:

Եվ քանի որ *լինելիական մտորումների* ունակությունն ընդհանրապես ժամանակակից էակների մոտ հետաձգ է ապրում, իսկ, այսպես կոչված, «*լայն լինելիական մտահորիզոնը*» բացակայում է, ապա նրանք ամեն ինչ որպես «ֆրանսիական» են ընկալում, և հետո, վերադառնալով իրենց հանրությունը, մշտապես այդտեղի էակներին պատմում են այն ամենը, ինչ իրենք տեսել ու ապրել են Փարիզի այդ մասում՝ դրանք համարելով գուտ ֆրանսիական և վերագրելով ֆրանսիացի էակներին:

Այդ եղանակով մյուս էակների մոտ ֆրանսիացիների մասին աստիճանաբար այդպիսի կարծիք է ձևավորվում, որը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը:

Բացի այդ, կա նաև մի ուրիշ, ավելի խորը պատճառ, որը հանգեցրել է ուրիշ հանրությունների էակների յուրօրինակ գիտակցություններում Ֆրանսիա կոչվող հանրության էակների նկատմամբ այդպիսի կարծիքի ձևավորմանը, և տվյալ դեպքում դա նույնպես հիմնված է նրանց ընդհանուր հոգեկառույցի մի առանձնահատկության վրա: Այդ առանձնահատկությունը նրանք ձեռք են բերում կրկին այն վնասակար ավանդույթի հետևանքով, որին իրենք «դաստիարակություն» են անվանում:

Բանն այն է, որ, ինչպես իրենք են արտահայտվում, «երեխաների լույս աշխարհ գալու» հենց առաջին օրվանից սկսած, երբ Բնությունը դեռևս շարունակում է իր գործն անել ապագա պատասխանատու էակի այդ նախասկզբնական սաղմի վրա, նրանք սկսում են իրենց այդ վնասակար «դաստիարակությամբ» խանգարել Բնության կողմից կատարվող անհրաժեշտ ձևավորման գործին:

Բայց դա դեռ բոլորը չէ: Այդ վնասակար «դաստիարակության» հետևանքով նրանք իրենց հնարավոր ամեն տեսակի վաղանցիկ-երևակայական գաղափարներով լցնում են այդ նորածին էակների, այսպես կոչված, «*սպեցիտուալիստիվային խտացումները*» կամ, ինչպես իրենք կասեին, «ուղեղները», որոնք էակների ներսում տեղադրված են ամեն տեսակի տպավորությունների ընկալման և կուտակման, ինչպես նաև գիտակցական *լինելիական ճանաչողության* արդյունքների կուտակման նպատակով, և որոնք նորածինների մոտ դեռևս լրիվ մաքուր ու առավելագույնս ընկալունակ են լինում:

Նրանց ամենամեծ դժբախտությունն այն է, որ այդ վնասակար գործընթացը նրանց մեծ մասի համար շարունակվում է համարյա մինչև այն տարիքը, երբ նրանք արդեն պետք է պատասխանատու էակներ լինեն:

Այդ ամենի արդյունքում նրանց ընդհանուր հոգեկառույցի վերոհիշյալ առանձնահատկությունը գոյանում է հետևյալ գործոններից. նախ՝ նրանց ողջ էության մեջ առկա և ակտիվ *լինելիական դրսևորումների* համար նախատեսված համարյա բոլոր գործառնությունների հանրագումարի ընդհանուր գործունեությունը կամաց-կամաց հարմարեցվում է միայն այդ կեղծ ու երևակայական գաղափարներին արձագանքներուն, և երկրորդ՝ նրանցից յուրաքանչյուրի ամբողջ ներկայությունն աստիճանաբար վարժվում է հետագա նոր արտաքին տպավորություններն ընկալելու առանց այն լինելիական գործոններից որևէ մեկի մասնակցության, որոնք սովորաբար էակների մեջ տեղակայվում են նոր ընկալումների համար. այսինքն՝ վարժվում են դրանք ընկալել միայն այդ նախկինում ներմուծված կեղծ ու երևակայական գաղափարներին համապատասխան, որոնք առկա են իրենց ներսում:

Նոր ընկալումներ ունենալու ընթացքում այնտեղի ժամանակակից եռուղեղ էակները վերջնականապես կորցնում են նույնիսկ իրենց նոր տեսածն ու լսածը որպես ամբողջություն ընկալելու բուն պահանջումները, իսկ այդ նոր տեսածն ու լսածը սոսկ խթան է ծառայում նրանց համար, այնպես որ նրանց մոտ տեղի են ունենում նախկինում իրենց մեջ ներդրված տեղեկատվության նմանազգացություններ, որոնք համապատասխանում են այդ նոր տեսածին ու լսածին:

Ահա թե ինչու, երբ քո այդ ժամանակակից սիրելիներն արդեն դառնում են պատասխանատու էակներ, ամբողջ նրանց նոր տեսածն ու լսածն իրենց կողմից ընկալվում է ինքնին ու մեքենայաբար՝ առանց իրենց *էության գործառույթներից* որևէ մեկի ջանքի մասնակցության և առանց, ինչպես արդեն ասել եմ, իրենց ներսում և իրենցից դուրս տեղի ունեցող բաները գիտակցելու ու հասկանալու բուն *լինելիական պահանջմունքի* որևէ արթնացման:

Մի խոսքով, նրանք բավարարվում են միայն այնքանով, ինչը երբևէ որևէ մեկը, գիտակցաբար թե անգիտակցաբար, ներդրել է նրանց ներսում:

Ես հուսով եմ, սիրելի զավակս, որ իմ բոլորպատմածներից հետո քեզ համար պարզ կլինի, թե հատկապես ինչու են քո այդ մոլորակում ուրիշ խմբավորումների եռուղեղ էակների մոտ տվյալներ բյուրեղացել, որ իրականությանը չհամապատասխանող այդպիսի կարծիք ձևավորվի Ֆրանսիա կոչվող առանձին խմբավորման էակների նկատմամբ:

Այսպես թե այնպես, այդ Ֆրանսիայի սովորական էակների համար մեծ դժբախտություն է եղել այն, որ մնացած առանձին խմբավորումների եռուղեղ էակներն իրենց, այսպես կոչված, «կուլտուրական դրսևորումների» համար այնտեղ ընտրել են հենց այդ հանրության մայրաքաղաքը:

Ամեն դեպքում, ես անձամբ իմ ամբողջ էությամբ խղճում եմ այդ հանրության սովորական էակներին, որ նրանց մայրաքաղաքը կամ թեկուզ դրա որոշակի մի մասը սկսել է համարվել ամբողջ քո այդ մոլորակի ժամանակակից «*կուլտուրայի կենտրոնը*»:

Կարելի է պարզապես զարմանալ, որ Ֆրանսիա կոչվող հանրության էակների մեծ մասը կարողացել է, թեկուզ և առանց իրենց գիտակցության մասնակցության, այնուամենայնիվ իրենց ներկայություններում պահպանել այն երկու *լինելիական ազդակների* նախադրյալները, որոնց վրա է գլխավորապես հիմնված օբյեկտիվ *լինելիական բարոյականությունը*, և որոնք կոչվում են «նահապետական բարքեր», այսինքն՝ ընտանիքի հանդեպ սեր և «*օրգանակ ամոթ*», չնայած այն բանին, որ նրանք շրջապատված են *լինելիական գոյատևման* այնպիսի պայմաններով, որոնք այնտեղ կատարելապես աննորմալ են դարձել՝ այն բանի հետևանքով, որ նրանց մայրաքաղաքը, ինչպես արդեն ասել եմ քեզ, դժբախտաբար սկսել է համարվել և իրականում էլ հանդիսանում է ամբողջ այդ չարաղետ մոլորակի ժամանակակից «*կուլտուրայի գլխավոր կենտրոնը*»:

Այդ ամենի հետևանքով արդեն վաղուց սովորական բան է դարձել, որ դեպի ամբողջ մոլորակի այդ ժամանակակից կենտրոնն են ձգտում բոլոր այն էակները, որոնք ամբողջովին հանձնվել են իրենց ներսում արդեն անբաժանելիորեն թագավորող «*չար Աստծուն*», որը նրանց Իդեալն է դարձել և արտահայտվում ու բնորոշվում է հետևյալ խոսքերով. «*հասնել ցանկացած լինելիական ջանքի և ցանկացած էաբուխ ձգտման պահանջմունքի լիակատար բացակայությանը*». և այդ էակները, գնալով այնտեղ՝ Ֆրանսիա, իհարկե, գիտակցաբար թե անգիտակցաբար պետք է համապատասխան բացասական ազդեցություն թողնեն ամբողջ այդ հանրության էակների վրա:

Թե որքան մեծ դժբախտություն է այդ Ֆրանսիայի սովորական էակների համար այն, որ ժամանակակից «*կուլտուրայի կենտրոնը*» գտնվում է նրանց հանրությունում, դու կհասկանաս, զավակս, եթե ես քեզ պատմեմ դրա մի հետևանքի մասին: Ես այդ մասին իմացա այն տեղեկատվությունից, որն ինձ է փոխանցվել վերջին եթերազրեերից մեկով և վերաբերում էր քո այդ մոլորակի եռուղեղ էակներին:

Պետք է ասել, որ ընդհանրապես արդեն սովորական բան է դարձել, որ երբ ամբողջ այդ մոլորակի այն էակները, որոնք ամբողջովին տրվել են, ինչպես ասացի, իրենց ներքին «*չար Աստծուն*» մղվում են դեպի այդ գլխավոր կուլտուրական կենտրոնը, ապա իրենց վնասակար գործողություններից զատ՝ նաև ահա թե ինչ են անում. պարապ մնալով՝ որպեսզի բավարարություն տան իրենց քմայքներին, նրանք զբաղվում են «*տհասնամուսության նոր ձևեր*» կամ, ինչպես իրենք են ասում, «*նոր մոդաներ*» մոգոնելով և այնտեղից դրանք ամբողջ մոլորակով մեկ տարածելով:

«Նոր մոդաներ» հորինելու տհասնամուսական այդ սովորույթը գոյություն է ունեցել նաև նախորդ քաղաքակրթությունների օրոք. թիքյամիշյան քաղաքակրթության ժամանակներում դրան «ադիաթ»⁵⁹ էին ասում, իսկ Բաբելոնի ժամանակներում՝ «հայդիա»⁶⁰:

⁵⁹ ռուս. տարբերակում՝ адият, անգլ. տարբերակում՝ adiat

⁶⁰ ռուս. տարբերակում՝ хайдиа, անգլ. տարբերակում՝ haidia

«Աղիաթը», «հայդիան» կամ «մոդաները» այն են, որ էակներն առօրյա կյանքում հորինում են լինելիական դրսևորումների գանազան եղանակներ ու միջոցներ, որպեսզի փոփոխեն և դիմակավորեն իրենց իրական արտաքինը:

Աղիաթը, հայդիան կամ մոդաները նման են մեր առօրեական լինելիական գոյատևման սովորություններին, որոնք եռուղեղ էակների կողմից հաստատվում են ամենօրյա կիրառության համար՝ հանուն էակներից անկախ և անխուսափելի արտաքին պայմանների թեթևացման, և աստիճանաբար ամենուրեք էակների կենցաղի մեջ են մտնում՝ որպես նրանց համար անհրաժեշտ ու էական պահանջմունք: Իսկ իրենց այդ հիշյալ ժամանակակից սովորությունները, նախ՝ սոսկ ժամանակավոր են և, հետևաբար, ծառայում են միայն այդ ներկա և ապագա տհասնամուսների մանր-մունր անձնական նպատակներին, ովքեր դառնում են արտառոցության աստիճանի աննորմալ ու մանրախնդիր-եսասեր. և երկրորդ՝ դրանք ոչ այլ ինչ են, քան մեքենայական բանականության արդյունք՝ հիմնված այն հարաբերական ըմբռնման վրա, որը սովորաբար այնտեղ բխում է այնտեղ հաստատում գտած սովորական լինելիական գոյատևման աննորմալ պայմաններից:

Այսպիսով, նույն այդ Փարիզում իրենց ժամանակով մեկուկես դար առաջ այնտեղի մի քանի տհասնամուսի թեկնածուներ «որոշեցին», որ իզական սեռին պատկանող էակները պետք է ման գան կարճ կտրած մազերով, և նրանց այդ վնասակար հորինվածքն այնտեղ կայծակնային արագությամբ տարածվեց արդեն հաստատված բոլոր եղանակներով ու միջոցներով:

Բայց քանի որ այդ ժամանակահատվածում այդ Ֆրանսիա կոչվող հանրության իզական սեռին պատկանող էակների մոտ դեռևս շատ ուժեղ էին պարկեշտության և նահապետականության զգացումները, ապա նրանք չընդունեցին այդ վնասակար հորինվածքը, մինչդեռ Անգլիա և Ամերիկա կոչվող հանրությունների իզական սեռին պատկանող էակները դա ընդունեցին և սկսեցին կարճ կտրել իրենց մազերը:

Դեռ ավելին, քանի որ այդ երկու հանրությունների իզական սեռի էակները սկսեցին կամավորապես իրենց զրկել այն մասից, որը Մեծ Բնությունը նախատեսել է տիեզերական նյութերի որոշակի փոխանակության համար, ապա Բնությունը առանց հապաղելու արձագանքեց դրան և սկսեց համապատասխան հետևանքներ հարուցել, որոնք, անկասկած, այնպիսի տեսք կստանան, ինչպիսին արդեն երկու անգամ եղել է այդ մոլորակի վրա. առաջին անգամ՝ «Ունեանոյում», որը հիմա «Քաֆիրստան» է կոչվում, և որտեղ հայտնվեցին «ամազոնուհիները», իսկ երկրորդ անգամ՝ Հին Հունաստանում, որտեղ ծագեց «բանաստեղծուհի Սաֆոյի պաշտամունքը»:

Այդ երկու հանրություններում՝ Անգլիայում և Ամերիկայում, կանանց մազերի կարճացումը ոչ միայն արդեն հետևանք է թողել, առաջին դեպքում՝ «սուֆրաժիստուհիների», և երկրորդ դեպքում՝ «քրիստոնեական գիտության» և «թեոսոֆների» ուսմունքների հետևորդների ի հայտ գալով, այլ նաև, երբ իզական սեռին պատկանող էակների մազերը կարճացնելու այդ տհասնամուսական նորաձևությունը տարածվեց ամենուրեք, ինչպես դու կիմանաս իմ այս պատմության շարունակությունից, ամենուրեք սկսեցին շատանալ (համաձայն իմ ստացած եթերագրի տեղեկատվության) այդ իզական սեռին պատկանող էակների հիվանդությունները, որոնք իրենք կանացի հիվանդություններ են կոչում. այսինքն՝ սեռական օրգանների գանազան բորբոքումները, ինչպիսիք են՝ վագինիտը, մետրիտը, ձվարանի բորբոքումը և այն, ինչն իրենք «քաղցկեղ» են կոչում:

Այսպիսով, զավակս, թեև այդ նորաձևությունը՝ իզական սեռին պատկանող էակների մազերը կարճացնելը, որն այդ նույն Փարիզում հորինվել է տհասնամուսական հատկություններ ունեցող էակների կողմից, սկզբում այն ժամանակ արմատներ չձգեց բուն Ֆրանսիա կոչվող հանրությունում, սակայն այն բանի հետևանքով, որ նրանց մայրաքաղաքը հավաքատեղի է դարձել ուրիշ երկրների տհասնամուսական հատկություններ ունեցող էակների համար, որոնք շարունակում են համառորեն հետևել իրենց այդ վնասակար հորինվածքին, ապա նրանք վերջ ի վերջո հաջողության հասան դրա ներդրման գործում, և Ֆրանսիա հանրության իզական սեռին պատկանող էակները նույնպես սկսեցին կարճ կտրել իրենց մազերը, և ներկայումս բոլորը վարակվել են այդ նորաձևությամբ: Ինչպես ինձ տեղակացրին այդ եթերագրով, վարսավիրների մոտ, իհարկե, գլխավորապես իրենց մայրաքաղաք Փարիզում, նրանք հիմա ստիպված են լինում հերթ կանգնել ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստան կոչվող հանրությունում վերջերս մարդիկ ստիպված էին լինում հերթ կանգնել, որպեսզի «ամերիկյան ալյուր» ստանային: Եվ վարսավիրների մոտ մազերը կտրելու կանանց այդ հախուռն ձգտման պատճառով արդեն դատական գործեր են ընթանում վարսավիրների և այդ «խուզված ոչխարների»

հայրերի, ամուսինների ու եղբայրների միջև, ինչպես նաև շատ «ամուսնալուծություններ» են տեղի ունենում:

Հետաքրքիր է, որ այնտեղի դատավորները, ինչպես հաղորդվում էր այդ եթերագրում, ամեն անգամ արդարացնում են վարսավիրներին այն հիմունքով, որ նրանց մոտ այցելած իգական սեռի էակներն արդեն տասնվեցն անց են և, հետևաբար, ըստ այնտեղի օրենքների, հասել են չափահասության տարիքին և ազատ են վարվելու այնպես, ինչպես ուզում են:

Բայց իհարկե, եթե այդ ֆրանսիացի դատավորներն ու ընդհանրապես ամբողջ մոլորակի դատավորներն իմանային, որ Տիեզերքում գործում է մի օրենք, որն առանց բացառության վերաբերում է Մեծ Տրոգովտեզգոկրատի տիեզերական նյութերի փոխակերպությանը ծառայող բոլոր կազմավորումներին, ապա անկասկած նրանք կփոխեին իրենց կարծիքը այն հասկացության նկատմամբ, որն իրենք «չափահասություն» են կոչում:

Բանն այն է, որ, ըստ այդ որոշակի տիեզերական օրենքի, բաոլոր այն առանձին անհատները, որոնց շարքին են պատկանում նաև բոլոր կեսչափմարդական իգական սեռի էակները, բոլոր այն ակտիվ տարրերի աղբյուրներ են հանդիսանում տիեզերական նյութերի փոխակերպության համար, որոնք հետագա տիեզերական գոյացություններում պետք է երկրորդ ուժի միախառնմանը ծառայեն Մեծ Սրբազան Եռամասիկապող Օրենքի գործընթացում, այսինքն՝ նրանք մշտապես կատարում են, ինչպես ասում են, «բացասող» կամ «պասսիվ» սկզբունքի դեր:

Եվ ահա, իմ կողմից հենց նոր հիշատակված այդ որոշակի տիեզերական օրենքի հետևանքով, այդ աղբյուրները, որոնք պասսիվ սկզբունքի դեր կատարելով փոխակերպում են ակտիվ տարրերը, երբեք չեն կարող ազատ լինել կամայական ինքնուրույն դրսևորումների հարցում: Ինքնուրույնություն կարող են ունենալ միայն այն աղբյուրները, որոնք փոխակերպում են ակտիվ տարրերը՝ լինելով Սրբազան Եռամասիկապողի «հաստատող» կամ «ակտիվ» սկզբունքի դերում:

Հենց այդ պատճառով էլ պասսիվ սկզբունքի դերում հանդես եկող աղբյուրները չեն կարող պատասխանատու լինել իրենց դրսևորումների համար, այսինքն՝ նրանք չեն կարող, ինչպես իրենք են ասում, «չափահաս» լինել:

Քեզ պատմելով եռուղեղ էակների այդ անկախ խմբավորման՝ Ֆրանսիայի մասին՝ բնութագրությունը լիակատար դարձնելու նպատակով քեզ պետք է ասեմ նաև, որ Ֆրանսիայում կան իշխող դասին պատկանող էակներ, որոնք նույնպես շատ «լավ միջոց» են գտել իրենց հանրության հասարակ էակների գլուխները վարելու համար, ինչպես Ռուսաստան կոչվող մեծ հանրության իշխանավոր էակներն են քաջալերում իրենց նշանավոր ռուսական օդու օգտագործումը, իսկ Անգլիա կոչվող հանրության իշխանավոր էակները նույն նպատակին հասնում են իրենց ոչ պակաս նշանավոր «սպորտի» միջոցով:

Այնուհանդերձ պետք է խոստովանել, որ թեև Ֆրանսիա կոչվող հանրության իշխանավորները նույնպես իրենց այդ «լավ միջոցով» հաջողությամբ հասնում են իրենց եսասիրական նպատակներին, բայց դրանով վնաս չեն պատճառում հասարակ էակների մոլորակային մարմիններին, ինչը չի կարելի ասել Անգլիա և Ռուսաստան կոչվող հանրությունների իշխանավոր էակների կիրառած միջոցների պարագայում:

Եվ դա դեռ բոլորը չէ. այդ միջոցներով նրանք անգիտակցաբար իրենց հանրության հասարակ էակներին տվել են և շարունակում են տալ նաև որոշակի օգուտ՝ նրանց շեղելով և ժամանակավորապես թեթևացնելով այն վատ ազդեցությունը, որը նրանք կրում են ուրիշ հանրություններից այդտեղ հավաքված ներկա և ապագա տհասամուսների թեկնածուների հորինած «մոդաներով» հրապուրվելուց, որոնց իշխանության տակ այդ Ֆրանսիա կոչվող հանրության հասարակ էակներն այժմ հայտնվել են նույնիսկ ավելի երկար ժամանակով, քան մյուս հանրությունների էակները:

Այդ «լավ միջոց» այնտեղ «տոնավաճառ» է կոչվում, և նման տոնավաճառներ ներկայումս հերթով կազմակերպվում են բոլոր քաղաքների և գյուղերի գլխավոր հրապարակներում, որոնցում մոտավորապես երկու դար առաջ տեղացի եռուղեղ էակները սովորաբար քննարկումներ էին կազմակերպում, այսպես կոչված, «կրոնական բարոյականության թեմաներով»:

Արդարությունը պահանջում է ասել, զավակս, որ այդ ֆրանսիական տոնավաճառները շատ ու շատ ուրախ վայրեր են:

Պետք է խոստովանեմ, որ ես էլ էի սիրում լինել այնտեղ և մեկ-երկու ժամ անցկացնել՝ առանց որևէ բանի մասին մտածելու:

Այդ ֆրանսիական տոնավաճառներից ամեն ինչ կարելի է ստանալ «էժան» ու «սուդ» միջոցներով:

Օրինակ՝ այնտեղ ամեն մի էակ կարող է ինչ-որ հիսուն սանտիմով մինչև լրիվ «շմեղ» «պտուկել» զանազան, այսպես կոչված, «խոզուկների», «քամելեոնների», «կետերի» և այլնի վրա, ինչպես նաև զանազան ամերիկյան և ոչ ամերիկյան գյուտերի վրա, որոնք հատուկ նախատեսված են «շմածության» հասցնելու համար:

Եթե տվյալ էակը չափազանց շուտ է ուշքի գալիս «շմեցնելու» բոլոր այդ եղանակներից, ապա նա այնտեղ կարող է, կրկին ընդամենը մի քանի սանտիմով, ինչ-որ մի շատ համեղ բան ստանալ, որը հաճախ պատրաստվում է հենց տեղում:

Ճիշտ է, այդ համեղ բաներից էակների փորերի հետ այնքան էլ լավ բաներ չեն կատարվում, բայց դա համեմատելու բան չէ այն հաճույքի հետ, որը նրանք ստանում են՝ դրանք ուտելով:

Իսկ եթե այնտեղ հասարակ էակներից որևէ մեկն ուզենա, ինչպես ասում են, «բախտը փորձել»՝ էլի մի քանի սանտիմով, նա իր այդ ցանկությունն էլ կարող է անմիջապես ի կատար ածել. նա իր բախտը կարող է փորձել ամենատարբեր եղանակներով, որոնք այնտեղ՝ Երկիր մոլորակում գոյություն ունեն «գումար խաղալ» ինչպես շահույթ ստանալու, այնպես էլ ուղղակի հաճույքի համար, և ուրիշ շատ մոլախաղերի մասնակցել, որոնք այնտեղ կարելի է տեսնել:

Կարճ ասած, բոլոր խաղերը՝ սկսած «Մոնտե-Կառլոյի պտտախաղից», վերջացրած «սնիփ-սնեպ-սնորումով»⁶¹:

ԳԼՈՒԽ ԼԸ

Կրոն

Բեհեդգեբուդը շարունակեց.

«Այժմ ես մի քիչ քեզ կպատմեմ նաև այն «խոչընդոտի» մասին, որը գլխավոր պատճառներից մեկը հանդիսացավ քո այդ դժբախտ սիրելիների հոգեկառույցի աստիճանաբար թուլանալու համար՝ այն իրենց մոտ միշտ առկա յուրօրինակ «հավատվերնողների» մասին, որոնց գործառնությունների համախմբությունն ու գործողություններն էակների ընդհանուր ներկայություններում հենց իրենք անվանում են «կրոնապաշտություն»:

Օբյեկտիվ իմաստով, նրանց հոգեկառույցի աստիճանական մեխանիկական «այլասերման» համար այդպիսի իրոք «գերվնասակար» գործոնն այնտեղ՝ այդ չարաղետ մոլորակում, ծագեց նաև այն պատճառով, որ նրանց ներսում սկսեցին բյուրեղանալ իրենց համար կործանարար նույն այդ կունդաբուֆեր օրգանի հատկությունների զանազան հետևանքները և, փոխելով արտաքին ձևը, սկսեցին փոխանցվել մի սերնդից մյուսին:

Այսպիսով, երբ մի կողմից՝ այդ բյուրեղացումների հետևանքով որոշ երկրային եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում սկսեցին ի հայտ գալ, այսպես կոչված, տհասամուսական հատկանիշների առաջին սաղմերը, որոնց արդյունքում, ինչպես բնորոշ է իրենց, այդ էակներն իրենց եսասիրական նպատակներով սկսեցին շրջապատի իրենց նման էակներին «խռովք պատճառելու» համար զանազան հորինվածքներ տարածել, որոնց թվում կային նաև ամեն տեսակի ֆանտաստիկ, այսպես կոչված, «կրոնական ուսմունքներ», և երբ մյուս կողմից՝ քո մյուս սիրելիները սկսեցին հավատ ընծայել այդ ֆանտաստիկ կրոնական ուսմունքներին և աստիճանաբար այդ բյուրեղացումների պատճառով կորցրին իրենց «առողջ բանականությունը», ապա այդ ժամանակից սկսած՝ այդ արտառոց եռուղեղ էակների գոյատևման գործընթացում մեծ քանակի «հավատվերնողներ» կամ «կրոններ» առաջացան, որոնք մեկը մյուսի հետ ոչ մի ընդհանուր բան չունեն:

⁶¹ հինավուրց թղթախաղի տեսակ

Թեև նրանց այդ բազմաթիվ տարատեսակ հավատվերնողները կամ կրոններն իրապես իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն, այնուհանդերձ դրանք կառուցված են այնպիսի կրոնական ուսմունքների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին հիմնվում են բացառապես այն օբյեկտիվ իմաստով «չարաղետ գաղափարի» վրա, որն իրենք անվանում են «Բարու ու Չարի հակադրություն», և այդ գաղափարը, խստորեն ասած՝ գլխավոր գործոնն է եղել իրենց հոգեկառույցի աստիճանական «թուլացման» համար, իսկ բոլորվին վերջերս էլ կարևոր իրադարձությունների պատճառ դարձավ «երանելի» *«Բարձրագույն լինելիական մարմինների»* կամ, ինչպես իրենք են անվանում, «հոգիների» միջավայրում, որոնք գտնվում են այն սուրբ մոլորակի վրա, դեպի ուր մենք ներկայումս անկում ենք կատարում մեր տիեզերանավով:

Կարծում եմ, որ անպայման քեզ պետք է պատմել Քավարան կոչվող այդ սուրբ մոլորակում վերջերս տեղի ունեցած դեպքերի պատմությունը՝ առաջին հերթին այն պատճառով, որ այդ իրադարձություններն ունեն համատիեզերական բնույթ և կապված են ամեն մի հարաբերականորեն անկախ կազմավորված պատասխանատու Անհատի ընդհանուր անհատականության հետ, և երկրորդ՝ այն պատճառով, որ քո «ծագումնաբանական ծառի» որոշ անդամներ ակամա պատճառ են դարձել այդ իրադարձությունների առաջացման համար:

Բայց ես այդ մասին կխոսեմ միայն իմ այս պատմության վերջում, քանի որ շատ ծանրակշիռ հիմք ունեմ դրա համար, ինչն առնչվում է քո *«լինելիական մտածողության»* զարգացման հետ: Ինչպես այդ ծանրակշիռ պատճառի, այնպես էլ այն մասին, թե ինչ դատողություններ ունեմ իմ այդ մտադրության վերաբերյալ, ամենայն հավանականությամբ ես քեզ կպատմեմ հարկ եղած ժամանակ:

Իսկ առայժմ իմացիր, որ այնտեղ՝ քեզ դուր եկած երկրային եռուղեղ էակների մոտ, միշտ գոյություն են ունեցել և հիմա էլ գոյություն ունեն մեծ քանակությամբ տարատեսակ «կրոնական ուսմունքներ», որոնց վրա էլ հենց խարսխված են իրենց տարատեսակ «կրոնները», որոնք սովորաբար առաջանում են հետևյալ կերպ:

Ես արդեն պատմել եմ քեզ, որ երբ պարզվեց, որ որոշ *Բարձրագույն Տիեզերական Անհատների* անշրջահայացության պատճառով հնարված և հետագայում նույն այդ Անհատների կողմից հեռացված կունդաբուֆեր օրգանի հետևանքների արգասիքները սկսեցին բյուրեղանալ այդ տարաբախտ եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, ինչի հետևանքով նրանց համար համարյա անհնարին դարձավ ինքնակատարելագործվելը մինչև այն Լինելիությանը հասնելը, որը հարկ է, որ ունենան եռուղեղ էակները, այնժամ մեր Ամենասիրող Համընդհանուր Հայրը բարեհաճեց նրանցից ոմանց ընդհանուր ներկայություններում, անկախ այն բանից, թե որտեղ են նրանք ծնվում՝ երբեմն-երբեմն սաղմնավորել Սրբազան Անհատի, որպեսզի վերջիններս, հասնելով իրենց պատասխանատու տարիքին և բանականություն ձեռք բերելով այդ մոլորակի եռուղեղ էակների գոյատևման ընդհանուր գործընթացում արդեն ամրապնդված պայմաններում, ճանաչեն իրականությունը և իրենց շրջապատի իրենց նման էակներին ցուցադրեն, թե իրենց ունեցած բանականությամբ ինչպես պետք է դեկավարեն իրենց ոգեկոչված մասերի գործունեությունը, որպեսզի այդպիսով ապաբյուրեղացնեն կունդաբուֆեր օրգանի արդեն բյուրեղացված հատկությունների հետևանքները, ինչպես նաև հաջողությամբ կանխեն նոր բյուրեղացումների նկատմամբ իրենց ներսում առկա նախատրամադրվածությունը:

Եվ ահա, զավակս, այն բանից հետո, երբ վրա է հասնում իրենց ներկայություններում Սրբազան Անհատի սաղմ ունեցող այդ երկրային եռուղեղ էակների սրբազան Ռասկուարնոն, կամ, ինչպես իրենք են ասում, մահը, ապա նրանց ժամանակակիցները, որպեսզի հիշեն և հաջորդ սերունդներին փոխանցեն այն ամենը, ինչ այդ սրբազան անհատները նախանշել և բացատրել են իրենց պատասխանատու տարիքին հասնելուց հետո, սովորաբար հավաքում են մեկ ամբողջության մեջ, և այդ *«մեկ ամբողջության մեջ հավաքածն»* էլ սովորաբար այնտեղ սկիզբ է դառնում ամեն տեսակի կրոնական ուսմունքների համար:

Այդ եղանակով առաջացած կրոնական ուսմունքների նկատմամբ քո սիրելիների հոգեկառույցի տարօրինակությունն այն է, որ հենց ամենասկզբից այդ ճշմարիտ Սրբազան Անհատների ասածներն ու բացատրությունները «տառաջիորեն» են հասկանում և երբեք հաշվի չեն առնում, թե ինչ հանգամանքներում և ինչ առիթով է այդ ամենն ասվել ու բացատրվել:

Դրանից գատ, երբ արդեն մի սերնդից մյուսին են փոխանցում այդ կրոնական ուսմունքները, որոնց իմաստը հենց ամենասկզբում արդեն աղավաղել են, դրանց նկատմամբ սկսում են կիրառել հետևյալ երկու գործոնները, որոնք արդեն ամրապնդվել են այդ արտառող եռուղեղ էակների ընդհանուր

գոյատևման մեջ: Առաջինն այն է, որ «*Ժամանակի հոսքի*» տվյալ շրջանում իշխանական դաս կոչվող կաստային պատկանող էակներն անհապաղ այդ կրոնական ուսմունքներին շղթայակցում են հենց իրենց համար առավել վնասակար այն «հարցը», որն այդ չարաղետ մոլորակում գոյություն ունի «*կրոնը՝ պետությանն, թե՞ պետությունը՝ կրոնի համար*» ձևակերպմամբ, և դրան համապատասխան նրանք աստիճանաբար սկսում են, զանազան հնարքներ բանեցնելով, նենգափոխել տարբեր հաստատված փաստեր, որպեսզի դրանցով արդարացնեն իրենց սեփական եսասիրական նպատակները. իսկ երկրորդ գործոնն այն է, որ այնտեղ սովորական էակներից ոմանք, իրենց աշխարհ գալու ժամանակ ծնողների մեղքով, ինչպես նաև իրենց պատասխանատու էակ դառնալու ընթացքում սեփական ընդհանուր ներկայության մեջ ստանալով ժառանգական, այսպես կոչված, «հոգեգարության» և «ձրիակերության» հատկանիշներ, որոնց պատճառով նրանք չեն ունենում և չեն կարող ունենալ *լինելիական պարտքի* դրսևորման բացարձակապես ոչ մի նախադրյալ, դառնում են, այսպես կոչված, հեղինակություններ հիշյալ եղանակով ձևավորված նոր կրոնական ուսմունքների բոլոր մանր-մունր մանրամասների հարցում և սկսում են, այսպես ասած, ծվատել, «*ինչպես ագռավներն են ծվատում բորենու դին*», այն արդեն հենց սկզբից «ծվատված» ամբողջը, ինչ խոսում ու ցույց էին տալիս Վերից ուղարկված ճշմարիտ Սրբազան Անհատները:

Կարճ ասած՝ այդ տարօրինակ մոլորակի եռուղեղ էակների մոտ, սովորական գոյատևման ընթացքում ամրապնդված հիշյալ երկու գործոնների, այսինքն՝ իշխող դասին պատկանող էակներին բնորոշ հատկանիշների և որոշ սովորական էակների հոգեգարության արդյունքն է լինում այն, որ նրանք կրոնի հիմնադրումից որոշ ժամանակ անց և դրան վերաբերող հարցերում, անկախ այն բանից, թե ինչ կրոնական ուսմունքի հիման վրա է այն ստեղծված, մշտապես բաժանվում են առանձին աղանդների. իսկ այդ նշանավոր աղանդներն էլ իրենց հերթին նորից են բաժանվում աղանդների, և այդ ամենի հետևանքով, այդ համեմատաբար ոչ մեծ մոլորակի վրա բոլոր ժամանակներում կրոնների հետ տեղի է ունենում ճիշտ նույն բանը, ինչ իրենց բազմաքանակ խոսակցական լեզուների հետ, ինչի հետ կապված մեր մեծապատիվ մոլլա Նասրեդինն այդ մոլորակն անվանել է «հազարալեզու հիդրա», իսկ այս դեպքում կանվաներ «*այլազան ինքնահաճոյացող ինքնահաճոյացումներ*»:

Այդ յուրահատուկ եռուղեղ էակների գոյատևման գործընթացը դիտելուս ընթացքում նրանցից որոշների ընդհանուր ներկայություններում Վերնից կյանքի կոչվեցին այդ Սրբազան Անհատների սաղմեր և համարյա ամեն անգամ (բացառությամբ Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշի և Նրա հետ կապված այն ամենի, ինչը բխել է Նրա սեփական Մեծագույն Աշխատանքներից), նրանց լիակատար կազմավորման և Վերնից հանձնարարված Առաքելության ավարտից հետո, երբ նրանց հետ կատարվել է սրբազան Ռասկուարնոյի գործընթացը, այնտեղի այդ յուրահատուկ էակների միջավայրում հիշյալ եղանակով մշտապես սկսել են առաջանալ այդպիսի կրոնական ուսմունքներ. այսպես, սկզբում նրանք, ինչպես ասացի, մեկ ամբողջություն են դարձնում այն ամենը, ինչ պատգամել և բացատրել են այդ Վերնից նպատակային կերպով կյանքի կոչված Սրբազան Անհատները, որպեսզի այդ ամենը և՛ հենց իրենք հիշեն, և՛ փոխանցեն հետագա սերունդներին, և իհարկե, այդ մեկ ամբողջությունը, որն ի սկզբանե նրանք հավաքում են, բաղկացած է լինում, ինչպես այնտեղ են ասում, «առանձին կտորներից». բայց հետո, երբ այդ մեկ ամբողջությունը հայտնվում է հատկապես նշած երկու տիպերի մոտ, ահա հենց այդ ժամանակ էլ նրանք սկսում են այդ ամենը, ինչպես արդեն բնորոշեցի, «ծվատել»՝ դրանից հետո բաժանվելով, այսպես կոչված, աղանդների և արդեն հենց իրենք հորինելով նոր երևակայական կրոնական ուսմունքներ. այդ ամենի արդյունքում, ամբողջ քո այդ մոլորակում միշտ այնպես է ստացվում, որ նախ՝ գոյանում են մեծ թվով կրոններ, որոնք այնքան բազմաքանակ են, որքան «ծիածանի» գույները, և երկրորդ՝ ինչպես ասում են, «*էլի նույն հին պատմությունն*» է կրկնվում:

Վերջին դարերում քո սիրելիների համամոլորակային *լինելիական գոյատևման* գործընթացում առաջացել են հարյուրավոր յուրօրինակ ու ինքնուրույն կրոնական ուսմունքներ, և դրանց բոլորի հիմքում դրված են եղել հիշյալ եղանակով առաջացած ու պահպանված ցուցումների ու բացատրությունների համակցություններ, որնք տրվել են Վերնից նպատակային կերպով կյանքի կոչված Սրբազան Անհատների կողմից:

Այդ պահպանված համակցությունների հիման վրա, որոնք տարօրինակ կերպով վերջերս ոգևորել են նրանց, և որոնցից քաղված գաղափարներով նրանք իրենց խճուկ բանականությամբ հորինել են

բոլոր իրենց նորանոր կրոնական ուսմունքները, առաջացել են հինգ կրոններ, որոնք գոյություն ունեն առ այսօր և կոչվում են այսպես.

- 1) բուդդայականություն,
- 2) հուդայականություն,
- 3) քրիստոնեություն,
- 4) մահմեդականություն
- 5) լամայականություն

Դրանցից առաջինի՝ բուդդայական կրոնի մասին ես մի անգամ արդեն պատմել եմ քեզ:

Երկրորդը՝ հուդայական կրոնը, ճշգրիտ հիմնված է, այսպես ասած, Սուրբ Մովսեսի ուսմունքի վրա. այդ անունը տրվել է ճշմարիտ Սրբազան Անհատներից մեկին, որը նպատակային ձևով կյանքի է կոչվել Վերսից:

Այդ Սրբազան Անհատը կյանքի է կոչվել պատանյակի մոլորակային մարմնի մեջ, որը սկզբնավորվել է ներկայումս Եգիպտոս կոչվող երկրում քո այդ մոլորակի մակերևույթ կատարած իմ անձնական չորրորդ այցելությունից որոշ ժամանակ անցնելուց հետո:

Այդ Սրբազան Անհատը, որին ներկայումս քո սիրելիները «Սուրբ Մովսես» են անվանում, նրանց համար շատ բան է արել և տվել է նրանց սովորական գոյատևման վերաբերյալ բազմաթիվ ճիշտ ցուցումներ. այնպես որ, եթե դրանք ընդունվեին ու նորմալ ձևով կիրառվեին, ապա նրանց համար ծայրահեղ վնասակար կունդաբուժեր օրգանի հատկությունների բոլոր հետևանքներն իրոք աստիճանաբար կապարքուրեղացվեին, և նույնիսկ կոչնչանար նոր բյուրեղացումների նկատմամբ նրանց նախատրամադրվածությունը:

Սակայն, ի դժբախտություն մեր Մեծ Տիեզերքի բոլոր քիչ թե շատ բանական էակների, նրանք աստիճանաբար սկսեցին, ինչպես արդեն իրենց բնորոշ է դարձել, այդ «նորմալություն սիրող» Սուրբ Մովսեսի բոլոր խորհուրդներին ու ցուցումներին խառնել այնպիսի մեծաքանակ, այսպես կոչված «համեմունքներ», որ հենց ինքը՝ սուրբ հեղինակը, չէր կարողանա, անգամ ամենամեծ ցանկության դեպքում, այդ նրանց կողմից ստեղծված, այսպես կոչված, բացատրությունների ու ցուցումների համակցության մեջ ճանաչել իր տվածներից գոնե ինչ-որ մի բան:

Քո սիրելիները՝ սկսած Սուրբ Մովսեսի ժամանակակիցների հենց առաջին սերնդից, հավանաբար իրենց նպատակների համար հարմար գտան այդ կրոնական ուսմունքի մեջ խցկել ամբողջ այն երևակայական ուսմունքը, որը ես արդեն նկարագրել եմ, երբ քեզ պատմում էի այն մասին, որ Աշխարհք աշխարհամասի կամ ժամանակակից Ասիայի երկրորդ խմբավորմանը պատկանող հինավուրց եռուղեղ էակներն ունեցել են Կոնյուցիոն անունով հետազայում սուրբ դարձած մի թագավոր, որն իր հպատակներին կակաչի սերմ ծամելու կործանարար սովորությունից փրկելու նպատակով, առաջինը լինելով, հորինեց իր «կրոնական ուսմունքը»:

Սուրբ Մովսեսից հետո կյանքի կոչվեց այն Սրբազան Անհատը, որը հիմնադրեց այն կրոնական դավանաբանությունը, որը ներկայիս քո սիրելիները քրիստոնեություն են կոչում:

Այդ Սրբազան Անհատը, որին քո սիրելիները «Հիսուս Քրիստոս» անունն են տվել, տղայի մարմնով կյանք է առել նույն այն եռուղեղ էակների միջավայրում, որոնց Վերին հրամանով Սուրբ Մովսեսը գատել էր Եգիպտոսի էակներից, որպեսզի նրանց առաջնորդի դեպի «Քանաանի երկիրը»:

Այդ Հիսուսից հետո նույն Ասիա աշխարհամասում կյանքի կոչվեցին ևս երկու Սրբազան Անհատներ, որոնց ուսմունքների հիման վրա առաջացան վերը թվարկված և ներկայումս գոյություն ունեցող կրոններից երկուսը:

Այդ Սրբազան Անհատներից մեկը Մուհամեդն էր, որը հայտնվեց, այսպես կոչված, արաբների միջավայրում, իսկ երկրորդը՝ Սուրբ Լաման, հայտնվեց այն էակների միջավայրում, որոնք բնակվում են Տիբեթ կոչվող երկրում:

Իմ թվարկած հինգ կրոնական ուսմունքներից առաջինը՝ բուդդայականությունը, ներկայումս տարածված է գլխավորապես Հնդկաստանի՝ նախկին Գաղտակուրիանդայի էակների միջավայրում, ինչպես նաև Չինաստան և Ճապոնիա կոչվող երկրներում:

Երկրորդ դավանաբանական ուսմունքի՝ հուդայականության հետևորդները ներկայումս ցրված են ամբողջ մոլորակով մեկ:

Իմ պատմությունների այս մասում վնաս չի լինի հիշատակել և այն պատճառը, որը հանգեցրել է այդ Մովսեսի ուսմունքի հետևորդների մոլորակով մեկ ցրիվ գալուն, քանի որ այդ բացատրությունից քեզ համար շատ լավ հակառակ կդառնա կունդաբուժեր օրգանի մի յուրօրինակ հատկությունը, որը «նախանձ» կոչվող զգացմունք է առաջացնում. նաև քեզ համար հասկանալի կդառնա, թե ինչպես այդ օրգանի ամեն մի հատկությունը, որքան էլ այն աննշան լինի, պատճառ է դառնում լուրջ հետևանքների:

Բանն այն է, որ այն էակները, որոնք դավանում էին գլխավորապես այդ Մովսեսի ուսմունքը, շատ լավ կազմակերպեցին իրենց հանրության կյանքը, և այդ պատճառով տվյալ ժամանակաշրջանի մնացած բոլոր հանրությունների էակների հոգեկառույցներում այդ մի հանրության էակների նկատմամբ սկսեց բյուրեղանալ հենց այն հատկանիշը, որը նախանձ է կոչվում:

Եվ այդ հատկանիշն այնքան ուժեղ բյուրեղացավ, որ նույնիսկ շատ հարյուրամյակներ անցնելուց հետո, երբ այդ հուդայական հանրությունն արդեն դադարել էր լավ կազմակերպված ու հզոր լինելուց, և այդ նախկինում հզոր հանրությունն ավարտեց իր գոյությունը (ինչն օրինաչափ կերպով այնտեղ տեղի է ունենում բոլոր հզոր հանրությունների հետ), ապա նրա հետևորդ էակների նկատմամբ այդ վերաբերմունքը մյուս հանրությունների էակների մոտ ոչ միայն չվերացավ, այլ նաև նրանց մեծ մասի մոտ այդ նախանձի զգացումը նույնիսկ արդեն օրգանական դարձավ:

Երրորդ կրոնը, որը հիմնված էր Հիսուս Քրիստոսի ուսմունքի վրա, շատ շուտով իր նախասկզբնական տեսքով այնքան լայնորեն տարածվեց, որ այդ մոլորակի եռուղեղ էակների համարյա մեկ երրորդ մասը դրա հետևորդները դարձավ:

Բայց հետո նրանք սկսեցին նաև «աննման Միրո» վրա հիմնված այդ կրոնական ուսմունքի «կաշին քերթել» և այն վերածեցին կրկին «աննման» ինչ-որ մի բանի, որը մեր սիրելի մուլա Նաարեդինը կբնորոշեր որպես «աննման թերասադաբուռա»⁶², Կեսբաջու⁶³ հեքիաթից»:

Իրոք որ այդ մեծ կրոնական ուսմունքի հետ ևս նրանց մոտ տեղի ունեցավ այն, որ դրա հետևորդները, ինչ-որ չնչին արտաքին մանրամասների պատճառով, բաժանվեցին տարբեր աղանդների և սկսեցին կոչվել ոչ թե պարզապես «քրիստոնյաներ», ինչպես այդ ուսմունքի առաջին հետևորդները, այլ «օրթոդոքսներ», «գեբրոդոքսներ», «իսլամիտներ», «համինոդոքսներ» և զանազան ուրիշ «-դոքսեր»:

Եվ այդ ճշմարտության ուսմունքին նրանք տարբեր եսասիրական ու քաղաքական պատճառներով սկսեցին կցմցել նախկին կրոնական ուսմունքներից վերցրած հատվածներ, ինչպես նաև այնպիսի հատվածներ, որոնք ոչ միայն ոչ մի ընդհանուր բան չունեին Հիսուսի ուսմունքի հետ, այլև երբեմն նույնիսկ հակասում էին այն ճշմարտություններին, որոնք ուսուցանում էր Աստվածային Ուսուցիչը:

Նրանք բավականին շատ բան փոխ առան Սուրբ Մովսեսի ուսմունքից, որն այդ ժամանակ արդեն հիմնավորապես աղավաղված էր. իսկ անհամեմատ ավելի ուշ՝ հենց այն ժամանակահատվածում, որին ժամանակակից էակները «միջնադար» են անվանում, այսպես կոչված «եկեղեցու հայրերը» քրիստոնեական այդ ուսմունքի մեջ համարյա ամբողջությամբ ներառան այն երևակայական ուսմունքը, որը հորինել էին Բաբելոն քաղաքի այն «գիտուն» էակները, որոնք պատկանում էին դուալիստների դպրոցին, ինչի մասին ես քեզ արդեն պատմել եմ:

Միջնադարում «եկեղեցու հայրերը» այդ վերջին ուսմունքը ներմուծեցին իրենց և իրենց օգնականների «կրպակների» հարմարության համար, քանի որ դրանում խոսք էր գնում նշանավոր «դրախտի» և «դժոխքի» մասին:

Ուստիև ներկայումս Աստվածային Ուսուցիչ Հիսուս Քրիստոսի ուսմունքի փոխարեն, որում ամեն ինչից զատ բացահայտվում էր էակների համար տառապող մեր ԱՐԱՐԶԻ Ամենասիրությունն ու Ամենաներումը, այնտեղ հիմա ուսուցանում են, թե մեր ԱՐԱՐԻԶԸ ծիծաղում է նրանց հոգիների վրա, որոնք հետևում են Նրա ուսմունքին»:

– Իմ սիրելի ու բարի պապի՛կ, բացատրիր ինձ խնդրեմ, թե ինչ նշանակում «եկեղեցու հայրեր» բառակապակցությունը,– խնդրեց Հասեինը:

– Նրանք այնտեղ «եկեղեցու հայր» են անվանում այն էակներին, որոնք որևէ կրոնական ուսմունքի բարձրաստիճան արհեստավարժ հոգևորական են դառնում :

⁶² ռուս. տարբերակում՝ терасхабуга, անգլ. տարբերակում՝ terasakhaboora

⁶³ ռուս. տարբերակում՝ Кесбаджи, անգլ. տարբերակում՝ kesbaadji

Բավարարվելով նման կարճատև պատասխանով՝ Բեհեդգերուդը շարունակեց.

«Իմիջիայլոց, այստեղ քեզ կարելի է տեղեկացնել, որ երկրային էակների բավականին փոքրաթիվ մի խմբի միջավայրում Հիսուս Քրիստոսի ուսմունքն անփոփոխ է մնացել, և իր նախասկզբնական տեսքով մի սերնդից մյուսին փոխանցվելով՝ նույնիսկ հասել է մինչև ներկա ժամանակները:

Երկրային էակների այդ ոչ մեջ խումբը «Եսսենների Եղբայրություն» է կոչվում: Այդ եղբայրության էակներին հաջողվել է այդ Աստվածային Ուսուցչի ուսմունքը սկզբում մտցնել իրենց սեփական *լինելիական գոյատևման* մեջ, ապա հետագայում սերնդեսերունդ փոխանցել իրենց ավելի ուշ հետևորդներին՝ որպես կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից ձեռքագատվելու շատ լավ եղանակ:

Իսկ հիմա, ինչ վերաբերում է այնտեղ ներկայումս գոյություն ունեցող մեծ կրոններից չորրորդին, որն առաջացել է քրիստոնեական կրոնի ծագումից մի քանի դար հետո և հիմնվել *հույսերով լի* Սուրբ Մուհամեդի ուսմունքի վրա, պետք է ասեմ, որ այն շատ մեծ տարածում է գտել. և գուցե թե այն ի վերջո կարող էր «հույսի և հաշտեցման օջախ» դառնալ նրանց բոլորի համար, եթե այդ տարօրինակ էակները դա չվերածեին հավաքածու «սոյանկայի»:

Մի կողմից՝ հետևորդները դրա մեջ նույնպես ներմուծեցին բաբելոնյան դուալիստների ֆանտաստիկ տեսությունից ինչ-որ բան, իսկ մյուս կողմից՝ այդ կրոնի «եկեղեցու հայրերը», որոնք տվյալ դեպքում «շեյխ-իսլամիստներ» են կոչվում, հենց իրենք հորինեցին և հավելեցին շատ բաներ նշանավոր «դրախտի» երանությունների վերաբերյալ, որոնք իբր գոյություն ունեն «այն աշխարհում». այնպիսի երանություններ, որոնք նույնիսկ Քավարանի գլխավոր Կառավարչի՝ Նորին Քառորդատիրություն Գերբերովբե Խելքիմոտեսի⁶⁴ մտքով չէին անցնի, եթե անգամ փորձեր դիտմամբ դրանք պատկերացնել:

Թեև այդ կրոնի հետևորդները հենց սկզբից պառակտվեցին բազմաթիվ «խմբերի» և «ենթախմբերի» (ինչն, իմիջիայլոց, այնտեղ շարունակվում է նույնիսկ մինչև ներկա ժամանակները), այնուհանդերձ նրանք բոլորը պատկանում են երկու ինքնություն, այսպես կոչված, «դպրոցներից» որևէ մեկին, որոնք կազմավորվել են այդ կրոնի առաջացման ամենասկզբում:

Մահմեդական կրոնի այդ երկու դպրոցներից մեկը կոչվում է «սունիական», իսկ մյուսը՝ «շիիթական»:

Անչափ հետաքրքիր է նշել, որ միևնույն կրոնի այդ երկու ինքնություն դպրոցներին պատկանող էակների հոգեկառույցներում ձևավորված փոխադարձ ատելությունն այժմ, հաճախակի բախումների պատճառով, ամբողջովին վերածվել է օրգանական ատելության:

Վերջին հարյուրամյակների ընթացքում որոշ եվրոպական հանրությունների էակների հրահրումները մեծապես նպաստեցին այդ տարօրինակ *լինելիական գործառույթի* յուրահատուկ փոխակերպությանը:

Իսկ նրանք կիրառել և շարունակում են կիրառել այդ հրահրումը, որպեսզի միևնույն կրոնի այդ երկու ինքնություն դպրոցներին պատկանող էակների միջև առկա թշնամանքն ավելի մեծանա, և նրանք չմիավորվեն, քանի որ այդ դեպքում այդ եվրոպական հանրությունների վերջը կգա:

Բանն այն է, որ այնտեղի սովորական եռուղեղ էակների համարյա կեսն այդ մահմեդական ուսմունքի հետևորդներ են, և քանի դեռ նրանց միջև կա այդ փոխադարձ ատելությունը, նրանք որևէ վտանգ չեն ներկայացնում եվրոպական հանրությունների համար՝ «փոխադարձ ոչնչացման» գործընթացի իմաստով:

Ուստիև պատահաբար առաջացած «նորաթուխ» հանրություններն իրենց ձեռքերը շփելով ուրախանում են, երբ այդ սունիների ու շիիթների միջև կայծեր են բռնկվում, քանի որ դրանով մեծանում է իրենց երկարատև անվտանգ գոյատևման հնարավորությունը:

Իսկ ինչ վերաբերում է հինգերորդ ուսմունքին, այսինքն՝ Սուրբ Լամայի ուսմունքին, որը նույնպես ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ճշմարիտ դեսպանն էր, ապա այդ Սրբազան Անհատի ուսմունքը տարածվեց այն եռուղեղ էակների միջավայրում, որոնք աշխարհագրական պայմանների բերումով համարյա չէին շփվում այդ չարաղետ մոլորակի մյուս էակների հետ, ինչի արդյունքում իրենց վրա համարյա չէին կրում այդ մոլորակում հաստատված սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմանների ազդեցությունը:

⁶⁴ ռուս. տարբերակում՝ Хелькгематиос, անգլ. տարբերակում՝ Helkgematios

Այդ ուսմունքի մի մասը ևս դրա հետևորդները շատ շուտով փոխեցին ու ոչնչացրին, բայց մյուս մասն արդեն քիչ թե շատ մուտք գործեց այդ փոքր խմբի էակների գոյատևման մեջ և սկսեց տալ ցանկալի արդյունքներ. դրա շնորհիվ բարձրագույն Սրբազան Անհատների մոտ նույնիսկ հույս ծագեց, որ այդ Սուրբ Լամայի սրբազան աշխատանքների միջոցով ստեղծված այդ ուսմունքը երբևէ կկարողանա իրականություն դարձնել այն, ինչն արդեն Մեգալոկոսմոսում անհաժեշտություն է դարձել համայն գոյի համար:

Բայց քո սիրելիները նույնիսկ դա՛ թույլ չտվեցին. նրանք, առանց երկար մտածելու, հաշվեհարդար տեսան այդ հնարավորության հետ՝ կազմակերպելով «*ռազմական արշավանք*», կամ՝ «*անզոտիքության պատերազմ*»:

Այդ «ռազմական արշավանքի» մասին ես քեզ կպատմեմ մի փոքր ավելի ուշ:

Քեզ այդ մասին կպատմեմ գլխավորապես այն պատճառով, որ անձամբ ինձ պատահաբար վիճակվեց վկա դառնալ այնտեղի այդ ողբալի իրադարձություններին:

Բայց նախ ես քեզ պետք է պատմեմ այն մասին, թե այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա հիմա ինչպես են ուզում (իհարկե՝ «շեղաչք գեներալի» օգնությամբ) վերջնականապես «հաշիվ տեսնել» դեռևս այնտեղ գոյություն ունեցող հիշյալ երկու կրոնների նույնիսկ մնացորդների հետ, որոնք թեև անճանաչելիության աստիճանի փոփոխված են, այնուամենայնիվ վերջին դարերի ընթացքում, թեկուզ շատ հեռավոր կերպով, կարողացել են այնտեղի եռուղեղ էակների գոյատևումը նման դարձնել մեր Մեծ Տիեզերքի մյուս մոլորակներում բազմացող եռուղեղ էակների սովորական գոյատևմանը՝ անգամ նրանցից ոմանց արտառոց ու անկանոն գոյատևումը որոշ չափով դարձնելով օբյեկտիվորեն տանելի:

Ես հիմա քեզ կպատմեմ հենց այն մասին, թե ներկայումս այնտեղ ինչպես է վերջնական «հաշվեհարդար» տեղի ունենում այնտեղ դեռևս գոյություն ունեցող վերոհիշյալ հինգ կրոններից երկուսի՝ այն մեծ կրոնների հետ, որոնք թեև «*հատվածաբար*», բայց հիմնվել են Վերնից ուղարկված մեր ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ երկու ճշմարիտ դեսպանների կողմից. դրանցից մեկը Սուրբ Հիսուսի ուսմունքն է, իսկ մյուսը՝ Սուրբ Մուհամեդի ուսմունքը:

Կրկնեմ, որ այդ երկու մեծ կրոնները «*հատվածաբար*» ի մի են բերվել ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ երկու ճշմարիտ դեսպանների ուսմունքներից, ու թեև անցած դարերի եռուղեղ էակներն այդ երկու ուսմունքների «մեծ կտորն ականջն են թողել», այնուհանդերձ ընդհուպ նույնիսկ մինչև ներկա ժամանակները նրանցից ոմանք այդ ուսմունքների շնորհիվ գոնե ինչ-որ բանի հավատացել են, ինչ-որ բանի հետ հույս են կապել և դրանով իսկ իրենց դժբախտ գոյատևումը քիչ թե շատ տանելի են դարձրել:

Բայց այնտեղի այդ գերտարօրինակ եռուղեղ էակներն այժմ ձեռնամուխ են եղել երկրի երեսից դրանք իսպառ սրբելու գործին:

Թեև նրանց յուրահատուկ հոգեկառույցի տարօրինակությունից բխող այդ գործընթացը՝ այդ երկու մեծ կրոնների վերջնական ոչնչացումը, սկսվել է իրենց արևային համակարգությունից իմ հեռանալուց հետո, սակայն այդ տարօրինակ մոլորակի էակներին վերաբերող այն եթերազրի բովանդակության շնորհիվ, որն ստացա հենց Քարատակ մոլորակից մեր թոփաքից առաջ, ես լրիվ հասկանում եմ, թե դա ինչպես է եղել և լիակատար համոզվածությամբ հիմա կարող եմ ասել, որ նրանք ոչ միայն չեն հապաղի դրանց կաշին քերթել, այլ նաև առանց այլևայլի իսպառ կոչնչացնեն նույնիսկ դրանց բոլոր հետքերը:

Իմիջիայլոց, այդ եթերազրիքը նաև ինձ տեղեկացնում էր, որ այնտեղ՝ քո այդ մոլորակում, առաջին հերթին՝ Երուսաղեմ քաղաքում համալսարան է բացվում հատուկ հրեա պատանիների համար, և երկրորդ՝ Թուրքիա կոչվող հանրությունում հրամաններ են արձակվել բոլոր, այսպես կոչված, «դերվիշական վանքերը» փակելու, տղամարդկանց «ֆես» կրելն ու կանանց «չադրա» կրելն արգելելու մասին:

Հաղորդագրության առաջին մասից, որը վերաբերում էր հրեա երեխաների համար Երուսաղեմ քաղաքում համալսարան բացելուն, ինձ համար պարզ դարձավ, որ այդ քրիստոնեական կրոնի վերջն էլ է եկել:

Բայց որպեսզի դու դա հասկանաս, պետք է նախ իմանաս, որ ոչ շատ վաղուց Եվրոպա աշխարհամասում գոյություն ունեցող բոլոր հանրությունները, որոնց էակների գերակշիռ մեծամասնությունն այդ կրոնի հետևորդներ են, այդ Երուսաղեմ քաղաքի համար համատեղ ուժերով

մեծ պատերազմ սկսեցին մյուս կրոնների հետևորդների դեմ՝ իրենց ռազմարշավներն անվանելով «խաչակրաց արշավանքներ»:

Նրանք այդ «ռազմարշավները» կամ «խաչակրաց արշավանքները» վարեցին միայն այն բանի համար, որ այդ Երուսաղեմ քաղաքը, որում ապրել, տառապել և մեռել է այդ Աստվածային Ուսուցիչ Հիսուս Քրիստոսը, դառնա բացառապես քրիստոնեական. և այդ խաչակրաց արշավանքներին զոհ գնաց այդ աշխարհամասի արական սեռին պատկանող էակների համարյա կեսը:

Եվ հիմա նույն այդ Երուսաղեմ քաղաքում նրանք հրեա երեխաների համար ժամանակակից համալսարան են բացում, և անկասկած է, որ դրա համար ստացել են բոլոր նույն այն եվրոպական քրիստոնեական հանրությունների ընդհանուր համաձայնությունը:

«Հրեաները» հենց այն ազգությունն են, որի ծոցում ծնվեց ու գոյատևեց Աստվածային Հիսուսը, և որի էակները Նրան տանջեցին ու խաչին գամեցին:

Թեև «հրեաների» ներկայիս սերնդի ներկայացուցիչները Հիսուս Քրիստոսի անմիջական թշնամիները չեն, բայց նրանք բոլորը հիմա էլ են համոզված, որ իրենց նախնիների միջավայրում հայտնված այդ Հիսուսը, որին քրիստոնեական կրոնի բոլոր հետևորդները ընկալում են որպես Սրբազան Անձնավորություն, պարզապես եղել է պոթեկուն ու հիվանդ «երագող»:

Իսկ Երկիր մոլորակի ժամանակակից էակների այդ «համալսարան» կոչվածը հենց այն «օջախն» է, որում հրի է մատնվում այն ամենը, ինչ տասնյակ դարերի ընթացքում ձեռք է բերվել իրենց նախնիների կողմից. և այդ «օջախի» վրա արագորեն՝ ընդամենը մեկուկես օրվա ընթացքում, համեղ ոսպապուր է եփվում այն ամենի փոխարեն, ինչը ձեռք է բերվել իրենց տարաբախտ նախնիների բազմադարյա գիտակցական ու անգիտակցական ջանքերով և աշխատանքներով:

Այսքանը լիովին բավարար է ինձ ցույց տալու համար (թեև ես դրանում համոզվել եմ իմ ողջ Լինելությամբ), թե ինչ կկատարվի այդ Երուսաղեմի հետ այսուհետև, երբ նրանք այնտեղ արդեն բացել են իրենց սեփական նշանավոր «համալսարանը», և այն էլ՝ հրեա պատանիների համար:

Ես արդեն մտովի պատկերացնում եմ, որ իրենց ժամանակով շատ տարիներ չանցած՝ հենց այն տեղում, որտեղ թաղված է Աստվածային Հիսուսի մոլորակային մարմինը, կայանատեղի կդառնա ժամանակակից ավտոմեքենաների համար, այսինքն՝ այն հրաշքի կայանատեղը, որը միակ պակաս մնացած բանն էր, որպեսզի ժամանակակից էակներն իսպառ խելքները կորցնեն:

Դեռ քիչ էր, որ այդ սրբապիղծները, հանուն իրենց եասսիրական ու քաղաքական նպատակների, աստիճանաբար աղճատեցին այդ Աստվածային Ուսուցչի ուսմունքը, հիմա էլ սկսել են ոչնչացնել նույնիսկ Նրա հիշատակը:

Դե լավ, հերիք է... Դա էլ է արդեն վաղուց քո սիրելիների ոճով:

Դրա հետ կապված միայն ասեմ, որ այնտեղի ամբողջ, այսպես կոչված, ժամանակակից քաղաքակրթությունը հենց միայն այն է անում, որ ավելացնի իրենց հորինած և հենց իրենց համար վնասակար այդ մեքենայի արագությունը:

Եվ իսկապես, այդ չարաղետ մոլորակի եռուղեղ էակներին վերաբերող իմ ստացած վերջին եթերագրում այլ բաների շարքում տեղեկություն կար նաև այն մասին, որ այդ մեքենայի այնտեղ սահմանված ռեկորդային արագությունն արդեն հասել է ժամում 325 մղոնի:

Անկասկած է, որ այդ «ռեկորդը» կհանգեցնի միայն այն բանին, որ նրանց չարաղետ մոլորակի բավականին փոքր չափերը, նույնիսկ ըստ իրենց խղճուկ *լինելիական պատկերացումների*, արդեն շատ աննշան կդառնան:

Ի՛նչ արած, ՏԵՐ ԱՐԱՐԻՉԸ նրանց հետ, զավա՛կս...

Ինչպիսի արագության էլ որ նրանք հասնեն իրենց այդ մեքենայով, միևնույնն է, եթե իրենք մնան նույնը, ապա ոչ միայն հենց իրենք, այլ նաև իրենց մտածողությունն իրենց մթնոլորտի սահմաններից այն կողմ չի անցնի:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ մեծ կրոնին, որը, ինչպես արդեն ասել եմ քեզ, հիմնված է *լիառնյու* Սուրբ Մուհամեդի ուսմունքի ցրիվ տված «կտորների» վրա, ապա, քանի որ այն իր ծագման հենց սկզբից տհասամուսական հատկություններով օժտված էակների կողմից հատուկ կերպով այնտեղ կիրառվել և օգտագործվել է եասսիրական ու քաղաքական նպատակներով, հետևաբար բոլոր եղածների մեջ ամենաշատ բզկտվածը դա է»:

Որոշ հանրությունների իշխանավոր էակներն իրենց տհասամուսական նպատակներով այդ աստվածային ուսմունքին սեփական արտադրության այնքան շատ «համեմունքներ» են հավելել, որ

արդյունքում ստացվել է այնպիսի մի «շեռախուռյան»⁶⁵ խառնուրդ», որի գաղտնիքին կնախանձեին անգամ եվրոպական ժամանակակից նշանավոր, այսպես կոչված, «հրուշակագործներն» ու «ավագ խոհարարները»:

Ահա այսպիսի բաներ...

Դատելով այդ եթերազրի երկրորդ կեսի բովանդակությունից՝ այդ երկրորդ մեծ կրոնի իսպառ ոչնչացման գործընթացը տեղի կունենա կամ արդեն տեղի է ունեցել եթերազրում հիշատակված այն հրամանի հետևանքով, որ արձակել են Թուրքիա կոչվող հանրության իշխանավոր էակները:

Բանն այն է, որ այդ Թուրքիա կոչվող հանրությունն այնտեղի ամենամեծ հանրություններից մեկն է, որի էակներն այդ կրոնն են դավանում:

Նախ քեզ պետք է պատմեմ, որ մահմեդական այդ կրոնի ծագման սկզբում այդ հանրության որոշ էակներ շատ լավ ուսումնասիրել են այդ կրոնի նախասկզբնական ուսմունքը և սկսել են այն ներդնել իրենց առօրեական գոյատևման մեջ:

Այդ պատճառով, թեև այդ կրոնի ուսմունքն այնտեղ աստիճանաբար աղավաղվել է իշխանավոր էակների ազդեցությամբ, այնուհանդերձ այնտեղի որոշ էակների միջավայրում Մուհամեդի այդ ուսմունքն իր անփոփոխ տեսքով փոխանցվել է մի սերնդից մյուսին:

Ուստի մինչև հիմա չափազանց թույլ մի հույս էր պահպանվում, որ եթե այդ տարօրինակ էակները երբևէ հանկարծ սթափվեն, ապա այդ ուսմունքը կվերածնվի և կիրագործի այն նպատակները, հանուն որոնց այն ստեղծվել էր լիափայլ Մուրբ Մուհամեդի կողմից:

Ահա այդպես, զավակս... Այնտեղի այդ որոշ էակները «դերվիշներ» էին կոչվում, որոնց վանքերը փակելու մասին էլ հենց հրաման էր արձակվել այդ ժամանակակից Թուրքիա կոչվող հանրությունում:

«Դերվիշության» ոչնչացումն, իհարկե, կատարելապես կհանգցնի այն վերջին մարմնող կայծերը, որոնք մնացել էին, այսպես ասած, մոխրի մեջ և կարող էին կրկին այն հնարավորությունների օջախը վառել, որոնց հետ հույսեր էր կապել Մուրբ Մուհամեդը:

Իսկ ինչ վերաբերում է նույն այդ Թուրքիա կոչվող հանրությունում արձակված մյուս հրամանին, որի մասին խոսք էր գնում ինձ հասած եթերազրում, այն է՝ «արական սեռի» էակներին արգելել իրենց նշանավոր «ֆեսը» կրելը, իսկ «կանացի սեռի» էակներին՝ չաղբա կրելը, ապա այդ նորամուծությունների հետևանքները շատ հստակ պատկերվում են ապագային վերաբերող իմ լինելիական պատկերացումներում:

Այդ նորամուծությունների հետևանքով այդ Թուրքիայի էակների հետ անկասկած տեղի կունենա նույն բանը, ինչ տեղի ունեցավ Ռուսաստան կոչվող հանրության էակների հետ, երբ վերջիններս նույնպես սկսեցին ամեն ինչում նմանակել եվրոպացիներին:

Կարելի է նկատել օրինակ, որ իսկապես, ընդամենը մեկ կամ երկու դար առաջ Ռուսաստան կոչվող այդ մեծ հանրության բոլոր էակների մոտ, քանի դեռ նրանք չէին սկսել նմանակել եվրոպական ամեն ինչը, դեռևս պահպանվում էին այն երկու լինելիական գործառույթները, որոնք կոչվում են «մարդաադամիկ» և «նամուսիկ»։ այդ լինելիական զգացումներն այլ կերպ անվանվում են նաև համապատասխանաբար՝ «աստվածապաշտության զգացում» և «նահապետականության զգացում»:

Եվ հենց այդ լինելիական զգացումների շնորհիվ էր, որ երկու դար առաջ այդ մեծ հանրության էակները փառաբանվում էին այդ մուրալի բոլոր մյուս էակների շրջանում՝ պահպանելով բարոյական ու նահապետական բարքերը:

Բայց երբ սկսեցին նմանակել եվրոպական ամեն ինչը, այնտեղ դեռևս մնացած այդ երկու լինելիական զգացումներն աստիճանաբար հետ զարգացան, և արդեն ներկայումս այդ հանրության համարյա բոլոր էակներն այդ նույն բարոյականության ու նահապետականության առումներով այնպիսին են դարձել, որ նրանց հասցեին մեր իմաստուն ուսուցիչ մոլլա Նասրեդինը կսահմանափակվեր միայն մեկ բացականչություն անելով. «Ա՛խ, ես դրանց ինչն եմ ասել...»

Բայց Ռուսաստանում այդ ամենը չի սկսվել չաղբա ու ֆես կրելն արգելելուց:

Ո՛չ: Այնտեղ նման գլխանոցներ չէին կրում:

Այնտեղ դա սկիզբ է առել արական սեռի էակների «մորուքներից»: Այնտեղի արական սեռի էակների համար «մորուքը» նույն կարգի բան է, ինչ մեզ համար՝ պոչը, որն, ինչպես դու արդեն գիտես, ուժեղացնում է մեր արական սեռի էակների առնականությունն ու ակտիվությունը:

⁶⁵ ռուս. տարբերակում՝ шерашуное, անգլ. տարբերակում՝ sherakhoorian

Ահա և հերթը հասավ այդ թշվառ թուրքերին:

Մեկ որ նրանք մտադրվել են իրենց ֆեսերը փոխել եվրոպական «կոշտ գլխարկներով», մնացածն ինքնըստինքյան կստացվի:

Այդ թուրք էակների հոգեկառույցն էլ իհարկե շատ շուտով կայլասերվի, ինչպես այլասերվել է Ռուսաստան կոչվող հանրության էակներին:

Ռուս և թուրք էակների միջև եղած տարբերությունը միայն այն է, որ ռուսների դեպքում իրենց հոգեկառույցի փոփոխության պատճառն ընդամենը մի էակ է եղել՝ իրենց ցարը, այն դեպքում, երբ Թուրքիա կոչվող հանրության էակների համար պատճառը մի քանի էակներ են:

Իսկ դրանք մի քանիսն են, քանի որ այդ թուրքերը վերջերս իրենց հին բազմադարյան *պետական կառույցը* փոխեցին նորով՝ «հանրապետականով», ինչը հանգեցրեց նրան, որ առաջվա *պետական կառույցի* մի տիրակալին փոխարինելու եկան մի քանիսը:

Նույնիսկ եթե նրանց նախկին պետական կառույցը վատը լիներ, այնուհանդերձ դա հավասարակշռվում էր նրանով, որ կար մեկ տիրակալ, որը նորամուծություններ էր անում բացառապես իր հանրության համար, և, դեռ ավելին, բոլոր նրանք հին-նահապետականներ էին:

Իսկ հիմա այդ Թուրքիա կոչվող հանրությունը մի քանի գլխավոր ղեկավարներ ունի, և բոլոր նրանք խելքներին գոռ տալով այդ ամբողջ հանրության հասարակ էակներին պարտադրում են իրենց տհասությունը՝ բոլորովին չհամապատասխանելով ո՛չ այդ հանրության էակների հոգեկառույցների արդեն վաղուց բյուրեղացված պահանջմունքներին, ո՛չ էլ իրենց մոտ ընդունված *լինելիական բարոյականության* նորմերին:

Շատ հետաքրքիր է նշել նաև, որ, ինչպես նախկինում ռուսական ցարն էր իր հին-նահապետական մերձավորների տրամադրած և գյուղացիական քրտինքով ձեռք բերված, այսպես կոչված, «փողերով», մեկնում Եվրոպա աշխարհամաս, որպեսզի այնտեղի տարբեր հանրություններում ուսումնասիրի կառավարման բազմաթիվ ձևեր և դրանից հետո ավելի լավ կողմնորոշվի իր հանրությունը կառավարելու գործում, այնպես էլ ներկայիս թուրք տհաս ղեկավարներն են մեծ քանակությամբ «փողեր» վերցնում իրենց «նահապետական» հայրերի, այս դեպքում՝ «հայվանսանանսակների»⁶⁶ վաստակից և նույնպես մեկնում Եվրոպա աշխարհամաս, որպեսզի այնտեղ «լավ կրթություն» ստանան՝ հանուն իրենց հայրենիքի ապագա բարօրության:

Այսինքն, զավակս, երկու դեպքում էլ այն բանի պատճառով, որ այդ երկու բազմամիլիոնանոց հանրությունների ապագա ղեկավարները շատ երիտասարդ տարիքում էին Եվրոպա մեկնում և դեռևս բոլորովին չէին գիտակցում իրենց պատասխանատվությունը, այլ դրա փոխարեն առատ փողեր էին ստացած լինում հիշյալ աղբյուրից, Եվրոպա աշխարհամասի էակների կյանքը նրանց երևում և իրենց ներսում մշտապես բյուրեղանում էր այնպիսի գերհրաշալի ու բարեշնորհ տեսքով, որ երբ հետո իրենց երկրում հաստատված գոյատևման աննորմալ պայմանների պատճառով կանգնում էին այդ բազմամիլիոնանոց հանրության գլուխ, ապա ռուսական ցարի պես չէին կարող չձգտել այն բանին, որ իրենց հայրենակիցների գոյատևումը երջանկացնեն ըստ իրենց խղճուկ պատկերացումների:

Իմիջիայլոց, Թուրքիա կոչվող այդ գլխավոր հանրության ներկայիս ղեկավարները շատ լավ բաներ են տեսել և յուրացրել Գերմանիա կոչվող հանրությունում, ուր իրենց ուղարկել էին, որպեսզի հմտանան, այսպես կոչված, «միլիտարիզմի» հարցերում, այսինքն՝ փոխադարձ ոչնչացման գործընթացները ղեկավարելու հատուկ նրբություններում:

Ահա թե ինչու են այդ Թուրքիա կոչվող հանրության գլխավոր կառավարիչներն այդքան երկար ապրել Գերմանիա կոչվող հանրությունում և բավականին երկար ժամանակով այնտեղ, այսպես կոչված, «յունկերներ» են եղել:

Հիրավի, նրանք հատկապես շատ լավ բաներ են տեսել և յուրացրել այդ Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում՝ այն փողոցում, որը կոչվում է «Ունտեր դեն Լինդեն»:

Ես դեռ չգիտեմ, թե այդ նոր թուրք կառավարիչներն ապագայում ինչ բարեարություններ կբստրեն իրենց հայրենակիցների համար, բայց արդեն իսկ նրանք իրենց հայրենիքի համար մի շատ լավ «հայրենասիրական գործ» արել են:

Որպեսզի դու հարկ եղած չափով հասկանաս այդ հայրենասիրական արարքի էությունը, նախ պետք է իմանաս, որ Թուրքիա կոչվող հանրության մայրաքաղաքի «Ղալաթիա» և «Բերա» կոչվող

⁶⁶ ռուս. տարբերակում՝ хайвансанансаков, անգլ. տարբերակում՝ khaivansanansakoff

թաղերի փողոցներում ու նրբանցքներում «հատուկ նշանակության» բոլոր իգական սեռի էակները սովորաբար պատկանում էին օտարերկրյա հանրություններին, թեև վաստակում և ծախսում էին «իսկական թուրքական լիրաներ»:

Բայց վերջին նորամուծությունների շնորհիվ նրանք հիմա լիակատար ու որոշակի հույսեր են ձեռք բերել, որ շատ շուտով իրենց այդ իսկական «հայրենասիրական թուրքական լիրաներն» այլևս չեն հայտնվի ինչ-որ օտար հանրությունների պատկանող իգական սեռի էակների տնօրինման ու օգտագործման տակ, այլ կօգտագործվեն միայն իրենց «շատ սիրելի հայրենակցուհիների» կողմից:

Իգուր չէ մեր պատվարժան խոջա Նասրեդինն ասել. «Կարևորը շատ փող ունենալն է, և այդ դեպքում նույնիսկ Նամուսը կարող է ճոճռալ»:

Երբեմն նման դեպքերում նա նաև թուրքերեն էր արտահայտվում. «Dooniyninishi, pakmazli pishi, geyann purnundah pussar eshahi dishi» (ինչը թարգմանաբար նշանակում է. «Աշխարհիկ գործերը նման են մեղրաբլիթի, որն ուտելուց էշի ատամ է աճում»):

Այժմ գրուցենք այն մասին, ինչը խոստացել էմ քեզ պատմել ավելի մանրամասն՝ այն վերջին Սրբազան Անհատի՝ Սուրբ Լամայի ուսմունքի մասին, որը հայտնվել է Տիբեթի էակների միջավայրում. նաև այն պատճառների մասին, որոնք հանգեցրել են նաև այդ ուսմունքի իսպառ ոչնչացմանը:

Այդ Սրբի ուսմունքն ու քարոզներն այնքան էլ լայն տարածում չեն գտել այն տեղանքի աշխարհագրական պայմանների պատճառով, որտեղ նա հայտնվել և այդ թշվառ եռուղեղ էակներին ուսուցանել է, թե իրենք ինչ պիտի անեն, որպեսզի ձեռքագատվեն կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից:

Աշխարհագրական պայմանների պատճառով այդ երկրի էակները քիչ էին շփվում, ինչպես արդեն ասել էմ, ուրիշ հանրությունների էակների սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ պայմանների հետ, ինչի արդյունքում նրանցից ոմանք ավելի ընկալունակ էին այդ Սրբազան Անհատի ուսմունքի նկատմամբ, ուստիև այն անմիջականորեն մտավ նրանց էության մեջ և աստիճանաբար սկսեց կյանքի կոչվել արդեն նաև գործնականում:

Այդպիսով, զավակս, երկար տարիների ընթացքում այդ Տիբեթ կոչվող երկրում հանգամանքներն աստիճանաբար դասավորվեցին այնպես, որ տեղացի էակները խմբավորվեցին՝ ըստ իրենց ներսում այդ Սուրբ Լամայի ուսմունքի ներքին գոյափոխման աստիճանի և իրենց վրա աշխատելու պահանջի, ապա, համապատասխան ձևով կազմակերպելով իրենց սովորական գոյատևումը (շնորհիվ իրենց մեկուսացվածության, ինչը պայմանավորված էր ուրիշ հանրությունների համար իրենց երկրի անմատչելիությամբ), հնարավորություն ձեռք բերեցին ըստ Սուրբ Լամայի ցուցումների անարգել աշխատելու այն բանի վրա, որ ազատվեն այն օրգանի հատկությունների հետևանքներից, որն, ի դժբախտություն իրենց, ստիպված էին եղել կրելու իրենց նախահայրերը:

Նրանցից ոմանք հասան այդ ազատագրությանը, շատերն արդեն այդ նվաճմանը հասնելու ճանապարհի վրա էին, շատերն էլ հույսեր էին փայփայում, որ երբևէ իրենք նույնպես կանցնեն այդ նվաճմանը հասնելու ճանապարհով:

Բայց հենց այն ժամանակ, երբ վերջապես պայմաններն ու հանգամանքերը որոշակիորեն բարենպաստ էին դարձել այդ ուղությամբ արդյունավետ աշխատելու համար, Տիբեթում տեղի ունեցավ մի բան, ինչն ընդհատեց այն հնարավորությունը, որ երբևէ այդ երկրի էակները կկարողանան լրիվ ձեռքագատվել իրենց ճնշող դժբախտությունից, կամ, ամեն դեպքում, այդ հնարավորությունը կրկին հետ գցեց շատ տարիներով:

Բայց նախքան քեզ պատմելը, թե ինչ տեղի ունեցավ այնտեղ, դու նաև պետք է իմանաս հետևյալը:

Ընդամենը մի քանի դար առաջ՝ քեզ դուր եկած եռուղեղ էակների գլխավոր առանձնահատկությունը՝ պարբերաբար իրար ոչնչացնելու գործընթացը, սովորաբար այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա, տեղի էր ունենում այս կամ այն աշխարհամասի տարբեր հանրությունների էակների միջև, որում նրանք բազմանում էին, և եթե երբեմն բացառության կարգով նման գործընթաց տեղի էր ունենում տարբեր աշխարհամասերի պատկանող էակների միջև, ապա դա լինում էր երկու աշխարհամասերի հարակից շրջաններում բնակվող էակների միջև: Դրա պատճառն այն էր, որ մի քանի դար առաջ երկրային էակները դեռևս դժվարությամբ էին հաղթահարում ջրային տարածքները:

Բայց այն բանից հետո, երբ այնտեղի ժամանակակից էակներից մեկը պատահաբար հայտնաբերեց նոսրացված ջրի, կամ, ինչպես իրենք են ասում, «գոլորշու ուժի» օգտագործման միջոցով ջրային

տարածքներով տեղաշարժվելու նոր եղանակ և համապատասխան նալ հնարեց այդ նպատակի համար, երկրային էակները սկսեցին իրենց փոխադարձ ոչնչացման գործընթացների նպատակով ուղևորվել հարևան աշխարհամասերի ավելի խորքային շրջանները կամ նույնիսկ այլ հեռավոր աշխարհամասեր:

Վերջին հարյուրամյակի ընթացքում այդ յուրօրինակ մոլորակի էակների համար ուրիշ աշխարհամասում գտնվող այդպիսի սիրած վայր էր Գաղտակուրհանդան՝ Մարգարիտների Երկիրը, կամ ինչպես ժամանակակից էակներն են ասում՝ «Հնդկաստան»:

Եթե հիշում ես, ես մի անգամ քեզ պատվել եմ այն մասին, որ Ատլանտիդա աշխարհամասի էակները հասնում էին մինչև Աշխարհք աշխարհամասի՝ ներկայիս Ասիայի հենց այդ Գաղտակուրհանդա երկիրը, սկզբում՝ մարգարիտ գտնելու նպատակով, իսկ հետո դարձան այդ երկրի առաջին բնակիչները:

Եվ ահա, զավակս, հենց այդ դժբախտ, նախկինում՝ Գաղտակուրհանդա, իսկ հիմա՝ «Հնդկաստան» կոչվող երկիրը վերջին հարյուրամյակներում սիրելի վայր դարձավ նաև Եվրոպա աշխարհամասի ժամանակակից էակների համար, բայց այս անգամ՝ իրենց փոխադարձ ոչնչացման գործընթացներն այնտեղ անցկացնելու համար:

Նրանք սկսեցին նավարկել դեպի այդ երկիրը և այնտեղ փոխադարձ ոչնչացման գործընթացներ իրականացնել ինչպես իրար միջև, այնպես էլ այնտեղ բազմացող էակների հետ. այսինքն՝ կա՛մ մի եվրոպական հանրության էակները ձգտում էին ոչնչացնել մի այլ եվրոպական հանրության էակներին, կա՛մ այդ գործընթացները տեղի էին ունենում տեղացի էակների միջև, ընդ որում այդ ընթացքում եվրոպացի էակները մերթ մի կողմին էին օգնում, մերթ՝ մյուսին:

Այդ Մարգարիտների Երկրում տեղական բնույթի փոխադարձ ոչնչացման գործընթացներն առանձնապես հաճախակի էին դարձել վերջին տասնութ կամ տասնհինգ դարերի ընթացքում:

Դրա պատճառը նախ և առաջ այն էր, որ փոխադարձ ոչնչացման մի մեծ գործընթացի հետևանքով այն էակները, որոնք նախկինում պատկանում էին ընդամենը երկու տարբեր հանրությունների, դրանից հետո տրոհվեցին մեծ քանակությամբ մանր ու ինքնուրույն հանրությունների, և երկրորդ՝ այդ վայրի էակների հոգեկառույցներում ևս ձևավորվեց այնպիսի համակցություն, որ իրենց այդ հատկության՝ իրար փոխադարձաբար ոչնչացնելու ձգտման «բնկումները» Երկիր մոլորակի մակերևույթի այդ հատվածում ամենուրեք տեղի էին ունենում ոչ թե միաժամանակ, այլ տարբեր ժամանակներում:

Եվ նրանց ընդհանուր հոգեկառույցի այդ ամենավերջին նոր համակցությունը ևս տեղի ունեցավ մի անկանխատեսելի ոչ մեծ թյուրիմացության հետևանքով, որը կապված էր այդ արևային համակարգության *ընդհանրական ներդաշնակ շարժման* հետ:

Երբևէ ես քեզ կպատմեմ այդ թյուրիմացության մանրամասները:

Իսկ առայժմ վերադառնանք իմ սկսած պատմությանը: Այսպես ուրեմն...

Երկրի մակերևույթի վրա Հնդկաստանի զբաղեցրած տարածքը վերջին դարերում, իր բնական հարստությունների առումով, մնացել է առաջվանը:

Ուստի, երբ փոխադարձ ոչնչացման գործընթացներ իրականացնելու նպատակով այնտեղ հասած եվրոպացի էակների յուրօրինակ հոգեկառույցներում այդ ահավոր գործի նկատմամբ պահանջն անցնում էր, նրանք շարունակում էին այդտեղ մնալ՝ կա՛մ պատրաստվելով հետագա նման գործընթացների, կա՛մ, ինչպես իրենք են ասում, բավականաչափ «վաստակելով», որպեսզի սովորական գոյատևման համար անհրաժեշտ ապրանք ուղարկեն Եվրոպա աշխարհամասում թողած իրենց ընտանիքներին:

Այնտեղ նրանք այդ ամեն տեսակի ապրանքները «վաստակում էին» իրենց արհեստների միջոցով, որոնցով մեծ մասամբ արտադրում էին «պղնձե կոճակներ», «ձեռքի հայելիներ», «հուլունքներ», «ապարանջաններ», «ականջօղեր» և նմանատիպ այլ պաճուճանքներ, որոնց նկատմամբ, հավանաբար, այդ երկրի տեղացի էակները նույնպես թույլություն ունեին:

Այդ ժամանակաշրջանի ամենասկզբում Եվրոպա աշխարհամասի էակները տարբեր եղանակներով սկսեցին այդ Մարգարիտների Երկրի բնիկներից հող զավթել և բնակություն հաստատել առանձին հանրությունների խմբերի տեսքով, ինչպես դա անում էին Եվրոպա աշխարհամասում, որտեղից գաղթել էին:

Եվրոպայի տարբեր հանրություններից եկած այդ էակներն իրար միջև նույնպիսի *լինելիական հարաբերություններ* հաստատեցին, ինչպիսիք դրսևորում էին և էլի շարունակում են դրսևորել որևէ եվրոպական հանրության էակները իրենց իսկ աշխարհամասի մի այլ հանրության էակների նկատմամբ. այն է՝ կրկին կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների պատճառով նրանք զարգացնում են այնպիսի զգացմունքներ, որոնք իրենց ներսում բյուրեղացել են կոնկրետ գործառույթների տեսքով և գոյություն ունեն «նախանձ», «խանդ», «սանդուր» (ուրիշին մահ կամ թուլություն կամենալը) և այլ անուններով:

Եվ այնտեղ նույնպես՝ այդ Մարգարիտների Երկրում, հանրություններից մեկի էակները մյուսի էակների ականջին ամբողջ ձայնով նույն այն «տհասամուսական երգը երգեցին», որին իրենք «քաղաքականություն» են ասում. այն է՝ նրանք սկսեցին «քննադատել» մեկը մյուսին, «իջեցնել մեկը մյուսի վարկանիշը», «ստորացնել մեկը մյուսին» և այլն՝ նպատակ ունենալով սեփական հանրության «վարկը» բարձրացնել տեղացի էակների աչքերում:

Նման «քաղաքականություն» բանեցնելու ընթացքում եվրոպական հանրություններից մեկի գլխավորն ինչ-որ կերպ «գաղտնիք» ձեռք գցեց, թե ինչպես ազդել մյուս հանրությունների էակների հոգեկառույցի վրա, որպեսզի նրանք ընդունեն իր հանրության էակների բարձր հեղինակությունն ու իշխելու իրավունքը:

Հետո, երբ այն էակները, որոնք այդ «գաղտնիքը» բացահայտեցին, որի գործողության սկզբունքը «զգվացնել»⁶⁷ էր կամ «իրար դեմ հրահերելը», և դրան հաղորդակից դարձրին իրենց հանրության մյուս գլխավորներին, ապա նրանք բոլորը դա դրին իրենց «քաղաքականության» հիմքում. դրանից հետո այդ հանրության էակներն ամենուրեք և ամեն ինչում սկսեցին գերիշխանություն ձեռք բերել:

Թեև այդ հանրության նախկին գլխավորները և այն էակը, որը գտել էր զգվացնելու օրենքը, արդեն վաղուց մեռել են, սակայն հետագա սերունդները, շարունակելով (իհարկե՝ մեքենայաբար) կիրառել այդ «գաղտնիքը», աստիճանաբար ոչ միայն իրենց ձեռքի տակ առան ամբողջ այդ Մարգարիտների Երկիրը, այլ նաև իրենց ազդեցությանը ենթարկեցին Երկիր մոլորակի այդ հատվածում բազմացող բոլոր էակների բուն էությունը:

Չնայած այն բանին, որ դրանից հետո երկու դար է անցել, բայց այն ժամանակահատվածում, որին վերաբերում է իմ հետագա պատմությունը ժամանակակից էակների կողմից Սուրբ Լամայի աշխատանքների ոչնչացման մասին, ամեն ինչ հենց այդպես էր ընթանում:

Գոռոգանալով իրենց հաջողությամբ՝ հիշյալ եվրոպական հանրության վերջին գլխավորները, որոնք սոսկ այդ զգվացնելու օրենքի շնորհիվ բախտ էին ունեցել բոլորին ենթարկեցնել իրենց ազդեցությանը և ամեն ինչ զավթել, կամեցան իրենց «թաթի տակ առնել» նաև այն, ինչը մինչ այդ անհասանելի էր թվում:

Այն է՝ նրանք որոշեցին նվաճել նաև Տիբեթ կոչվող հարևան երկիրը, որն այն ժամանակ անմատչելի էր համարվում. ուստի մի իրենց համար հրաշալի, բայց քո այդ մոլորակի բոլոր մնացած էակների համար ցավալի օր նրանք հավաքագրեցին իրենց հանրության շատ էակների, ինչպես նաև իրենց կողմից նվաճված տեղական հանրությունների ավելի շատ էակների և փոխադարձ ոչնչացման գործընթացների համար հորինած՝ ժամանակակից «եվրոպական քաղաքակրթության» զանազան նոր գյուտերի օգնությամբ նրանք գերհանդարտ ընթացքով շարժվեցին դեպի այն երկիրը, որը մինչ այդ անմատչելի էր համարվում:

Չնայած այդ «նոր գյուտերի» կիրառությանը՝ դեպի այդ երկրի խորքը կատարվող առաջխաղացումը շատ դժվարին էր և շատ թանկ նստեց նրանց վրա՝ ոչ միայն իրենց «ֆունտերի», այլ նաև, ինչպես իրենք են ասում, «կորուստների» առումով:

Մինչ երկրային եռուղեղ էակների այդ խառնամբոխը դեռևս հանգիստ, բայց և մեծ դվարությամբ առաջ էր ընթանում, վերնում՝ Տիբեթում բնակվող էակները բացարձակապես որևէ կասկած չունեին այն մասին, որ եվրոպացի էակներն, այսպես կոչված, «ռազմական արշավ» են նախաձեռնել իրենց երկրի դեմ:

Եվ նրանք այդ մասին իմացան միայն այն ժամանակ, երբ այդ խառնամբոխն արդեն վերնում էր:

Երբ այդ բարձրադիր երկրի էակներն իմացան այդ անսովոր իրողության մասին, անմիջապես տագնապեցին ու հուզվեցին, քանի որ շատ դարերի ընթացքում նրանք վարժվել էին այն մտքին, որ

⁶⁷ ռուս. տարբերակում՝ ксватцелл, անգլ տարբերակում՝ ksvatznell

իրենց գոյատևման վայրն անմատչելի է ուրիշ հանրությունների էակների համար, և, ինչպիսին էլ որ լինեն փոխադարձ ոչնչացման նրանց միջոցները, չեն կարող մուտք գործել իրենց երկրի տարածքը:

Նրանք այնքան էին համոզված այդ բանում, որ ոչ մի անգամ հայացք չնետեցին դեպի ցած, որ տեսնեին, թե այդ ամբողջ ժամանակի ընթացքում այնտեղ ինչեր են կատարվում իրենց անմատչելի երկիրը թափանցելու համար, և հետևաբար նախօրոք ոչ մի համապատասխան քայլ չձեռնարկեցին:

Ահա հենց այդ պատճառով էլ հետագայում տեղի ունեցան այն ցավալի դեպքերը, որոնք ի վերջո հանգեցին այն բոլոր արգասիքների ոչնչացմանը, որոնց հասել էր լիահավատ Սրբազան Անհատ Սուրբ Լաման:

Նախ և առաջ հարկ է ասել քեզ, որ այդ բարձրադիր երկիրը նաև այն ոչ մեծ խմբի գոյատևման վայրն էր, որը կազմող յոթ էակները, հետևելով կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից ձերբազատվելու համար տրված Սուրբ Լամայի ցուցումներին, իրենց ինքնակատարելագործումը հասցրել էին վերջնական աստիճանին:

Երբ այդ «Յոթնյակն» իմացավ այդ իրադարձության մասին, իրենց գլխավորին ուղարկեց մասնակցելու այդ երկրի մտահոգ ղեկավարների հրավիրած խորհրդակցությանը, որը մայրաքաղաքում տեղի ունեցավ հենց այն օրը, երբ ներքևի անկոչ հյուրերը հայտվեցին վերևում:

Այդ առաջին խորհրդակցության համար հավաքված տիբեթաբնակ էակների ղեկավարները որոշեցին խաղաղասիրաբար ու սիրալիք խնդրել այդ անկոչ հյուրերին, որ ողջ-առողջ վերադառնան այնտեղ, որտեղից եկել են և հանգիստ թողնեն իրենց և իրենց խաղաղ երկիրը, որն ուրիշներին ոչ մի վնաս չի պատճառում:

Երբ մի քանի օր հետո պարզ դարձավ, որ անկոչ հյուրերը հետ դառնալու մտադրություն չունեն, այլ նույնիսկ այդ խնդրանքից հետո շտապում են ավելի խորանալ իրենց երկրի մեջ, առաջին խորհրդակցության մասնակիցներն ավելի շատ տագնապեցին. նրանք հրավիրեցին երկրորդ խորհրդակցությունը և սկսեցին մտածել, թե ինչ անեն, որ այդ էակներին խանգարեն *«առանց հրավերի մուտք գործել ուրիշի տուն»*:

Եղան զանազան առաջարկներ, թե ինչպես իրենց երկրից վտարեն այդ էակներին, որոնք ագռավների պես եկել-հավաքվել են ուրիշի բնում. բայց դրանց մեջ ամենաշատը հավանության արժանացավ այդ «ինքնակոչ ամբարտավաններին» մարդագլուխ ոչնչացնելու առաջարկը:

Եվ այդ գործը, զավակս, հեշտությամբ կարելի էր գլուխ բերել, քանի որ նրանց երկիրն այնպիսին էր, որ ընդամենը մի հոգին, սարերից քարեր գլորելուց բացի ուրիշ ոչ մի միջոց չկիրառելով, կարող է ոչնչացնել ներքևի հարթավայրերում գտնվող հազարավոր թշնամական էակների, և դրա հնարավորությունը հատկապես մեծ էր այն բանի շնորհիվ, որ նրանցից յուրաքանչյուրն իր հինգ մատի պես գիտեր հարազատ երկիրը:

Այդ խորհրդակցության վերջում Տիբեթ երկրի բոլոր ղեկավարներն այնքան գրգռված էին, որ համարյա անկասկած կորոշեին ի կատար ածել մեծամասնության կողմից հավանության արժանացած որոշումը, եթե այդ փոթորկոտ խորհրդին չմիջամտեր «Յոթնյակի» ավագը, որին, ինչպես արդեն ասել եմ քեզ, այդ խորհրդին մասնակցելու էին ուղարկել մնացած անդամները:

Այդ «Յոթնյակի» հետագայում Սուրբ դարձած ավագը, խորհրդակցության մասնակիցներին համոզելով, որ չանեն այն, ինչ մտադրվել են, մասնավորապես ասաց հետևյալը:

«Ամեն մի էակի գոյությունը հավասարապես թանկ ու սիրելի է մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐԻՉ ԱՍՏՈՒՆ, ուստի այդքան շատ էակների ոչնչացումը քիչ ցավ չի պատճառի ՆՐԱՆ, ՈՎ առանց այդ էլ ծանրաբեռնված է մեր այս Երկրի ամենայն գոյի հոգսերով ու տխրություններով»:

Այն ամենը, ինչ այդ ժողովի ժամանակ տիբեթյան առաջնորդներին ասաց այդ ապագա Սուրբը, ընդհանուր առմամբ այնքան համոզիչ էր, որ նրանք որոշեցին ոչ միայն ոչ մի միջոց չձեռնարկել օտարերկրացիների դեմ, այլև նույնիսկ որոշեցին ձեռնարկել բոլոր նախազգուշական միջոցները, որպեսզի ոչ ոք չխանգարի իրադարձությունների ընթացքին:

Դրանից հետո անկոչ հյուրերի կարգավիճակով ներքևից եկած էակները, ոչ մի տեղ դիմադրության չհանդիպելով, խորացան դեպի այդ անսովոր երկրի սիրտը, որը մինչ այդ մեկուսացված էր քո այդ մոլորակի անընդհատ վատացող սովորական *լինելիական գոյատևման* բոլոր պայմաններից:

Եվ ահա, տեղի ունեցավ այն, ինչը մեծագույն դժբախտություն դարձավ ոչ միայն այդ դժբախտ երկրի բոլոր ժամանակակից ու ապագա էակների, այլև նույնիսկ ընդհանրապես քո այդ չարաղետ մոլորակի բոլոր ժամանակակից ու ապագա եռուղեղ էակների համար:

Բանն այն է, որ համայն Տիբեթի ղեկավարների այդ վերջին խորհրդակցությունում մասնավորապես նաև բանաձև էր ընդունվել այն մասին, որ խորհրդի՝ վիճակահանությամբ ընտրված անդամները հերթով պետք է գնան այն շրջանները, որտեղով անցնելու են այդ օտարերկրացի էակները, որպեսզի տեղի բնակչությանը նախօրոք տեղեկացնեն իրենց առաջնորդների ընդունած այն որոշման մասին, ըստ որի՝ ոչ մեկին ոչ մի պարագայում թույլ չի տրվում խոչընդոտելու այդ օտարերկրացիների առաջխաղացմանը:

Օտարերկրացիների առաջխաղացման այդ շրջանները մեկնողների շարքում վիճակահանությամբ հայտնվեց նաև «Յոթնյակի» ավագը:

Եվ երբ այդ ապագա Սուրբը հիշյալ նպատակով հասավ մի խոշոր բնակավայր, որի մոտակայքում հանգիստ առնելու համար տեղակայվել էր զինված օտարերկրացիների ամբոխը, ապա այդ բնակավայրի փողոցներից մեկում, այդ օտարերկրացիներից մեկի միտումնավոր, թե պատահաբար արձակած գնդակից *«տեղում գոհվեց»*:

Այդպիսի ավարտ ունեցավ այդ համարյա կատարելության հասած եղբայրների փոքրիկ խմբի ավագի գոյատևումը, և նրանց այդ ահավոր դեպքից հետո ուրիշ ոչինչ չէր մնում անելու, քան անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, որպեսզի տուն բերեն իրենց նախկին ավագի մոլորակային մարմինը:

Որպեսզի դու հստակ պատկերացնես իրական սարսափը, որ ապրեցին առանց ավագի մնացած այդ վեց եղբայրները, ինչպես նաև պատկերացնես դրա հետագա կործանարար հետևանքները՝ նախ և առաջ ես պետք է թեկուզ համառոտակի պատմեմ քեզ այդ Տիբեթ կոչվող երկրում այդ փոքրիկ խմբի ծագման ու հետագա գոյատևման պատմությունը, որը մշտապես բաղկացած էր լինում քո այդ մոլորակի յոթ եռուղեղ էակներից:

Այդ խմբակը Երկիր մոլորակում կազմավորվել և գոյատևում էր շատ ավելի վաղ ժամանակներից սկսած, քան այնտեղ երևաց այդ վերջին Սրբազան Անհատը՝ Սուրբ Լաման:

Իր յոթ անդամներով այն մշտապես գոյություն ուներ շատ հին ժամանակներից՝ ձեռնադրում ստանալով անմիջականորեն Սուրբ Կրիշնադիարմայից, որը նույնպես ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ դեսպաններից էր և հատուկ նպատակով առաքված էր Երկիր մոլորակի Գաղտակուրհանդա երկրում բազմացող եռուղեղ էակների մոտ:

Երբ ավելի ուշ Գաղտակուրհանդայում երևաց Սուրբ Բուդդան և պարզեց, որ Սուրբ Կրիշնադիարմայի շատ ցուցումներ դեռևս չեն հնացել այդ երկրի էակների հոգեկառույցների համար, և որ այդ ցուցումները, յուրացվելով այնտեղի էակների կողմից, նպաստում են կունդաբուժի օրգանի հատկությունների հետևանքների ոչնչացմանը, որոնցից ձերբազատվելուն օգնելու համար նրանց մոտ նաև Ինքն է առաքված, ինչպես նաև այն բանից հետո, երբ Նա որոշեց Սուրբ Կրիշնադիարմայի ցուցումներն ամբողջությամբ դնել իր սեփական ուսմունքի հիմքում, ապա անմիջականորեն Սուրբ Կրիշնադիարմայի կողմից ձեռնադրված այնտեղի այդ յոթ էակները, այն բանից հետո, երբ Բուդդան նրանց բացատրեց իրենց գոյության նպատակն ու անհրաժեշտությունը, և նրանք հստակորեն դա հասկացան և համոզվեցին, որ Սուրբ Բուդդայի ցուցումներն, ըստ էության, ոչ միայն չեն հակասում Սուրբ Կրիշնադիարմայի ցուցումներին, այլև նույնիսկ ավելի են համապատասխանում այդ ժամանակաշրջանի էակների հոգեկառույցին, դարձան Սուրբ Բուդդայի հետևորդները:

Իսկ էլ ավելի ուշ, երբ հատուկ Տիբեթ կոչվող երկրի էակների համար հայտնվեց Սուրբ Լաման և ինքն էլ իր հերթին հայտնաբերեց, որ Սուրբ Բուդդայի շատ ցուցումներ դեռևս շատ լավ կհամապատասխանեին այդ երկրի էակների հոգեկառույցին, եթե դրանց մեջ որոշ մասնակի շտկումներ արվեին՝ կապված նրանց գոյատևման արտաքին պայմաններում ժամանակի բերած փոփոխությունների հետ, ապա Նա ևս իր ուսմունքի հիմքում դրեց այն ճշմարտությունների շատ դրույթներ, որոնք արդեն տվել էր Սուրբ Կրիշնադիարման, և նորացրել էր Սուրբ Բուդդան. այնժամ ձեռնադրյալ էակների այդ փոքրիկ խմբակը, Բուդդային հետևող ուրիշ շատ խմբերի պես հստակ հասկանալով, որ Սուրբ Լամայի կողմից Բուդդայի ուսմունքի մեջ մտցված լրացումներն ու փոփոխություններն ավելի լավ են համապատասխանում իրենց ներկա հոգեկառույցին, Սուրբ Լամայի հետևորդները դարձան:

Այդ փոքրիկ խմբի էակները մի կանոն ունեին, որին, ի դեպ, շատ խստորեն հետևում էին. ըստ դրա՝ Սուրբ Լամայի որոշ գաղտնի պատվիրաններ, որոնք վերաբերում էին իրենց խմբի էակներին, պետք է մի սերնդից մյուսին փոխանցվեին միայն խմբի գլխավորի միջոցով, իսկ նա կարող էր մնացած վեցին

հաղորդակից դարձնել այդ գաղտնիքներին միայն այն բանից հետո, երբ նրանք կհասնեն որոշակի նվաճումներին:

Հենց դա էր պատճառը, որ այդ փոքրիկ կազմակերպության բոլոր վեց անդամները, որոնք արդեն արժանի ու պատրաստ էին դարձել մոտ ապագայում այդ գաղտնիքներին հասու դառնալուն՝ հայտնվեցին այդպիսի ահավոր վիճակի մեջ, երբ, ինչպես ասացի, ստացան իրենց գլխավորի զոհվելու լուրը: Այդ միակ ձեռնադրյալի կործանմամբ նրանց համար ընդմիջտ կորսվեց Սուրբ Լամայի գաղտնի պատվիրաններին հաղորդակից դառնալու հնարավորությունը:

Քանի որ նրանց գլխավորը զոհվեց այդպես անսպասելիորեն, ապա նրանց համար անհուսալի դարձավ նաև նման պարագայում միակ հնարավորությունը՝ «այդ պատվիրանները ստանալ» զոհված գլխավորի բանականության հետ հաղորդակցվելով՝ օգտվելով «սրբազան Հալմտցնոդշինումի»⁶⁸ գործընթացից, որի հնարավորությանը ոչ միայն նրանք ծանոթ էին, այլ նաև ունեին դրա համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

Զավա կս, դու երևի դեռ ոչինչ չգիտես՝ ս այդ սրբազան գործընթացի մասին:

Սրբազան Հալմտցնոդշինումն այն գործընթացն է, որի միջոցով այն եռուղեղ էակները, որոնք արդեն հասցրել են հանդերձավորել իրենց սեփական կեսջան մարմինը և այն հասցնել լիակատար գործունակության և բանականության որոշակի աստիճանի, միտումնավոր կերպով արդեն լրիվ ոչնչացված էակի կեսջան մարմնի համար ստեղծում են այնպիսի թանձրության հանդերձ կամ, այլ կերպ ասած՝ «նյութականացում», որ այդ մարմինը որոշակի ժամանակով կրկին ձեռք է բերում իր որոշ գործառույթները դրսևորելու կարողություն, որոնք բնորոշ են եղել այդ մոլորակային մարմնի նախկին կրողին:

Այդ սրբազան գործընթացը կարող է ի կատար ածվել այնպիսի էակի կեսջան մարմնի համար, որն իր գոյատևման ընթացքում նաև իր բարձրագույն *լինելիական մարմինը* հասցրել է լիակատար գործունակության աստիճանի, և որը դրանից բացի այդ մարմնի բանականությունը կարողացել է հասցնել, այսպես կոչված, «*լինելիական Միքոցինու*»⁶⁹ աստիճանի:

Մեր Մեծ Տիեզերքում, արդեն մեծած էակի *լինելիական կեսջան մարմինը* միտումնավոր կերպով հանդերձավորելուն զուգընթաց՝ կա նաև մեկ ուրիշ գործընթաց, որը կոչվում է սրբազնագույն «*ջերիմեթլի*»⁷⁰:

Այդ սրբազնագույն գործընթացն այն է, որ երբ սկզբում միտումնավոր կերպով հանդերձավորվում է բարձրագույն *լինելիական մարմինը*՝ «հոգու մարմինը», և միայն դրանից հետո, ինչպես առաջին դեպքում, ի կատար է ածվում սրբազան Հալմտցնոդշինում:

Իհարկե, այդ երկու գործընթացները կարելի է իրագործել միայն այն դեպքում, եթե այդպիսի բարձրագույն *լինելիական մարմինները* գտնվում են այն մոլորակի ոլորտների հետ հպվող ոլորտներում, որում տեղի են ունենում այդ «սրբազան գաղտնածեսերը»:

Բացի այդ, նշված կազմավորումները, որոնք միտումնավոր ու գիտակցաբար կյանքի են կոչվում որոշակի էակների կողմից, կարող են գոյատևել և կապի ու հաղորդակցման մեջ լինել այդ էակների հետ այնքան ժամանակ, քանի դեռ այդ կազմավորումները կյանքի կոչած էակները դրանք սնուցում են իրենց սեփական սրբազան «Հայեսախալդանից»:

Այսպիսով, «Յոնյակի» մնացած վեց անդամները կարող էին ձեռնամուխ լինել այդ սրբազան Հալմտցնոդշինում գործընթացին, որպեսզի կապի մեջ մտնեն իրենց զոհված գլխավորի բանականության հետ, եթե միայն, կանխատեսելով նրա հանկարծակի մահը, դեռևս նրա կենդանության ժամանակ իրականացրած լինեին որոշակի նախապատրաստություն, որն անհրաժեշտ է այդ գործընթացի համար:

Որպեսզի քեզ համար հասկանալի լինի այդ խորախորհուրդ Հալմտցնոդշինում գործընթացին նախապատրաստվելու էությունը, պետք է իմանաս «*լինելիական համբարձիոնի*»՝ *լինելիական կեսջան մարմնի* «արյան» երկու առանձնահատուկ հատկանիշների մասին:

Լինելիական համբարձիոնի այդ երկու հատկանիշներից մեկն այն է, որ եթե առանձնացվի ու հեռացվի դրա որևէ մասը, ապա որքան էլ այն հեռու տարվի, դրա և այդ տիեզերական սուբստանցիայի

⁶⁸ ռուս. տարբերակում՝ Алмцношину, անգլ. տարբերակում՝ almtznoshinoo

⁶⁹ ռուս. տարբերակում՝ Мирозину, անգլ. տարբերակում՝ mirotzinoo

⁷⁰ ռուս. տարբերակում՝ джериметли, անգլ. տարբերակում՝ djerimetly

հիմնական մասի միջև այնպիսի «կապող թել» է գոյանում, որը կազմված է լինում նույն այդ սուբստանցիայից, և դրա խտությունն ու հաստությունը համամասնորեն մեծանում ու փոքրանում են այդ առանձնացված մասի և հիմնական մասի միջև եղած հեռավորությանը համապատասխան:

Իսկ այդ համբարձիոնի երկրորդ առանձնահատուկ հատկանիշն էլ այն է, որ երբ այն մտցվում է այդ սուբստանցիայի հիմնական խտացման մեջ և խառնվում այդ նախասկզբնական խտացման հետ, ամենուրեք բաշխվում է միևնույն խտությամբ ու քանակությամբ, որտեղ էլ այդ խտացումը գտնվելիս լինի և ինչ քանակությամբ էլ որ այդ համբարձիոնը, միտումնավոր կամ պատահականորեն, ներմուծված լինի այդ հիմնական խտացման մեջ:

Եվ այսպես, քանի որ էակի կեսջան մարմնի հանդերձը բաղկացած է լինում այնպիսի սուբստանցիաներից, որոնց համակցությամբ այդ տիեզերական կազմավորումը անհամեմատ ավելի թեթև է դառնում, քան տիեզերական նյութերի այն զանգվածը, որը գտնվում է մոլորակի շուրջը և կազմում է այդ մոլորակի մթնոլորտը, ապա այնպես է լինում, որ հենց որ էակի կեսջան մարմինն առանձնանում է նրա մոլորակային մարմնից, անմիջապես վեր է բարձրանում՝ համաձայն «տենիկդոա» կամ, ինչպես երբեմն ասում են, «ձգողականության» տիեզերական օրենքի և հասնում այն ոլորտին, որում նրա կշիռը հավասարակշռության վիճակում է հայտնվում, և, հետևաբար հենց այն տեղն է հասնում, որը համապատասխանում է այդ տիեզերական գոյացությանը. այսպիսով, կապված՝ այդ ամենի հետ՝ նախնական պատրաստություն ասելով պետք է հասկանանք այն, որ նախօրոք՝ դեռևս այն էակի կենդանության ժամանակ, որի կեսջան մարմնի հետ ենթադրվում է մահից հետո ի կատար ածել սրբազան Հալմոցնողշինում գաղտնածեսը, պետք է վերցրված լինի նրա համբարձիոնի մի մասնիկը, և այդ մասնիկը պետք է պահպանված լինի դրան համապատասխանող որևէ վերմոլորակային կազմավորման մեջ կամ ներմուծված լինի այդ «ծեսն» իրականացնող էակների ներսը և միտումնավոր կերպով միախառնված լինի նրանց սեփական կեսջան մարմինների համբարձիոնների հետ:

Այսպիսով, երբ կատարելության հասած եռուղեղը էակը, որը ենթակա է Հալմոցնողշինում գաղտնածեսին, ավարտում է իր մոլորակային գոյատևումը, և նրա կեսջան մարմինն առանձնանում է նրա մոլորակային մարմնից, ապա այդ *լինելիական համբարձիոնի* առաջին առանձնահատուկ հականիշի շնորհիվ սկսում է հաստատվել այն կապը, որի մասին հենց նոր ասացի, որով տվյալ կեսջան մարմինը կապվում է կա՛մ այն տեղի հետ, որտեղ նախօրոք պահպանվել է նրա համբարձիոնի մասնիկը, կա՛մ այն էակների հետ, որոնք միտումնավոր կերպով այդ մասնիկը հանդերձավորել են իրենց սեփական կեսջան մարմիններում:

Որպեսզի այս հարցին վերաբերող մեր հետագա զրույցներում քեզ համար ամեն ինչ պարզ լինի, հենց հիմա քեզ պետք է ասել, որ հիշյալ կապը, որի մի ծայրը գտնվում է համապատասխան ոլորտին հասած կեսջան մարմնի մեջ, իսկ մյուս ծայրը մնացած է լինում կա՛մ այն վերմոլորակային կազմավորումներում, որոնցում տեղակայվել է տվյալ կեսջան մարմնի համբարձիոնի հիմնական զանգվածի մի մասնիկը, կա՛մ այն էակների ներսում, որոնք տվյալ կեսջան մարմնի համբարձիոնը միտումնավոր կերպով միախառնել են իրենց սեփական կեսջան մարմնի հետ, տարածության մեջ կարող է իր գոյությունը պահպանել միայն սահմանափակ ժամանակ՝ մինչև այն պահը, երբ այն մոլորակը, որում սկզբնավորվել է տվյալ էակը, կավարտի իր մեկ պտույտն իր արևի շուրջ:

Նոր պտույտ սկսվելու պահին կապի հիշյալ թելերն անհետանում են:

Անհետանում են այն պատճառով, որ բոլոր մոլորակների շուրջը եղած մթնոլորտներում, հիմնական սրբազան տիեզերական Յոթնապարապարշինող օրենքին համապատասխան, Տրոգոավտոեգոկրատ մեծ տիեզերական օրենքի համար պահանջվող տիեզերական նյութերի էվոյուցիան և ինվոյուցիան կրկին սկսում են ընթանալ միայն տեղական նշանակության տրոգոավտոեգոկրատական գործընթացի շրջանակներում, այսինքն՝ տվյալ արևային համակարգության, այսպես կոչված, «սեփական ակտիվության» սահմաններում, ինչի հետևանքով առանց բացառության բոլոր այն տիեզերական նյութերը, որոնք այդ պտույտի ընթացքում առկա են լինում տվյալ մթնոլորտում, դրանց թվում նաև հիշյալ միացությունները, անմիջապես փոխակերպվում են այն տիեզերական նյութերին, որոնք այդ մթնոլորտներում պետք է առկա լինեն:

Ահա այսպես, զավա՛կս... Քանի դեռ մոլորակների այդ պտույտները չեն հասել իրենց ավարտին, մոլորակներում գտնվող այն էակները, որոնք կա՛մ իրենց ներսում ունեն որևէ կեսջան մարմնի համբարձիոնի մասնիկ, կա՛մ իրենց տրամադրության տակ ունեն համբարձիոնի մասնիկ

պարունակող վերմոլորակային գոյացություն, կարող են (եթե, իհարկե, օժտված են դրան համապատասխանող բոլոր նախադրյալներով) ցանկացած ժամանակ այդ մարմինը հետ բերել մոլորակի թանձր ոլորտը և այն խտացնելով իրենց սեփական համբարձիոնին համատարասխան՝ այդ եղանակով կապ հաստատել արդեն ամբողջովին ձևավորված ինքնուրույն տիեզերական միավորի բանականության հետ:

Իսկ այդ հետ կանչելը կամ, ինչպես իրենք են ասում, «նյութականացումը» ի կատար է ածվում, ինչպես արդեն քեզ ասել եմ, այսպես կոչված, «վալիկրինի»⁷¹ օգնությամբ, այսինքն՝ գիտակցորեն սեփական համբարձիոնը այդ կապի երկու ծայրերը ներմուծելով:

Դեռևս նախքան տիբեթյան այդ դեպքը քո այդ մոլորակիտարբեր դարաշրջանների եռուղեղ էակներն արդեն մի քանի անգամ կիրառել էին այդ սրբազան Հալմտցնողշինում գործընթացը, և անցյալում տեղի ունեցած այդ սրբազան գործընթացների մասին տեղեկության վերաբերյալ կային մի քանի լեզումի՜նիզմներ:

Հենց այդ լեզումի՜նիզմների միջոցով էր այդ փոքրիկ տիբեթյան խումբն իմացել այդ գործելակարգի բոլոր մանրամասները, որոնք վերաբերում էին այդ սրբազան գործընթացին, և, իհարկե, նույնպես տեղյակ էին հատուկ նախապատրաստության անհրաժեշտությանը:

Բայց հիմա, ուրիշ ոչ մի հնարավորություն չունենալով, որպեսզի պարզեն այդ գաղտնածեսի բոլոր խորախորհուրդ մանրամասները, բացի իրենց հանգուցյալ ավագի բանականության հետ կապ հաստատելուց, նրանք այնուհանդերձ որոշեցին իրենց ավագի կեսջան մարմնի հետ ի կատար ածել այդ սրբազան գաղտնածեսը՝ նույնիսկ առանց հիշյալ նախնական պատրաստության:

Եվ այդպես, հենց այդ վտանգավոր փորձի պատճառով էլ այնտեղ տեղի ունեցավ այն, ինչը հանգեցրեց հիշյալ մեծ դժբախտությանը:

Ինչպես երևաց իմ հետագա հետազոտություններից, այդ մեծ դժբախտությունն այնտեղ վրա է հասել հետևյալ կերպ:

Երբ դեռևս իրենց մոլորակային գոյատևման մեջ գտնվող այդ վեց «մեծ ձեռնադրյալները», զույգեր կազմելով, հերթով սկսել են երեք օր ու զիշերների ընթացքում իրենց նախկին գլխավորի մոլորակային մարմնի հետ վալիկրինի գործընթաց իրականացնել՝ այդ մարմնի մեջ ներմուծելով իրենց սեփական համբարձիոնը, ապա նրա կեսջան մարմնի հետ միացման համար հիշյալ նախնական պատրաստության բացակայության պատճառով նրանց համբարձիոնի իրացումը տեղի չի ունեցել այն տեղում, ուր այն պետք է հասներ, այլ քառսային ձևով կուտակվել է իրենց լինելիական դեկավարի մոլորակային մարմնի վերևում. և քանի որ, ի դժբախտություն իրենց, հենց այդ օրերին տվյալ վայրի մթնոլորտում տեղի էին ունենում Ոգիդնողի սրբազան ակտիվ տարրի ուժգին խառնում, կամ, ինչպես այնտեղի էակներն են ասում, «ուժեղ ամպրոպներ» էին, ապա այդ երկու տիեզերական «արդյունքների» միջև, որոնք դեռևս նոր էին հայտնվել մի տիեզերական երևույթից մյուսին անցնելու գործընթացում, առաջացել է, այսպես կոչված «սոբրիոնոլյան»⁷² միացում:

Այդ միացման հետևանքով, այնտեղ՝ այդ չարաղետ մոլորակի ոչ մեծ տարածքում, տեղի է ունեցել այն արագացված տիեզերական երևույթը, որը կոչվում է «նոտոնիչտոն»⁷³, այսինքն՝ կազմավորված բոլոր տիեզերական բյուրեղացումների հանկարծակի ու ակնթարթային էվոլյուցիա, այն է՝ բոլոր հարակից վերմոլորակային գոյացությունների ակնթարթային վերածում Եթերակոիլնո նախասկզբնական նյութի:

Այդ սոբրիոնոլյան միացումը կամ, ինչպես ասում են Երկիր մոլորակում, «պայթյունն» այնքան ուժգին էր, որ այդ «նոտոնիչտոն»-ի ընթացքում այնտեղ առանց բացառության ամեն ինչը վերածվեց Եթերակոիլնոյի՝ այդ էակների փոքրիկ խմբի գլխավորի մոլորակային մարմինը, սրբազան գաղտնածես իրականացնող բոլոր վեց եղբայրները, ինչպես նաև շրջակա մեկ «շման» կամ, ինչպես քո սիրելիները կասեին, «մեկ քառակուսի կլիմետը» մակերեսով տարածքում եղած ընդհանրապես բոլոր ոգեկոչված կամ թեկուզ որոշակիորեն խտացված վերմոլորակային գոյացությունները:

⁷¹ ռուս. տարբերակում՝ валикрин, անգլ. տարբերակում՝ vallikrin

⁷² ռուս. տարբերակում՝ собриональный, անգլ. տարբերակում՝ sobrionolian

⁷³ ռուս. տարբերակում՝ ноутоуничтоно, անգլ. տարբերակում՝ nichto-oonichtono (ռուսերենով ակնարկվում է «ոչ այն ոչինչը, այլ...» անհիիյացիան)

Այդ էակների կողմից ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով ոչնչացված այդ գոյացությունների մեջ էին նաև բոլոր այն, այսպես կոչված, «գրքերը», որոնք պատկանում էին երկրային այդ յոթ, հիրավի մեծ, ձեռնադրյալ էակներին, ինչպես նաև այն իրեղենը, որը որպես միջոց էր ծառայում հիշողության մեջ պահելու այն ամենը, ինչը կապված էր Վերևից առաքված բոլոր երեք ճշմարիտ Սրբազան Անհատների՝ Սուրբ Կրիշնադեհարմայի, Սուրբ Բուդդայի և Սուրբ Լամայի հետ:

Այժմ, զավակս, ես ենթադրում եմ, որ քեզ համար պարզ կդառնա իմ այն խոսքերի իմաստը, երբ այդ քաղցր ռազմական արշավին տվեցի իմ գնահատականը՝ ասելով, որ դա մեծ դժբախտության պատճառ դարձավ ոչ միայն այդ երկրի էակների համար, այլև, հնարավոր է, այդ մոլորակի բոլոր եռուղեղ էակների համար:

Այսպիսով, զավակս, այժմ քեզ համար պարզ դարձավ քո այդ մոլորակում մինչև ներկա ժամանակները պահպանված և իմ թվարկած այդ հինգ կրոնների պատմությունը, որոնք հիմնվել էին Վերևից այդ եռուղեղ էակների մոտ ուղարկված հինգ տարբեր սրբերի ուսմունքների վրա, որպեսզի նրանք ձեռքագատվեն կոնկրետ օրգանի հատկությունների հետևանքներից. իմացար, թե ինչպես են այդ բոլոր հինգ կրոններն աստիճանաբար փոխվել, ինչպես միշտ՝ սովորական *լինելիական գոյատևան* իրենց իսկ կողմից հաստատված աննորմալ պայմանների պատճառով, մինչև ի վերջո վերածվել են, ցանկացած առողջ բանականության տեսակետից՝ երեխայական հեքիաթների: Այնուհանդերձ, այդ հինգ դավանաբանությունները դեռևս նրանցից ոմանց նեցուկ էին դառնում իրենց բարոյական համոզմունքների պահպանման համար, ինչի շնորհիվ նախորդ որոշ դարաշրջաններում նրանց համատեղ գոյատևումն ընթանում էր եռուղեղ էակներին քիչ թե շատ վայել ձևով:

Բայց հիմա՝ այդ դավանաբանությունների նույնիսկ վերջին մնացորդների ոչնչացումից հետո, անգամ դժվար է պատկերացնել, թե այդ ամենն ինչ ավարտ կունենա:

Այդ հինգ կրոններից վերջինը, որը հիմնված էր ճշմարիտ դեսպանորդ Սուրբ Լամայի ուսմունքի վրա, վերջնականապես և նույնիսկ «շրխկոց արձակելով» ոչնչացվեց իրենց այդ քաղցր ռազմարշավի հետևանքով:

Նախավերջինը, որը հիմնված էր Սուրբ Մուհամեդի ուսմունքի վրա, նրանք հիմա ոչնչացնում են՝ «գերմանական յունկերների» բարի կամքով արգելք դնելով նշանավոր ֆեսերն ու չադրաները կրելու վրա:

Ինչ վերաբերում է էլ ավելի վաղ ծագած կրոնի վերջնական ոչնչացմանը, որը հիմնված էր Հիսուս Քրիստոսի ուսմունքի վրա, այսինքն՝ այն ուսմունքի և կրոնի, որի հետ մեծ հույսեր էին կապել Բարձրագույն Անհատները, ապա ներկայիս այնտեղի եռուղեղ էակաները, որոնք արդեն գերտարօրինակ են դարձել, այդ գործին ձեռնամուխ են եղել՝ Երուսաղեմ քաղաքում համալսարան բացելով ժամանակակից հրեա երիտասարդության համար:

Իսկ Սուրբ Մովսեսի ուսմունքի վրա հիմնված կրոնը, որը թեև երկար ժամանակ գոյություն է ունեցել և դեռևս որոշակիորեն պահպանվում է իր հետևորդների կողմից, սակայն այն օրգանական ատելության պատճառով, որը մյուս հանրությունների էակները տածում են այդ կրոնը դավանող էակների նկատմամբ հենց միայն այն վնասաբեր գաղափարի հետևանքով, որն այնտեղ գոյություն ունի «քաղաքականություն» անվան տակ, անխուսափելիորեն վաղ թե ուշ նույնպիսի «շրխկոցով» կհասնի իր վերջին:

Եվ վերջապես, ինչ վերաբերում է այնտեղի այն կրոնին, որն, այսպես ասած, հիմնվել է Սուրբ Բուդդայի ուսմունքի վրա, ապա ես արդեն քեզ պատմել եմ, որ գաղափարի ոչ ճիշտ ընկալման վրա հիմնված իրենց նշանավոր տառապանքով նրանք հենց սկզբից այդ ուսմունքը միջոց դարձրին իրենց, ինչպես հենց իրենք են ասում, «մտավոր այլասերման» համար:

Իմիջիայլոց հարկ է նշել, որ սկզբում «թանգուորները», և նրանցից հետո՝ «բրահմանականները», «շունականները» և այլք էին այնտեղ զբաղվում մտավոր այլասերման գործով, իսկ ներկայումս այդ նույն գործով զբաղվում են այսպես կոչված աստվածաբանները և մյուս «կեղծ գիտնականները»:

Այսքանն ասելուց հետո Բեհեղգեբուդը որոշ ժամանակ լռեց. տեսանելի էր, որ նա կենտրոնացած ինչ-որ բանի մասին է մտածում: Հետո նա ասաց.

«Ես կարծում եմ, որ ներկա պահին շատ օգտակար կլինի քո բանականության համար, եթե քեզ պատմեմ ևս մի իրադարձության մասին, որը նույնպես առնչվում է սրբազան Հալմոցնողշինում գաղտնածեսի հետ և վերաբերում է այն Սրբազան Անհատին, որը սաղմնավորվեց քո սիրելիների միջավայրում և կազմավորվելուց հետո ստացավ «Հիսուս Քրիստոս» անունը:

Ես ուզում եմ քեզ պատմել նրանց միջավայրում կյանքի կոչված այդ Սրբազան Անհատի հետ տեղի ունեցած այդ կարևոր իրադարձության մասին, որին ներկայիս քո սիրելիները «Հիսուս Քրիստոսի Մահն ու Հարությունը» բնորոշումն են տալիս:

Այդ փաստին ծանոթանալով՝ դու ևս մեկ օրինակ կունենաս, որով քեզ համար առավել հասկանալի կդառնա սրբազան Հալմոցնողշինումի իմաստն ու էությունը, նաև լրացուցիչ պարզաբանիչ օրինակ կունենաս իմ այն արդեն պատմածի վերաբերյալ, թե ինչպես, հենց միայն իրենց ընդհանուր հոգեկառույցի տարօրինակ մի հատկանիշի պատճառով, որն իմաստակել է կոչվում, միտումնավոր կերպով Վերևից իրենց միջավայրն ուղարկված ճշմարիտ Սրբազան Անհատների ասածների ու պատգամածների «կտոր առ կտոր մեկ ամբողջության մեջ հավաքված» փշրանքներն այնքան են աղավաղվել տվյալ Սրբազան Անհատների ժամանակակիցների հենց առաջին սերնդի կողմից, որ դրա արդյունքում իրենց ասած այդ կրոնական ուսմունքներից մնացած տեղեկատվությունը, որը փոխանցվում է հաջորդ սերունդներին, կարող է պիտանի դառնալ գուցե թե միայն, այսպես կոչված, «մանկական հեքիաթների» համար:

Բանն այն է, որ երբ այդ Հիսուս Քրիստոս անունով Սրբազան Անհատը կյանքի է կոչվել երկրային եռուղեղ էակի մոլորակային մարմնով, և հետո էլ Նա պետք է բաժանվեր իր մոլորակային արտաքին հանդերձանքից, հենց այդ ժամանակ էլ Նրա կեսջան մարմնի հետ նույնպես որոշ երկրային եռուղեղ էակների կողմից ի կատար է ածվել Հալմոցնողշինում սրբազան գործընթաց, որպեսզի հնարավոր լինի, նկատի ունենալով Նրա մոլորակային գոյատևման բռնի դադարեցումը, կապ պահպանել Նրա Աստվածային Բանականության հետ և այդ եղանակով որոշակի տիեզերական ճշմարտություններ ու ապագային վերաբերող ցուցումներ ստանալ, որոնք Նա չէր հասցրել փոխանցել իրենց Իր կենդանության օրոք:

Այդ մեծ իրադարձության վերաբերյալ վկայություններ գրի առնվել այդ սրբազան գործընթացն իրագործող որոշ մասնակիցների կողմից, և այդ մասին միտումնավոր կերպով ու որոշակի նպատակով պատմվել է շրջապատում եղած սովորական էակներին:

Այսպիսով, զավակս, քանի որ այդ ժամանակահատվածը համընկել է քեզ դուր եկած այդ եռուղեղ էակների տարօրինակ բանականության՝ իմ կողմից արդեն մի անգամ հիշատակված «հատկապես ուժեղ գործունեության» հետ (այն պարբերական «Էկզաքերբազիա»⁷⁴ առումով, ինչը «շրջապատի իրենց նման էակներին մոլորեցնելու» պահանջմունքով վաղուց է նրանց բնորոշ դարձել)՝ մի ժամանակաշրջան, երբ նրանցից շատերը ձգտում էին «գիտնական» կոչվել և, իհարկե՝ «նոր տեսակի», նաև այն պատճառով, որ այդ ժամանակ նշված սովորական էակների շրջապատում շատ կային այդպիսի էակներ, ապա նրանք հաջորդ սերունդներին փոխանցվելիք այն դիտողությունների ու արտահայտությունների մեծ մասում, որոնք տեղ էին գտել այդ սրբազան գործընթացի անմիջական վկաների պատմություններում, «խցկեցին» այնպիսի «անհեթեթություններ», որ, ի համելումն այն անկասկածելի վկայությունների, թե Հիսուս Քրիստոսը խաչվել է և դրանից հետո թաղվել, նրանք նաև նույնպիսի համոզվածությամբ ապացուցում էին, թե Հիսուս Քրիստոսը խաչվելուց ու թաղվելուց հետո հարություն է առել և շարունակել իրենց հետ ապրել՝ ուսուցանելով այս ու այս բաները, և միայն դրանից հետո է Նա Երկինք համբարձվել իր մոլորակային մարմնով:

Նրանց այդ օբյեկտիվ իմաստով «հանցավոր իմաստակության» արդյունքն այն է եղել, որ հետագա սերունդների էակների մոտ լրիվ ոչնչացվել է ճշմարիտ հավատն առ այդ ամբողջ Աստվածայինն ու փրկության վերաբերյալ Համայնասիրող Հիսուս Քրիստոսի բացառիկ ավարտուն ուսմունքը:

Գրի առնված այդ անհեթեթություններն աստիճանաբար սկսեցին հետագա սերունդների որոշ էակների ներկայություններում կասկածի ազդակ ծնել ոչ միայն հենց նոր իմ նկարագրածի, այլև ընդհանրապես Վերևից միտումնավոր կերպով նրանց միջավայրում կյանքի կոչված այդ Սրբազան Անհատի ճշգրիտ ցուցումներին ու բացատրություններին վերաբերող ամբողջ ճշմարիտ տեղեկատվության նկատմամբ:

Սակայն հետագա սերունդների հիշյալ որոշ երկրային եռուղեղ էակների ներկայություններում կասկածի ազդակ ծնող այդ նախադրյալները սկսեցին բյուրեղանալ և նրանց ընդհանուր ներկայությունների անքակտելի մասը դառնալ գլխավորապես այն պատճառով, որ նույնիսկ նրանք, չնայած իրենց բնորոշ դարձած համարյա մեքենայական գոյատևման գործընթացին, այնուհանդերձ

⁷⁴ ռուս. տարբերակում՝ экзацербация, անգլ. տարբերակում՝ ekbarzerbazia

բավականին երկար ժամանակի՝ իրենց ժամանակով շատ դարերի ընթացքում այդ մեքենայական բյուրեղացումից աստիճանաբար դուրս բերեցին որոշ տիեզերական ճշմարտություններ քիչ թե շատ ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ տվյալներ, ինչպես օրինակ՝ այն անհերքելի ճշմարտության վերաբերյալ, որ եթե որևէ էակի հետ տեղի է ունենում սրբազան Ռասկուարնոյի գործընթաց, կամ, ինչպես իրենք են ասում՝ «եթե որևէ մեկը մահանում է» և, դեռ ավելին, թաղվում, ապա այդ էակն այլևս երբեք չի խոսի և չի ուսուցանի:

Եվ ահա, կարճ ասած, այդ թշվառներից նրանք, որոնց ներսում, թեկուզ թույլ, բայց առողջ տրամաբանության օրենքով գործում էր *լինելիական մտածողությունը*, և նրանք ոչ մի կերպ չէին ընդունում այդ անտրամաբանական ու անհավանական անմտությունները, ի վերջո կորցրին իրենց հավատի նշույլները ցանկացած ճշմարտության նկատմամբ, որն իրապես տրվել ու բացատրվել էր Հիսուս Քրիստոս կոչված այդ Սրբազան Անհատականության կողմից:

Իսկ ինչ վերաբերում է մնացած երկրային եռուղեղ էակներին, որոնք, ի դեպ ասած, ընդհանրապես մեծամասնություն են կազմում, ապա նրանք, համապատասխան տարիքում վերածվելով (շատ բաների պատճառով, բայց գլխավորապես այն պատճառով, որ իրենց գոյատևման հենց առաջին տարիներից նրանց բնորոշ է դարձել զբաղվել «մոլորատություններով»⁷⁵), այսպես կոչված, «խելապականների», բառ առ բառ, բացարձակապես առանց որևէ *լինելիական տրամաբանական* դատողության մասնակցության, կուրորեն ընդունում են իրենց հասած այդ բոլոր «ֆանտաստիկ անհերթելիությունները». արդյունքում նրանց մոտ մեքենայաբար յուրահատուկ «հավատ» է գոյանում ամբողջ այդ կրոնական ուսմունքի նկատմամբ, ինչպես եթե այն ներկայանար որպես բոլոր այն «ճշմարտությունների» համակցությունը, որոնք այս կամ այն կերպ կապված են Վերսից միտումնավոր կերպով իսկապես իրենց մոտ ուղարկված և Հիսուս Քրիստոս կոչված այդ Սրբազան Անհատի հետ:

Այպես կոչված «Խորհրդավոր Ընթրիքը», որի մասին վկայություն կա «գրառումների համակցության» մեջ (այն ներկայումս գոյություն ունի քո ժամանակակից սիրելիների մոտ և ներկայացվում է որպես այդ Սրբազան Անհատի ճշգրիտ պատմությունը), որն իրենք «Սուրբ Գիրք» են անվանում, ոչ այլ ինչ է, եթե ոչ Սուրբ Հիսուս Քրիստոսի կեսջան մարմնի հետ Հալմոցնոդիումում մեծ գաղտնածես իրագործելու նախապատրաստություն:

Հետաքրքիր է նշել, որ նույնիսկ «*առանձին կտորներից*» կազմված համակցության մեջ, որն իրենք Սուրբ Գիրք են անվանում, շատ անեղծ խոսքեր և նույնիսկ ամբողջական արտահայտություններ կան, որոնց մի մասն այդ «Խորհրդավոր Ընթրիքի» ժամանակ արտաբերել է Ինքը՝ Սուրբ Հիսուս Քրիստոսը, մի մասն էլ՝ Նրա ձեռնադրյալները, որոնք նույն այդ Սուրբ Գրքում կոչվում են «աշակերտներ» կամ «առաքյալներ». և այդ բառերն ու արտահայտությունները նույնպես, ինչպես միշտ և ամեն ինչը, քո սիրելիները, հատկապես ժամանակակիցները, ընկալում են «տառացիորեն»՝ առանց գիտակցելու դրանց մեջ ներդրված ներքին իմաստը:

Եվ նման անիմաստ ու «տառացի» ընկալում նրանք ունենում են, իհարկե, կրկին այն այն բանի պատճառով, որ լիովին դադարել են իրենց ընդհանուր ներկայություններում իրականացնել այն պարտք-պարտականությունը, որը պետք է իրագործվի *լինելիական ջանքերով*, միայն որոնք էլ իրենց հերթին եռուղեղ էակների ներսում նախադրյալներ են ստեղծում ճշմարիտ *լինելիական խորհրդածության* կարողության համար:

Ահա թե ինչու, զավակս, նաև այս դեպքում նրանք չմտածեցին թեկուզ այն մասին, որ երբ իրենց միջավայրում կյանքի էր կոչվել Սրբազան Անհատ Հիսուս Քրիստոսը, և երբ կազմվել էր ներկայումս գոյություն ունեցող այդ Սուրբ Գիրքը, այն կազմողներն ու նրանց նման էակներն այդ բառերն օգտագործում էին ոչ այնպես, ինչպես դրանք կիրառվում են ներկայումս:

Նրանք հաշվի չեն առնում, որ այն ժամանակաշրջանում այդ մոլորակի էակների «*լինելիական մտածողությունը*» դեռևս մոտ էր այն նորմալ մտածողությանը, որը սազական է եռուղեղ էակներին, և որ այն ժամանակ գաղափարների ու մտքերի փոխանցումը դեռևս «նմանականացվող» բնույթ էր կրում, կամ, ինչպես երբեմն նաև այլ կերպ են ասում, «այլաբանական» էր:

Այլ կերպ ասած՝ որպեսզի իրենց կամ ուրիշներին բացատրեն այս կամ այն գործողությունը, Երկիր մոլորակի եռուղեղ էակները դիմում էին նախկինում արդեն տեղի ունեցած նմանատիպ գործողությունների վերաբերյալ ունեցած պատկերացումների օգնությանը:

⁷⁵ ռուս. տարբերակում՝ мордортееном, անգլ. տարբերակում՝ moordoorten

Մինչդեռ հիմա այդ բանը ևս նրանց մոտ տեղի է ունենում «շղթայականության» սկզբունքին համապատասխան:

Իսկ դա սկզբում այնտեղ այդպես է եղել այն պատճառով, որ, ինչպես միշտ, նույն սովորական գոյատևման հաստատում գտած աննորմալ պայմանների հետևանքով նրանց *լինելիական մտածողությունը* սկսել է գործել առանց իրենց, այսպես կոչված, «զգացմունքների տեղայնացումների» կամ, իրենց տերմիններով ասած, «զգացական կենտրոններից» որևէ մեկի մասնակցության, գլխավորապես ինչի հետևանքով էլ նրանց մտածողությունը վերջնականապես դարձել է մեքենայական:

Ուստիև այդ ամբողջ ընթացքում, որպեսզի հնարավորություն ունենան իրենք իրենց կամ ուրիշին թեկուզ մոտավոր կերպով ինչ-որ բան բացատրելու, նրանք ինքնաբերաբար ստիպված էին և հիմա էլ շարունակում են ստիպված լինել հորինելու բազմաթիվ ոչինչ չնշանակող առարկաների անվանումներ, ինչպես նաև բառեր՝ մեծ ու փոքր գաղափարներին անվանումներ տալու համար. ուստիև նրանց մտածողության գործընթացը կամաց-կամաց սկսեց ընթանալ, ինչպես արդեն ասացի, «շղթայականության» սկզբունքով:

Եվ ահա հենց այդ մտածողությամբ էլ ներկայիս քո սիրելիները փորձում են վերծանել ու հասկանալ այն տեքստը, որը գրի են առել դեռևս «նմանասիրական» մտածողության եղանակից օգտվող այն էակները, որոնք եղել են Աստվածային Հիսուս Քրիստոսի ժամանակակիցները:

Եվ ահա, զավակս, հարկ է քեզ պատմել մի վերին աստիճանի անհեթեթ և օբյեկտիվ իմաստով սրբապիղծ փաստի մասին, որպեսզի դրանով ավելի լավ պարզաբանվի քո սիրելիների մոտ մինչև այժմ գոյություն ունեցող այդ Սուրբ Գրքի հիրավի աննշանությունը, որն, ի դեպ, հատկապես լայն տարածում է գտել իրենց վերջին փոխոչնչացման գործընթացից հետո, և որում, ինչպես դու արդեն կարող ես գլխի ընկնել, ինչ ասես կա, բացի իրողությունից ու ճշմարտությունից:

Ես հենց այն մասին եմ քեզ ուզում պատմել, ինչ ասվում է իբր անաղարտորեն իրենց հասած Սուրբ Գրքում գլխավոր, ամենախելացի և ամենահավատարիմ էակի մասին, որն անմիջականորեն Այդ Սուրբ Անհատի ձեռնադրյալն էր, կամ, ինչպես իրենք կասեին, Նրա առաքյալներից մեկն էր:

Անձամբ Հիսուս Քրիստոսի ձեռնադրած այդ հավատարիմ ու սիրված առաքյալին Հուդա էին կոչում:

Համաձայն Սուրբ Գրքի ներկայիս տարբերակի՝ ճշմարիտ գիտելիքի ծառավ ամեն ոք համոզմունք է ձեռք բերում և դա ամրագրում իր էության ներսում, որ այդ Հուդան ամենաստոր մի էակն էր, ինչպիսին կարելի է միայն պատկերացնել, և որ նա եղել է անամոթ, երկերեսանի և երախտամոռ դավաճան:

Բայց իրականում այդ Հուդան ոչ միայն ամենահավատարիմն ու նվիրյալն էր Հիսուս Քրիստոսի մերձավորների մեջ, այլև, դեռ ավելին, միայն նրա խելքի ու ոգու առկայության շնորհիվ են այդ Սուրբ Անհատի բոլոր գործողությունները տվել այն արդյունքը, որը, թեև հիմք չի ծառայել այդ թշվառ եռուղեղ էակների կունդաբուժեր օրգանի հատկությունների հետևանքների լիակատար ոչնչացման համար, այնուհանդերձ հետագա քսան դարերի ընթացքում ողեշնչման աղբյուր է դարձել նրանց մեծ մասի թշվառ գոյատևման պարագայում և այն դարձրել է քիչ թե շատ տանելի:

Որպեսզի դու ավելի հստակ պատկերացնես ու հասկանաս այդ Հուդայի անհատականությունն ու ապագայի վրա թողած նրա ազդեցության նշանակությունը, ես նախ քեզ պետք է տեղեկացնեմ, որ երբ Վերևից միտումնավոր կերպով առաքված Սրբազան Անհատ Հիսուս Քրիստոսը երկրային էակի մոլորակային մարմնով արդեն կազմավորվել էր պատասխանատու գոյատևման համար, Նա որոշեց Վերևից առաջադրված իր առաքելությունն իրագործել երկրային եռուղեղ էակների միջից ընտրված տասներկու տարբեր տիպերի պատկանող էակների բանականությունները լուսավորելու ճանապարհով՝ անձամբ նրանց հատուկ կրթելով ու նախապատրաստելով:

Եվ ահա, Նրա Աստվածային գործունեության ամենաբուռն շրջանում Նրա հետ կապ չունեցող շրջակա հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ Նա, չավարտելով իր մտադրությունների իրականացումը, այսինքն՝ դեռևս հասցրած չլինելով բացատրել որոշ տիեզերական ճշմարտություններ և տալ ապագայի համար անհրաժեշտ ցուցումները, ստիպված էր թույլ տալ, որ ժամանակից շուտ ընդհատվի Իր մոլորակային գոյատևումը:

Այնժամ Նա որոշեց միտումնավոր կերպով Իր կողմից ձեռնադրված տասներկու երկրային էակների հետ համատեղ ձեռնամուխ լինել Հավմոցնողշինում սրբազան գաղտնածեսին (որի

իրականացման գործելակարգն արդեն լավ հայտնի էր նրանց բոլորին, քանի որ իրենց ներկայություններում արդեն ձեռք էին բերել դրա իրականացման բոլոր նախադրյալները), որպեսզի հնարավորություն ունենան ավարտին հասցնելու Վերնից Նրա վրա դրված առաքելության իրականացման համար նախատեսված և Իր կողմից արդեն նախապատրաստած պլանը, քանի դեռ Նա գտնվում էր այդպիսի անհատական տիեզերական վիճակում:

Եվ ահա, զավակս, երբ որոշումն արդեն կայացված էր, և ամեն ինչ պատրաստ էր այդ սրբազան գաղտնածեսի նախնական պատրաստությունն սկսելու համար, հանկարծ պարզ դարձավ, որ դա բացարձակապես հնարավոր չէ իրագործել, քանի որ արդեն չափազանց ուշ էր. նրանք արդեն շրջապատված էին «պահնորդներ» կոչվող էակներով, և ցանկացած պահի կարող էին ձերբակալվել՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Եվ ահա հենց այդ պահին Հուդան՝ ներկայումս Սուրբ, իսկ նախկինում՝ Հիսուս Քրիստոսի անբաժան ու հավատարիմ օգնականը և միաժամանակ «ատելին» ու «անիծյալը»՝ ըստ քո այդ մոլորակի յուրօրինակ եռուղեղ էակների միամիտ պատկերացումների, հանդես եկավ և մի վիթխարի օբյեկտիվ ծառայություն մատուցեց, որի համար նրան պետք է շնորհակալ լինեն հետագա բոլոր սերունդների երկրային եռուղեղ էակները:

Այդ իմաստուն, անձնագոհ ու դժվարին արարքը, որը նա հանձն առավ կատարել, այն էր, որ երբ բոլորը հուսահատ վիճակում էին այն բանի պատճառով, որ այլևս հնարավոր չէր կատարել սրբազան Հալմտցնողչինում գաղտնածեսի համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը, ներկայումս Սուրբ Հուդան վեր թռավ տեղից և հապճեպ ասաց.

«Ես հիմա կգնամ և ամեն ինչ կանեմ այնպես, որ դուք հնարավորություն ունենաք առանց որևէ խոչընդոտի իրականացնել սրբազան նախապատրաստությունը, իսկ դուք անհապաղ գործի անցեք»:

Այս ասելուց հետո նա մոտեցավ Հիսուս Քրիստոսին, Նրա հետ գաղտնի ինչ-որ բան խոսեց, ստացավ Նրա օրհնությունը և շտապ հեռացավ:

Մնացածներն իսկապես կարողացան առանց որևէ խոչընդոտի ավարտին հասցնել այդ սրբազան Հալմտցնողչինում գործընթացի համար անհրաժեշտ ամեն բան:

Այսքանից հետո, ինչ էս հենց նոր քեզ պատմեցի, դու անկասկած պետք է որ հասկանաս, թե ինչպես են քո հավանությանն արժանացած Երկիր մոլորակի եռուղեղ էակների իմ մատնանշած երկու տիպերն իրենց տարբեր եսասիրական նպատակներով բոլոր ճշմարտություններն այն աստիճանի աղճատել, որ այդ ներկայումս Սուրբ Հուդայի վերաբերյալ (որի շնորհիվ միայն գոյացավ և հետագա քսան դարերի ընթացքում իր գոյությունը շարունակեց նրանց մխիթարության այդպիսի բարեշնորհ օջախ) հետագա բոլոր սերունդների էակների ներկայություններում բյուրեղացավ նման անօրինակ անարդար պատկերացում:

Անձամբ ես նույնիսկ մտածում եմ, որ եթե այդ Հուդան նրանց Սուրբ Գրքում որպես այդպիսի տիպ է ներկայացված, ապա հավանաբար այն պատճառով, որ վերոհիշյալ այդ երկու տիպերից որևէ մեկին պետք է եղել որոշակի նպատակով այդ եղանակով նսեմացնել հենց Հիսուս Քրիստոսի նշանակությունը:

Այսպես՝ Նա այնքան միամիտ է թվում, կանխագգալուն ու կանխատեսելուն այնքան անընդունակ, մի խոսքով, այնքան անկատար, որ, չնայած այն բանին, որ այդքան երկար ժամանակ ճանաչել էր այդ Հուդային ու ապրել նրա հետ, չգրագ ու գլխի չընկավ, որ իր մերձավորագույն աշակերտն այդպիսի երախտամոռ դավաճան է, և Իրեն կղավաճանի՝ հանուն խղճուկ երեսուն արծաթի:

Պատմության այս մասում Բեհեղգեբուդն ու «Քարնակ» միջհամակարգային տիեզերանավի բոլոր ուղևորներն իրենց համի զգայարանով յուրահատուկ դառնաթթու համ զգացին:

Դա նշանակում էր, որ տիեզերանավը մոտենում է իր նպատակակետին, տվյալ դեպքում՝ սուրբ Քավարան մոլորակին:

Այդ դառնաթթու համի պատճառն այն էր, որ տիեզերանավի ղեկավարման բաժանմունքից հատուկ մագնիսական հոսք էր արձակվել, որպեսզի ուղևորները տեղեկանան ժամանման վայրին մոտենալու մասին:

Ուստի Բեհեղգեբուդն ընդհատեց իր պատմությունը և, քնքշորեն նայելով թոռանը, ասաց.

- Այժմ ստիպված ենք կամա-ակամա ընդհատել այդ Հիսուս Քրիստոս կոչվող Սրբազան Անհատի մասին մեր զրույցը, սակայն, զավակս, երբ մենք տուն հասնենք՝ մեր սիրելի Քարատակ մոլորակը, երբևէ հիշեցրու ինձ, երբ ես ազատ կլինեմ, որ մանրամասներով ավատին հասցնեմ այդ պատմությունը:

Քո սիրելիների միջավայրում մոլորակային մարմնով այդ Ստբազան Անհատի երևալու ամբողջ պատմությունը, ինչպես քո այդ մոլորակի տարբեր խմբավորումների էակների մեջ նրա գոյատևելու, այնպես էլ էլ Նրա բռնի մահվան հանգամանքների առումներով, շատ ու շատ հետաքրքիր կլինի հատկապես քեզ համար, քանի որ դու ձգտում ես քո բանականության համար հասկանալի դարձնել այդ արտառոց եռուղեղ էակների տարօրինակ հոգեկառույցի բոլոր մանրամասները, և քեզ համար շատ ուսանելի ու հետաքրքիր կլինի իմանալ այդ Սուրբ Հիսուս Քրիստոսի պատմության այն հատվածը, որը վերաբերում է Նրա գոյատևման այն շրջանին, որը ժամանակի իրենց հաշվարկով ընկած է տասներկուսից մինչև քսանութ տարեկանի միջև:

ԳԼՈՒԽ ԼԹ

Սուրբ Քավարան մոլորակը

Մի քանի դիոնոսկ անցնելուց հետո «Քարնակ» տիեզերանավը լքեց սուրբ մոլորակը և կրկին շարունակեց անկում կատարել դեպի իր վերջնական հանգրվանը՝ դեպի հենց այն մոլորակը, որտեղ սկզբնավորվել էր Բեհեդգեբուղը և հիմա էլ վերադառնում էր այնտեղ, որպեսզի ավարտին հասցնի իր երկարատև գոյատևումը, որը, որոշակի հանգամանքների բերումով, նրան վիճակվել էր անցկացնել մեր Մեծ Տիեզերքի զանազան տիեզերական խտացումներում և իր համար մշտապես ոչ բարենպաստ պայմաններում, որոնց ինքն այնուհանդերձ օբյեկտիվորեն դիմացել էր լիովին արժանավայել կերպով:

Եվ այսպես, երբ «Քարնակ» տիեզերանավը վերականգնեց իր սովորական անկման արագությունը, Հասեինը՝ Բեհեդգեբուղի թոռը, նորից նստեց նրա ոտքերի մոտ և հայացքը հառելով նրան՝ ասաց.

– Պապի՛կ, ո՛վ իմ սիրելի պապի՛կ, բացատրի՛ր ինձ խնդրեմ, թե ինչու է, ինչպես ինձ պատմել է իմ Թույլան հորեղբայրը, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ ԱՄԵՆԱԳՈ ԱՎՏՈԿՐԱՏԸ այդքան հաճախ հայտնվում այն սուրբ մոլորակում, որտեղ մենք եղանք քիչ առաջ:

Թոռան այդ հարցի վրա Բեհեդգեբուղն այս անգամ մտորումների մեջ ընկավ սովորականից ավելի երկար, որից հետո իր համար սովորականից ավելի մեծ կենտրոնացվածությամբ դանդաղորեն ասաց.

– Այո՛... Չգիտեմ, զավակս, թե այս անգամ ինչից սկսեմ, որպեսզի այդ հարցին պատասխանեմ այնպես, որ ինձ էլ բավարարի, քանի որ մնացած այլ խնդիրների շարքում, որոնք իմ առջև դրել էի քեզ հետ կապված, քո «ոսկիանողում» կա նաև այն խնդիրը, որ դու քո համապատասխան տարիքում սպառնիչ գիտելիքներ և ըմբռնում ձեռք բերես այդ սուրբ մոլորակի վերաբերյալ:

Համենայն դեպս, նախ և առաջ պետք է ասել, որ այդ Քավարան կոչվող սուրբ մոլորակը մեր համայն Մեծ Տիեզերքի համար, այսպես ասած, սիրտ է և կենտրոնացման վայր՝ այն ամենի բաբախումների ավարտական արդյունքների համար, ինչը գործում և գոյատևում է Տիեզերքում:

ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐ ԱՐԱՐԻՉԸ այնտեղ հաճախ է հայտնվում միայն այն պատճառով, որ այդ սուրբ մոլորակն այն վերին աստիճանի դժբախտ *«բարձրագույն լիելիական մարմինների»* գոյատևման վայրն է, որոնք հանդերձավորվել են մեր Մեծ Տիեզերքի տարբեր մոլորակներում:

«Բարձրագույն լիելիական մարմինները» որոնք արդեն արժանացել են այդ սուրբ մոլորակում գտնվելուն, հանարավոր է, որ տառապում են ավելի շատ, քան մեր Մեծ Տիեզերքում գտնվող ուրիշ որևէ մեկը:

Այդ իսկ պատճառով ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆԱՍԵՐ, ԱՆՍԱՀՄԱՆ ԲԱՐԵԳՈՒԹ և ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԴԱՐԱԴԱՏ ԱՐԱՐԻՉԸ, այլ հնարավորություն չունենալով, որպեսզի որևէ բանով օգնի այդ դժբախտ *«բարձրագույն լիելիական մարմիններին»*, հաճախ է այնտեղ հայտնվում, որ ԻՐ այդ այցելություններով գոնե մի փոքր սփոփի նրանց անասելի տառապանքի այդ ահավոր ու անդառնալի վիճակում:

Այդ մոլորակը սկսել է իրականացնել այն նպատակը, որի համար այժմ գոյություն ունի, ժամանակի հոսքի այն շրջանից շատ ավելի ուշ, երբ արդեն ավարտվել էր ներկայումս գոյություն ունեցող «Աշխարհի արարման» եզրափակիչ գործընթացը:

Սկզբում բոլոր այդ «*բարձրագույն լինելիական մարմինները*», որոնք այժմ գոյատևում են այդ սուրբ մոլորակում, գնում էին ուղիղ դեպի Սրբազնագույն Բացարձակ Արևը, բայց հետո, երբ մեր Մեծ Տիեզերքում համընդհանուր աղետ տեղի ունեցավ, որը մենք անվանում ենք «չուտգողիտանական ժամանակաշրջան», ահա այդ ահավոր համատիեզերական աղետից հետո այդպիսի «*բարձրագույն լինելիական մարմինները*», որոնք այժմ գտնվում են այդ սուրբ մոլորակի վրա, այլևս հնարավորություն չունեն անմիջականորեն միաձուլվելու մեր Սրբազնագույն Բացարձակ Արևի հետ:

Միայն այդ «*չուտգողիտանական ժամանակաշրջանից*» հետո է նման համատիեզերական գործունեության անհրաժեշտություն ծագել, որը ներկայումս իրականացվում է այդ «Քավարան» կոչվող մոլորակի միջոցով:

Հենց այդ ժամանակից սկսած՝ այդ սուրբ մոլորակի ամբողջ մակերևույթը համապատասխան ձևով կազմակերպվել և հարմարեցվել է այնպես, որ այդ «*բարձրագույն լինելիական մարմիններն*» այնտեղ տեղ գտնեն իրենց այլևս անխուսափելի դարձած գոյատևման համար:

Այսքանն ասելուց հետո Բեհեդդեբուդը մի փոքր մտածմունքների մեջ ընկավ, ապա թեթև ժպիտով շարունակեց պատմել.

«Այդ սուրբ մոլորակը ոչ միայն համայն գոյի գործունեության արգասիքների կենտրոնացման վայրն է, այլև հիմա մեր Տիեզերքի բոլոր մոլորակներից ամենալավը, ամենահարուստը և ամենահարաշագեղն է:

Երբ մենք այնտեղ էինք գտնվում, դու հավանաբար նկատեցիր, որ մենք մշտապես տեսնում ու զգում էինք, որ այնտեղից մեր Մեծ Տիեզերքի ամբողջ տարածությունը, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «ամբողջ երկինքն» արձակում է, այսպես ասած, փայլ, որը հիշեցնում էր նշանավոր ու աննման «ալմակորյան փիրուզի» փայլը: Նրա մթնոլորտը «*արտասովոր սակրուայյան բյուրեղի*» պես միշտ մաքուր է:

Այնտեղ ամենուրեք ցանկացած անհատ իր ներկայությամբ ամբողջ «արտաքին աշխարհը» զգում է «խսկոլիցիներնո», կամ, ինչպես քո սիրելիները կասեին, «հիասքանչ-երանավետ»:

Իմացողներն ասում են, որ այդ սուրբ մոլորակի վրա միայն աղբյուրների քանակը՝ ինչպես հանքային, այնպես էլ մաքուր ջրերի, որոնք իրենց զուլալությամբ ու բնականությամբ հավասարը չունեն մեր Տիեզերքի ոչ մի ուրիշ մոլորակում, հասնում է մոտավորապես տաս հազարի:

Այնտեղ են գտնվում մեր ամբողջ Տիեզերքի ամենագեղեցիկ և ամենաերգեցիկ թռչունները, որոնց տեսակների թիվը, ինչպես կրկին ասում են իմացողները, հասնում է մոտավորապես տասներկու հազարի:

Իսկ ինչ վերաբերում է վերմոլորակային այն գոյացություններին, ինչպիսիք են՝ «ծաղիկները», «մրգերը», «հատապտուղները» և նմանատիպ մնացած ամեն ինչը, ապա խոսքերով նկարագրել հնարավոր չէ: Կարելի ասել, որ այնտեղ հավաքվել և կլիմայափոխվել են մեր Մեծ Տիեզերքի բոլոր մոլորակների համարյա ամբողջ «ֆլորան», «ֆաունան» և «ֆոսկալիան»:

Ամենուրեք այդ մոլորակի վրա, համապատասխան ձորերում, կան զանազան ձևեր ունեցող հարմարավետ անձավներ, որոնց մի մասը բնությունն ինքն է ստեղծել, մի մասն էլ արհեստական են, որոնց մուտքերից հիանալի տեսարաններ են բացվում. այդ անձավներում կա այն ամենը, ինչ պահանջվում է երջանիկ ու խաղաղ գոյատևման համար՝ ցանկացած տիեզերական անկախ Անհատի ներկայության ցանկացած մասում էաբուխ անհանգստության լրիվ բացակայությամբ, ինչպիսիք «*բարձրագույն լինելիական մարմինները*» նույնպես կարող են դառնալ:

Եվ հենց այդ անձավներում էլ սեփական ընտրությամբ գոյատևում են «*բարձրագույն լինելիական մարմինները*», որոնք իրենց նվաճումների շնորհիվ մեր Մեծ Տիեզերքի բոլոր անկյուններից այդ սրբազան մոլորակն են գալիս գոյատևելու համար:

Հիշատակածս ամեն ինչից զատ, այնտեղ են գտնվում նաև ամենահարմարավետ և ամենաարագընթաց, այսպես կոչված, «էզոլիոնոպտիները», կամ, ինչպես երբեմն նաև անվանում են՝ «*ամենաթափանց հարթակները*»:

Այդ էզոլիոնոպտիները սուրբ մոլորակի մթնոլորտում բոլոր ուղություններով ազատորեն տեղաշարժվում են ցանկացած արագությամբ, նույնիսկ մեր Տիեզերքի երկրորդ կարգի արևների անկման արագությամբ:

Այդ տեսակի «էգոլիոնոպտիներ» համակարգն ամենայն հավանականությամբ հորինվել է հատուկ այդ սուրբ մոլորակի համար, և դրա հեղինակը նշանավոր հրեշտակ, ներկայումս արդեն Հրեշտակապետ Հերկիսիոնն է»:

Վերջին բառերն ասելուց հետո Բեհեզգեբուղը հանկարծ լռեց և կրկին խոր մտորումների մեջ ընկավ, իսկ Հասեինն ու Ահունը զարմացած ու հարցական նայեցին նրան:

Բավականին երկար ժամանակ անցավ, մինչև Բեհեզգեբուղը, հատուկ ձևով օրորելով գլուխը, կրկին շրջվեց Հասեինի կողմը և ասաց.

«Ես հենց նոր մտածեցի, որ շատ խելամիտ բան արած կլինեի, եթե քո հարցին՝ «ինչու՞ է ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ իր հայտնվելով այդքան հաճախ ուրախություն պարգևում այդ սուրբ մոլորակին», պատասխանեի այնպես, որ նաև քեզ բացատրեի այն, ինչը մի քանի անգամ արդեն խոստացել եմ բացատրել:

Այն է՝ պատմել քեզ այն հիմնական տիեզերական օրենքների մասին, որոնցով պահպանվում է մեր ներկայիս Աշխարհը և դրանցով գոյատևում. և դա պետք է հիմա անել նաև այն պատճառով, որ միայն այդ երկու հարցերը միասին դիտարկելու դեպքում քեզ մոտ համակողմանի նյութ կգոյանա, որպեսզի լիակատար պատկերացում և սպառիչ ըմբռնում ունենաս այդ սուրբ Քավարան մոլորակի վերաբերյալ, և միաժամանակ էլ ինչ-որ բան կիմանաս Երկիր մոլորակում ծնվող և քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մասին:

Նաև ես ուզում եմ քեզ հնարավորինս առավել հստակ ու մանրամասն բացատրություններ տալ այդ սուրբ մոլորակի վերաբերյալ, քանզի վաղ թե ուշ դու դրա մասին պետք է իմանաս, որովհետև մեր Տիեզերքի ամեն մի պատասխանատու եռուղեղ էակ, անկախ պատճառների բնույթից և իր սկզբնավորման վայրից, ինչպես նաև իր արտաքին հանդերձավորման ձևից, ի վերջո պետք է ամեն ինչ իմանա այդ սուրբ մոլորակի մասին:

Իսկ նա այդ ամենը պետք է իմանա, որպեսզի ձգտի իր գոյատևմանը տալ այնպիսի ուղղվածություն, որը համապատասխանում է հենց իր գոյատևման իմաստին ու նպատակին. և այդ ձգտումը ցանկացած եռուղեղ էակի օբյեկտիվ ճակատագիրն է, ում ներսում այս կամ այն պատճառով «*բարձրագույն լինելիական մարմնի*» հանդերձավորման սաղմ է առաջանում:

Այսպիսով... զավա՛կս, նախ և առաջ ես պետք է առավել մանրամասն մեկ անգամ ևս կրկնեմ, որ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ ստիպվա՛ծ է եղել արարելու ներկայումս գոյություն ունեցող ամբողջ Աշխարհը:

Սկզբում, երբ դեռ ոչինչ չկար, իսկ մեր Տիեզերքն անսահման դատարկ տարածություն էր և պարունակում էր միայն «Եթերակռիլոն» կոչվող նախասկզբնական տիեզերական սուբստանցիա, մեր ներկայումս գոյություն ունեցող Մեծագույն Սրբազնագույն Բացարձակ-Արևը միակ գոյություն ունեցողն էր այդ դատարկ տարածությունում, և այդ միակ տիեզերական խտացման մեջ մեր ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑ ԱՐԱՐԻՉՆ ԻՐ բոլոր քերովբեների ու սերովբեների հետ միասին վայելում էր ԻՐ գերփառապանծ Լինելիությունը:

Ժամանակի հոսքի հենց այդ հատվածում մեր ՀԱՄԱՅՆԱԱՊԱՀ ԱՐԱՐԻՉԸ ստիպողական անհրաժեշտություն ունեցավ արարելու ներկայումս գոյություն ունեցող «Մեզալոկոսմոսը», այսինքն՝ մեր այս Աշխարհը:

Մեր քերովբեների ու սերովբեների երրորդ գերսրբազնագույն երգեցողությունից մենք արժանացանք իմանալու, որ մեր ԱՄԵՆԱԶՈՐ ԱՐԱՐԻՉԸ մի անգամ փաստեց, որ բուն այն Բացարձակ-Արևը, որում Նա ապրում էր ԻՐ քերովբեների ու սերովբեների հետ մեկտեղ, թեև հազիվ նկատելի, բայց աստիճանաբար իր ծավալով փոքրանում է:

Քանի որ ՆՐԱ նկատած այդ փաստն ԻՐԵՆ շատ լուրջ թվաց, ապա ՆԱ որոշեց վերանայել բոլոր այն օրենքները, որոնցով պահպանվում էր այն ժամանակ դեռևս միակ տիեզերական խտացման գոյությունը:

Այդ վերանայման ընթացքում մեր ԱՄԵՆԱԶՈՐ ԱՐԱՐԻՉՆ առաջին անգամ պարզեց, որ Բացարձակ-Արևի ծավալի աստիճանական փոքրացման պատճառն ուղղակի Հերոպասն է՝ բուն Ժամանակի հոսքը:

Այնժամ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ մտորումների մեջ ընկավ, քանի որ ԻՐ Աստվածային խորհրդածություններով ՆԱ հստակորեն գիտակցեց, որ եթե այդ Հերոպասը նույն կերպ շարունակի

փոքրացնել Բացարձակ-Արևի ծավալը, ապա ի վերջո կհանգեցնի ԻԲ Լինելիության միակ վայրի լիակատար ոչնչացմանը:

Եվ ահա, զավակս, հենց այդ նկատի ունենալով, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ այն ժամանակ պարզապես ստիպված էր համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերջ ի վերջո այդ Հերոպասի պատճառով տեղի չունենա մեր Սրբազնագույն Բացարձակ-Արևի ոչնչացումը:

Այնուհետև, կրկին մեր քերովբեների ու սերովբեների սրբազան երգեցողությունից, բայց այս անգամ՝ հինգերորդից, մենք նմանապես իմացանք, որ ԻԲ այդ Աստվածային փաստումից հետո ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲԵՆ ամբողջովին նվիրեց հնարավորություն փնտրելու գործին, որպեսզի կանխի նման անխուսափելի ավարտը, որը պետք է վրա հասներ անխիղճ Հերոպասի օրինական հրահանգով. ուստի երկարատև խորհրդածություններից հետո ՆԱ որոշեց արարել ներկայումս գոյություն ունեցող «Մեզալոկոսմոսը»:

Որպեսզի դու հստակ հասկանաս, թե ինչպես ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ որոշեց անխոցելության հասնել անխիղճ Հերոպասի այդ վնասակար գործունեության նկատմամբ, և թե ինչպես վերջ ի վերջո ՆԱ ԻԲ այդ որոշումն ի կատար ածեց, դու նախ և առաջ պետք է իմանաս, որ նախքան այդ Սրբազնագույն Բացարձակ-Արևը պահպանվում ու գոյատևում էր «Ավտոէգոկրատ» կոչվող համակարգի հիման վրա, այսինքն՝ այն սկզբունքով, որով այդ տիեզերական խտացման գոյությունը պահպանող ներքին ուժերն ունեին անկախ գործունեություն՝ կախված չլինելով որևէ արտաքին ուժից և հիմնվելով նաև այն երկու հիմնական տիեզերական սրբազան օրենքների վրա, որոնցով նաև հիմա է պահպանվում ներկայումս գոյություն ունեցող ամբողջ Մեզալոկոսմոսը և որոնց հիման վրա է գոյատևում. այդ երկու նախասկզբնական սրբազան տիեզերական օրենքներն են սրբազան Յոթնապարապարշինողը և սրբազան Եռամասիկապողը:

Այդ երկու հիմնական նախասկզբնական տիեզերական սրբազան օրենքների մասին ես մի անգամ արդեն մի փոքր պատմել եմ քեզ և հիմա կաշխատեմ դրանց մասին ավելի մանրամասն պատմել:

Այդ երկու հիմնական նախասկզբնական տիեզերական սրբազան օրենքներից առաջինը՝ Յոթնապարապարշինողը, ժամանակակից օբյեկտիվ տիեզերական գիտությունն, ի դեպ, ձևակերպում է հետևյալ կերպ.

«Տարամիտող ու զուգամիտող ուժային հոսքի գիծը մշտապես օրինաչափորեն կրկին փակվում է իր ծայրակետերում»:

Այդ նախասկզբնական սրբազան տիեզերական օրենքն ունի յոթ շեղվածքներ կամ, ինչպես երբեմն ասում են, յոթ «ծանրության կենտրոններ», և այդ շեղվածքների կամ «ծանրության կենտրոնների» յուրաքանչյուր զույգի միջև ընկած հեռավորությունը կոչվում է «սրբազան Յոթնապարապարշինողի ստոպինդեր»:

Այդ օրենքը, թափանցելով ամենայն նոր կազավորվողի և ամենայն գոյի մեջ, իր լիարժեք գործընթացները մշտապես իրագործում է իր յոթ ստոպինդերներով:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ նախասկզբնական հիմնական տիեզերական օրենքին՝ սրբազան Եռամասիկապողին, ապա համատիեզերական օբյեկտիվ գիտությունն այն ձևակերպում է հետևյալ կերպ.

«Նոր կազմավորվողը հին կազմավորվածից կազմավորվում է «խառնել-միացնելու» միջոցով, որի գործընթացն ընթանում է հետևյալ կերպ. ավելի բարձրը խառնվում է ավելի ցածրի հետ, որպեսզի գրավի միջին դիրք. այդ եղանակով այն դառնում է կա՛մ ավելի բարձր նախկին ավելի ցածրից, կա՛մ ավելի ցածր հետագա ավելի բարձրից»:

Եվ, ինչպես արդեն քեզ ասել եմ, այդ սրբազան Եռամասիկապողը բաղկացած է երեք անկախ ուժերից, որոնք հետևյալ կերպ են կոչվում.

առաջին՝ «Սուրբ Օդեոս»,
երկրորդ՝ «Սուրբ Սկիդոս»,
երրորդ՝ «Սուրբ Աթանոտոս»,

և այդ սուրբ Եռամասիկապողի այդ երեք սուրբ ուժերին հիշյալ գիտությունն անվանում է՝

առաջինին՝ «Հաստատող ուժ», կամ «Հրող ուժ», կամ պարզապես «դրական նշանով ուժ».

երկրորդին՝ «Բացասող ուժ», կամ «Դիմադրող ուժ», կամ պարզապես բացասական նշանով ուժ.
երրորդին՝ «Հաշտեցնող ուժ», կամ «Հավասարակշռող ուժ», կամ «Չեզոքացնող ուժ»:

Ի դեպ, գլխավորապես «Աշխարհարարման» ու «Աշխարհապահպանման» հիմնական օրենքներին վերաբերող իմ բացատրությունների այս մասում հետաքրքիր կլինի նշել, որ այդ քեզ դուր եկած մոլորակի եռուղեղ էակները այն ժամանակաշրջանում, երբ կունդաբուժեր օրգանի հատկությունների հետևանքները դեռևս չէին բյուրեղացել նրանց ընդհանուր ներկայություններում, արդեն սկսել էին գիտակցել սրբազան Եռամասիկապողի այդ երեք սուրբ ուժերի գոյությունը և դրանք անվանում էին այսպես.

առաջին՝ «Հայր Աստված»,
երկրորդ՝ «Որդի Աստված»,
երրորդ՝ «Սուրբ Ոգի Աստված»,

և առանձին դեպքերում արտահայտել են դրանցում պարփակված գաղտնի իմաստներն ու ակնկալել են ստանալ դրանց բարերար ազդեցությունն իրենց անհատականությունների վրա՝ արտաբերելով հետևյալ աղոթքները.

*Աստվածային Բերկրանքի,
Խռովքի և տառապանքի Աղբյուրնե՛ր,
Ազդեցե՛ք մեզ վրա.
կամ՝*

*Սու՛րբ-Հաստատող,
Սու՛րբ-Բացասող,
Սու՛րբ-Հաշտեցնող,
Նախագոյացե՛ք իմ ներսում՝
Հանուն իմ լինելիության.*

կամ՝

*Սու՛րբ Աստված,
Սու՛րբ Անսասան,
Սու՛րբ Անվախճան,
Ողորմեա՛ մեզ:*

Իսկ հետայսու, զավա՛կս, շա՛տ ուշադիր լսիր, թե ինչ կպատմեմ:

Եվ այսպես, ամենասկզբում, ինչպես արդեն ասացի քեզ, մեր Սրբազնագույն Բացարձակ-Արևը պահպանվում էր այդ երկու նախասկզբնական սրբազան օրենքների օգնությամբ. բայց այդ ժամանակ այդ նախասկզբնական օրենքները գործում էին ինքնուրույն՝ առանց որևէ արտաքին ուժի միջամտության, և այդ համակարգը կոչվում էր սոսկ «Ավտոէգոկրատ»:

Եվ ահա, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՊԱՀՈՐՈՐՈՐԸ որոշեց փոխել այդ երկու սրբազան օրենքների գործունեության համակարգի սկզբունքը. այն է՝ ՆԱ որոշեց դրանց անկախ գործունեությունը կախյալ դարձնել արտաքին ուժերից:

Այդպիսով, այն բանի հետևանքով, որ Սրբազան Բացարձակ-Արևի գոյությունը մինչ այդ պահպանող ուժերի գործունեության նոր համակարգի համար պահանջվեցին Բացարձակ-Արևից դուրս գտնվող աղբյուրներ, որոնցում նման ուժեր կարող էին ծագել և ներհոսել Սրբազան Բացարձակ-Արևի ներկայության մեջ, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԶՈՐԸ հենց այդ ժամանակ էլ ստիպված եղավ արարելու ներկայումս գոյություն ունեցող Մեզալոկոսմոսը՝ իր բոլոր տարբեր չափերի տիեզերքներով ու դրանց ներսում հարաբերական անկախություն ունեցող տիեզերական

գոյացություններով. և հենց այդ ժամանակից սկսած՝ Բացարձակ-Արևի գոյատևումը պահպանող համակարգը սկսեց կոչվել Տրոգովտոէգոկրատ:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԹԱՓԱՆՅԸ, որոշելով փոխել այն ժամանակ դեռևս միակ տիեզերական խտացման և ԻՐ գերփառապանձ Լինելիության միակ վայրի գոյատևումը պահպանող սկզբունքը, նախ և առաջ փոխեց այդ երկու հիմնական նախասկզբնական սրբազան օրենքների բուն գործելակարգը, և ավելի մեծ փոփոխություններ մտցրեց սրբազան Յոթնապարապարշինող օրենքի մեջ:

Սրբազան Յոթնապարապարշինողի գործունեության այդ փոփոխությունները եղան այն, որ դրա երեք ստոպինդերներում ՆԱ փոխեց, այսպես կոչված «սուբյեկտիվ գործողությունները», որոնք ստոպինդերներում մինչ այդ առկա էին, այն առումով, որ դրանցից մեկում ՆԱ երկարացրեց օրինաչափ հաջորդականությունը, երկրորդում կարճացրեց, իսկ երրորդում՝ դարձրեց աններդաշնակ:

Այն է՝ նպատակ ունենալով դրա գործունեության համար մերձակայքում եղած բոլոր ուժերի ինքնաբերական ներհոսքի «անհրաժեշտ հատկություն» ապահովել, ՆԱ երկարացրեց երրորդ և չորրորդ շեղվածքների միջև ընկած ստոպինդերը:

Սրբազան Յոթնապարապարշինողի այդ ստոպինդերը հենց այն է, որը դեռևս անվանում են նաև *«մեքենայաբար համընկնող Մտնել-Ին»*:

Իսկ այն ստոպինդերը, որը ՆԱ կարճացրեց, գտնվում է դրա վերջին շեղվածքի և լրիվ գործընթացի նոր շրջանի սկզբի միջև. այդ կարճացման միջոցով, նպատակ ունենալով հեշտացնել դրա լրիվ գործընթացի նոր շրջանի սկիզբը, տվյալ ստոպինդերի գործունեությունը ՆԱ կախման մեջ դրեց միայն այն ուժերի ներհոսքից, որոնք այդ ստոպինդերի միջոցով դրսից ստացվում են այն տիեզերական խտացման ազդեցության արդյունքում, որում ընթանում է այդ հիմնական նախասկզբնական տիեզերական օրենքի լրիվ գործընթացը:

Իսկ սրբազան Յոթնապարապարշինողի այդ ստոպինդերը հենց այն է, որն անվանում են *«միտումնավոր իրագործվող Մտնել-Ին»⁷⁶*:

Ինչ վերաբերում է երրորդ համապատասխան ստոպինդերն ըստ իր «սուբյեկտիվ ազդեցության» փոխելուն, որը հինգերորդն է ընդհանուր հաջորդականության մեջ և կոչվում է «Հառնել-Աուր⁷⁷», ապա դրա ապաներդաշնակացումն ինքնին տեղի է ունենում՝ կապված երկու վերոհիշյալ ստոպինդերների փոփոխության հետ:

Դրա սուբյեկտիվ գործունեության այդ ապաներդաշնակեցումը, որը բխում է, այսպես ասած, ամբողջությամբ վերցրած սրբազան Յոթնապարապարշինողի լրիվ գործընթացի նկատմամբ ունեցած նրա ասիմետրիայից, հետևյալն է:

Եթե այդ սրբազան օրենքի լրիվ գործընթացն ընթանում է մեծ քանակությամբ *«օտարածին թրթիռներ»*՝ պայմաններում, ապա դրա ամբողջ գործունեության արդյունքները միայն արտաքին են լինում:

Բայց եթե այդ նույն գործընթացը տեղի է ունենում բացարձակ անդորրության մեջ՝ առանց որևէ արտաքին *«օտարածին թրթիռ»* մասնակցության, ապա դրա գործունեության ազդեցության բոլոր արդյունքները մնում են հենց այն խտացման ներսում, որտեղ այն ավարտում է իր գործընթացը, իսկ արտաքինի համար այդ արդյունքներն ակներև են դառնում միայն դրա հետ անմիջական շփման առկայության դեպքում:

Իսկ եթե, այնուամենայնիվ, դրա գործունեության ընթացքում առկա չէ այդ երկու խիստ հակադիր պայմաններից և ոչ մեկը, ապա դրա գործընթացի ազդեցության արդյունքները սովորաբար բաժանվում են արտաքին և ներքին մասերի:

Այսպիսով, այդ ժամանակից սկսած՝ ինչպես ամենախոշոր, այնպես էլ ամենամանր տիեզերական խտացումներում իրականացման գործընթացը սկսեց տեղի ունենալ այդ սրբազան նախասկզբնական Յոթնապարապարշինող օրենքի՝ իրենց սուբյեկտիվ ազդեցություններում փոփոխություններ կրած ստոպինդերներով:

Կրկնում եմ, զավա՛կս, աշխատիր մի լավ հասկանալ այս ամենը, ինչ կվերաբերի այդ երկու հիմնական սրբազան տիեզերական օրենքներին, քանի որ այդ սրբազան տիեզերական օրենքների

⁷⁶ ռուս. տարբերակում՝ Мднел-Ин, անգլ. տարբերակում՝ Mdnelin

⁷⁷ ռուս. տարբերակում՝ Харнел-Аут, անգլ. տարբերակում՝ Harnel-Aoot

իմացությունը, հատկապես՝ Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքի առանձնահատկությունների իմացությունը, ապագայում քեզ կօգնի շատ հեշտ ու շատ լավ հասկանալու Աշխարհաբարարման ու Աշխարհապահպանման մնացած բոլոր երկրորդական և երրորդական նշանակության օրենքները: Դեռ ավելին, այդ սրբազան օրենքների հետ կապված ամեն ինչի համակողմանի իմացությունը սովորաբար հանգեցնում է նրան, որ եռուղեղ էակները, անկախ իրենց արտաքին հանդերձավորման տեսակից, ունակ դառնալով խորհրդածել գոյատևման իմաստի մասին (իրենց շուրջը ծագող և իրենցից անկախ, իրենց համար բարենպաստ կամ ոչ բարենպաստ տիեզերական գործոնների առկայության պարագայում), նախադրյալներ են ձեռք բերում, որպեսզի պարզեն և իրենց ներսում հաշտեցնեն, այսպես կոչված, «անհատական ներհակությունը», որը սովորաբար հաճախ է ծագում եռուղեղ էակի ներսում տիեզերական բոլոր օրենքների գործընթացներից բխած կոնկրետ արդյունքների և իրենց, այսպես կոչված, «*առողջ տրամաբանության*» կողմից ենթադրվող և նույնիսկ սասվող արդյունքների միջև առաջացած հակասություններից. և, այդպիսով, ճիշտ գնահատելով սեփական ներկայության իրական նշանակությունը, նրանք ունակ են դառնում գիտակցելու իրենց իսկական տեղը համատիեզերական այդ գոյացությունների շարքում:

Կարճ ասած, սեփական ներկայության ներսում այդ երկու հիմնական սրբազան օրենքների գործունեության համակողմանի ըմբռնման փոխակերպությունն այդ նույն սեփական ներկայության ներսում հանգեցնում է նրան, որ եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում նախադրյալներ են բյուրեղանում Աստվածային այն հատկանիշի ծագման համար, որը հարկ է, որ ունենա ամեն մի նորմալ եռուղեղ էակ, և որը կոչվում է «սեմունիրանուս»⁷⁸». քո սիրելիները դրա մասին նույնպես միայն մոտավոր պատկերացում ունեն և այն կոչում են «օբյեկտիվություն»:

Այսպիսով, սիրելի զավակս, այն ժամանակ սկզբում փոխելով այդ երկու սրբազան նախասկզբնական օրենքների գործառույթները, մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐ ԱՄԵՆԱԶՈՐ ԱՐԱՐԻԶԸ դրանց ուժերի ադեցությունը Սրբազնագույն Բացարձակ-Արևից ուղղեց դեպի Տիեզերքի տարածությունը, ինչի հետևանքով գոյացավ, այսպես կոչված, «*Բացարձակ-Արևի ճառագումբ*», որին ներկայումս «Թեմերտմալոգոս» են ասում կամ «Բանն-Աստծո»:

Այստեղ իմ բացատրություններին հստակություն հաղորդելու համար պետք է նշել, որ ներկայումս գոյություն ունեցող Աշխարհի արարման ընթացքում ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ Աստվածային «Կամքը» մասնակցություն է ունեցել միայն ամենասկզբում:

Հետագա արարումը տեղի է ունեցել ինքնին ու ինքնաբերաբար՝ առանց Նրա Սեփական Աստվածային Կամքի որևէ մասնակցության, շնորհիվ միայն այդ երկու փոփոխված հիմնական նախասկզբնական տիեզերական օրենքների:

Իսկ արարման բուն գործընթացը տեղի է ունեցել հետևյալ հաջորդականությամբ:

Սրբազան Յոթնապարապարշինոդի հիգերորդ ստոպինդերի նոր առանձնահատկության շնորհիվ Բացարձակ-Արևից բխող այդ ճառագումները Տիեզերքի տարածության մի քանի որոշակի տեղերում սկսեցին ազդել Եթերակռիլոն կոչվող նախասկզբնական տիեզերական սուբստանցիայի վրա, որից նախասկզբնական սրբազան օրենքների հին ու նոր առանձնահատկությունների համակցության հետևանքով սկսեցին խտանալ որոշակի խտացումներ:

Այնուհետև, այդ գործոնների, ինչպես նաև հենց իրենց սեփական Յոթնապարապարշինոդ ու Եռամասիկապող օրենքների շնորհիվ, որոնք արդեն սկսեցին առաջանալ այդ որոշակի խտացումների իրար հետ փոխազդելու ընթացքում, այն ամենը, ինչ պետք է գոյանար, սկսեց աստիճանաբար բյուրեղանալ այդ խտացումներում, և այդ ամենի արդյունքում առաջացան այն խոշոր խտացումները, որոնք մինչև հիմա գոյություն ունեն և այժմ կոչվում են «*երկրորդ կարգի Արևներ*»:

Երբ այդ նոր ծագող արևները ամբողջությամբ կյանքի կոչվեցին և դրանցում վերջնականապես հաստատվեցին երկու հիմնական օրենքների սեփական գործառույթները, ապա Սրբազան Բացարձակ-Արևի համանմանությամբ նրանց ներսում էլ սկսեցին փոխակերպվել և ճառագվել իրենց սեփական արդյունքները, որոնք, Սրբազան Բացարձակ-Արևից բխող և դեպի Տիեզերքի տարածություն ճառագվող էմանացիաների հետ համատեղ, կենսագործման գործոններ դարձան սրբազան Եռամասիկապող օրենքի հիմնական համատիեզերական գործընթացի համար:

⁷⁸ ռուս. տարբերակում՝ семониранос, անգլ. տարբերակում՝ semooniranoos

Սրբազնագույն Թեոմերտմալոգոսը սկսեց դրսևորվել որպես սրբազան Եռամասիկապողի երրորդ սուրբ ուժ. յուրաքանչյուր նոր ծագող *երկրորդ կարգի արևի* արդյունքները՝ որպես առաջին սուրբ ուժ, իսկ մնացած բոլոր նոր ծագող *երկրորդ կարգի արևների* արդյունքները՝ հիշյալ առաջին նոր ծագող երկրորդ կարգի արևի նկատմամբ՝ որպես այդ սրբազան օրենքի երկրորդ սուրբ ուժ:

Այդ եղանակով Տիեզերքի տարածությունում հատատված՝ համատիեզերական սրբազան Եռամասիկապողի գործընթացի շնորհիվ այդ *երկրորդ կարգի արևներից* յուրաքանչյուրի շուրջ նախասկզբնական Եթերակռիլնոյից աստիճանաբար սկսեցին կազմավորվել և այդ նոր ծագող արևների շուրջ խմբավորվել տարբեր, այսպես կոչված, «խտության աստիճան» ունեցող բյուրեղացումներ. սկսեցին ձևավորվել նոր խտացումներ, ինչի արդյունքում կրկին առաջացան նոր արևներ, բայց այս անգամ՝ «*երրորդ կարգի արևներ*»:

Այդ երրորդ կարգի խտացումները հենց այն տիեզերական խտացումներն են, որոնց ներկայումս մոլորակներ են անվանում:

Հիմնական սրբազան Յոթնապարապարշինոդի արտաքին բոլորաշրջանի գործընթացի հենց այդ մասում, այսինքն՝ *երրորդ կարգի արևների* կամ մոլորակների կազմավորվելուց հետո, Սրբազան Յոթնապարապարշինոդի՝ փոփոխության ենթարկված հիգերորդ շեղվածքի հետևանքով, որն, ինչպես արդեն ասացի, ներկայումս «Հառնել-աուր» է կոչվում, հիմնական ավարտական գործընթացի համար տրված նախասկզբնական ազդակը, կիսով չափ կորցնելով իր ինտենսիվության ուժը, իր հետագա գործունեության ընթացքում սկսեց դրսևորել իր ազդեցության միայն կեսը, իսկ երկրորդ կեսը պահել իր համար, այսինքն՝ իր սեփական գործունեության համար, ինչի հետևանքով այդ վերջին խոշոր արդյունքների, այսինքն՝ հիշյալ *երրորդ կարգի արևների* կամ մոլորակների վրա սկսեցին առաջանալ «*արդեն առաջացածի նմանակներ*»:

Իսկ քանի որ դրանից հետո իրագործման շրջակա պայմաններն ամենուրեք հաստատվել են Յոթնապարապարշինոդ հիմնական սրբազան օրենքի հինգերորդ ստոպինդերի երկրորդ առանձնահատկության համապատասխան, ապա այդ ժամանակից սկսած՝ սրբազան Յոթնապարապարշինոդի հիմնական արտաքին բոլորաշրջանի իրականացումը դադարեցվեց, և դրա գործունեության ամբողջ ազդեցությունն ընդմիջտ անցավ նրա արդեն դրսևորած արդյունքների մեջ, և դրանցում սկսեցին տեղի ունենալ դրան բնորոշ փոխակերպության կայուն գործընթացներ, որոնք անվանվում են «Էվոյուցիա» և «Ինվոյուցիա»:

Եվ այնուհետև, այս անգամ արդեն երկրորդական տիեզերական օրենքի շնորհիվ, որը կոչվում է «լիցվերցրու»⁷⁹ կամ «համասեռի համակցում», բուն մոլորակներում հիշյալ «հարաբերականորեն ինքնուրույն» և «*արդեն առաջացածի նմանակներ*» կոչվող նոր գոյացություններից սկսեցին կրկին խմբավորվել էլի ուրիշ «հարաբերականորեն ինքնուրույն» գոյացություններ:

Շնորհիվ սրբազան Յոթնապարապարշինոդի բնորոշ հենց այդ «Էվոյուցիա» և «Ինվոյուցիա» կոչվող գործընթացների՝ ամենախոշորից մինչև ամենամանր բոլոր տիեզերական խտացումների ներկայություններում ևս սկսեցին բյուրեղացվել և ապաբյուրեղացվել զանազան որոշակի տիեզերական նյութեր՝ բոլոր իրենց բնորոշ սուբյեկտիվ հատկություններով, որոնց Օբյեկտիվ Գիտությունն «ակտիվ տարրեր» է անվանում:

Իսկ այդ ակտիվ տարրերի «Էվոյուցիայի» և «Ինվոյուցիայի» բոլոր արգասիքները, իրար գոյություն պահպանելու և փոխադարձ սնուցում ապահովելու եղանակով իրականացնելով Տիեզերքի համայն գոյի գոյատևման տրոգովտոդգոկրատական սկզբունքը, ի կատար են ածում հիշյալ համատիեզերական «իրանիրանումանգալ»⁸⁰ կոչվող գործընթացը, կամ, ինչպես Օբյեկտիվ գիտությունն է բնորոշում, «*համատիեզերական նյութափոխանակությունը*»:

Այսպիսով, զավակս, շնորհիվ Տիեզերքի համայն գոյի փոխադարձ սնուցման այդ նոր համակարգի, որին մասնակցություն է ունեցել նաև Սրբազնագույն Բացարձակ-Արևը, Տիեզերքում հավասարակշռություն հաստատվեց, որը ներկայումս այլևս անխիղճ Հերոպասին հնարավորություն չի ընձեռում որևէ անկանխատեսելի բան մատուցելու Մեծագույն և Սրբազնագույն Բացարձակ-Արևին. և այդպիսով ընդմիջտ վերացավ ՆՈՐԻՆ ԱՆՍՀՄԱՆԱՌԻԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԳՈ

⁷⁹ ռուս. տարբերակում՝ *лице́рцы*, անգլ. տարբերակում՝ *litsvrts*

⁸⁰ ռուս. տարբերակում՝ *иранирануманге*, անգլ. տարբերակում՝ *Iraniranumange*

ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑԻ Աստվածային անհանգստության առիթը՝ կապված ԻԲ հավերժական լինելիության վայրի անխաթարության հետ:

Այստեղ հարկ է ասել քեզ, որ երբ այդ գերլայնածավալ աստվածային իրականացումը հասավ իր ավարտին, մեր ցնծացող քերովբեներն ու սերովբեներն այն ժամանակ բոլոր նոր կազմավորված իրականացումներին առաջին անգամ անվանումներ տվեցին, որոնք մինչև այժմ պահպանվել են: Ամեն մի «հարաբերականորեն ինքնուրույն խտացում» նրանք ընդհանուր առմամբ բնորոշեցին «կոսմոս» բառով, իսկ այդ «կոսմոսների» առաջացման տարբեր կարգերը տարբերակելու նպատակով ամեն մի առանձին դեպքում «կոսմոս» բառին որոշակի հավելումներ արեցին:

Այն է՝ բուն Սրբազնագույն Սկզբնաղբյուր Բացարձակ-Արևը նրանք անվանեցին «Պրոտոկոսմոս»:

Ամեն մի նոր ծագող «երկրորդ կարգի արև», իր բոլոր հետագա որոշակի արգասիքներով հանդերձ, նրանք անվանեցին «Դեյտերակոսմոս»:

«Երրորդ կարգի արևները», որոնց հիմա մոլորակներ են կոչում, նրանք անվանեցին «Տրիտակոսմոս»:

Մոլորակների ամենամանրագույն «հարաբերականորեն ինքնուրույն գոյացությունը», որն առաջացավ սրբազան Յոթնապարապարշինողի հինգերորդ ստոպինդերի նոր յուրահատկության շնորհիվ և Ամբողջի ամենամանրագույն նմանակն է, անվանվեց «Միկրոկոսմոս». և վերջապես, «Միկրոկոսմոսի» այն գոյացությունները, որոնք նույնպես խտացվեցին մոլորակներում (այս անգամ՝ շնորհիվ «նմանն զնմանն գտանէ» կոչվող երկրորդական տիեզերական օրենքի), կոչվեցին «Տետարակոսմոսներ»:

Եվ բոլոր այդ տիեզերքների համախմբությունը, որոնք կազմում են ներկայիս Աշխարհը, նրանք սկսեցին անվանել «Մեգալակոսմոս»:

Այն ժամանակ քերովբեները նաև ուրիշ անուններ տվեցին, որոնք նույնպես մինչև այժմ գոյություն ունեն և վերաբերում են այդ տարբեր տրամաչափի կոսմոսների ճառագումներին ու ճառագայթումներին, որոնց միջոցով ընթանում է մեծագույն տիեզերական Տրոգոավտոդեոկրատի գործընթացը.

1) Բուն Սրբազնագույն Բացարձակ-Արևի ճառագումը նրանք անվանեցին, ինչպես արդեն ասել եմ քեզ, «Թեոմերոմալոգոս» կամ «Բանն-Աստծո».

2) ամեն մի առանձին երկրորդ կարգի արևի ճառագայթումը՝ «Մեկտեղկիտեսոին»⁸¹.

3) ամեն մի առանձին մոլորակի ճառագայթումը՝ «Դինամոհոմատին»⁸².

4) Միկրոկոսմոսներից արտազատվողը՝ «Ֆոտոինսոին»⁸³.

5) Թետարակոսմոսներից դուրս ճառագայթվողը՝ «Համբարձոին».

6) ամեն մի արևային համակարգի բոլոր մոլորակների ճառագայթումը՝ «Աստղալույսիցոին»⁸⁴.

7) բոլոր նոր ծագող երկրորդ կարգի արևների ընդհանուր ճառագայթումը՝ «Բոլորովթեոփառ»⁸⁵:

Բոլոր մեծ ու փոքր տիեզերական աղբյուրներից բխող արգասիքների համախմբությանը նրանք նույնպես անուն տվեցին՝ «Համատիեզերական Անսամբալուիազար»⁸⁶:

Հետաքրքիր է նկատել, որ այդ «Համատիեզերական Անսամբալուիազարի» վերաբերյալ Օբյեկտիվ Գիտությունն այսպիսի ձևակերպում է տալիս. «Ամենայն ինչ, որ բխում է ամեն ինչից և կրկին վերադառնում ամենայնի մեջ»:

Այն ժամանակ առանձին անուններ տրվեցին նաև, այպես կոչված, «ժամանակավորապես ինքնուրույն բյուրեղացումներին», որոնք այդ անհաշիվ կոսմոսներում առաջանում են այդ երկու հիմնական սրբազան օրենքների էվոլյուցիոն և ինվոլյուցիոն գործընթացներով:

⁸¹ ռուս. տարբերակում՝ Ментекитезоин, անգլ. տարբերակում՝ mentokifezoin

⁸² ռուս. տարբերակում՝ Динамоумзоин, անգլ. տարբերակում՝ dynamoomzoin

⁸³ ռուս. տարբերակում՝ Фотоинзоин, անգլ. տարբերակում՝ photoinzoin

⁸⁴ ռուս. տարբերակում՝ Астролюолусизоин, անգլ. տարբերակում՝ astroluolucizoin

⁸⁵ ռուս. տարբերակում՝ Полоротеопарл, անգլ. տարբերակում՝ polorotheoparl

⁸⁶ ռուս. տարբերակում՝ Ансанбалуязар, անգլ. տարբերակում՝ Ansanbaluiazar

Այստեղ ես չեմ թվարկի այդ մեծաքանակ ինքնություն «ծանրության կենտրոնների» անվանումները, որոնք բյուրեղանում են բոլոր այդ առանձին կոսմոսներում, այլ կիշատակեմ միայն այն որոշակի «ծանրակենտրոնային ակտիվ տարրերի» անվանումները, որոնք բյուրեղանում են ամեն մի առանձին կոսմոսում և անմիջականորեն առնչվում են իմ հետագա բացատրություններին. հատկապես նրանց մասին է խոսքս, որոնք բյուրեղանում են Տետարդակոսմոսների ներկայություններում և ունենում են այդպիսի «ժամանակավոր ինքնություն ծանրության կենտրոն»:

Տետարդակոսմոսների այդ ինքնություն կազմավորումներին տրվել են հետևյալ անվանումները.

- 1) պրոտոէհարի,
- 2) դեյտերաէհարի,
- 3) տրիտաէհարի,
- 4) տետարդաէհարի,
- 5) պենտաէհարի,
- 6) էքսիտէհարի,
- 7) ռեզուլտարիոն:

Իսկ հիմա, զավակս, այն ամենից հետո, ինչ բացատրեցի քեզ, կարող ենք վերադառնալ այն հարցին, թե ինչու՞ և ինչպե՞ս մեր Տիեզերքում սկսեցին առաջանալ *«բարձրագույն լինելիական մարմիններ»* կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, հոգիներ, և թե ինչու մեր ՄԻԱԳՈ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐՆ ԻՐ Աստվածային ուշադրությունը բևեռեց այդ տիեզերական գոյացությունների վրա:

Բանն այն է, որ երբ տարբեր տրամաչափի բոլոր այդ կոսմոսներում կարգավորվեց ու հաստատվեց *«համատիեզերական ներդաշնակ հավասարակշռություն»*, ապա այդ Տետարդակոսմոսներից կամ *«Միկրոկոսմոսների համակցության հարաբերականորեն ինքնություն գոյացություններից»* յուրաքանչյուրում, որոնք ծագել էին մոլորակների մակերևույթների վրա (որոնց վրա եղած շրջակա պայմանները պատահաբար սկսել էին համընկնել այդ կոսմոսներում առկա որոշակի տվյալներին, ինչի հետևանքով դրանք՝ կարող էին որոշակի ժամանակով գոյատևել առանց, այսպես կոչված, «սեկրուանողի»⁸⁷), այսինքն՝ առանց մշտական «անհատական» լարվածության) նույն այդ մոլորակների մակերևույթների վրայով ինքնաբերական կերպով մի վայրից մյուսը տեղափոխվելու հնարավորություն առաջացավ:

Եվ ահա, երբ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ հաստատեց դրանց այդ ինքնաբերական տեղաշարժը, այնժամ ՆԱ առաջին անգամ Աստվածային Գաղափար հղացավ դա հոգուտ ԻՐԵՆ օգտագործել՝ հարաճուն Աշխարհը կառավարելու գործում:

Այդ ժամանակից սկսած՝ ՆԱ այդ կոսմոսների հետագա ամեն ինչն իրականացնում էր այնպիսի միտվածությամբ, որպեսզի անխուսափելի, այսպես կոչված, «օկրուալնոն»⁸⁸, այսինքն՝ նրանցում սրբազան Յոթնապարապարշինողի լրիվ գործընթացի պարբերական կրկնությունը տեղի ունենա այնպես, որ որոշ Տետարդակոսմոսների ընդհանուր ներկայությունների գործունեության որոշակի փոփոխությունների պայմաններում այն բյուրեղացումներին զուգընթաց, որոնք պետք է փոխակերպության ենթարկվեին համատիեզերական նյութափոխանակության նպատակով, փոխակերպվեն ու բյուրեղացվեն նաև այնպիսի ակտիվ տարրեր, որոնցից հենց իրենց ներսում կարողանային հանդերձավորվել նոր ինքնություն գոյացություններ՝ «անհատական բանականություն» ձեռք բերելու իրենց բնորոշ կարողությամբ:

Այն, որ այդ գաղափարն առաջին անգամ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ հղացավ հենց այդ ժամանակ՝ մենք կարող ենք տեսնել նաև այն սրբազան երգեցողության խոսքերում, որով բոլոր երկնային հանդիսությունների ժամանակ մեր քերովբեներն ու սերովբեները փառաբանում են մեր ԱՐԱՐԶԻ կատարած հրաշափառ գործերը:

Նախքան պատմելս, թե այդ ինչպես է իրականացվել՝ հարկ է ասել քեզ, որ հիշյալ համատիեզերական իրանիքանումանգալու գործառույթն այնպես է կարգավորված, որ զանազան

⁸⁷ ռուս. տարբերակում՝ секруано, անգլ. տարբերակում՝ seccruano

⁸⁸ ռուս. տարբերակում՝ окруално, անգլ. տարբերակում՝ okrualno

կոսմոսներում փոխակերպությամբ ստացվող բոլոր արգասիքներն իրար հետ միասին տեղայնացվում են, այսպես կոչված, «թրթռանքի որակին» համապատասխան, իսկ այդ տեղայնացումները Տիեզերքում թափանցում են ամենուրեք, համապատասխան մասնակցություն են ունենում մոլորակային ու վերմոլորակային գոյացություններում և ընդհանրապես նրանց ազատ կենտրոնացման ժամանակավոր տեղն, այսպես կոչված, մթնոլորտներն են, որոնցով շրջապատված են լինում մեր Մեգալակոսմոսի բոլոր մոլորակները, և որոնց միջոցով էլ կապ է հաստատվում համատիեզերական իրանիքանումանգալու համար:

Այդպիսով, հիշյալ Տետարդակոսմոսների նկատմամբ Աստվածային այդ ուշադրության հետագա արգասիքները եղան այն, որ երբ նրանք որպես սարքեր էին ծառայում ինչպես մեծագույն տիեզերական Տրոգոավոտեզոկրատի, այնպես էլ այն նյութերի վերականգնման համար, որոնք իրենք ծախսում էին իրենց սեփական գոյատևման գործընթացում և կազմված էին լինում բացառապես տիեզերական բյուրեղացումներից, որոնք ստացվում էին հենց այն մոլորակում, որում առաջանում էին տվյալ Տետարդակոսմոսները, նրանց ընդհանուր ներկայություններում հիշյալ պայմաններում ստացվում էին այնպիսի արգասիքներ, որոնք առաջանում են ավելի բարձր կարգի տիեզերական աղբյուրներում, և, հետևաբար, բաղկացած են լինում, այսպես կոչված «ավելի մեծ կենսատվությամբ» թրթիռներից:

Եվ այսպես, նրանց ընդհանուր ներկայություններում այդպիսի արգասիքներից սկսեցին հանդերձավորվել ճշգրիտ միանման կերպեր, սկզբում՝ Մեկտեղկիտեսոին կոչվող տիեզերական սուբստանցիայից, որը փոխակերպվում է այն արևային համակարգի արևից ու մոլորակներից, որի սահմաններում առաջացել են տվյալ Տետարդակոսմոսները. ընդ որում՝ այդ տիեզերական սուբստանցիաները հիշյալ տիեզերական խտացումների ճառագայթումների միջոցով հասնում են ամեն մի առանձին մոլորակի:

Այդպիսով, որոշակի Տետարդակոսմոսների ընդհանուր ներկայություններն սկսեցին նախապես հանդերձավորվել երկու տարբեր ինքնուրույն գոյացություններից, որոնք առաջանում են երկու կատարելապես տարբեր տիեզերական աղբյուրներից, և սկսեցին համատեղ գոյատևում վարել՝ կարծես մեկը մյուսի ներսում գտնվելով:

Եվ ահա, զավակս, երբ նախապես արդեն հանդերձավորված Տետարդակոսմոսների նմանատիպ հանդերձավորումները հասան իրենց ավարտին և սկսեցին իրենց համապատասխան գործունեությունը, այդ ժամանակից սկսած, արդեն Տետարդակոսմոսներ չէին կոչվում, այլ կոչվում էին «էակներ», ինչն այն ժամանակ «երկբնույթ» էր նշանակում. իսկ բուն այդ երկրորդ հանդերձներն առանձին սկսեցին կոչվել *«կեսջան մարմիններ»*:

Իսկ երբ այդ *«երկբնույթ գոյացությունները»* այդ նոր երկրորդ մասերը ձեռք բերեցին համապատասխան ամեն ինչ, և երբ նման կազմավորման համար հարկ եղած բոլոր գործառնությունները վերջնականապես հաստատվեցին, ապա այդ նոր գոյացություններն էլ իրենց հերթին, նույն հիմքով, ինչպես առաջին դեպքում, և նաև գործառնությունների որոշակի փոփոխության պայմաններում, սկսեցին կլանել ու իրենց ներսում ձուլման ենթարկել այնպիսի տիեզերական սուբստանցիաներ, որոնք ծագել էին անմիջականորեն Սրբազան Թեոմերտմալոգոսից. ուստի նրանց ներսում սկսեցին հանդերձավորվել երրորդ սեռի նմանություններ, որոնք էակների *«բարձրագույն սրբազան մասերն»* են, և հիմա մենք դրանք անվանում ենք *«բարձրագույն լինելիական մարմիններ»*:

Այնուհետև, երբ նրանց *«բարձրագույն լինելիական մարմինները»* վերջնականապես հանդերձավորված էին ու ձեռք էին բերել բոլոր համապատասխան գործառնությունները, և, որ ամենակարևորն է, երբ հնարավոր դարձավ նրանց ներսում նախադրյալներ բյուրեղացնել, որպեսզի առաջանա *օբյեկտիվ բանականություն* կոչվող սրբազան գործառնությթը (այդպիսի նախադրյալներ կարող են բյուրեղացվել բացառապես այդպիսի տիեզերական գոյացությունների ներկայություններում), և երբ այդ «Տետարդակոսմոսների» կամ «էակների» հետ տեղի էր ունենում, այսպես կոչված, «Ռասկուարնո», այսինքն՝ այդ տարասեռ «եռամիասնական» կազմավորումների տարբաժանում՝ միայն այդժամ էր այդ *«բարձրագույն լինելիական մարմինը»* հնարավորություն ստանում միանալու ներկա համայն գոյի *Պատճառների Պատճառի*՝ մեր Սրբազնագույն Բացարձակ-Արևի հետ և կատարելու իր այն առաքելությունը, որի հետ հույսեր է կապել ՆՈՐԻՆ ԱՆՄԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴԳԻՎՈՒՆԸ:

Այժմ պետք է քեզ ավելի մանրամասն պատմել այն մասին, թե այն ժամանակ ինչ հաջորդականությամբ է տեղի ունեցել այդ առաջին սրբազան Ռասկուարնոն այդ առաջին Տետարդակոսմոսների հետ, և ինչպես է այն հիմա տեղի ունենում, այսպես կոչված, «եռուղեղ էակները» հետ:

Սկզբում «երկրորդ լինելիական մարմինը», այսինքն՝ *կեսջան մարմինը*, «երրորդ լինելիական մարմինը» հետ հենց մոլորակում անջատվում է «հիմնական մոլորակային մարմինից» և, այդ մոլորակային մարմինը թողնելով մոլորակում, երկուսով բարձրանում են այն ոլորտը, որտեղ կենտրոնացման վայրն է այն տիեզերական սուբստանցիայի, որի տեղայնացումից առաջացել է էակի *կեսջան մարմինը*:

Եվ միայն այնտեղ է, որ որոշակի ժամանակահատված անցնելուց հետո այդ երկրնային գոյացության հետ տեղի է ունենում վերջնական Ռասկուարնո, որից հետո այդպիսի «բարձրագույն լինելիական մասն» իրապես դառնում է սեփական անհատական բանականությամբ օժտված ինքնություն Անհատականություն: Ավելի վաղ, այսինքն՝ շուտօրգլիտանական⁸⁹ ժամանակաշրջանից առաջ, այդ սրբազան տիեզերական կենսականացումը սրբազան Ռասկուարնոյի միայն այդ երկրորդ գործընթացից հետո էր արժանանում մեր Սրբազնագույն Բացարձակ-Արևի ներկայության հետ միանալուն, կամ էլ մտնում էր այլ տիեզերական խտացումների մեջ, ուր զգացվում էր նման ինքնություն սրբազան Անհատների կարիքը:

Իսկ եթե սրբազան Ռասկուարնոյի վերջնական գործընթացի ավարտի մոտենալու պահին այդ տիեզերական գոյացությունները դեռևս հասած չէին լինում պահանջված աստիճանին՝ ըստ Բանականության սրբազան սանդղակի, ապա այդ բարձրագույն լինելիական մասը ստիպված էր լինում հիշյալ ոլորտում գոյատևելու այնքան ժամանակ, քանի դեռ իր բանականությունը չի կատարելագործել մինչև պահանջված աստիճանին հասնելը:

Այստեղ հնարավոր չէ չնշել այն օբյեկտիվ սարսափի մասին, որն ապրում են արդեն կազմավորված բարձրագույն լինելիական մարմինները, որոնք Վերևից չնախատեսված նոր տիեզերական գործընթացների բոլոր արգասիքների պատճառով դեռևս կատարելագործված չեն լինում մինչև բանականության հարկ եղած աստիճանը:

Բանն այն է, որ ըստ զանազան երկրորդական տիեզերական օրենքների՝ «լինելիական կեսջան մարմինը» չի կարող երկար ժամանակ գոյատևել այդ ոլորտում, և որոշակի ժամանակահատված անցնելուց հետո այդ երկրորդ լինելիական մարմինը պետք է տրոհվի՝ անկախ այն բանից, թե իր ներսում գտնվող բարձրագույն լինելիական մասը հասել է բանականության պահանջված աստիճանին, թե՞ ոչ. և եթե այդ բարձրագույն մասը դեռևս իր բանականությունը կատարելագործելով հասցրած չի լինում այդ պահանջված աստիճանին, ապա միշտ պետք է դիմի այս կամ այն կեսջանական կազմավորման օգնությանը. ուստի երկրորդ սրբազան Ռասկուարնոյից անմիջապես հետո այդպիսի դեռևս կատարելության պահանջված աստիճանին չհասած բարձրագույն լինելիական մարմինն անցնում է «տեղջոկոյնել»⁹⁰ կամ «որևէ ուրիշ, իրեն համապատասխանող նմանատիպ երկրնային գոյացություն որոնելու» վիճակի մեջ, այնպես որ, երբ այդ ուրիշ երկրնային գոյացության բարձրագույն մասը ինքնակատարելագործվի մինչև բանականության պահանջված աստիճանը, և նրա հետ տեղի ունենա վերջնական սրբազան Ռասկուարնոյի գործընթաց, իսկ նրա *կեսջան մարմնի* մոտալուտ տրոհումը դեռևս հստակորեն չզգացվի, ապա այդ բարձրագույն լինելիական մարմինը՝ կարող է ակնթարթորեն մտնել մի ուրիշ *կեսջան մարմնի* մեջ և դրանում շարունակել իր գոյատևումը՝ հանուն հետագա կատարելագործման, ինչը ցանկացած կազմավորված բարձրագույն լինելիական մարմին վաղ թե ուշ անխուսափելիորեն պետք է հասցնի ավարտին:

Եվ ահա այդ պատճառով այն ոլորտում, ուր առաջին սրբազան Ռասկուարնոյից հետո գնում է բարձրագույն լինելիական մասը, տեղի է ունենում մի գործընթաց, որը կոչվում է «հոգու արտաքին մասի ոգիպահելովյան»⁹¹ փոխանակություն» կամ «նախկին լինելիական կեսջան մարմնի փոխանակություն»:

⁸⁹ ռուս. տարբերակում՝ чутгодлитанический, անգլ. տարբերակում՝ chootboglitanical

⁹⁰ ռուս. տարբերակում՝ техгекднел, անգլ. տարբերակում՝ teshgekdnel

⁹¹ ռուս. տարբերակում՝ окипхалевный, անգլ. տարբերակում՝ okipakhalevian

Այստեղ գուցե արժե ասել, որ քո սիրելիները ևս, այսպես ասած, նմանատիպ պատկերացում ունեն այդ «*ոգիպահեղույան փոխանակության*» մասին և նույնիսկ շատ խելացի անվանում են հորինել դրա համար՝ «մետեմպսիխոզ» կամ «վերամարմնավորում»։ Իսկ նրանց նշանավոր գիտության այն բնագավառը, որն այդ հարցի առնչությամբ ստեղծվել է վերջին հարյուրամյակներում, նույնպես աստիճանաբար սկսեց դառնալ և արդեն իսկ դարձել է այն երկրորդ կարգի վնասակար գործոններից մեկը, որոնց համախմբությունը նրանց արդեն իսկ բավականաչափ տարօրինակ բանականությունն աստիճանաբար ավելի ու ավելի է դարձնում, ինչպես կասեր մեր սիրելի մոլլա Նասրեդինը, «քուրջ ու փալասային»։

Համաձայն նրանց «գիտության» այդ բնագավառի երևակայական տեսության, որին ներկայումս սպիրիտուալիզմ են ասում, նրանք, իմիջիայլոց, ենթադրում են, որ իրենցից ամեն մեկն արդեն ունի իր բարձրագույն *լինելիական մասը*, կամ, ինչպես իրենք են անվանում, հոգին, և որ այդ հոգու հետ անընդհատ պետք է տեղի ունենա վերաբնակեցում, այսինքն մոտավորապես այն «*ոգիպահեղույան փոխանակությունը*», որի մասին հենց նոր ասացի։

Իհարկե, եթե միայն այդ թշվառներն ի նկատի ունենային, որ համաձայն «Տենիկոռ» կամ «ձգողականության օրենք» կոչվող երկրորդ կարգի տիեզերական օրենքի՝ նույն այդ *լինելիական մասը*, եթե նույնիսկ շատ հազվադեպ նրանց մոտ կազմավորվում է, էական առաջին Ռասկուարնոյից կամ, ինչպես իրենք են ասում, մահից հետո ակնթարթորեն վեր է բարձրանում իրենց մոլորակի մակերևույթից, նաև հասկանային, որ այնտեղ իրենց այդ, այսպես ասած, ֆանտաստիկ հոգիների պատճառով տեղի ունեցող զանազան երևույթների վերաբերյալ իրենց «գիտության» այդ բնագավառի տված բացատրություններն ու ապացույցներն ընդամենն իրենց դատարկ երևակայության արդյունքն են, ապա արդեն կհասկանային նաև, որ իրենց այդ գիտության տված մնացած բացատրություններն ու ապացույցներն էլ են ոչ այլ ինչ, քան, ինչպես կասեր մոլլա Նասրեդինը, «դատարկ շաղակրատանք»։

Իսկ ինչ վերաբերում է առաջին երկու ավելի ցածր *լինելիական մարմիններին*՝ մոլորակային մարմնին ու *կեսջան մարմնին*, ապա էական առաջին սրբազան Ռասկուարնոյից հետո նրա մոլորակային մարմինը, կազմավորված լինելով միկրոկոսմոսներից կամ բուն մոլորակում փոխակերպված բյուրեղացումներից, աստիճանաբար հենց այդ մոլորակում քայքայվում ու տրոհվում է իր սկզբնական նյութերին, որոնցից ինքը կազմավորվել է՝ համաձայն «հետառնումթողտուր»⁹² կոչվող երկրորդ կարգի տիեզերական օրենքի։

Իսկ երկրորդ *լինելիական մարմինը* կամ *կեսջան մարմինը*, որը կազմավորվում է ուրիշ Տետարդակոսմոսների և տվյալ արևային համակարգի բուն Արևի ճառագայթումներից, սրբազան Ռասկուարնոյի երկրորդ գործընթացից հետո մուտք գործելով հիշյալ ոլորտ, նույնպես սկսում է աստիճանաբար տրոհվել, իսկ այն բյուրեղացումները, որոնցից այն կազմված է եղել, տարբեր ճանապարհներով կրկին հասնում են իրենց սկզբնական կազմավորման վայրը։

Բայց բուն բարձրագույն *լինելիական մարմինը*, կազմավորված լինելով այն արևային համակարգի կողմից անմիջականորեն սրբազան Թեոմերտմալոգոսից ստացած բյուրեղացումներից, որի սահմաններում տվյալ էակը սկզբնավորվում և գոյատևում է, չի կարող տրոհվել. այդ «բարձրագույն մասը» տվյալ արևային համակարգում պետք է գոյատևի այնքան ժամանակ, քանի դեռ իր կատարելագործումը չի հասցրել պահանջված բանականության աստիճանին, որը նմանատիպ տիեզերական գոյացությունները դարձնում է, այսպես կոչված, «իրանկպահեք»⁹³, այսինքն՝ հիշյալ գերսրբազնագույն սուբստանցիաների այնպիսի գոյացություններ, որոնք կարող են գոյատևել կեսջանական կազմավորումներից անկախ և միաժամանակ ենթակա չլինել կամայական արտաքին տիեզերական գործոնների, այսպես կոչված, «ճնշող» ազդեցությանը։

Այսպիսով, զավակս, ինչպես արդեն քեզ ասել եմ, երբ այդ տիեզերական գոյացությունները կատարելագործվելով, իրենց բանականությունը հասցնում էին սրբազան Բանականության սանդղակի անհրաժեշտ աստիճանին, սկզբնական շրջանում նրանց տանում էին Բացարձակ-Արև, որպեսզի այնտեղ կատարեն ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԶԻ կողմից իրենց հատկացված դերը։

⁹² ռուս. տարբերակում՝ опятьтарнотолтор, անգլ. տարբերակում՝ retarnotoltoor

⁹³ ռուս. տարբերակում՝ иранкипах, անգլ. տարբերակում՝ irankipakh

Պետք է ասել, որ անհատականությունների տարբեր աստիճանները որոշելու համար մեր քերականներն ու սերովքներն ամենասկզբում գործարկեցին առ այսօր գոյություն ունեցող այն սրբագան «*բանականության որոշիչը*», որը կիրառվում է բոլոր առանձին մեծ ու փոքր տիեզերական խտացումների բանականության կամ, ավելի ճիշտ՝ «*ինքնագիտակցության ամբողջականության*», աստիճանի որոշման համար. դրանով ոչ միայն բանականության աստիճաններն են որոշվում, այլև նրանց, այսպես կոչված, «*գոյության իմաստի ու նպատակի արդարացվածության կարգանիշը*», ինչպես նաև ամեն մի առանձին անհատի հետագա դերը մեր մեծ Մեգալակոսմոսի համայն գոյի նկատմամբ:

«Մաքուր բանականության» այդ սրբագան որոշիչը ոչ այլ ինչ է, եթե ոչ սանդղակ կամ հավասար բաժանմունքներ ունեցող գիծ, որի մի ծայրին նշված է բանականության իսպառ բացակայության նիշը՝ որպես բացարձակ «անշարժություն», իսկ մյուս ծայրին Բացարձակ Բանականությունն է՝ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ ԱՐԱՐԶԻ բանականությունը:

Իմ պատմության այս մասում գուցե թե կարելի է քեզ պատմել բոլոր եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում առկա *լինելիական բանականության* դրսևորման զանազան աղբյուրների մասին:

Ընդհանրապես ամեն մի եռուղեղ էակի ներսում, անկախ նրա սկզբնավորման վայրից ու արտաքին հանդերձավորման ձևից, կարող են բյուրեղացվել *լինելիական մտածողության* երեք ինքնուրույն տեսակների նախադրյալներ, որոնց ծնած արգասիքների համակցությամբ էլ հենց որոշվում է այդ բանականության աստիճանը:

Լինելիական բանականության այդ երեք տեսակների նախադրյալները եռուղեղ էակների ներկայություններում բյուրեղանում են՝ կախված այն բանից, թե *լինելիական պարտք-պարտականության* միջոցով որքանով են հանդերձավորված ու կատարելագործված այն համապատասխան բարձրագույն *լինելիական մասերը*, որոնցից անպայման պետք է կազմված լինեն նրանց ընդհանուր ներկայությունները՝ որպես մեկ ամբողջություն:

Լինելիական բանականության առաջին և ամենաբարձր տեսակը «մաքուր» կամ *օբյեկտիվ բանականությունն* է, որը բնորոշ է լինում միայն բարձրագույն *լինելիական մարմնին* կամ այն եռուղեղ էակների բուն մարմնի ընդհանուր ներկայությանը, որոնց մոտ կազմավորվել և կատարելության է հասել այդ բարձրագույն մասը, և այն էլ միայն այն դեպքում, եթե այդ մասը էակի ամբողջ ներկայության, այսպես կոչված, «*անհատական գործունեության ծանրակենտրոնական նախաձեռնիչն*» է:

Երկրորդ *լինելիական բանականությունը*, որն անվանում են «Ոգիարտահայտողսա»⁹⁴, կարող է լինել այն եռուղեղ էակների ներկայություններում, որոնց մոտ լիովին հանդերձավորվել է և ինքնուրույն գործում է իրենց երկրորդ *լինելիական կեսջան մարմինը*:

Ինչ վերաբերում է երրորդ տեսակի *լինելիական բանականությանը*, ապա այն ոչ այլ ինչ է, եթե ոչ միայն մեքենայական գործառնությունների գործունեություն, որը հատուկ է ընդհանրապես բոլոր եռուղեղ էակներին, ինչպես նաև առկա է լինում բոլոր վերմոլորակային գոյացությունների ներկայություններում՝ կրկնվող այն արտաքին խթանների շնորհիվ, որոնք առաջացնում են այն տվյալների սովորական արձագանքները, որոնք նրանց ներսում բյուրեղացել են պատահաբար ընկալված նախկին տպավորություններին համապատասխան:

Իսկ հիմա, զավակս, կարծում եմ, որ նախքան ավելի մանրամասն բացատրություններին անցնելս, թե այն ժամանակներում ինչպես էին բարձրագույն մասերը հանդերձավորվում ու կատարելագործվում առաջին Տետարդակոսմոսների ընդհանուր ներկայություններում, նմանապես նաև հետագայում «էակներ» կոչվածների ընդհանուր ներկայություններում, քեզ պետք է ավելի շատ տեղեկություններ հաղորդեմ այն մասին, որ մենք՝ Քարատակում կազմավորված էակներս, ինչպես նաև Երկիր կոչվող մոլորակում կազմավորված էակները, այլևս այնպիս «բոլորմեկտեղյան» էակներ չենք, ինչպես այն առաջին էակներն էին, որոնք անմիջականորեն փոխակերպություն էին ստանում Տետարդակոսմոսներից. այդ էակները կոչվում էին «բոլորմեկտեղյան» և հիմա նաև «մոնոէնիֆիտյան»⁹⁵ են կոչվում. մենք՝ «կեսչափմարդական» ենք կոչվում, այսինքն՝ կիսաէակներ. դրա հետևանքով

⁹⁴ ռուս. տարբերակում՝ *окиартаайтохкса*, անգլ. տարբերակում՝ *okiartaitokhsa*

⁹⁵ ռուս. տարբերակում՝ *монотнититами*, անգլ. տարբերակում՝ *monoeniphitic*

ներկայումս սրբազան Յոթնապարապարշինողի լրիվ գործընթացն այլևս մեր կամ քո սիրելիների երկրային եռուղեղ էակների միջոցով չի իրականացվում ճշգրիտ այնպես, ինչպես այդ առաջինների դեպքում էր լինում: Իսկ մենք այդպիսի կեսչափմարդական էակներ ենք դարձել այն պատճառով, որ սրբազան Յոթնապարապարշինողի վերջին հիմնական ստույգները, որին Մեզալակոսմոսի համարյա բոլոր էակները սրբազան «աշուղիպրոտոեհարի» են կոչում, այժմ գտնվում է ոչ թե մեր մոլորակների կենտրոններում (ինչպես որ է ընդհանրապես մեր Մեզալակոսմոսի մեծ մասի դեպքում), այլ գտնվում է դրանց արբանյակների կենտրոններում. մեր Քարատակ մոլորակի դեպքում դա մեր արևային համակարգի այն մոլորակն է, որին մենք «Բռնող-Պահող⁹⁶» ենք կոչում, իսկ Երկիր մոլորակի դեպքում դրանից պոկված բեկորներն են, որոնց հիմա անվանում են Լուսին և Անուլիոս [*Նիսուլյակ-թ.*]:

Դրա հետևանքով, օրինակ, ցեղի շարունակման հետ կապված, սրբազան Յոթնապարապարշինողի լրիվ գործընթացը տեղի է ունենում ոչ թե մի էակի միջոցով, ինչպես Տետարդակոսմոսների դեպքում էր, այլ երկու տարբեր սեռի էակների միջոցով, որոնց մենք «ակտիվազ⁹⁷» ու «պասսիվազ⁹⁸» ենք ասում, իսկ Երկիր մոլորակի էակները՝ «տղամարդ» ու «կին»:

Այստեղ հարկ է հիշատակել, որ մեր մեծ Մեզալակոսմոսում մի մոլորակ կա, որում ցեղի շարունակման այդ սրբազան Յոթնապարապարշինողի լրիվ գործընթացը եռուղեղ էակներն իրականացնում են երեք առանձին անհատների միջոցով: Թերևս արժե քեզ ավելի մանրամասն պատմել այդ անսովոր մոլորակի մասին:

«Մոտիկտեղ⁹⁹» կոչվող այդ մոլորակը պատկանում է «Պրոտոկոսմոսի» համակարգին:

Այդ մոլորակում սկզբնավորվող էակները երեք ուղեղանի են, ինչպես մեր մեծ Մեզալակոսմոսի բոլոր մոլորակներում սկզբնավորվող եռուղեղ էակները, և իրենց արտաքին տեսքով համարյա մեզ նման են. բայց նաև, ինչպես համարում են բոլոր մյուսները, նրանց արտաքին հանդերձավորումն ամենաիդեալական ու կատարյալն է մեր համայն Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների հանդերձավորումների բազմազանության մեջ. նաև ներկայումս գոյություն ունեցող բոլոր հրեշտակները, հրեշտակապետերը և ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐ մերձավոր Սրբազան Անհատների մեծ մասը սկզբնավորվում են հենց այդ զարմանահրաշ մոլորակում:

Հատկապես նրանց միջոցով կատարվող տիեզերական նյութերի փոխակերպությունը, որն անհրաժեշտ է ըստ Յոթնապարապարշինող սրբազան օրենքի ընթացող համատիեզերական տրոգոավտոեգոկրատական գործընթացի համար, տեղի է ունենում այն նույն սկզբունքով, ինչպես այն տեղի է ունենում ինչպես մեր, այնպես էլ քո սիրելիների՝ Երկիր մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում: Միայն թե՛ ցեղի շարունակման պարագայում այդ սրբազան օրենքն իր լրիվ գործընթացն իրականացնում է երեք սեռի էակների միջոցով, որի պատճառով էլ այդ մոլորակի եռուղեղ էակները կոչվում են «եռագրկողյան¹⁰⁰». տարբեր սեռերի էակներն առանձին-առանձին անվանվում են ակտիվազ և պասսիվազ, ինչպես մեզ մոտ, իսկ քո մոլորակի վրա՝ տղամարդ և կին, իսկ Մոտիկտեղ մոլորակի տարբեր սեռերի էակները կոչվում են «մարդնա¹⁰¹», «սպորնա¹⁰²» և «ոգինա¹⁰³». թեև արտաքինից նրանք բոլորն իրար նման են, բայց ներքին կառուցվածքով այդ սեռերը շատ են տարբերվում մեկը մյուսից:

Յեղի շարունակումը նրանք իրականացնում են հետևյալ կերպ:

Երեք սեռերը միաժամանակ «սրբազան էլմուարնո» են ստանում, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «բեղմնավորվում են» հատուկ գործողության միջոցով և որոշակի ժամանակ, իրենց այդ սրբազան էլմուարնոներով հանդերձ, առանձին են ապրում՝ իրարից լիովին անկախ, սակայն նրանցից յուրաքանչյուրն այդ ընթացքում գոյատևում է որոշակի նպատակային ընկալումներով ու գիտակցական դրսևորումներով:

⁹⁶ ռուս. տարբերակում՝ Прнхпаиох, անգլ. տարբերակում՝ Prnokh-Paiokh

⁹⁷ ռուս. տարբերակում՝ актавус, անգլ. տարբերակում՝ actavas

⁹⁸ ռուս. տարբերակում՝ нассаवус, անգլ. տարբերակում՝ passavas

⁹⁹ ռուս. տարբերակում՝ Модиктес, անգլ. տարբերակում՝ Modiktheo

¹⁰⁰ ռուս. տարբերակում՝ триакромными, անգլ. տարբերակում՝ triakrkomnian

¹⁰¹ ռուս. տարբերակում՝ мартна, անգլ. տարբերակում՝ martna

¹⁰² ռուս. տարբերակում՝ спирна, անգլ. տարբերակում՝ spirna

¹⁰³ ռուս. տարբերակում՝ окина, անգլ. տարբերակում՝ okina

Իսկ ավելի ուշ, երբ գալիս է պտղավորման արգասիքի ի հայտ գալու ժամանակը, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, մոտենում է ծննդաբերության ժամանակը, բոլոր երեք սեռի էակները հայտնվում են մեկը մյուսի նկատմամբ, այսպես կոչված, «ակլոնոաթիստյան»¹⁰⁴ հմայվածության, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «*ֆիզիկա-օրգանական ձգողականության*» մեջ: Եվ որքան ավելի է մոտենում այդ *լինելիական հայտնության* կամ ծննդի պահը, այնքան նրանք ավելի են սեղմվում իրար և ի վերջո համարյա միանում իրար հետ, որից հետո, միևնույն պահին, բոլորն իրար հետ որոշակի ձևով ի հայտ են բերում իրենց բեղմնավորման արգասիքը:

Այնուհետև, բեղմնավորման արգասիքների լույս աշխարհի գալու ընթացքում բոլոր երեքը միակցվում են իրար հետ, և այդ եղանակով մեր Մեգալակոսմոսում ծնվում է այդպիսի անսովոր կառուցվածք ունեցող ևս մեկ եռուղեղ էակ:

Իսկ այդպիսի եռուղեղ էակները մեր Մեգալակոսմոսում իդեալական են համարվում, որովհետև ի սկզբանե արդեն ունենում են իրենց բոլոր *լինելիական մարմինները*:

Եվ նրանք ի սկզբանե ունենում են բոլոր երեք լինելիական մարմիններն այն պատճառով, որ նման էակի ծնողները՝ մարդնան, սպորնան և ոգինան, ամեն մեկն առանձին սկզբնավորում են այդ երեք *լինելիական մարմիններից* մեկը և, սեփական հատուկ համապատասխան *լինելիական գոյատևման* շնորհիվ օգնում են սրբազան Յոթնապարապարշինողին, որպեսզի իրենց ներսում տվյալ *լինելիական մարմինը* հասնի կատարելության, որից հետո այդ երեք մարմինները միաձուլվում են մեկի մեջ:

Ի դեպ, նկատի՝ ունեցիր, զավակս, որ այդ աննման ու զարմանալի մոլորակում սկզբնավորվող էակներին պետք չէ մեր Մեգալակոսմոսի մյուս սովորական մոլորակներում սկզբնավորվող եռուղեղ էակների նման հանդերձավորել իրենց բարձրագույն *լինելիական մարմիններն* այն գործոնների օգնությամբ, որոնք մեր արարիչը նախատեսել է որպես կատարելագործման միջոցներ. նկատի ունեմ այն գործոնները, որոնք մենք այժմ անվանում ենք «գիտակցական ջանքեր» և «կամավոր տառապանք»:

Իսկ հիմա, զավակս, որպեսզի շարունակենք մանրամասն բացատրել, թե ինչպես է ընդհանրապես էակների միջոցով տեղի ունենում տիեզերական նյութերի փոխակերպության գործընթացը, մենք որպես ցուցադրական օրինակ կվերցնենք քո սիրելիների ընդհանուր ներկայությունները:

Թեև մեր կամ քո սիրելիների ընդհանուր ներկայությունների միջոցով ցեղի շարունակման համար կատարվող նյութերի փոխակերպման գործընթացն ընթանում է ոչ ամբողջովին այնպես, ինչպես տեղի էր ունենում էակների վերածված առաջին Տետարդակոսմոսների դեպքում, այնուհանդերձ մենք երկրային էակներին որպես օրինակ կվերցնենք, քանի որ մեծագույն համատիեզերական Տրոգոավտոեգոկրատի պահանջների բավարարման համար ընթացող՝ տիեզերական նյութերի փոխակերպության գործընթացը նրանց ընդհանուր ներկայությունների միջոցով տեղի է ունենում ճիշտ այնպես, ինչպես առաջին Տետարդակոսմոսների միջոցով. միևնույն ժամանակ դու կտեղեկացվես նրանց հոգեկառույցի տարօրինակ առանձնահատկությունների մի քանի ուրիշ ոչ մեծ մանրամասներին, ինչպես նաև տեղեկություն կստանաս այն բանի վերաբերյալ, թե ընդհանրապես նրանք ինչպես են հասկանում ու դիտարկում իրենց *լինելիական պարտքը*՝ համատիեզերական իրանիրանումանգալ գործընթացին ծառայելու առումով՝ իրենց ստամոքսին հագուրդ տալու նպատակով ոչնչացնելով այն բոլոր օրինաչափ արգասիքները, որոնք նախատեսված են ի բարօրություն համայն Մեգալակոսմոսի:

Ինչ վերաբերում է տիեզերական նյութերի փոխակերպության այն առանձնահատկություններին, որոնց շնորհիվ տարբեր էակների ցեղի շարունակումը ներկայումս տարբեր ձևերով է ընթանում, ապա առայժմ ես միայն կասեմ, որ դրա պատճառը կախված է սրբազան աշուղաեհարիի կենտրոնացման տեղից, այսինքն՝ այն տիեզերական նյութերի կենտրոնացման տեղից, որոնք համատիեզերական Անսամբալուհագարի վերջին ստոպինդերի արգասիքներն են:

Այժմ, զավակս, ես իմ խոսքը կսկսեմ կրկնելով, որ բոլոր քո այդ սիրելիները, նույնիսկ՝ ժամանակակիցները, մեր և մեր Մեգալակոսմոսի մնացած բոլոր էակների նման, մեծ տիեզերական Տրոգոավտոեգոկրատի համար նույնպիսի սարքեր են, ինչպիսիք եղել են Տետարդակոսմոսները, որոնցից առաջացել են ներկայումս ապրող էակների նախնիները, նմանապես նաև ամենուրեք ներկայումս ապրող էակները: Եվ նրանցից յուրաքանչյուրի միջոցով կարող էին փոխակերպվել այն տիեզերական նյութերը, որոնք առաջանում են սրբազան Յոթնապարապարշինողի բոլոր յոթ

¹⁰⁴ ռուս. տարբերակում՝ аклоноатистическое, անգլ. տարբերակում՝ akloanoatistian

ստոյանքներն ենք. և բոլոր նրանք, անգամ՝ ժամանակակիցները, այն բանին զուգընթաց, որ որպես սարքեր են ծառայում մեծագույն տիեզերական Տրոգովտեգոկրատի համար՝ կարող էին և ունենալ բոլոր հնարավորությունները, որպեսզի իրենց միջոցով փոխակերպվող տիեզերական նյութերից կլանեին հենց այն, ինչն անհրաժեշտ է իրենց երկու *բարձրագույն լինելիական մարմինները* հանդերձավորելու և կատարելագործելու համար. քանզի քո այդ մոլորակում սկզբնավորվող ամեն մի եռուղեղ էակ դրանից զատ, բոլոր առումներով, ինչպես մեր Տիեզերքի ամեն մի եռուղեղ էակ, հանդիսանում է համայն Մեգալակոսմոսի ճշգրիտ նմանակը:

Նրանցից ամեն մեկի և մեր ընդհանուր մեծ Մեգալակոսմոսի միջև տարբերությունը միայն չափսերի մեջ է:

Ի դեպ, դու պետք է իմանաս, որ ներկայիս քո սիրելիները շատ հաճախ են օգտվում(չգիտեմ՝ բնագդաբա՞ր, զգացականորե՞ն, թե՞ մեքենայաբար) ինչ-որ տեղից քաղված իրենց մի հասկացությունից, որն իրենք արտահայտում են հետևյալ բառերով. «Մենք ստեղծված ենք ըստ Աստծո պատկերի և նմանության»:

Այդ թշվառները նույնիսկ չեն էլ կասկածում, որ իրենց հայտնի դարձած տիեզերական ճշմարտությունների մեջ հենց այդ արտահայտությունն է միակ ճիշտը:

Հիրավի, նրանցից յուրաքանչյուրն ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ, բայց ոչ այն «Աստծո», որն առկա է նրանց խղճով պատկերացումներում, այլ իրական Աստծո, ինչպես մենք երբեմն այլ կերպ անվանում ենք մեր ընդհանուր Մեգալակոսմոսը:

Նրանցից յուրաքանչյուրը մանրագույն մանրամասների ճշգրտությամբ մեր համայն Մեգալակոսմոսի մանրապատկերն է, և յուրաքանչյուրն ունի այն բոլոր առանձին գործառույթները, որոնցով մեր ընդհանուր Մեգալակոսմոսում իրականացվում է տիեզերական ներդաշնակ իրանիրանումանգալը կամ «նյութափոխանակությունը», որի միջոցով պահպանվում է համայն գոյի գոյատևումը Մեգալակոսմոսում՝ որպես մեկ ամբողջությունում:

Նրանց այդ արտահայտությունը՝ «Մենք ստեղծված ենք ըստ Աստծո պատկերի և նմանության», այստեղ կարող է շատ լավ ցուցադրական լրացուցիչ նյութ ծառայել՝ հասկանալու համար այն, թե որքան է աղավաղված նրանց, այսպես կոչված, «ընկալման տրամաբանությունը» կամ, ինչպես երբեմն ասվում է, «հայմնոդյան»¹⁰⁵ մտածողությունը:

Թեև նրանք ունեն ճշմարտությանը համապատասխանող այդ արտահայտությունը, բայց այն, թե ինչն են նրանք համարում դրա ճշգրիտ իմաստը (անգամ եթե իրենց ամբողջ ընդհանուր ներկայությամբ ակտիվորեն ու անկեղծորեն ուզենային ցույց տալ այդ արտահայտության կամ որևէ ցանկացած այլ կարճառոտ բառային ձևակերպման իրենց ներքին ընկալումն ու էության ըմբռնումը), նրանք լավագույն դեպքում իրենց կարճատես ու տարօրինակ մտածողության միջոցով դա կարտահայտեն մոտավորապես այսպես.

«Լավ, ասենք թե... Եթե մենք իսկապես «ստեղծված ենք ըստ Աստծո պատկերի և նմանության», ապա դա նշանակում է... դա նշանակում է, որ «Աստված» նման է մեզ և արտաքին տեսքով էլ առանձնապես չի տարբերվում մեզնից, այսինքն՝ մեր «Աստված» ճիշտ նույնպիսի բեղ-մորուս, քիթ ունի, ինչպես մենք, և մեզ նման էլ հագնվում է: Անկասկած է, որ մեզ նման է հագնվում, որովհետև մեզ նման շատ է սիրում համեստությունը. իզուր չէ, որ Ադամին ու Եվային դրախտից արտաքսել է, երբ նրանք ամոթը կորցրին և սկսեցին իրենց մարմինները ծածկել հագուստներով»:

Այնտեղի որոշ էակների, հատկապես՝ ժամանակակիցների մեջ, *հայմնոդյան մտածողությունը* կամ ընկալման տրամաբանությունն արդեն այնպիսին է դարձել, որ իրենց պատկերացումներում նրանք շատ հստակ կարող են տեսնել իրենց այդ «Աստծուն»՝ Ժիլետի ձախ գրպանից դուրս ցցված սանրով, որով նա երբեմն-երբեմն սանրում է իր նշանավոր մորուքը:

Իրենց «Աստծո» այդքան գերարտառոց դարձած *լինելիական հայմնոդյան մտապատկերն* առկա է դարձել քո սիրելիների ուղեղներում գլխավորապես այն «գիտուն» էակների տհասամուսական դրսևորումների պատճառով, որոնք, եթե իմ պատմածից հիշում ես, հավաքվել էին Բաբելոն քաղաքում և միասնաբար սկսել էին իրենց «Աստծո» վերաբերյալ զանազան վնասակար հորինվածքներ հորինել, որոնք էլ պատահաբար հետո լայնորեն տարածվեցին քո այդ չարաբաստիկ մոլորակով մեկ: Եվ քանի որ այդ շրջանը համընկավ այն ժամանակահատվածի հետ, երբ այնտեղի եռուղեղ էակները սկսել էին

¹⁰⁵ ռուս. տարբերակում՝ аймнофное, անգլ. տարբերակում՝ aimnophnian

գոյատևել առանձնապես «սելիելնումային»¹⁰⁶ եղանակով, այսինքն՝ առանձնապես պասսիվ՝ եռուղեղ էակներին հատուկ *լինելիական ջանքերի* առումով, ապա այդ վնասակար հորինվածքներն ամբողջովին ընկալեցին ու յուրացրին:

Հետագայում էլ, ժառանգաբար փոխանցվելով մի սերնդից մյուսին, դրանք սկսեցին աստիճանաբար բյուրեղացվել և վերածվել այնպիսի հրեշավոր «*լոգիկենստարային նյութերի*», որ արդյունքում այնտեղի ժամանակակից եռուղեղ էակների հոգեկառույցներում սկսեց ի հայտ գալ ահա այդպիսի անհավանական աստիճանի աղճատված *լինելիական հայմնոդյան մտածողություն*:

Իսկ որ իրենց «Աստծուն» այդպես երկարամորուս են պատկերացնում, բացատրվում է նրանով, որ այն ժամանակ, բաբելոնյան «գիտունների» վնասակար հորինվածքների շարքում ամեն ինչից զատ ասվում էր նաև, որ իրենց այդ նշանավոր «Աստված» իբր արտաքինապես նման է ծեր մարդու և երկար մորուք ունի:

Այդ «Աստծու» արտաքինի հարցում քո սիրելիներն ավելի հեռուն գնացին. այն է՝ նրանք այդ իրենց նշանավոր «Աստծուն» պատկերում են «հրեա ծերունու» պես, քանի որ, ըստ իրենց խղճուկ պատկերացումների, բոլոր սրբազան անձինք ծագել են այդ ժողովրդից:

Ամեն դեպքում, իմ սիրելի Հասեի՛ն, քո սիրելիներից ամեն մեկն առանձին վերցրած, իր ընդհանուր ներկայությամբ բոլոր առումներով մեր Մեգալակոսմոսի ճշգրիտ նմանակն է:

Ես մի անգամ առիթ եմ ունեցել քեզ ասելու, որ ինչպես նրանցից, այնպես էլ մեզնից յուրաքանչյուրի գլխում տեղայնացված է տիեզերական նյութերի խտացում, որի գործունեությունը ճշգրիտ համապատասխանում է այն բոլոր գործառույթներին ու նպատակներին, որոնք մեր համայն Մեգալակոսմոսի համար ունի և իրականացնում է մեր Սրբազնագույն Պրոտոկոսմոսը:

Գլխում կենտրոնացված այդ տեղայնացումը նրանք «գլխուղեղ» են անվանում: Նրանց գլխի միջի այդ տեղայնացման առանձին, այսպես կոչված, «հոսանքակիրներն»¹⁰⁷ ու «պոպտոպլաստները»¹⁰⁸ կամ, ինչպես երկրային գիտնականներն են անվանում, «գլխուղեղի բջիջները», նրանցից յուրաքանչյուրի ամբողջ ներկայության համար ունեն նույն նշանակությունը, ինչ ներկայումս ունեն մեր համայն Մեծ Տիեզերքի այն եռուղեղ էակների *բարձրագույն կատարյալ մարմինները*, որոնք արդեն միացել են Սրբազնագույն Բացարձակ-Արևի կամ Պրոտոկոսմոսի հետ:

Երբ եռուղեղ էակների բարձրագույն մասերը, հասնելով *օբյեկտիվ բանականության* կատարելության համապատասխան աստիճանին, հայտնվում են այնտեղ, ապա «հոսանքակիրների» կամ «*գլխուղեղի բջիջներ*» այն նույն գործառույթն են իրականացնում, որի համար, ինչպես արդեն ասել եմ, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻԱԳՈ ՀԱՅՐԸ ներկայումս գոյություն ունեցող Աշխարհն արարելիս կամեցավ հետադուր հանդերձանք օգտագործել, որն ինքնուրույն Անհատականությամբ էր օժտվում Տեսարդակոսմոսներում, որպեսզի Իրեն օգնի ընդլայնվող աշխարհը կառավարելու գործում:

Այնուհետև, նրանցից յուրաքանչյուրի, այսպես կոչված, «ողնաշարում» կա ևս մեկ խտացում, որն այնտեղ «ողնուղեղ» է կոչվում. հենց այդտեղ են գտնվում այն, այսպես կոչված, բացասական աղբյուրները, որոնք իրենց գործառույթներով գլխուղեղի մի մասի նկատմամբ իրականացնում են այն, ինչը համարժեք է մեր Մեգալակոսմոսի «նոր ծագող երկրորդ կարգի արևի» գործառույթներին՝ Սրբազան Պրոտոկոսմոսի նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ նախկին դարաշրջաններում այնտեղ՝ քո այդ մոլորակում, քո սիրելիներն ինչ-որ բաներ գիտեին իրենց ողնուղեղի մասերի առանձին հատուկ գործառույթների մասին. նույնիսկ գիտեին և օգտագործում էին զանազան «մեխանիկական միջոցներ», որոնցով ազդում էին իրենց այդ ողնաշարի համապատասխան մասերի վրա՝ այն ժամանակահատվածների ընթացքում, երբ, ինչպես իրենք են արտահայտվում, իրենց «հոգեկան վիճակում» որևէ շեղում էր ի հայտ գալիս. սակայն գիտելիքների այդ տեսակին վերաբերող տեղեկություններն էլ աստիճանաբար «ցնդեցին», և հիմա թեև քո սիրելիներին հայտնի է, որ իրենց ողնուղեղում կան ինչ-որ հատուկ խտացումներ, սակայն, իհարկե, չնչին պատկերացում անգամ չունեն այն մասին, թե Մեծ Բնությունն ի՞նչ գործառույթների համար է դրանք նախատեսել, և առավել հաճախ դրանք անվանում են պարզապես ողնաշարի «հանգույցներ»:

¹⁰⁶ ռուս. տարբերակում՝ сельзельнуально, անգլ. տարբերակում՝ selzelnualnian

¹⁰⁷ ռուս. տարբերակում՝ оканиаки, անգլ. տարբերակում՝ ossaniaki

¹⁰⁸ ռուս. տարբերակում՝ поптопласты, անգլ. տարբերակում՝ poptoplasts

Բայց նրանց ողնուղեղի հենց այդ առանձին հանգույցներն են բացասման աղբյուրներ հաղիսանում նրանց գլխուղեղի հաստատումների առանձին նշույլների նկատմամբ ճիշտ այնպես, ինչպես առանձին «երկրորդ կարգի արևներն» են բացասման առանձին նշույլներ դրսևորում Սրբազնագույն Պրոտոկոսմոսի հաստատման տարբեր նշույլների նկատմամբ:

Եվ վերջապես, ինչպես Մեգալակոսմոսի դեպքում բոլոր արգասիքները, որոնք սրբազան Յոթնապարապարշինողի հիմնական գործընթացում ստացվում են Սրբազնագույն Պրոտոկոսմոսի «հաստատումից» և նոր արարված «արևների» «բացասման» տարբեր նշույլներից և հետո սկսում որպես «հաշտեցնող սկզբունք» ծառայել համայն նոր ստեղծվողի և արդեն գոյություն ունեցողի համար, այնպես էլ նրանք ունեն բոլոր այն արգասիքները կենտրոնացնող համապատասխան տեղայնացում, որոնք ստացվում են գլխուղեղի հաստատումից և ողնուղեղի բացասման բոլոր նշույլներից, և այդ արգասիքները հետո ծառայում են որպես կարգավորող կամ հաշտեցնող սկզբունք՝ նրանցից յուրաքանչյուրի ամբողջ ընդհանուր ներկայության գործունեության համար:

Ինչ վերաբերում է այդ տեղայնացման կենտրոնացման տեղին, որը երկրային եռուղեղ էակների ներկայությունների համար ծառայում է որպես կարգավորող կամ հաշտեցնող սկզբունք, ապա պետք է նշել, որ քեզ դուր եկած էակները սկզբնական շրջանում մեզ նման ունեին այդ երրորդ խտացումը, որն ինքնուրույն ուղեղի տեսքով գտնվում էր իրենց, այսպես կոչված, «կրծքի» շրջանում:

Բայց այն ժամանակներից սկսած, երբ նրանց սովորական *լինելիական գոյատևումն* սկսեց առանձնապես կտրուկ փոխվել դեպի վատը, այնժամ Բնությունը, էլնելով համատիեզերական տրոգովտեզոկրատական գործընթացից բխող որոշակի պատճառներից, ստիպված եղավ, չոչնացնելով հանդերձ այդ ուղեղի գործունեությունը, փոխել դրա տեղայնացման համակարգը:

Այն է՝ նախկինում մի տեղում կենտրոնացված այդ օրգանի տեղայնացումը՝ Նա սկսեց աստիճանաբար ոչ մեծ տեղայնացումներով ցրել ամբողջ ընդհանուր ներկայությունով մեկ, բայց գլխավորապես այն մասում, որին «սրտագդալի տակ» են ասում: Այդ մասի ոչ մեծ տեղայնացումների համակցությանը նրանք հիմա արևահյուսակ են անվանում կամ «սիմպատիկ նյարդային համակարգի հանգույցների համախումբ»:

Եվ ամբողջ մոլորակային մարմնով մեկ ցրիվ եկած նյարդային հանգույցներում հիմա կենտրոնանում են բոլոր այն արգասիքները, որոնք առաջանում են գլխուղեղի ու ողնուղեղի համապատասխանաբար հաստատող ու բացասող դրսևորումներից, և ամբողջ ընդհանուր ներկայությունում սփռված «նյարդային հանգույցներում» ամրացող այդ արգասիքները նույնպիսի չեզոքացնող դեր են կատարում գլխուղեղի և ողնուղեղի միջև ընթացող «հաստատման ու բացասման» հետագա գործընթացներում, ինչպիսի չեզոքացնող ուժի դեր կատարում է Մեգալակոսմոսում ամբողջ նոր կազմավորվողը՝ Պրոտոկոսմոսի հաստատման և բոլոր նոր ծագող արևների բացասման տարբեր նշույլների գործընթացում:

Այսպիսով, Երկիր մոլորակի եռուղեղ էակները, ինչպես և մենք, ոչ միայն սարքեր են Մեծ Տրոգովտեզոկրատի պահանջած տիեզերական նյութերի՝ հիմնական համատիեզերական Եռամասիկապողի բոլոր երեք ուժերի հատկանիշներով փոխակերպություն իրականացնելու համար, այլև, քանի որ նրանք այդ փոխակերպության ենթակա նյութերն ստանում են ինքնուրույն կազմավորումների երեք տարբեր աղբյուրներից, ապա նաև ունեն բոլոր հնարավորությունները, որ իրենց սեփական գոյատևումը պահպանելու համար անհրաժեշտ նյութերը յուրացնելուց զատ՝ յուրացնեն նաև այն նյութերը, որոնք օգտագործում են իրենց սեփական *բարձրագույն լինելիական մարմինները* հանդերձավորելու և կատարելագործելու համար:

Այսպիսով, երեք աղբյուրներից նրանց ընդհանուր ներկայության մեջ մուտք գործող և փոխակերպության ենթակա նյութերը նրանց համար, ինչպես և մեզ համար, *լինելիական սննդի* երեք տեսակներն են:

Այսպես, այն նյութերը, որոնք իրենց էվոլյուցիոն վերընթացի՝ սրբազան «աշուղիալրոտեհարիից» (հիմնական սրբազան Յոթնապարապարշինողի ամենավերջին ստոպինդերից) դեպի Սրբազնագույն Պրոտոկոսմոս տանող հետադարձ ուղով իրենց իսկ մոլորակի օգնությամբ փոխանցվել են համապատասխան որոշակի բարձրագույն վերմոլորակային կազմավորումների, հետագա փոխակերպության նպատակով մտնում են նրանց ներսը որպես «առաջին *լինելիական սնունդ*». դա նրանց սովորական «ուտելիքը» և «խմելիքն» է:

Իսկ երկրորդ աղբյուրի նյութերը, որոնք ստացվում են իրենց սեփական արևային համակարգի բուն Արևի և բոլոր արտաքին մոլորակների փոխակերպություններից, նաև այն նյութերը, որոնք վերջիններիս ճառագայթումների հետևանքով մուտք են գործել իրենց մոլորակի մթնոլորտի մեջ, կրկին մտնում են նրանց ներսը, ինչպես մեր դեպքում է լինում, կրկին որպեսզի հետագա էվոլյուցիոն փոխակերպություն անցնեն որպես «երկրորդ լինելիական սնունդ»։ Նման դեր է կատարում, ինչպես այնտեղ են ասում, «օդը», որն իրենք շնչում են, և այդ օդի մեջ եղած նյութերը ծառայում են նրանց «երկրորդ լինելիական մարմինների» հանդերձավորմանն ու գոյության պահպանմանը։

Եվ վերջապես, առաջին աղբյուրից բխող նյութերը, որոնք նրանց, ինչպես և մեզ համար լինելիական սննդի երրորդ տեսակն են, ծառայում են բարձրագույն լինելիական մարմնի հանդերձավորմանն ու կատարելագործմանը։

Ահա հենց այդ սրբազան տիեզերական նյութերի հետ կապված էլ քո դժբախտ սիրելիների մոտ գոյացել են այն ցավալի արգասիքները, որոնք բխել և շարունակում են բխել սովորական լինելիական գոյատևման գործընթացում իրենց իսկ կողմից հաստատված բոլոր աննորմալություններից։

Թեև այդ բարձրագույն լինելիական սննդի նյութերը ևս առ այսօր շարունակում են մուտք գործել նրանց ներսը, բայց հատկապես ներկայիս էակների պարագայում մուտք են գործում սոսկ ակամա՝ բացարձակապես առանց նրանց գիտակցական մտադրության և այնքանով, որքանով պահանջվում է նրանց միջոցով ընթացող փոխակերպությունների համար, որոնք անհրաժեշտ են նրանց ցեղի ինքնաբերական շարունակման գործի համար, որը պահանջում է Բնությունը, և համատիեզերական տրոգովտոէգոկրատական ներդաշնակություն պահպանելու նպատակներով օգտագործվելու համար։

Երբ այնտեղ վերջնականապես հաստատվեցին սովորական լինելիական գոյատևման աննորմալ պայմաններ (ինչի հետևանքով նրանց էությունից իսպառ չբացավ կատարելագործման ինչպես բնագդական, այնպես էլ միտումնավոր ձգտումը), նրանց մոտ վերացավ ոչ միայն տիեզերական նյութեր կլանելու գիտակցական պահանջմունքը, այլև նույնիսկ բարձրագույն լինելիական սննդի գոյության ու նշանակության մասին բուն գիտելիքն ու ըմբռնումը։

Այնտեղ հիմա քո սիրելիները գիտեն միայն առաջին լինելիական սննդի մասին, և այն էլ միայն այն պատճառով, որ նախ՝ եթե չուզենան էլ, չեն կարող դրա մասին ոչինչ չիմանալ, և երկրորդ՝ դրա ընդունման գործընթացն էլ է արդեն նրանց համար արատի վերածվել և իր լիիրավ տեղն է զբաղեցնում մնացած այն թուլությունների շարքում, որոնք նրանց ներսում աստիճանաբար բյուրեղացվել են որպես իրենց համար չարաղետ կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներ։

Անգամ առ այսօր էլ նրանցից ոչ ոք չի գիտակցել, որ այդ առաջին լինելիական սննդում կան նյութեր, որոնք անհրաժեշտ են համարյա բացառապես սոսկ նրանց կոպիտ մոլորակային մարմնի գոյատևումը պահպանելու համար (որը ժխտող ուժ է), և որ այդ առաջին լինելիական սնունդը համարյա ոչինչ չի կարող տալ իրենց ներկայության մյուս՝ ավելի բարձր մասերին։

Ինչ վերաբերում է այն բարձրագույն տիեզերական նյութերին, որոնց որոշակի քանակություն պետք է, ինչպես արդեն ասել եմ, անպայման նրանց միջոցով փոխակերպության ենթարկվի իրենց ցեղի շարունակման և համատիեզերական Անսամբալուհազարի ընդհանուր ներդաշնակության պահպանման նպատակներով, ապա քո սիրելիներն այլևս բոլորվին կարիք չեն զգում դրանցով անհանգստացնելու Ինքնասփոփանք կոչվող իրենց ներքին աստծուն, քանի որ արդեն դա տեղի է ունենում, ինչպես արդեն ասացի, կատարելապես ակամա՝ առանց նրանց գիտակցական մտադրության մասնակցության։

Մակայն հետաքրքիր է նշել, որ սկզբնական շրջանում՝ կունդաբուֆեր օրգանի գործունեության դադարեցումից որոշ ժամանակ անց, քո այդ մոլորակում բազմացող այդ եռուղեղ էակները ևս գիտակցեցին բարձրագույն լինելիական սննդի այդ երկու տեսակների նշանակությունը և սկսեցին դրանք օգտագործել գիտակցական միտվածությամբ, իսկ Ատլանտիդա աշխարհամասի վերջին դարաշրջանի որոշ էակներ նույնիսկ սկսեցին այդ բարձրագույն տեսակի լինելիական սննդի կլանման գործընթացը համարել իրենց գոյատևման գլխավոր նպատակը։

Ատլանտիդա աշխարհամասի էակներն այն ժամանակ երկրորդ լինելիական սնունդն անվանեցին «համարլուս¹⁰⁹», ինչը նշանակում էր «օգնություն Լուսնին», իսկ երրորդ լինելիական սնունդն

¹⁰⁹ ռուս. տարբերակում՝ амарлус, անգլ. տարբերակում՝ amarloos

անվանեցին «սրբազան Համարիսուդան»¹¹⁰», որի վերջին բառն այն ժամանակ նշանակում էր «օգնություն Աստծուն»:

Ինչ վերաբերում է քո սիրելիների հոգեկառույցում այդ բարձրագույն սրբազան տիեզերական նյութերը կլանելու գիտակացական պահանջմունքի բացակայությանը, ապա ես կուզենայի քո ուշադրությունը հրավիրել ևս մի շատ կարևոր ու նրանց համար ցավալի հետևանքի վրա, որը բխել է դրանից:

Այն է՝ քանի որ նրանց առավել բարձր *լինելիական մասերի* կազմավորման ու գոյատևման համար անհրաժեշտ որոշակի տիեզերական նյութերի միտումնական կլանման դադարեցման հետ մեկտեղ իրենց ընդհանուր ներկայություններից չբացան ոչ միայն բուն կատարելագործվելու ձգտումը, այլև, այսպես կոչված, «գիտակցված մտասկեռման» հնարավորությունը, որը հենց գլխավոր գործոնն է այդ սրբազան տիեզերական նյութերի յուրացման գործում, ապա, այդ ժամանակներից սկսած, որպեսզի ապահովվի նրանց ներսում այդ նյութերի որոշակի քանակության մուտքն ու յուրացումը, Բնությունը ստիպված եղավ աստիճանաբար հարմարվելու և ամեն ինչ դասավորելու այնպես, որ նրանց գոյատևման գործընթացում նրանցից յուրաքանչյուրի մոտ արդեն ինքնաբերաբար սկսեն ի հայտ գալ այնպիսի «անսպասելիություններ», որոնք բոլորովին բնորոշ չեն մեր Մեծ Մեզալակոսմոսի և ոչ մի էակի:

Դժբախտաբար այնտեղ Բնությունը ստիպված էր հարմարվելու այդ աննորմալությանն այնպես, որ այդ անսպասելի բաների շնորհիվ նրանք ինքնաբերաբար, անկախ իրենցից ունենան որոշակի ինտենսիվ *լինելիական ապրումներ* և ակտիվ խոկումներ, և այդ «ակտիվ խոկումների» շնորհիվ նրանց ներսում ինքնաբերաբար տեղի ունենան *լինելիական սննդի* այդ բարձրագույն տեսակների անհրաժեշտ սրբազան մասնիկների պահանջված փոխակերպությունը և յուրացումը:

Իսկ ինչ վերաբերում է, զավա կս, Մեծագույն համատիեզերական Տրոգոավտոէգոկրատի այնպիսի սարքերի միջոցով, ինչպիսիք քո սիրելիներն են, Էվոլյուցիոն և ինվոլյուցիոն ուղղություններով բոլոր այդ տիեզերական նյութերի փոխակերպության բուն գործընթացներին, ապա այդ փոխակերպությունները նրանց ներսում, ինչպես և մեր ու ընդհանրապես համայն Մեզալակոսմոսի բոլոր մեծ ու փոքր կոսմոսներում, տեղի են ունենում երկու գլխավոր ու հիմնական տիեզերական օրենքներին՝ սրբազան Յոթնապարապարշինողին և սրբազան Եռամասիկապողին, խստորեն համապատասխան:

Նախքան խոսելն այն մասին, թե ինչպես են որպես առաջին *լինելիական* սնունդ էակների մեջ մտնող տիեզերական նյութերը նրանց ներսում փոխակերպվում համատիեզերական տրոգոավտոէգոկրատի նպատակներով, և թե ինչպիսի նյութեր են մուտք գործում եռուղեղ էակների ներսը (եթե, իհարկե, վերջիններս որոշակիորեն առնչվում են այդ գործընթացին), նաև որպեսզի հանդերձավորեն ու կատարելագործեն իրենց սեփական առավել բարձր մասերը՝ այդ գործընթացները հստակ պատկերացնելու համար դու պետք է նկատի ունենաս, որ մեր Մեզալակոսմոսում գոյություն ունեն (զանազան տրոգոավտոէգոկրատական գործընթացների արդեն կազմավորված արգասիքներից) նոր կազմավորումներին մասնկացություն ունեցող հարյուրավոր ինքնուրույն «ակտիվ տարրեր», որոնք օժտված են առանձնահատուկ սուբյեկտիվ հատկություններով:

Այդ տարբեր հատկություններ ունեցող «ակտիվ տարրերը», որտեղ էլ որ գտնվելիս լինեն, ելնելով հիմնական համատիեզերական սրբազան Յոթնապարապարշինողի յոթ ստոպինդերներից և կախված այն բանից, թե հատկապես ո՞ր ստոպինդերում են դրանք ի սկզբանե կազմավորվել, բաժանվում և տեղայնացվում են յոթ, այսպես կոչված, «օխտըբանաձախյան»¹¹¹ դասերի՝ իրենց, այսպես կոչված, «թրթիռների միասեռությանը» համապատասխան: Եվ մեր համայն Մեզալակոսմոսի առանց բացառության ինչպես մեծ, այնպես էլ փոքր, արդեն որոշակիացված խտացումները կազմավորվում են յոթ առանձին դասերի պատկանող այդ ակտիվ տարրերից, և, ինչպես արդեն ասացի քեզ, դրանք ունեն իրենց սուբյեկտիվ հատկությունները:

Իսկ այդ սուբյեկտիվ հատկությունները, ինչպես նաև դրանց, այսպես կոչված, «կենսատվական համամասնություններն» իրականացվում են, նախ՝ համաձայն այն բանի, թե սրբազան Յոթնապարապարշինողի հինգերորդ ստոպինդերի գործունեության հատկապես ո՞ր տեսակն է

¹¹⁰ ռուս. տարբերակում՝ Амархухдан, անգլ. տարբերակում՝ amarkhoodan

¹¹¹ ռուս. տարբերակում՝ октапанадахных, անգլ. տարբերակում՝ okhtapanatzakhian

ընթացել դրանց սկզբնավորման ժամանակ, և երկրորդ՝ կախված այն բանից, թե արդյո՞ք այդ ակտիվ տարրերն առաջանում են որևէ ինքնուրույն անհատի գիտակցական մտադրությամբ, թե՞ մեքենայաբար են առաջանում՝ շնորհիվ *«նմանն զնմանն գտանէ»* երկրորդ կարգի օրենքի:

Ահա հենց այդ հարյուրավոր որոշակի ակտիվ տարրերը, որոնք պատկանում են յոթ տարբեր *«օխտրբանաճախյան դասերի»* և օժտված են յոթ տարբեր սուբյեկտիվ հատկություններով (որոնց մեջ ամենակարևոր նշանակություն ունեցողները «կենսատվության» և «քայքայող» հատկություններն են), իրենց համակցությամբ կազմում են հիմնական համատիեզերական Անսամբալուհագարը, որի միջոցով իրականացվում է Մեծագույն տիեզերական Տրոգոավտոեզոկրատը՝ անխիղճ Հերոպասի օրինաչափ գործունեությունից Ճշմարիտ Փրկիչը:

Հարկ է նաև ասել, որ Տիեզերքում ամենուրեք սփռված Եթերակոիլնոյից, ըստ *նմանն զնմանն գտանէ* երկրորդ կարգի մեխանիկական օրենքի, ամեն տեսակի խտացումների առաջին անգամ ի հայտ գալը տեղի է ունենում հետևյալ կերպ:

Եթե Եթերակոիլնոյի մասնիկները, որոնք արդեն առկա են հիմնական «համատիեզերական Անսամբալուհագարի» բոլոր յոթ ստոպիներների տարբեր ոլորտներում, այս կամ այն պատճառով բախվում են իրար, դրանով իսկ սկզբնավորում են դեռևս սուբյեկտիվ հատկություններ չունեցող հնարավոր ամեն տեսակի «բյուրեղացումներ»։ Իսկ եթե Եթերակոիլնոյի այդ մասնիկներն այս կամ այն պատճառով հայտնվում են այնպիսի պայմաններում, որտեղ տեղի է ունենում *խառնել-միացնելու* գործընթաց, ապա դրանք միաձուլվում են և, շնորհիվ իրենց ձեռք բերած *«որոշակի դիմագիծ ունեցող թրթիռների»*, փոխակերպվում են որոշակի առանձնահատուկ հատկություններ ունեցող ակտիվ տարրերի:

Եվ եթե այնուհետև այդ որոշակիացված ակտիվ տարրերն, իրենց սեփական առանձնահատուկ-սուբյեկտիվ հատկություններով հանդերձ, մտնում են այլ պայմաններ ունեցող *խառնել-միացնելու* այլ գործընթացների մեջ, ապա կրկին միաձուլվում են իրար՝ ըստ նույն *«թրթիռների միաստեռության»* օրենքի, և այդ եղանակով ձեռք բերելով այլ հատկություններ՝ փոխակերպվում են մի ուրիշ *«օխտրբանաճախյան դասի»* ակտիվ տարրերի և այլն, և այլն:

Հենց այդ պատճառով է, որ մեր Մեզալակոսմոսում այդքան շատ են զանազան առանձնահատուկ-սուբյեկտիվ հատկություններով օժտված ինքնուրույն ակտիվ տարրերը:

Եվ եթե, զավակս, դու հիմա քչից-շատից ըմբռնես էակ-սարքերի միջոցով իրականացվող՝ տիեզերական նյութերի փոխակերպության գործընթացի հաջորդական փուլերը, որոնցում այդ տիեզերական նյութերն առաջին *լինելիական սննդի* դեր են կատարում, ապա միաժամանակ մոտավորապես կհասկանաս ամեն ինչ՝ կապված Յոթնապարապարշինոդ հիմնական սրբազան օրենքի գլխավոր առանձնահատկության, նմանապես նաև բարձրագույն *լինելիական սննդի* մնացած տեսակների էվոլյուցիայի և ինվոլյուցիայի գործընթացների հետ:

Երբ էվոլյուցիա ապրող այդ ակտիվ տարրերն իրենց հետադարձ վերելքի ուղով հիմնական սրբազան Յոթնապարապարշինոդի վերջին ստոպիներից անցնում են էակ-սարքերի ընդհանուր ներկայության մեջ որպես նրանց առաջին *լինելիական սնունդ*, ապա հենց բերան մտնելուց սկսած, *խառնել-միացնել* երկրորդ կարգի օրենքի գործընթացների օգնությամբ, այսինքն՝ ըստ *«թրթիռների միաստեռության»* միախառնվելով ու միաձուլվելով այն ակտիվ տարրերի հետ, որոնք արդեն զարգացել են էակների ներկայության մեջ ու ձեռք բերել *լինելիական Յոթնապարապարշինոդի* հաջորդական ստոպիներներին համապատասխանող թրթիռներ, այս անգամ արդեն էակի ստամոքսում աստիճանաբար ձևափոխվում ու փոխակերպվում են *«լինելիական պրոտոէհարի»* կոչվող որոշակի ակտիվ տարրերի, որոնք իրենց թրթիռներով համապատասխանում են հիմնական համատիեզերական յոթնապարապարշինոդի չորրորդ վերընթաց ստոպիներին:

Այդտեղից այդ համակցությունը, որն արդեն ունի *լինելիական պրոտոէհարիի «ծանրակենտրոն թրթիռները»*, կրկին սոսկ *խառնել-միացնել* գործընթացի շնորհիվ անցնելով ամբողջ, այսպես կոչված «աղիքային համակարգով» և աստիճանաբար էվոլյուցիա ապրելով, որպես հետևանք ձեռք է բերում համապատասխան թրթիռներ և ամբողջովին փոխակերպվում է (այս անգամ արդեն, այսպես կոչված, *«տասներկումատնյա աղիքում»*) *լինելիական դեյտերաէհարիի*:

Այնուհետև *«լինելիական դեյտերաէհարիի»* որոշակի նյութերի մի մասը ծառայում է բուն մոլորակային մարմնին, ինչպես նաև նոր մուտք գործած սննդի հետ մտնում է տեղական *խառնել-միացնելու* գործընթացի մեջ, իսկ մյուս մասը, կրկին տեղական բնույթի *խառնել-միացնելու*

գործընթացի միջոցով, շարունակում է իր ինքնուրույն եվոյուցիան և ի վերջո էակների ներսում փոխակերպվում է էլ ավելի բարձր որոշակի նյութերի, որոնք տվյալ դեպքում կոչվում են «*լինելիական տրիտաէհարի*»:

Եվ «էակ-սարքերի» ընդհանուր ներկայություններում ժամանակավորապես բյուրեղացված տիեզերական նյութերի այդ համակցությունը, որն իր թրթիռներով համապատասխանում է «*լինելիական տրիտաէհարիին*», էակների ներկայություններում որպես իր կենտրոնացման ծանրության կենտրոն ունի, այսպես կոչված, «յարդը»:

Լինելիական Անսամբալուհագարի հենց այդ տեղում է գտնվում սրբազան Յոթնապարապարշինողի ստորին «Մտնել-Ին»-ը, որը կոչվում է «*մեքենայաբար համընկնող Մտնել-Ին*», ուստի *լինելիական տրիտաէհարիի* նյութերը չեն կարող, հենց միայն *խառնել-միացնել* գործընթացի շնորհիվ, ինքնուրույնաբար հետագա զարգացում ունենալ:

Ահա այսպես, շնորհիվ Յոթնապարապարշինող նախասկզբնական համատիեզերական սրբազան օրենքի ընդհանուր գործառնությունների կրած այդ փոփոխության՝ նյութերի «*լինելիական տրիտաէհարի*» կոչվող այդ համակցությունն այդ վիճակից կարող է հետագա զարգացում ունենալ միայն արտաքին ուժերի օգնության միջոցով:

Ահա թե ինչու այդ դեպքում, եթե նյութերի «*լինելիական տրիտաէհարի*» կոչվող այդ համակցությունը դրսից կողմնակի օգնություն չի ստանում էակների ընդհանուր ներկայություններում իր հետագա եվոյուցիայի համար, ապա ինչպես այդ համակցությունը, այնպես էլ *լինելիական Անսամբալուհագարի* բոլոր որոշակիացված ծանրության կենտրոնները, որոնք մինչ այդ բյուրեղացված էին, մշտապես հետադարձ ինվոյուցիա են ապրում կրկին դեպի այն որոշակի տիեզերական բյուրեղացումները, որոնցից սկսել էին իրենց եվոյուցիան:

Որպեսզի այդ արտաքին օգնությունը լինի, Մեծ Բնությունը տվյալ դեպքում վերին աստիճանի իմաստուն կերպով էակների ներքին կառույցը հարմարեցրել է այնպես, որ այն նյութերը, որոնք պետք է մուտք գործեն էակների ընդհանուր ներկայությունների մեջ, որպեսզի հանդերձավորեն ու սնուցեն նրանց *լինելիական կեսջան մարմինը*, այսինքն՝ այն տիեզերական նյութերի համակցությունը, որին քո սիրելիները օդ են անվանում, կարողանան միաժամանակ նաև այն դրսից եկած օգնության դերը կատարել, որն անհրաժեշտ է առաջին *լինելիական սննդի* նյութերի եվոյուցիայի համար:

Այդ երկրորդ *լինելիական սննդի* կամ օդի կազմի մեջ մտնող ակտիվ տարրերը, որոնք նաև եվոյուցիայի համար են երկրորդ *լինելիական սննդի միջոցով* մուտք գործում էակների ներկայությունների մեջ, էակների քթից սկսած՝ եվոյուցիա են ապրում տեղական բնույթի զանազան խառնել-միացնելու գործընթացների համատեղ ազդեցությամբ և նույնպես փոխակերպվում են՝ այս անգամ արդեն էակների, այսպես կոչված «թոքերում», և վերածվում պրոտոէհարիի, որը տվյալ դեպքում կոչվում է «*աստեղանոմյան*¹¹² *պրոտոէհարի*»:

Այնուհետև այդ «*աստեղանոմյան պրոտոէհարիի*» նյութերը, որոնք իրենց սեփական եվոյուցիայի համար մուտք են գործում էակների ներկայությունների մեջ և, համաձայն Յոթնապարապարշինող սրբազան օրենքի, նաև ունեն իրենց ծանրության կենտրոններից սուսկ խառնել-միացնելու գործընթացի միջոցով եվոյուցիայի մեջ մտնելու բոլոր հնարավորությունները, միախառնվում են առաջին *լինելիական սննդի* նյութերի համակցության հետ, որոնք արդեն եվոյուցիա են անցել ընդհուպ մինչև սրբազան *լինելիական Յոթնապարապարշինողի* երրորդ ստոպինդերը, շարունակում են համատեղ եվոյուցիան և այդ եղանակով օգնում են առաջին *լինելիական սննդի* այդ նյութերին, որպեսզի դրանք անցնեն ստորին «*մեքենայաբար համընկնող Մտնել-Ին*»-ի միջով և փոխակերպվեն որոշակի այլ նյութերի՝ «*լինելիական տետարդաէհարիի*»։ Իսկ բուն «*աստեղանոմյան պրոտոէհարին*» փոխակերպվում է մի այլ նյութի, որը կոչվում է «*աստեղանոմյան դեյտերաէհարի*»:

Իմ բացատրությունների այս հատվածում դու կարող ես ևս մեկ պարզաբանիչ օրինակ ունենալ, որպեսզի լրիվ հասկանաս Ավտոէգոկտրատի և Տրոգոավտոէգոկտրատի տարբերությունը, այսինքն՝ այն տարբերությունը որն առկա է Բացարձակ-Արևի գոյության պահպանման նախկին համակարգի՝ երբ այն ավտոէգոկտրատական էր, և մի այլ համակարգի միջև, որը ներկայումս տրոգոավտոէգոկտրատական է կոչվում և այդպիսին է դարձել Մեզալակոսմոսի արարչությունից հետո:

¹¹² ռուս. տարբերակում՝ астральномоной, անգլ. տարբերակում՝ astralnomian

Եթե նյութերի՝ «Էակ-սարքերի» միջոցով իրականացվող փոխակերպությունը տեղի ունենար համաձայն Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքի, երբ դեռևս նրա որոշ ստոպինդերներ փոփոխված չէին, այսինքն՝ լինել այնպես, ինչպես դրանք գործում էին դեռևս նախքան ներկայումս գոյություն ունեցող Մեգալակոսմոսի արարումը, այն է՝ առաջին *լինելիական սնունդը* կազմող տիեզերական նյութերը տեղական բնության էվոլյուցիա իրականացնելու նպատակով անարգել ու առանց կողմնակի օգնության մտնեին այդպիսի «սարք-կոսմոսների» մեջ, իրականացնեին իրենց վերընթացն ընդհուպ մինչև լրիվ փոխակերպվելն ուրիշ՝ ավելի բարձր ակտիվ տարրերի՝ ընդամենն օգտվելով խառնել-միացնելու գործընթացից, ապա բանը լրիվ ուրիշ կլիներ. բայց հիմա, քանի որ այդ նախասկզբնական սրբազան օրենքի գործառնություններն իրենց անկախ վիճակից փոխվել են կախյալի, ապա դրա փոփոխություն կրած ստոպինդերներում էվոլյուցիան ու ինվոլյուցիան միշտ պետք է կախված լինեն արտաքին «օտարածին» երևույթներից:

Տվյալ դեպքում, էակների միջոցով իրականացվող՝ տիեզերական բյուրեղացումներն ավելի բարձր բյուրեղացումների փոխակերպելու գործում այդպիսի կողմնակի օգնության դեր է կատարում երկրորդ *լինելիական սնունդը*, որի առաջացման պատճառները բացարձակապես ուրիշ են, և ինքն էլ պետք է առաջացնի բացարձակապես ուրիշ տիեզերական արգասիքներ:

Ավելի ուշ ես քեզ մանրամասն կպատմեմ, թե էակների ներսում ինչպես է տեղի ունենում երկրորդ և երրորդ *լինելիական սնունդների* նյութերի փոխակերպությունը, իսկ առայժմ միայն նկատի ունեցիր, որ այդ բարձրագույն տիեզերական նյութերն էակների ներսում փոխակերպվում են ճիշտ նույնպիսի սկզբունքով, ինչպիսին առաջին *լինելիական սնունդի* դեպքում է:

Այժմ մենք կշարունակենք քննարկել այն հարցը, թե համաձայն Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքի՝ «Էակ-սարքերի» ներկայություններում հատկապես ինչպես է ընթանում իրենց առաջին *լինելիական սնունդի* նյութերի լրիվ փոխակերպության հետագա գործընթացը:

Այսպես ուրեմն... էակների ներսում սովորական առաջին *լինելիական սնունդն* աստիճանաբար փոխակերպվում է որոշակի նյութերի, որոնք կոչվում են «*լինելիական տետարդաէհարի*»¹¹³. ինչպես մնացած էակների, այնպես էլ քո սիրելիների դեպքում դրանց կենտրոնացման կենտրոնական տեղն, իհարկե, այսպես կոչված, «գլխուղեղի երկու կիսագնդերն» են:

Այնուհետև, այդ *լինելիական տետարդաէհարիի մի մասը* գլխուղեղի երկու կիսագնդերից, առանց փոփոխություն կրելու, անցնում է տվյալ էակի մոլորակային մարմնին ծառայելու, բայց մնացած մասը, որն օժտված է ինքնուրույն էվոլյուցիայի հնարավորությամբ, առանց կողմնակի օգնության շարունակում է այդ էվոլյուցիան և, *խառնել-միացնելու* գործընթացի օգնությամբ կրկին միանալով նախկինում կազմավորված բարձրագույն նյութերի հետ, աստիճանաբար փոխակերպվում է էլ ավելի բարձր որոշակի *լինելիական ակտիվ տարրերի*, որոնք կոչվում են «պենտաէհարի»:

Իսկ էակների ներսում այդ նյութերի կենտրոնացման տեղը, այսպես կոչված, «սիանուրինամն»¹¹³ է կամ, ինչպես քո սիրելիներն են անվանում իրենց մոլորակային մարմնի այդ մասը, «ուղեղիկը», որը նույնպես էակների գլխում է տեղակայված:

Էակների ներսի հենց այդ նյութերն են, որ, համաձայն սրբազան Յոթնապարապարշինոդի հինգերորդ շեղվածքի, ունեն բոլոր հնարավորությունները, որպեսզի եռուղեղ էակների ընդհանուր ներկայությունների դրսևորումներում ի հայտ բերեն ոչ թե նման, այլ «մեկը մյուսին հակադիր» արգասիքներ:

Ահա թե ինչու այդ *լինելիական նյութերին* հենց իրենք՝ էակները պետք է արտակարգ զգուշորեն մոտենան, որպեսզի խուսափեն իրենց ամբողջ կառույցի համար անցանկալի հետևանքներից:

Էակների ուղեղիկից այդ որոշակի նյութերի մի մասը նույնպես անցնում է բուն մոլորակային մարմնին ծառայելու, իսկ մնացած մասը, հատուկ եղանակով անցնելով ողնաշարի և կրծքի «նյարդային հանգույցների» միջով, արական սեռի էակների դեպքում խտանում է, այսպես կոչված, «ամորձիներում», իսկ իգական սեռի էակների դեպքում՝ այն տեղերում, որին քո սիրելիների մեծ մասը «ձվարաններ» է կոչում. խտացման երկու այդ տեղերն էլ էակների ընդհանուր ներկայություններում «*լինելիական էքսիտէհարիի*» կենտրոնացման համար են, որը հենց իրենք՝ էակները, իրենց

¹¹³ ռուս. տարբերակում՝ сиануринам, անգլ. տարբերակում՝ sianoorinam

սրբազնագույն գանձն են համարում: Հարկ է որ իմանաս, որ վերոհիշյալ հատուկ եղանակը կոչվում է «տրնվա»¹¹⁴:

Միայն՝ Էվոյուցիայի նպատակներով, այսինքն՝ ստորին Մոնել-Ին-ով համատիեզերական հիմնական «նյութափոխանակության» անցման հնարավորության համար էակ-սարքերի ներսը մուտք գործելուց հետո է, որ այդ տիեզերական նյութերը փոխակերպվում են (այդ փոխակերպությունն ընդհանրապես բոլոր էակների, ինչպես նաև Երկիր մոլորակում բազմացող եռուղեղ էակների ճակատագիրն է, հատկապես այն բանի համար, որ նրանք ինքնաբերաբար արդարացում գտնեն իրենց գոյատևման իմաստի ու նպատակի առումներով) տիեզերական նյութերի այն որոշակի համակցությանը, որն ամենուրեք «էքսիտեհարի» են կոչում:

Այսպիսով, զավակս, նրանց առաջին *լինելիական սննդի* այդ համակցությունը, որն այդ էակ-սարքերի ներսում կատարվող Էվոյուցիայի արգասիքն է, իր թրթիոներով համապատասխանում է *լինելիական Յոթնապարապարշինողի* վերջին ստոպինդերին, և հենց դրա առանձնահատկություններին համապատասխան էլ մտնում է Յոթնապարապարշինող օրենքի «բարձրագույն միտումնավոր իրագործող Մոնել-Ին»։ իսկ նոր ավելի բարձր նյութերի լրիվ փոխակերպվելու և այնպիսի թրթիոներ ձեռք բերելու համար, որոնք համապատասխանում են հաջորդ, ավելի բարձր ինտենսիվություն ունեցող թրթոանքին, այսինքն՝ համատիեզերական սրբազան Յոթնապարապարշինողի հիմնական գործընթացի հինգերորդ ստոպինդերին, անխուսափելիորեն պահանջվում է կողմնակի օգնություն, որը իրականանում է միայն եռուղեղ էակների ներկայություններում բացառապես իմ կողմից բազմիցս հիշատակված այն գործոնների շնորհիվ, որոնք դրսևորվում են *լինելիական պարտք-պարտականությունը*, այսինքն՝ այն գործոնների շնորհիվ, որոնք ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐ ԱՐԱՐԻԶԸ ողորմաճաբար նախասահմանել է որպես մի եղանակ, որի միջոցով որոշ Տետարդակոսմոսներ կարողանում էին (համատիեզերական իրանիրանումանգալին իրենց ծառայության վերջնական արդյունքում) ընդարձակվող Աշխարհը կառավարելու գործում օգնականներ դառնալ. այդ գործոնները նաև հիմա են միակ հնարավոր եղանակ ծառայում այն տիեզերական նյութերի յուրացման համար, որոնք անհրաժեշտ են բարձրագույն *լինելիական մարմինները* հանդերձավորելու և կատարելագործելու համար, և որոնց մենք ներկայումս անվանում ենք «գիտակցական ջանքեր» և «կամավոր տառապանք»:

Այստեղ կարելի էր նաև նշել ու ընդգծել, որ բոլոր այն որոշակիացված տիեզերական նյութերից, որոնք կազմավորվում և հետևաբար մշտապես առկա են լինում քո սիրելիների ընդհանուր ներկայություններում, նրանք շատ լավ գիտեն միայն այդ «*լինելիական էքսիտեհարին*», որին իրենք «սերմնահեղուկ» են անվանում և վարպետորեն զանազան «ձեռնածություններ» են անում դրա հետ:

Եվ այդ «սերմնահեղուկ» անվամբ նրանք նշանավորում են միայն այն որոշակի նյութերի համակցությունը, որն առաջանում է միայն արական սեռի էակների ներկայություններում, և արհամարհանքով անտեսում են «*նյութերի հանրագումարային*» նմանատիպ այն համակցությունը, որն առաջանում է իգական սեռի էակների ներկայություններում:

Նյութերի հենց այդ համակցությունը, որը մշտապես անխուսափելիորեն բոլոր էակների ներկայություններում առաջանում է որպես առաջին *լինելիական սննդի* վերջնական արգասիք, այն բանի գլխավոր պատճառներից մեկն է դարձել, որ հետագայում, երբ նրանք իրենց ընդհանուր ներկայություններում դադարեցին իրագործել *լինելիական պարտք-պարտականությունը*, և տիեզերական նյութերի այդ համակցությունը, դրա հետ կապված, սկսեց չստանալ ըստ սրբազան Յոթնապարապարշինողի պահանջվող դրսի օգնությունը, որպեսզի Էվոյուցիա ընթանա դեպի որոշակի ավելի բարձր ակտիվ տարրեր, ապա հակադարձ ինվոյուցիա սկսվեց դեպի այն բյուրեղացումները, որոնցից սկիզբ էր առել դրանց Էվոյուցիան: Եվ, այդ ժամանակներից սկսած, այդպիսի ինվոյուցիոն գործընթացները նրանց ընդհանուր ներկայությունների համար սկսեցին գործոններ դառնալ, որպեսզի նրանց ընդհանուր ներկայություններում նախադրյալներ ծագեն նրանց անհաշիվ, այսպես կոչված, «հիվանդությունների» առաջացման համար, և այդ եղանակով, մի կողմից՝ սկսեցին «ապակատարելագործել» նրանց նախկինում հաստատված *էաբուխ անհատականությունը* և մյուս կողմից՝ կարճացնել նրանց գոյատևման ընդհանուր տևողությունը:

¹¹⁴ ռուս. տարբերակում՝ трнлва, անգլ. տարբերակում՝ trnلva

Եվ Երկիր մոլորակի քո սիրելիները, հատկապես՝ ժամանակակիցները, այդ *լինելիական էքսիտեհարիի* այդ նյութերը բոլորովին գիտակցորեն չեն օգտագործում ո՛չ ինքնակատարելագործման, ո՛չ էլ իրենցից դուրս իրենց նման նոր էակների գիտակցական վերարտադրության համար:

Եվ իրենց ներսում այդ եղանակով կազմավորվող այդ սրբազան տիեզերական նյութերն առանց նրանց սեփական *լինելիական գիտկացության* ու անհատական ցանկության որևէ մասնակցության ծառայում են կա՛մ միայն մեծագույն համատիեզերական Տրոգոավտոեգոկրատին, կա՛մ իրենց նման էակի ակամա բեղմնավորմանը՝ ծնունդ տալով երկու հակադիր սեռերի այդ սրբազան նյութերի ակամա միախառնման արգասիքին, հակադիր սեռեր, որոնք իրենց ներսում իրագործում են սրբազան Եռամասիկապողի երկու հակադիր ուժերը, երբ բավարարություն են տալիս իրենց այն գործառնություն, որը, հին հռոմեացիներից ժառանգություն մնալով, դարձել է ներկայիս եռուղեղ էակների գլխավոր արատը:

Տխրությամբ պետք է նշեմ, որ հիշյալ արատավոր ժառանգությունը, որն արդեն լիովին ամրացել է նրանց ընդհանուր ներկայություններում, հատկապես ներկայիս քո սիրելիների համար արդեն «մեքենայաբար գործող» միջոց է դարձել արմատախիլ անելու համար նույնիսկ այն ազդակները, որոնք երբեմն ի հայտ են գալիս եռուղեղ էակներին վայել դրսևորումներում և նրանց կողմից կոչվում են «Լինելիության ծարավ»:

Կրկնում եմ, զավա՛կս. այն բանից զատ, որ քո սիրելիները, հատկապես՝ ժամանակակիցները, դադարել են իրենց ներսում կազմավորվող այդ սրբազան նյութերն օգտագործել իրենց «*բարձրագույն մասերը*» հանդերձավորելու և կատարելագործելու, նմանապես նաև բուն Բնության նախատեսած ցեղի շարունակման *լինելիական պարտքը* կատարելու նպատակներով, նրանք, նույնիսկ այն դեպքում, երբ այդ նշված նպատակներից վերջինը պատահաբար տեղի է ունենում, արդեն դա համարում ու դիտարկում են որպես իրենց համար շատ մեծ դժբախտություն գլխավորապես այն պատճառով, որ դրանից բխած հետևանքները որոշ ժամանակով կարող են խոչընդոտել իրենց մեծաքանակ ու տարատեսակ հաճույքների ազատ բավարարմանը, որոնք ամրացել են իրենց էության մեջ:

Եվ դրա հետևանքով նրանք, հատկապես՝ ժամանակակից էակները, նման դեպքերում իրենց ամբողջ ներկայությամբ աշխատում են զանազան եղանակներով խանգարել այդպիսի պատահական և իրենց կոչմից չմտադրված սրբազան երևույթի դրսևորմանը, որը նախատեսել է Մեծ Բնությունը:

Վերջին դարերի ընթացքում շատ շատերը նրանց թվից, որոնց ներսում առավել ուժեղ են բյուրեղացված հնարավոր ամեն տեսակի տհասամառուսական հատկությունների նախադրյալներ, նույնիսկ դարձել են այնպիսի մասնագետներ, որոնք նպաստում են նման պատահաբար իրագործված սրբազան *լինելիական մտադրությունների ոչնչացմանը*, և այդ մասնագետներին այնտեղ անվանում են «հրեշտակներ սարքողներ»:

Եվ դա այն դեպքում, որ քո սիրելիների համար գլխավոր արատ դարձած այդ «*լինելիական ակտը*» ամենուրեք մեր Մեծ Տիեզերքի ցանկացած բնույթի էակները համարում են բոլոր սրբազան Աստվածային խորախորհուրդ ծեսերից սրբազնագույնը:

Նույնիսկ նույն այդ մոլորակի շատ երկուղեղ ու միաուղեղ էակներ, ինչպիսիք են, օրինակ՝ «բորենիները», «կատունները», «գայլերը», «առյուծները», «վագրերը», «վայրի շները», «բագումները», «գորտերը» և շատ այլ էակներ, որոնք իրենց, այսպես կոչված, «*օրինաչափ ներկայություններում*» ամենևին նախադրյալներ չունեն «համեմատական տրամաբանությունը» հնարավոր դարձնելու համար, ներկայումս դեռևս շարունակում են, իհարկե, բնագոյաբար, զգալ, որ այդ ակտը սրբազան է, և դրանով զբաղվում են միայն այն ժամանակահատվածներում, որոնք այդ սրբազան ծեսի համար նախատեսված են Մեծ Բնության կողմից, այսինքն՝ գլխավորապես այն տիեզերական խտացման նոր լրիվ պտույտի սկզբնական շրջանում, որը նրանց սկզբնավորման ու գոյատևման վայրն է. իսկ այդ ժամանակահատվածը հենց այն շրջանն է, որին ամենուրեք եռուղեղ էակներն անվանում են «*Մերուհազարի*¹¹⁵ սրբազան գաղտնածեսերի դիոնոսկներ», իսկ քո հետաքրքրությունը շարժած մոլորակում անվանում են «գարնան օրեր»:

Միբելի՛ զավակս, դու երևի դեռ ոչինչ չգիտես «*մեծ Մերուհազարի սրբազան գաղտնածեսերի*» մասին»,– թոռանը հարցրեց Բեհեղզբուրդը:

¹¹⁵ ռուս. տարբերակում՝ Сержазар, անգլ. տարբերակում՝ Serooazar

Այդ հարցին Հասեինը պատասխանեց այսպես.

– Այո, սիրելի՛ պապիկ, դրա մանրամասները դեռ ինձ հայտնի չեն. միայն գիտեմ, որ մեր Քարատակ մոլորակում այդ դիոնոսկները մեծ սուրբ օրեր են համարվում և կոչվում են *«Աստծուն օգնելու դիոնոսկներ»*. գիտեմ, որ այդ մեծ սուրբ օրերին՝ դիոնոսկներին, մեր բոլոր և՛ «ակտիվագ», և՛ «պասսիվագ» էակները նախապատրասվում են նախորդ սուրբ օրվա վերջից սկսած, և որ այդ սրբազան գաղտնածեսերից մեկ լուսնյաս առաջ ջահել թե ծեր դադարում են առաջին *լինելիական սննդ* ընդունել իրենց ներսը և զանազան սրբազան ծիսակատարություններով մտովի երախտագիտություն են հայտնում ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐԶԻՆ իրենց գոյության համար:

Ես գիտեմ նաև, որ այդ հանդիսավոր դիոնոսկներից վերջին երկուսը մենք համարում ու կոչում ենք *«ամեն մի ընտանիքի առաջին ծնողի փառաբանման դիոնոսկներ»*:

Ուստիև, իմ սիրելի՛ պապիկ, ամեն տարվա այդ դիոնոսկներին մենք բոլորս հիշում ու խոսում էինք միայն քո մասին, և մեզնից յուրաքանչյուրը ջանում էր իր ողջ էությամբ անկեղծորեն կամենալ, որ քո ճակատագիրը քեզ համար *լինելիական գոյատևման* այնպիսի պայմաններ ստեղծի, որոնք քեզ օգնեն արագ ու հեշտ քո բանականությունը հասցնելու պահանջված սրբազան աստիճանին, և մենք դրանով հանդերձ ավելի շուտ ավարտենք մեր ներկայիս *«սովորական լինելիական գոյատևումը»*, որն այդքան ճնշող է անձամբ քեզ համար:

Այսպիսի հանդիսավոր խոսքերով Հասեինն ավարտեց իր պատասխանը:

«Շատ լավ, զավա կս,— ասաց Բեհեդգեբուրը,— մենք կգրուցենք *«Սերուհազար սրբազան գաղտնածես»* թեմայով, երբ կվերադառնանք մեր սիրելի Քարատակ մոլորակը:

Այնտեղ ես երբևէ ավելի մանրամասն կբացատրեմ, թե որտեղ և ինչպես է *սրբազան Սերուհազար գաղտնածես* տեղի ունենում լինելիական էքսիտեհարիի նյութերի հետ ցեղի շարունակման նպատակով և թե ո՞ր դեպքերում և ինչ եղանակով են իրար միահյուսվում և հետագա արդյունքներ տալիս էքսիտեհարիի այդ երկու տեսակները. մի տեսակը հաստատող սկզբունքի համար փոխակերպվում է այն էակ-սարքերում, որոնք մեր մոլորակի «ակտիվագ» էակներն են և քո այդ Երկիր մոլորակի «արական սեռի» էակները, իսկ մյուս տեսակը ժխտող սկզբունքի համար փոխակերպվում է այն էակ-սարքերում, որոնք մեր Քարատակ մոլորակի «պասսիվագ» էակներն են, իսկ Երկիր մոլորակի՝ «իգական սեռի» էակները:

Դե, իսկ հիմա խոսենք այն *«բարձրագույն կատարյալ լինելիական մարմինների»*՝ «հոգիների» մասին, որոնք հանգրվանում են այն սրբազան Քավարան մոլորակում, որին վերաբերում էին բոլոր իմ նախորդ բացատրությունները:

Այսպես ուրեմն... Ի սկզբանե, երբ այդ բարձրագույն *լինելիական մասերն* այդ եղանակով սկզբնավորվում էին էակների ներսում և կատարելագործվելով հասնում *օրյեկտիվ բանականության* պահանջվող սրբազան աստիճանին, այսինքն՝ այն ժամանակ, երբ սրբազան Յոթնապարապարշինողի ստորին Մոնել-Ին-ին համապատասխան ձևով էակների ներսում երկրորդ *լինելիական սննդի* շնորհիվ ձևավորվում էր *կեսջան մարմինը* և, նույն այդ օրենքի վերին Մոնել-Ին-ին համապատասխան ձևով երրորդ *լինելիական սննդի* շնորհիվ հանդերձավորվում ու կատարելագործվում էր երրորդ՝ բարձրագույն *լինելիական մարմինը*, և երբ այդ ամբողջովին կատարելության հասած բարձրագույն *լինելիական մասերն* առանձնանում էին ստորին *լինելիական մասերից*, ապա դրանք անհապաղ արժանանում էին Սրբազնագույն Սկզբնաղբյուրի հետ միանալուն և սկսում իրականացնել իրենց Աստվածային առաքելությունը:

Այդպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև տեղի ունեցավ այն ահավոր իրադարձությունը, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, ներկայումս կոչվում է *«շուտբողիտանյան ժամանակաշրջան»*:

Նախքան այդ համատիեզերական աղետը բոլոր բարձրագույն *լինելիական մարմինները*, որոնք սկզբնավորվում ու կատարելագործվում էին որոշ Տետարդակոսմոսների և նրանց առաջին սերունդների ներկայացուցիչների ներսում, անհապաղ միանում էին Սրբազնագույն Պրոտոկոսմոսի հետ, քանի որ նրանց ընդհանուր ներկայություններն արդեն իրագործած էին լինում դրան լիովին համապատասխանող արգասիքները:

Բանն այն է, որ մինչև այդ ահավոր իրադարձությունը, որի մասին խոսում եմ, Սրբազնագույն Բացարձակ-Արևից ծագող սրբազան Թեոմերտմալոգոսը դեռևս մաքուր վիճակում էր՝ առանց սեփական-սուբյեկտիվ հատկություններ ունեցող որևէ օտարածին խառնուրդի, և երբ այդ սրբազան Թեոմերտմալոգոսը մուտք էր գործում այն մոլորակների ոլորտները, որոնցում առաջանում էին

սրբազան բյուրեղացումներ, որոնց փոխակերպության արգասիքներով էակ-սարքերը հանդերձավորում ու կատարելագործում էին բարձրագույն *լինելիական մարմինները*, ապա վերջիններս ճշգրիտ այնպիսի ներկայություններ էին ստանում, ինչպիսին դրանք պետք է լինեին, որպեսզի համապատասխանեին Սրբազնագույն Բացարձակ-Արևի ոլորտում գոյատևման պահանջվող պայմաններին:

Բայց հետագայում, երբ տեղի ունեցավ հիշյալ համատիեզերական աղետը, որի պատճառով սրբազան Թեոմերտմալոգոսը սրբազնագույն Բացարձակ-Արևից սկսեց ծագել օտարածին կազմավորումների սուբյեկտիվ հատկությունների խառնուրդով, դրանից հետո այդ սրբազան տիեզերական գոյացությունները կորցրին Սրբազնագույն Սկզբնաղբյուրի ոլորտում պահանջվող պայմաններին համապատասխան գոյատևելու հնարավորությունը:

Իսկ օտարածին գոյացությունների այդ խառնուրդը սրբազան Թեոմերտմալոգոսում սկսեց գոյանալ հետևյալ, ավելացնեմ նաև՝ անկանխատեսելի պատճառներով:

Երբ ամեն մի առանձին *«բարձրագույն կատարյալ լինելիական մարմին»* ինքնուրույն Անհատ է դառնում և իր ներսում ձեռք բերում սեփական սրբազան Եռամասիկապողի օրենք, ապա սկսում է ճառագել, ինչպես Սրբազնագույն Բացարձակ-Արևի մանրակերտ. իսկ երբ Սրբազնագույն Բացարձակ-Արևում հավաքվեցին բազմաթիվ այդպիսի ինքնուրույն կատարյալ Սրբազան Անհատներ, ապա այդ Սրբազան Անհատների ճառագումների և Սրբազնագույն Բացարձակ-Արևի մթնոլորտի միջև հաստատվեց, այսպես կոչված, «գենիոեռամասիկապողային միացում», և ստացված արգասիքները *«բարձրագույն կատարյալ լինելիական մասերի»* համար առաջացրին այդ ահավոր արհավիրքը, որի մասին արդեն քեզ ասացի:

Դրանից հետո այդ «գենիոեռամասիկապողային միացման» արգասիքների ազդեցությունը շատ շուտով ներդաշակվեց մեր Սրբազնագույն Բացարձակ-Արևի արդեն գոյություն ունեցող ազդեցությունների հետ, և այդ ժամանակից սկսած՝ սրբազան Թեոմերտմալոգոսը ծագում է փոխված ձևով, բայց այնուհանդերձ այդ կապի արգասիքների սկզբնական հետևանքներն արդեն հասցրել էին որոշ ժամանակով փոփոխել բազմաթիվ արևային համակարգությունների ներդաշնակ շարժումները և աններդաշնակություն մտցնել դրանց որոշ մոլորակների ներքին գործառությունների մեջ:

Հենց այդ ժամանակ էր, որ Խլրտումանո¹¹⁶ կոչվող արևային համակարգից առանձնացավ այն նշանավոր մոլորակը, որը միայնակ է գոյատևում տարածության մեջ, ունի միանգամայն բացառիկ առանձնահատկություններ և ներկայումս կոչվում է *Խղճի Խայթ*:

Այդ գենիոեռամասիկապողային կապն ստեղծվեց այն պատճառով, որ բուն Սրբազնագույն Բացարձակ-Արևի մթնոլորտում այդ *բարձրագույն լինելիական մարմիններից* սկսեցին առաքվել, ինչպես արդեն ասել եմ, տարաբնույթ անսովոր թրթիռներ և միանալ Սրբազնագույն Բացարձակ-Արևի ճառագումների հետ, ապա դրանց հետ մեկտեղ թափանցելով Մեգալակոսմոսում ամենուր՝ հասան նույնիսկ այն մոլորակներին, որոնցում բնակվող էակների ներսում շարունակում էին առաջանալ բարձրագույն *լինելիական մարմիններ*. և այդ անսովոր թրթիռները սկսեցին փոխակերպվել և բյուրեղացվել սրբազան Թեոմերտմալոգոսի հետ մեկտեղ և մասնակցել այդ էակների *«բարձրագույն մասերի»* հանդերձավորմանը:

Եվ հենց այդ ժամանակներից սկսած՝ այդ սրբազան գոյացություններն իրենց ներկայություններում սկսեցին ունենալ առանձնահատկություններ, որոնք գոյանում էին այն պատճառով, որ տվյալ էակի ուրիշ մասերի որոշակի դրսևորումները, որի ներսում հանդերձավորվում էին այդ սրբազան գոյացությունները, սկսեցին մուտք գործել այդ բարձրագույն մասերի կազմության մեջ և յուրացվել դրանց կողմից՝ միաժամանակ առաջ բերելով շատ անսովոր արգասիքներ, որոնք դրանից հետո և մինչև հիմա կոչվում են *«մարմնի-հոգու մեղքեր»*:

Հենց այդ զանազան արգասիքներն էլ պատճառ դարձան, որ այդ տիեզերական գոյացությունները, նույնիսկ եթե իրենց կատարելագործմամբ հասնում էին *օբյեկտիվ բանականության* պահանջված աստիճանին, այնուհանդերձ իրենց ներկայություններով դադարեցին համապատասխանել Սրբազնագույն Պրոտոկոսմոսի ոլորտում գոյատևելու պայմաններին, և հենց այդ ժամանակից էլ զրկվեցին նրա հետ միանալուն արժանանալու հնարավորությունից:

¹¹⁶ ռուս. տարբերակում՝ Хлартумано, անգլ. տարբերակում՝ Khlartoomano

Եվ ահա, երբ առաջին անգամ ակնհայտ դարձավ այդ *բարձրագույն լինելիական մարմինների* անօգնական դրությունը, որոնք կատարյալ բանականությամբ օժտված, բայց դրան չհամապատասխանող ներկայություններով *«ինքնություն տիեզերական Սրբազան Անհատներ»* էին, մեր անսահման արդար ու բարեգութ ԱՄԵՆԱՍԻՐՈՂ ԱՐԱՐԻԶՆ արագորեն համապատասխան միջոցներ ձեռնարկեց այդ անկանխատեսելի ու ողբալի երևույթը կանխելու համար:

Այդ ողբալի երևույթն իսկապես անօգնական վիճակ էր ստեղծում այդ Սրբազան Անհատների համար, քանի որ իրենց ներկայություններում առկա հիշյալ «մեղքերի» պատճառով հնարավորություն չունենալով միանալու Համայնի Սկզբնաղբյուրի Գրկին, և միաժամանակ հասնելով բանականության սրբազան սանդղակի այն աստիճանին, որը նրանց կախման մեջ էր դնում *«Թեթև-ծանր»¹¹⁷* կոչվող երկրորդ կարգի տիեզերական օրենքից՝ նրանք գրկվում էին սովորական մոլորակների մակերևույթների վրա ազատորեն գոյատևելու հնարավորությունից:

Այդ ժամանակ ձեռնարկված Աստվածային միջոցների շարքում եղավ ՆՐԱ Հրամանը, որ մեր համայն Մեծ Մեզալակոսմոսում ընտրվի ամենալավ մոլորակը, հատուկ հարմարեցվի դրա մակերևույթը և հետագա ազատ գոյատևման համար այն տրամադրվի կատարյալ բանականությամբ օժտված *բարձրագույն լինելիական մարմիններին*, որպեսզի այդ եղանակով նրանք հնարավորություն ստանան մաքրվելու իրենց ներկայություններում առկա անցանկալի տարրերից:

Ահա հենց այդ ժամանակ էլ առաջացավ Քավարան անունով այդ սուրբ մոլորակը. դրա կազմակերպումն ու կառավարումն Իր սեփական կամքով հանձն առավ մեր Ամենատեր Մեծն Քերովբեապետ Խելքիմոտեոսը, այն նույն Խելքիմոտեոսը, Ով Աշխարհի արարումից հետո առաջինն արժանացավ Սրբազան Անկլադի աստիճանին, այսինքն՝ առաջինը ձեռք բերեց բանականության այն աստիճանը, որն ընդհանրապես միակ հասանելին է ցանկացած ինքնություն Անհատի համար, ինչպիսին էլ որ լինի նրա բնույթը. այդ աստիճանը երրորդն է՝ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ Բացարձակ Բանականությունից հաշված:

Թեև այդ սուրբ մոլորակը բոլոր առումներով իսկապես ամենալավն է, ինչպես ինքդ տեսար, և նրա արտաքին տեսքն այնքան բացառիկ է, որ ամեն մի ինքնություն Ահնատ այն ընկալում է, ինչպես արդեն ասել եմ, որպես «իսկությունիցներնո», այսինքն՝ «գարմանահրաշ-հիասքանչ», սակայն այնտեղ գոյատևող կատարյալ բարձրագույն *լինելիական մարմիններն* անտարբեր են այդ գեղեցկության նկատմամբ, քանի որ մշտապես խրված են այն անցանկալի տարրերից իրենց ներսը մաքրելու լարված աշխատանքի մեջ, որոնք իրենց անհատականությանը միանգամայն խորթ պատճառներով հայտնվել են իրենց ներկայություններում:

Այդ սուրբ մոլորակում ներկայումս գոյատևող այդ դժբախտ *բարձրագույն լինելիական մարմինները*, որոնք իրենց բանականությունը հասցրել են սովորական տիեզերական Անհատների համար հասանելի ամենաբարձր կատարելության աստիճանին, իրենց ընդհանուր ներկայություններում ունեն միայն մեկ նախադրյալ, որը երբեմն նրանց ներսում ծնում է հույսի ազդակ, որ իրենք երբեմն կկարողանան մաքրվել ու հասնել այն «Մեծությանը» միանալու և դրա մի մասը դառնալու երջանկությանը, որը ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԶՈՐ ԱՄԵՆԱԱՐԴԱՐ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ կենսագործում է՝ ի բարօրություն և ի երջանկություն մեր մեծ Մեզալակոսմոսի համայն գոյի:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ մեր Մեծ Մեզալակոսմոսի բոլոր տարբեր մոլորակներում սկզբնավորվող համարյա բոլոր եռուղեղ էակները կա՛մ գիտեն այդ Քավարան կոչվող սուրբ մոլորակի մասին, կա՛մ ուղղակի բնագոյաբար զգում են դրա գոյությունը. միայն քո այդ մոլորակում սկզբնավորվող եռուղեղ էակներն են, որ չգիտեն դրա մասին. ավելի ճիշտ՝ չեն իմացել և չգիտեն դրա մասին միայն այն էակների մեծ մասը, որոնք սկզբնավորվել են Ատլանտիդա աշխարհամասի գոյության վերջին շրջանում և դրա կործանումից հետո:

Հենց որ մեր Մեզալակոսմոսի բոլոր եռուղեղ էակները, անկախ արտաքին հանդերձավորումից, ձեռք են բերում թեկուզ փոքր չափի ինքնագիտակցություն, սկսում են գիտակցաբար կամ բնագոյաբար երազել այդ սուրբ մոլորակում հայտնվելու մասին, որպեսզի հետո երջանկություն ունենան մասնիկը դառնալու այն Մեծության, որի հետ միանալը վաղ թե ուշ պետք է բախտ վիճակվի ցանկացած, արդեն սկզբնավորված էության. իսկ այն եռուղեղ էակները, որոնք արդեն հասել են ավելի բարձր

¹¹⁷ ռուս. տարբերակում՝ Тетяндер, անգլ. տարբերակում՝ tetetzender

ինքնագիտակցության, իրենց սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում մշտապես հաճույքով և նույնիսկ բերկրանքով են փորձում իրականացնել իրենց այդ երազանքները՝ իրենց ներկայություններին պատճառելով այն տհաճությունները, որոնք առաջանում են մոլորակային մարմնի զրկանքներից, քանզի այդպիսի էակներն արդեն շատ լավ հասկանում և բնագործ զգում են, որ իրենց այդ ստորին *լինելիական մարմինն* իրենց սեփական սրբազան Եռամասիկապող տիեզերական օրենքի համար հանդիսանում է յուրահատուկ ժխտող դրսևորումների անխուսափելի աղբյուր, և, լինելով այդպիսին, բնականաբար միշտ պետք է և կլինի իրենց հաստատող մասի ժխտող մասը դրսևորողը, այսինքն՝ այդ ստորին մասի դրսևորումն անպայման պետք է հակադրվի այն ամենին, ինչ իրենց համար պահանջում է իրենց բարձրագույն *լինելիական մասը*:

Այլ կերպ ասած, մոլորակային մարմնի յուրաքանչյուր ցանկությունն անցանկալի է դիտվում բարձրագույն Աստվածային մասի համար, որը պետք է հանդերձավորվի և կատարելագործվի. ուստի և մեր Մեծ Մեգալակոսմոսի բոլոր եռուղեղ էակները մշտապես անխնա պայքար են մղում իրենց մոլորակային մարմինների ցանկությունների դեմ, որպեսզի այդ պայքարի ընթացքում, այսպես կոչված, «*դիսպուտեկրիալյան*»¹¹⁸ *շփումից* իրենց ներսում գոյանան այն սրբազան բյուրեղացումները, որոնցից առաջանում և կատարելագործվում է իրենց բարձրագույն Աստվածային *լինելիական մասը*:

Նրանց ներսի այդ մշտական պայքարում հավասարակշռող ու ներդաշնակող սկզբունքի դեր է կատարում իրենց երկրորդ *լինելիական մարմինը*, որն իրենց սեփական անհատական Եռամասիկապող օրենքում հանդես է գալիս որպես չեզոքացնող աղբյուր, ուստի այդ երկրորդ *լինելիական մարմինը* միշտ անտարբեր է մնում նրանց մեքենայական դրսևորումների նկատմամբ, սակայն նրանց բոլոր ակտիվ դրսևորումների դեպքում այն միշտ ձգտում է, համաձայն երկրորդ կարգի տիեզերական «Ուրդեղփիլիվատա»¹¹⁹ կոչվող օրենքի, միանալ այն ցանկություններին, որոնք գերակշռող են նշված երկու հակոտնյա *լինելիական մասերից* կա՛մ մեկում, կա՛մ մյուսում:

Ինչպես արդեն ասացի, սկզբում, այսինքն՝ նախքան Ատլանտիդա աշխարհամասի կործանումը, քո այդ մոլորակի եռուղեղ էակները ևս մոտավոր պատկերացում ունեին սուրբ Քավարան մոլորակի մասին, և այն ժամանակ նույնիսկ դրա վերաբերյալ կային մի քանի լեզումինիզմներ. նաև այդ աշխարհամասի կործանումից հետո այդ ժամանակ պատահաբար փրկված գիտուն էակների միջոցով այդ սուրբ Քավարան մոլորակի մասին պահպանվել էին որոշ կցկտուր լեզումինիզմներ, որոնք փոխանցվում էին մի սերնդից մյուսին: Բայց հետագայում, երբ այդ տարօրինակ եռուղեղ էակների հոգեկառույցներում սկսեց ծագել իրենց այն յուրօրինակ հիվանդությունը, որը ես բնորոշեցի «իմաստակել» բառով, նրանք սկսեցին իրենց այդ իմաստակությունը բանեցնել իրենց հասած այդ կցկտուր տեղեկությունների նկատմամբ, և սուրբ Քավարան մոլորակին վերաբերող այդ ճշմարիտ, բայց կցկտուր վկայություններից հետագա սերունդների էակների հոգեկառույցներում սկսեցին նախադրյալներ ձևավորվել և ամրապնդվել այնպիսի պատկերացումների ու հասկացությունների համար, որոնք իդեալականորեն կարող են բնորոշվել մեր մեծապատիվ ու աննման մոլլա Նասրեդինի մեն մի *լինելիական բացականչությամբ*. «չըոթ-ու-զը ոթ»¹²⁰...»:

Իսկ ինչ վերաբերում է սուրբ մոլորակիմասին այն կցկտուր լեզումինիզմներին, որոնք ճշմարիտ ձեռնադրյալների միջոցով այնտեղ շարունակում էին փոխանցվել մի սերնդից մյուսին, ապա դրանք նույնպես, անփոփոխ կերպով հասնելով ոչ շատ վաղ դարաշրջանին՝ «Բաբելոնի դարաշրջանին» (այն բանի հետևանքով, որին ես «ուղեղների խռովք» անվանեցի և որն, այդ Բաբելոնում ծագելով այն ժամանակ, ինչպես արդեն պատմել եմ քեզ, տիրել էր անխտիր բոլորին «նոր տեսակի» այն գիտուն էակների պատճառով, որոնք զանազան, եռուղեղ էակներին ոչ վայել հատկանիշներ ունեին), աստիճանաբար աղճատվեց և ի վերջո, ինչպես ասում են, կատարելապես «հալումաշ եղավ»:

Բանն այն է, որ թեև այդ դարաշրջանի ձեռնադրյալները դեռևս համեմատաբար նորմալ պատսխանատու էակներ էին և հեշտությամբ չէին փոխում իրենց իդեալները, ինչպես ներկայումս վարվում է ժամանակակից էակների մեծ մասը (ինչպես, իրենց իսկ արտահայտությամբ՝ «*լոնդոնյան դենդիներն*» են փոխում իրենց ձեռնոցները), սակայն այդ ժամանակաշրջանի բոլոր այդ տարօրինակ եռուղեղ էակներին տիրած այն մոլուցքը, որ ամեն գնով պարզեն հոգու գոյության և անմահության

¹¹⁸ ռուս. տարբերակում՝ диспуткриального, անգլ. տարբերակում՝ disputekrialnian

¹¹⁹ ռուս. տարբերակում՝ Урдеплифата, անգլ. տարբերակում՝ oordekhplifata

¹²⁰ ռուս. տարբերակում՝ чрхртазуррт, անգլ. տարբերակում՝ tchoort-zoo-oort

հարցերը, այնքան ուժեղ էր և այնքան լայնորեն էր տարածված, որ նրանց հոգեկառույցի այդ անառողջ պահանջը գրգռել ու վարակել էր նաև այնտեղի ճշմարիտ ձեռնադրյալներին, և նրանք, ընկնելով այդ մոլուցքի ազդեցության տակ, խառնշոտորեցին սուրբ Քավարան մոլորակի վերաբերյալ եղած լեզումիմիզմները և փոխանցեցին այնպիսի մի «շիլաշփոթ», որ հաճույքից մեր Լյուցիֆերի պոչը ձեռք բերեց, այսպես կոչված, «տանգոյի» նրբերանգ:

Երկիր մոլորակի այն ժամանակվա ձեռնադրյալ էակների ուղեղներին տիրած այդ խառնաշփոթ տեղի ունեցավ, իմ կարծիքով, գլխավորապես բաբելոնյան դուալիստների այն հրապուրիչ տեսության պատճառով, որում ասվում էր, թե ինչ-որ մի այլ աշխարհում իբր գոյություն ունեն «դրախտ» և «դժոխք»:

Հենց այդ երկու բառերը՝ «դրախտը» և «դժոխքը», իմ կարծիքով, հետագա ամբողջ «անհեթեթության» պատճառը դարձան:

Բանն այն է, որ սուրբ Քավարան մոլորակին վերաբերող լեզումիմիզմներից մեկում օգտագործված էին այդ «դրախտ» և «դժոխք» բառերը ևս:

Ես չգիտեմ՝ այդ երկու բառը վերցված էին սուրբ մոլորակի վերաբերյալ այդ լեզումիմիզմի՞ց, թե՞ ուղղակի պատահական համընկնման արդյունք էին:

Բայց այդ երկու բառերով սուրբ Քավարան մոլորակի մասին այդ լեզումիմիզմում նկատի էին առնված հետևյալ երկու հասկացությունները. «դրախտ» բառով՝ այդ սուրբ մոլորակի արտաքին հրաշագեղությունն ու հարստությունը, իսկ «դժոխք» բառով՝ այն ներքին վիճակը, որ իրապես ունեին այնտեղ բնակվող բարձրագույն *լինելիական մարմինները*, այն է՝ մշտական տանջանք, վիշտ ու ճնշվածություն:

Եվ լեզումիմիզմներից մեկում նույնիսկ մանրամասն բացատրվում էին նրանց այդ վիճակի պատճառները, որ այդ բարձրագույն *լինելիական մարմինները* կամ հոգիները, աննկարագրելի տառապանքներից ու գիտակցական ջանքերից հետո վերջապես հայտնվելով այդ սուրբ մոլորակում և այնտեղ տեսնելով ու հասկանալով համայն գոյի իրականությունն ու նշանակությունը, և, գլխավորը՝ այդքան մոտ ու այդքան հաճախակի տեսնելով հենց ԻՐԵՆ՝ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴԱՆՈՒԲ ՀՈՐԸ՝ գիտակցեցին, որ իրենց ներսում առկա անցանկալի տարրերի պատճառով դեռևս անկարող են օգնելու ՆՐԱՆ և լուծելու ՆՐԱ սրբազնագույն խնդիրները՝ ի բարօրություն մեր համայն Մեզալակոսմոսի:

Այսպիսով, ըստ երևույթին հենց այդ երկու բառերը պատճառ դարձան, որ այն ժամանակվա այդ տարաբախտ ձեռնադրյալները, վարակված լինելով ընդհանուր մոլուցքով, երևակայեցին, թե բաբելոնյան ապագա տիասնամուսների այդ երևակայական հրապուրիչ տեսության մեջ խոսքը գնում է հենց այդ նույն բաների մասին, բայց առավել մանրամասնությամբ. և նրանք սկսեցին կիսագիտակցաբար սուրբ մոլորակի մասին լեզումիմիզմների մեջ մտցնել այդ երևակայական տեսության որոշ դրվագներ, որից հետո այդ վկայությունները, անցնելով մի սերնդից մյուսին, այդ ֆանտազիաները հասցրին այն աստիճանի, որը կրկին մեր սիրելի մոլլա Նասրեդդինն արտահայտում է ընդամենը մեկ բառով. «խառըկանաչուցճաշերմաշեր¹²¹»:

Այն ամենից, ինչ ես հենց նոր պատմեցի, զավակս, դու կարող ես ընդհանուր առմամբ դատել, թե այնտեղ՝ քո այդ մոլորակում ինչ կարգի հասկացություններ ու պատկերացումներ են շրջանառվում ներկայումս, այսպես կոչված, «հանդերձյալ կյանքի հարցերի» վերաբերյալ. հիրավի կարելի է ասել, որ եթե քո այդ ցնդածների՝ հանդերձյալ կյանքին վերաբերող հասկացություններն ու պատկերացումները լսեին մեր հավերը, ապա այնպես կծիծաղեին, որ նրանց հետ տեղի կունենար ճիշտ նույնը, ինչ լինում է քո սիրելիների հետ, այսպես կոչված, «գերչակի յուղ» ընդունելուց հետո:

Ավելի լավ հասկանալու, գիտակցելու, ինչպես նաև դյուրիչ լույս հաղորդելու համար հենց նոր իմ կիրառած արտահայտությունների՝ հավի ծիծաղի ու գերչակի յուղի իմաստին, քեզ պետք է պատմեմ նաև մի քանի հետևանքների մասին, որոնք կրկին ստացվել են քո սիրելիների խորամանկ իմաստակությունների արդյունքում՝ տվյալ դեպքում «լինելիական էքսիռեհարիի» հետ կապված հարցերում, առավել ևս, որ այդ մասին իմանալը քեզ լրացուցիչ տվյալներ կտա, որպեսզի կոնկրետ օրինակով պարզես հիմնական տիեզերական սրբազան Յոթնապարապարշինող օրենքի որոշ առանձնահատկությունները, որոնց վերաբերյալ ես արդեն բացատրություններ եմ տվել:

¹²¹ ռուս. տարբերակում՝ Кмальланатапахамах, անգլ. տարբերակում՝ khralkanatonschachermacher

Ատլանտիդա աշխարհամասի կործանումից հետո որոշ գիտելիքներ էին մնացել նաև հենց այդ «լինելիական էքսիտեհարիի» ծագման վերաբերյալ, և դրանք նույնպես սկսել էին փոխանցվել մի սերնդից մյուսին:

Եվ ահա, իրենց ժամանակով երեսուն թե երեսունհինգ դար առաջ, երբ փոխադարձ ոչնչացման հերթական մեծ գործընթացից հետո նրանց շատերը կրկին սկսեցին (ինչպես սովորաբար այնտեղ լինում է այդ ահավոր գործընթացներից հետո) հաճախ տեսնել իրականությունը և ավելի քիչ բավարարվածություն զգալ իրենց սովորական գոյատևման պայմաններից, այնպես եղավ, որ լինելիական էքսիտեհարիի նշանակությանը վերաբերող գիտելիքների որոշ պահպանված բեկորներ իրենց անադարտ տեսքով հայտնվեցին նրանցից մի քանիսի մոտ, որոնք հատկապես ուժեղ էին զգում իրենց գոյատևման դատարկությունը և սկսել էին միջոցներ փնտրել այդ դատարկությունը լցնելու համար:

Այդ, թեև կցկտուր, բայց անադարտ վկայություններում շատ համոզիչ կերպով ցույց էր տրված, որ իրենց ներսում գոյացող այդ «էքսիտեհարի» նյութի կամ սերմնահեղուկի միջոցով կարելի է ինքնակատարելագործվել. սակայն, ի դժբախտություն նրանց, իրենց հասած այդ վկայություններում ոչ մի ցուցում չկար այն մասին, թե հատկապես ինչ և ինչպես պետք է անել:

Այնժամ նրանցից ոմանք սկսեցին մտորել՝ համառորեն ձգտելով ինչ-որ կերպ հասկանալ, թե ինչ է հարկավոր անել, որ անխուսափելիորեն իրենց ներկայություններում առաջացող նյութերն օգտագործեն ինքնակատարելագործման համար իրենց պայքարում:

Այդ լուրջ մտորումների արդյունքում նրանք սկզբում այն համոզվածությանը հանգեցին, որ այդ ինքնակատարելագործումը գուցե ինքին տեղի ունենա, եթե ձեռնպահ մնան սովորական եղանակով իրենց ներսում առաջացող այդ սերմնահեղուկն արտազատելուց, ուստի նրանցից ոմանք որոշեցին միավորվել և միասին գոյատևել, որպեսզի գործնականում համոզվեն՝ կարո՞ղ է արդյոք այդպիսի ինքնագաղտման իրապես հանգեցնել ենթադրյալ արդյունքներին:

Որքան էլ ջանացին քո մոլորակի՝ այդ հարցը պարզելու գործով առաջին անգամ հետաքրքրված էակները, ոչնչի չհանգեցին, և միայն նրանց երկրորդ սերունդը վերջապես, երկարատև գիտակցական դիտումներից ու ակտիվ մտորումներից հետո, համոզվեց, որ դա իսկապես հնարավոր է բացառապես միայն *լինելիական պարտք-պարտականությունն* անշեղորեն կատարելու պայմաններում. և հիշյալ սերնդին, ինչպես նաև հաջորդ երկու սերնդին պատկանող էակները, որոնք լրջորեն իրագործեցին դա, հասան ակնկալվող արդյունքներին:

Բայց այդ հարցով առաջին անգամ հետաքրքրված էակների չորրորդ սերնդի հետևորդներն արդեն *էարուխ համոզմունք* չունեին, այլ միայն «նմանակում էին», ինչը նույնպես այդ ժամանակ բնորոշ էր դարձել այդ երկրային եռուղեղ էակներին. իհարկե, նրանք նույնպես համատեղ կյանք էին վարում և կարծես թե անում էին նույն բաները:

Ահա այդպես այդ ժամանակ սկիզբ առավ և մինչև հիմա ինքնաբերաբար շարունակվում է այն, որ դրա հետևորդներն առանձին խմբեր են կազմում, երբեմն էլ զանազան հավատալիքների կուռ աղանդներ են ստեղծում և, հիմնական նպատակը դարձնելով այդ նույն «ինքնագաղտմը», գոյատևում են միասին, մյուսներից առանձնացած:

Համատեղ գոյատևման նրանց այդ վայրերը, որոնք առանձնացված են մյուսներից, կոչվում են «վանքեր», իսկ այդ աղանդներին հարող առանձին էակները՝ «վանականներ»:

Ներկայումս այնտեղ չափազանց շատ այդպիսի «վանքեր» գոյություն ունեն, և դրանց մեջ մտած անհամար «վանականներն» իրոք ձեռնպահ են մնում իրենց ներսում առաջացող այդ լինելիական էքսիտեհարին կամ սերմնահեղուկը սովորական եղանակով արտաթափելուց. բայց, իհարկե, այդ ժուժկալությունից բացարձակապես ոչ մի զգալի արդյունք չեն ստանում, քանի որ այդ ժամանակակից թշվառ «վանականների» մտքով էլ չի անցնում, որ թեև իրենց ներսում առաջացող այդ էքսիտեհարի նյութով իսկապես հնարավոր է ինքնակատարելագործվել, սակայն դա կարող է տեղի ունենանալ միայն այն դեպքում, եթե նրանց ներկայությունները միտումնավոր կերպով կլանում և յուրացնում են երկրորդ և երրորդ *լինելիական սնունդները*, իսկ դա էլ իր հերթին հնարավոր է բացառապես միայն այն դեպքում, եթե ներկայության բոլոր մասերը նախապես վարժվել են սրբազան *լինելիական պարտք-պարտականությունները* գիտացաբար կատարելուն, որոնք են՝ «գիտակցական ջանքերն» ու «կամավոր տառապանքը»:

Թերևս անարդարացի կլինի ասել, թե այնտեղի ներկայիս վանականները բոլորովին զգալի արդյունքներ չեն ստանում: Այդպիսի «զգալի արդյունքներ» ստացվում են, նույնիսկ՝ երկու առանձին տեսակի:

Որպեսզի դու հասկանաս, թե ինչու են այդ ներկայիս ժուժկալություն անող վանականները հիշյալ երկու տեսակի առանձին արգասիքները ստանում, ես պետք է մեկ անգամ ևս քեզ հիշեցնեմ, որ համաձայն հիմնական տիեզերական սրբազան Յոթնապարապարշինող օրենքի՝ եթե ընդհանրապես մեր ամբողջ Մեգալակոսմոսում գոյություն ունեցող թե՛ մեծ, թե՛ փոքր ամեն ինչը, էվոլյուցիայի ընթացքում, սրբազան Յոթնապարապարշինողի երկու «Մտնել Ին»-երով անցնելիս դրսից չի ստանում համապատասխան օգնություն, ապա սկսում է հետընթաց ինվոլյուցիա ապրել դեպի այն որոշակի վիճակները, որոնցից սկսել է իր էվոլյուցիան:

Բնականաբար, նույն բանը տեղի է ունենում այն որոշակի տիեզերական նյութերի հետ, որոնք գոյանում են այդ ժուժկալություն անող երկրային վանականների ներկայություններում:

Եվ ահա, զավակս, այն բանի հետևանքով, որ այդ երկրային վանականները, հատկապես՝ ժամանակակիցները, միտումնավոր կերպով չեն օգնում առաջին *լինելիական սննդի* մշտական ընդունմամբ իրենց ներսում անխուսափելիորեն առաջացող այդ նյութերի հետագա էվոլյուցիային, այսինքն՝ իրենց ընդհանուր ներկայություններում ո՛չ գիտակցորեն, ո՛չ էլ մեքենայաբար չեն կատարում բացարձակապես ոչ մի *լինելիական պարտք-պարտականություն* և միաժամանակ Բնության կողմից նախատեսված նորմալ եղանակով իրենց ներսից չեն հեռացնում այդ նյութերը, ապա դրանք հենց իրենց ներսում սկսում են ինվոլյուցիա ապրել, և լինելիական էքսիոէհարիի կամ սերմնահեղուկի այդ ինվոլյուցիայի ընթացքում ուրիշ շատ ոչ դիմացկուն որոշակի նյութերի շարքում, որոնք սովորաբար նրանց ընդհանուր ներկայություններում առաջանում են ինվոլյուցիոն գործընթացի ժամանակ, արտազատվում է որոշակի ոչ դիմացկուն մի նյութ, որն էակի մոլորակային մարմնի ընդհանուր գործունեության վրա երկակի ազդեցություն թողնելու հատկություն ունի:

Այդ որոշակի նյութի ազդեցության առաջին տեսակն այն է, որ այն նպաստում է ավելորդ, այսպես կոչված, «քարայծիաղի»¹²² կամ, ինչպես այնտեղ են ասում՝ «ճարպի» կուտակմանը: Իսկ այդ ազդեցության երկրորդ տեսակը նպաստում է մոլորակային մարմնում, այսպես կոչված, «*թունային-ոսկրային*»¹²³ *թրթիռներին*՝ առաջացմանը:

Այդ ամենի հետևանքով առաջին դեպքում այդ ժուժկալություն անող երկրային վանականները դառնում են արտակարգ, ինչպես այնտեղ են ասում, ճարպակալած, և երբեմն այդ ճարպակալած վանականների մեջ հանդիպում են այնպիսի նմուշներ, որ կարող են շատ միավորներով առաջ անցնել այնտեղ «խոզ» կոչվող էակից, որին իրենք հատուկ բտում են, որպեսզի դրա մոլորակային մարմնում առատորեն կուտակվի այդ նույն ճարպից:

Իսկ երկրորդ դեպքում հակառակն է տեղի ունենում՝ այդ ժուժկալություն անող վանականներն, ինչպես այնտեղ են ասում, «հյուծված» են դառնում. նրանց ներսը թափանցող «թունա-ոսկրային թրթիռներին» ազդեցությունը գլխավորապես անդրադառնում է նրանց ընդհանուր հոգեկառույցի վրա՝ այն դարձնելով խիստ երկդիմի, որի դրսևորումները լինում են տրամագծորեն հակադիր երկու տեսակի. արտաքին, տեսանելի, ցուցադրական՝ ի տես շրջապատում եղածների, և ներքին ու գաղտնի, որոնք սովորաբար այնտեղի էակները, հատկապես՝ ժամանակակիցները, ի վիճակի չեն հայտնաբերելու կամ ընկալելու: Իրենց արտաքին ու տեսանելի դրսևորումներով այդ «թունա-ոսկրային վանականները» թվում են վերին աստիճանի, ինչպես քո սիրելիներն են ասում, «մոլեռանդ», իսկ ներքին գաղտնի դրսևորումներով, որոնք ի ցույց չեն դնում ուրիշներին, իրենց պահում են, էլի քո սիրելիների ասածի պես, «ցինիկաբար», և էլի՝ վերին աստիճանի:

Իսկ ինչ վերաբերում է նրան, թե ինչու է էքսիոէհարիի ինվոլյուցիայի գործընթացն այդ ժուժկալություն անող վանականների մարմիններում ճարպ կուտակելու փոխարեն առաջացնում «թունաոսկրային թրթիռներ», այնտեղ նույնիսկ շատ մանրամասն տեսություն գոյություն ունի, որը մշակել են որոշ, այսպես կոչված, «կաթոլիկ վանականներ». նրանք մի քանի դար առաջ մանրակրկիտ կերպով ապացուցել են, որ այդ «սմբած վանականներն» իրենց գոյատևման առաջին տարում եռանդուն կերպով զբաղվելիս են եղել այն գործով, որի հետևանքով այնտեղի ջահել էակներին

¹²² ռուս. տարբերակում՝ karateara, անգլ. տարբերակում՝ karatsiag

¹²³ ռուս. տարբերակում՝ ядоиноскирных, անգլ. տարբերակում՝ poisoninoskirian

երեսներին սովորաբար «պզուկներ» են առաջանում, որոնց մասին նույնիսկ այնտեղի բժշկությունը գիտի:

Այնտեղի ժամանակակից վանականների այդ կարգի ժուժկալության նշանակության մասին լիակատար պատկերացում և ըմբռնում տալու համար ինձ մնում է միայն ավելացնել, որ վերջին անգամ նրանց միջավայրում լինելուս ընթացքում ես համոզվեցի, որ հենց միայն այդ հետևանքների պատճառով, որոնք ի հայտ են գալիս էքսիդեհարիի ինվոլյուցիայի գործընթացով, այդ ժուժկալությունն անող երկրային տարաբախտ վանականների ընդհանուր ներկայություններում հեշտացել և, հետևաբար, նաև մեծացել է կոնդաբուֆեր օրգանի հատկությունների այլազան հետևանքների ամրապնդման գործը:

Զրույցի այս մասում Բեհեդգեբուդին ընդհատեց տիեզերանավի ծառայողներից մեկը, որը «լեյտուչանբրոս» էր բերել նրան: Բեհեդգեբուդը դա մոտեցրեց իր ականջին և սկսեց լսել բովանդակությունը:

Վերջ երկրորդ գրքի